Հմայուհի Սիրասա

ՀԱՅՈՒՆ ՈՍՈՒՄ

876

Հովսեպի Սրբազան

Հաչեաց և Ամուր

Վիպակներ
պատմվածքներ
Հեղինակներ

Գրաս
26 49

Библіотека
К. Б. и І. Н. Кусикьянъ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
1940

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Կազմը, ճեղինակի պատրեն. տիպագաթերը և Ֆոնտիսպիսները՝
Ճիարի։ ՀՍԿ. ՇԱԿԱՐՇԻ

АМАЯК СИРАС

Отец и сын

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1946 г.


5 VI 46.

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ



ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

ԴԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Սենյակը, ուր բուժվում էր Սուրենը, գտնվում էր հիվանդանոցի երկրորդ հարկում։ Սենյակում պառկած էին տասնմեկ ծանր վիրավորներ։ Մայիսյան առավոտ էր։ Վիրավորներից ինն արդեն զարթնել էին. նրանցից ոմանք ծխում էին, ոմանք գրքեր էին կարդում, ոմանք սպասողական վիճակում նայում էին դեպի դուռը, իսկ մեկը, որի աջ թևն ամբողջովին գիպսի մեջ էր, ակնապիշ նայում էր առաստաղին. նա երբեմն ձախ ձեռքով շփում էր ճակատը և աշխատում էր չնայել վիրավոր թևին, որի անբնական դիրքին դեռ չէր վարժվել։ Տասերորդ վիրավորը օրյոլցի մի երեսնամյա սերժանտ էր, որի մեկ ոտքը երկու օր առաջ, մինչև ծունկը վիրահատել էին, և երեկ, բժիշկները քննելով նրա վիճակը, գտել էին, որ դրությունը ծանրացել է։ Օրյոլցին, հուսահատ, գլուխը միշտ վերմակի տակ էր պահում և հայտնի չէր, նա քնած է, թե քնած է ձևանում, որ իրեն ավելորդ հարցերով չանհանգստացնեն։

Իսկ Սուրենը տակավին քնած էր։ Երեք օր շարունակ քաղաքում անձրև էր տեղացել։ Այս առավոտ, թեև արևը մեկ-մեկ դուրս էր նայում ամպերի տակից, սակայն, ըստ երևույթին, եղանակը որևէ լավ բան չէր խոստանում։

Սենյակի դուռը բացվեց, ներս մտավ քույրը, ճերմակ խալաթը հագին, գլխանոցին կարմիր խաչ։ Նա երեսունհինգի մոտ մի կին էր, ժամանակից առաջ ճերմակած մազերով։ Նրա աչքերի տակ արդեն գոյացել էին կնճիռներ,

սակայն նրա հեգնամբույր դեմքը, որը հաճախ ծածկվում էր ժպիտով, նրան հաճելի էր դարձնում իր շրջապատին։ Նա ընդհանուր բարև տվեց բոլորին, ապա մեկ-մեկ հարցնելով վիրավորների դրպիսությունը, հասավ այն վիրավորի մահճակալին, որի թևը գիպսի մեջ էր։

— Ալեքսեյ Վառլամովիչ,— դիմելով վիրավորին ասաց քույրը,— այս գիշեր ինչպե՞ս քնեցիք։

Ալեքսեյ Վառլամովիչը, գլուխը թեթև շարժեց ու ասաց.

— Մի հարցնի, Նատալյա Ֆիլիպովնա, ինքնակոչ հսկիչի դեր եմ կատարում, պալատում, մեկ-մեկ կարող եմ ասել, Ինչ ով ինչքա՞ն է քնել, ե՞րբ է զարթնել, նույնիսկ ի՞նչ երազ է տեսել։

— Նույնիսկ, ինչ երա՞զ— ժպտաց քույրը։

— Այո, այո, մի զարմանաք, ես չեմ կարողանում աչք փակել. այս անպիտան գիպսը կարծես տաս փթանոց ծանրություն լինի, այնպես է ճնշում, որ քիչ է մնում վերցնեմ դեն շպրտեմ, ինչ կլինի, թող լինի։

— Ի սերն աստծու,— բացականչեց Նատալյա Ֆիլիպովնան,— զգույշ, մի քիչ համբերություն ունեցիր, դու առողջ օրգանիզմ ունես, շուտով ոսկորները կմիանան, կամրապնդվեն և կազատվես գիպսից էլ, մեղանից էլ... եթե ձանձրացել ես մեղանից։

— Է՜, չգիտեմ, ինչից եմ ձանձրացել, բայց թեվիցս ձանձրացել եմ, ավելի լավ էր մի անգամից կտրեիք, պրծնեի։

— Երեխայի նման ես դատում... դու այդ թևով, Ալեքսեյ Վառլամովիչ, դեռ շատ բան ունես անելու։

— Ճառ մի ասիր, Նատալյա Ֆիլիպովնա, դու գիպսից հանիր թևս, ես գիտեմ ինչ կանեմ։

Նատալյա Ֆիլիպովնան ոչինչ չպատասխանեց, նա սովոր էր լսել վիրավորների ավելի ծանր կշտամբանքներ, ուստի կարծես թե չլսելով Ալեքսեյի վերջին խոսքերը, դեմքին տվեց զվարթ արտահայտություն և հարցրեց.

— Հապա, ասա տեսնենք, ի՞նչ երազ է տեսել հարևանդ։

— Սուրե՞նը,— վրա բերեց Ալեքսեյը։

— Այո, Սուրենը, մեր հարավցին։

— Նա դեռ երազի մեջ է։ Սուրե՞ն,— դառնալով դեպի կից մահճակալը պառկածին գոչեց Ալեքսեյը,— Սուրե՞ն... տեսնում ես, ձայն չի տալիս... քնած է... բայց կարող եմ ասել, թե ինչ երազ է տեսնում... նա տեսնում է արև ու...

— Ու էլ թե ինչ է տեսնում Սուրենը երազում, չգիտեմ,— ասաց բարեհոգի ժպիտով Նատալյան,— բայց արև՛, այո՛, երեկ ինչքա՞ն էր բարկացած... երեք օր իրար ետևից անձրև, իրոք ձանձրալի է... Բայց արդեն նախաճաշի ժամանակ է... ո՛չ, ո՛չ, թող քնից կշտանա, երբ կզարթնի հետո...

— Ո՛չ,— ակներև ուրախ տոնով ասավ Ալեքսեյը,— ես չեմ թողնի Սուրենին այդքան քնի,— տե՛ս, Նատալյա, տե՛ս արևը դուրս եկավ։ Խնդրում եմ լուսամուտի վարագույրը մի քիչ էլ հետ տար... այ, այդպե՛ս. հիմա շողերն ուղիղ ընկնում են Սուրենի վրա... զարթեցրու, չեմ ուզում նրան այդ բավականությունից զրկել, թող արև տեսնի... դու չե՞ս ուզում զարթեցնել... Սուրե՞ն։

Սուրենը, որ վերմակը քաշել էր աչքերին, ետ տվեց այն և, ծմրկտալով, աչքերը բացեց։ Զգալով, որ արևը խուսուտում է աչքերը, նա, արագ շարժումով, նստեց անկողնում։

— Արև չան, հոգուդ մատաղ,— բացականչեց նա հայերեն։

— Ի՞նչ ասիր,— մոտենալով նրան հարցրեց Նատալյան։

— Միևնույն է, ոչինչ չես հասկանա,— վրա բերեց Ալեքսեյը,— նա երբ ուրախանում է իր լեզվով է խոսում։

— Է, թող թարգմանի, մենք էլ ուրախանանք,— պնդեց Նատալյան։

— Ասում է թե ինչ-որ մեկ անգամ՝ ասի, ասի... էլ չեմ կրկնի, համառն է։

Սուրենը՝ շրջեց դեմքը, ապա նայելով մեկ Ալեքսեյին,

մեկ քույր Նատալյային, կես հանդիմանական, կես մտերմական տոնով, դարձավ Ալեքսեյին ռուսերենով։

— Ինչ ես փաստաբանի դեր ստանձնել ու իմ փոխարեն պատասխանում։ Այնպես ես խոսում, կարծես թե դու արևի տակ չես ծնվել։ Ի՞նչ է Նատալյա, դու ուրախ չե՞ս, որ այսօր արև... արև... էհ, տեսնո՞ւմ ես Ալեքսեյ, քեզնից խոռվեց նորից ամպի տակ մտավ, ափսո՞ս։

— Լա՜վ շատ մի ձևացնի,— խոսեց Ալեքսեյն անտարբեր,— արև է, ամպի տակ էլ կմտնի, ամպի տակից դուրս էլ կգա, այ, կարևորն այն՝ է, որ ոտքդ ու ձեռքդ տեղը մնան։

Սուրենը նայեց Ալեքսեյին, նրա գիպսավոր թևին, ապա մի հայացք նետեց օրյուցու կողմը և լռեց։ Մի պահ կարծես զղջաց, որ այնքան ոգևորվեց, երբ կողքին մարդիկ այդպիսի ծանր վիճակումն էին։

Ալեքսեյ Վառլամովիչ Սմիրնովի տրամադրությունը փոփոխակի էր, մռայլվում էր նայելով թևին, հիշելով տունն ու ընտանիքը, բայց ընկերների շրջապատում շուտով էլ զվարթանում էր։ Սուրենի հետ արդեն մտերիմներ էին և լեզվակռիվը նրա հետ բավականություն էր պատճառում նրան։

Քիչ հետո մատուցեցին նախաճաշը։ Ջնախաճաշեց միայն օրյուցին, որին կոչում էին Դուդնիկ։ Բոլոր վիրավորները միմյանց կոչում էին անունով։ Դուդնիկը յոթերորդ օրն էր, որ բերվել էր հիվանդանոց և բացի բժշկից, քույր Նատալյայից ուրիշ ոչ մեկի հետ չէր խոսել, ուստի և ոչ ոք առիթ չէր ունեցել նրա անունը հարցնելու և ամենքը նրա մասին խոսելիս կոչում էին աղդանունով, իսկ նրա մասին խոսակցությունը կարճ էր։

— Դուդնիկը ճաշեց։

— Դուդնիկը դադարեց տնքտնքալուց... քնեց։

— Դուդնիկը դեղ ընդունեց։

Իրար մեջ փսփսում էին այս խոսքերը սենյակի վիրավորները, և ամենքը գիտեին, որ նա շատ էր տանջվում այն

քանից, որ զրկվել է մի ոտքից. իսկ վերքը դեռ բուժվելու նշաններ չէր ցույց տալիս։

Եկավ վիրաբուժը, զննեց վիրավորներին։ Սմիրնովին սրտապնդեց, որ թևը մի քանի օրից կազատի գիպսից, իսկ Սուրենին ասաց, որ ձախ աղդրի վերքն արդեն լավանում է և շուտով նա ևս ոտքի կկանգնի։

Վիրաբուժին ամենից շատ մտահոգում էր Դուդնիկի վիճակը։ Քույր Նատալյան հայտնեց, որ ջերմությունը չի իջնում։ Վիրաբուժը, հիսունն անց, գիրուկ դեմքով մի շիկահեր ռուս, վիրավորին մանրազնին քննելուց հետո, գլուխը տարուբերեց և համապատասխան հրահանգներ տալով քույրին, դուրս գնաց։

— Նու, ի՞նչ է ասում,— տնքալով հարցրեց Դուդնիկը, նայելով քույր Նատալյա Ֆիլիպովնայի դեմքին,— ի՞նչ է ասում։

Նատալյան ձեռքը տարավ շփեց Դուդնիկի ճակատը և միայն ասաց.

— Համբերություն է պետք ընկեր Դուդնիկ, վերքը դանդաղ է բուժվում։

— Մի՞թե ուրիշ դեղ չունի բժշկությունը, բացի համբերությունից,— սրդողած խոսեց Դուդնիկը։

— Ե՛վ մեր դեղերը, և՛ ձեր համբերությունը...

— Է՜հ, հեքյաթներ ես ասում... նու, լավ, ծածկեք գլուխս։

— Մի բան ուտեիք ընկեր Դուդնիկ։

— Հետո, հետո։

— Միշտ ասում եք հետո, շուտ առողջանալու համար սնունդ է հարկավոր։

Սակայն Դուդնիկն այլևս չպատասխանեց, վերմակը քաշեց գլխին ու աչքերը փակեց։

Սենյակում մի պահ տիրեց ճնշող լռություն։ Բոլոր վիրավորների վիճակը հետզհետե թեթևանում էր։ Դուդնիկը բացառություն էր այդ սենյակում։ Նրա թույլ օրգանիզմը չէր կարողանում դիմադրել ցավերին։ Նա մեկ-մեկ սրտնե-

գում էր, բայց ընդհանրապես, լուռ, կրում էր իրեն բաժին ընկած խաչի ծանրությունը։ Եվ այդ հանգամանքը հուզում էր սենյակի մյուս վիրավորներին։ Նրանք աշխատում էին չանել այնպիսի բան, որ չլինի թե տհաճություն պատճառեն ծանր վիրավորին։

Սակայն Դուդնիկը, կարծես ոչինչ չէր զգում, կարծես շրջապատը գոյություն չուներ նրա համար, լսելի էր միայն նրա ծանր տնքոցը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

— Սուրե՛ն, ապա, փորձիր մենակ, առանց քույրերի օգնության պատշգամբ գնալ. քո ուզած օրն է, արևոտ ու պարզ երկինք... գնա, գնա գուցե և... Նորից Վերան, ո՞վ գիտի...

Այսպես էր համոզում հետևյալ օրը, նախաճաշից հետո, Սմիրնովը Սուրենին. Սմիրնովը հենված բարձերին, կարծես այլևս չէր նեղվում գիպսավոր թևի անհարմար գիրքից։ Դուդնիկի ծանր վիճակի հանդեպ նա անհարմար էր համարում դանդատվել իր ցավերից։

Սուրենը, հողաթափերը հագած, մի քանի անգամ սենյակում ետ ու առաջ էր արել՝ հենված մահճակալների ճակերին, բայց դեռ վստահ չէր, որ կարող է մինչ պատշգամբ հասնել։ Սակայն, Սմիրնովից լսելով Վերայի անունը, մի տեսակ գոտեպնդվեց։ Այդ աղջիկը շաբաթը երկու անգամ իր ընկերուհիների հետ այցի էր գալիս հիվանդանոց. նրան բաժին էր ընկել սպասարկելու այն սենյակը, ուր պառկած էր Սուրենը։ Վերան բոլոր վիրավորներին մեկ-մեկ ճանաչում էր, գիտեր, թե ով որտեղացի է, ով ումն է թողել տանը, մանավանդ որ շատերի համար նա նամակ էր գրել տնեցիներին։ Սուրենն ինքն էր ամեն անգամ նամակ գրում տունը։ Բայց Վերան այն էլ գիտեր, որ Սուրենը նամակները գրում էր մորը, որն ապրում էր Էջմիածնի շրջանի այգիներով հարուստ մի գյուղում։

Երկու ամսից ավելի էր, ինչ Սուրենն ու Ալեքսեյ

Սմիրնովը պառկած էին այդ հիվանդանոցում կողք-կողքի։

Շուտով կլրանար Հայրենական պատերազմի մեկ տարին և այդ տարին միաժամանակ երկու ռազմիկների ծանոթության տարին էր։ Բոլոր վիրավորները փոխադարձաբար միմյանց պատմել էին իրենց կյանքը, իրենց գլխից անցած-դարձածը և Սուրենն, այժմ, ուզղակի պահանջ էր զգում խոսել այլ նյութի մասին, խոսել այլ անձնավորության հետ։

Սուրենը, քսանհինգ տարեկան, ամրակազմ ու կայտառ երիտասարդ էր։ Սմիրնովը, որ լավ գիտեր ընկերոջը, շատ էր պատմել վիրավոր ընկերներին Սուրենի մասին և ամենքը գիտեին, որ Սուրենը ջոկատում եղած ժամանակ միշտ գընում էր ամենավերջին շարքում, իբրև ամենակարճահասակը։ Գիտեին, որ Սուրենի կարճ հասակը երբեմն կատակի առարկա էր դառնում ընկերների համար և շատերը նրա անունը չէին տալիս, այլ ասում էին «կոլոտ Սուրենը»։ Սուրենն էլ չէր նեղանում, նա խոսքի տակ մնացող չէր, այդպիսի դեպքերում միշտ հիշում էր պատենական առածը,— «կոլոտի խելքը գլխումն ա, էրկենի խելքը շոքերումն ա»։ Իսկ այժմ ամենքը գիտեին, որ Սուրենը մոր մինուճար զավակն է, դեռ պատերազմից առաջ եղել է բանակում, լավ գիտի զինվորական գործը, և սենյակի տասնմեկ վիրավորներից միակն է, որ ամուսնացած չէ։

— Կնիկ, երեխա չունես, հոգդ քիչ է,— ասում էր երբեմն Սմիրնովը Սուրենին, տեսնում ես, աղջիկներն էլ հենց որ գլխի են ընկնում, թե դու աղաբ տղա ես, քեզ մոտեմոտ են անում, իսկ մեր երեսին նայող չկա։

— Է՞հ,— լսելով Սմիրնովին բացականչում էր Սուրենը, սակայն ներքնապես նրան հաճելի էր լսել այն մասին, որ աղջիկները անտարբեր չեն դեպի ինքը։

Մինչ, Սուրենը, հետևելով Սմիրնովի խորհուրդին, պատրաստվում էր դուրս գալ պատշգամբ, սենյակի դուռը բացվեց և ծաղկեփունջը ձեռքին ներս մտավ մի աղջիկ. ճերմակ խալաթ էր հագած նա, սակայն գլուխը բաց էր ու

փարթամ մազերը ծփանքով թափվել էին նրա ուսերին։ Նրա ճերմակ, սակայն այժմ քիչ շիկնած դեմքը փայլում էր ժպիտով. կապուտակ աչքերը առանձին գրավչություն էին տալիս նրան։ Նա ծաղկեփունջը շտապով դրեց սեղանի վրա գտնվող ծաղկամանում և մեկ-մեկ մոտեցավ հիվանդներին, մեկին ծխախոտ տվեց, մյուսին՝ գրելու թուղթ, երրորդին մատիտ, մինչև հասավ Դուդնիկի մահճակալին։ Դուդնիկի գլուխը հաղիվ էր երևում վերմակի տակից։ Աղջիկը մատը դրեց բերանին և նշանակալից նայեց Սմիրնովի և Սուրենի կողմը։

— Ձեռ մի տա, հաղիվ լսելի ձայնով ասաց Սմիրնովը,— արի այստեղ. և երբ աղջիկը ոտի մատների ծայրերի վրա շարժվեց դեպի Սմիրնովը, վերջինս ավելացրեց,— նրա վիճակը ծանր է, ոչ ոքի հետ չի ուզում խոսել. այսօր դեռ բժիշկը չի եկել, շուտով երևի կգա, տեսնենք ինչ կասի. դու նստիր, ահա՛ աթոռը... թերթը դիր այստեղ, բարձիս մոտ, այդպե՞ս։

Աղջիկը, վիրավորներին ծանոթ, Վերան էր. նա նստեց աթոռին։ Սուրենը, որ նստած էր մահճակալին, ուղղվեց տեղում և հաղիվ լսելի՝ բարևի նման ինչ որ բան շշնջաց, նայելով Վերային։

— Սուրե՛ն,— դիմեց Սմիրնովը ընկերոջը,— հապա որ քեզ ասում էի պատշգամբ գնա. այնտեղ կհանդիպեիր Վերային և հետաքրքիր ժամանակ կանցկացնեիք։

Սուրենը գլուխը կախեց։

Վերան զննող հայացքով նայեց Սուրենին և անսքող հրճվանքով ասաց.

— Մի՞թե Սուրեն Սիանոսովիչ, ձեզ այդքան լավ եք զգում, որ կարող եք պատշգամբ դուրս գալ, այո՞։

— Այո, ինձ լավ եմ զգում, բայց բժիշկը դեռ չի թողնում սենյակից դուրս գալ։

— Ինչքան ուրախ եմ, միայն թե լավ զգաք ձեզ, թող մի քանի օր էլ ավելի մնաք սենյակում։

— Է՜հ, Վերա, միևնույն է, ոչ մի տեղ չեմ թողնի, որ

Սուրենն առանց ինձ գնա։ Միասին կռվել ենք, վիրավորվել, միասեղ բուժվում ենք, ուրեմն պարտավոր ենք միաժամանակ էլ առողջանալ։

— Ուրիշ կերպ էլ չի կարող լինել,— հաստատեց Վերան,— լավ ընկերները այդպես էլ պիտի լինեն։

— Տեսնո՞ւմ ես Սուրեն։ Ես որ քեզ ասում եմ, Վերան էլ այդ է հաստատում։ Ես էլ կլավանամ, միասին կգնանք Նաստիայիս ու Ճուտիկներիս կտեսնենք ու հետո մա՛րշ կասեմ և գեպի ռազմաճակատ։

— Ես, իհարկե, այդպես էլ ցանկանում եմ... ասաց Սուրենը և երևում էր, որ նա համարձակությունը կորցնում է։ Նա ինքն էլ զարմանում էր, որ վերջերս Վերայի մոտ չի կարողանում շատ բացվել։

Այդպես չէր առաջին օրերը։ Սկզբում երբ նա հիվանդանոց եկավ, և քանի դեռ թարմ ու ցավոտ էին վերքերը, նա, աչքերը փակած, խորասուզվում էր մտքերի մեջ և ոչ ոքի հետ չէր ուզում խոսել։ Հետո երբ ցավերը մեղմացան և Վերան սկսեց այցելել հիվանդանոց, նա զրուցում էր նրա հետ ամեն ինչի մասին, Հայաստանի արևի ու խաղողների մասին, իր մոր ու հարևանների մասին, պատերազմում կրած դժվարությունների մասին։ Բայց մեկ շաբաթ առաջ, երբ Սմիրնովը, հենց Վերայի ներկայությամբ, ակնարկ էր արել, որ Սուրենը երազում Վերային է տեսել, (իսկ Սուրենը հաստատ գիտեր, որ այդ գիշեր ինքը ոչ մի երազ չի տեսել), ահա՛ այդ օրից Սուրենը չգիտեր ինչու քաշվում էր ուղիղ նայել Վերայի աչքերի մեջ և այլևս չէր կարող առաջվա նման նրա հետ ամեն ինչի մասին ազատ կերպով խոսել։

Վերան կարծես այդ հասկանում էր և այժմ էլ նա հարցրեց.

— Սուրեն Սիանոսովիչ, ի՞նչ է գրում ձեր մայրը, ի՞նչպես է նրա առողջությունը։

Դա Սուրենի ամենասիրելի խոստակցության նյութն էր. նրա դեմքը պայծառացավ և նա հաճույքով պատասխանեց.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

366—2

— Չորս օր առաջ եմ նրանից նամակ ստացել,— և ապա մի քանի խոսքով պատմեց, որ մայրն իրեն լավ է զգում, միայն կարոտում է տղայի ողջ և առողջ վերադարձին։

— Գրե՞լ եք, որ վիրավորվել եք,— հարցրեց նորից Վերան։

— Ո՛չ, չեմ գրել, հիմա կգրեմ, որ վիրավորվել և լավացել եմ։

— Եվ լավ կանես Սուրեն— հարեց Սմիրնովը,— մայր է, կանհանգստանար, եթե միանգամից գրեիր, որ վիրավորվել ես. չմոռանաս, գրիր նաև, որ ինձ հետ ես պատկած։

— Նա գիտի, որ քեզ հետ ընկերներ ենք։

— Այդ շատ լավ է, այժմ գրիր որ միասին էլ բուժվում ենք և հետո գրիր, որ հիվանդանոցում նոր ընկեր ենք ձարել... Վերայի մասին, հա՞, չմոռանաս։

Սուրենն այս անգամ ավելի համարձակ նայեց Վերային և մեղմորեն ասաց.

— Այո, Վերան շատ հոգատար է դեպի մեզ։

— Ի՞նչ եք ասում,— բացականչեց Վերան։

— Այո, լավ ընկե՞ր. ուրիշ բան է լավ ընկերը. լավ ընկեր ունեցիր, գանձ մի ունեցիր. ի միջի այլոց Սուրեն, Վերային պատմե՞լ ես մեր Կոլոսովի մասին... ո՞չ... ափսո՞ս. պիտի պատմիր։

Մինչ Վերան նայում էր Սուրենին իմանալու համար, թե ինչ պատմության, ինչ Կոլոսովի մասին է խոսքը, քույր Նատալյան ներս մտավ և հայտարարեց որ բժիշկը գալիս է։

Վիրաբուժին, սենյակի մյուս տասը վիրավորները, այլևս մտահոգություն չէին պատճառում։ Նրանց լիակատար ապաքինվելը ժամանակի խնդիր էր։ Նա սենյակ մտավ հատկապես Դուդնիկի համար։ Դուդնիկի դեմքը գալկացած էր, աչքերը փոս էին ընկել, շնչառությունն էլ կանոնավոր չէր։

Սուրենը, Սմիրնովը, Վերան,— լարված հետևում էին

վիրաբուժի շարժումներին։ Նա ուշադիր զննեց վիրավորի ընդհանուր վիճակը, ապա ինչ որ կարգադրություն արավ։

Քիչ հետո պատգարակ բերին ու Դուդնիկին դուրս տարան սենյակից։ Բոլոր վիրավորները նստեցին մահճակալներում և հայացքով ճանապարհ դրին օրյոլցուն։

— Դուդնիկի բանը վատ է, շշնջաց մեկը։

Վերան ամբողջովին կորցրեց աշխուժությունը և զգուշավոր շարժումներով սենյակից դուրս գնաց Դուդնիկի պատգարակի ետևից։

Ո՛չ Սուրենը, ո՛չ Սմիրնովը և ո՛չ էլ վիրավորներից մեկ ուրիշը չհարցրին, թե ինչու դուրս տարան Դուդնիկին։ Բոլորի տրամադրությունը վատացավ։ Ամենքը սրտաբորոտ սպասում էին, թե ինչ նոր լուր կստացվի վիրավորի մասին։ Ենթադրություններ չէին ուզում անել, բայց բոլորն էլ մի պահ մտածում էին, թե արդյոք, որևէ բանով հո ավելի չե՞ն վատացրել վիրավորի վիճակը։

Զանցավ տասը րոպե, Վերան վերադարձավ սենյակ բոլորովին գունաթափված և նստելով Սուրենի ու Սմիրնովի մահճակալների արանքում դրած աթոռին, ուզեց ինչ որ բան ասել, սակայն չկարողացավ և թաշկինակը սեղմելով աչքերին լացեց։

Բոլոր վիրավորները նայում էին Վերային և շատ բան արդեն հասկանում էին։ Վերջում Սուրենը բռնեց Վերայի ձեռքը և ասաց մեղմիվ։

— Լավ, հանգստացիր, ասա, ինչպե՞ս է Դուդնիկի վիճակը։

— Գանգրենա է սկսվել, նրան տարան վիրահատության սենյակը։ Այժմ նորից վիրահատում են։

— Իսկ կյանքին վտանգ չի՞ սպառնում։

— Եթե վիրահատությունը հաջող անցնի ոչ, միայն մի ոտքը մինչև ազդրը...

Եվ Վերան այլևս չկարողացավ շարունակել ու նորից սկսեց լալ։

Վիրավորներից շատերը ծանր հառաչ արձակեցին։

Սուրենը նայեց Վերային, ուզեց մի հանգստացնող խոսք ասել, բայց բառ չգտավ։

Քիչ հետո, Վերայի ընկերուհիներից մեկը եկավ հայտնելու նրան, որ ժամանակն է վերադառնալու։

Վերան մի պահ նայեց Սմիրնովին, հետո Սուրենին և ապա, սրբելով թաց աչքերը, ասաց.

— Իսկ ես, այսօր, հիվանդանոցից ոչ մի տեղ չեմ ուզում գնալ։

Նրա խոսքերը լսեցին բոլորը։

Ուրիշ անգամ թերևս Սմիրնովին ուրիշ բացատրություն տար Վերայի այդ ցանկությանը բայց այժմ ոչինչ չասաց, միայն գլխով հավանություն տվեց։ Իսկ Սուրենը հարցականով նայում էր նրան ու մի պահ չէր հասկանում, թե ինչու է նա այսօր ցանկանում մնալ հիվանդանոցում, երբ ուրիշ անգամներ նա, ինչպես մյուս այցելուները, միայն մեկ-երկու ժամով էր գալիս։

Վերայի ընկերուհիները գնացին, իսկ Վերան բժշկի թույլտվությամբ մնաց։

Նա ցանկություն էր հայտնել անձամբ խնամել Դուդնիկին և նրա այդ ցանկությունը, ինչքան հոգեկան բավականություն էր պատճառում իրեն, այնքան նրան հաճելի էր դարձնում մյուս վիրավորներին։ Իսկ Սուրենը, որ Վերային վերաբերող ամեն բան տեսնում էր շփոթանքված գույներով, Սմիրնովի ականջին ասաց.

— Այդ աղջիկը մի հրաշք է։

— Հը՛մ, սկսել ես հրաշքների՞ հավատալ,— կատակեց Սմիրնովը։

— Է՜հ, չհասկացար։

— Լավ, ասա, Սուրեն, մի՛տքդ ասա։

— Ասում եմ, թե դա սովորական աղջիկ չէ, դա վիրավորների համար հրեշտակ է։

— Հա՞, այդ մասին էիր ուզեմն քիչ առաջ գրում նամակումդ, մո՞ռդ էիր գրում, հա՞։

— Քեզ ինչ, թե ինչ էի գրում և ումն էի գրում։

— Օ՜յ, իմ բարկացկոտ հարավցի։ Հենց որ խոսքը Վերային է վերաբերում, ջերմաստիճանդ բարձրանում է։

Իսկ Վերան ոչ մի բան չէր լսում և ամբողջ գիշերն ունկնդրում էր Դուդնիկի զառանցանքները։ Նա ներքնապես շատ էր տառապում, որ Դուդնիկին օգնելու իր ջանքերն ապարդյուն են անցնում և որևէ բանով չի կարողանում մեղմել նրա ցավերը։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Երկու շաբաթ անցավ։ Արդեն հունիսն էր։ Անձրևային օրերին հաջորդել էին պայծառ, արևոտ օրեր։ Հիվանդանոցը գտնվում էր Ռուսաստանի մի փոքրիկ քաղաքի ծայրամասում և նրա շուրջ բոլորն աճում էր փարթամ բուսականություն, իսկ բարդենիներն իրենց վեհ հասակով առանձին հրապույր էին տալիս շրջապատին։

Սուրենի վերքն այնքան էր լավացել, որ նա այժմ ազատորեն պատշգամբ էր ելնում և ժամերով ներծծում էր արևի կազդուրիչ ճառագայթները։

Նա նայում էր հիվանդանոցի առջև փռված ընդարձակ տարածությանը, կապուտակ երկնքին և այդ շրջապատում ամեն ինչ թեև նոր, բայց կարծես վաղուցհետե ծանոթ էր թվում նրան։ Եվ իրոք, ահա այդ հասունացող բույսերը, ինչո՞վ նրանք նման չէին այն բույսերին, որոնք աճում էին իր հայրենի Արարատյան դաշտում. նրանց բույրն ու տեսքը տարբեր էին, բայց և՛ այստեղ, և՛ այնտեղ նրանք սնունդ էին ստանում միևնույն մայր հողից, թեև նա շատ սրտնեղում էր, որ այստեղ արևն այդքան սակավ էր երևում, բայց ահա, այսօր, նա այնպես պայծառ է լուսավորում և այնքան ջերմ են նրա ճառագայթները, որ թվում է, թե նա փոխադրվել է հայրենի տնակի կտուրը և հրճվում է արևով։

Ու չնայած այդ ամենին նրան երբեմն համակում էր մենակության զգացումը, նա կուզեր լսել մի բառ, մի հրն-

չում, որ իրեն հիշեցներ իր մանկությունը, իր շրջապատը, ուր ծնվել ու սնվել էր ինքը։ Այս բանը կարծես ըմբռնում էր Սմիրնովը, և այդ էր պատճառը, որ նա հաճախ Սուրենին պատմել էր տալիս հայրենի երկրի, մոր ու վաղմի ընկերների և այն ամենի մասին, ինչ ինքը լսել ու տեսել էր հայերի ու Հայաստանի վերաբերյալ։ Այդ պահերին Սուրենի դեմքը պայծառանում էր, նա ամբողջովին դառնում էր եռանդ և պատրաստակամ այն ամենին, ինչ կպահանջեին նրանից։

Հիվանդանոցային կյանքն արդեն ձանձրալի էր դառնում իր միօրինակությամբ, մանավանդ որ Ինֆորմբյուրոն ոչ այնքան նպաստավոր լուրեր էր հաղորդում ռազմաճակատի վիճակի մասին։ Ի՞նչ էր լինելու վաղը, ի՞նչ էր սպասում իրեն, Սմիրնովին ու մյուսներին, վիկտոր ապաքինվելուց հետո։ Նա արդեն կրել էր պատերազմի շատ դառնություններ, բայց այն ինչ նա կրել էր, միայն սկիզբն էր երկանց և ինչ էր լինելու հետագայում, այդ ամենն առայժմ առեղծվածային էին նրա համար։

Նա մեկ-մեկ ուզում էր առանձնանալ Վերայի հետ և խոսել... թե ինչի մասին ինքն էլ չգիտեր, բայց ենթադրում էր, որ նրա հետ կարող է ավելի հետաքրքիր լինել խոսակցությունը և օրն ավելի կկարճի, կամ կթեթևացնի հիվանդանոցում անցկացնելիք ժամանակը։ Բայց Վերան օր ընդմեջ գալիս էր, բոլորին ընդհանուր բարև տալիս, մի երկու խոսք, այն էլ (այդպես էր թվում Սուրենին) քաղաքավարությունից դրված, երկու խոսք փոխանակում Սմիրնովի և իր հետ և ամբողջովին նվիրվում էր Դուդնիկի խնամքին։ Եվ այսօր առավոտյան ինչքա՜ն մեծ եղավ Սուրենի ուրախությունը, երբ հայտնեցին, որ Դուդնիկի կինը և եղբայրը եկել են։ Պարզվեց, որ Դուդնիկի եղբայրը պատասխանատու աշխատանք է կատարում ռազմական մի գործարանում, որը ընդամենը 150 կիլոմետրի վրա էր այն վայրից, ուր գտնվում էր հիվանդանոցը։ Դուդնիկի ընտանիքը Օրյուից փոխադրվել էր եղբոր մոտ, և ահա՛, այժմ, նրանք իմանալով

Դուդնիկի վիճակի մասին, եկել էին խնդրելու, որ թույլ տան նրան փոխադրելու այն քաղաքի հիվանդանոցը, որտեղ ապրում էին նրա հարազատները։

Առաջին օրը Վերայի դրությունը կրկնակի ծանրացավ։ Դուդնիկի կողակիցը, քսանութամյա, ոսկրոտ կազմվածքով, ջղային շարժումներով մի կին, հենց որ տեսավ ամուսնու վիճակը՝ ուշաթափվեց և եթե Վերան ժամանակին նրան չգրկեր, նա գլխով կգրնվեր սեղանին։

Բավական ժամանակ տևեց մինչև տիկին Մարֆա Դուդնիկին ուշքի բերին։ Հետո մեղադրեցին հիվանդանոցի անփորձ քրոջը (այդ օրը քույր Նատալյա Ֆիլիպովնան հանգստանում էր), որ չէր նախապատրաստել Մարֆային ամուսնու վիճակի մասին։ Սակայն, Մարֆան, ուշքի գալով, չկարողացավ հանգստանալ. լալիս էր անընդհատ և ինչ որ անկապ բաներ ասում։ Դուդնիկը, կնոջ ներկայությամբ, ինչքան թույլ էր տալիս իր վիճակը, աշխատում էր հանգիստ ձևանալ. բայց ըստ երևույթին, նրա վրա վատ էր ազդում կնոջ լացը, ուստի չհամբերելով, մյուս վիրավորների համար անսովոր ձայնով խոսեց.

— Է՜խ, Մարֆա, Մա՜րֆա, եկել ես ինձ խնամելու, հա՜, դե հիմա դու ասա, ես ինչպե՞ս վարվեմ քեզ հետ. սատանան տանի, ոտքս են կտրել, որ գլուխս կտրեին ինչ կանեիր։

Վիրավորներից մի քանիսը տեղում շտկվեցին և նայեցին Դուդնիկին։ Միթե այդ նա է խոսում, որ մինչ այդ բացի տնքոցից և հա ու չէից ոչինչ չէր ասել։

— Այ, ինչ եմ ասե՞լ, մուժիկ է եղել, հա՜,—խոսեց Սմիրնովը դիմելով Սուրենին և մյուս կողմը պառկած՝ աջ ուսից վիրավորված բաշկիր Իլբուլատովին,— ինչ լավ խոսքը տեղ է բերում այդ Դուդնիկը, ես ու իմ աստվածը, դա լավ էլ կամք ունեցող կոմանդիր եղած կլինի։

— Այդ մեկը ճիշտ է,—ասաց Իլբուլատովը,—այսքան ժամանակ նա տղամարդավարի տարավ իր ցավերը։ Լուռ էր և չէր գանգատվում։ Իսկ դու Սմիրնով, հիշո՞ւմ ես, ա-

առաջին օրը գանգատվում էիր, մրթմրթում, թե ինչ է Ֆեռ գիպսի մեջ են դրել։

— Այո, այո, կարծես ամաչելով այդ հիշողությունից կմկմաց Սմիրնովը։

Վերջապես Մարֆան հանդարտվեց, Դուդնիկի եղբայրը հիվանդանոցի գլխավոր բժշկի հետ տեսնվելուց հետո, ամեն ինչ իմացավ եղբոր վիճակի մասին, ապա նա մի քանի խոսք փոխանակեց վիրավորների հետ։ Վերայի մասին նրան շատ բան ասացին։ Դուդնիկը նույնպես նայեց եղբորը, կնոջը, ապա ցույց տալով Վերային ասաց.

— Ահա, նա։

Այդ երկու բառը, արտասանված շատ հանդիսավոր ու խորհրդավոր, այնպես տպավորիչ էին Դուդնիկի եղբոր համար, որ նա վերկացավ տեղից, բռնեց Վերայի աջ ձեռքը, համբուրեց, և նայելով նրա շիկնած դեմքին, ասաց.

— Ասեմ շնորհակա՞լ եմ, դա շատ քիչ է։

— Բժշկին պիտի շնորհակալություն հայտնեք, ես ինչ եմ հասկանում բժշկությունից, ես միայն...

— Ո՛չ, կարեց նրա խոսքը Դուդնիկի եղբայրը,— բժշկից շատ շնորհակալ եմ. իսկ ձեզանից։

— Այո, այո, վրա բերեց Մարֆան դիմելով տագերը,— մի լավ նվեր պետք է առնել այս բարեհնոմդ աղջկա համար։

Վերան խուսափուկ նայեց Մարֆային և նրա աչքերը լցվեցին արցունքով։

— Ախ դու Մարֆա, այս անգամ, հաղիվ լսելի ձայնով ասաց Դուդնիկը, թեը դուրս հանելով վերմակի տակից,— մի՞թե այլ բան չէր անցնում մտքովդ, ինչո՞ւ ես վիրավորում աղջկան։

— Նու, դու իմ Դուդնիկ... միթե ես...

— Այո, դու, մարդիկ այստեղ նվերի համար չեն աշխատում։

Մարֆան ոչինչ չպատասխանեց, բայց ակներև էր, որ նա մի տեսակ խանդի զգացումով էր նայում Վերային,

թվաց, թե այդ հասկացավ Վերան։ Նա ևս մի քանի խոսք փոխանակեց Դուդնիկի և նրա եղբոր հետ, ապա փոխանակեցին հայացքները։ Վերան մի պահ անվճռական կանգնեց, հետո անսալով մի ներքին ձայնի՝ կռացավ, համբուրեց Դուդնիկին և դուրս գնաց։

Հետևյալ օրը Դուդնիկին հանձնեցին եղբորը՝ փոխադրելու համար այն քաղաքի հիվանդանոցը, ուր բնակվում էին նրա հարազատները։

Սենյակում ամեն վիրավոր իր ցավով էր տառապում, բայց բոլորի համար մտահոգիչ էր Դուդնիկի վիճակը։

— Ասես այդ Դուդնիկը ոտքի կկանգնի՞,—մյուս առավոտ ֆոթացնելով կաթը, դիմեց Սմիրնովին բաշկիր Իլբուլատովը։

— Ոտքի՞... ո՛չ, ոտքի չի կանգնի, բայց հենափայտերի վրա կկանգնի,—հարեց Սմիրնովը։

— Ինչ մարդ ես տո՞,— բարկացավ Սուրենը,—մի՞թե կարելի է ծաղրել վիրավորին։

— Էլի բարկացա՞ր, Սուրեն,—խոսեց հանգիստ տոնով Սմիրնովը,— ես բոլորովին էլ ծաղրելու համար չասի։

— Չ՛է, չէ՛, այդպես չի կարելի խոսել,—պնդում էր Սուրենը։

Բայց զգացվում էր, որ բոլոր վիրավորներն իրենց ավելի թեթև էին զգում Դուդնիկին փոխադրելուց հետո։ Միայն Սուրենը տրտմել էր և, թերևս, այդ էր պատճառը, որ ամեն մի սուր խոսք նրան բարկացնում էր։ Բայց Սմիրնովը լավ էր հասկանում Սուրենի տրտմության պատճառը, նա Սուրենի կշտամբանքները լսում էր հանդարտ, և թվում էր թե նույնիսկ բավականությամբ, և այդ պատճառով էլ մի երկու րոպե անց նա համարձակ շշնջաց Սուրենին։

— Այդ աղջիկը... Վերան, սիրում է զբաղվել ծանր վիրավորներով, բայց առողջացողներին էլ չի մոռանում։

— Կարծո՞ւմ ես,— անսպասելի ուրախ տոնով հարցրեց Սուրենը։

— Այ, կտեսնես։

Հիվանդանոցի երկրորդ հարկի պատշգամբի ճաղերին արմունկները հենած, գլուխն ափերի մեջ առած, մտքերի մեջ խորասուզվել էր Սուրենը։ Նա նայում էր հեռու, բաց տարածությանը, սակայն այսօր ոչ մի բանի վրա չէր կարողանում կենտրոնանալ։

Քիչ առաջ նա լսել էր ինֆորմացիա. թշնամին առաջանում էր, ուժեղ կռիվներ էին գնում Սևաստոպոլում և Կուրսկու ուղղությամբ։ Սկսվում էր 1942 թվականի թեժ ամառը։ Շուտով Սուրենը և Սմիրնովը թողնելու էին հիվանդանոցը։ Վերջին մի քանի օրս Սմիրնովն ևս շատ հուզված էր։ Գերմանացիք մոտենում էին Ստարի-Օսկոլին, իսկ այդ քաղաքում բնակվում էր նրա ընտանիքը։

Ինչ էր սպասում Սմիրնովի ընտանիքին, այդ այժմ մտահոգում էր և՛ իրեն՝ Սմիրնովին, և՛ Սուրենին, որովհետև նրանք արդեն սովորել էին ապրել միմյանց հոգսով։ Սմիրնովը, որ շատ էր ցանկանում Սուրենին ուրախ տեսնել, աշխատում էր կատակի տալով, մի կերպ մեղմել իր հոգեվիճակը և նույնիսկ երեկ, քույրերի միջոցով Վերային կանչել էր հիվանդանոց, գիտենալով, որ այդ հաճելի է Սուրենին։

Պարզվել էր, որ Վերան մի քանի օրով գործուղված է եղել գյուղ, այդ պատճառով էլ նա չէր հաճախում հիվանդանոց։ Եվ ահա, այժմ, Սուրենը սպասում էր Վերային. Սուրենը մեկ-մեկ պատշգամբից հետ էր գալիս միջանցքը, ստուգում ժամանակը։ Արդեն կես ժամ անցել էր պայմանավորված ժամանակից և դեռ Վերան չկար։

Հիվանդանոցի առջև փռված պուրակում բարդիների հպարտ կատարները օրորվում էին քամու սոսափյունից։ Սուրենը նայում էր դողացող ճյուղերին ու գլխի շարժումով մի տեսակ շափ էր տալիս նրանց սոսափյունին։ Հանկարծ նրա դեմքին ժպիտ փայլեց. բարդիների արանքից ծաղկների փունջը ձեռքին գալիս էր Վերան։ Սուրենը ձեռները

պարզեց առաջ և ուզեց ինչ որ բացականչել, սակայն խկուլն զսպեց իրեն. Վերան շտապում էր դեպի դուռը։ Սուրենը խալաթն ուղղեց վրան և տեղում մի քանի քայլ ետ ու առաջ գնալ-գալուց հետո, անցավ միջանցքը. Վերային հանդիպեց աստիճանների վրա։ Ուզեց մի հանդիսավոր բան ասել, բայց միայն կարողացավ ասել։

— Եկա՞ր։

— Ինչպես տեսնում ես։

Ապա Վերան հարց ու փորձելով վիրավորների մասին, միաժամանակ ծաղկեփնջից առանձնացրեց մի նորաբաց կոկոն, տվեց Սուրենին, իսկ մյուսները տարավ հիվանդների սենյակը։

Սուրենը մի պահ, առանց աչք թարթելու, նայեց Վերայի ետևից և ինքն իրան կմկմաց—«ախր ես ուզում եմ խոսել նրա հետ... մի՞թե նա խուսափում է ինձանից»։ Այս մտորումի մեջ էր նա, երբ Վերան դուրս եկավ սենյակից, մոտեցավ Սուրենին և ասաց.

— Այդպես ուրեմն, Սուրեն Սիմոնսովիչ, շուտով մեզ թողնելու եք։

— Այսինքն,— չիմացավ միանգամից ինչ պատասխանել Սուրենը,— այսինքն հիվանդանոցը, իհարկե պետք է թողնենք, բայց ձեզ... ավելի լավ է Վերա, մի տեղ նստեինք... Բայց ներողություն, դուցե դուք ուզում եք զբաղվել վիրավորներով։

— Այդ իհարկե, բայց չէ՞ որ դուք էլ եք վիրավոր։

— Շնորհակալ եմ։

Նրանք անցան հյուրասենյակը. այնտեղ ձախ անկյունում դրված էր մի կլոր սեղան՝ այդ սեղանի շուրջը, փափուկ աթոռներին, նստեցին երկուսով։

Սուրենը ուշադիր նայում էր Վերային. թվում էր, թե առաջին անգամն էր տեսնում. մինչ այդ, ասենք, նա նրա վրա նայում էր իբրև խնամատարի, սակայն այժմ կուզեր այլ հայացքով նայել, կուզեր նրա մեջ տեսնել մի մտերիմ, հոգեկից ընկերոջ, և ինչքան նայում էր, այնքան ավելի

հրապուրիչ էին երևում նրան Վերայի դիմագծերը, և Սուրենը մի անսովոր պահանջ զգաց խոսել Վերայի հետ, խոսել իրեն հուզող բոլոր հարցերի մասին։ Վերան, լուռ նայում էր նրան, շրթունքները հագուցում իրար, որից նրա դեմքի ողջ արտահայտությունն ավելի հաճելի էր դառնում։ Վերան էլ շատ բան կուզեր լսել Սուրենից, նա արդեն գիտեր, որ Սուրենը հորից զրկվել է մանուկ հասակում, որ նրա մայրն ապրում է Հայաստանում և միանգամայն որդու կարոտն է քաշում։

Սուրենը, միջնակարգն ավարտելուց հետո, աշխատել էր Մեքենա-տրակտորային կայանում, երկու տարի եղել էր բանակում, որից հետո մտադրվել էր շարունակել ուսումը, երբ սկսվել էր Հայրենական մեծ պատերազմը։ Հայաստանի կոմերիտմիությունը անմիջապես երիտասարդության միտինգներ էր կազմակերպել ռազմաճակատին օգնելու համար։ Սուրենը առաջինն էր, որ քաղաքային միտինգում բեմ բարձրացավ, կոչ արեց ամեն ինչ նվիրաբերել Հայրենիքի պաշտպանությանը և պատրաստակամություն հայտնեց, իբրև կամավոր ռազմաճակատ մեկնել։

Նրա խնդիրը հարգեցին և նրան ու նրա օրինակին հետևողներին բարի ցանկություններով ճանապարհ դրին։

— Այո, քանի որ ես զինվորական գործը մի քիչ գիտեի, իմ խնդրի համաձայն ընկա այնպիսի զորամաս, որը շուտով պիտի մասնակցեր ռազմական գործողություններին։

Այսպես սկսեց Սուրենն իր պատմությունը և սկսեց ոչ այնքան Վերային պատմելու իր գլխով անցածը, այլ որպեսզի մի անգամ ևս վերապրի կրած դժվարությունները, քանի որ շուտով նորից պիտի սկսեր իր ռազմական կյանքը։

— Ես ուզում եմ,— կամացուկ ասաց Սուրենը,,—երբ նորից պատերազմի դաշտ մեկնեմ,— ուզում եմ լինի մեկը, որ մտածի իմ մասին...

— Ի՞նչ ես ասում, Սուրեն, քեզ համար այնքան մտածողնե՞ր, մայրդ, ընկերներդ,— հարեց Վերան։

— Մա՜լրս, այո՛, քաղցր բան է մայրը... բայց չէ՞ որ ամեն մարդ իր հոգում, բացի մորից ունի նաև մի այլ հարազատի պատկեր... ես կուզեի, որ այդ պատկերը լիներ նաև իմ հոգում և հաստատ գիտենալ, որ այդ հարազատ անձնավորությունն էլ իմ պատկերն ունի իր հոգում։

— Ի՞նչ գեղեցիկ ես խոսում, Սուրեն Սիանոսովիչ։

— Վերա ջան։

— Ի՞նչ ասիր։

— Ասում եմ, Վերա ջան, խնդրում եմ ինձ միայն Սուրեն ասա, ականջս սովոր չէ լսել Սիանոսովիչը։

— Բայց... դա շատ անհարմար կլինի ինձ համար,— ասաց Վերան և ձեռքը թեթևակի դրեց Սուրենի ձեռքին։

Սուրենը ոգևորվեց այդ բանից և ավելի համարձակ ասաց.

— Իսկ ինձ համար շատ հարմար է։

— Դե լավ, ասա՛, ասա՛։

Սուրենը մի պահ լռեց, էլ ի՞նչ ասեր. նա աչքերը խոնարհեց և ընկավ մտածմունքի մեջ, իսկ Վերան ինչ որ բան վերհիշելով ասաց.

— Դու խոստացել ես ինձ պատմել Կոլոսովի մասին, այնօր Սմիրնովն էլ հիշեցրեց, դա ի՞նչ պատմություն է, դուք, Սմիրնովի հետ հաճախ էիք խոսում նրա մասին, այդ ի՞նչ մարդ է, ինչո՞ւ այդքան հաճախ հիշում եք նրա անունը։

Սուրենը մի խոր շունչ քաշեց, այս անգամ համարձակորեն ձեռքի մեջ առավ Վերայի սիրունիկ, ճերմակ ձեռքը և յուրովի շշնջաց.— «Այ թե ինչից էի ուզում սկսել ու չէի գտնում»։

— Ի՞նչ, ի՞նչ ասիր, բարձր խոսիր,— ստիպեց Վերան։

— Այո, Կոլոսովը, ա՜յ, դա պատմելու բան է, Վերա ջան,— սկսեց Սուրենը և ուրախացավ, որ խոսելու նյութ ունի, գուցե սա օգներ իրեն մի կերպ նորից անդրադառնալ իր սիրած նյութին,— Վերա, արդեն գիտես, որ մի քանի օրից ռազմաճակատ եմ մեկնելու։

— Այո, ա՜խ, այո՛... Թշնամին առաջանում է. հայրենի՜ք, ազատությո՛ւն...

— Այո, հայրենիքի համար, ազատության համար... երաժշտական ձայնով ասաց Սուրենը,— բայց թանկագինս, այդ ամենն արդեն ինձ էլ, քեզ էլ շատ լավ հասկանալի է, բայց մի բան կա իմ մեջ, որ չեմ կարող բացատրել, հենց դրա համար էլ ուզում էի առանձին խոսել քեզ հետ... կնոջ սիրտն, ասում են, այս դեպքում, ավելի հեշտ է լուծումը գտնում։

— Այդ ինչ դժվար հարց է։

— Եթե կուզես բոլորովին էլ դժվար չէ, բայց չգիտեմ ինչու, երբ ուզում եմ այդ մասին խոսել, թվում է թե ավելի հասարակ կստացվի, քան մտածում եմ։

— Դե, ասա վերջապես, ի՞նչ ես մտածում։

— Այ թե ինչ, ես հայ եմ,— ասաց Սուրենը մի տեսակ հանդիսավորությամբ,— իմ հայրենիքն ունի քանհինգ դարու պատմություն։ Շատ փորձանքներ ենք տեսել մենք։ Շատ մեծ մարդիկ ենք տվել։ Ու այդ մեծանուն մարդկանց գործերի մեջ, ինձ միշտ գրավել է մի բան, հրապուրել է այդ մարդկանց բնավորության մի գիծը, որը դարձել է մեր ժողովրդի և ամեն մի հայ մարդու բնավորության գիծը։

— Այդ ո՞ր գիծն է։

— Այդ այն է, որ երբեք պարտքի տակ չմնալ։ Եթե մեկը մեզ մի որևէ լավություն է արել, այդ լավությունը փոխարինել լավ գործով, մի այնպիսի գործ անել այդ մարդու համար, որ և՛ քեզ բարձրացնի և՛ քեզ լավություն անողին։ Եվ քանի չի արված այդ գործը, կյանքը չի կարող հաճելի լինել։

— Է՜հ, դա բնավորության շատ լավ գիծ է, էլ ի՞նչ էիր ասում, թե դժվարանում ես միտքդ հայտնել։

— Այ, դու ասում ես լավ է ստացվում իմ ասածը, բայց ինձ թվում է թե այդպես չէ, դեռ շարունակությունն էլ լսիր, այդ, ինչ ասում եմ, կապվում է իմ անձնականի, իմ հետագա գործողությունների հետ։

— Այդ արդեն շատ հետաքրքիր է,— դուրեկան ժպիտով ասաց Վերան և Սուրենի խալաթը հարդարեց։

— Ես քեզ չե՞մ պատմել, թե ինչպես վիրավորվեցի։

— Ոչ։

— Այո, բախտս բերեց, ես պրծա վիրավորվելով, մինչդեռ կարող էի սպանված լինել։

— Ո՞հ,— բացականչեց Վերան։

— Այո՛, սպանված, բայց միայն վիրավորվեցի։ Ինձ փրկեց մեր գնդի կոմիսար Կոլոսովը։

— Ա՜խ, այդ Կո՛լոսովը։ Վերջապես ո՞վ է այդ մարդը, դե, պատմիր, այդ ի՞նչպես եղավ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

— Ահա՛, թե ինչպես,— սկսեց Սուրենը հարմար տեղավորվելով բազկաթոռում,— փետրվար ամիսն էր. ցուրտ, սառնամանիք։ Գերմանացիք առաջին անգամ փորձով համոզվում էին, որ իրենք ամենազոր չեն. նրանք մեր առջևից փախչում էին, բայց թե մի՛ տեղ էլ կանգնում էին, սատանայի նման համառում, մնում էին։ Նրանց դուրս մղելու համար քրտինք ու արյուն էինք թափում։ Մի գյուղում նրանք ամրություններ էին կառուցել և նրանց տեղից շարժել չէր լինում։ Եվ ահա մեր վաշտը հրաման ստացավ, ինչ գնով էլ լինի գերմանացիներին դուրս շպրտել այդ գյուղից և առաջ շարժվել դեպի մոտակա քաղաքը։

Սուրենը մի պահ լռեց, ապա տեսնելով, որ Վերան ուշադիր իր խոսքին է սպասում, հաղաց, տրորեց ճակատը, կարծես վերհիշելու համար իր պատմության համար անհրաժեշտ ռուսերեն բառերը և շարունակեց.

— Մեր վաշտում լավ տղերք կային. հենց մեկը այս մեր Սմիրնովը. մի քիչ շատախոս է, բայց ի՞նչ կռվող է. մի կռվում նա հինգ գերմանացու սվինահար արեց, իսկ իրա

քիթն էլ չարնոտվեց։ Բայց ամենից շատ ինձ դուր եկավ մեր գնդի կոմիսար Կոլոսովը։

— Այո, այո,— մի ձեռքը դնելով կրծքին կմկմաց Վերան։

— Կոլոսովը հաճախ էր այցելում մեր վաշտը. մեզանում մեծ մասամբ ռուսներ էին. կային նաև այլազգիներ, իսկ հայ՝ մենակ ես էի։ Կոլոսովը, մեր վաշտի զինվորներից մեծ մասին անձնապես ճանաչում էր. ասում էին, որ նա այդպես անվանական ճանաչում էր նաև գնդի զինվորներից շատերին։ Նա սիրում էր ամեն մի զինվորի հետ խոսել առանձին, հարցնում էր տանից-տեղից, ընկերներից ու բարեկամներից։ Եվ ահա, ինչքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ իմացա, որ նա ծանոթ է հայերին ու Հայաստանին, ժամանակին եղել է Հայաստանում և բավական լավ գիտի մեր ժողովրդի սովորությունները։ Նա սրտալի մարդ էր, բայց գործի ժամանակ շատ էլ խիստ էր, իսկական զինվորականի տիպ էր, է՞... ինչ կուզես ասա, Վերա ջան, կարոտել եմ այդ մարդուն... հա, ինչ ասեմ, գլուխ գովալ չլինի, բայց մեր զորամասում ինձ հավանում էին, ասում էին, որ էնպես,— և, ռուսերեն բառը չգտնելով, ասաց հայերեն,— աչքաբաց մարդ եմ։

— Ինչպե՞ս, ինչպե՞ս,— հարցրեց Վերան։

— Դրա միտքն այն է, որ ասում էին, թե ես մի բանի պետք կգամ... Եվ ահա գնդի հարձակման նախօրյակին մեր վաշտը եկավ Կոլոսովը, հավաքեց բոլորիս, բացատրեց մարտական խնդիրը, ասաց թե ամեն մի դասակը, ամեն մի ջոկը ինչ կարող է և ինչ պետք է անի, ապա սկսեց մեկ-մեկ խոսել, թե զինվորներից յուրաքանչյուրն ինչ կարող է անել. խոսեց մի քանիսի մասին. մեկ էլ լսում եմ իմ անունը, ազգանունը,— ահա՛, ասում է նա,— ահա ձեզ Սուրեն Նահապետյանը, նա ազգությամբ հայ է, ինքն էլ կոմերիտական։ Մեր այս վաշտում նա մի տեսակ ներկայացուցիչ է հանդիսանում. նա ներկայացնում է Հայաստանը։ Մինչև հիմա մենք առավելապես սովորել ենք, Սուրենը լավ է սովո-

բել ռազմական գործը։ Կարո՞ղ է հիմա նա վատ կռվել, իհարկե ոչ, Հայաստանը չի ների այդ բանը նրան։ Այնտեղից նրան կգրեն, թե դու, Սուրեն, այդ ինչպես ես ներկայացնում մեր ժողովուրդը քո զորամասում։ Բայց դե, հավատացած ենք, որ Սուրենը երբեք այդ օրին չի ընկնի, որ Հայաստանից վատ խոսք լսի...

Սուրենը նորից լռեց ու այլևս չէր նայում Վերային, մտքով պատկերացնում էր ռազմադաշտը, ընկերներին, Կոլոսովին և մարմնով մի տեսակ սարսուռ էր անցնում։

— Այո՛, սիրելի Վերա, մինչև հիմա էլ, գուցե երբեք էլ չմոռանամ այդ խոսքերը։ Նա, Կոլոսովը ինձ համարեց Հայաստանի, իմ ժողովրդի ներկայացուցիչը այդ վաշտում։ Շատ դուրեկան էր լսել այդ, բայց դա շատ ծանր պարտավորություն դրեց ինձ վրա և ես ոչ մի կերպ չեմ կարողանում այդ պարտքի տակից դուրս գալ։ Ավելին, նոր ու նոր պարտքեր են ծանրացել հոգուս վրա... մտածում եմ, թե ի՞նչ եմ արել մինչև հիմի... համարյա ոչինչ։

— Նու, ինձ այնքան էլ անփորձ մի համարիր, չի կարող պատահել... միշտ այդ կռվողներդ նույնն եք կրկնում, թե մի առանձին բան չենք արել,— միջամտեց Վերան,— ապա մի պահ լռելուց հետո, ընկճված ձայնով ավելացրեց—, ասենք գուցե և ճիշտ ես ասում, երևի ոչինչ չանելուց է, որ գերմանացիք էլի սկսել են առաջ գալ։

—Ո՛չ, ինչքան էլ առաջ գան, իրենց դարձի ճամբեն են երկարացնում,— կարծես վիրավորված Վերայի այդ խոսքերից բացականչեց Սուրենը,— ուզում եմ ասել, քանի դեռ թշնամին կոխկրտում է մեր հողը, նշանակում է քիչ բան ենք արել։

— Այ, այդ մտքին համաձայն եմ։

— Այո, Վերա, պատկերացնո՞ւմ ես իմ վիճակը, ես, իհարկե, կոմիսարին պատասխանեցի, թե պատրաստ եմ ծառայել հայրենիքին, բայց այնուհետև որ կողմը դառնում էի, ինձ թվում էր, թե ընկերներս այլ հայացքով են նայում ինձ. մինչ այդ, ինձ միայն Սուրեն էին ասում, կամ

Նահապետյան, կամ մեկ-մեկ էլ ձեռք առնում, ասում էին՝ «կոլոտ Սուրեն», բայց Կոլոսովի այդ խոսքերից հետո շատերն ինձ տեսնելով ասում էին—հայը, Հայաստանի ներկայացուցիչը։ Այնուհետև ես գործում, խոսում էի, կռվում ոչ միայն իբրև Սուրեն Նահապետյան, այլ իբրև մի մարդ, որի վրա նայում են իբրև մի ժողովրդի ներկայացուցիչի։

Եվ ահա հետևյալ օրը լուսադեմին մենք շարժվեցինք դեպի Թշնամին, Կոլոսովը նորից մի քանի ազդու խոսք ասաց. «Դե, ձեզ տեսնեմ, քաջեր, լավ իմացեք, հերոսի կուրծքը աստղեր կզարդարեն, վախկոտի գլուխը որդերը կուտեն. խիզախեցե՛ք»։ Մեր գումարտակին տրված էր ամենապատասխանատու խնդիրը—գրոհով վերցնել 617 բարձունքը։ Կես գիշերին անաղմուկ առաջ շարժվեցինք, գրավելու ելման դիրքերը։ Հետո իմացանք, որ հրամանատարությունը, Կոլոսովին հանձնարարել էր այդ կռվում անձամբ ղեկավարել մեր գումարտակի գործողությունները։

Նա մեզ հետ էր և նրա ներկայությունը ոգևորեց բոլորիս։ Ցյունը բավական խորն էր, խրվում էինք մինչև ծնկները, բարձրանում և էլի առաջանում... Ինչ երկարացնեմ, վերջապես հասանք նշանակված վայրը և, հարմար դիրքեր գրավելով, սպասում էինք գրոհի ազդանշանին. հիշում եմ ոնց այսօրվա դեպքը. Կոլոսովը գումարտակի հրամանատարի հետ, եկավ, ստուգեց թե մեզանից ով ինչպես է դիրքավորվել, ինչպես են դասավորված կրակային կետերը. երբ ինձ մոտեցավ հարցրեց. «Սուրեն, դիմանո՞ւմ ես այստեղի ցրտին»,— «այո,— պատասխանեցի ես,— վարժվել եմ, Հայաստանի լեռնային մասերումն էլ ձմեռը խիստ է»։ Եվ ինձ ու ինձ մտածում եմ, թե ինչ տեսակ մարդ է սա, կանգնած է թոփի բերան, մահն է աչքի առաջ, սակայն հարցնում է՝ չե՞ս մրսում։ Թե մրսես էլ, այդպիսի խոսակցությունը քեզ տաքացնում է։ Հա, սկսվեց մեր թնդանոթային նախապատրաստությունը, գերմանացիք նույնպես պատասխանեցին թնդանոթային կրակով, բայց մեր թնդանոթային կրակն ուժեղ էր գերմանացիներից։ Չեմ հիշում ինչքան տե-

վեց թնդանոթաձգությունը, մեկ էլ մենք հրաման ստացանք փորսող առաջ շարժվել դեպի գերմանական դիրքերը։

— Դժվա՞ր է հա, այդ փորսող տալը,— ցավակցական տոնով հարցրեց Վերան։

— Ձյան մեջ շատ դժվար է,— հաստատեց Սուրենը,— ձեռքդ գցում ես՝ բռնելու տեղ չկա, ձյունն էլ ցեխ փոխար է՝ ուզում ես հենարան ստեղծել, մեկ ոտքդ է խրվում, մեկ արմունկդ, մեկ հրացանի կոթը. մի խոսքով ամեն դժվարություն աշխատում ես մոռանալ, քանի որ թշնամին կրակ է թափում գլխիդ, իսկ դու գիտես, որ այդ ամենը վերջ կունենա միայն այն ժամանակ, երբ հասնես թշնամուն, նրան դուրս շպրտես իր դիրքից, առաջադրանքը կատարես և նոր միայն մտածես ազատ շունչ քաշելու մասին։ Գիտեմ, ինչքան փորսող գնացինք, մեկ էլ էն գիտեմ, որ նախ մեր նռնակները նետեցինք գերմանական կրակային կետերի ու խրամատավորված զինվորների վրա, ապա ինքներս էլ նետվեցինք դեպի խրամատները, որ ժամանակ չտանք հակառակորդին շունչ քաշելու։ Բայց ամեն ինչ քո ուզածի պես չի լինում։ Բավական գերմանացիք էին ընկել խրամատներում, բայց շատերն էլ դուրս եկան խրամատներից և սկսվեց սվինամարտը։

— Օ՜յ,— բացականչեց Վերան ատամները սեղմելով իրար։

— Այո՛, Վերա, դա կռվի թերևս ամենադաժան ձևն է, աչքերդ արնակալում են, հազիվ ես որոշում քո զինակցին ու քո թշնամուն, խփում ես... այ, մեր Սմիրնովը, երկուսին, թե երեքին պառկեցրեց... ես էլ, դե ինչ ասեմ. ես էլ ընկա կռվի տաք տեղը...

Սուրենը լռեց։ Թերևս զգաց, որ այդ այլևս չէր համապատասխանում նրան, ինչ ասաց քիչ առաջ, թե համարյա ոչինչ չի արել. նա կլանվել էր հիշողություններով, հուզվել էր, այլևս շատ բան չէր կարող ասել, քանի որ ուրիշ վիա չկար, իսկ երիտասարդ շիկահեր աղջիկը, որ այդպես հափշտակված հետաքրքրությամբ լսում էր իրեն, կարող էր

մաքով անցկացնել, թե ինքը արդեն սկսում է ինքնագովությամբ զբաղվել, մանավանդ որ այժմ դժվարանում էր ճշտությամբ վերապատմել տեսածն ու ապրածը։

Սակայն Վերան անհամբերությամբ կրկնում էր.

— Հետո, հետո։

— Այնուհետև ծանր մոմենտ եղավ... միայն այսքանը ասաց Սուրենը և դարձյալ լռեց։

Մաքերը հավաքելով նա մի քանի խոսքով պատմեց, որ 617 բարձունքի համար մղվող կռիվն ավարտվեց հաջողությամբ, միայն Սմիրնովը թեկից վիրավորվեց։ Սակայն Վերան անբավական էր. նրա համար դեռ պարզ չէր, թե ինչ նեղ վիճակից էր Սուրենին ազատել Կոլոսովը, որի անունը նա այնպիսի երախտագիտությամբ էր արտասանում։ Եվ երբ նա մի քանի ստիպողական հարցեր տվեց, Սուրենը կրկին խոսեց։

— Դեպքը տեղի ունեցավ բարձունքը գրավելու հետևյալ օրը. ես գումարտակի հրամանատարի մի հանձնարարությունը կատարելու համար, հրացանը ուսս առած, գնացել էի դիվիզիայի շտաբը, որը գտնվում էր մերձակա գյուղում։ Երբ վերադառնում էի մութն էր արդեն. հազիվ երկու հարյուր քայլ էր մնացել այն բնակավայրին, ուր տեղավորված էր մեր գունդն իր ստորաբաժանումներով. տեսա, որ դեպի ինձ են առաջանում երեք զինվորականներ. չմացա, թե որտեղից հայտնվեցին, բայց սիրտս կասկած ընկավ. ասի պետք է պատրաստ լինել։ Մոտեցան. գնդի բոլոր զինվորներին չես ճանաչի, բայց համոզված էի, որ դրանք մեր գնդից չէին. նրանք ինձ հարցրին, թե ինչպես պետք է գնալ դիվիզիայի շտաբը, պատասխանեցի թե չգիտեմ. էդ ասելս գիտեի, մեկ էլ տեսնեմ, նրանցից մեկն անցավ ետևս և, ինչքան կարողացա նկատել, մի պարկ ուզում էր դցել գլխովս. պարզ էր արդեն, որ զգեստափոխված գերմանացիներ էին։ Ուզում էին մարդ որսալ, տեղեկություններ ստանալ։ Թափով մի կողմ անցա ու սկսեցի պաշտպանվել. քանի որ նրանք ուզում էին ինձ ողջ բռնել, այդ պատճա-

ռով էլ ձգտում էին այնպիսի հարված տալ, որ հրացանը ձեռքիցս ընկնի։ Ատրճանակ էլ չէին գործածում, որ ձայն չլսվի։ Ինչպես եղավ, ես սվինահարեցի մեկին, որ ամենից բարձրահասակն էր. դա էլ քիչ մնաց իմ կործանման պատճառը դառնար։ Հենց որ ուզեցի սվինս հետ քաշեմ, մեկը մի հարված տվեց գլխիս ու ես գետին ընկա. հրացանը ձեռքիցս գնաց. անզեն՝ ոտքով, ձեռքով հարվածում եմ մնացած երկուսին, որոնք բոլոր միջոցներով ուզում էին ինձ քաշ տալ իրենց հետ...

— Ո՞ւֆ,— քրտմնջում էր Վերան։

— Դժվարանում եմ ասել, թե ինչքան տևեց այդ քաշքշուկը. ըստ երևույթին գերմանացիք համոզվեցին, որ դժվար է ինձ ողջ տեղ հասցնել. մեկ էլ այն տեսա, որ մի դաշույն պսպղաց աչքերիս դիմաց...

— Ա՜խ,— բացականչեց կրկին Վերան։

— Այո, գնա՞ց ջահել կյանքս, այն էլ այսպես հիմար ձևով,— անցավ մտքովս։

— Մի՞թե,— չդիտեր ինչ ասեր Վերան։

— Եվ այդ րոպեին հանկարծ լսեցի ատրճանակի պայթյուն և դաշունավորը թավալվեց կողքիս. ես վեր թռա. ետ դառնամ, ի՞նչ տեսնեմ, մեր Կոլոսովը, գնդի կոմիսարն է կրակողը։

— Այ քեզ բա՜խտ,— ժպտաց Վերան։

— Այո, նա էր. մի քանի ավտոմատավոր հետն առած, նա, ըստ երևույթին, ելել էր գումարտակների գործերն ստուգելու և հանդիպել էր մեզ... ես այս ենթադրությունների մեջ էի, թե ինչպես պատահեց, որ նա այսպես ժամանակին վրա հասավ, երբ մի սուր ցավ զգացի ազդրիս վրա ու հավասարակշռությունս կորցնելով վայր ընկա։

— Ա՜խ, այն երրորդը այո։

— Ճիշտ գուշակեցիք. երրորդ գերմանացին տեսնելով, որ իրենց բռնած գործը գլուխ չի գալիս, իր բանն էլ բուրդ է, որոշել էր թանգ ծախել իր կյանքը և կրակեց ինձ վրա։ Ինձ փոխադրեցին մոտիկ տունը։

— Քուլերը, բժիշկը շո՞ւտ վրա հասան,— տագնապում էր Վերան։

Իսկ Սուրենը, կարծես նոր միայն ազատված նկարագրված փորձանքից, շարունակեց։

— Բաց եմ անում աչքերս և նորից տեսնում եմ Կոլոսովին։ Ի՞նչ կարող էի ասել. նա այդ բոպեին ինձ համար, ի՞նչ ասեմ, որ հարմար լինի... այո, նա նոր շունչ փչեց իմ մեջ... մա՜հը... դե, որ պատերազմումն ես, մահդ աչքդ ես առնում, բայց այդ ձևով չէի ուզում մեռնել։ Կոլոսովը մի քանի հարցեր տվեց ինձ դեպքի մասին. ես պատմեցի, ինչքան կարող էի։ Եվ երբ կարգադրեց ինձ բուժ-սան դումարտակ փոխադրել, չհամբերեցի ու դառնալով նրան ասացի,— ընկեր կոմիսար, իմ կյանքին վտանգ էր սպառնում, երբ ես երեք-չորս տարեկան էի. այն ժամանակ մի բարի մարդ փրկել է իմ և իմ մոր կյանքը. մայրս ասում էր, թե երկրորդ անգամ ծնվեցի, այսօր, երբ ստույգ մահն էր իմ առաջ, դուք փրկեցիք ինձ և ես ծնվեցի երրորդ անգամ։ Հավ, լավ, Սուրեն,— ասաց նա բարի ժպիտով,— գնա բուժվիր, կռիվ է ամեն ինչ կպատահի, մենք բոլորս նորից կծնվենք, երբ այլևս թշնամի չի լինի մեր հողում»։ Այո՛, միայն այսքանն ասաց։ Այժմ Վերա, դու հասկանո՞ւմ ես ինձ, թե ինչո՞ւ է ինձ այդքան թանկ այդ Կոլոսով անունը։

— Այո,— բացականչեց Վերան,— այժմ ես պատկերացնում եմ այդ քո Կոլոսովին...

Սուրենն այլևս չէր խոսում, Վերան էլ այլևս հարցեր չէր տալիս նրան։ Լռության մեջ նրանք վերապրում էին այդ անցածը և այն, ինչ չէր կարելի արտահայտել բառերով, լրացնում էր երևակայությունը։

Հյուրասենյակում մարդիկ էին մտնում, դուրս գալիս բայց ոչ Սուրենը, ոչ էլ Վերան նրանց չէին նայում։ Լռությունը խզեց ժամացույցի հատու զարկը. ժամի տասնմե-

կից անց էր կես։ Նախաճաշին մնացել էր կես ժամ։ Մեկ ժամից ավելի նրանք խոսում էին։ Առաջինը Վերան սթափվեց մտապատկերներից և ուզեց վեր կենալ տեղից. Սուրենն այդ նկատելով մոտալվեց, նա այնպիսի հայացքով նայեց Վերային, որ վերջինս հասկացավ, թե շատ անհաճելի կլինի Սուրենին, այժմ նրանից հեռանալը, մանավանդ, որ Վերան հասկացավ, որ Սուրենը դեռ ասելիք ունի։

— Եվ այդպես Վերա,— խոսեց հանդարտ ձայնով Սուրենը,— նորից ուզում եմ անդրադառնալ այն խնդրին, ինչի մասին ուզում էի, որ քեզնից որևէ խոսք լսեմ... Շուտով Սմիրնովի հետ գնում ենք ռազմաճակատ։ Մի քանի օր առաջ տեղեկացանք ինչ որ պետքն էր, գիտենք ուր է կանգնած մեր դիվիզիան, Կոլոսովը դարձյալ գնդի Կոմիսարն է և մեզ թերևս նորից մեր գունդը ուղարկեն։ Եվ իմ մեջ փոթորկվում է մի միտք, թե ի՞նչպես անել, ի՞նչպես վարվել, չէ՞ որ կյանքովս պարտական եմ Կոլոսովին։ Այդ դեպքը ինձ համար սովորական էպիզոդ չէ։ Ինչքան հիշում եմ աչքիս դիմաց պսպղացող դաշույնը, ապա Կոլոսովին, որ իր ձեռքով ինձ փրկեց կործանումից, դա ինձ հանգիստ չի տալիս, իսկ ե՞ս, մտածում եմ, ես ի՞նչ պիտի անեմ դրա փոխարեն։

— Սուրեն,— ընդհատեց նրա խոսքը Վերան,— հիմա քեզ հասկանում եմ, հասկանում եմ նաև այն ինչ ասացիր հայ ժողովրդի բնավորության գծի մասին. լավ գործի դիմաց այնպիսի բան անել, որ և՛ քեզ բարձրացնի, և՛ քեզ լավությունն անողին,— կարծեմ այսպես ասիր դու քիչ առաջ, այո՞։

— Այո՛, այո՛։

— Դե, հիմա ամենալավ գործը, դա լավ կռվելն է։

— Այդ ճիշտ է, բայց մեկ-մեկ մտածելով Կոլոսովի մասին, ինձ թվում է, թե նա կռիվ եմ գնում բացառապես նրան մի լավ գործով փոխհատուցելու համար, և սա ինձ հանգիստ չի տալիս, ինձ թվում է, թե այսպես մտածելով վիրավորում եմ այդ մարդուն. չէ՞ որ ես կռվում եմ ընդհանուր գործի համար, հանկարծ վախենում եմ չհամբերեմ և

նրա մոտ այնպես ցույց տամ, որ ես ուզում եմ նրան փոխհատուցել, իսկ նա՞, նա ի՞նչ կմտածի իմ մասին... մի խոսքով, Վերա, բարդ է այս պատերազմը։ Առաջ կարծում էիր, թե այս է, գնացիր, քաջություն ցույց տվիր, հետո ամեն ինչ լավ կգնա։ Բայց տեսնում ես, որ այդպես չէ, ամեն օր հոգիդ ու սիրտդ լցվում են նոր հարցերով, նոր, երբեմն շատ հասարակ թվացող, բայց արդեն բարդացած խնդիրներով։

— Ինչ ասեմ, Սուրեն,— դու կռիվ ես գնում,— ես էլ բան չեմ գտնում ասելու, այո, կռիվ ես գնում հարուստ հոգով։ Ես քեզ ոչ մի խորհուրդ չեմ կարող տալ, ես միայն մի բան գիտեմ, երբ մարդիկ միմյանց վատահանում են, ապա նրանց գործը հաջող կգնա։ Ես էլ իբրև ռուս աղջիկ շատ գոհ եմ, որ մի հայ մարդ այնքան է վատահանում ինձ, որ իր հոգու բոլոր գաղտնիքները, իր բոլոր մտքերը ասում է ինձ։ Իսկ այդ ամենը, ինչ դու ասում ես, ինձ շա՞տ է դուր գալիս։

— Հոգու բոլոր գաղտնիքնե՞րը,— բացականչեց Սուրենը։

Վերան ոչինչ չպատասխանեց և միայն աջ ձեռքով հարդարեց գլխի մազերը։

— Ոչ, ես հոգուս բոլոր գաղտնիքները չեմ ասել և, առհասարակ, չի էլ կարելի ասել այն ամենը, ինչ կա մարդու հոգում, հոգին դատարկություն չի սիրում, միշտ այնտեղ մի բան պիտի մնա։

— Շատ գուրեկան է լսել քեզ Սուրեն, ես մի տեղ կարդացել եմ հայերի մասին, այնտեղ ասված է, որ հայերը բանաստեղծական ժողովուրդ են և դու քո խոսքերով հաստատում ես այդ, բայց խնդրեմ ավելի պարզ ասա, ես ուզում եմ քեզ ճիշտ հասկանալ։

— Մի՞թե մինչև այժմ չհասկացար... ա՜խ, ուրեմն ես ավելորդ, դատարկ բաներ եմ ասում և դու ոչինչ չես հասկանում։

— Ներողություն, ես ձեզ կարծեմ, որևէ վիրավորական

բան չասի Սուրեն Սիմոնսովիչ, ես ամբողջ հոգով համակըրում եմ ձեզ, ես ձեզ շատ լավ հասկացա, որ դուք Կոլոսովին ուզում եք փոխհատուցել, ձեր կյանքը փրկելու համար, հասկացա որ դուք վաշտում համարվում եք Հայաստանի ներկայացուցիչ և ուզում եք, որ բարձր պահեք ձեր ժողովրդի անունը, հասկացա, որ...

— Լավ Վերա, ներեցեք ես խոմ ձեզանից քննություն չեմ պահանջում,— ասաց սրտնեղած Սուրենը։

— Ախ, ես ի՞նչ արի, ի՞նչ ասի, որ դուք, այդպես... հա դուցե ձեր հոգու գաղտնիքնե՞րը...

Վերջին բառերը Վերան արտասանեց համարյա յուրովի, ապա աշխատեց նայել Սուրենի աչքերի խորքը։ Սակայն Սուրենը գլուխը կախել էր և թվում էր, թե ծանր մտատանջության մեջ է։ Գուցե գալիք դժվարությունները նրան մի պահ մտահոգել էին, Վերան ոչինչ չէր կարող դուշակել։ Անցավ ևս երկու լուռ րոպե, հանկարծ Սուրենը խլեց Վերայի ձեռքը, առավ երկու ափերի մեջ, նայեց նրա ոսկեգույն մազերին, քնքուշ դեմքին, ապա թափանցիկ հայացքով նայեց նրա ծավի աչքերի խորքը և շշնջաց։

— Վերա՜։

— Ասա՛,— սրտի տրոփյունով, մեղմաձայն արձագանքեց Վերան և լարված հետաքրքրությամբ սպասում էր Սուրենի հաջորդ խոսքին։

— Վերա, սիրելիս... ես այնպես, մեր զրույցի սկզբում, գեղեցիկ խոսքի համար չասի հարազատի պատկերի մասին։

— Ա՜խ, այո, ինչ հիշաշարն ես, բայց ես դա գեղեցիկ խոսք համարեցի լավ իմաստով։

— Մի միջամտի՛ր.

— Ներողություն, օ՜յ ինչ բարկացկոտն ես։

— Վերա՛, սիրելիս, կովի թունդ պահերին, ինչպես ասեմ, որ հասկանալի լինի, միայն գեղեցիկ խոսք չլինի... այո կովի թունդ պահերին, հանկարծ սիրտս սիրո կարիք է զգում... սերը միշտ մարդու ուղեկիցն է կյանքում... բայց այն րոպեին երբ ոռնում են թնդանոթները, երբ վերևից

ռումբերի են թափվում գլխիդ, երբ թվում է, թե ահա պիտի հոգիդ փչես, այո, ինձ համար, գոնե այդպես է, այդ բոպեներին, ուզում եմ մեկին ունենալ, որ մտածի իմ մասին, այո, հատկապես իմ մասին— հոգի չունեցողը կարող է միայն սա էգոիզմ համարել,— ուզում եմ, որ այդ մեկը երազում տեսնի ինձ, որ ես էլ երազումս տեսնեմ նրան ու գոնե հեռվից հոգամ նրա մասին։ Ուզում եմ նրանից խոսք լսեմ, ուզում եմ որ որևէ շրջապատում նա խոսի իմ մասին, որ ես էլ նրան խոսք ասեմ, հոգուս, սրտիս խորքից բխող խոսքեր գրեմ անշունչ թղթին, հաղորդեմ նրան և ամենքն իմանան, որ ես ապրում եմ ու գործում եմ նաև նրա, այդ էակի համար։

— Այո, այո,— կմկմում էր Վերան։

— Դուլլ տուր, սիրելի Վերա,—շշուկով ասաց Սուրենը և Վերայի ձեռքը սեղմեց ափերի մեջ,—Դուլլ տուր... ուղղամաճակատից քեզ գրել, ես քեզ նույնպես պարտական մնացի, դու լավ հետևեցիր, լավ խնամեցիր ինձ...

— Չարժե, չարժե այդ մասին։

— Սպասիր, մի ընդհատիր Վերա, դու մտար իմ հոգու մեջ,— և այս ասելով, Սուրենը հանգստացավ ու խորը շնչեց։

Վերան լուռ էր, ոչնչով չէր արտահայտում իր զգացածը, բայց թվում էր, թե նա կուզեր, որ Սուրենը շարունակեր խոսել։

— Վերա,— շշնջաց դարձյալ Սուրենը և կրկնեց քիչ առաջվա ասածը,— Վերա, դու մտար իմ հոգու մեջ։

— Սուրեն,— շափազանցում ես,— շիկնելով ասաց Վերան։

— Ոչ, ոչ, Վերա, ես ավելի քիչն եմ ասում, քան ներքնապես ապրում եմ։

— Այո՞,— ասաց Վերան և ցանկացավ ձեռքն ազատել Սուրենի ձեռքերից։

— Մի շտապիր, Վերա՛, մի խոսք ասա.

Սակայն Վերան լուռ էր։

Այն ժամանակ Սուրենը նորից խլեց Վերայի ձեռքը, ուզեց մոտեցնել շրթունքներին, բայց Վերան փութով բարձրացավ տեղից և ինչ որ բան շշնջալով դուրս գնաց հյուրասենյակից։

Հնչեց նախաճաշի զանգը։

Սուրենը ոտքի ելավ և փոխանակ ճաշարան գնալու, փնտռեց Վերային, սակայն ոչ մի տեղ չգտավ նրան։ Եվ թվաց, թե այն, ինչ խոսեց նրա հետ՝ երազի մեջ էր, իսկ Վերան էլ մի տեսիլք էր, որ եկավ, շողք սփռեց ու անհայտացավ, թողնելով միայն արբեցուցիչ բուրմունքը։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԵՐՈՐԴ

Երրորդ օրն էր, ինչ Սուրեն Նահապետյանը և Ալեքսեյ Սմիրնովը գնացքով ճանապարհ էին ընկել դեպի Վորոնեժի ռազմաճակատը, ուր գտնվում էր նրանց զորամասը։ Նրանք աջողջովին ապաքինվել էին։ Երկուսով տեղավորվել էին մարդատար գնացքի մի կոշտ վագոնում, վագոնը ծայրե ի ծայր լիքն էր բազմատեսակ ճամբորդներով, ոմանք Սուրենի և Սմիրնովի նման վերադառնում էին զորամասերը, ոմանք գնում էին իրենց հարազատներին փնտռելու ռազմաճակատին մերձակա վայրերում, ոմանք էլ, հատկապես Արևմտյան մասերից գաղթածները, բունը կորցրած թռչունների պես ճամբորդում էին, ավելի հարմար բնակության վայր գտնելու հույսով։ Ամեն մեկն իրեն հարմար ընկեր էր ճարել ու խոսում, վիճում էին բարձրաձայն, այդ ժամերի մեջ դժվար էր որոշել որևէ կապակցված խոսակցություն, բայց ով ինչի մասին էլ խոսում էր, դարձյալ անդրադառնում էր երկրում ստեղծված դժվար կացությանը։

Հուվիսյան շոգերն սկսվել էին, ծանր օդ էր կանգնած վագոնում, բաց լուսամուտներից փոշին անընդհատ ներս էր լցվում և տարածվելով մարդկանց դեմքերին, բաց պարա-

նոցներին, խառնվում էր քրտինքի հետ և ավելի անհաճելի դարձնում ճամբորդությունը։

Սմիրնովը տխուր էր. նա մեկ-մեկ թաշկինակով սրբում էր ճակատը, քրթմնջում և տրամադրություն չուներ խոսելու։ Այս առավոտ ինչ որ խոշոր կայարանով անցնելիս, նրանք տեղեկացել էին, որ մերոնք թողել էին Ստարի-Օսկոլը։ Թե ուր էր նրա ընտանիքը, կինը՝ Նաստյան, վեցամյա աղջիկն ու չորսամյա տղան, գաղթե՞լ էին, թե՞ մնացել իրենց բնակավայրում, նա ոչինչ չգիտեր։

Սուրենին հայտնի էին Սմիրնովի մտորումները, ընկերոջ վիշտը շատ էր մտահոգել նրան։ Սմիրնովին ոչ մի բան չէր հանգստացնում, ինքն էլ սրտում շատ բան ուներ և բացի Սմիրնովից չկար մի ուրիշը, որի մոտ կարողանար սիրտը բանալ, Սուրենը չէր կարող ուրախ լինել, մանավանդ այն պատճառով, որ չէր կարողանում իրեն հաշիվ տալ, թե ինչ տեղի ունեցավ վերջին օրերին հիվանդանոցում, իսկ Սմիրնովը որ այժմ նրա միակ խորհրդատուն էր,— նա էլ մռայլվել էր։

— Գնալ, գնալ,— մեկ մեկ յուրովի մրթմրթում էր Սուրենը,— գնալ հասնել զորամաս, այնտեղ լավ է, գիտես որ կռիվ է, պիտի կռվել,— կամ մեռնես, կամ ապրես, էլ զանազան հարցեր չեն տանջի ուղեղդ։

Ասուպի նման այս մտքերն անցնում էին նրա գլխով և նա հանկարծ սթափվելով նայում էր Սմիրնովին, չլինի՞, թե ինքը բարձրաձայն որևէ բան ասեց. բայց մի՞թե մի որևէ ծանր բան է պատահել, որ ինքը չի կարողանում պարզ ուղեղով մտածել։

Երրորդ օրվա երեկոյան գնացքը կանգ առավ մի կայարանում, հայտնեցին, որ այլևս առաջ չի գնա, ռազմաճակատ մեկնող զինվորականներին տրամադրվեց հատուկ գնացք։ Այդ ամենից շատ ուրախացրեց Սմիրնովին ու Սուրենին, և երբ մի քանի ժամ հետո, նրանք նստեցին նոր գնացքը, որտեղ բացառապես կարմիրբանակայիններ էին, թվում էր թե ընկան նոր աշխարհ, անմիջապես ճարեցին

նոր ընկերներ, իսկ Սմիրնովի համար ամենամխիթարականն այն էր, որ մի բանակային հայտնեց, թե Վորոնեժի շրջակայքում շատ կան Ստարի-Օսկոլից գաղթածներ և հավանական է, որ Սմիրնովը գտներ իր կնոջն ու երեխաներին։

— Ա՜յ, Սուրեն,— խփելով Սուրենի ծնկանը, զվարթացած բացականչեց Սմիրնովը,— հրաշալի բան կլինի, հա՜, մի Նաստյային ողջ և առողջ տեսնեմ, Կատյային ու Միշային մի գիրկս առնեմ... շատ եմ ուզում Սուրեն, որ դու էլ տեսնես կնկանս, ոսկի է, ոսկի։

Սուրենը վերջին օրերում այդպիսի զվարթ տրամադրության մեջ չէր տեսել Սմիրնովին։ Բարով հանդիպեինք այս բանակայիններին,— մտածում էր նա,— մի երկու հուսատու խոսքով ինչպես բացվեց ընկերոջ տրամադրությունը։ Ցանկանալով մի հաճելի բան ասել Սմիրնովին, Սուրենը վրա բերեց.

— Ալեքսեյ, հասնենք զորամաս, ապա մի քանի օրով թույլտվություն ստանանք, գնանք որոնելու քո Նաստյային, գուցե գտնենք, ճանապարհենք մի ապահով վայր ու հանդիստ սրտով գործի կպչենք։

— Այդ այնտեղ կտեսնենք,— մտածկոտ ասավ Սմիրնովը ու անմիջապես վրա բերեց,— ասում ես թույլտվությո՞ւն խնդրենք, նախ երկուսիս չեն թողնի այդպիսի գործի համար, երկրորդն էլ, գիտե՞ս ինչ կա, Սուրեն, հիմա որ մի հույս կա թե Նաստյաս այս կողմն է անցել, դե դա էլ մի բան է. ավելի լավ է գնալ զորամաս ու այնուհետև առաջ, առաջ, հիմա այս է իմ ուզեղումս. թե չէ այսօր այս ինչ պատճառով ես ու դու հետ մնացինք, վաղը մի վաշտ հետ կմնա, մյուս օրը մի գունդ, իսկ գերմանացին հա առաջ կգա,— և ինքն իր մտքից ոգևորվելով հատու շեշտով գոչեց,— էլ ո՞ւր գա, մինչև ո՞ւրտեղ գա, այ, նրանք մոտենում են Կովկասին։ Չէ, Սուրեն, իմ Նաստյան հասկացող կին է, նեղության կդիմանա։

Սուրենը ոչինչ չգտավ պատասխանելու։ Ավելին, նա

մռայլվեց ու յուրովի ասաց,— «ինչ հիմար բաներ եմ մտածում ես, ինչ այդ հիվանդանոցում պառկեցի, ինչ այդ Վերային տեսա, գլխիս դուրս բաներ եմ ասում. ո՞վ է իմացել, առաջին օրը գնալ զորամաս և հետո թույլտվություն խնդրել ուրիշ գործով զբաղվելու, երբ թշնամին հա առաջ է գալիս»։ Եվ այնպես անտեղի ու անմիտ թվաց իր քիչ առաջվա խոսքերը, որ ամոթի զգացումը պատեց նրան ու նա շիկնեց։

Սմիրնովը կարծես հասկացավ Սուրենի վիճակը, նա լավ գիտեր, թե ինչն էր զբաղեցնում նրան հիվանդանոցում, երբ նա արդեն ապաքինվում էր, ուստի ավելի զվարթ ձայնով ասաց.

— Էհ, Սուրե՛ն, կպատահի, ամեն ինչ կարող է անցնել մարդու մտքով, շատ մի մտածիր... դու հիշո՞ւմ ես քո մասին ինչ ասաց Կոլոսովը,— դու մեզ մոտ Հայաստանի ներկայացուցիչն ես, ա՛յ կերթանք, կասենք, եկել ենք որ չթողնենք գերմանացին Հայաստան հասնի։

Սուրենը նայեց ընկերոջ դեմքին, նայեց նրա աչքերի խորքը և հանդարտվեց. անցան նա մի քանի րոպեներ, արևը թեքվել էր դեպի արևմուտք ու Սուրենին թվում էր թե այստեղ արևը ավելի մեծ է երևում քան Հայաստանում. Սուրենը գմայլված նայում էր վերջալույսի շողերով շիկնած հորիզոնին և բնության այդ հիասքանչ տեսարանի առջև, նա թվում էր թե դառնում է ամենակարող և ոչինչ չի կարող կասեցնել իրեն կատարելու այն ամենը, ինչ ինքը համարում է կարևոր այս աշխարհում ապրելու համար։

Այս միտքը նրան բավական աշխուժացրեց և նա այսօր սովորականից ավելի ախորժակով ընթրեց։

— Սուրեն — դիմեց Սմիրնովն ընկերոջը,— վաղը տեղ ենք հասնում,— տեսնենք ովքե՞ր են մնացել մեր զորամասում։

— Կերթանք, կիմանանք, գուշակություն անելը դժվար է,— վրա բերեց Սուրենը։

— Այ, դա ճիշտ խոսք է,— հարեց Սմիրնովը, ապա

նայելով Սուրենի աչքերի խորքը, ավելացրեց,— այդպես էլ չպատմեցիր, թե ինչ խոսեցիք Վերայի հետ. գաղտնապահ ես դարձել, Սուրեն։

Սմիրնովը, լավ գիտեր, որ որևէ գաղտնիք չէր թաքցված իրենից, և ինքն էլ առհասարակ հետամուտ չէր սիրահարական գաղտնիքներ իմանալու, բայց մի բան լավ գիտեր, որ Սուրենին հաճույք էր պատճառում խոսել Վերայի մասին, մանավանդ որ մի ինչ որ բան իրեն անհասկանալի էր մնացել նրանց փոխհարաբերությունների մեջ և այդ պատճառով էլ, Սմիրնովը, հենց դրանից էլ սկսեց։

— Ինձ այնպես է թվում,— ասաց նա,— որ այդ Վերան նեղացրեց քեզ, հա՞, Սուրեն։

Սուրենի համար աննկատելի անցավ Վերայի հետ բացատրվելուց հետո անցած վերջին ութը օրերը։ Դրա համար էլ նա որոշակի ոչինչ չէր կարող ասել Սմիրնովին, միայն նրան անսահմանորեն դուր էր գալիս Սմիրնովի հարցապնդումը, թվում էր, թե նորից ինքը ապրում է երանական ժամեր։

— Նա ինձ նեղացրե՞ց, հարցնում ես, ո՛չ, այդպիսի բան չեմ կարող ասել, բայց ինչ որ մի բան մնաց անհասկանալի։

— Կանանց միանգամից չի կարելի հասկանալ,— հաստատեց Սմիրնովը։

— Ինձ թվում էր թե այդ աղջիկը շատ պարզ աղջիկ է, պարզ էր նա, երբ այդպես հոգատարությամբ խնամում էր մեզ, պարզ էր նա, երբ գիշեր ցերեկ Դուդնիկի անքոցներն էր լսում, անսահման պարզ էր նա, երբ նույն այդ Դուդնիկի խանդոտ կնոջ ներկայությամբ համբուրեց Դուդնիկին, բայց հենց որ նրա հետ առանձին խոսեցի, նա ինձ հանելուկային թվաց։

— Դու այդ պատմել ես ինձ, Սուրեն, ոչ մի հանելուկային բան չկա այդտեղ, դու խոսել ես, սեր ես բացատրվել, իսկ նա ամաչել, թողել փախել է. այդ լավ է. այդ

նշանակում է նա թեթևամիտ աղջիկ չէ, սերը նրա համար թանկ, նվիրական բան է։

— Նվիրական, այո, բայց դիտես, թե նա ինչքան տանջեց ինձ, երբ իմ բացատրությունից հետո նա հինգ օր չերևաց հիվանդանոցում։

— Ո՞նց չգիտեմ, այդ անմիջապես կարելի էր իմանալ նայելով քո թթված դեմքին։

— Դե լավ, անցած գնացած բան է, Ալեքսեյ, հա, մտածում էի թե ահա ևս մի շորս-հինգ օր և ես էլ, դու էլ հիվանդանոցից դուրս ենք գրվելու, հապա ինչպես կլինի, հեռանալ այդպես անորոշ... և ինչքա՞ն էի ինքս ինձ մեղադրում, ասում էի ինչ հիմարն եմ ես, որ այդքան բան պատմեցի նրան, այդպես սիրտս բաց արի նրա առաջ, փուհ, ասում էի, հիմի տե՛ս, նա ո՞ր անկյունում նստած, ինչ մեղքս թաքցնեմ, նույնիսկ մտածում էի թե տես, հիմա ինչ տղայի մոտ նստած ծաղրում է ինձ... այդպիսի դեպքում ի՞նչ ցընդաբանություն չի անցնում մարդու մտքով։ Եվ ահա, ինչ մեծ եղավ նախ զարմանքս, ապա նաև ուրախությունս, երբ նա վեցերորդ օրը եկավ մեզ այցի։

— Այդ էլ եմ հիշում,—դու կարծեմ պատրաստ էիր ուրախությունից պարել,—ժպտաց Սմիրնովը։

— Լա՜վ, էլ ինչ ասեմ, մյուս օրը թույլտվություն խնդրեցի ու գնացի նրա մոտ՝ տունը։

— Տեսնո՞ւմ ես, դեռ ասում ես հանելուկ է, կարգին աղջիկ է եղել, տուն է հրավիրել։

—Հա, ներս եմ մտնում, նա, Վերան ինձ դիմավորում է միջանցքում, առաջնորդում երկու սենյակից բաղկացած մի կոկիկ բնակարան, ծանոթացնում է իր բաբուշկայի հետ։ Ես իհարկե, ոչ մի բանի չէի նայում, ուշք ու միտքս ինքն է—Վերան, տեսնես ինչո՞ւ է կանչել, ինչ ունի ասելու։ Քիչ հետո ես ու նա մենակ ենք մնում։

Սուրենը լռեց, ուզում էր կապակցված պատմել, բայց ոչինչ չէր դուրս գալիս, միայն այսքան իմացավ Սմիրնովը նրա հետագա խոսքերից։ Վերան սովորում էր տեղական

մանկավարժական ինստիտուտի վերջին կուրսում։ Իր խընդրանքով նրան ամրացրել էին հիվանդանոցին... նրա աշխատանքի այդ մասը ծանոթ էր նրանց. նա համաձայն էր Սուրենի հետ նամակագրություն ունենալ, նա, Վերան, այդպես էլ ասել էր, անտարբեր չէ դեպի Սուրենը, բայց դրանից ավելին չի կարող ասել, իրենք ծանոթացել են այնպիսի պայմաններում, երբ Սուրենը վիրավոր էր, խնամքի կարոտ, իսկ ինքը Վերան, խնամատար, գուցե, այն զգացումն ինչ առաջացել էր Սուրենի մեջ դեպի Վերան սեր չէր, այլ երախտագիտական զգացում է միայն, թող Սուրենը այնտեղ, ռազմաճակատում, լավ կշռի, դատի, ինքն էլ, Վերան էլ այստեղ լավ կկշռի, կդատի, ապա այն ժամանակ միայն նորից կխոսեն, թեկուզ նամակով, իրենց սիրո մասին։

— Այո, Ալեքսեյ, բացականչեց խոսքի վերջում Սուրենը,—նա վերամբարձ խոսքեր չասաց, բայց ինձ թվում էր, թե նա ասում էր, թե դու, Սուրեն, շատ խոսեցիր պարտքը կատարելու, հայ ժողովրդի արժանավոր զավակ լինելու և այլնի մասին, գնա այդ բաներն ապացուցիր նոր գործով, հետո կիմանանք թե ինչ պտուղ ես։ Հա, Սմիրնով ասա՛, այս չէ՞ր նշանակում նրա վարմունքը։

— Ազնիվ խոսք, եթե նա այդ մասին ոչինչ չի ասել և նրա վարմունքից դու այդ ես հասկացել, ապա իրոք նա շատ ավելի ազնիվ աղջիկ է, քան մենք պատկերացնում ենք, Սուրեն։ Առաջներս կռիվ կա, ահագին ճանապարհ կա... մի վհատվիր, նա քեզ չի մոռանա։

— Կարծո՞ւմ ես...

— Չէ, չէ, չի կարող մոռանալ և ոչ միայն մոռանալ, ինչ ասեմ, ժամանակ է, կանցնի կտեսնենք։ Տեսա՞ր աղջիկը մինչև անգամ կայարան եկավ քեզ ճանապարհ դնելու։

— Մենակ ես հո չէի՞ մեկնողը,—ասաց Սուրենը։

— Բայց նա մեզ ամենքիս հետ իբրև պարտականություն համբուրվեց, իսկ քեզ հետ ուրիշ կերպ, Սուրեն, ուրիշ կերպ համբուրվեց, այն էլ մի քանի անգամ... իմ աչքը

366—4

փորձված աչք է։ Ես գիտեմ նաև, որ նա քեզ Թաշկինակ էլ է նվիրել, իր անունը վրան գրված։

— Է՛հ, հիմա բոլոր աղջիկներն էլ նվեր են ուղարկում ռազմաճակատ։

Սուրենն ասում էր այդ բոլորը ոչ թե հակաճառելու համար, այլ նա կուզեր Սմիրնովից լսել իր մտածածը հաստատող խոսքեր և ուրախությամբ լսեց, երբ Սմիրնովը վրա բերեց։

— Բոլորն են այո, նվեր ուղարկում, Վերան կարող է ուրիշներին էլ նվեր ուղարկել, բայց... ի՞նչ ես այդքան կասկածոտ դարձել ու ամեն տեղ հանելով տեսնում... բավական է, քնի՛ր, ասա, այնտեղ, ռազմաճակատում լավ գնան գործերս. Վերան այն ժամանակ հոգին էլ կտա։ Դե բարի գիշեր...

Սուրենը պառկեց մեջքին, գնացքը դղրդոցով առաջ էր ընթանում։ Սուրենը տարված մտքերով հետևում էր անիվների ձայնին՝ թիք-թաք, թիք-թաք, որը սակայն այժմ նրա ականջին հասնում էր իբրև Վերա, Վերա։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Սուրենն ու Սմիրնովը միանգամից չընկան իրենց զորամասը։ Ռազմաճակատի շտաբի համապատասխան բաժինը նրանց երկու շաբաթով ուղարկեց վերապատրաստվելու։ Նրանք ծանոթացան նոր տեսակի ավտոմատ զենքին, յուրացրին թշնամու հետևակի ու տանկերի դեմ կռվելու մի քանի նոր ձևեր, և ապա, նոր միայն թույլտվություն ստացան մեկնել իրենց զորամասը։

Նրանց գունդը տեղավորված էր Վորոնեժի Հյուսիս-Արևմտյան կողմի վրա սփռված անտառներում և օրե-օր սպասում էր դիվիզիայի շտաբի հրամանին, մյուս գնդերի հետ միասին առաջ շարժվելու։ Երբ երկուսով մտան գնդի սահմանը, առաջին մարդուն՝ որին հանդիպեցին, դա մի

բարձրահասակ զինվորական էր, որը խոր անտառից դուրս էր գալիս՝ գիմնաստյորկայի փեշը գոգնոցի նման վեր բարձրացրած, այնպես, որ միջի պարունակությունը չթափվի։

Սուրենը ուշադիր նայեց իրենց մոտեցող զինվորականին և բրդելով Սմիրնովին բացականչեց.

— Պա՜հ, սա հո մեր Պետրովն է։

— Նու, իհարկե, նա ինքը—հաստատեց Սմիրնովը։

Պետրով կոչվածը մի պահ կանգնեց, ապա ճանաչելով եկողներին, իր երկայն սրունքներով լոք տալով, հասավ, մի ձեռքն ազատեց փեշից—գրկեց ու համբուրվեց Սմիրնովի, ապա Սուրենի հետ։

— Նու, և եկա՞ք,—միայն կարողացավ ասել նա,—ապա ցույց տալով փեշում եղածի պարունակությունը ասաց,—մալինա կերեք։

Պետրովն իրենց վաշտի զինվորներից էր, որի հետ նրանք շատ լավ ու վատ օրեր էին անցկացրել։ Նրանք ուզեցին Պետրովից իմանալ, թե ինչ վիճակի մեջ է վաշտը, սակայն Պետրովն ինքն էր հարցեր տալիս հիվանդանոցի, թիկունքի կյանքի մասին և տրամադիր չէր որևէ բան ասել։

— Իսկ ի՞նչպես է Կոլոսովը,—հարցրեց Սուրենը, գոնե մի բան իմանալու համար։

— Լա՜վ, հիմի գունդը հրամանատար չունի, Կոլոսովն է հրամանատարությունն անում։

— Իսկ ո՞ւր է հրամանատարը։

— Ինչ ասեմ, վերջին կռվում գործերն այնքան էլ լավ չգնացին, տարան ուրիշ տեղ, դե, Կոլոսովը գործն իմացող կոմիսար էր, երևի նա էլ մնա հրամանատար... ասենք դա նաչալստվոյի գործն է։

— Վաղո՞ւց է, ինչ կռվից դուրս եք եկել,—հարցրեց Սմիրնովը։

— Մի քան օր կլինի, կարգի ենք բերում մեզ, լրացում ենք ստանում, դե այս է, դուք էլ եկաք, լրանանք, տեսնենք այս նոր կազմը ինչքան կդիմանա... զոռում են,

հա՞, պինդ են զոռում այդ գերմանացիք։ Վորոնեժին են սպառնում։

— Իսկ գունդը ե՞րբ է նորից կռվի մեջ մտնելու,— հարցրեց Սուրենը։

— Ե՞րբ... կմկմաց Պետրովը,— ապա փեշը բարձրացնելով ասաց,— մալինա կերեք, անտառի խորքից եմ բերել, տեղն ու տեղը վիտամին է...

— Դու այն ասա,— պնդեց Սուրենը, երբ ենք կռվի մեջ մտնելու։

— Քեզ ասում եմ, ընկեր Հայաստանի ներկայացուցիչ, մալինա կեր, դա ռազմական գաղտնիք է, դուք դեռ իսկի զորամասի հրամանատարին էլ չեք ներկայացել, ի՞նչ կարող եմ ասել ձեզ։

— Իրան մտիկ, վիրավորվեց Սմիրնովը,— նախ դու ոչինչ չգիտես Պետրով, երկրորդը, թե ուզում ես ռազմական ուսանողով շարժվել, պիտի այն էլ շասեիր, թե քսան օր է կռվից դուրս եք եկել, գնդի կազմն եք լրացնում, թե չէ այնպես ես ձևացնում, կարծես թե մի գաղտնիք գիտես։

— Լավ, լավ էլի էն մեծախոս Սմիրնովն ես։ Վիրավորվեցիր էլ, գոսպիտալում էլ պառկեցիր, քաղաքավարի մարդկանց հետ էլ չփվեցիր, էլի ոնց որ կաղնու կոճղը։ Այ, գնանք էսպես, ձեզ ցույց կտամ հրամանատարական կետը, հետո իրենք ձեզ կասեն թե ոնց պիտի գաք մեր վաշտը։

— Իսկ դու չե՞ս ասի, թե ուր է վաշտը։

— Չեմ ասի, դա հո ռազմական գաղտնիք է, դա հո միայն ես գիտեմ,— խոսեց Պետրովն արագ-արագ ու նորից լոք-լոք տալով՝ ընկերներին առաջնորդեց դեպի շտաբը։

Շտաբը տեղավորված էր մի գետնափորում՝ ծածկված ծառերի տերևներով։ Պահակը ստուգելով Սուրենի և Սմիրնովի փաստաթղթերը, նրանց ներս թողեց, նրանց երկար սպասեցնել չտվին. Կոլոսովն ինքն անձամբ էր ընդունում նոր լրացումը։ Երբ երկուսով ներս մտան, անմիջապես զինվորական բարև տվին և առաջինը Սմիրնովը զեկուցեց.

— Ընկեր հրամանատար, կարմիրբանակային Սմիրնովը բուժվել և վերադարձել է զորամաս։

Նրանից հետո նույնպես հատու կրկնեց Սուրենը.

— Ընկեր հրամանատար, կարմիրբանակային Նահապետյանը բուժվել և վերադարձել է զորամաս։

Կոլոսովը, քառասունհինգն անց, շիկահեր, ամուր թիկունքով, ուժեղ թևերով մի տղամարդ, որ նստած էր քառակուսի բլինդաժի անկյունին դրված սեղանի մոտ՝ շտապ սարքավորված մի անհենակ աթոռի վրա, վեր ելավ տեղից, մոտեցավ և, առանց որևէ բան ասելու, փոփոխակի նայեց մեկ Սուրենին, մեկ Սմիրնովին, ապա հանգիստ ասաց.

— Ձեռքերդ իջեցրեք։

Ե՛վ Սուրենը, և՛ Սմիրնովը անմիջապես ձեռները վար բերին և զգաստ վիճակով կանգնած նայում էին Կոլոսովի աչքերին։

— Նստեցե՛ք,—ասաց Կոլոսովը հետ գնալով դեպի սեղանը և ցույց տալով անկյունին դրված երկար նստարանը,—նու, պատմեցեք, ի՞նչպես էր հիվանդանոցային կյանքը,—հարցրեց Կոլոսովը, երբ արդեն նրանք նստել էին։

Սուրենն ու Սմիրնովը փոփոխակի պատմեցին թե հիվանդանոցում իրենց շատ խնամքով վերաբերվեցին, պատմեցին, թե ինչ վիրավորների հետ էին պառկած և որ արդեն այնտեղ ձանձրալի էր դառնում կյանքը և իրենք ձգտում էին զորամաս գալ։

Սուրենը նայում էր Կոլոսովին և նրան թվում էր, թե վերջին մի քանի ամիսների ընթացքում հրամանատարն ավելի ծերացել է, բայց նրա դեմքի վրա, աչքերի մեջ նա կարդում էր ինչ որ հարազատ բան և նա կուզեր նրա հետ մի պահ, գոնե մի պահ խոսել իբրև մտերիմ մարդու հետ. բայց ինչպես սկսեր, հա՞, դուցե Կոլոսովն ինքը ասիթ տար։

Կոլոսովը, սակայն նախ և առաջ բացատրեց, թե ինչ անելիքներ ունեն Սմիրնովն ու Սուրենը.

— Այ,—ասաց նա—կերթաք ձեր վեցերորդ վաշտը,

այնտեղ հներից քչերն են մնացել. Սմիրնով, դու նկատի ունեցիր, որ շուտով քեզ դասակի հրամանատար եմ նշանակելու, իսկ դու, Սուրեն, ջոկի հրամանատար պիտի լինես, երկուսդ էլ նոր կոչում կստանաք, դուք արդեն կռվի փորձ ունեք, նորեկներին կսովորեցնեք, ինքներդ էլ հրմտացեք ձեր գործի մեջ... կռվի ձևերը բարդանում են, պիտի սովորեք կռվել ոչ միայն դաշտում, անտառում, այլև քաղաքների փողոցներում, բնակելի վայրերում։ Շատ ետ եկանք, հիմա պիտի բոլորդ լավ յուրացնեք և ուրիշներին էլ սովորեցնեք այս պատվերը—այլևս ո՛չ մի քայլ ետ։

— Լսում եմ ընկեր հրամանատար,—կրկնում էր շուտշուտ Սուրենը։

— Ա՜յ, Սուրեն, գերմանացիք սպառնում են Կովկասը կտրել մեզնից։

Սուրենը գլուխը կախեց և կարծես հարմար գտավ ասելու, գոնե մի խոսքով ասելու այն, ինչ մտածում էր, ուստի և շտապ վրա բերեց։

— Այն օրվանից, երբ դուք, ընկեր Կոլոսով, փրկեցիք իմ կյանքը...

Կոլոսովը ձեռքը տարավ ճակատին, ինչ որ բան վերհիշելու համար, դա Սուրենին ոգևորեց և նա վրա բերեց.

— Ուրիշ իմաստ չեմ գտնում իմ կյանքում, քան...

Եվ չկարողացավ շարունակել, վախենում էր, որ չընտացվի այն, ինչ ինքը կցանկանար, բայց Կոլոսովը կարծես տարված իր մտքերով, չլսեց նրա այդ խոսքերը։

Կոլոսովը ձեռքը հետ տարավ ճակատից և ի պատասխան Սուրենի, ասաց.

— Ահա՛, մորիցդ նամակ եմ ստացել։

— Իմ մո՞րից,—վեր թռավ տեղից Սուրենը։

— Այո՛, դա իմ նամակի պատասխանն է, ես նրան հաղորդել էի, որ դու լավ կռվեցիր 617 բարձունքում, գրեցի, որ ուրախանա։ Քեզ նամակ է գրել, առաջին մասն ինձ է հասցեագրված, մյուս երեք էջը քեզ է գրել, այստեղ մի հայ հրամանատար եկավ անցյալները, նա ինձ համար

կարդաց, լավ բաներ է գրել, կտանես վաշտումն էլ կկարդաս... նրանցից նոր նամակ ունե՞ս։

— Այո, գոսպիտալում ստանում էի։

— Լավ... իսկ գոսպիտալում ուրիշ ինչ ծանոթություն ստեղծեցիր, այնտեղ քաղաքից լավ աղջիկներ են գալիս... մեր տղաներից շատերը նամակագրություն ունեն... հա՞, կարմրում ես, լավ, լավ, դա քո անձնական գործն է։

— Այո, ընկեր հրամանատար, միշամտեց Սմիրնովը այնտեղ մի Վերա կար։

— Նու, Սմիրնով,—հանդիմանական նայեց ընկերոջը Սուրենը։

Կոլոսովն ըմբռնելով Սուրենի վիճակը, դիմեց Սմիրնովին։

— Իսկ դու Սմիրնով, ընտանիքիցդ լուր ունե՞ս։

— Վատ լուրեր ունեմ, ընկեր հրամանատար,—հոգոց հանելով ասաց Սմիրնովը.

— Ի՞նչպես։

— Դե, Ստարի-Օսկոլը թողել ենք, իսկ թե մերոնք այնտեղից ինչ ուղղությամբ են գնացել, չգիտեմ։

— Այո՞,—մտահոգ բացականչեց Կոլոսովը, մաժեց ճակատը, ապա ասաց.—շատերը փախել են այս կողմերը, թաքնվել են անտառներում. հաճախ խմբերով անցնում են մեր կողմ... պետք է հարցնել, տեղեկանալ։—Եվ ապա կարծես պարզելով մտքերը վրա բերեց,—իսկ ամենից առաջ մտածել առաջ շարժվելու մասին. ռազմաճակատի դծից այն կողմ մեզ շատերն են սպասում։—Ազատ եք,—ասաց վերջում Կոլոսովը և մոր նամակը հանձնելով Սուրենին, սեղմեց նրա ձեռքը։

Սուրենը նայում էր Կոլոսովին, և ինչքան շատ էր նայում, այնքան ավելի հարազատ էին դառնում իրեն այդ մարդու դիմագծերը։

ԴԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Սուրենը, և՛ նույն, և՛ հետևյալ օրը, մի քանի անգամ կարդաց մորից ստացած նամակը։ Մայրը, վաթսունամյա Նազանին, շնորհակալություն էր հայտնում Կոլոսովին, որ նա գնահատել է իր որդու ծառայությունը զորամասում և, մայրական չթաքնված հպարտությամբ, գրել էր տվել,— «Ես հայրության համար որդի եմ բերել, որ իր հոր հիշատակը պայծառ պահի, մոր երեսն էլ ճերմակ պահի»։ Իսկ Սուրենին հաղորդելով իր վիճակը, որ ինքը մի միայնակ գլուխ է, ոնց էլ լինի Դպրի, ավելացրել էր նամակի վերջում,— «Մենակ թե, աղիզ բալա ջան, դու սաղ-սալամաթ նամուսով հետ դաս, արևովդ մխիթարվեմ, տուն ու տեղ դնեմ, սուրբ պակին արժանացնեմ, որ ես էլ ցամաք աչքով հողը մտնեմ»։

Նա արդեն անգիր էր արել մոր այդ խոսքերը և այլևս թվում էր, թե նա լսում է մորը և նա է իր ականջին շշնջում այդ բառերը հաճելի երաժշտությամբ։ Եվ ինչքան մտածում էր մոր մասին, իր երևակայության մեջ, Վերան էլ գալիս կանգնում էր մոր կողքին և նա զգում էր, որ այլևս չէր կարող անջատել նրանց միմյանցից։ Եվ հենց այդ հանգամանքը նրան ավելի ևս նվիրական էր դարձնում այն բոպեներն ու ժամերը, երբ նա հանդիպել էր Վերային։ Նա հենց առաջին օրը նամակներ էր գրել և՛ մորը, և՛ Վերային։ Վերայից ավելի շուտ էր պատասխան սպասում, քանի որ նրա բնակավայրն ավելի մոտ էր իրեն։

Եվ ինչքան շատ էր մտածում մոր և Վերայի մասին, այնքան ավելի եռանդով էր լծվում գործի։ Ե՞րբ, ե՞րբ վերջապես պիտի գա նորից կռվի մեջ մտնելու օրը։ Նա այդ օրվան սպասում էր անհամբերությամբ, և երբ այդ մասին խոսում էր ընկերների հետ, ոչ թե կրկնում էր սերտած բառեր իր պարտականության, հանդեպ Հայրենիքն ունեցած սիրո և այլ նման բարձր խոսքեր, այլ միայն կարճ կերպով ասում էր՝ ձուկ բռնողը չպիտի վախենա ջուրը

մտնել, թշնամուն հաղթել ցանկացող զինվորն էլ չպիտի վախենա կռվի մեջ մտնել։ Ե՛վ այն, ինչի մասին ինքն այնպես ոգևորված խոսեց Վերայի հետ,— և՛ այն միտքը, որ ինքն իրենց վաշտում հանդիսանում է Հայաստանի ներկայացուցիչը, և՛ այն երախտագիտական զգացումը, որ ինքն ունի դեպի Կոլոսովը, և՛ վերջապես այն գիտակցությունը, որ կռվի մեջ մտնելով միայն կարելի է իրեն արդեն սրբատակից ընկեր դարձած Սմիրնովի ընտանիքը փրկել,— այդ բոլորն այժմ արտահայտվում էին իր մեջ մի ցանկությամբ՝ օր առաջ ճակատամարտի մասնակիցը դառնալ, որովհետև այնտեղ կվճռվեին բոլորի հարցերը, այդ ահռելի բոցերի միջից կարելի էր փրկել այն, ինչ կոչվում է կյանք։ Եվ առավել ևս նա ձգտում էր կռվին, որովհետև կարծում էր, թե ունենալով արդեն փորձ, այս անգամ ինքն ավելի քիչ տագնապներ կունենա, քան նախորդ կռիվներում։

Մի քանի օր անց, Կոլոսովը, ստուգելով վաշտերի մարտունակությունը կատարեց նոր նշանակումներ։ Վեցերորդ վաշտում, որի հրամանատարն էր թավ բեխերավոր մի ուկրաինացի Բուրավչենկո ազգանունով՝ Սմիրնովն արդեն դասակի հրամանատար էր նշանակված և նույն դասակում հրաձիգ ջոկերից մեկի հրամանատարն էլ Սուրենն էր կարգված։

Ամբողջ օրը անտառի բացատներում վաշտերը ռազմական վարժություններ էին կատարում։ Սուրենը քափ-քրտինքի մեջ մտած, սովորեցնում էր ջոկի զինվորներին այն ամենը, ինչ ինքը յուրացրել էր և երբ Կոլոսովն այցելում էր ստուգելու ռազմիկների մարտունակությունը, Սուրենը թափով առաջ էր գալիս, ձգվում, բարևի առնում և հատու շեշտով զեկուցում էր.

— Գնդի ընկեր հրամանատար, ջոկը այսօր զբաղվեց, ջոկի անելիքները բնակելի վայրում մարտական խնդրի լուծումով, այժմ ուսումնասիրում է պե-պե-շա ավտոմատը և

պե-տե-եռը*), պատրաստ է մարտական գործողություններին։ Զեկուցում է ջոկի հրամանատար սերժանտ Սուրեն Նահապետյանը։

Կոլոսովը ողջունում էր բոլորին, ապա մեկ-մեկ ստուգում էր, թե որ մարտիկն ինչպես է յուրացրել առաջադրված խնդիրները և զենքի տեխնիկան։

Այդ պահերին Սուրենն ուշադրությամբ նայում էր Կոլոսովին. երբեմն թվում էր, թե նա շատ պաշտոնական է, նույնիսկ խիստ, և ցավում էր, որ չի կարող այլ բաների մասին խոսել նրա հետ, բայց երբ Կոլոսովն ստուգումն ավարտում էր, նորից Սուրենը նրա աչքերում կարդում էր այն զգացումը, ինչ որ իրեն հարազատ էր ու հասկանալի։

Հուլիսն արդեն իր վախճանին էր մոտենում, Սուրենի արևախանձ դեմքը ստացել էր ցորենի գույն և նա զգում էր, որ պարապմունքներում ավելի է կազդուրվում։ Այսօր էլ, երբ վաշտը վերադարձավ պարապմունքից հրամանատար Բուրավչենկոյին կանչեցին հեռախոսի մոտ և հայտնեցին, որ գումդը թիկունքից նվերներ է ստացել։

— Ա՜յ, սա արդեն գործ է, հա,—բացականչեց Պետրովը, որը նույնպես ջոկի հրամանատար էր Սմիրնովի դասակում։

Գնդի տնտեսական մասից անմիջապես բերել տվին վաշտին բաժին ընկած նվերները։ Բուրավչենկոն վաշտի առաջ մի ագռու ճառ ասեց թիկունքի օժանդակության մասին և հույս հայտնեց, որ վաշտը պատվով կիրագործի իր առջև դրված խնդիրները։

Սմիրնովն իր դասակի զինվորներին բաժանելով նվերների փաթեթները, Սուրենի, Պետրովի և իր դասակի երրորդ ջոկի հրամանատար Կոզլովի հետ մտավ գետնափորը։ Նրանց ևս բաժին էր ընկել թիկունքի նվերներից մի արկղ։ Պետրովն իր ահագին ձեռներով շուռ ու մուռ տվեց արկղը, ապա սվինի ծայրով կափարիչը գամերի հետ միասին բա-

---

*) Հակատանկային զենք։

ժանեց, դեն նետեց. դեռ հայտնի չէր թե ինչ կար արկղում, քանի որ երեսից պատած էր թղթով։

— Դե, մոտ եկեք,—ասաց Պետրովը դիմելով ընկերներին, ահա՛ թուղթը, վերցրեք, պետք կգա մախորկա փաթաթելու։ Հիմի սկսվում է ամենահետաքրքիր մասը, տեսնե՛նք ի՞նչ բարիք են արժան համարել մեզ, այդ թիկունքի քաջերը։

— Մի շատախոսի Պետրով,—ասաց մեզմ տոնով Սմիրնովը, նվերը լավ բան է, բայց այդքան մի տարվիր և մի կարծիր, թե քաջը միայն դու ես։ Դու գիտե՞ս, որ այսօր հերթապահելու ես վաշտում։

— Հիմա, հիմա, ընկեր Սմիրնով ասաց Պետրովը, և արկղի պարունակությունը՝ ծխախոտներ, շոկոլադներ, մի քանի ձեռք ճերմակեղեն, հավասարապես բաժանեց չորս ընկերների միջև։

— Իսկ այս թաշկինակն ինձ,—ասաց Պետրովը հրճվանքով, գտնելով թղթի մեջ խնամքով փաթաթված մի աստղնագործ թաշկինակ,—հապա, տեսնենք, սա ի՞նչ է, հետո էլ նամա՞կ, աղնիվ խոսք շատ լավ է։

Սուրենը վերցրեց միայն շոկոլադ և մի ձեռք սպիտակեղեն. նա չէր ծխում. տեղավորելով սպիտակեղենը իր զինվորական տոպրակում, նա մոտեցավ Պետրովին, որն այդ պահին թաշկինակը բացել ու դիտում էր.

— Աստված վկա ճաշակով աղջիկ է եղել,—բացականչեց Պետրովը,—տե՛ս, ինչ լավ է նախշել չորս կողմը. դեռ իր անունն էլ է ասեղնագործել։

Սուրենի սիրտը տրոփեց. նա ևս նայում էր թաշկինակին. նա ակամա ձեռքը տարավ ծոցագրպանը և շոշափեց այո՛, այնտեղ էր Վերայի ուղարկած թաշկինակը, նուրբ ու քնքուշ. սակայն սա ևս ճիշտ և ճիշտ նման էր այն թաշկինակին, որ Վերան ընծայել էր իրեն, և նա այլայլվեց, երբ Պետրովը հանդիսավոր կարդաց թաշկինակի վրա ասեղնագործած անունը։

— Վերա՜. այ, թե ի՜նչ. հապա, տեսնենք, ի՞նչ է գրել մեր Վերան։

Եվ մինչ նա նամակն էր բացում, Սուրենի դիմքից քրտինքն հոսում էր. նա գնաց, նստեց Սմիրնովի կողքը ու նշանակալից նայեց նրան. Սմիրնովը ակնարկով հասկացրեց Սուրենին, որ հանգիստ մնա։

Իսկ Պետրովը բարձրաձայն կարդում էր նամակը։

«Սիրելի ռազմիկ.

Չգիտեմ, ո՞վ ես դու, թանկագին ընկեր, բայց գիտեմ, որ մեր սրբազան Հայրենիքի պաշտպանն ես։ Ուղարկում եմ քեզ իմ համեստ նվերը։ Դու, և՛ ինձ համար, և՛ բոլորի համար սիրելի կլինես՝ եթե անողոք լինես թշնամու հանդեպ։ Միլիոնավոր մայրեր, քույրեր, կանայք ու երեխաներ ձեր գործին, ձեր հաղթանակին են սպասում։ Դու, սիրելի ռազմիկ, խիզախության լավագույն օրինակը տուր, որ բոլորս հպարտությամբ հիշենք քո անունը։ Ամբողջ հոգով քեզ հետ եմ։

Օդային համբույրներով՝ Վերա»։

— Ազնիվ խոսք ոչ միայն ճաշակով, այլև կրակոտ աղջիկ է. ես սրան այսօր ևեթ կպատասխանեմ,—ասաց ինքնաբավական ժպիտով Պետրովը և բացելով նվեր ստացած «Կաղբեկ» ծխախոտի տուփը, վառեց մի գլանակ և ծուխը ռունգներից դուրս թողնելով դիմեց Սմիրնովին,— հավանություն տալի՞ս ես ընկեր Սմիրնով մի քիչ լիրիկայով զբաղվել...

— Զբաղվիր, բայց տե՛ս, պատշաճ բան գրես, դու մի քիչ սիրում ես խոսքերի մեջ քեզ ազատություն տալ։ Այդ աղջկան ես ճանաչում եմ։

— Մի՞թե,— քիչ շփոթված հարցրեց Պետրովը։

— Հապա, կարդա հասցեն։

Պետրովը մեխանիկորեն կարդաց քաղաքի անունը։

— Այո, մենք այդ քաղաքի գոսպիտալումն էինք պառ-

կած,— աշխուժացավ Սմիրնովը։ Ի՞նչ պատահականություններ չի լինում կյանքում. ո՞վ կմտածեր, որ Վերայի նվերը կհասնի մեր գունդը, կընկնի մեր դասակը և այն գետնափորը, ուր այդ աղջիկն ունի երկու ծանոթ։

— Իսկ մյուս ծանոթը... ավելի շփոթված հարցրեց Պետրովը։

— Սուրենն է,— հարեց Սմիրնովը և ավելացրեց,— ապա, Սուրեն, ցույց տուր Վերայի տված թաշկինակը։

Սուրենը դժկամակությամբ հանեց թաշկինակը գրպանից և տվեց Սմիրնովին։ Երբ Պետրովը համոզվեց, որ նվիրատուն միևնույն աղջիկն է, ինչ որ քրթմնջաց ինքն իրեն և ասաց.

— Միևնույն է, ես կգրեմ այդ աղջկան, որ ստացել եմ իր նվերը և շատ եմ ուզում հանդիպել իրեն։

— Կգրես,— ասավ Սմիրնովը միանգամայն լուրջ,— որ դու Սուրեն Նահապետյանի հետ ծառայում ես միևնույն վաշտում, հետո կգրես, որ Սուրենը մեր լավ ռազմիկներից է և պետք է թանգ գնահատել այդպիսի մարդուն։

— Այդ արդեն, Ալեքսեյ, դու թող. դա իմ անձնական գործն է, ես գիտեմ, թե ինչ կգրեմ։

— Ինչքան շատ բան գիտենաս, միևնույն է, սովորելը վատ չէ։

Սուրենը լուռ էր և չգիտեր, թե ինչով պիտի վերջանար այդ խոսակցությունը, որը նրան այնքան էլ հաճույք չէր պատճառում. նա իր մտքում բարկացած էր Վերայի վրա. ո՞չ, ո՞չ, նա անկեղծ չէր դեպի իրեն, այլապես սա ի՞նչ է. իրենից բաժանվել է, թե չէ... բայց այստեղ էլ կանգ էր առնում նրա միտքը. ի՞նչ, մի՞թե վատ բան է արել Վերան, որ իր նամակներով քաջալերում է կռվողներին. նա դեռ իր այս մտածածի պատասխանը չէր գտել, երբ երրորդ ջոկի հրամանատար Կոզլովը, մի սիրունատես, պատանեկական դեմքով երիտասարդ, որը հետևել էր Սմիրնովի ու Պետրովի վեճին, առանձին բավականությամբ ասաց.

— Երևի այդ Վերան սիրուն շիկահեր, ռուս աղջիկ է, իսկ Սուրենը, հո սևահեր հայ է. ո՞նց թունդ սիրահարված կլինեն միմյանց։

Պետրովին այդ դուր չեկավ, և կարծես Սուրենին զայրացնելու համար, առանց երկար մտածելու վրա բերեց.

— Միևնույն է, Վերան Սուրենին չի առնի, Սուրենը կոլոտ է։

Պետրովի այդ խոսքերը դիպան Սուրենի սրտին. նա ուղղվեց տեղում և մի քիչ տաքացած ասաց.

—Հայկական առածն ասում է, երկենը ախմախ կլինի, կոլոտը չախմախ, էնպես որ, ընկեր Պետրով, հաշիվդ վերցրու ու էս խոսքերն օդ արա ականջիդ։

Այս նախադասությունն ասելիս նա դժվարությամբ էր գտնում ռուսերեն բառերը, բայց ձեռքի այնպիսի շարժումներ արավ իր և Պետրովի հասակի վերաբերյալ, ապա մատն այնպես կլորաձև շարժեց օդի մեջ Պետրովի ականջի ուղղությամբ, որ և՛ նա, և՛ մյուսները լիովին հասկացան նրա միտքը։

Սմիրնովը անհանգստության նշաններ էր ցույց տալիս. Կոզլովը վատ զգաց իրեն, որ իր միջամտությունն այդպիսի արդյունք ունեցավ. սակայն, Պետրովը ի ուրախություն Սմիրնովի և Կոզլովի միայն ժպտաց Սուրենի շարժումների վրա և ասաց.

— Օ՜յ, խանդո՞տ կովկասցի։

— Ինչ գործ ունի այստեղ խանդը,— դարձյալ միջամտեց Սմիրնովը,— ինչո՞ւ ես հիմարություններ դուրս տալիս։

— Նու, Սմիրնով,—հանկարծ ընկճված տոն ընդունելով խոսեց Պետրովը,— մի՞թե դու այդ կարծիքին ես իմ մասին,— ապա երկու խոշոր քայլ անելով դեպի Սուրենը, այնպիսի քայլ, ինչպիսին նա անում էր մարզադաշտում նորեկներին ավիամարտի գործը սովորեցնելիս, ասաց,— ա՜հա՛, Սուրեն Սիանոսովիչ, ահա՛ քեզ, և՛ Վերայի նամակը,

և՝ Վերայի թաշկինակը. թող դու երկու թաշկինակ ունենաս. ամբողջ սրտով այդ աղջիկը քեզ...

Ու գնաց նստեց թախտին։

Տիրեց խորհրդավոր լռություն։

Սմիրնովն ու Կոզլովը նայեցին միմյանց, բայց ոչ մի բառ չփոխանակեցին։

Սուրենի քրտինքը սառեց ճակատին. «Ինչ անհարմար բան ստեղծվեց», մտածեց նա և, վայրկենական որոշումով, վեր թռավ տեղից, մոտեցավ Պետրովին, վերադարձրեց թաշկինակը և ասաց.

— Ո՛չ, այս քեզ է պատկանում. ահա՛ և նամակը, ինչ կուզես գրիր այդ աղջկան։

— Նու, իմ սիրելի հայ, լավ, որպեսզի չնեղանաս, թաշկինակը կվերցնեմ, բայց նամակը թող մնա քեզ մոտ. ես շնորհք չունեմ ջահել աղջիկներին նամակ գրելու, իմ գործը պրյամոյ է... դե, վերցրու նամակը։

Սուրենը զգում էր, որ հակաճառելն ավելորդ է, ուստի և վերցրեց նամակը։ Իսկ Պետրովը, զգալով, որ լավ կլինի այժմ հեռանալ գետնափորից, կարգի բերեց իրեն և պատվի առնելով զեկուցեց Սմիրնովին.

— Ընկեր դասակի հրամանատար, թույլ տվեք անցնեմ հերթապահությանը։

— Թույլատրում եմ,— ասաց Սմիրնովը։

Քիչ հետո, երբ Կոզլովն էլ դուրս էր գնացել գետնափորից, Սուրենը նորից մոտեցավ Սմիրնովին, համարյա փարվեց նրան և ընկճված տոնով ասաց.

—Ալեքսեյ...

Եվ ուրիշ ոչինչ չկարողացավ ասել։

Նա ուզում էր ասել, որ ինքն ամաչում է, որ այդքան մանրացավ, որ այդպես անտեղի, թեկուզ ի պատասխան Պետրովի խոսքերի, վիրավորեց նրան... ինքը մեծ խնդիրներ ունի իր հոգում, բայց դրանցից ոչ մեկն էլ չասեց։

Սմիրնովն, արդեն, սովորել էր կարդալ Սուրենի հոգին, ուստի ինքն էլ ոչինչ չխոսեց. թերևս նրան այդ պահին ար-

դեն ուրիշ միտք էր տանջում. գալիք մարտերը և կնոջ ու երեխաների վիճակը. Սուրենը կուզեր փոխել նյութը և խոսել հենց այդ հարցերի մասին, սակայն այնուամենայնիվ ուզում էր որևէ արդարացուցիչ բացատրություն տալ իր արարքին, ուստի և նա խոսեց.

— Ալեքսեյ, բարկացա, որովհետև, ինչպես ասեմ, այժմ, երբ մտածում եմ Վերայի մասին՝ նա ինձ իմ մոր նման հարազատ ու քաղցր է պատկերանում։ Չեմ կարող հաշտվել այն մտքի հետ, որ նա կարող է ինձ լքել։

— Սուրեն,— վեր կացավ տեղից Սմիրնովը, որ մինչ այդ նստած էր թախտին,— այդ լավ ասացիր, ազնիվ խոսք, ոչ ոք այդպիսի իմաստուն խոսք չէր ասի. մայրը մարդու համար ամենասիրելին ու հարազատն է, և եթե կինն էլ այդպես սիրելի ու հարազատ է դառնում, արժե, որ մարդ նրա հետ կապի իր կյանքը... ա՜յ, Սուրեն, ինչ ասեմ, քո Վերան ինձ էլ դուր եկավ, և ինչքան դու խոսում ես նրա մասին, ես էլ հիշում եմ իմ Նատալային. ուրիշ կնիկ է նա... ինչքան էլ գործից ուշ տուն գայի, միևնույն է, տեսնում եմ նա նստած կամ երեխաների շորերն է կարգի բերում, կամ տանը մի այլ գործով է զբաղված, կամ գիրք է կարդում. առանց ինձ ոչ կընթերեր, ոչ էլ կքներ։ Ո՞նց են ասել հնում, հա, ոնց որ նրա հետ երկուսով մի մարմին էինք դարձել. մեկ-մեկ բարկանում էի վրան, թե ինձ մի սպասի, քնիր, հանգստացիր. բա՜ն չունես, էլի իրանն էր շարունակում։ Էխ, ո՞ւր է հիմա, ի՞նչ է անում։

Սուրենը բառ չէր գտնում պատասխանելու։ Միայն մի ձգտում փոթորկում էր նրա սիրտը. կգա՞ արդյոք այն երջանիկ օրը, երբ իրենք կգտնեն Սմիրնովի կնոջն ու երեխաներին։ Իսկ Սմիրնովը շարունակում էր խոսել.

— Պետրովին մի մեղադրիր։ Դեշ կնիկը սատանայից էլ գեշ է. նրա կինը դավաճանել է նրան և նա մեկ-մեկ խելքը թռցնում է. մարդ է, կյանք է։

— Մի՞թե այդպիսի բան է պատահել Պետրովի հետ,— ավելի ևս ընկճված հարցրեց Սուրենը։

— Այո՛, նրան այդ մասին գրել էր եղբայրը. նրա եղած-չեղածը հիմա մի յոթը տարեկան աղջիկ է. եղբայրը աղջկան վերցրել է իր խնամքին։ Հապա, այդպիսի կանայք էլ կան։

— Ախր ցավն այն է, որ ես դեռ լավ չգիտեմ, թե ինչպիսին է Վերան,» ու չեմ էլ կարող հանգիստ սրտով մտածել նրա մասին։ Երբեմն ուզում եմ բոլորովին չմտածել. այստեղ այնքան գո՞րծ... բայց չի լինում։

Սմիրնովը նորից միքանի սրտապնդիչ խոսքեր ասաց, և երբ նրանք պատրաստվում էին գետնափորից դուրս գալ, հնչեց հեռախոսի զանգը։ Սմիրնովը վերցրեց լսափողը, լսեց. երբ լսափողը վար դրեց, դարձավ Սուրենին։

— Վերջապե՞ս... Կոլոսովն է եկել. հրամայված է վաշտը հավաքել։

Ապա Սմիրնովը, Սուրենի հետ դուրս գալով գետնափորից, մի քանի շտապ կարգադրություններ արավ և, քիչ հետո, դասակի գլուխն անցած շարժվեց դեպի վաշտի հավաքավայրը։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ամառային երկարատև օրն իր վախճանին էր հասնում։ Թռչուններն արդեն հանվաքվում էին ծառերի կատարներին ու անլռելի ճռվողյունով, կարծես, հրաժեշտ էին տալիս տեսողությունից հեռացհետ չքացող արևի հրաշեկ գնդին։

Վեցերորդ վաշտը, ինչպես նաև մյուս հրաձիգ վաշտերի ու զենքի մյուս ստորաբաժանումների ներկայացուցիչները, որոնք մտնում էին երկրորդ գումարտակի կազմի մեջ, նշանակված ժամին հավաքվեցին անտառի ընդարձակ բացատում։ Բացատի մի կողմում սարքված էր բեմի նման մի բան, որտեղ կարմիրբանակայինների ինքնագործ խմբակները մերթ-մերթ երաժշտության, պարի ու երգիծանքի երեկոներ էին կազմակերպում։ Այդ բեմից էլ կարդացվել էին շատ զեկուցումներ միջազգային դրության մասին։

Սակայն, այսօր, թե՛ հրամանատարները, և թե՛ զինվորները նախազգում էին, որ հավաքույթը սովորական չէ. բեմի վրա ո՛չ կարմիր կտորով ծածկված սեղան կար, ո՛չ էլ որևէ աթոռ։ Հավաքույթի ոչ սովորական բնույթն առանձնապես զգում էր Սուրենը։ Նա քիփ հագնված, զինված ավտոմատով հետևում էր, որ իր ջոկի զինվորները որևէ բանով վատ չերևան մյուսներից։

Լսվեց գումարտակի հրամանատարի ազդու ձայնը։

— Զգա՜ստ։

Ամբողջ գումարտակը լռություն դարձած արձանացավ տեղում։ Կոլոսովը, շրջապատված մի քանի սպաներով, մոտենում էր հավաքավայրին. գումարտակի հրամանատարը ընդառաջ վազեց և պատվի առնելով զեկուցեց Կոլոսովին.

— Ձեր հրամանի համաձայն երկրորդ գումարտակը հավաքվել է լսելու ձեր հաղորդումը։

Կոլոսովը դարձավ դեպի գումարտակի շարքերը և բարևեց։

— Բարև,—որոտաց գումարտակի ռազմիկների հնչեղ ձայնը, որը խլացրեց թռչունների ճռվողյունը։

Բայց Սուրենը բարևի հետ միաժամանակ կանգնեց ոտքերի մատների ծայրերին, որպեսզի ավելի լավ տեսնի Կոլոսովի դեմքը, որը վերջալույսի աղոտ լույսի տակ խորհրդավոր ու մի տեսակ հանդիսավոր արտահայտություն ուներ։

Կոլոսովը բեմ չելավ, այլ բարձրացավ մի կոճղի վրա, որտեղից նրան տեսնում էին բոլորը, և իր թավ ու հանդարտ ձայնով խոսեց Հայրենիքի գլխին կախված վտանգի մասին։

— Դրությունը ծանր է,— ասաց նա, և մի պահ շոյելով իր մկանոտ դեմքը շարունակեց,— քիչ առաջ Սովինֆորմբյուրոն ռադիոյով հաղորդեց, որ մեր զորքերը համառ կռիվներից հետո թողել են Ռոստովը և Նովոչերկասկը։ Թշնամին մոտեցել է Վորոնեժին։ Ահա եռեսունհինգ օր է, որ մեր գունդը դուրս է եկել կռվից։ Մենք ստացանք նոր

լրացում։ Մենք էլի առաջվա լիարժեք 1017 գունդն ենք դարձել։ Մենք հիմա ունենք կռվի փորձ, ունենք նոր տեսակի զենքեր և այժմ, ամեն մի վաշտի, ամեն մի դասակի ու ջոկի, ամեն մի մարտիկի առաջ խնդիր է դրված այլևս Ոյուլ չտալ թշնամուն առաջ գալու։ Ոչ մի քայլ հետ. կանգնեցնել թշնամուն, կանգնեցնել և հետ շպրտել։ Այս է պահանջում մեզանից մեր Հայրենիքը և սրանից բարձր խնդիր չկա այսօր։ Մեր ժողովուրդը, մեր հարազատները մեզ անարգանքի սյունին կգամեն, եթե մենք չկարողանանք այս պատվերը կատարել։ Մենք բոլոր հնարավորություններն ունենք այս պատվերը կատարելու։

Կոլոսովը հետզհետե ոգևորվում էր և ավելի էր բարձրացնում ձայնը։ Թուչունների ճռվողյունը թեև չէր դադարել, սակայն մարտիկներն այնպես էին լարված լսում իրենց հրամանատարին, որ այդ բոպեին ոչ մի կողմնակի ձայն չէր գրավում նրանց ուշադրությունը։

Կոլոսովը այնուհետև խոսեց այն մասին, որ գունդը նախորդ կռիվներում, ճիշտ է, լավ է դիմադրել թշնամուն, սակայն նա գլխավորապես մղել է պաշտպանողական մարտեր։

Ապա նա շեշտեց այն սպաների և ռազմիկների անունները, որոնք նախորդ կռիվներում աչքի էին ընկել իրենց խիզախությամբ. նա մի քանի անուններ տալուց հետո, հատկապես շեշտեց Սմիրնովի անունը, տվեց ևս մի քանի անուններ և երբ հնչեց նաև Սուրեն Նահապետյան անունը, Սուրենը տեղում նորից անհանգիստ շարժվեց, բայց իսկույն էլ զսպեց իրեն. նա դեռևս ամաչում էր գովասանքներ լսել։ Կոլոսովն իր ճառը եզրափակեց այսպես.

— Դե, իմ քաջե՛ր, Հայրենիքը ձեզ տվել է ամենաթանգ բանը՝ իր սերն ու վստահությունը. ձեզ զինել է առաջնակարգ զենքով. մեր գնդի հանգիստը վերջացավ. սկսվում է կռիվների, դաժան փորձությունների շրջանը։ Արժանի՞ եղեք հայրենիքի սիրուն ու վստահությանը։ Արժանի՞ եղեք ստալինյան բանակի զինվորի բարձր կոչմանը։

Թնդաց ուժգին ուռան, որին հետևեց զինվորական նվագախմբի ազդու մարշը։ Թռչունները ծառերի կատարներից թռան ու մի շրջան կազմելով ճախրեցին բացատի վերևում։ Սուրենն զմայլված նայում էր վերև և նրան թվում էր, թե այդ թռչուններն էլ են մասնակցում այս հավաքույթին և իրենց գեղգեղանքով ավելի հանդիսավորություն են տալիս նրան։ Նորից ու նորից մտքերը պաշարել էին նրան. ա՜խ, հնար լիներ, գոնե մի վայրկյան, մի պահ, նորից տեսնել մորը և... Վերային։ Այո, դա արդեն անբռնադատելի պահանջ էր։ Բայց նա երկար չկարողացավ անձնատուր լինել իր մտքերին. նրան մոտեցավ Սմիրնովը.

— Սուրեն, դու պետք է երեք բոպեանոց մի ճառ ասես։

— Նու, ամբողջ գումարտակի առա՞ջ։

— Այո, Բուրավչենկոն կարգադրեց։

Այդ պահին խոսում էր ականատեսային դասակի մի զինվոր, հետո խոսեց մի ավտոմատավոր։ Սուրենը պատրաստ չէր խոսելու, բայց այդ պահին նա իր հոգում զգում էր մի հաճելի պայծառություն, ուստի և նա կայտառ շարժումներով գնաց ու բարձրացավ այն կոճղի վրա, որի վրա կանգնած խոսեցին Կոլոսովը և մյուսները։

— Իմ զենքի ընկերներ,— ցանկանալով յուրահատուկ արտահայտություն տալ իր խոսքի սկզբին ասաց նա,— մենք սպասում էինք այս օրվան, որ նորից կռվի մեջ մրտնենք։ Իմ ջոկի զինվորներից երկուսն են եղել կռիվներում, մյուսները նոր են մտնելու կռվի մեջ. ես վստահ եմ նրանց վրա. նրանց հետ միասին ես կկատարեմ ինձ տրված մարտական խնդիրները։ Ես դրա համար կյանքս չեմ խնայի։ Ես... Հայաստանից եմ եկել այս զորամասը. գերմանացիք հասել են Կովկաս. մայրս իր նամակում ինձ գրել է՝ նամուսով հետ դաս։ Հայ ժողովուրդը,— վերջապես նա հասավ այն մտքին, քանի որ ինքը որակված է իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչ պետք է այդ մասին որևէ բան ասի,— հայ ժողովուրդը, հին ազատասեր ժողովուրդ է. զենքի բարեկամությունը հարգում է. բարեկամության,

եղբայրության պատիվը գիտե։ Մեր ժողովուրդն էլ միության մեծ ժողովուրդների ընտանիքում, զենք է ձեռք առել հայրենիքի պաշտպանության համար։ Ուրեմն, երբ նա զենքը ձեռք է առել՝ ըստ իր պապենական ավանդության այդ զենքը ցած կդնի միայն այն ժամանակ, երբ թշնամին ընկնի մեր ոտքերի տակ։ Ես խոսք եմ տալիս մեր գնդի հրամանատար ընկեր Կոլոսովի... Կոլոսովի, որի համար թանգ է իր զինվորի կյանքը... Կոլոսովի հրամանատարությամբ բարձր պահել մեր գնդի պատիվը...

Նա ուզում էր որևէ կերպ հիշեցնել, որ ինքն իր կյանքով պարտական է Կոլոսովին. այդ միտքն ամբողջ ճառի ժամանակ հանգիստ չէր տալիս նրան և նա չգիտեր, թե արդյոք բոլո՞րն հասկացան իրեն, բայց որ Կոլոսովն հասկացավ իրեն, այդ նա ըմբռնեց այն ժամանակ, երբ կոճղից վայր իջավ և մի հայացք նետեց հրամանատարի վրա։ Կոլոսովն էլ մի հայացք նետեց Սուրենի վրա և Սուրենին թվաց, որ գալիք գործի պատասխանատվության զգացումով ծանրաբեռնված հրամանատարը, այնուամենայնիվ վերապրեց հիշատակելի մենամարտի երեկոն և նրա դեմքին ժպիտի նման մի բան փայլեց։

...Զանցավ տասնհինգ րոպե, երբ արդեն գումարտակի ռազմիկները վերադարձել էին իրենց գետնափորերը ու պատրաստվում էին վայելել վերջին հանգիստը։

Արդեն ժամի քսանևմեկն էր։ Սուրենը հավաքեց իր ջոկի զինվորներին, մեկ-մեկ ստուգեց բոլորի զենքերը և ամեն մեկին մի ջերմ խոսք ասաց. նրանցից մեկը մի չեչոտ դեմքով զինվոր էր՝ Վոլկով ազգանունով. նա համարվում էր գերազանց հրաձիգ, այդ Վոլկովն էր, որ արդեն կռիվներին մասնակցել էր, և Սուրենը, նրան իբրև կարգապահ զինվորի, միշտ օրինակ էր բերում մյուսներին։ Մյուսը՝ բարձրահասակ մի ուկրայնացի— Օլեյչուկը՝ նշանառուն էր. նա ևս եղել էր կռիվների մեջ, իսկ նշա-

նառուի օգնականը մի ուզբեկ էր, որին Տուլկունբայ էին կոչում։ Այս ուզբեկը հասակով ավելի ցածր էր, քան Սուրենը, բայց ջուտ մարմին ուներ և ամենից լավն էր փորձող տալիս ամբողջ դասակի զինվորների մեջ։

Սուրենը քաջ գիտեր, որ ինքը պատասխանատու է դառնում նրանց կյանքի համար. այժմ ոչ միայն ինքն է հրամաններ ստանում կատարելու, այլև ինքն է իրավունք ստացել հրամաններ տալու. թող իր ենթակաները լինեն փոքրաքանակ, բայց միևնույն է, այդ նրա սիրտը լցնում էր տագնապով։

— Կարևորն այն է,— եղբայրակեց Սուրենն իր զրույցը մարտիկների հետ,— որ ամեն մեկդ գործեք ինքնավստահ և նեղ րոպեին օգնեք միմյանց. երբ մարդ հավատում է, որ զենքի ընկերն իրեն օգնում է, մարդ կարող է հրաշքներ գործել։ Երբ տեսար թշնամուն, էլ մի ասիր, թե սրան ընկերս կոչնչացնի. հենց ինքդ նրան տեղն ու տեղը ոչնչացրու, դրանով, թե ընկերոջդ օգնած կլինես և թե հուսահատության կմատնես թշնամու ուժերին։

Երբ ջոկի զինվորները պառկեցին քնելու, Սուրենը դեռ չէր կարողանում ինքն իրեն գտնել այսօրվա տպավորություններից հետո։ Նա ակամա ձեռքը տարավ գրպանը և այնտեղ շոշափեց նամակը։ Չնայած մի քանի ժամ առաջ էր, ինչ ինքն այնպես անհիմաստ կերպով վեճի էր բռնվել Պետրովի հետ, բայց կարծես թե շատ ժամանակ էր անցել։ Կռվի գնալու լուրը ամեն ինչ փոքրացրել, ամեն այլ զգացում հետ էր մղել։ Բայց այժմ, երբ Սուրենը մենակ էր մնացել իր խոհերի հետ և կարող էր մի քանի ժամ հանգստանալ, նորից հիշում էր Պետրովի հետ եղած միջադեպը և նա չէր հանգստանում. ախր ինչո՞ւ, ինչո՞ւ եղավ այդ, և եղավ հենց այս օրը, երբ արդեն բոլորովին նոր կյանք էր սկսվելու իրենց համար, և այս մտքերով տարված նա չէր ցանկանում գրպանից նամակն հանել՝ վախենալով, որ դա ավելի կբորբոքի իր զայրույթն իր դեմ։

Հայտնի չէր, թե նա ինչքան պիտի տանջվեր իր մըտ-

քերով, երբ ներս մտավ կապավոր զինվորը և կամացուկ ասավ.

— Սուրեն Նահապետյան, դեռ չե՞ս քնել։

— Ի՞նչ կա,— վեր թռավ տեղից Սուրենը մի լավ նախազգացումով։

— Նամակ ունես։

— Տուր,— միայն կարողացավ արտասանել Սուրենը և համարյա թե խլելով զինվորից ծրարն, առանց նայելու ծրարի վրա գրված հետադարձ հասցեին բացեց. մի փոքրիկ թերթի երկու էջին՝ գեղեցիկ, դյուրընթեռնելի ձեռագրով, ռուսերեն լեզվով գրված նամակ էր դա. Սուրենը նախ նայեց ստորագրությանը՝ Վերա,— հրճվանքով նա մի քանի անգամ բացականչեց՝ Վե՞րա, Վե՞րա, ապա մոմի լույսի տակ կարդաց մեկ անգամ, երկու անգամ և հետո ինքն իրեն մտքում թարգմանեց հայերեն։

«Թանկագին Սուրեն.

Այսօր, մեր ինստիտուտի աղջիկները, որոշեցինք նվերներ ուղարկել ռազմաճակատ, հետո էլ նամակներ։ Իմ ընկերուհի Կլավան գրեց ուղիղ տասերկու նամակ՝ զանազան դաշտային պոստերի հասցեներով. ես հազիվ կարողացա հինգ հատ գրել. չորսն ուղարկեցի ուրիշ հասցեներով, իսկ մեկը քո դաշտային պոստի համարով. տեսնես ո՞ւմ ձեռքը կընկնի. շատ գոհ կլինեմ, եթե դա, թեկուզ մի փոքր ջափով, ուրախացնի ստացող ռազմիկին։

Ստացա նամակդ, իմացա, որ տեղ ես հասել ու տեսել քո սիրելի մարդուն—Կոլոսովին։ Թե հարմար համարես իմ կողմից բարևիր նրան։ Ի՞նչ գրեմ, թանկագին ընկեր, ասեմ, որ հոգով հանգիստ եմ, ո՛չ, դա հանցանք կլինի իմ զգացումների հանդեպ. այժմ զգում եմ քո բացակայությունը, զգում եմ, որ մենք իրարու համար մի քիչ ավելին էինք, քան դու վիրավոր և ես քեզ խնամող։ Ամբողջ հոգով ցանկանում եմ քեզ հաջողություն, ցանկանում եմ, որ Կո-

լոսովին լավ, այնպես, ինչպես քո ժողովրդի տրադիցիան է թելադրում, հատուցես քո կյանքը փրկելու համար։ Այդ կնշանակե, որ դու ավելի խիզախ կկռվես հայրենիքի թշնամու դեմ։ Ամբողջ հոգով քեզ հետ եմ։ Ուղարկիր ինձ քո նկարը, հետևյալ նամակով ես իմը կուղարկեմ քեզ։ Նկարդ թող լինի սեղանիս վրա, աչքիս առաջ։ Կարող ես հավատալ, որ քեզ կսպասեմ... միայն թե շուտ, ինչքան կարելի է շուտ կանգնեցրեք այդ գարշելի թշնամուն. ախր մինչև ե՞րբ, հո մեր քաղաքին էլ չեն հասնի։

Բարևում եմ, համբուրում եմ՝ Վերան»։

Սուրենը մի քանի անգամ հետ ու առաջ գնաց հողափոր տնակում. մոմի աղոտ լույսի տակ երևում էր, որ նրա դեմքը շիկնել էր, իսկ սիրտն հուզմունքից անհանգիստ ելևէջում էր. նա նորից, ակամա, ձեռքը տարավ գրպանը և հանեց մյուս նամակը. նայեց թվերը. Պետրովի ձեռքն ընկած նամակը գրված էր երկու օր առաջ։ Ուրեմն, Վերան իրեն չէր մոռացել. բացի Պետրովից, այդպիսի նամակներ ստացել էին նաև ուրիշ զորամասերի շորս այլ ռազմիկներ... Իսկ Պետրովն ինչու պետք է զրկվեր այդ բավականությունից... ինչո՞ւ ինքն այդքան մանրացավ։ Եվ իր դեմ եղած զայրույթի զգացումը խառնվեց իր ուրախությանը։ Նա անսալով ինչ որ մտքի, դուրս վազեց գետնափորից, մտավ հարևան գետնափորը, ուր զետեղված էր Պետրովի ջոկը։ Նա Պետրովին դուրս կանչեց։ Պետրովը ենթադրելով, թե ինչ որ արտակարգ բան է պատահել, հարցրեց.

— Ի՞նչ է, տագնա՞պ է հայտարարված։

— Ո՛չ, դեռ ո՛չ, Պետրով,— հևալով ասաց Սուրենը, երբ նրանք արդեն դրսում, շնչում էին անտառի թարմ օդը,— Պետրով չեմ կարողանում հանգստանալ. ներիր ինձ, որ նորից անդրադառնում եմ անցած խնդրին։ Այս գիշեր առաջ ենք շարժվելու, նորից կռիվ ենք գնում, չեմ ուզում

ո՛չ իմ, և ո՛չ էլ, մանավանդ, քո սրտում մրուր մնա. առ Վերայի նամակը և պատասխանիր նրան։

— Նու, Սուրեն, ի՞նչ բանի հետևից ես ընկել։ Դա, ախր դատարկ բան է. ես այնպես... Ոնց էիր դու այն անգամ էլ հանաքով տեղին դիպցրել, թե երկայն մարդու խելքը չոքերումն է. լավ առած է ասնիվ խոսք. մի՞թե դու դրան կարևորություն ես տալիս։

— Ո՛չ, ո՛չ, այդպես մի խոսիր, Պետրով, իմ Սաշա... այ, հայերիս մոտ այսպիսի սովորություն կա. մեծ տոներից, մեծ դեպքերից առաջ, մարդիկ, եթե իրար հետ խռով են, նրանք միմյանց ներում են, միմյանց հետ հաշտվում են և մաքուր սրտով են դիմավորում տոնին, կամ մեծ դեպքին։ Այս գիշերվանից մեզ համար սկսվում է մեծ դեպք. ա՛ռ մի մերժիր, ա՛ռ և պատասխանիր այդ աղջկան։

— Դա՜,— բացականչեց Պետրովը,— այ, թե դու ինչպիսին ես, Սուրեն, ամեն բանում ուզում ես... և միտքը շրջացնելով, մի պահ նայեց ասաղաղարդ երկնքին, լսեց թռչունների ծկլթոցը և վրա բերեց,— չնայած մեր մեջ ոչինչ վատ բան չի եղել, բայց եթե այդ բանը քեզ հանգստացնում է, չեմ կարող հակառակել, թող քո ասածը լինի, տուր այդ նամակը, բայց ասել եմ արդեն, գրելում վարժ չեմ, գուցե բացիկի վրա մի երկու տողով շնորհակալություն հայտնեմ։

— Այ, շնորհակա՜լ եմ,— բացականչեց Սուրենը և փարվեց Պետրովին։

Մի բոպեի չափ նրանք գրկած միմյանց՝ ողջագուրվեցին։

Քիչ անց, Սուրենն արդեն շապկանց, քնած էր իր ջոկի զինվորների մոտ։

Կոլոսովը, իր տեղակալին և գնդի շտաբի պատասխանատու աշխատողներին ուղարկել էր մյուս գումարտակները նախապատրաստելու առաջխաղացումը։ Ինքն ընտրել էր ահա, այս երկրորդ գումարտակը։ Միտինգից հետո նա երկար խոսել էր գումարտակի հրամանատար Կոլոմեյցի հետ,

ապա անցել էր վաշտերը. գալով վեցերորդ վաշտը, վաշտի հրամանատար Բուրավչենկոյի հետ նա ուզում էր անձամբ ստուգել, թե ինչպես են հանգստանում ռազմիկները: Նա քայլում էր զգուշ, անաղմուկ, որպեսզի ոչ ոքի չզարթեցնի: Երբ նա մտավ Սուրենի ջոկի գետնափորը, Սուրենն արդեն թեթև խռմփացնում էր: Կոլոսովը ձեռքի լապտերով լուսավորեց շրջապատը, և յուրովի շշնջաց՝ լա՜վ են հանգստանում. ապա նա կանգ առավ Սուրենի մոտ. ով գիտե, թե Սուրենի ուղեղում ինչ պատկերների էին վերածվել այսօրվա դեպքերը: Կոլոսովը նայեց Սուրենին, և զգում էր, որ ինչ որ բան, իրեն էլ անհայտ, այդ ռազմիկին առանձնապես հարազատ էր դարձնում իրեն: Նրա համա՞ր արդյոք, որ ինքը փրկել էր նրա կյանքը: Նա այդպես չէր ուզում մտածել. բայց իր զգացածը դեպի Սուրենը իր կյանքի այն երևույթներից էր, որ նա չէր կարողանում բառերով բացատրել: Մի թեթև քամի շարժում էր Սուրենի շապիկը. Կոլոսովը կռացավ և Սուրենի կողքին դրված գիմնաստյորկայով ծածկեց նրա կիսաբաց մեջքը ու իր մտքերի մեջ խորասուզված վերադարձավ գնդի շտաբը:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

Ամեն, ամեն ինչ կարծես, թե նոր էր սկսվում Սուրենի համար: Կարծես թե նա ոչ մանկություն էր անցուցել, ոչ պատանեկություն, և ոչ էլ մտքին էր գալիս հիվանդանոցում իր անցկացրած օրերը, իր ապրումները, իր Վերան: Այս ամենը երազի նման էին. այժմ միայն իրական էր սկսված դաժան առօրյան. եթե տարվում էր մտքերով, ապա միայն հիշում էր այն դեպքերը, որոնք կապված էին իր ռազմական կյանքի հետ.— նախորդ մարտերը, ծանր կռիվը բարձունքում, գերմանական բարձրահասակ սպան, ապա Կոլոսովը: Մնացած բոլոր հուշերը թաքնվել էին սրտի մի անկյունում. և ինչպես անթեղված կրակն էր ջերմություն

տալիս հայրենի թոնդրին, այնպես էլ Սուրենը, կռվի դաժան օրերին, մղումն էր ստանում իր սրտում անթեղված այդ նվիրական հույզերից։ Զարմանալի էր, դրա հակառակ զգացումն ուներ նա Վերայի հետ խոսելիս, թվում էր, թե այն ամենն, ինչ տեղի էր ունեցել մինչ այդ, երազ էր և միայն այդ շիկահեր աղջիկն էր իրականություն։

Եվ կարծես թե դոհ էր, որ այդ այդպես էր. ամեն անգամ ընկնելով նոր միջավայր նա կարողանում էր գտնել այն կարևորը, որ դառնում էր նրա գործունեության կիզակետը, և թերևս, այդ էր պատճառը, որ նա հախուռն ու անկեղծ էր և՛ այն պահին, երբ սեր էր բացատրվում, և՛ այն պահին, երբ վիճում կամ հաշտվում էր ընկերների հետ. և ահա՛, այսօր, այս պահին, երբ նա կանգնած էր թշնամուն դեմ հանդիման, նույնպես այլ մտածում չուներ, քան այն, որ կարողանա որևէ չափով օգնել հաղթահարելու այդ բիրտ ուժը։

Գունդը, երկու օրվա ընթացքում կարեց անցավ յոթանասուն կիլոմետր ճանապարհ։ Մի քանի ժամվա հանգստից հետո նա կռվի մեջ մտավ. երեք օրվա համառ մարտերից հետո, գունդը կարողացավ իր համար նպաստավոր դիրքեր գրավել։ Գնդին հանձնարարված էր, ինչ գնով լիներ պաշտպանել մի խոշոր բնակավայր, որն ընկած էր դիվիզիայի պաշտպանության աջ թևում. հանձնել այդ բնակավայրը թշնամուն, կնշանակեր ճեղքվածք առաջացնել դիվիզիայի պաշտպանության գծի մեջ։ Գիշերը, կարճատև դադարի ժամանակ, Կոլոսովը, նորից ագիտատորներ էր ուղարկել վաշտերն ու դասակները բացատրելու, որ եթե, այս ռազմաճակատում կասեցնեն ու հետ մղեն թշնամուն, ապա նա այլևս չի կարող առաջանալ ոչ Ստալինգրադի, ոչ էլ Կովկասի ուղղություններով։ Այս ընդհանուր խնդրի հետ ծանոթացնելուց հետո ագիտատորները բացատրել էին գնդի և ամեն մի վաշտի ու դասակի մասնավոր խնդիրը — այն էր՝ մեռնել, բայց այլևս ոչ մի քայլ հետ չնահանջել գրված դիրքերից, ավելին, այդ կարևոր բնակավայրը դարձնել հենակետ ապագա հարձակման համար։

Գնդի շտաբը տեղավորված էր բնակավայրի հարավ-արևելյան մասում։ Կոլոսովը ամեն մի գումարտակին տվել էր հարկ եղած մարտական խնդիրը և իր սովորության համաձայն, ոչ միայն գնդի շտաբից էր ղեկավարում կռիվը, այլ հաճախ գումարտակից գումարտակ էր անցնում տեղում վերահասու լինելու իրական վիճակին և հարկ եղած հրահանգները տալու։

Երկրորդ գումարտակը պաշտպանում էր կենտրոնը. վեցերորդ վաշտը գումարտակի աջ թևն էր բռնել։ Երեկ հակառակորդը ճնշումը թուլացրել էր և ինչպես ամբողջ գումարտակը, այնպես և վեցերորդ վաշտը կարողացել էր հարմար կերպով խրամատավորվել ու ամրացնել իր դիրքերը. դիմացը, անտառ էր և գերմանացիք այն օգտագործում էին իբրև հարմար ծածկույթ իրենց հարձակման նախապատրաստման համար։ Կոլոսովը տեղեկացել էր, որ հեռու ձգվող անտառում կային առանձին պարտիզանական խմբեր, ինչպես նաև զանազան բնակավայրերից փախած բնակչություն, կանայք և նույնիսկ երեխաներ. իսկ նրա մեջ բուռն ցանկություն կար, ոչ միայն բնակավայրը չտալ գերմանացոց ձեռքը, այլև նրանց հետ շպրտելով, թերևս կարողանար փրկել անտառում թափառող ազգաբնակությանը։

Սամառային կարճ գիշերն իր վախճանին էր մոտենում։ Սմիրնովը, վաշտի հրամանատար Բուրավչենկոյից, իր դասակի մարտական խնդիրն ստանալով՝ արավ հարկ եղած կարգադրությունները. վաշտին բավական ծանր խնդիր էր տրված. պետք էր ամեն կերպ աշխատել թույլ չտալ թշնամուն թանցում կատարել։ Հենց այս մասին էլ Սմիրնովը խոսեց Սուրենի հետ.

— Ըստ երևույթին,— ասաց նա,— հակառակորդը թարմացրել է իր գումարտակները։ Լույսը բացվում է, թեժ կռիվ ենք ունենալու, Սուրեն։

Սուրենը, որ մինչ այդ խրամատի հատակին փռված

խոտի վրա թեք ընկած քիչ հանգստացել էր, տրորեց քնակալած աչքերն ու միայն ասաց.

— Կկովենք։ Ամսոս, առաջի օրը երկու հրաձիգ շարքից դուրս եկան։

— Իսկ դու գիտե՞ս, որ Պետրովը չորս մարդ է կորցրել,— հարցեց Սմիրնովը։

Սուրենը ոչինչ չպատասխանեց։ Նա հասկացավ, որ Սմիրնովի խոսքերը նշանակում են, թե մյուսներն այնպես պետի կռվեն, որ փոխարինեն նաև շարքից դուրս եկածներին։ Ապա Սմիրնովը խորազնին նայեց Սուրենին և նկատելով, որ նա դեռ տրորում է աչքերը, մեղմ ժպիտով ասաց.

— Ինչպե՞ս ես զգում քեզ Հիվանդանոցի փափուկ մահճակալից հետո։

— Այնպես, ինչպես դու. այնտեղ ավելի հարմար էր իհարկե, քան այս նամ փոսը, բայց, դե, սա էլ նույնքան անհրաժեշտություն է հիմա, ինչպես այն ժամանակ փափուկ ներքնակով մահճակալը։

Սմիրնովը, որ սկսել էր ծխել, կով տվեց մախորկայի թունդ ծուխը և ցույց տալով դիմացի անտառն ասաց.

—Եթե այդ գերմանացիներին հարկադրենք անտառը փախչել, այնտեղ նրանք երկար չեն դիմանա. ասում են այնտեղ, խորքում պարտիզաններ կան, և հետո, գիտե՞ս ինչ, Սուրեն, իմ Նաստյան վախկոտ կնիկ չէ, եթե նա այս կողմերն է փախել... կարող է և անտառում... հա՞, սատանան տանի... լավ, լավ, տարվեցինք խոսքով,— ու հրամայական տոնով վրա բերեց,— ես իմ հրամանատարական կետումն եմ. հիշի՛ր, ո՛չ մի քայլ հետ։

— Լսում եմ, ընկեր դասակի հրամանատար,— ասաց Սուրենը, և Սմիրնովի գնալուց անմիջապես հետո կուզեկուզ գնաց, ստուգեց իր ջոկի զինվորների դիրքավորումն ու տրամադրությունը. երբ նա Օլեյչուկի դիրքից նայում էր դեպի հակառակորդը, հանկարծ ինչպես ամպ որոտա, սկսեցին գործել հակառակորդի թնդանոթներն ու ականա-

նետները։ Նույն րոպեին պատասխան կրակ բացին մեր գնդի թնդանոթաձիգները։

— Դե ստացիր,— բացականչեց Օլեյչուկը՝ նկատելով թշնամու դիրքերում ու կրակային կետերում միմյանց ետևից բարձրացող ծխի քուլաները, որոնք առաջանում էին մերոնց արկերի, ապա նաև ականների դիպուկ կրակոցներից առաջացած պայթյուններից հետո։

— Յախշի՛, յախշի՛,— կրկնում էր ուղբեկ Տուլկունբայը։

Սակայն, 1942 թվականի ամառվա հաջողություններից երես առած հակառակորդը, ըստ երևույթին, շատ էր կատաղել, որ երրորդ օրն է չի կարողանում գրավել այդ բնակավայրը։ Նա հետզհետե ավելի էր ուժեղացնում հրանոթային ու ականանետային կրակը։ Թշնամու արկերն ու ականները ընկնում էին առաջավոր գծի վրա, քանդում խրամատները. այնուհետև գնդացիրներից ու ավտոմատներից գնդակների տարափն այնպիսի սաստկությամբ էր տեղում, որ անհնար էր գլուխ բարձրացնել, իսկ խոսք միմյանց կարելի էր հասկացնել միայն գոռալով։

Քիչ անց օդում երևաց մի սավառնակ։

— Էլի այդ նենգ «ռամաև» դուրս եկավ,— բարկացած խոսեց Հրաձիգ Վոլկովը։

«Ռամաև» գերմանական սավառնակների մի տեսակն էր. նրա նենգությունը, ըստ Վոլկովի, այն էր, որ նա գալիս էր իբրև հետախույզ, սակայն մեկ էլ տեսար, մի քանի ռումբ կնետի ու կփախչի։ «Ռամաև» թռչում էր շատ բարձր և գերազանց հրաձիգը ոչինչ չէր կարող անել նրա դեմ. բայց երբ նա հասավ բնակավայրի վերևը, սկսեցին գործել մեր զենիթային թնդանոթները։ «Ռամաև» շտապեցավ ավելի ցածր թռչել և մի պտույտ կատարելով հետ գնաց։

Բայց հենց որ «ռամաև» հասավ գերմանական դիրքերին, նրանք, չթուլացնելով հրետանային ու ականանետա-

յին կրակը, առաջ մղեցին վեց տանկ և զինվորներն էլ դուրս թռան դիրքերից և մերթ վազելազբով, մերթ փորսող տալով սկսեցին առաջանալ դեպի մերոնց դիրքերը։

— Գործի դնել բոլոր կրակային միջոցները,— այս հրամանը ստացավ ամբողջ դիվիզիոնը, և Սմիրնովը, ինչպես բոլոր ջոկի հրամանատարներին, նույնպես և Սուրենին հրամայեց՝ չթուլացող եռանդով կրակ տեղալ թշնամու վրա։

Սուրենը իր ջոկի զինվորների հետ միասին կրակում էր կրքով ու կատաղի. այլևս նա իր առջև տեսնում էր միայն այդ սև զանգվածը, որ մոլուցքով ու գոռոզաբար առաջ էր շարժվում, և միայն մի բան էր պատվում իր ուղեղում, այն է, այնպես հարվածել, որ այդ զանգվածն այլևս չառաջանա։ Այդ պահին ականներից մեկը պայթեց խրամատում բավական մոտիկ. Սուրենը դեմքի վրա ինչ որ ծանր բան զգաց և ձախ աչքը փակեց. նա ռեֆլեքսորեն ձեռքը տարավ դեպի աչքը, որը ծեփվել էր հողի բարակ շերտով. մաքրեց, ապա նայեց ձեռքին։

— Արյուն չկա,— բացականչեց նա յուրովի, և դա անչափ ուրախացրեց նրան. ամենասարսափելին այդ պահին նրա համար, այդպես շուտ շարքից դուրս գալն էր։ Աչքը կսկծում էր. նա անմիջապես ծոցից հանեց բինտը, փաթաթեց և նորից սկսեց կրակել։ Բայց քիչ հետո նկատեց, որ Օլեյչուկի ձեռքի գնդացիրը չի գործում։

— Օլեյչո՛ւկ, համարձակ եղիր. կրա՛կ. այ, չորս հոգի դեպի քեզ են առաջանում, հապա, համազա՛ռկ։

Բայց Օլեյչուկն այլևս չէր կարող կրակել. Տուկմնրաչը հայտնեց, որ խրամատում պայթած ականից նա վիրավորվել է, իսկ ինքը դեռ չի կարողացել սարքի գցել գնդացիրը։ Սուրենը արագորեն մոտեցավ գնդացրին և շտկելով այն, սկսեց կրակել առաջացող գերմանացիների վրա։ Նրանցից մեկն արդեն ընկել էր Վոլկովի գնդակից, բայց մյուսներն համառորեն առաջանում էին և, ըստ երևույթին, ենթադրելով, որ Օլեյչուկի կրակային կետն արդեն ոչնչացված է՝

այդ տեղից ուզում էին իբրև առաջինները գրոհել խրամատները։ Նրանք արդեն պատրաստել էին իրենց նռնակները, երբ Սուրենը գոռաց.

— Այդ բավականությունը չեմ պատճառի ձեզ։

Եվ նոր սկավառակ դնելով գնդացրի վրա, այնպիսի հմտությամբ կրակ շաղ տվեց առաջացողների վրա, որ նը-րանք երեքն էլ գետին ընկան։ Գերմանացիք, ամբողջ գու-մարտակի խրամատներից հանդիպելով այդպիսի կրակային պատնեշի հետ քաշվեցին։ Իսկ նրանցից շատերը մնացին ընկած, այլևս երբեք վեր չկենալու համար։ Հակատանկա-յին թնդանոթով տանկերից երկուսը շարքից դուրս ընկան, իսկ մյուսները այլևս չառաջացան։

Առաջին գրոհը հետ էր մղված։

Սուրենի համար ծանր էր զրկվել իր հմուտ գնդացրորդից. նա այդ մասին զեկուցեց Սմիրնովին։

— Սկսվում է նոր գրոհ,—ասաց միայն Սմիրնովը։

Այդ արդեն գերմանացոց սովորությունն էր՝ գրոհել իրար ետևից, ժամանակ չտալ շունչ քաշելու։ Երկրորդ գը-րոհն էլ հետ մղվեց, այս անգամ Սուրենի ջոկը կորուստ չունեցավ։

Երկրորդ գրոհից հետո համեմատական հանգիստը տևեց կես ժամ։

Սմիրնովն այդ ժամանակ գալով Սուրենի մոտ, նկա-տելով նրա կապած աչքը տագնապով հարցրեց։

— Սուրեն,—վիրավորվե՞լ ես։

— Չէ, միայն հող լցվեց,—ասաց Սուրենը և պահանջ զգաց ավելի մոտ լինելու ընկերոջը։ Ամեն անգամ այդպիսի թեժ կռվից հետո, թվում էր, թե նոր է ծնվում և պահանջ էր զգում տեսնել մտերիմ ընկերոջը. նա մի պահ իրեն հիշեցնում էր, որ կա այլ կյանք և ինքը այս բոլոր դժվա-րությունները կրում է այդ կյանքի համար։ Նա կարգի բե-րեց աչքին փաթաթված բինտը ու դիմելով Սմիրնովին ասաց.

— Ալեքսեյ, բայց և այնպես քաղցր է կյանքը. սատա-

նան տանի, մարդ համ ուզում է կռվել, քաջություն ցույց տալ, համ էլ չմեռնել։

— Կյա՞նք,— խորհրդավոր բացականչեց Սմիրնովը,— այո՛, մեռելները հարություն չեն առնում. բայց կռվելը պետք է, քանի դեռ աշխարհում կան մարդիկ, որոնք ուզում են ուրիշի տան մեջ տիրություն անել։

— Այո, դրանից հաճելի բան չկա, երբ մարդը իր տան, իր հայրենի հողի տերն է։

— Բայց, Սուրեն, լսո՞ւմ ես, ձախ թևում թնդանոթների ձայնն ուժեղանում է։ Տեսնենք, սա ի՞նչ է նշանակում։

Այս ասելով Սմիրնովը գնաց իր հրամանատարական կետը։

Եվ նորից սկսվեց տագնապը։ Նույն ուժգնությամբ որոտացին թնդանոթները։ Բայց այս անգամ բավական երկար ժամանակ գերմանացիք չէին բարձրանում իրենց դիրքերից։

Այն ինչ յուրովի նախազգացել էր Սմիրնովը ճշտվեց.

— Գերմանացիք ճեղքել են ձախ թևը պաշտպանող առաջին գումարտակի պաշտպանության գիծը և առաջանում են դեպի գնդի շտաբը։

Երբ այս լուրն հասավ Սմիրնովին, նա, թեև իրեն չկորցրեց, բայց պահանջ զգաց գոնե մի խոսք փոխանակելու Սուրենի հետ։

— Նու, Սուրեն, մինչ հիմա ինչ որ արինք այսօր, դա միայն նախապատրաստություն էր, կռան նոր է սկսվում. բայց ափսո՞ս, անտառը մնում է նրանց ձեռքը։

Եվ մի պահ, միայն մի պահ, Սմիրնովը նայեց դեպի անտառը, և Սուրենին թվաց, թե Սմիրնովը հոգոց հանեց. Սուրենը գիտեր, որ սպասվող նոր թեժ մարտը չէր, որ առիթ տվեց ընկերոջն հոգոց քաշելու, այլ այն, որ Սմիրնովը երևի մի պահ ապրում է իր երևակայությամբ, թե ահա նրա Նաստյան թափառում է անտառում և սպասում է իրեն՝ Սմիրնովին։

Սուրենը ոչինչ չպատասխանեց ընկերոջը. գերմանացիք

առաջանում են դեպի գնդի շտաբը։ Այս միտքը թունդ հանեց նրա հոգին, ուրեմն վանդը սպառնում է ամբողջ գընդին, բնակավայրին, անձամբ իրեն Կոլոսովին։

— Իսկ ի՞նչ ենք անելու։

— Պահել այս դիրքերը մինչև նոր հրաման կստանանք։

Հակառակորդը չէր ուզում հաշտվել այն մտքի հետ, որ այսօր էլ չպիտի կարողանա տիրանալ այդ բնակավայրին։ Եվ ահա նա կենտրոնացնելով նոր ուժեր, ճեղքելով առաջին գումարտակի պաշտպանության գիծը, հանդուգն միտք էր հղացել, այն է, թևանցիկ շարժումով մոտենալ, եթե հաջողվի գերի վերցնել ամբողջ շտաբը, իսկ եթե ոչ, ոչընչացնել այն ու ջլատելով գնդի ուժերը ձեռք գցել բնակավայրը։

Կոլոսովը ժամանակին ըմբռնեց թշնամու մտադրությունը։ Նա հրամայեց երկրորդ գումարտակի վեցերորդ վաշտին օգնության հասնել նեղն ընկած առաջին գումարտակին և հետ շպրտել դեպի գնդի հրամանատարական կետն առաջացող թշնամուն։ Կոլոսովը, թշնամու մտադրությունը վերջնականապես ի դերև հանելու և իր մարտական խնդիրն իրագործելու համար, գործի դրեց նաև պահեստի ավտոմատավորների դասակը և մի քանի նոր գնդացիրներ։

Երբ Սուրենը իմացավ նոր հրամանը, երբ ըմբռնեց, որ իրենց վաշտը կարող է բավական վճռական դեր կատարել գնդի պատիվը փրկելու, Կոլոսովի հրամանատարական կետին սպառնացող վտանգը վերացնելու գործում, կարծես թե թևավորվեց, այլևս չէր զգում աչքի ցավը։ Սմիրնովը նրան տվեց նոր գնդացրորդ և դա ավելի ամրացրեց Սուրենի ինքնավստահությունը։

Քիչ անց վեցերորդ վաշտն իր դիրքերը հանձնելով մյուս վաշտերի պաշտպանությանը ինքը շարժվեց նոր ուղղությամբ։

Առաջին գումարտակի երկրորդ վաշտը կտրվել էր իր գումարտակից և ընկած շրջապատման մեջ մահու և կենաց

կռիվ էր մղում գերմանացոց դեմ։ Իսկ թշնամու երկու գումարտակ համառորեն առաջանում էին դեպի գնդի շտաբը։

Երբ վեցերորդ վաշտն հասավ նշանակված վայրը, անմիջապես կռվի մեջ մտավ. կատաղի հրաձգությունից հետո, երկու կողմից վազելազքով նետվում էին դեպի միմյանց։ Ընտրելով հարմար դիրք մի պահ ուժեղացնում էին միմյանց ուղղությամբ ավտոմատների, հրացանների կրակը և դարձյալ առաջ նետվում։ Հակառակորդն արդեն բավական առաջացել էր, առաջին գումարտակին դուրս էր մղել դիրքերից, և եթե որևէ նոր ուժ չկանգնեցներ նրան, ապա ոչինչ չէր փրկի գնդի շտաբը։

Այդ բանը շատ լավ ըմբռնեցին և՛ Սմիրնովը, և՛ Սուրենը, և՛ մյուս բոլորը, որոնք անմիջապես ձեռնամերձ կռվի մեջ մտան։ Գործի դրվեցին սվիններ, հրացանի կոթեր, նույնիսկ բահեր։

Սմիրնովը, ոչ միայն հրամաններ էր տալիս, այլ ընկած մի մարտիկից սվինավոր հրացանը վերցնելով խրվեց թշնամու շարքերը, սվինահարեց մեկին և ուշաթափ արավ մի կապուտաչյա գերմանացու, որն ուզում էր մեր զինվորներից մեկին հարվածել թիկունքից։

Սուրենը, որ անբաժան էր Սմիրնովից, պրկված բազուկներով շարժում էր հրացանը, և այդ արնակալած աչքերի, այդ ծամածռվող դեմքերի, այդ խեղվող գանգերի միջից մի պահ իբրև սլացիկ ասուպ տեսնում էր իր տունը, մորը և իր Վերային, բայց այդ միայն մի անցողիկ վայրկյան. նորից նույն գոռոցները... դանդեր, միս, արյուն, արյուն, արյուն։

Քիչ անց Սուրենն զգաց, որ իրենք ավելի հետ են քաշվել. թե ինչ էր կատարվում մյուս տեղամասերում հայտնի չէր. բայց Սուրենի ականջին հանկարծ հասավ մի հնչեղ, ծանոթ ձայն.

— Առա՛ջ, իմ արծիվներ, փառքով պսակենք մեր գնդի դրոշը։

Կոլոսովն էր։

Հենց այն հանգամանքը, որ Կոլոսովը ինքն անձամբ էր մտել կռվի մեջ, ավելի ահավոր էր դարձնում բոպեն. նշանակում էր շատ ավելի ծանր էր դրությունը, քան իրենք պատկերացնում էին։ Քիչ հեռու լսվեց ավտոմատների ու գնդացիրների ճարճատյուն։ Այդ մերոնք էին։ Կոլոսովը, պահեստի ուժերից գնդացրորդներ գնելով թաքստոցներում, հրամայել էր նրանց, թույլ չտալ թշնամու օգնական ուժերին առաջանալու։

Գերմանացիք, ըստ երևույթին, դեռ չէին հրաժարվում գնդի շտաբը գրավելու մտքից, այդ պատճառով էլ ինչպես զոհերին առաջ էին մղվում։

Սմիրնովը, որ գետին էր թավալել ևս միքանի հակառակորդի, երբ լսեց Կոլոսովի ձայնը, ավելի ոգևորվեց և բացականչեց.

— Սուրե՛ն, տե՛ս... ինքը հրամանատարը. շտաբը թշնամու ձեռքը չպիտի տալ։

Դեռ Սուրենը չէր պատասխանել նրան, երբ Սմիրնովը, ինչ որ մի բան նկատելով վայրկենական որոշումով առաջ նետվեց։ Գերմանացիք տեսնելով, որ Կոլոսովի բերած նոր օգնական ուժերն արդեն փոխում են մարտի ելքը՝ ավելի գազազեցին։ Թշնամու մի օբեր-լեյտենանտ իր ատրճանակից նշան առավ Կոլոսովին։ Այդ պահին ահա՛, Սմիրնովը, վագրի մի ոստյունով, թռավ կանգնեց Կոլոսովի առջև և բարձրացնելով հրացանը ուզում էր իջեցնել օբեր-լեյտենանտի գլխին, բայց թշնամին կանխեց նրան. ատրճանակը պայթեց և Սմիրնովը՝ կրծքից խոցված, վայր ընկավ։

Սուրենը, որ նկատել էր Սմիրնովի թռիչքը՝ մի պահ նայել էր նրա ետևից. բայց այն ինչ եղավ, այնպես արագ կատարվեց, որ նա այլևս չկարողացավ իրեն հաշիվ տալ տեղի ունեցածի մասին. մեկ էլ այն տեսավ, որ Սմիրնովի կրծքից արյուն է հոսում։ Կոլոսովին շրջապատող մարտիկներն առաջ նետվեցին և կռվի բռնվեցին գերմանացոց զինվորների հետ, որոնք նույնպես պաշտպանում էին իրենց օբեր-լեյտենանտին։ Իսկ նա, այդ լեյտենանտը, այդպես

թվաց Սուրենին, հոհոռում է, որ վերջ տվեց Սուրենի մտերիմ ընկերոջ կյանքին և այժմ, ատրճանակը նորից շարժում է Կոլոսովի ուղղությամբ։ Այս արդեն գազազեցրեց նրան։ Ամբողջ ռազմի դաշտում Սուրենին, այդ պահին, ամենից պարզորոշ երևում էր օբեր-լեյտենանտը։ Սուրենը դեն նետեց աչքին կապած բինտը, կարծես ավելի թեթևացավ և առաջ նետվելով շեշտակի գրոհեց դեպի սպան. սպան կրակեց, բայց Սուրենն անվթար մնալով մի թռիչքով մոտեցավ և զայրույթի գագաթնակետին հասած՝ հարվածում էր գերմանացուն հրացանով, բռունցքներով, ոտքերով, գլխով։ Բայց սպան, ըստ երևույթին դիմացկուն էր. դուցե նա էլ էր հարվածում Սուրենին, բայց Սուրենն այդ չէր զգում. նա ավելի էր գազազում, որ գերմանացին դեռ կանգնած է. վերջապես նա, կովկասյան ըմբշամարտի եղանակով, աջ ոտքը գցեց օբեր-լեյտենանտի ոտքերի արանքը և նրան գետին տապալեց։ Ապա, վայրկյան իսկ չկորցնելով, ընկավ սպայի վրա, երկու ձեռքով բռնեց նրա կոկորդից և եղունգներով սեղմեց ու սեղմեց։ Օբեր-լեյտենանտը խռռաց, թափահարեց ոտքերն ու ձեռքերը, բայց այլևս նրան վիճակված չէր դեռնից վեր բարձրանալ։

ԳԼՈՒԽՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Սուրենը չէր կարող հանդամանորեն վերհիշել, թե այնուհետև ինչքան տևեց մարտը, ինքն ինչպես նոր զենք ձեռք բերեց, էլի քանի հակառակորդ գետին թավալեց... Միայն նա կարող էր ասել, որ երբեք իր դիտակցությունն այնքան պարզ չէր գործել, ինչպես այդ օրը, երբ նա վեր թռչելով դիակնացած օբեր-լեյտենանտի վրայից, ինչքան ուժ կար կոկորդում գոռաց.

— Դասա՞կ, լսի՞ր իմ հրամանը։

Նա փոխարինեց Սմիրնովին, հարմար մոմենտ ընտրելով Տուլկունբայի միջոցով հայտնեց վաշտի հրամանատար

Բուրավչենկոյին, որ Սմիրնովը շարքից դուրս է եկել և ինքը դասակի հրամանատարությունը վերցրել է իր վրա։

Ձեռնամարտ կռիվը վերջացավ գերմանական երկու գումարտակի համարյա գլխովին ոչնչացումով։ Ավտոմատավորները օգնության հասան շրջապատման մեջ ընկած առաջին գումարտակի երկրորդ վաշտին։ Օգտվելով իր դիմաց կանգնած թշնամու մյուս զորամասերի շարքերում առաջացած խուճապից Կոլոսովը հրամայեց երրորդ գումարտակին և երկրորդ գումարտակի չորրորդ և հինգերորդ վաշտերին հետապնդել թշնամուն։

Կոլոսովը խնդիրն իրագործել էր. նա ոչ միայն բնակավայրն էր իր ձեռքը պահել, այլև հակառակորդին պարտության մատնելով այդ տեղամասում, հնարավորություն էր տվել դիվիզիայի մյուս գնդերին առաջ շարժվել։

Առաջին գումարտակը և երկրորդ գումարտակի վեցերորդ վաշտը հանձնարարություն ստացան կարգի բերել ֆրենց և հասնել թշնամուն հետապնդող զորքերին։ Կոլոսովն ինքը, առանց մի բոպե կորցնելու գնաց դեպի առաջ շարժվող գումարտակները։

Քիչ առաջվա մարտադաշտում տիրեց համեմատական լռություն. թշնամուն հետապնդողներն արդեն բավականին հեռացել էին. Սուրենը նայում էր շուրջ կողմը. դիակներ ու դիակներ։ Առաջին պահ, թվում էր, թե բոլորը մեռած են, որովհետև ականջներն այնքան էին վարժվել նախ թնդանոթների, ավտոմատների ու հրացանների կրակոցներին, ապա ձեռնամարտի ժամանակ բարձրացած անսովոր գոռոցներին և աղմուկներին, որ կարծես, թե այլևս ոչինչ, ոչ մի կողմնակի ձայն չէր լսվում շրջապատում։ Բայց այդ միայն մի պահ, որովհետև ռազմադաշտում կային բավականին շատ վիրավորներ, որոնք տնքում էին։ Սանիտարները, արագ կերպով նրանց փոխադրում էին դաշտային գոսպիտալի վրանը։ Սուրենը նոր միայն զգաց, թե ինչ ծանր բան է պատահել իր հետ։ Սմիրնովը... և միայն այս անունը

բացակայելով նրա սիրտը ճմլվեց. այդ ինչպե՞ս պատահեց. ինքն այնքա՞ն խոսում էր նրա հետ, թե ինքը պարտական է Կոլոսովին, և ահա՛, այդ պարտքն հատուցում է Սմիրնովը, հատուցում է իր կյանքով։ Քիչ հետ գալով նա տեսավ օբեր-լեյտենանտի դիակը. կանգնեց մի պահ, նայեց նրա այլանդակված դեմքին, ապա ձեռքերին, որոնք այժմ թուլացած ընկած էին գետնին. ահա նրա աջ ձեռքը. Սուրենը մի պահ պատկերացրեց այդ ձեռքը վեր բարձրացած, ահարկու, ատրճանակը սեղմած ափամեջ. նա կրճատացրեց ատամները և նայեց վերև, բարձր կապուտակ երկնքին, ապա հեռվում տարածված բուրումնավետ անտառին։ Եվ մտքերը պաշարեցին նրան,—երբ աշխարհում այսպիսի մաքուր, վեհ բաներ կան, ապա ինչո՞ւ է մարդն հարկադրված զբաղվել այնպիսի գործերով, որոնք խամրում են այդ մաքուրն ու վեհը։ Եվ այս մտածելով ավելի էր կատաղում այդ օբեր-լեյտենանտի դեմ, որ թողած իր աշխարհը հեռումներում՝ եկել հասել էր այս վայրերը, ուր նրան ոչ ոք չէր սպասում։

Իր մտքերից նա սթափվեց այն ժամանակ, երբ նրա դեմ եկավ Պետրովը, իր վիթխարի հասակով։

Սուրենը նայեց նրան ու ոչ մի բառ չկարողացավ արտասանել։ Պետրովին լավ հայտնի էր Սուրենի և Սմիրնովի մտերմությունը. նա գիտեր, թե ինչպես էր Սուրենը վրիժառու եղել ընկերոջ համար. ինքն էլ ոչնչացրել էր ուրը հակառակորդի, բայց նա հասկանում էր, որ այժմ Սուրենի միտքն ամբողջովին կլանված է Սմիրնովի վիճակով։ Եվ այդպես էր.

— Պետրով,— վերջապես հարցրեց Սուրենը,— Սմիրնո՞վը... ես նրան եմ փնտռում։

— Այո՛, ընկեր Նահապետյան, ես նրան սանիտարի հետ փոխադրեցի սանիտարական մասը. ես էլ ձեզ էի փնտռում։

— Ուրեմն նա չի՞ սպանվել։

— Բժիշկն ասում է, թե սիրտը դեռ բաբախում է։

Սուրենն այլևս առանց վայրկյան սպասելու վազելով հասավ սան-մասը։

Քաղաքամերձ պուրակում, մի ընդարձակ վրանի տակ, թախտերի վրա պառկած էին քսանից ավելի վիրավորներ. իսկ կից վրանում բժիշկը վիրահատումներ էր կատարում, մյուսում արյուն էին ներարկում։ Սուրենը հասավ այն թախտին, ուր շապկանց պառկած էր Սմիրնովը. նրա վերքին փաթաթված բինտը կարմրել էր. Սմիրնովի աչքերը փակ էին. դեմքը սպրտնել էր.

— Ալեքսե՛յ,—բացականչեց Սուրենը ու դեմքը մոտեցրեց նրա բերանին. բայց ոչինչ չկարողացավ որոշել՝ շնչո՞ւմ է նա, թե՞ ոչ։ Այդ րոպեին եկավ քույրը, ասաց, որ սրսկում է կատարել, բայց ուշքի չի գալիս։

— Իսկ հույս կա՞, որ ուշքի գա,— շտապ հարցրեց Սուրենը, և զգում էր, որ ձայնը խզվում է կոկորդում,—իսկ ինչպե՞ս անել, որ ապրի...

Քույրը նորից սրսկում կատարեց։ Սուրենը մոտեցավ փարվեց վիրավորին։

— Ալեքսե՛յ, ե՞ս եմ, Սուրենը. մերոնք հասել են անտառին։

Ահա, ահա, Սուրենի սիրտն ավելի արագ է բաբախում, հրաշքը պիտի կատարվի։ Սմիրնովը կենդան ության նշաններ է ցույց տալիս. նա բացեց աչքերը։ Սուրենը պատրաստ էր ճչալ, բայց միայն մեղմ ձայնով շշնջաց.

— Ալեքսե՛յ, ի՞մ Ալեքսեյ։

Եվ սրտատրոփ սպասում էր մի խոսքի, մի հատիկ բառի։ Եվ ահա, կարծես, թե նա շարժում է շրթունքները.

— Սուրե՛ն,—մրմնջաց նա, ապա ձախ ձեռքով ինչ որ շարժում արեց, բայց ոչ ոք այդ շարժումի իմաստը չհասկացավ և վիրավորն էլ կարծես զգալով, որ ոչ ոք իրեն չի հասկանում, նորից շարժեց շրթունքները, բայց այս անգամ կցկտուր հազիվ կարողացավ շշնջալ.

— Նա... աս... տյա...

Նա փակեց աչքերը, փակեց առհավետ։

Սուրենն այս անգամ չկարողացավ զսպել հեկեկոցը և փարվելով Սմիրնովի սառչող դեմքին համբուրեց նրա շրթունքները...

...Մթնում էր։ Մարտական օրն իր վախճանին հասավ։ Սուրենն իր դասակի գլուխն անցած քայլում էր դեպի գնդի նոր դիրքերը։ Նա գնում էր գլխիկոր. այսօր նա կորցրել էր մի մարդու, որի հետ ահա տասնչորս ամիս զենքի անբաժան ընկեր էր եղել. խորին կսկիծով էր լցված նրա հոգին. նա չէր բավարարվել վերջ տալով օբեր-լեյտենանտի կյանքին։ Ոչ մի բան չէր կարող հատուցել կորցրածը. նա Սմիրնովի բաց գերեզմանի առաջ ճառ ասաց՝ նրա ազնվության, նրա քաջության, հայրենիքին նվիրված լինելու մասին, ապա ասաց, որ ինքը Սմիրնովի փոխարեն ընդունելով դասակի հրամանատարությունը վրիժառու կլինի նրա կյանքի համար և մինչև իր արյան վերջին կաթիլը կկռվի հանուն Հայրենիքի, բայց կուզեր, որ այլ ելք ունենար այսօրվա թեժ կռիվը։ Ամենից շատ նրան մտահոգում էր, թե ինքն ի՞նչ պիտի ասեր Սմիրնովի կնոջը, Նաստյային, եթե հանկարծ, որևէ կերպ հանդիպեր նրան. իսկ այժմ նրան հանդիպելը, դառնում էր Սուրենի կյանքի նպատակներից մեկը։ Նրան հուզում էր այն հանգամանքը, որ Սմիրնովը զոհվել էր հատկապես Կոլոսովին փրկելու համար, մի բան, որ ինքն էր պարտավոր անել... սակայն այս մտքի վրա էլ երկար կանգ չէր առնում. պատերազմ է, խելացին այն է, գործել այնպես, ինչպես թելադրում են ստեղծված նոր պայմանները. բայց այս մտածումը միայն ինքնահանգստացման համար էր. ամեն օր, իհարկե, կառաջանային նոր պայմաններ, իսկ Սմիրնովն այլևս անվերադարձ էր։

Այնուհետև գունդը մեկ ամբողջ շաբաթ կռիվներով բավական առաջ շարժվեց։ Երբ մի բնակավայրում գունդը հրաման ստացավ մեկ օրով հանգստանալ, Կոլոսովը այցելեց բոլոր գումարտակները։ Նա առանձին բավականությամբ ռազմիկների համար կարդում էր Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունները իրենց ռազմաճակատի մա-

սին։ Այդ կարճ, բայց շատ նշանակալից պաշտոնական խոսքերը, որոնք հաղորդվում էին ի լուր ամբողջ աշխարհի, ասում էին. «Վորոնեժի շրջանում առանձին հատվածներում նախաձեռնությունն անցավ սովետական զորամասերի կողմը. գրավված են մի շարք բնակավայրեր»։ Կարդալով այս, Կոլոսովը բոլոր գումարտակներում կրկնում էր միևնույն միտքը, որ թշնամին, այնուամենայնիվ, դեռ զորեղ է, և որ նա Ստալինգրադի և Կովկասի ուղղություններում դեռ շարունակում է առաջանալ։

— Կգա, շուտով կգա այն օրը,— հատկապես շեշտում էր Կոլոսովը,— որ բոլոր ռազմաճակատներում նախաձեռնությունը կանցնի մերոնց ձեռքը։

Վեցերորդ վաշտում հայտնելով այս միտքը, նա ընդգծեց այդ վաշտի բոլոր ռազմիկների խիզախությունը, որոնք դժվար պահին իրենց սխրագործություններով օժանդակեցին գնդին դուրս գալու ստեղծված ծանր վիճակից։

— Ռազմի գործը,— ասաց նա,— նման է սրտի աշխատանքի. եթե մի պահ կանգնեց կամ թուլացավ սրտի աշխատանքը, ամբողջ օրգանիզմը դադարում է ապրելուց։ Այդպես էլ պատերազմն է, ամեն րոպե պիտի մտածել թշնամուն հարվածելու, ու նոր եռանդով առաջ շարժվելու մասին, հենց որ ոգևորվեցիր տարած մասնակի հաղթանակով ու թուլացրիր հարվածը՝ պատերազմը տանուլ կտաս։

Սուրենի համար, այժմ Կոլոսովը կրկնակի թանգ էր, որովհետև նա փրկված էր իր ամենասիրելի ընկերոջ Սմիրնովի կյանքի գնով. նա կուզեր մի բառով, մի որևէ բանով այդ հասկացնել Կոլոսովին. նա չգիտեր, թե ինչպես կարելի է այդ անել, բայց ահա Կոլոսովը մոտեցավ նրան ու ասաց.

— Սուրեն, դու վարվեցիր իբրև խելական ռազմիկ. դժվար պահին փոխարինեցիր Սմիրնովին. դու բարձր ես պահում Հայաստանի պատիվը. շնորհակալություն եմ հայտնում ազնիվ, խիզախ ծառայության համար։

— Սուրենը ըմբռնեց, որ այդ խոսքերն ասելով Կոլոսովը հասկացել է, թե ինչ է մտածում ինքը, ուստի և նա այլևս չկարողացավ անմիջապես ասել նման դեպքերում պատշաճ խոսքերը,— այն է «պատրաստ եմ ծառայելու հայրենիքին», այլ դրա փոխարեն միայն շշնջաց.

— Սմիրնովը, Սմիրնովը...

...Մեկ օր տեղ հանգստի ընթացքում Սուրենը, դասակում կատարելով հարկ եղած աշխատանքը, Պետրովին նշանակեց իրեն փոխարինող և իր հետ վերցնելով մի ավտոմատավոր գնաց շրջելու նոր վերագրված բնակավայրը. այդտեղ կային բավական թվով էվակուացիայի ենթարկվածներ։ Սուրենն անընդհատ հարցնում էր, թե ով ո՞րտեղացի էր, ե՞րբ, ի՞նչ պայմաններում էր գաղթել և հուզմունքով դիմում էր մեկին կամ մյուսին.

— Ո՞վ է ձեզնից Ստարի-Օսկոլցի։

— Նրանք մեզնից հետո են գուցե եկել,— պատասխանում էին մի քանիսը։

Բայց տեղեկություններն հակասական էին. մյուսներն ասում էին, թե նրանք չեն կարողացել ժամանակին դուրս գալ բնակավայրից, որովհետև գերմանացիք ռմբակոծումներով կտրել են նրանց դաղթի ճամբան, ուրիշներն էլ ասում էին, թե հեռուն փռվող անտառում կան թագնվածներ, որոնց մեջ շատ Ստարի-Օսկոլցիներ էլ կան։ Հետո Սուրենն հարցնում էր անուն, ազգանունով, թե իրենց շրջապատում չկա Անաստասյա (Նաստյա) Սմիրնովա անուն ազգանունով կին վեց տարեկան աղջկա և չորս տարեկան տղայի հետ։ Ստանալով բացասական պատասխան նա մռայլվում էր և ամբողջ հույսը դրել էր դիպվածի վրա։

Մյուս օրը գունդը նորից կռվի մեջ մտավ և երկու կիլոմետր առաջ շարժվեց, սակայն երեկոյան դեմ, մի բնակավայրում, երբ հակառակորդը վերջին ճիգերն էր գործադրում բնակավայրն իր ձեռքը պահելու, պայթած արկի բեկորից Կոլոսովը վիրավորվեց ձախ թևից ու ձախ սրունքից։ Հրամանատարությունը ստանձնեց գնդի շտաբի պետը։

Կոլոսովին փոխադրեցին մերձակա քաղաքի հիվանդանոցը։

ԳԼՈՒԽՈ ՏՕՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Հետևյալ օրը լուսադեմին նորից բռնկվեց անխոտափելի մարտը. գերմանացոց դուռ չէր գալիս, որ այս ռազմաճակատում իրենց գործերն այնպես չէին գնում, ինչպես իրենք նախագծել էին. մինչդեռ որոշ ռազմաբեմերում մերոնք պաշտպանողական կռիվներ էին մղում և համարյա ամեն օր հետ էին նահանջում, այս ռազմաճակատի մասին ի լուր աշխարհի հայտարարվում էր, որ սովետական զորքերը թշնամուն հետ են մղում։ Այս բանն ինչքան կառաջեցնում էր հակառակորդին, այնքան ոգևորում էր ռազմաճակատի ռազմիկներին։ Եվ ահա, երբ նորից սկսեց կանոնադան, երբ նորից սկսեցին ճարճատել գնդացիրներն ու ավտոմատները, Սուրենը կրկին մտավ իր տարերքի մեջ։ Այժմ նա իրեն հատկապես մոտիկ մարդ էր համարում Պետրովին, որի հետ ոչ միայն խորհրդակցում էր դասակի անելիքների մասին, այլև գիտեր, որ դա այն անձնավորությունն էր, որի հետ կարող էր խոսել իր սրտին նվիրական հարցերի մասին։

Հակառակորդի արկերն ու ականները բավական մոտիկ էին պայթում խրամատներին, սակայն մեր հրանոթները շեղատակի հարվածներով, թշնամու մի քանի կրակային կետեր իրար եռևից ոչնչացրին։

Եվ ահա ստացվեց հրաման.

— Գրոհել թշնամու խրամատները։

Սուրենը ուժերը հավաքեց ու գոռաց.

— Դասա՞կ առա՞ջ, դեպի թշնամի՞ն։

Բոլոր ռազմիկները դուրս ցատկեցին խրամատներից ու առաջ շարժվեցին։ Պետրովը, որ Սուրենի հրամանը լսելով նույնպես դուրս էր ցատկել խրամատից և իր ջոկի զինվորների ուղղությունն էր որոշում, հանկարծ նկատեց, որ

Սուրենը ճիգ է գործ դնում, բայց չի կարողանում խրամատից դուրս գալ։

Նա հետ ցատկեց խրամատը։

— Սուրեն, ի՞նչ է պատահել քեզ... Սուրեն թեզ արյունոտված է,— բացականչեց Պետրովը։

Եվ իրոք, Սուրենը ձախ թևից վիրավորված էր. առաջին պահ, քանի դեռ վիրքը տաք էր նա ոչինչ չէր զգացել, բայց երբ ուզել էր թևը հենակ դարձնել ու դուրս թռչել խրամատից, սուր ցավ զգալով մնացել էր տեղում կանգնած։ Նա չէր ուզում հավատալ, թե ինքը վիրավորված է, այնքան անպատեհ էր գտնում այժմ այդ դեպքը, ուստի նորից փորձեց դուրս գալ, բայց ապարդյուն։

— Սուրե՛ն, վերցրու մի մարտիկ և գնա սան-մաս։

— Պետրո՛վ,— բացականչեց Սուրենը,— անմիջապես առաջ անցիր. դասակի հրամանատարությունը քեզ եմ հանձնում։

— Լսում եմ. բայց թող Վոլկովը քեզ հետ գա, մինչև սանիտարները հասնեն։

— Պետրո՛վ, կատարիր իմ հրամանը. հասիր դասակին. ես առանց օգնականի կարող եմ տեղ հասնել։

— Есть,— ասավ միայն Պետրովը և դուրս թռչելով խրամատից դասակի հետ շարժվեց առաջ։

Սուրենը տխրամած աչքերով նայեց առաջ շարժվող զինվորներին. սակայն թևի ցավը սաստկանում էր և նա այլևս դժվարանում էր որոշել, թե ինչ է կատարվում այնտեղ, առաջամասում։ Քիչ անց վրա հասավ մի սանիտար և առաջին օգնությունը ցույց տվեց նրան։ Երբ արյունահոսությունը դադարեց նա բավական ուժ զգաց իր մեջ և թաքստոցներով հետ գնաց դեպի թիկունք։

Օդոստոսյան ցերեկ էր. նա հասավ անտառի եզրին. մեկ երկու կիլոմետրի չափ արդեն հեռացել էր առաջավոր գծից. ահա նորից սկսվեց թնդանոթների որոտը. երևի առաջին գրոհը հաջողություն չունեցավ մտածում էր նա, մերոնք նորից ուժեղացրին թնդանոթների կրակը։ Անցավ ևս տաս

բոպե. ձայներն հեռանում էին. այդ լավ է, լավ, կրակն ավելի առաջ են փոխադրում. այդպես, թեկուզ հարյուր քայլ, թեկուզ տաս քայլ, թեկուզ մի քայլ, բայց առաջ... Ոգևորվելով իր մտքից նա մեկ-մեկ մոռանում էր ցավը, բայց երբ վերքն իրան զգալ էր տալիս նա ջղայնացած բացականչում էր.— «Մի՞թե ժամանակն էր, մի՞թե հենց ինձ հետ պիտի պատահեր»: Դեռ մտքերը չէր հավաքել մտածելու այլ բաների մասին, երբ նկատեց թշնամու օդանավերի մի խումբ, որոնք երևացին ռազմաճակատի գծի վրա:

Լսվեցին խուլ գրդրդյուններ. օդանավերն էին ռումբեր տեղում: Մի հինգ բոպեից հետո, երբ երևացին նաև մեր օդանավերը, թշնամու ռազմաթիչները մի շրջան կատարեցին, անցան անտառի վրայով, նետեցին ևս մի քանի ռումբեր և ապա հետ դնացին. մերոնք սկսեցին հետապնդել նրանց, բայց կարողացան հասնել, թե չէ, Սուրենը այդ չտեսավ:

Դիվիզիայի բուժ-սան գումարտակին հասնելու համար Սուրենը դեռևս պիտի անցներ չորս-հինգ կիլոմետր ճամբա: Եվ ահա անտառից լսելի դարձան ինչ որ ձայներ. նա քայլում էր անտառի եզրով. կանգնեց. եռեսունի չափ կանայք ու երեխաներ, խմբված, բարձրաձայն խոսում էին: Երբ Սուրենը մոտեցավ, տեսավ նաև մի քանի տղամարդկանց պարտիզանի հագուստներով: Անմիջապես նա հիշեց այն լուրերը, որ ինքն ու Սմիրնովը լսել էին դեռ հիվանդանոցից ռազմաճակատ գալիս, անտառի պարտիզանների և գաղթած բնակչության մասին: Դեռ նախ քան խմբին հասնելը նա հանդիպեց չեչոտ դեմքով մի կնոջ. նրա հյուծված դեմքին կենդանություն էին տալիս միայն կապույտ աչքերը: Նա երկու խոսքով Սուրենին պատմեց, որ ամսից ավել իրենք զանազան տեղերից հավաքվել, թաքնվել են այդ անտառներում. նրանց բոլորի հարազատները լինելով պարտիզանական խմբերում կամ Կարմիր Բանակում իրենք վախենում էին գերմանացիներից: Երկու օր առաջ այս վայրերն ազատվել էին գերմանացոց ձեռքից և նրանք դեռ չգիտեին, թե ուր պիտի գնան:

— Դե, լամառ է,—ավելացրեց շեչոտ կինը,— անտառում ուտելու բան կգտնես։ Մարդիկ են գնացել այս մոտիկ գյուղերը, սպասում ենք, դան, տեսնենք որտեղ է հարմար բնակվել, մինչև տեսնենք ինչ կլինի մեր վերջը։

— Իսկ ի՞նչ են աղմկում այնտեղ,— հարցրեց Սուրենը ցույց տալով կանանց խումբը։

— Սովորական բան... Շմիդից*) լիմոնչիկ**) գցեցին առավոտը. երկուսն խկուն մեռան. մեկը վիրավորվել էր, քիչ առաջ նա էլ մեռավ։

Շեչոտ կինը խոսում էր հանգիստ։ Այնքան էր նա վարժվել այդ Շմիդներին ու լիմոնչիկներին, որ նրա զայրույթն, ըստ երևույթին, չէր բավարարում ամեն անգամ արտահայտելու այն, ինչ ինքն զգում էր ներքնապես։

Սուրենը, մոռացած թևի վերքի ցավը, մոտեցավ կանանց խմբին։

Կանայք հետ քաշվեցին։ Անտառի փոքրիկ բացատում, շորացած խոտերի վրա ընկած էր մի կին. նրա մազերն արյունոտված էին։ Քիչ հեռու ճչում էր մի երեխա, և ամեն կերպ ուզում էր մոտենալ մեռած կնոջը. կանանցից մեկը ուզում էր հանգստացնել երեխային, մերթ փաղաքշելով, մերթ ինչ որ խոսքեր ասելով, սակայն ոչինչ չէր օգնում։

Սուրենը երկար-երկար նայեց գետնին ընկած կնոջը, ինչքան կարելի էր դատել նա բավական երիտասարդ էր։ Սուրենը ուզում էր նորից զբաղվել իր հարց ու փորձով, ինչպես առաջին օրը այն բնակավայրում, բայց սիրտ չէր անում. միայն չէր կարողանում հայացքը կտրել այդ կնոջից. շրջապատողներից էլ ոչ ոք ոչինչ չէր ասում. միայն, երբ երեխան սկսեց ավելի ևս աղիողորմ ճչալ, կինը, որ ձգտում էր նրան հանգստացնել մոտեցավ Սուրենին և ասաց.

---

*) Ուզում է ասել Մեսսերշմիտից —գերմանական օդանավ։

**) Գերմանական օդանավերից նետած ռումբերին, պատերազմի օրերին, շատերը արհամարհանքով լիմոն էին ասում։

— Այ, պապան, Միշա, սա պապա է։

Սուրենը, պատերազմի ընթացքում, շատ էր լսել այդպիսի խոսքեր. մայրերը ցույց տալով զինվորներին, ասում էին՝ «այ, սա պապայի նման է հագնվել», «այ, սա պապայի մոտ է գնում», «այ, սա պապայի մոտից է գալիս», կամ ուղղակի ասում էին, ինչպես այս անգամ, թե «սա պապա է»։

Ոչ մի անգամ Սուրենն այնպես կսկիծով չէր լսել այդ խոսքերն, ինչպես այս անգամ, և ոչ մի անգամ էլ այդ խոսքերն այնպիսի մոգական ազդեցություն չէին ունեցել երեխայի վրա, ինչպես այժմ ազդեցին Միշայի վրա։ Երեխան լռեց և նայեց Սուրենին։ Սուրենն էլ նայեց նրան և զգաց, որ Միշան ձգտում է դեպի իրեն. Նա առողջ ձեռքով գրկեց նրան, տպա դարձավ այն կնոջը, որից ընդունեց երեխային։

— Կարծեմ, Մի՞շա ասացիք։

— Այո՛, իսկ և իսկ Միշա։

Սուրենը կրկին նայեց կնոջ դիակին և վախենում էր նոր հարցեր տալ. վախենում էր, թե արդարանան իր նախազգացումները։ Այդ բոպեին չեչոտ կինը նույնպես մոտեցավ խմբին և, Միշային տեսնելով Սուրենի գրկում, բացականչեց

— Ա՜խ, Նաստյա, Նաստյա... գիշեր-ցերեկ ախ ու վախ էր անում իր Ալեքսեյի համար, հիմի էլ էս օրին ընկավ,— և կարծես, նոր զայրույթի պաշար հավաքած, դոռաց.

— Թող ծծումբ թափվի էդ Շմիդի գլխին...

Բայց Սուրենն այլևս չէր լսում պառավին. Նաստյա՜,— այս անունն էր հնչում նրա ականջում. նա նստեց մի կոճղի, Միշային դրեց ծնկան և հարցրեց.

— Ասացեք, ի սերն աստծու, ո՞վ է սպանված կինը, ի՞նչ է նրա ազգանունը։

— Սմիրնովա,— պատասխանեցին մի քանիսը նրան միանգամից։

— Ո՞րտեղացի է։

— Ստարի-Օսկոլից։

— Իսկ Ալեքսեյն ո՞ւր է։

— Տղամարդն ո՞ւր կլինի հիմա,— հարեց շեշոտ կինը,— բանակո՛ւմ, իսկ թե ո՞րտեղ է հիմա, ի՞նչ է անում՝ այդ էլ աստված գիտի։

Սուրենի համար ամենի ինչ պարզ էր. նա չուզեց ոչինչ հայտնել Սմիրնովի մասին, միայն վերջնականապես հավաստիանալու համար, հարցրեց.

— Միայն այս մի երեխան ուներ Նաստյան։

— Է՜հ, մի լավ էլ աղջիկ ուներ. Կատյան, նա էլ, հենց Ստարի-Օսկոլում, կլարմրուվից մեռավ։

Սուրենը զգում էր, որ արցունքները խեղդում են կոկորդը։

Անցան մի քանի լուռ րոպեներ։

Տղամարդկանցից երեքը անտառում գերեզման էին փորել. Նաստյայի դին ամփոփեցին այնտեղ։

... Երեկո էր. անտառի բնակիչներից մեծ մասը փոխադրվեցին մոտակա բնակավայրերը, շեշոտ կինը ընկերացավ Սուրենին մինչև սան-բուժ գումարտակը։ Սուրենը խնդրել էր նրան ընկերակցել իրեն, օգնել Միշային հասցնելու մինչև հիվանդանոց, ուր հնարավոր կլիներ պարզել, թե ինչպես պետք էր տնօրինել երեխայի վիճակը։

Եվ ահա, շեշոտ կինը՝ Կատերինան, շալակն առած Միշային, Սուրենի հետ կողք կողքի գնում էին փոշոտված գյուղական ճանապարհով։

Միշան, որ առաջին պահին Սուրենին պապայի տեղ ընդունելով հանդարտվել էր, այժմ նորից սկսել էր հեկեկալ և մորն էր կանչում։ Սուրենը ուզում էր մի բանով հանգստացնել երեխային, բայց ոչինչ չէր ստացվում. քիչ անց նա երևի հոգնեց լալուց և հենց Կատերինայի շալակին էլ քնեց։ Երբ մեկ ժամից հետո նրանք մոտենում էին բնակավայրին, երեխան զարթնեց, նայեց Սուրենին, նրա արևախանձ դեմքին և խտուտացնելով աչքերը, կարծես,

թե դեռ ինչ որ երազից լիովին չսթափված՝ ժպտաց և բացականչեց.

— Պապա՛, պապա՛։

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐԵՔԵՐՈՐԴ

Բուժ-սանիտարական գումարտակում հարկ եղած բուժ-օգնությունը ցույց տվին Սուրենին և հենց հետևյալ օրն էլ նրան ուղարկեցին մերձակա հիվանդանոցը, ուր հատուկ սենյակում պառկած էր նաև Կոլոսովը։

Գիշերը Սուրենն իրեն վատ զգաց. ջերմությունը բարձրացավ. վերքը, չնայած, վտանգավոր չէր, ոսկորը չէր վնասվել, բայց Սուրենը ջղային վիճակ էր ապրում. նորից հիվանդանոց, նորից մահճակալ. ճիշտ է, ցերեկին բժիշկն ասել էր, որ այս անգամ նա ավելի կարճ կպառկի հիվանդանոցում, բայց այդ նրան չէր հանգստացնում. պառկած մեջքին. նա թեև աչքերը փակել էր, բայց չէր կարողանում քնել։ Կես գիշերն անց էր. նորից բազմաթիվ մտքերը պաշարել էին նրան։ Եվ ամենից առաջ նա մտածում էր Սմիրնովի և նրա ընտանիքի ողբերգության մասին։ Այդպես ուրեմն, նրա ընտանիքից մնաց միայն այդ չորսամյա Միշան խնամքի կարոտ, հարազատի կարոտ. ի՞նչ անել։ Ինչո՞ւ այդպես վատ դասավորվեց գործը, ինչո՞ւ հատկապես Սմիրնովը զոհվեց. պե՞տք էր փրկել Կոլոսովին. անշուշտ. դա ամեն մի ռազմիկի պարտքն էր և առաջին հերթին իր պարտքը։ Ճիշտ է, իրեն լավ խոսքեր ասացին, որ ինքը աղնվորեն է կատարում իր գործը, բայց նա, թերևս երիտասարդական անհամբերությամբ, ջղայնանում էր, որ ամեն ինչ այնպես չի ստացվում, ինչպես ինքն է ցանկանում։ Եվ ահա այժմ այդ Միշան, այդ անմեղ արարածը մնացել է անպաշտպան. գոնե նրա նկատմամբ թող ստացվի այնպես, ինչպես ինքն է ցանկանում. Կատերինան կարո՞ղ էր ապահովել նրա գոյությունը, նրա դաստիարակու-

թյունը. ոչ, ոչ, դա իր պարտականությունն էր. Սմիրնովը նրան ոչինչ չէր ասել, բայց չէ՞ որ նրա վերջին բառերն էին Սուրենն, ապա Նաստյա. գուցե ճակատագրական մի բան կար այդտեղ, որ անձնազոհ ընկերը, վերջին պահին միայն այդ երկու անունը տվեց. Սմիրնովը Նաստյային հանձնում էր իր խնամքին, այժմ չկար նաև Նաստյան. մնացել էր Միշան. բայց ինչպե՞ս տնօրինել նրա վիճակը. «ուրիշ կերպ չի կարող լինել,— շշնջաց նա յուրովի,— միայն ու միայն ինձ մոտ, իմ խնամքի տակ. բայց ինչպե՞ս»: Նրա համար այժմ մխիթարիչ էր այն հանգամանքը, որ ինքը Կոլոսովի հետ միևնույն հիվանդանոցումն է, և թերևս կարողանա նրա հետ ավելի մոտից խոսել, նրա խորհուրդն հարցնել: Նա նստեց անկողնում. սենյակում կային ևս վեց վիրավորներ. նրանք բոլորն էլ թեթև վիրավորներ էին և հանգիստ քնած էին: Սուրենը նայում էր դեպի դուռը. ինչ լավ կլիներ, որ հանկարծ դուռը բացվեր և ներս մտներ նա, իր անձկալին՝ Վերան: Եվ Սուրենը հոգու ամբողջ թափով կարոտեց նրան: Կռվի մեջ մտնելու նախօրյակին, Պետրովի հետ բացատրվելուց հետո, նա Վերային նամակ էր գրել, բայց դեռ նրանից պատասխան չէր ստացել, այժմ այնպես էին բոցավառվել նրա զգացումները, որ նա չէր կարող քնել, եթե բոլոր առաջ իր մտքերը նամակով չհաղորդեր Վերային, ուստի նա հարմար տեղավորվեց մահճակալին, բարձի տակից հանեց թուղթ ու մատիտ, թուղթը դրեց գրքի վրա և փորձեց գրել: Առաջին հերթին անհարմարություն էր զգում, որովհետև ձախ ձեռքով թուղթը չէր կարողանում պահել, սակայն մի կերպ վարժվեց աջ ձեռքով այնպես անել, որ թուղթը չսահի գրքի վրայից, և սկսեց գրել.

«Թանկագին Վերա.

Ծանր կռիվներ ունեցանք: Մեր Կոլոսովը հրաշալի վարեց մարտը. ամենամխիթարական բանը, որ կարող եմ հայտնել քեզ, այդ այն է, որ մենք, մեր ճակատամասում առաջ շարժվեցինք: Բայց մեր ժո-

զովրդական առածն ասում է՝ երկու լավ բանը մեկտեղ չի լինում։ Մի դաժան օր, իմ ազնիվ Ալեքսեյը, մեր երկուսի սիրելի Սմիրնովը... բերանս չի բերնում, որ ասեմ, ձեռքս չի զորում, որ գրեմ... մեր Սմիրնովը հերոսաբար զոհվեց։ Իր կյանքի գնով նա փրկեց մեր հրամանատարին, Կոլոսովին... Կոլոսովն էլ այժմ վիրավորված է և պառկած է այս միևնույն հիվանդանոցում։ Հույս ունեմ նրա հետ տեսնվել։ Բայց, թանկագին Վերա, կատարվեց ամենասարսափելին. դատ Սմիրնովի կնոջը. ի՞նչ վիճակում. զոհված օդանավի ռմբակոծումից։ Սմիրնովի ընտանիքից միայն նրա որդին, չորամյա Միշան է մնացել. նա ինձ մոտ է, հիվանդանոցում. այժմ քույրերն են խնամում նրան և նա, այդ Միշան, սիրելի Վերա, ինձ անվանում է պապա. հոգիս մղկտում է նրա ձայնը լսելիս. ո՞րքան վստահություն, ո՞րքան հավատ կա նրա երաժշտական երկվանկանի բառի մեջ... ի՞նչ անեմ, Վերա ջան, հազարավոր վերստերով հեռու եմ մորիցս. իմ բնակարանը խրամատն է և իմ տան լուսամուտը երկինքն է՝ այնքան ժամանակ, ինչքան մեր հողը կոխկրտում է թշնամու ոտքը. ի՞նչ անեմ. ես այս անգամ երկար չեմ մնա հիվանդանոցում. խոստանում են շուտ բաց թողնել. կուզեի, որ Միշան մի ապահով տեղ լիներ, մի խնամքոտ ձեռք հետևեր նրան, որպեսզի նա որբություն չզգար. Վերա, ծանր է որբության զգացումը. ես ապրել եմ այդ զգացումը։ Սմիրնովի հիշատակի համար ես Միշայից չեմ կարող բաժանվել։ Անգին Վերա, այս բոլորը գրեցի քեզ, որովհետև չէի կարող չգրել, հիմա կուզեի որ ինձ մոտ լինեիր, խոսեի, բացատրեի իմ զգացածը. այո՛, մտերիմի խոսքի ու զրույցի եմ կարոտ և հատկապես քո խոսքին ու զրույցին։ Ես

ցանկանում եմ լսել քո խորհուրդը Միշայի մասին, ինչպե՞ս տնօրինել նրա վիճակը»։

Այստեղ Սուրենը կանգ առավ, մի քիչ մտածեց. ուզում էր գրել, թե ես իմ ապագա կյանքը պատկերացնում եմ այսպես՝ ունենալ սիրող մի կին, որը համաձայնի ինձ հետ միասին որդեգրել ու խնամել Միշային։ Սակայն մատիտը մի քանի անգամ աննպատակ տարավ-բերեց թղթի վրա և գտավ, որ հարկ չկար այդ գրելու. ընկերոջ ընտանիքի թարմ շիրիմի հանդեպ նա գտնում էր, որ վաղաժամ է խոսել իր կյանքը տնօրինելու մասին, երբ առաջիկայում դեռ էլի այնքան գործեր կային, ուստի և առանց նոր բան ավելացնելու միայն գրեց՝ «ջերմ բարևներով քո Սուրեն»։

Այնուհետև միայն նա կարողացավ քնել։

Առավոտյան զարթնելով նա նախ խնդրեց քրոջը, որ իր նամակը փոստը գցեն, ապա տեղեկանալով, որ Միշան իրեն լավ է զգում, սրտապնդվեց և, երբ հերթապահ բժիշկն եկավ, խնդրեց, որ իրեն թույլ տա Կոլոսովին այցելության գնալու։

Կոլոսովի դրությունը դեռ ծանր էր և բժիշկը նրա մոտ դժվարությամբ էր այցելություններ թողնում, սակայն տեղեկանալով, որ Սուրենը նրա գնդի ռազմիկներից է, նա զիջեց, նախապես, իհարկե քրոջ միջոցով տեղեկանալով, որ Կոլոսովը չի առարկում ընդունելու Սուրենին։

...Եվ ահա Սուրենը նստած է Կոլոսովի մահճի մոտ. Կոլոսովը մեջքով թիկն էր տվել բարձերին ու նայում էր Սուրենին. նրա դեմքը դալկացել էր, երևում էր, որ շատ արյուն էր կորցրել և այս անգամ, իրոք, նա բավականին ծեր երևաց Սուրենին։ Տեսնելով Սուրենին Կոլոսովի դեմքը շառագունեց մի ժպիտ, աչքերը փայլ ստացան և առաջին պահին միայն կարողացավ հարցնել։

— Այդ ինչպե՞ս, Սուրեն, դու նորի՞ց վիրավորվեցիր։

— Այո, ընկեր հրամանատար։

— Դու այստեղ ինձ կարող ես ասել Ալեքսանդր Միխայլովիչ։

Սուրենը մի քանի խոսքով պատմեց, թե ինչ հանգամանքներում է ինքը վիրավորվել, ապա խոսեց գնդի հետագա գործողությունների մասին և ավելացրեց.

— Շատ վատ ժամանակ վիրավորվեցի. հենց այն մոմենտին, երբ դասակը պիտի գրոհի տաներ։

— Ո՞վ փոխարինեց քեզ։

— Պետրովը։

— Գիտեմ նրան... հիմա ինչպե՞ս ես զգում քեզ, Սուրեն,—հարցրեց Կոլոսովը հոգատար մի հայացքով նայելով իր վիրավոր ռազմիկին։

— Շատ վատ, ընկեր հրամա... Ալեքսանդր Միխայլովիչ։

— Մի՞թե վերքդ նեղում է, հապա ինչո՞ւ ես վեր կացել. դե, շուտ, գնա պառկիր տեղդ։

— Ո՛չ, խնդրում եմ չտրտսել գնալու. վերքս չի նեղում։

Կոլոսովը մի քիչ թեքվեց առաջ, շեշտակի նայեց Սուրենի աչքերին, ապա մեղմ տոնով հարցրեց.

—Ի՞նչ կա, խոսի՛ր։

— Ի՞նչ խոսեմ,— կմկմաց Սուրենը,— և բառ չգտավ իր զգացածը արտահայտելու։

— Խոսի՛ր,— ներշնչող տոնով ասաց Կոլոսովը,— մի բան կա սրտիդ խորքում, խոսի՛ր, սրտաբաց գրուցը թեթևացնում է մարդուն։

Սուրենը սրտապնդվեց։

— Ինձ համար շատ ծանր է,—ասաց նա,— որ Սմիրնովը զոհ գնաց։

— Այո,— համաձայնեց Կոլոսովը,— հերոս էր, իսկական հերոս... բայց Սուրեն, կռիվը դաժան բան է, իսկ հաղթության գործը զոհ է պահանջում։

— Բայց... բայց,—էլի կմկմաց Սուրենը, ապա հազիվ լսելի ձայնով շարունակեց,— ես չկարողացա ժամանակին նկատել, ես պիտի անեի այն ինչ արավ Սմիրնովը...

Եվ այլևս չկարողացավ շարունակել. զգաց, որ հետա-

գա խոսքերն ավելորդ են. նույնիսկ այն, ինչ ասաց, այն էլ պետք չէր ասել. չէ՞ որ ճիշտ էր մտածել, թե ինքը հա կոփվ չի գնում Կոլոսովին հատուցելու համար, բայց թե ինչու այդ միտքն իր ուղղից չէր հեռանում, նա չէր կարող բացատրել։ Եվ այժմ ափսոսում էր, որ Վերային էլ այդքան մանրամասն պատմել էր Կոլոսովի մասին։

Սակայն Կոլոսովը դիտելով Սուրենի անհամարձակ շարժումները, որևէ հարցով չէր ուզում շփոթեցնել նրան։ Փորձված զինվորականը լավ էր ըմբռնում երիտասարդ հայաստանցու հոգեբանությունը. նա մի պահ հիշեց բոլոր այն պահերը, երբ ինքը հանդիպել էր Սուրենին և հատկապես հիշեց այն րոպեն, երբ ինքը փրկեց Սուրենի կյանքը։ Գիտեր, որ Սուրենն հենց այդ մասին էլ ուզում է խոսել, բայց և հասկանում էր, որ Սուրենը չգիտե, թե ինչ խոսքերով արտահայտի իր զգացածը։

—Սուրեն,— հանդարտ տոնով ասաց Կոլոսովը,— քեզ տանջում է Սմիրնովի մահը, և հատկապես տանջում է նրա համար, որ նա ավելի շուտ հասավ ինձ օգնության, քան դու։ Այդպես չէ՞։

Սուրենը լուռ էր։

— Ոչ, Սուրեն, ճիշտ չես մտածում. եթե դու վախկոտի նման գլուխդ թփերի մեջ պահեիր, դու հիմա իրավունք չէիր ունենա իմ կողքին նստելու։ Սմիրնովին ես էլ եմ շատ ափսոսում, բայց երբ րոպեն պահանջում է, բոլորս էլ պիտի նրա պես գործենք։ Ես կռվին հետևում էի, դու քո տեղումն էիր... Իսկ երբ կռվի թեժ պահին ռազմիկն իր տեղումն է, դա ամենամեծ գովասանքն է ռազմիկի հասցեին։

— Իր տեղո՞ւմ,— անլսելի մրմնջում էր Սուրենը։

— Այո, Սուրեն, չկա բարձր ու ցածր գործ, ամեն գործ բարձր է դառնում, երբ մարդ այն կատարում է ազնվորեն, երբ դու լավ ես կռվում, դրանով դու ոչ միայն ինձ ես հատուցում, այլև հատուցում ես քո պարտքն ավելի մեծ մասշտաբով, հատուցում ես քո պարտքը հայրե-

նիքիդ հանդեպ, որը քեզ սնել է, մեծացրել է, կյանք ու հոգի է տվել։

Կոլոսովի աչքերն առանձին փայլ ստացան. նա մի պահ նայեց լուսամուտից դուրս, դեպի ընդարձակ հորիզոնը, դեպի հայրենի դաշտերը, իսկ լուսամուտից այնպիսի հրապույրով էր զգացվում ամառնավերջի բուրմունքը։

Սուրենը կարծես հանգստացավ Կոլոսովի խոսքերից։ Նա աշխուժացավ և պահանջ զգաց ավելի մանրամասն պատմելու այն բոլորը ինչ անցավ իր գլխով՝ վիրավորվելուց հետո։ Եվ նա հանգամանորեն պատմեց մահամերձ Սմիրնովի հետ իր վերջին հանդիպումը, անտառի դեպքը։ Նաստյայի, ապա նաև Միշայի մասին։

— Այո,— լսելով Սմիրնովի ընտանիքի ողբերգական պատմությունը քրթմնջաց Կոլոսովը, տրորեց ճակատը, ապա երկար լռությունից հետո հարցրեց,— իսկ ո՞ւր է այդ Միշան։

— Քույրերի մոտ. կուզե՞ք, բերեմ տեսեք,— շտապով վրա բերեց Սուրենը։

— Հետաքրքիր է տեսնել նրան,— ասաց Կոլոսովը։

Սուրենը դուրս գնաց և մի քանի րոպե անց վերադարձավ Միշայի ձեռքից բռնած։

— Այ, ապրե՞ս... հրաշալի երեխա է,— ասաց զվարթացած Կոլոսովը և շոյեց երեխայի այտերը, ապա դարակից հանեց մի խնձոր և տալով երեխային դարձավ Սուրենին։

— Հորը նման է։

Միշային քույրերը լողացրել, մաքրել էին. մեկը նվիրել էր մի նախշած վերնաշապիկ. երեխան բոլորովին առողջ տեսք էր ստացել։

— Այո,— հաստատեց Սուրենը,— հորը նման է և գիտեք, Ալեքսանդր Միխայլովիչ, սիրտս մղկտում է, երբ երեխան ինձ պապա է ասում։ Եվ դա ստիպում է ինձ...

— Ասա՛, ասա՛։

— Միայն եմ ասում, ոչ թե ստիպում, այլ ես հենց առաջին բոպեից տեսնելով երեխային, որոշեցի որդեգրել։

— Որդեգրե՞լ,— բացականչեց Կոլոսովը։

— Այո, միայն թե պայմաններս... այ եթե... և ավարտեց խոսքը։

— Եթե, ինչ,— շտապ հարցրեց Կոլոսովը։

— Եթե,— կմկմաց Սուրենը և ճիգ գործադրելով ասաց,— եթե Վերան համաձայնի։

Թվաց, թե սրտից մի ծանրություն վայր ընկավ. նա ուզում էր անպայման խոսք բաց անել այդ աղջկա մասին և ահա վերջապես առիթը եկավ։

— Իսկ ո՞վ է այդ Վերան,— հետաքրքրված հարցրեց Կոլոսովը։

Սուրենն զգաց, որ այլևս նահանջել չի կարելի, պետք էր խոսել սրտաբաց, ուստի և ի պատասխան Կոլոսովի հետաքրքրության ասաց։

— Այդ Վերան մի ուսանողուհի է, որին ծանոթացա Ն. քաղաքի հիվանդանոցում, ուր բուժվում էի։ Նա բավական խնամեց ինձ։

— Ուրեմն բավական լավ ժամանակ ես անցկացրել հիվանդանոցում։

Սուրենը կարմրեց. նա գողունի նայեց Կոլոսովին և տեսավ, որ նա բարեհոգի ժպտում է։ Սակայն Կոլոսովը նկատելով, որ Սուրենն այլևս չի խոսում, ինքն սկսեց.

— Հիմա ի՞նչ է մտքդ. ուզում ես Միշային որդեգրե՞լ. լա՞վ. ուզում ես, որ Վերա՞ն էլ մասնակից լինի դրան. այդ նշանակում է, որ ցանկանում ես, ավելի հիմնավոր կապեր ստեղծել Վերայի հետ. այո՞, պարզ ասա. աղջիկը, քեզ, ըստ երևույթին շատ է դուր եկել։

— Չեմ ծածկում, Ալեքսանդր Միխայլովիչ, այո՛, ես նրան սիրում եմ։

—Գիտես ինչ,— ասաց Կոլոսովը շոյելով իր կողքը նստած Միշայի գլուխը,— կյանքը իրենը պահանջում է. սիրելու իրավունքը բոլորին է տրված. դա բնության մեծ

պարդևն է մարդուն։ Այ, ասում ես սիրում ես այդ Վերային։ Ես ճանաչում եմ ռուս աղջկան, եթե նա սիրեց, ապա պինդ կսիրի... Աննա Կարենինան դա մենակ ռոմանի հերոսուհի չէ, Ակսինյան դա միայն Շոլոխովի երևակայության արդյունքը չէ. կյանքում այդպիսիներին հաճախ կարելի է հանդիպել։ Իսկ եթե սեր չէ, այլ ժամանակավոր հրապուրանք, բոպեական հափշտակություն, ապա բան չի դուրս գա։ Իմանալով քո բնավորությունը, չէի ցանկանա, որ հիասթափվեիր։

— Ինձ թվում է,— ասաց ամոթխածությամբ Սուրենը,— որ Վերան լուրջ է մոտենում սիրո հարցերին։

— Ա՜յ, հենց այդ կուզեի, որ դու ասեիր... գրիր, գրիր նրան, այդ քո Վերային մանրամասն գրիր, պարզորեն խոսիր ամեն ինչի մասին։ Եվ լավ ես մտածել. այդ Ն. քաղաքն այնքան էլ հեռու չէ այստեղից. Վերան նույնիսկ կարող է գալ այստեղ և վերցնել երեխային։

— Ի՞նչ եք ասում, Ալեքսանդր Միխայլովիչ,— ուրախությունից տեղից բարձրացավ Սուրենը։

— Անհնարին բան չկա։

Հետո Կոլոսովը նկատելով, որ Միշան արդեն խնձորը կերել-վերջացրել է, թաղկինակով սրբեց նրա ձեռքերը ու այս անգամ նրան կոնֆետ տվեց. մինչ Միշան ձեռքում շուռ ու մուռ էր տալիս կոնֆետը և կարծես ափսոսում էր ուտել, Կոլոսովը դարձավ Սուրենին։

— Նայում եմ այս փոքրիկին ու վերհիշում եմ մի դեպք. վերհիշում եմ, թե ինչպես փրկեցի այսպիսի մի երեխայի կյանքը։

— Ո՞րտեղ, ինչպե՞ս,— հարցրեց Սուրենը։

— Բավական հին պատմություն է. այդ պատահեց այսպես,— սկսեց Կոլոսովը,— 1918 թվականի հունվարին ես տաճկական ռազմաճակատից վերադառնում էի տուն։ Սառնամանիք էր. Հայաստանի մի լեռնանցքով անցնելիս բուք բարձրացավ. և ձմռան այդ դաժան պահին բազմաթիվ հայ գաղթականներ շտապում էին որևէ տեղ օթևան գտնել։

Ճանապարհին ամեն քայլափոխում հանդիպում էինք քաղցից թուլացած և ցրտից սառած կանանց ու երեխաների դիակների։ Ծանր էր տեսնել այդ մղձավանջային պատկերը. բուքը սաստկանում էր. մենք, զինվորներս անգամ դժվարությամբ էինք ճամբա բացում մեզ համար։ Եվ ահա՛, մի ձորում, այժմյան Լենինականի մոտերքը հանդիպեցի մի հայ կնոջ. այ, մեր Միշայի պես փոքրիկ մի երեխա գրկին։

Միշան, որ սովորել էր լուռ լսել մեծահասակների խոսակցությունը, լսելով «Միշա» և «փոքրիկ» բառերը, մի անհանգիստ շարժումն արավ և այտերն ուռցնելով միջամտեց.

— Չէ, ես փոքր չեմ... մաման ասում էր, Միշա, դու մեծ ես... դու լաց չպիտի լինես։

Կոլոսովը ընդհատեց իր պատմությունը և սրտնեղած Միշային հանգստացնելու համար ասաց.

— Ա՜յ, իհարկե, Միշա, դու մեծ ես։ այդ փոքրը ուրիշ Միշա է։

— Ուրիշ Միշա՞, իսկ ո՞ւր է նա։

— Միշա, մի խանգարի,— անհանգստացած խոսեց Սուրենը, որովհետև նրան անչափ հետաքրքրել էր Կոլոսովի պատմությունը։

Չնայած Կոլոսովին դուր չեկավ Սուրենի հանդիմանությունը երեխային, բայց ըմբռնելով Սուրենի հոգեվիճակը, նորից շոյեց Միշայի գլուխը և շարունակեց.

— Այո, հանդիպեցի հայ կնոջը. նա երեխային գրկած ցանկանում էր նրան պաշտպանել սաստկացող բուքից, բայց երևում էր, որ արդեն ինքն էլ է կորցնում ուժերը։

— Ասում եք այժմյան Լենինականի մոտերքը,— հարցրեց Սուրենը և սկսեց արագ-արագ տրորել ճակատը, կարծես ցանկանալով կենդանացնել գլխում դաջված հիշողությունները։

— Այո, ես մոտեցա նրանց. և՛ մայրը, և՛ երեխան ցրտից կապտել, դալկացել էին. երևում էր, որ երկար ժամանակ նրանք բան չէին կերել։

—Հետո, հետո,— շտապեցնում էր Սուրենը։

— Հետո ինչ. դրությունն ինքը թելադրում էր, թե ինչ պետք էր անել. նախ մի-մի կտոր հաց տվի մորն ու տղային. կերան. ես գրկեցի երեխային, մայրն էլ կախ ընկավ միջկողերից ու այդպես, կնոջն էլ հետս, համարյա քաշ տալով բերի հասցրի Ալեքսանդրապոլ. ամերիկացիներն այն ժամանակ այնտեղ որբանոց ունեին, հանձնեցի նրանց խնամքին և...

— Եվ... երազկոտ բացականչեց Սուրենը։

— Եվ ինչ... Սուրեն, դու ինչ որ տարօրինակ ես այսօր,— ասաց Կոլոսովը նկատելով Սուրենի արտակարգ հուզումը, և մի պահ Սուրենին ուշադիր դիտելուց հետո, ավելացրեց,— և կարծեմ գիմնաստյորկաս տվի մորը, որ երեխային մի բան սարքի, հագցնի։

—Ախր, ընկեր... Կոլոսով,— տեղից վեր թռավ Սուրենը,— մայրս ինձ ճիշտ այդպիսի մի պատմություն է պատմել. ես էլ այդ ձևով եմ փրկված... և ապա մի պահ սուզվելով մտքերի մեջ, ինքնաբերաբար բացականչեց.—հա՜յր...

— Հանգստացի՛ր, Սուրեն, երբ երկու ժողովրդի զավակները դառնում են զենքի բարեկամներ, հնարավոր են այդպիսի բաներ... իսկ ինչ վերաբերում է հորը... հա՜յր ես ասում ինձ. լա՜վ, բայց դու քո՛ հոր որդին ես. ես այն ժամանակ, ռուս-թուրքական պատերազմում, շատ զինակից հայեր ունեի, որոնք ազնիվ կերպով կռվում էին և երբ պատահում էր, որ թշնամու գնդակը մահացու հարվածում էր նրանց... հիշում եմ, մի երկուսն իմ ձեռքերի վրա մեռան...

— Այո, արցունքակալած աչքերով խոսեց Սուրենը,— հայրս իբրև այդպիսին էլ հայտնի էր իր շրջապատում, մայրս էր պատմում... նա զոհվել էր իբրև հայրենիքի ազատության զինվոր։

— Ուրեմն քո պարտքն է վառ պահել քո հոր հիշատակը։ Ես շատ ուրախ եմ, որ դու այս նոր շրջապատում քեզ

զգում ես այնպես, ինչպես թե հարազատ միջավայրում. իմ ցանկությունն է, որ դու հպարտ ճակատով տուն վերադառնաս... դե, շատ խոսեցինք։ Միշային լավ տիրություն արա. այդ Վերային էլ գրիր, գրիր։

Սուրենը չէր ուզում տեղից բարձրանալ. նա լուռ էր ու նայում էր Կոլոսովին. վերջում միայն նա համարձակություն ստացավ և բարձրանալով տեղից փաթաթվեց Կոլոսովի վզով։ Նրանք համբուրվեցին և կարծես դրանով նվիրագործեցին իրենց բարեկամությունը։

ԴԼՈՒԽՍ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Սուրենը, երբ դուրս եկավ Կոլոսովի մոտից, դեռ երկար ժամանակ չէր կարողանում հաշիվ տալ իրեն այն բոլորի մասին, ինչի մասին, որ ինքը խոսեց նրա հետ։ Եվ այն նոր հանգամանքը, Կոլոսովի կենսագրության այդ նոր գիծը, որ նա հայ ժողովրդի կյանքի այն դաժան օրերին փրկել է մի երեխա, այնպիսի անպատմելի հրճվանքով էր լցնում Սուրենի հոգին, որ նա բոլորովին մոռանում էր թևի ցավը։ Եվ զգում էր, որ ինքն ավելի ու ավելի է կապվում ու ձգտում Վերային, իրեն ավելի հարազատ է դառնում փոքրիկ Միշան, ինքն ավելի է կարոտում մորը, և կարծես թե աշխարհում ավելի բարձր զգացում չկար, քան ապրելն ու գործելը այդ էակների համար։

Եվ նա չսպասելով Վերայի պատասխանին, չհաղթահարելով հարավցու իր անհամբերությունը՝ նրան նոր նամակ գրեց. երկար ժամանակ նա գրում ու ջնջում էր, ուզում էր մանրամասն գրել իր խոսակցությունը Կոլոսովի հետ, բայց վերջը որոշեց թողնել բոլոր կողմնակի բաները և գրել հիմնական խնդրի մասին. գրածն այսպես ստացվեց.

«Թանկագինս, իմ չքնաղ Վերա։

Անցյալ նամակով քեզ բավական գրեցի Միշայի մասին։ Խնդիրն ինձ համար պարզ է. ես նրան որ-

դեգրել եմ։ Իմ հայրենիքում սովորություն կա, որ երբ երկու սիրող սրտեր ուզում են միանալ, մեկը նրանց համար միջնորդ է հանդիսանում և գնում հարազատներից աղջկա ձեռքը խնդրում է տղայի համար։ Ես քեզ սիրում եմ. ես շուտով նորից մեկնելու եմ ռազմաճակատ. ես կուզեի, որ մեր մեջ միջնորդ հանդիսանար այս երեխան, Միշան. թող այդպես լինի, դեռ չամուսնացած թող ունենանք մի որդի։ Նրա համար, որ այսքան պարզ եմ գնում խնդիրները. եթե համաձայն չես ինձ հետ հանդիպել, իբրև քո ապագա ամուսնու, ապա, հանուն մեր բարեկամության, խնդրում եմ գաս վերցնես Միշային և հարմար պահին ուղարկես Հայաստան իմ մոր մոտ. նա կխնամի նրան, մինչև տեսնենք, թե ճակատագիրն ինձ ինչպես դուրս կբերի այս պատերազմից։ Անհամբեր սպասում ենք քեզ, սպասում ենք ես և Միշան»։

Գրածը միքանի անգամ կարդաց և ինքն իրեն կրկնեց. — «լավ է, լավ, սրանից պարզ չէր կարելի գրել», ուստի և ավելացնելով մի քանի սիրագեղ խոսքեր, ստորագրեց նամակը և հանձնեց պոստին։

Այնուհետև նա մի քանի անհանգիստ օր անցկացրեց, մինչև Վերայից ստացավ իր առաջին նամակի պատասխանը։ Վերան գրում էր.

«Թանկագին Սուրեն.

Քո գնալուց հետո առաջին մխիթարությունս էր քեզնից նամակ ստանալը. ստացա և պատասխանեցի։ Ես քեզ գրեցի, որ զգում եմ քո բացակայությունը, որ կսպասեմ քեզ։ Եվ իմ խոսքերը դարձան ինձ համար կապանք, ես կասեի թանկագին կապանք։ Մինչ այդ ես ազատ էի, կարող էի ամենքին գրել, բայց այդպե՞ս գրել—առաջին անգամ քեզ էի գրում։ Սուրեն, երբ հիվանդանոց գնալիս այլևս քեզ չէի տեսնում, մի պահ թվում էր, թե կորավ ամեն հետաքրքրություն և կյանքը ձանձրալի է դառնում։

Ինչի՞ եմ պետք, մտածում էի ինքս ինձ, երբ իմ մտերիմ մարդուն չեմ կարող օգտակար լինել։ Աշխատում էի իբրև պարտականություն՝ առանց նախկին հաճույքի։ Ի՞նչ զարմանալի բան է մարդը, երբ մի շաբաթ հետո մեր ինստիտուտում ինձ հայտնեցին, թե ես արժանացել եմ գովասանքի նախ լավ ուսանելու, ապա հիվանդանոցում վիրավորներին լավ խնամելու համար, կարծես, թե ես վերստին գտա ինքս ինձ։ Նորից եռանդով սկսեցի այցելել նույն հիվանդանոցը, ծաղիկներ էի տանում, խնամում էի նոր վիրավորներին, նրանց համար նամակներ էի գրում և ամենքից հարցնում էի քո մասին. դժբախտաբար ոչ ոք քեզ դուրս չեկավ։

Եվ ահա ստացա նոր նամակդ։ Սմիրնովը, Նաստյան... Անհնար է ինձ պատկերացնել, որ այլևս Սմիրնովը չի շնչում։ Գրում ես, թե Միշան, նրանց միակ փրկված ժառանգը, քեզ մոտ է և դու քեզ հա՞յր ես համարում։ Անկեղծ ասած, ես մայր դառնալու զգացումով չեմ ապրել։ Բայց այդ Միշան, այժմ այնպես հարազատ է թվում ինձ և ես այնպես կուզեմ, որ դու այդ քո Կոլոսովի և քո... երեխայի հետ ինձ մոտ լինես, որ մեկ-մեկ գիշերները վեր եմ թռչում տեղից և թվում է, թե ահա դուռը ծեծում են և դուք, ուր որ է պետք է ներս մտնեք։ Մտածիր, սիրելիս, թե ինչ միջոցով Միշային կարող ես ինձ մոտ ուղարկել, և հավատացած եղիր, որ ես նրան կխնամեմ այնպես, որ քեզ հաճելի կլինի։

Էլ ինչ գրեմ, Սուրեն, ուզում եմ քո բոլոր ցանկությունները կատարված լինեն։ Այսօր տատս եկավ եկեղեցուց և ասաց, որ աղոթել եմ քո Սուրենի համար. ես արտասվեցի ու համբուրեցի նրա ձեռքը. տատս նույնպես համբուրեց ինձ և ժպտալով ասաց. Վերա, դու շատ աղջիկ էիր, բայց ինչ ծանոթացել ես այդ Սուրենին, հաճելի աղջիկ ես դարձել։ Չգիտեմ,

Կեղծավորություն է անում, թե իրոք այդպես է։
Համբուրում եմ՝ քո Վերա»։

Կարդալուց հետո, Սուրենը, մահճակալում, մեջքին պառկած, փակ աչքերով մտածում էր. նա կարծես փոխադրվել էր մի նոր աշխարհ, այնքան հաճելի զգացումներ էր առաջացրել նրա մեջ Վերայի նամակը։ Նա կցանկանար, որ Վերան երկրորդ նամակն ստացած չլիներ, որովհետև նա լիովին հասկացել էր իրեն հենց իր առաջին նամակի ակնարկներից և այդ հանգամանքը Վերային ավելի սիրելի էր դարձնում նրան։

Նա նստեց անկողնում։ Վիրավորները պատրաստվում էին գնալ ճաշելու, իսկ մի երկուսին ճաշը բերում էին սենյակ։ Սուրենը պահանջ էր զգում մեկն ու մեկի հետ բացատրվել Վերայի նամակից ստացած տպավորությունների մասին։ Եվ միակ մարդը, որի հետ նա կարող էր խոսել, Կոլոսովն էր։ Սուրենը շտապով ճաշեց և առանց որևէ մեկից թույլտվություն խնդրելու գողունի գնաց Կոլոսովի մոտ։ Կոլոսովի տրամադրությունը բարձր էր. թվում էր, թե նա կազդուրվում է և դեմքը չուներ նախորդ օրվա դալկությունը։ Սուրենը բավական լուռ նստեց իր հրամանատարի կողքին, հետո երբ երկու խոսքով պատմեց Վերայից ստացած նամակի մասին, Կոլոսովը հանդարտ նայեց Սուրենի աչքերի խորքը և ասաց.

— Այո, Սուրեն, հիմա ես էլ եմ համոզվում, որ Վերան լուրջ է մոտենում սիրո հարցերին,— հաստատեց նա Սուրենի նախորդ օրն ասած խոսքերը։

— Իմ հա՜յր... կարողացավ բացականչել միայն Սուրենը։

— Բարեմաղթում եմ հաջողություն,— ասաց Կոլոսովը, հասկանալով, որ Սուրենն իր բացականչությամբ ձգտում է և՛ իր Վերային, և՛ անսահման գոհ է, որ ունի Կոլոսովի նման մտերիմ մարդ։

— Ես էլ քեզ նորություն ունեմ հաղորդելու,— քիչ հետո ասաց Կոլոսովը,— և բարձի տակից հանելով մեքենա-

գրած մի Թերթիկ ավելացրեց,— նոր բերին ինձ, Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունն է։

— Հապա, հապա,— բացականչեց Սուրենը։

Կոլոսովը կարդաց.— «Արևմտյան և Կալինինի ռազմաճակատներում մեր զորքերն անցան հարձակման և ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը։ Գերմանական զորքերը հետ են շպրտված 40—50 կիլոմետր»։

—Այլևս այստեղ, հիվանդանոցում մարդ չի կարող հանգիստ պառկել,— խոսեց Կոլոսովն աշխուժությամբ ու առանձին հաճույքով ավելացրեց,— մեր ռազմաճակատն էլ հետ չի մնում. տե՛ս, և Թերթիկը տվեց Սուրենին։

Սուրենը, մի քանի անգամ վերից վար զննեց Թերթիկը, իսկ Կոլոսովը վրա բերեց.

— Բայց գրությունը դեռ ծանր է. Ստալինգրադում և Կովկասում նրանք դեռ առաջանում են. այ, վաղն սկսվում է սեպտեմբերը և այդ ռազմաճակատներում բեկում չի նշվում։

— Բայց կլինի չէ՞, Ալեքսանդր Միխայլովիչ, այդ ռազմաճակատներումն էլ բեկում կլինի,— խոսեց Սուրենը։

— Գերմանացոց ուժերն անսպառ չեն,— ասաց Կոլոսովը և քիչ խորհելուց հետո շարունակեց,— երբ այնտեղ, գործի մեջ ես, ավելի հեշտ ես գլխի ընկնում, թե ինչպես կընթանա գործը. դե, Սուրեն,— ժպիտով ավելացրեց Կոլոսովը,— այժմ քեզ մարտական խնդիր եմ տալիս՝ շո՛ւտ առողջանալ. այն ժամանակ երբ զենքը նորից ձեռքդ կառնես, ինքդ էլ լավ կիմանաս, թե երբ ու որտեղ է սկսվում բեկումը։

— Այո, անպայման,— անորոշությամբ ասաց Սուրենը, բայց սրտանց կուզեր, որ այդ պահին խոսքը նորից դառնար իրեն հուզող հարցերի մասին։

Կոլոսովը երկար նայեց Սուրենին ու մեղմ տոնով ասաց.

— Սուրեն կյանքը գուցե մեզ էլի հեռացնի միմյանցից. դա իրա, կյանքի օրենքն է, ոչինչ չես անի։ Ես այժմ ուրախ

եմ, որ դու քո սրտի նվիրական գաղտնիքների մասին ինձ հետ ես խոսում. գիտես, այդ լսելով, ես էլ եմ մի տեսակ ջահելանում. չնայած սատանան տանի, ես այնքան էլ ծեր չեմ. բայց մեր սերնդի կյանքը... լավ այդ մասին չխոսենք. այդպես, Վերան քեզ մխիթարել է. դե, իհարկե արժե կռվել այդպիսի աղջիկների համար, արժե, արժե։

— Այո, այո,— միայն կարողանում էր ասել Սուրենը։

Եվ Սուրենը չգիտեր ինչու և ծիծաղում էր, և միաժամանակ կարծես ուզում էր լալ, ճիշտ այն երեխայի նման, որ ինչ որ մի բանից ցավ է զգում, և ինչ որ մի հաճելի բան նրա ցավը մեղմացնում է և հարկադրում է ժպտալ։

Չորս օր անց Սուրենը հեռագիր ստացավ Վերայից. նա հաղորդում էր, որ գալիս է երեխային վերցնելու։

Սուրենն այլևս չէր կարողանում պառկած մնալ. անընդհատ վեր էր կենում տեղից, գնում միջանցքը, պատշգամբը, բակը, այնպես, որ նույնիսկ արժանանում էր նկատողության, բայց ոչինչ չէին հանգստացնում նրան։ Ե՞րբ պետք էր գար այդ ըղձալի րոպեն. ևս մի երկու օր և ինքը նորից պիտի տեսներ իր Վերային. ի՜նչ անմեկնելի երջանկություն էր դա իր համար այդ հեռավորության մեջ։

Մյուս օրը նա մի նամակ գրեց մորը, հաղորդեց իր գլխովն անցածը և մանրամասն գրեց Միշայի և Վերայի մասին. կարծում էր, որ ժամանակն է արդեն, որ մայրն ամեն ինչ իմանա։

Երեկոյան նա բժշկից տեղեկացավ, որ մեկ շաբաթից հետո, ինքը նորից կարող էր վերադառնալ ռազմաճակատ։ Այդպես ուրեմն, հաշված օրեր էին մնում. վաղը Վերան տեղ պիտի հասներ, ինքը ևս հինգ-վեց օր պիտի մնար և այնուհետև նորից այնտեղ, նորից կրակի ու արհավիրքների մեջ, սակայն այս անգամ ավելի մեծ պարտականություններով. և ինչքան ավելանում էր նրա սրտին մոտիկ մարդկանց թիվը, այնքան նրան թվում էր, որ ինքն ավելի եռանդով կկարողանա գործել։

Նա Միշայի ձեռքից բռնած գնաց հիվանդանոցի դիմացի պարտեզը. նստեց մի նստարանի վրա։ Ամառն իր տեղը զիջում էր վաղահաս աշնանը. ծառերն այլևս չունեին նախկին թարմությունը, սակայն հովը մեղմ էր և հաճելի բուրմունքով շոյում էր նրա դեմքը։ Միշան վազվզում էր շորացած խոտերի վրա, ընկնում, բարձրանում, և անընդհատ դիմելով Սուրենին մերթ տերևներն էր ցույց տալիս, մերթ ծառերը, մեկմի կոճղերը և հարցնում. «Այս ի՞նչ է, այս ի՞նչ է»։

Սուրենը թեև պատասխանում էր նրան, բայց միտքը սավառնում էր հեռու, դեպի հայրենի տունը, դեպի մայրը, դեպի Վերան, որն այժմ գնացքում նստած, ո՞վ գիտե ինչ խոհերով էր տարված և արդյոք ի՞նչ էր մտածում իր մասին։

Նա չգիտեր, թե ինչքան մնաց այդտեղ, երբ Միշան ևս խաղալուց հոգնելով բարձրացավ ու նստեց իր ծնկներին։ Սուրենը նրա գլուխը դրեց իր կրծքին և, հայացքը հառած ծառերի արանքից երևացող կապուտակ երկնքին, կիսախուփ աչքերով անձնատուր եղավ իր ապրումներին... ինչքա՞ն բան ենք մեք կորցնում պատերազմում,— մտածում էր նա,— բայց և ինչքան նոր բան է ստեղծվում մեզ համար։ Նրան թվում էր, թե երկրորդ անգամ մասնակցելով կռվին, շատ բան արդեն կատարել էր իր պարտքից։ Բայց այժմ տեսնում էր, որ կյանքը նոր ու նոր պարտականություններ էր դնում իր վրա։ Այժմ, այո՛, արժեր ապրել ու կռվել և՛ այդ Կոլոսովի հետ ստեղծած բարեկամության համար, չէ՞ որ նա տարիներ առաջ մի բարի գործ էր կատարել և այժմ մանկան պես հրճվում էր դրա համար։ Արժեր ապրել իր կյանքի վերջին տարիներն ապրող մոր համար, չէ՞ որ նա աչքը ճամբին իրեն էր սպասում։ Արժեր ապրել այդ Վերայի համար. ինչքա՞ն էր անհրաժեշտ իրեն նրա մտերմությունը. և չէ՞ որ այդ մտերմությունը պետք էր նաև Միշայի համար, իր սիրեցյալ ընկեր Սմիրնովի որդու համար...

Եվ այն գիտակցությունը, որ այդ ամենի անունը

միատեղ առած, այժմ այլ կերպ չէր կարող անվանել, քան Հայրենիք,— այդ լցնում էր նրա սիրտը հպարտությամբ և նա ներքնապես բավարարվում էր այն զգացումով, որ ինքն այժմ պետք է ապրի ոչ միայն իր անձնականի, այլև այդ ամենի համար։

Սուրենը տարված այս խոհերով մեկ-մեկ էլ խոսում էր յուրովի, իսկ մանկիկը հենված նրան, լսում էր նրա փրս-փսոցը։ Սուրենը նայեց երեխային և աչքերը լցվեցին. նա իրեն չմատնելու համար նորից նայեց վերև և մեղմիկ, հազիվ լսելի ձայնով երգեց հին մի օրոր, որը նա լսել էր մորից... երգեց մեկ տուն, երկու տուն և երբ քիչ հետո նայեց երեխային, նա արդեն մուշ-մուշ քնել էր՝ հենված իր առողջ թևին։

14 մարտի, 1946 թ.
Մոսկվա—Երևան

ԵՐԳԸ

Փետրվարյան մի առավոտ մենք մտանք Օդեր գետի արևելյան ափին ընկած մի բնակավայր։ Ընդամենը երկու ժամ առաջ այդտեղ բավականին տաք կռիվ էր տեղի ունեցել, բայց հակառակորդն զգալով, որ դիմադրելն այլևս միտք չուներ—կռվով նահանջում էր. մի զորամաս հետապնդում էր նահանջողներին, իսկ այն զորամասը, որի հետ և ես մտա բնակավայրը, բավական ժամանակ կռիվների մեջ էր եղել, և այժմ, հրաման էր ստացել այդ օրն հանգստանալ ու կարգի բերել իրեն։

Բնակավայրը, որը կոչվում էր Բրյունեե, մասամբ քանդված էր հրանոթային դուռի հետևանքով։ Մի քանի տներ էլ այրվում էին և բոցեղեն լեզուները վեր սլանալով այդ տներից, կարծես մաքառում էին վաղորդյան մշուշի դեմ, որն հետզհետե փարատվում էր։

Հետախուզության տվյալներից գիտեինք, որ Բրյունեեում ապրում էին և՛ գերմանացիք, և՛ լեհեր։ Առաջին ժամին տեղական բնակիչներից ոչ ոք չերևաց փողոցներում։ Թերևս դրա պատճառն այն էր, որ նոր էր լուսանում, իսկ մարդիկ, անհանգիստ գիշերից հետո, տակավին չգիտեին, թե ով է քաղաքում դրության տերը։

Սակայն նոր նշանակված պարետը, քսանհինգամյա մի ավագ-լեյտենանտ, բավական եռանդ ու տակտ ցուցաբերեց. այդ երևաց նրանից, որ հետևյալ ժամին արդեն մարդիկ երևացին փողոցներում. ոմանք եկան փողոցների ծորակներից ջուր վերցնելու, ոմանք զբաղվեցին իրենց բակը կարգավորելով և անասուններին կերակրելով, իսկ մի

շարք տների ծխնելույզներից սկսեց ծուխ բարձրանալ։ Զորամասի զինվորներն ու հրամանատարները տեղավորվեցին զանազան տներում, իսկ մի խումբ զինվորներ և տեղական ազգաբնակությունից հիսունի չափ տղամարդիկ ու կանայք գնացին բոցավառվող տների կողմը, որպեսզի թույլ չտան հրդեհը ծավալվի։

Զորամասի շտաբը տեղավորվեց մի երկհարկանի շենքում։ Ես, երկօրյա անքնությունից հոգնած, թիկն տվի սեղանին և, այդ պահին, մի՛ակ ցանկությունս էր գոնե մեկ-երկու ժամով քնել։

Զգացի, որ մեկը թեթև դիպավ ուսիս։ Դա ամբակազմ մի հայ երիտասարդ սպա էր, որի հետ ծանոթացել էի երկու տարի առաջ, հազար ինը հարյուր քառասուներեք թվականի փետրվարին, Խարկովի շրջանում տեղի ունեցող կռիվների ժամանակ, երբ մեր մի քանի զորամասերի համար բավական ծանր կացություն ստեղծվեց։ Այժմ, երկու տարի անց, նա հասել էր Գերմանիա. նախորդ օրը նա ինձ համառոտ պատմել էր իր անցած մարտական ճանապարհի մասին, և նրա կենսագրությունն ինձ բավական ծանոթ էր։

— Գնա՛նք,— ասաց ինձ երիտասարդ սպան՝ Սուրեն Նահապետյանը,— այսպես էին կոչում նրան։

— Ո՞ւր,— հարցրի ես մեխանիկորեն։

— Գնա՛նք, քանի ժամանակ ունենք, հանգստանանք, մաքրվենք,— ասաց Սուրենը և, թևը գցելով մեջքովս, ուզում էր օգնել ինձ բարձրանալու։

— Թո՛ղ, թո՛ղ,— ասի ես,— ի՞նչ է, կարծում ես այդքան սպառվե՞լ են ուժերս։

— Չէ՛, այդպես չեմ կարծում... բայց դե, ինչքան չինի դու գրող մարդ ես... մերն ուրիշ, մենք սովորել ենք անքուն գիշերներ անցկացնել։

Սուրենը ինձ առաջնորդեց այն տունը, ուր մենք պիտի անցկացնեինք այդ օրը։ Ներս մտանք մի բնակարան, որը բաղկացած էր երկու սենյակից և մի ընդարձակ խո-

հանոցից, ուր բացի չուգունե վառարանից, կար նաև մի մեծ ճաշասեղան։

Տանտիրուհին, որը իրան Ժոզեֆինա անվանեց, կարճ-լիկ, գիրուկ, հիսունն անց մի լեհուհի էր։ Նա իր հասակին անհամեմատ աշխուժ շարժումներով, ընդառաջեց մեզ և ցույց տալով սենյակներից մեկն ասաց.

— Պան օֆիցերների համար է. հանգստացե՛ք։

Նա խոսում էր կոտրված ռուսերենով. անմիջապես հայտնեց, որ աղջիկ ժամանակն ապրել է Վարշավայում, երբ Լեհաստանը դեռ Ռուսաստանի մի մասն էր կազմում և ինքն այն ժամանակվանից գիտե ռուսերեն։

Բացի ինձանից ու Սուրենից այդտեղ եկան նաև չորս այլ սպաներ—երեք ռուս և մեկ ուկրայնացի։ Սպաներից մեկը, ամենից ավագը, որին կոչում էին Բասնին, մյուս երեք սպաներին հրահանգներ տվեց, որ նրանք հարկ եղած միջոցները ձեռք առնեն, դրպեսզի զինվորները կարողանան հիմնավորապես հանգստանալ, լավ սնվել և ռազմական տեխնիկան կարգի բերել։ Սպաները լսելով այս և նման մի քանի այլ հրահանգներ դուրս գնացին։

Սուրենը դարձավ ինձ.

— Այսպես է մեր Բասնինը. հացի չի նստի, մինչև չիմանա, որ իր վերջին զինվորը կշտացել է։ Դե, դուք հանգստացեք, ես էլ կհոգամ մեր սպայական այս խմբի պետքերի մասին։

Ես անմիջապես անցա մեզ հատկացված սենյակն ու շորերս հանելով պառկեցի մահճակալներից մեկի վրա ու քնեցի։ Երբ զարթնեցի արդեն ցերեկվա ժամի տասերկուսն էր։ Տեղեկացա, որ մյուսներն էլ են հանգստացել. նրանք արդեն սափրվել, լվացվել և «փեսացուներ» էին դարձել, ինչպես ասաց Բասնինը կատակով։ Երբ ես էլ սափրվեցի, լվացվեցի, բոլորս հավաքվեցինք խոհանոցի սեղանի շուրջը ու սկսեցինք նախաճաշել։

— Դենի՛ս,— դարձավ Սուրենը մեզ սպասարկող մի կարմիրբանակայինի,— այս նախաճաշը մի կերպ, փորը

խաբելու համար էր, տե՛ս, որ ճաշի համար լավ բաներ բերես, իսկականը, իր բոլոր պարագաներով։

Եվ պատվեր տվեց, թե ինչքան ու ինչ անհրաժեշտ բաներ պիտի բերի տնտեսական մասից։

Ժոզեֆինան, որ զբաղված էր վառարանում ածուխ ավելացնելով, լսելով Սուրենի խոսքերը ճաշի նախապատրաստության մասին, դարձավ դեպի մեզ և մի քիչ էլ կոկետություն անելով, ասաց.

— Է՜խ, պաներ, ախր չէ՞ որ դուք հյուր եք, ե՛ս եմ պարտավոր ձեզ հյուրասիրել։ Բայց այս անիրավ պատերազմը... և առանց խոսքն ավարտելու, բարձրացրեց գոգնոցը ու փեշով սրբեց աչքերը։

— Մենք,— ասաց Սուրենը, դիմելով Ժոզեֆինային,— մենք ամեն ինչ ունենք մեզ հետ. սովորաբար ճաշում ենք մեր զինվորական խոհանոցից, բայց այսօր, ընկերներով, ուզում ենք մի փոքր տնային պայմաններում ճաշել... ներեցեք, որ ձեզ անհանգստություն պիտի պատճառեմ. ճաշը պիտի պատրաստեք իմ խորհուրդներով, ուզում եմ հայկական ճաշ պատրաստել։

Ժոզեֆինան նայեց Սուրենի դեմքին, նրա կենսախնդ աչքերին ու միայն կրկնեց.

— Հայկական ճա՜շ,— ապա ավելացրեց,— դուք հա՞յ եք։

— Այո՛. լսե՞լ եք այդպիսի ժողովրդի մասին։

— Լսե՞լ, շատերի մասին եմ լսել, բայց, այ, հիմա տեսնում եմ։

— Դե՛, լավ տեսեք,— ասաց Սուրենը ժպիտով և նըստելով սեղանի մոտ, աթոռին՝ սկսեց մտմտալ, թե ինչպես անի, որ իր ծրագրած հայկական ճաշը գլուխ բերի։

Բերեն բանակային թերթի նոր համարները։ Ես ու Բասնինը մի-մի համար վերցնելով անցանք սենյակը։ Իսկ Սուրենը ինչ որ կարևոր գործով գնաց շտաբ։

Մեկ ժամ անց, մեզ սպասարկող զինվորն, արդեն բերել էր ճաշի համար անհրաժեշտ պարագաները։ Սենյակում

ցուրտ էր։ Ես ու Բասնինը նորից անցանք խոհանոց տաքանալու։

Ես նայեցի դեպի լուսամուտը։ Դրսում, մանրիկ փաթիլներով, հանդարտորեն ձյուն էր տեղում։ Լուսամուտի մոտ, մեջքը դեպի մեզ, արձանի նման անշարժ, նստած էր մի աղջիկ։

— Ո՞վ է այս աղջիկը, ե՞րբ եկավ նա,— անմիջապես հարցրի ես Ժոզեֆինային,— և ինչո՞ւ է նա մեջքով դեպի մեզ դարձել։

— Ա՜խ,— հոգոց հանելով բացականչեց Ժոզեֆինան և կամացուկ ավելացրեց,— դա իմ թոռն է, Գերտրուդը, քիչ առաջ եկավ հարևանի տնից։ Այնտեղ զինվորներ են տեղավորվել։

Այդ պահին Սուրենն էլ վերադարձավ շտաբից. նկատելով աղջկան, նրա տարօրինակ դիրքը, և լսելով մեր խոսակցությունը, անհամբեր շեշտով միջամտեց.

— Բայց ինչո՞ւ է նա մեջքը մեզ դարձրել։

Ժոզեֆինան բոլորովին կորցրեց իր աշխուժությունը և նորից ծանրորեն հոգոց հանելով՝ աննպատակ կերպով ձեռքն սկսեց տարուբերել սեղանի վրա։

Ինձ մի քիչ առեղծվածային թվացին և Ժոզեֆինայի հոգոցները, և մանավանդ դեռատի աղջկա այդ դիրքը։ Իսկ Սուրենը դարձավ Բասնինին.

— Դու մեզնից առաջ ես եկել այստեղ, չգիտե՞ս ի՞նչ է պատահել աղջկան։

Բասնինը ոչինչ չգիտեր, առավոտը, երբ նա եկել էր տեսնելու բնակարանը, միայն Ժոզեֆինային էր հանդիպել։ Աղջկա այդ դիրքն ընդհանուր հետաքրքրություն շարժեց։

Ես ու Սուրենը մոտեցանք աղջկան։ Մանրիկ ձյունը շարունակում էր թափվել. դժվար թե նա այդքան տարված լիներ բնության այդ տեսարանով։ Ես փորձեցի նայել նրա դեմքին։ Դե՞մքը, հազիվ տասնմեկ-տասներկու տարեկան այդ աղջկա դեմքը դալուկ էր, ինչպես մեղրամոմ. միայն նրա երկար արտևանունքները առանձին գրավչություն էին տա-

լիս նրան. սակայն հոգեկան խորին տագնապով, նա շարունակում էր սառած հայացքով նայել մի կետի. երբ ես ու Սուրենը մոտեցանք, զգացինք, որ նա դողում է։

— Գերտրո՜ւդ, — կամացուկ ձայնեց Սուրենը։

Աղջիկը մի թույլ շարժումն արավ և նրա դողոցը սաստկացավ։

Ես աչքով նշան արի Սուրենին հեռանալ աղջկանից. Սուրենը դժկամակությամբ գնաց դեպի սեղանը. Ժոզեֆինան մոտեցավ ինձ և, կարծես իբրև խոստովանություն, շշնջաց.

— Նա ռուսերեն չի հասկանում։

— Բայց ես նրան դեռ ոչինչ չեմ ասել։

— Այո՛, պան... կուզեի ասել, բացի գերմաներենից նա ուրիշ լեզու չգիտի։

— Այ, նրան հենց գերմաներեն լեզվով էլ ասեք, որ մենք ցանկանում ենք, որ նա մեզ հետ ճաշի այսօր։

Ժոզեֆինան, ձեռքը դնելով աղջկա ուսին, իմ խոսքերը, գերմաներենով ասաց նրան։

Սակայն աղջիկն իր դիրքը չփոխեց։

Նկատելով, որ երեխան անհանգստանում է և չի դադարում դողալուց, ես բարվոք համարեցի հեռանալ և Սուրենին ու Բասնինին էլ խորհուրդ տվի չմոտենալ նրան, մինչև պարզեի պատճառը հոգեկան այն ծանր վիճակի, որի մեջ ընկել էր դեռատի աղջիկը։

Ես և Սուրենը մտանք սենյակ. Ժոզեֆինային էլ կանչեցինք մեզ մոտ։

— Ասացե՛ք, իրո՞ք այդ աղջիկը ձեր թոռն է։

— Ի՜նչ եք ասում, պա՛ն, իհարկե իմ թոռն է։

Եվ մի քանի խոսքով պատմեց, որ իր դուստրը, Զոսիան ամուսնացել էր գերմանացու հետ. նրա ժառանգը այդ միակ աղջիկն էր։ Զոսիան թոքերի բորբոքումից մահացել էր երկու տարի առաջ, իսկ փեսային, Հանսին, 1941 թվականին, բանակ էին կանչել և արդեն մեկ տարի է, որ նրանից լուր չկա։

— Այնպես որ,— ավարտեց իր խոսքը նա,— թոռս մոր կողմից լեհուհի է, իսկ հոր կողմից գերմանուհի։ Դե, այստեղ էլ խոսակցական լեզուն գերմաներեն է, Գերարուդը միայն գերմաներեն է խոսում... բայց,— առանձին շեշտով ավելացրեց նա,— թոռնիկս դաստիարակված է իբրև կաթոլիկ աղջիկ, և նա կարդում է կաթոլիկների աղոթագիրքը լեհերեն լեզվով։

Եվ նա ցույց տվեց ինձ փոքրիկ աղոթարանը, որ գրված էր տուալետի սեղանին։

— Բայց, եթե աղջիկը չի հասկանում լեհերեն, ի՞նչպես է կարդում։

— Կարդալը սովորել է. մեր կանանը նրան սովորեցրել է լեհերեն կարդալ։ Նա կարդում է, իսկ ես նրան բացատրում եմ սուրբ աղոթքների միտքը։

— Այդ ամենը շատ լավ,— ասի ես,— բայց ի՞նչ է պատահել աղջկան, ինչո՞ւ է նա այդպես դողում։

— Հա, ի՞նչ է պատահել,— միջամտեց Սուրենը, որին ըստ երևույթին այնքան էլ չէր հետաքրքրում աղջկա ծագումը։

Ժողեֆինան նորից հոգոց հանեց և ասաց.

— Վախեցած է։

— Ինչի՞ց, ե՞րբ, ի՞նչ պայմաններում,— իրար ետևից հարցնում էր Սուրենը։

Երբ հիշում եմ, ես էլ եմ սարսափում, ուր մնաց երեխան,— խոսեց Ժողեֆինան, և կարծես ուզում էր բացվել։

Մենք, մինչև այդ, ոտքի վրա էինք. Սուրենը մի աթոռ տվեց Ժողեֆինային. նա նստեց, գոգնոցով սրբեց ճակատը և երբ մենք էլ նստեցինք նա պատմեց։

— Դեպքը տեղի ունեցավ երեք օր առաջ. հարևաններով իրար մեջ խոսում էինք, որ ֆաշիստների բանը պրծած է. շուտով Կարմիր Բանակը մեր ընակավայրն էլ կգրավի։ Գերմանացիներից շատերը փախչում էին երկրի խորքերը. գերմանական աստիճանավորները մտնում էին տնե տուն և մեզ էլ

համոզում էին փախչել. դե, ո՞ւր փախչես և ինչու փախչել։ Ատաֆճանավորներին դուր չէր գալիս, որ լեհացիները չէին ուզում տեղից շարժվել. բարկանում էին, հայհոյում... բայց այդ մասին չէ, որ ուզում եմ պատմել։ Մեր հարևան տանը ապրում էին երկու քույրեր՝ Ռոզան ու Կլարան. է՞հ, հիմա էլ աչքիս առաջ են նրանց պատկերները. ջահել, աշխուժ. անիրավ լինի այս պատերազմը հորինողը. աղջիկները տնեսուն էին անցնում, ինչ որ բաներ էին խոսում։

— Իսկ ի՞նչ էին խոսում, չե՞ք հիշում,— հարցրինք ես ու Սուրենը համարյա միաբերան։

— Ասում էին, թե խոսում են Հիտլերի իշխանության մասին, խոսում են պատերազմի մասին։

— Լա՜վ, թե՞ վատ բաներ էին ասում,— միջամտեց Սուրենը։

— Ո՞վ իմանա,— տրորելով գոգնոցի փեշը շարունակեց Ժոզեֆինան,— փոլիտիկայից էին խոսում. իսկ ես, դե, ինչ աղջկանս ամուսնացրի, խոհանոցից բացի, այլ բանի մասին հասկացողություն չունեմ։ Ասում էին, թե այնպիսի բաներ են խոսում, որ իշխանություններն սկսել են նրանց վրա վատ աչքով նայել... այ, հիշեցի, ասում էին, որ Ռոզան ու Կլարան անտիֆաշիստներ են։

— Պարզ է,— վրա բերեց Սուրենը։

— Ի՞նչն է պարզ, պան օֆիցեր, բոլորովին էլ պարզ չէ,— կարծես նեղացած Սուրենի միջամտությունից խոսեց Ժոզեֆինան,— վերջին օրերում թնդանոթների որոտն ականջ էր խլացնում. թե այդ խառնակ ժամանակն ինչ եղավ, ինչ դարձավ մեր Բրյուններում, ոչինչ չեմ կարող ասել. միայն այսքանն եմ իմացել, որ երկու օր առաջ, գիշերը, ինչ որ մեկն աղջիկների բնակարանի մոտովն անցնելիս լսել է աղմուկ, ապա ողբալի ձայներ. թե ո՞վ է եղել սենյակում, ինչո՞ւ էին նրանք աղմկում և ինչո՞ւ էր նրանց ձայնը ողբալի, այդ մասին ոչինչ չեմ կարող ասել։ Առավոտը, երբ զարթնեցինք, նորից թնդանոթների ձայնն

ականջ էր խլացնում և չգիտեինք թե ում կհանդիպենք՝ էլի գերմանացիներին, թե ռուսներն արդեն մտել են բնակավայրը. չէ՛, իմացանք, որ դեռ գերմանացիք են. այդ երեկ առավոտ էր, իսկ այսօր արդեն դուք եք... ռուսներ, հայեր...

— Բայց ի՞նչ եղան Ռոզան ու Կլարան,— հարցրեց Սուրենը։

— Ինչ եղա՞ն. հեշտ է հարցնել. այո՛, երեկ առավոտ էր այդ, բայց թվում է թե հիմա, և ամեն րոպե տեսնում եմ այդ տեսարանը, և ամբողջ կյանքումս պիտի տեսնեմ. ո՞հ, թող Աստված թույլ չտա, որ մեկ էլ այդպիսի բան կրկնվի։

Նա լռեց, սրբեց արցունքակալած աչքերը, ապա շարունակեց.

— Ես, երկու այլ կին և կսենձը, ներս մտանք աղջիկների բնակարանը. դուռը ջարդված էր. սենյակում ամեն ինչ տակնուվրա էր արված... երկու քույրերն իրար կողքի ընկած էին մահճակալին. երկուսն էլ մեռած. մեռած տանջանքով։ Այդ անմիջապես կարելի էր նկատել։ Աղջիկներից մեկը բոլորովին մերկ էր, մյուսը միայն մի շապկով. նրանց մարմինը կապտած էր, ծեծկված. ի՞նչ ասեմ. անհնար է վերապատմել։ Երբ ես մի վերմակ վերցրի աղջիկների մերկությունը ծածկելու, հանկարծ լսեցի մի սուր ճիչ. վերմակը ձեռքիցս վայր ընկավ. հետ դարձա, ի՞նչ տեսնեմ, Գերտրուդս անշունչ փռված է հատակին։ Երեխան ետևիցս եկել էր. նա հաճախ էր լինում Ռոզայի ու Կլարայի մոտ, և ինչ... մինչ այդ նա գնում էր այնտեղ և քույրերը նրան գուրգուրում էին, նրա համար անուշ երգեր էին երգում... իսկ այժմ, մի՞թե երեխան կարող էր դիմանալ այդպիսի տեսարանի։ Ես ու կսենձը աղջկան մեր ձեռքերի վրա տուն հասցրինք, հազիվ հազ ուշքի բերինք... երեկ ամբողջ օրը նա պառկած էր. եկան ընկերուհիները. նա քրթմնջում էր և հարցնում— «ո՞վ արեց, ո՞վ արեց»։ Չգիտեմ, որ ընկերուհին ասաց, թե «չար մարդիկ, զինվորի շորերով մարդիկ»։ Եվ ահա՛, Գերտրուդս երեկվանից վախ-

նում է զինվորական զգեստով մարդկանցից. այլևս չի տարբերում, թե ով է եկողը։ Իսկ երեկ գիշեր նա ամբողջ ժամանակ ինձ պինդ գրկել ու բացականչում էր,— «Ի՞նձ էլ, հա՞, տատիկ, ի՞նձ էլ այդպես կանեն»։ Այնպես որ այլևս ինչ ասեմ, պաներ, աղջիկը խիստ վախեցած է։

Նա լռեց. մենք էլ լուռ էինք։

Սուրենը ձեռքն առավ երեխայի աղոթագիրքը, թերթեց և երևում էր, որ շատ էր մտահոգված Ժոզեֆինայի պատմածով։

— Ուրեմն, մեզնի՞ց ևս վախենում է,— կարծես յուրովի խոսեց նա։

Ապա Ժոզեֆինան մեզ պատմեց, որ առավոտը, երբ Գերտրուդն իմացել է, որ զինվորականներ պիտի գան իրենց տունը, գնացել է ընկերուհու մոտ։ Հիմա այնտեղ էլ զինվորականներ են եկել և աղջիկը կմկմացել է, թե պիտի գնամ տատիկի մոտ։

— Եվ ահա նա եկել է,— ասաց Ժոզեֆինան ու գնաց խոհանոց։

Մենք ևս դուրս եկանք սենյակից։ Գերտրուդը միևնույն դիրքով նստած էր. դրսում ձյունն արդեն դադարել էր. դիմացից երևում էր բակը, ծածկված ձյունի սպիտակ սավանով։

Սուրենը մի երկու խոսքով Բասնինին հաղորդեց Ժոզեֆինայի պատմածը. Բասնինը ցավակցականորեն գլխով տարուբերեց, ապա դարձավ Սուրենին.

— Ապա երիտասարդ, որքան ինձ հայտնի է՝ դու վարվել դիտես երեխաների հետ, տե՛ս, լավ հիշատակ թողնես այս տանը։

Սուրենը մտածմունքի մեջ էր. նա ոչինչ չպատասխանեց. նա վառարանի վրա չորացնում էր թաշկինակը. ապա մի ասեղ ու թել վերցրեց և սկսավ շինելի պոկված կոճակներն ամրացնել։

— Պան արմենին,— դիմեց քիչ հետո Սուրենին Ժոզե-

ֆինան,— ջուրն արդեն եռում է. ի՞նչ խորհուրդ կտայիք ճաշի մասին։

— Ի՞նչ ճաշ,— անտարբեր հարցրեց Սուրենը։

— Չէ՞ որ դուք ասիք, որ ձեր խորհրդով պատրաստեմ. հայկական ճաշ էիք ուզում։

— Այո՛ Սուրեն,— խոսեց մի ուրիշ սպա, Պետրովը, որը նոր էր ներս մտել,— դու խոստացել ես, հենց որ մի օրով մի տեղ կանգնենք հայկական ճաշ պատրաստել։

Սուրենը նախ նայեց Ժողեֆինային, ապա Պետրովին, իր վաղեմի մարտական ընկերոջը և, կարծես նեղացած, վրա բերեց.

— Ո՛չ, ես ավելի կարևոր գործով եմ զբաղված. մադամ Ժողեֆինա, լեհական ճաշ պատրաստեցեք։

Ժողեֆինան ժպտաց և կարծես ուրախացած, որ իր խոհանոցային գործերին խառնվող չի լինի, ասաց.

— Իհարկե, ճաշ եփելը կնոջ գործ է...

Սուրենը նայում էր Գերտրուդի կողմը. այդ էր նրա կարևոր գործը։ Իսկ ես նայում էի Սուրենին. մարտերում կոշտացած նրա դեմքը, որ նայողի վրա առաջին հերթին թողնում էր խստասիրտ մարդու տպավորություն, այդ պահին կարծես քնքշացել էր. նրա աչքերում նույնիսկ թախիծ կար. ինչի՞ց էր այդ. անցած կյանքի վերհուշից, թե Գերտրուդի ցավալի վիճակից. գուցե և՛ մեկը, և՛ մյուսը։

Մեզնից յուրաքանչյուրն զբաղված էր մի բանով։ Ես Միցկևիչի «Հատընտիրն» էի թերթում, որն 1943 թվին լույս էր տեսել Մոսկվայում. Բանինը և Պետրովը զորամասում տարվելիք քաղաքական աշխատանքի պլանն էին կազմում. Սուրենը դիմեց ինձ.

— Մի երկու տող կարդա այդ Միցկևիչից։

Ես ավարտում էի մի բալլադի ընթերցումը, բարձրաձայն կարդացի վերջին տողերը և թարգմանեցի նրան հայերեն— «սի՛րտ ունեցիր— և սրտից էլ սիրի՛ր»։

— Սիրտ ունեցի՞ր,— բացականչեց Սուրենը,— այ, զարմանալի բան է մարդու ներզգայությունը. հաճախ ան-

կախ նրանից, լեզուն գործում է, թե ոչ, խոսում ես այդ մարդու հետ, թե չէ, սակայն ներքուստ զգում ես, թե ինչ է կատարվում մյուս մարդու ուղեղում. ազնիվ խոսք, ես էլ մտածում էի մարդու սրտի մասին. ասում են, թե սիրտը վատ խորհրդատու է, բայց այդ ասում են այնպիսի մարդիկ, որոնց մեջ խաթարված է մարդկայինը. ես մտածում էի, թե ինչքա՞ն լավ կերթային աշխարհի գործերը, եթե այդ գործերին մասնակցեին նաև ազնիվ մարդկանց, մայրերի, երեխաների սրտերը։

Ես շարունակեցի մտքիս մեջ կարդալ։ Քիչ հետո դարձա Սուրենին.

— Հը, ի՞նչ մտածեցիր, սիրտդ ի՞նչ է թելադրում Գերտրուդի մասին։

— Շատ բան եմ մտածել, ոչ մեկն էլ խելքի մոտիկ բան չի։

— Օրինակ։

— Ասում եմ գնամ տնտեսական մասից մի քանի պրլիտկա շոկոլադ բերեմ, երեխա է, քաղցր կսիրի, բայց մեկ էլ մտածում եմ, թե այդ վիճակում, վայ թե չընդունի։ Ասում եմ գնամ սան-բուժ դումարտակից Մարուսիային խնդրեմ գա, նա լավ գերմաներեն գիտի, իրա լեզվովը հետը խոսի, գուցե ընտելանա մեզ, բայց մեկ էլ մտածում եմ, բա ես, Սուրեն Նահապետյանս, ինչացո՞ւ եմ, որ ուրիշի օգնությանը դիմեմ։

— Էլ ի՞նչ ես մտածել։

— Է՞հ, էլ չգիտեմ. դեռ վճիռ չեմ կայացրել։

— Սուրեն, հիշում ես ինչ պատմեց Ժոզեֆինան. նա ասում էր, թե Գերտրուդը գնում էր այդ Ռոդայի և Կլարայի մոտ և նրանք նրա համար երգեր էին երգում։

Սուրենը մի պահ մտածեց և, կարծես ինչ որ գյուտ արած, բացականչեց.

— Այ, հոյակապ մի՞տք. եթե ես իմանայի, թե նրանք ինչ երգեր են երգել Գերտրուդի համար, ես այդ երգն էլ կերգեի, բայց,— մի պահ լռելուց հետո շարունակեց,—

չէ՞ որ մենք, հայերս էլ, լավ երգեր ունենք. մենք Կոմիտա՜ս ունենք.— և դառնալով Բասնինին ու Պետրովին ասաց.

— Ես ուզում եմ երգել։

— Դա քո երկրորդ արհեստն է,— ասաց Պետրովը։

— Ձեզ չե՞մ խանգարի։

— Երեխային նվաճելու պլա՞ն ես մշակել,— ասաց Բասնինը՝ հասկանալով թե ինչու է ուզում երգել Սուրենը,— արա՛ ինչ ուզում ես։

Սուրենը կոկորդը մաքրեց, նայեց Գերտրուդի կողմը և, մեղմիկ ձայնով, փոխելով հանրածանոթ երգի խոսքերը, երգեց.

Խոսի, խոսի բերնիդ մեռնեմ.
Քո սիրունիկ ձենիդ մեռնեմ,
Սիրավոր լորիկ,
Վիրավոր լորիկ,
Լորիկ ջա՜ն։

Դժվար էր երևակայել, թե կուփներում կոպտացած երիտասարդն է երգում այդ սրտալի երգը. նրա ձայնը թեև անհամաչափ, սակայն դուրալի ելևէջներով տարածվում էր սենյակում և ամենքը լուռ ունկնդրում էին նրան։

Երբ ավարտեց երգելը՝ նայեց ինձ ու գլխով ինչ որ շարժումն արավ, որով ուզում էր ասել, թե արդյոք Գերտրուդը որևէ վերաբերմունք ցույց տվեց, թե չէ։

Բասնինին ու Պետրովին էլ դուր էր եկել Սուրենի երգը. մենք խորհուրդ տվինք, որ մի երգ էլ երգի. Սուրենը երգեց— «Մաճկալ ես, բեզարած ես», և միաժամանակ մեզ հետ միասին դիտում էր Գերտրուդին։ Սուրենը, երգելով մյուս քառյակը, սեղմեց իմ ձեռքը. այո՛, Գերտրուդը կարծես կենդանության նշաններ էր ցույց տալիս. նա շարժվեց տեղում, և ահա՛, ահա՛ նա բարձրացրեց աջ ձեռքը դեպի գլուխը ու մազերը հետ տարավ ականջներից։

Սուրենն ավարտեց երգն ու բացականչեց.

— Լսո՞ւմ է. երբ աղջիկն ականջից եռ է տանում մազերը նշանակում է, ուզում է ասել, թե այնքան էլ անհաճելի չէ երգը։

Եվ այս մտքից ոգևորված նա երգեց ևս մի երգ ու տեղից վեր ելավ, գնաց դեպի Գերտրուդը. աղջիկը, զգալով Սուրենի մոտիկությունը, կիսով չափ դարձավ դեպի մեզ. երևում էր նրա պրոֆիլը, երկայն արտևանունքները թարթում էր, իսկ մատներով տրորում էր շրջազգեստի կոճակը։ Սուրենը մի քիչ կռացավ դեպի նա ու մեղմ, համարյա երգեցիկ տոնով հարցրեց.

— Գերտրուդ, դու երգել գիտես, չէ՞։

Ժոզեֆինան անմիջապես մոտեցավ ու թարգմանեց Սուրենի ասածը, իր կողմից էլ ինչ որ բաներ ավելացրեց։

Սակայն Գերտրուդը ձեռքը թափ տվեց և նորից ընդունեց իր նախկին դիրքը։

Սուրենը ետ եկավ. երևում էր, որ նա անբավական էր գործի ելքից. Ժոզեֆինան շոյեց աղջկա գլուխը, էլի ինչ որ բաներ ասեց ու եկավ դեպի վառարանը։

Սուրենը անհանգիստ շարժումներով մի քանի անգամ գնաց եկավ խոհանոցում, ապա ամենքին լսելի ձայնով, բայց չփոխելով իր մեղմ տոնը ասաց.

— Ուրեմն, պատերազմի այս չորս տարիներում իզո՞ւր եմ ես երեք հազար կիլոմետր ճանապարհ անցել. ո՛չ,— պատասխանեց ինքն իրեն,— ո՛չ, նա պիտի թոսի, Բանինը լավ է ասում, պետք է լավ հիշատակ թողնել այս տանը։ Երեխան վախեցել է զինվորի զգեստով մարդկանց արարքից, բայց մեզնից չպիտի վախենա. այդպես չէ՞, այդպես չէ՞,— դիմում էր նա մեզնից յուրաքանչյուրին առանձին-առանձին,— միայն թե պիտի գտնել նրա սրտի ճամբան. այդ ճամբան արդեն կիլոմետրերով չի կարելի հաշվել։

Այդ պահին Պետրովը, որ գիմնաստյորկայի օձիքն էր

փոխում, լսելով Սուրենի վերջին խոսքերն ասաց բարեհոգի ժպիտով.

— Դու Սուրե՛ն, ճամբաների վարպետ ես։

Ինչ էր ակնարկում Պետրովը՝ այդ վիթխարի կազմվածքով սպան, դժվար էր ասել. դրա համար պետք էր լսել նրա պատմությունը Սուրենի հետ անցկացրած համատեղ ռազմական կյանքի մասին։

Բայց այդ պահին բոլորիս ուշադրությունը գրավեց մի շխկոց. Ժողեֆինան պահարանից ինչ որ բան էր ուզում վերցնել, բայց շփոթված կանգնել էր. ապա նա արագ շարժումներով փորձեց ինչ որ բան տեղավորել, բայց, ըստ երևույթին, չէր հաջողվում, նա յուրովի, մեզ համար անհասկանալի, խոսքեր էր մրմնջում. շխկոցը կրկնվեց. ապակու ջարդոցի ձայն էր. Սուրենը գնաց դեպի Ժողեֆինան, ցանկանալով օգնել նրան, սակայն նա անիմաստ կրկնում էր.

— Ո՛չ, ո՛չ, կարիք չկա։

Բայց երբ Սուրենը մոտեցավ, նա ետ դարձավ ու մեղապարտի հայացքով նայելով նրան՝ պահարանից հանեց շրջանակի մեջ դրված մի նկար, որի ապակին իր անզգուշ շարժումից ջարդվել էր։

Սուրենը մի պահ դիտեց նկարը. ապակու փշուրներն զգուշությամբ ետ տարավ, որ նկարը չքերծվի և հարցականով ասաց.

— Ինչո՞ւ եք նկարը պահում դարակում. չէ՞ որ նա պատին պետք է փակցված լինի։

Ժողեֆինան նորից մի հոգոց հանեց և համարյա կիսաձայն պատմեց.

— Վերջին օրերում, չորս կողմից, այնպիսի որոտ ու թնդյուն էր լսվում, որ տան պատերը դղրդում էին. շատ տների ապակիները փշրվեցին. մեր մի լուսամուտի ապակին էլ է փշրվել... մտածեցի, ասի հանկարծ այս նկարն էլ վայր ընկնի, փշրվի... իսկ սա Գերտրուդիս ամենասիրելի նկարն է... հիմար միտք էլ անցավ գլխովս, ասի նկա-

ը պահեմ, մինչև ժամանակները խաղաղվեն... դե, հիմա էլ իմ անզգուշությամբ ապակին ջարդեցի...

Սուրենը մոտեցավ մեզ, նկարը դրեց սեղանին, ուշադիր զննեց, ապա իր մոտ կանչելով Ժողեֆինային՝ ասաց.

— Այս պատկերը, հազար յոթը հարյուր տարի, ծանոթ է մեզ։

— Ա՜խ, ի՜նչ եք ասում. դո՞ւք. այո՛, այո՛, ասիք որ հայ եք, ուրեմն... նա չգիտեր, ինչ ասեր։

Նկարը պատկերացնում էր Մարիամ Աստվածածինը մանուկ Հիսուսի հետ։

Սուրենն ուզում էր ասել, թե քրիստոնեությունը հազար յոթ հարյուր տարի առաջ էր մուտք գործել Հայաստան. հասկացա՞վ այդ բանը Ժողեֆինան, թե չէ, հայտնի չէր, բայց Սուրենի խոսքերը նրան շատ դուր եկան. նրա դեմքին փայլեց մի մեղրածոր ժպիտ և նա այնպես էր նայում Գերտրուդին, կարծես ցանկանում էր իր զգացածն հաղորդել նրան։

Իսկ Գերտրուդն, այժմ արդեն համարյա թեքվել էր դեպի մեզ և նայում էր Սուրենին։ Սուրենը դրանից բավական ուրախացավ և, անմիջապես, կանչելով մի կարմիրբանակային, նկարն հանեց շրջանակից և, շրջանակը տալով նրան, ասաց.

— Կտանես պարետի մոտ և կինդրես, որ մի ապակի սարքել տա այս շրջանակին. խիստ կարևոր է. ա՛յ, Բասնինն էլ մի գրություն կտա։

Երբ Ժողեֆինային էլ բացատրեց, թե ինչ կարգադրություն արավ, վերջինս արդեն ավելի աշխուժացավ և եռանդով կպավ ճաշ պատրաստելու գործին։

Մինչ բանակայինի վերադառնալը Սուրենը նստեց սեղանի մոտ և մի թերթ մասերի բաժանելով՝ մի քանի ան-

գամ որոշ ձևով ծալեց, ապա մկրատով ինչ որ չափ ու ձև անելով կտրեց և իրար ետևից մի քանի թղթե աղավնիներ սարքեց։

Քսան րոպեից վերադարձավ կարմիրբանակայինը, բերեց սարքված շրջանակը։ Սուրենը, զգուշությամբ նկարը տեղավորեց ապակու ետևը, ապա վերցնելով շրջանակավորված նկարը, մոտեցավ Գերտրուդին։ Առաջին բանը, որ նկատեց Սուրենը, այն էր, որ աղջիկն ալևս չէր դողում. նա ակնապիշ, ճիշտ այնպիսի հայացքով, ինչպիսի հայացքով քիչ առաջ նայում էր դուրսը, այժմ նայում էր Սուրենին. Սուրենը մի ձեռքում պահելով նկարը, մյուսում բռնեց Գերտրուդի ձեռքը. աղջիկը չընդդիմադրեց.

— Ցույց տուր, ո՞րտեղ էր փակցված նկարը։

Ժողեֆինան պատասխանեց աղջկա փոխարեն. Սուրենը Գերտրուդի հետ մտավ սենյակը. Սուրենը, առանձին խնամքով, նկարը փակցրեց աղջկա մահճակալի վերևում, ուր փակցված էր եղել առաջ։

Ապա Գերտրուդի ձեռքից բռնած բերեց սեղանի մոտ, աթոռ առաջարկեց նրան. աղջիկը նստեց. Սուրենը իր սարքած աղավնիները ցույց տալով նրան՝ ասաց.

— Այ, ուզո՞ւմ ես քեզ սովորեցնեմ, թե ինչպես են սարքում թղթե աղավնիներ։

Գերտրուդը նայեց մեզ բոլորիս, ապա Սուրենին, ապա աղավնիներին ու ժպիտի պես մի բան փայլեց նրա դեմքին։

— Ծիծաղո՛ւ է՞, հոգուդ մատաղ, ծիծաղի՛. երեխայի ծիծաղի եմ կարոտել,— բացականչեց Սուրենը հայերեն։

Ե՛վ Ժողեֆինան, և՛ Բասնինը, և՛ Պետրովը ինձ նայեցին. ցանկանում էին իմանա՛լ, թե ինչ է ասում Սուրենը. ես թարգմանեցի։

— Այդպես էլ սպասում էի,— ասաց Պետրովը,— ոչ մի երեխա չի կարող չընտելանալ Սուրենին։

Բայց Սուրենը իր գործը դեռ ավարտած չէր համարում. նա թեքվեց դեպի Գերտրուդն ու ասաց.

—Ծանոթանա՛նք. իմ անունը Սուրեն է, հապա ասա՛ Սուրեն, տեսնեմ քո լեզվով ո՞նց է դուրս գալիս Սուրեն։

Ժողեֆինան իր կլորիկ մարմնով գնդակի նման դառնում էր սեղանի շուրջը. մերթ գնում էր դեպի վառարանը, նայում կերակուրներին, և միաժամանակ թարգմանում էր Գերտրուդին ուղղված բոլոր խոսքերը։

Գերտրուդն ի. պատասխան Սուրենի ոչինչ չասաց. միայն մեկ էլ ոտից գլուխ չափեց նրան. իսկ Սուրենը շարունակում էր սարքել նոր ու նոր աղավնիներ։ Ժողեֆինան մոտեցավ, հենվեց Գերտրուդի աթոռի թիկնակին և հարցրեց Սուրենին.

— Դուք երեխա ունե՞ք։

— Ունեմ,— պատասխանեց Սուրենը։

— Ձեր կինն, անշուշտ, իրեն շատ բախտավոր կզգա։

— Ես դեռ ամուսնացած չեմ։

— Ինչպե՞ս,— զարմացած բացականչեց Ժողեֆինան,— ներեցե՛ք, ես մի քիչ չեմ հասկանում ձեզ։ Որդի ունեք, բայց դեռ ամուսնացած չեք։

Սուրենը հոգոց հանեց. Պետրովը, որ ուշադիր լսում էր այդ հարց ու փորձը, պատասխանեց ընկերոջ փոխարեն։

— Մադամ Ժողեֆինա, Սուրենը որդեգրել է իր զոհված ընկերոջ Սմիրնովի որդուն. այնպես որ, որդի ունի, իսկ հարսնացուն. դա իմ հայրենակցուհին է. մի լավ աղջիկ. անունն էլ Վերա. այ, Բեռլին էլ հասնենք, հետո արդեն Սուրենի հարսանիքը կանենք։

Ժողեֆինան միայն ժպտում էր ու ժպիտով էլ սեղանն էր բացում։

— Դե,— երբ արդեն հացը մանրել էր, ասաց նա,— պան օֆիցերը չկարողացավ հայկականը պատրաստել, Գերտրուդը խանգարեց, այսօր լեհականը կերեք...

Մի բազկաթոռ դրինք մեջտեղը. Առաքելը բռնելով Գերտրուդի ձեռքն ասաց.

— Դու այսօր մեր հյուրն ես. մեր սեղանի մեծը, օբերը։

— Մե՞ծը... առաջին խոսքն արտասանեց աղջիկը և այս անգամ ծիծաղեց։

Բայց թվում էր, թե նա դեռ լրիվ չէր ըմբռնում, թե ինչ էր կատարվում իր շուրջը. վեր եկավ, մոտեցավ Ժոզեֆինային, նրա հետ մտավ այն սենյակը, ուր քիչ առաջ Սուրենը պատին փակցրեց նրա սիրած նկարը. երբ վերադարձավ՝ նրա դեմքի մռայլը փարատվել էր և այտերն սկսում էին կարմրել. բայց աշխատում էր ոչ մի բանի, մանավանդ մեր իրերին չդիպչել։

Սուրենը, ինչպես նաև մենք բոլորս, նորից նրան առաջարկեցինք մեզ հետ ճաշել, նա ուզում էր նստել անկյունի սեղանին, բայց Սուրենը նրան հարկադրեց նստել բազկաթոռին. նա միշտ նայում էր տատին, տեսնելով, որ նա էլ ընդունեց մեր առաջարկը և սեղան նստեց, նա գդալը ձեռքն առավ և դանդաղ շարժումներով սկսեց բրնձե սուպն ուտել...

Ճաշը վերջացավ... Սուրենը նորից սկսեց աղավնիներ սարքել։ Այս անգամ Գերտրուդն էլ փորձեց սարքել, բայց չստացվեց. սակայն Սուրենին ամենից շատ գրավում էր այն ժպիտը, որ հաճախ շառագունում էր մանկամարդ աղջկա դեմքը։ Սուրենն այս անգամ մկրատով մի քիչ այլ ձև տվեց աղավնիներին և ասաց.

— Այ, սա էլ Դաքավ ստացվեց։ Լա՞վն է, հավանո՞ւմ ես։

Ժոզեֆինան այլևս չէր թարգմանում Սուրենի ասածները, բայց թվում էր, թե Գերտրուդն հասկանում է նրան. այդ երևում էր նրանից, որ նա Սուրենի խոսքերին հավանության նշան էր տալիս գլուխը դրականորեն շարժելով։

— Այ, փոքր ժամանակ ես դպրոցում շատ եմ երգել Դաքավի երգը. կուզե՞ս երգեմ։

Գերտրուդը գլուխը նորից դրականորեն շարժեց. Սուրենը երգեց.

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն։
Սիրունիկ, սիրունիկ,
Սիրունի՜կ, նախշուն կաքավիկ։

Գերտրուդն ամբողջովին ուշադրություն դարձած լսում էր Սուրենին. նրա աչքերում փայլ երևաց։ Նա ևս քթի տակ սկսեց մռլտալ, ապա վերցրեց մի աղավնի,՝և երբ արդեն Սուրենը դադարել էր երգելուց, մոտեցրեց նրա դեմքին ու այտերն ուռցնելով.

— Պ՚ՀՀ, պ՚ՀՀ,— արավ։

Սուրենը հոգեկան խորին բավականությամբ ձևացրեց, թե վախենում է. այդ դուր եկավ Գերտրուդին և նա կրկնեց իր խաղը։

Ժոզեֆինան կանգնած վառարանի մոտ ամանները էր լվանում և թվում էր, թե աղոթք է մրմնջում։

Պետրովն ու Բանինը ծիծաղում էին Սուրենի կոմիկ շարժումների վրա, որ անում էր նա ամեն անգամ, երբ Գերտրուդն ավելի ոգևորվելով «պ՚ՀՀ» էր անում։ Երբ Սուրենն այս անգամ գլուխն առավ ափերի մեջ, Գերտրուդը թղթե աղավնին խրեց նրա օձիքից ներս ու լիաթոք ծիծաղելով, ծիծաղի միջից ասաց.

— Ո՚ՀՀ, պան օֆիցերը վախենում է թղթե աղավնուց։

Եվ նրա զրնգուն, մանկական ծիծաղով լցվեց շրջապատը։

1945—1946
Կրասնոդարսկ—Երևան

ԿՅԱՆՔԻ ԿԱՐՈՏԸ

ԵՐԱՅՈՂ ԿԱԹՍԱՆ

Ա.

Թխպոտ երկնքից բարակ անձրև էր մաղում։

Չորս բեռնակիրներ, գործարանի պահեստից ֆուրգոն էին փոխադրում առաքվող ապրանքների ծանր հակերը։ Անձրևը ցողում էր նրանց դեմքն ու զգեստները փայլուն, թափանցիկ շիթերով։ Բեռնակիրներից մեկը, միջահասակ, երեսունն անց մի տղամարդ, որ իր տարիքից ավելի մեծ էր երևում, արդեն տասնվեցերորդ հակն էր փոխադրում. նա հագած էր մի բարակ վերնազգեստ, որը տեղ-տեղ այնքան էր մաշվել, որ ցուցահանում էր զոլավոր շապիկը։ Վերջին հակը վար դնելիս, նա խոր փնշոցով մեջքն ուղղեց ու նրա հոգնած կրծքի խորքից բարձրացավ մի տաք գոլորշի, իսկ անձրևի կաթիլներն անընդհատ թափվում էին, խառնվում նրա ծոծրակի, ճակատի ու դեմքի քրտինքին և կայլակ-կայլակ թափվում լպրծուն սալահատակին։ Հոգնությունից շշմել էր և, կարծես, այլևս ցանկություն չուներ գնալ դեպի պահեստը։ Ողնաշարը ցավից նվում էր, որից կնճռվում էր նրա դեմքը։ Այժմ այդ ցավին ավելանում էր այն սարսուռը, որ բերում էր նրա վրա խոնավ եղանակը։ Նա ակամայորեն ավելի մոտեցավ այն հակերին, որ ինքը դարսել էր ֆուրգոնի վրա և մի անխնամ փաթաթված հակի բացվածքից աչքին ընկան գույնզգույն մանուֆակտուրայի դայթակղիչ փաթեթները։ Նա նայեց իր խոնջացած զգեստներին, մի վայրկյան նույնիսկ աչքերը փակեց, ինչ որ բան վերհիշելու համար, ու ապա կարոտով ձեռքը քսեց փաթեթներին... և նրան թվաց, թե տաքացավ։

Դանդաղ քայլերով մոտեցավ գործարանի վերակացուն. նա մի քանի դիտողություններ արավ հարկերը դասավորելու մասին, ապա նկատելով բեռնակիրին, որին Հարութ էին կոչում, ասաց.

— Թամաշի ժամանակ չէ. տեսնում ես հակը քանդվել է, հետ տար, թող կապերն ամրացնեն։

Հարութը, նայեց վերակացուի խոժոռ դեմքին, սթափվեց և հաղեցեալ ուսն առնելով անխնամ փաթաթված հակը տարավ պահեստ, ապա այնտեղից դարձյալ նոր հակեր փոխադրեց։

Մի քանի ժամ հետո նա հոգնած, ջարդված մարմնով դուրս եկավ գործարանից դեպի լայն փողոցը ու մեջքը հենելով մի պատի կանգնեց և անիմաստ հայացքով նայում էր մայթով անցնող մարդկանց, որոնք հետ ու առաջ էին գնում, առանց փոքր իսկ ուշադրություն դարձնելու իր վրա։ Անձրևն արդեն դադարել էր և ամպերի ճեղքվածքներից դուրս էին թափանցել արևի մի քանի ճառագայթներ, որոնց սրտաբորոտ սպասում էր ցրտից կուչ եկած Հարութը։

Նա զգաստացած նայեց դիմացի մայթը և այնտեղ կծկված տեսավ մի կին՝ երեխան գրկին։ Փողոցը բավական լայն էր և Հարութը չէր կարող որոշել, թե ով է դիմացինը. միայն շատ խղճահարվեց, երբ նկատեց, որ կինն ամեն անցնողին ձեռք է պարզում օգնություն խնդրելու, իսկ անցորդներից շատերն արհամարհանքով շուռ էին տալիս իրենց դեմքը, մանավանդ մի փափկասուն կին, այնպես արագացրեց քայլերը ողորմություն հայցող կնոջ մոտով անցնելիս, կարծես վախենում էր, թե նա ու երեխան որևէ բանով կարող են արատավորել իր պճնանքը։ Հարութը ձեռքը տարավ գրպանները, քրքրեց, բայց ավա՜ղ, նրանք երեկվանից դատարկ էին. նա ոչնչով չէր կարող օգնել... իսկ այնպե՜ս բուռն էր, մանավանդ, երեխային օգնելու ցանկությունը։ Նա հուզվեց և մոտաուզվեց իրեն տանջող ամենաբարյա խոհերում։ Նրան պատկերացավ իր կյանքի վերջին շրջանը։

Նա լավ է հիշում այն օրը, երբ դեռ լույսը չբացված ինքն անկողնից ելավ, շտապով հագավ շորերը, կապեց տրեխի թելերը և մի հայացք գցելով շուրջը, մոտեցավ օրորոցին, ուր մուշ-մուշ քնած էր Երեխան։ Մանկիկն այդ պահին նման էր նորաբաց կոկոնի, այնքա՜ն նուրբ ու բոսոր էին նրա այտերը, այնքա՜ն խարտյաշ էին գլուխը պարուրող փափկիկ մազերը։

Հարութի աչքերը բևեռվեցին մանկան դեմքին և նա երկար ու անթարթ դիտում էր նրան՝ կարծես մանկիկի դեմքին կպած լիներ այն կախարդական հայելին, ուր նա կցանկար տեսնել, թե ինչ է սպասում իրեն։

— Չէ՛, վճռված է,— ասեց այն ժամանակ նա յուրովի ու, կռանալով, մի քանի անգամ համբուրեց երեխային։ Ապա հրաժեշտ տվեց կնոջը, որն իրենից շուտ էր զարթնել ու զբաղված էր տնային գործերով և դուրս ելավ տնից։

Առավոտյան զեփյուռից ծառերի տերևները մեղմորեն սվվում էին ու թռչունները կչկչալով ծառից ծառ էին թռչում, կարծես պատրաստվում էին դիմավորելու արևի ծագումը, որ արդեն դիմացի սարից իր ճառագայթները դուրս էր սփռել։

Այդ բոլորը գեղեցիկ էին զարմանալի ու հրաշալի։

Բայց դրանցից և ոչ մեկը չէր գրավում Հարութին. հայացքն ակամա կանգ էր առնում մերթ թռչունների երամին, մերթ քամուց երերվող ծառերին. նա այնքան էր խորասուզված իր մտքերում, որ կարծես չէր էլ գիտակցում, թե ինչ էր կատարվում իր շուրջը։

Նա մտախոհ շարունակեց իր ճամբան մինչև գյուղի ստորոտի առվակը, ուր լվացվեց պարզ ու զովացուցիչ ջրով։ Հետո մի կարոտալի հայացք գցեց շորս կողմը, նայեց գյուղին, դաշտերին և մի վերջին հուսահատական շարժումն անելով քայլերն ուղղեց դեպի քաղաք։

Քսան քայլի վրա նորից կանգ առավ, հետ նայեց ու հայացքով որոնեց իր անշուք տնակը։ Արդյոք ի՞նչ պիտի անի Սաթիկը, ո՞նց պիտի ապրի իր Սուրիկը... ուղեց վե-

բաղանալ, առաջ գցեց մի ոտքը, սակայն երկրորդի վրա-

— Չէ՛, վնասված է,— կրկնեց նա ու ետ դարձավ. և այս անգամ, այլևս ետ չնայեց, մինչև քաղաք հասավ: Հարութն առաջին անգամը չէր, որ մտնում էր այդ աղմկալից քաղաքը, ուր այժմ նա մերթ-մերթ կանգնում էր փողոցի մեջտեղում ու երկար-երկար նայում հոյակապ տներին, սուրացող տրամվայներին ու կառքերին, որոնցում բազմած մարդիկ անհոգ անցնում էին, հայացքի անգամ չարժանացնելով Հարութին:

Ճնշվում էր Հարութի հոգին. նա չէր կարողանում հաշիվ տալ իրեն իր դրության մասին: Ի՞նչ է ներկայացնում ինքն հիմա, ինչացո՞ւ է և ինչի՞ է պետք: Եվ նրա մտքերը կըրկին ու կրկին սավառնում էին դեպի տուն.— «ա՜խ, երանի մի իմանամ,— ասաց նա հառաչելով,— թե ի՞նչ դրության մեջ է Սուրիկը. արդյոք նա, այդ երկամյա երեխան չի՞ տխրի զգալով հոր բացակայությունը. Սաթիկը ո՞նց պիտի պահի նրան, եթե ինքը շուտով նրանց օգնության չհասնի»: Սուզված մտորումների այս հորձանքում, նա կրկին առաջ շարժվեց ու սկսեց չափչփել քաղաքի լայն ու երկար փողոցները, առանց իմանալու, թե ուր է գնում:

Եվ վերջապես գտնելով մի քանի ծանոթներ, նրանց խորհուրդով դիմեց այդ գործարանն աշխատանքի: Աշխատանքի ընդունվելիս նա գործարանատիրոջը պատմեց իր թշվառ կյանքի մասին, պատմեց թե ինչպես իրենց գյուղում տառապեց արորի, մաճի ու հողի վրա, որից սակայն մի բարեբեր հասկ չծնավ իր համար, որ վերջում արորն էլ ու մի կտոր հողն էլ հարկադրված էր թողնել պարտատիրոջ ձեռքը և քաղաք գալ: Իր կյանքի թշվառությունը նկարագրելով նա ցանկանում էր գութ գտնել և լավ վիճակի արժանանալ, սակայն նրա ասածները շատ ձանձրությամբ լսեցին և ստուգելով իր առողջությունն ու ուժը նշանակեցին ահա՛ այն աշխատանքին, որից նա վաստակած, այժմ նայում էր այդ աղմկոտ փողոցին:

Այսօր վերջանում էր շաբաթը: Նա սպասում էր, որ

գա աշխատավարձն ստանալու ժամը։ Նախորդ շաբաթների ստացածն ուղարկել էր ընտանիքին, վճարել էր մանր-մունը պարտքեր և այժմ անձկությամբ սպասում էր այն վայրկյանին, երբ նորից իր ձեռքը պետք է դրամ ունենա, կնոջը՝ Սաթիկին ու որդուն՝ Սուրիկին օգնելու համար։

Օրն արդեն իր վախճանին էր մոտենում, երբ նա գործատան դրասենյակը մտավ, ստացավ իր շաբաթական աշխատավարձը՝ ընդամենը չորս ռուբլի ութսուն կոպեկ։ Դրամն ամուր պահած բռի մեջ, նա փողոց ելավ և սկսավ ինչ որ հաշիվներ անել։ Էս մի մանեթը պարտք, էս մի մանեթն իմ էս շաբաթվա ծախսը, էս երկու մանեթ ութսուն կոպեկն էլ Սաթիկին ու Սուրիկին,— մտածեց նա, ապա, կարծես սխալ համարելով հաշիվը, նորից սկսեց,— չէ՛, լավ է դուզ երեք մանեթը Սաթիկին ու Սուրիկին, մի մանեթը պարտք, ութսուն կոպեկն էլ իմ ծախսը։

Այդպես կարծես ավելի լավ էր հաշիվը։ Նա ակամա նորից նայեց գիմացի մայթը, ուր դեռ նստած էին աղքատ կինն ու երեխան. նա նույնիսկ ցանկացավ աչքերը փակել ու անցնել, չտեսնելու համար աղքատ մորն ու երեխային, բայց մի քայլից ավելի չկարողացավ անել։

— Է՜հ, ջհաննամը,— բացականչեց նա յուրովի,— էս շաբաթում ութսուն կոպեկ չեմ ծախսի, յաթանասուն կը-ծախսեմ,— և տաս կոպեկ անջատելով, մնացած դրամը տեղավորեց գրպանը ու առաջացավ գիմացի մայթը։

Կարծես աղքատ կինն ու երեխան էլ նրան նկատեցին, քանի որ կինն ուղղվեց տեղում և սկսավ ուշադրությամբ Հարութին նայել։ Հարութը ինչքան մոտենում էր մայթին, այնքան արագ էր բաբախում սիրտը։ Աղքատ կնոջ դեմքն ավելի պարզորոշ է երևում. ահա՛ նրա խարտյաշ մազերի հյուսկենը, ահա՛ նրա նշաձև աչքերը։ Հապա երեխան. ահա նա՛ ձեռքը բարձրացրեց, տարավ դեպի այտը, ժրպտաց մեղմիկ. այդ բոլորը, բոլորը այնքան մոտիկ, այնքան ծանոթ էին Հարութին. այդ ողբալի վիճակին հասած կինն ու երեխան այնքա՞ն հարազատ էին երևում նրան, որ նա

մի պահ փակեց աչքերը նրանց այդ վիճակում չտեսնելու համար. հենց այդ պահին նրա ականջին հասավ.

— Հարո՞ւթ...

Աղքատ կինը նրան իր անունով է կոչում.. այո՛, այլևս կասկած չկար։ Հարութը բացեց աչքերը։ Նրա առջև կանգնած էին իր կինը՝ Սաթիկը, իր որդուն՝ Սուրիկին գրկած։

Բ.

Հարութը, ծանր ապրումներով տաս կոպեկանոցը տրոտրեց թուլացած մատների արանքում. դրամը ձեռքից վար ընկավ, բայց նա սիրտ չարավ կռանալ վերցնել։ Նա ուզեց համբուրել կնոջը, գգվել երեխային, սակայն ամոթի զգացումից շիկնել էր և չգիտեր ինչ խոսեր։ Նա նույնիսկ չէր համարձակվում նայել կնոջ աչքերին, այնքան իրավացի նախատինք էր գուշակում կարդալ այնտեղ։

Վերջ ի վերջո Հարութը հաղթահարեց ամոթի զգացումը և Սուրիկին գիրկն առնելով՝ կնոջն առաջնորդեց դեպի տուն, այն քողտիկը, որ նա ստացել էր գործարանատիրոջ բակում՝ դռնապանի տան կողքին։

Ճամբին, երկար ժամանակ, նա սիրտ չէր անում որևէ բան հարցնել կնոջից, և ի՞նչ հարցներ, երբ կնոջ վիճակն ինքնըստինքյան ամեն ինչ ասում էր. սակայն Սաթիկը նախապես սրդողեց և ապա միայն մի քանի խոսքով բացատրեց, որ Հարութի ուղարկած մի քանի ռուբլին, գյուղի տանուտերը, որ իրենց պարտատեր Մելքոնի բարեկամն էր, ամբողջովին Մելքոնին էր հանձնել և իր ձեռքը կոպեկ չէր ընկել. ինքն հարկադրված էր եղել Սուրիկին գիրկն առնել և հանդիպելով բարի սայլվորների՝ համեմատաբար հեշտությամբ քաղաք չէր հասել, և չգիտեր, թե այդ մեծ քաղաքում, ինչպես պետք է փնտռեր ու գտներ ամուսնուն, եթե այս պատահական հանդիպումը չլիներ. ողորմություն հարկադրված էր եղել խնդրել, որովհետև երեկվանից բան չէին կերել, իսկ երեխան անընդհատ ուտելիք էր պահանջում։

Հարութի, առանց այդ էլ, ցրտահար մարմինն ավելի էր սրթսրթում կնոջ պատմածներից. նա մտքում կշտամբում էր իրեն, որ չի կարողացել ժամանակին նախագուշակել վաշխառու Մելքոնի արարքը՝ սակայն նա ի՞նչ կարող էր անել. ինչ եղել, անցել էր. պետք էր մտածել գալիքի մասին։ Այժմ նա տեղավորված է գործարանատիրոջ տան բակի այդ քողտիկում. աշխատանքին հետզհետե վարժվում է, այսուհետև ավելի ջանասեր կլինի, գուցե խաղեինը օրավարձն ավելացնի և ապահովի իր, Սաթիկի ու Սուրիկի ապրուստը։

Նրանք տուն հասան. և այն է պատրաստվում էին դուռը բացել, երբ գործարանատիրոջ ավագ որդին, մի բարձրահասակ երիտասարդ, որ բակումն էր, մոտեցավ Հարութին ու ասավ.

— Ե՛կ իմ ետևից։

— Ախր, կինս, երեխես, նոր են եկել, տանեմ, տեղավորեմ,— ուզեց ասել նա, բայց տիրոջ տոնն այնքան հրամայական էր, որ Հարութը չմտացավ, թե ինչպես կնոջն ու երեխային մի կերպ տունը տարավ, ստացած դրամը հանձնեց կնոջը, և գնաց տիրոջ մոտ։

Սաթիկը նույնպես ցանկացել էր ինչ որ բան ասել, բայց զգացել էր, որ իր լեզուն հասկանալի բառեր չունի այդ արտասովոր շքեղ հագուստների մեջ պարուրված մարդու համար, ուստի միայն զարմացական նայեց ամուսնու ետևից ու թախծոտ, համարյա արտասվալից աչքերով, Սուրիկին քնացրեց ու սկսավ քողտիկը կարգի բերել։

Տերը Հարութի հետ բարձրացավ վերին հարկը և նոր միայն նկատեց Հարութի մաշված վերնաշապիկը, գույնը կորցրած շալվարը և ծակծկված չստերը. նա հուսախաբ գլուխը տարուբերեց, բայց գործն շտապողական էր, ուստի հայհոյալից մի քանի բառ շպրտեց իր բացակա ծառայի հասցեին և մի ճամպրուկ ցույց տալով Հարութին, կրկնեց.

— Ե՛կ իմ ետևից։

Հարութը տիրոջ հետ դուրս եկավ փողոց, ուր տերը

նստեց մի առանձին կառք, իսկ ինքն էլ ճամպրուկն առած նստեց մի ուրիշ կառք՝ հետևելով տիրոջը մինչև նշանակված վայրը, ուր ինքը ճամպրուկն առնելով վար իջավ՝ սպասելով նոր կարգադրության։

Տերը կառքերի վարձը վճարելով ճամբու դրեց նրանց, ապա փողկապն ուղղեց և առանց նայելու Հարութին ասաց, որ իրեն սպասի փողոցում մինչև ինքը կկանչի, և շտապով վեր ելավ դիմացի հոյակապ շենքի աստիճաններով։

Հարութը մնաց տիրոջ ետևից նայելով։

Օրն արդեն մթնել էր։ Ամպերը դարձյալ կուտակվել էին երկնքում ու մութը ծանրությամբ իջել էր երկրի վրա։ Փողոցի լապտերների մի մասն այսօր չէր վառվում, իսկ մյուս մասն էլ այնքան աղոտ էր առկայծում, որ դժվար էր որևէ բան որոշել։ Փչում էր դառնաշունչ քամի։

Անցավ առաջին ժամը, ապա երկրորդը և տակավին ոչ ոք չէր երևում դիմացի դռնից։ Որևէ ձայն լսելիս, Հարութը շուռ էր գալիս և, սակայն, հիասթափված, նորից կծկվում էր տեղում։

Մի պահ նա փորձեց նայել խորհրդավոր լուսամուտներին, ուր ենթադրում էր, թե կարող է երևալ իր տերը, բայց այնտեղ միայն կապտավուն, մեղկ լույսի շիթերն էին սփռվել առաստաղին և ամեն ինչ պարուրել իրենց մշուշոտ շրջագծի մեջ։ Սակայն Հարութը չէր հուսահատվում. ահա՛, ուր որ է տերը դուրս կգա, կմոտենա Հարութին, կվարձատրի կրած նեղության համար, իսկ Հարութն այդ գումարով տաք հագուստներ կառնի իր Սաթիկի ու Սուրիկի համար. չէ՞ որ այնպես ցուրտ է հիմա, չէ՞ որ նրանք դարիք ունեն տաք հագուստի, իսկ ի՞նքը. այո, ինքը նույնպես դրանց կարիքը ունի, մանավանդ հիմա. չէ՞ որ քամին այժմ անողորմ վզզոցով, գալիս, հետ է քշում բարակ վերնաշապիկը և ուղղակի պարում նրա մեջքին։ Հարութի անհանգստությունն ավելանում է. նա կորցրել է ժամերի հաշիվը. կես գիշերը վաղուց է անցել։ Նրա աչքերն այլևս փակվում են. մարմի-

նը դողում է, ինչպես տերևը քամու առաջ. ի՞նչ կմտածի հիմա Սաթիկը. ա՞խ, այս գիշերն Հարութին այնպիսի կարոտագին զգացումներ ունի դեպի իր ընտանիքը։ Ե՞րբ, ե՞րբ վերջապես պիտի երևա տերը։

Դարձյալ ժամեր ու ժամեր են անցնում. Հարութին ընդարմացած պպզել է պատի տակ՝ ձեռքը դրած ճամպրուկին. ամբողջ մարմինը, կարծես փայտացել է. նա մրմնջում է ինչ որ անկապ խոսքեր. քաղաքային ժամացույցը զարկում է հինգ անգամ, բայց Հարութը ոչինչ չի լսում։ Նույնիսկ նա չի՛ էլ զգում, որ էլի անձրև է կաթում։ Անցորդներ չկան փողոցում. հանկարծ մեկը ոտքով հրում է Հարութին.

— Հը, քնե՞լ ես, տո՞...

Հարութը ցնցվում է. նրա աչքերը լցվել են արյունով և տենդագին սարսուռը պատել է ամբողջ մարմնին։

Նրան հրողը, որ իր տերն էր, կարծես հասկանում է, թե ինչ կարող էր պատահել ամբողջ գիշերը ցրտի դեմ անպաշտպան մնացած մարդու հետ. նա չէր ուզում, որ այդպես լիներ, բայց գործն այդպես դասավորվեց. նա իր սիրուհու համար նվեր էր տարել, սակայն ապերախտ սիրուհին խոստմնազանց էր եղել և չէր եկել. դրա փոխարեն նա հանդիպել էր իր մի կոմպանիոնին, որի հետ նա հին վեճ ուներ. վեճը նորոգվել էր, բավական սուր բնույթ ստացել. տանտերը հազիվ մի կերպ խաղաղեցրել էր վիճողներին. հետո նրանք մի քիչ շամպայն էին խմել...

Երիտասարդ պարոնը տեսնելով, որ Հարութը ձեռքից գնում է, կանգնեցնում է մի կառք և կարգադրում է Հարութին տուն փոխադրել։

Հարութին այլևս ոչինչ չի հիշում. ամբողջ քսանչորս ժամ նա չի լսում Սաթիկի աղեկտուր կանչերը.

— Վո՞ւյ, քոռանամ ես, էս ի՞նչ փորձանք էր. էս ինչ աստծու պատիժ էր. էս ինչի՞ էլի էսպես թարսվեց մեր բախտը։

Ողբում էր Սաթիկն իր բախտի վրա և Հարութի տված գումարը կոպեկ առ կոպեկ ծախսում էր վառելիքի և ուտե-

լեքի՝ համար։ Թշվառ կինը, իբրև շարժուն մի գործիք, մերթ վազում էր տնքացող ամուսնու մոտ, մերթ դառնում դեպի երեխան, որին արդեն չէր կարողանում առաջվա նվիրվածությամբ խնամել. նա ցանկանում էր գոնե քաղաքում մի ապահով անկյուն ունենալ, սակայն ամեն ինչ ձախողվում ու հակառակ ընթացք էր ստանում, և նա, չիմանալով, թե ինչպես պիտի վերջանա այդ անակնկալ դժբախտությունը, լացակումած աչքերով ծնկեց հատակին, հայացքը փոքրիկ լուսամուտից հառեց դեպի երկինք ու կուրծքը ծեծելով կմկմաց.

— Տե՜ր, քո ոտի տակի հողն ենք. մեր մեղքը մեր երեսովը մի տար. շատ ենք տանջվել, էլ մի տանջիր. իմ Սուրիկին, իմ արդար բալին խղճա։

Գ.

Սաթիկը քաղաք եկավ իր ու երեխայի գոյությունը մի կերպ պահպանելու հույսով, սակայն հարկադրված էր գյուղից ավելի վատ պայմաններում զբաղվել հիվանդ ամուսնու խնամքով։ Արդեն հինգերորդ օրը վերջացավ այն դրամը, որն ամուսինը հանձնեց իրեն։ Երկու շաբաթ էլ ապրեցին երիտասարդ պարոնի տված տաս ռուբլի նվերով։ Այժմ հիվանդը, կիսաբաց աչքերով, պառկած էր բարակ մի քուրձի տակ և ընդհատ-ընդհատ հառում էր։ Երբեմն միայն, նա ծալպացնելով շրթունքները նվազկոտ շշնջում էր.

— Ջո՜ւր։

Երբ Սաթիկը ջրի բաժակը մոտեցնում էր Հարությի բերանին, նա մի կում խմելով աչքերը կարոտագին հառում էր կնոջ դեմքին ու աղաչական ասում.

— Սուրիկը... ո՞ւր ա իմ բալեն, մի բեր աչքիս առաջ, է՜։

Սաթիկը այդ խոսքերի վրա գլուխը կախում էր և նույնպես շշնջում.

— Լավ, հլա դու մի լավացիր, Սուրիկն էստեղ ա։

Հիվանդը, ջղայնացած, գլուխը մի քիչ բարձրացնում էր և կրկին հետ գցում խոտե բարձին։

Սակայն ի՞նչ էր պատահել Սուրիկին. Սաթիկը նվիրվելով հիվանդ ամուսնու խնամքին առաջին օրերը չէր կարողանում լավ հետևել երեխային։ Այն գոմարը, որ նախատեսված էր երեխային տաք հագուստ գնելու, Սաթիկն ամբողջովին ծախսել էր ամուսնու բժշկության համար։

— Թող նա լավանա, մեր բանը հեշտ ա. աշխատողն էն ա, նրան ուժ ա հարկավոր,— փիլիսոփայել էր Թշվառուհին և արդյունքն այն էր եղել, որ երեխան, ենթակա անպատեհությունների, նույնպես հիվանդացել էր։ Հարությունն ու Սաթիկը իրենց գոյությունը չէին պատկերացնում առանց Սուրիկի։ Դեռ գյուղում, ամբողջ օրվա հոգնատանջ աշխատանքից հետո, ամուսիններն ամեն ցավ ու նախատինք մոռանում էին երեխայի ժպիտների առջև։ Նա դարձել էր ծնողների գոյության խարիսխը։

Եվ այժմ, երբ հիվանդ ամուսնուն խնամելիս, Սաթիկի մխիթարանքը կարող էր լինել մանկիկը, նա էլ նվաղած ընկած էր անկողնում և անընդհատ կանչում.

— Առ՞ւ, առ՞ւ։

Սաթիկը հասկանում էր այդ կանչերի իմաստը. երեխան ուտելու պահանջ ուներ. բժիշկը, որ գռնապան Սեթոյի միջնորդությամբ առաջին օրն այցելել էր, խորհուրդ էր տվել լավ սնունդ տալ և՛ երեխային, և՛ Հարությունին։ Եվ այսօր, Սաթիկը նստած էր դատարկ ձեռքով։ Մի կողմից տընքում էր ամուսինը, մյուս կողմից հիվանդ երեխայի կանչերն էին իբրև արձագանք պատասխանում հոր տնքոցին։

Սաթիկը դուրս ելավ բակը, նայեց հոյակապ շենքի լուսամուտներին. չգնա՞լ արդյոք վերև. ինչո՞ւ համար. պարզ է՝ ողորմություն խնդրելու... ողորմությո՞ւն, այս մտքից ճմլվեց նրա սիրտը. նա մեկ անգամ արդեն հասել էր այդ ստոր վիճակին, բայց այն ժամանակ նրան չէին ճանաչում. իսկ հիմա հարևանները գիտեն, որ նա գյուղից է եկել, ամուսնու ու երեխայի տեր է, նույնիսկ գործարանատիրոջ տանը գիտեն, որ իրենց բակում ապրում է այդ ընտանիքը։ Այս մտածումներից բորբոքված, նա տուն եկավ և երբ դարձյալ ակամայից հասավ երեխայի աղեկտուր

ձայնը, նա ինքնամոռացման մեջ գիրկն առավ մանկանը ու էլ չկարողացավ զսպել իրեն, ինքն էլ սկսեց լալ։

— Իմ խե՜ղճ, իմ լա՜վ բալա,— հեծկլտում էր նա։

Այդ պահին Հարութը նստեց անկողնում.

— Սուրիկը, Սուրիկը,— կմկմաց նա։

Մի պահ ամուսինները նայեցին իրար. Սաթիկը թափանցիկ հայացքով նայեց ամուսնու արնակալած աչքերին, որոնք լավ բան չէին ասում։ Հիշանդն այդ պահին ինչ որ ներքին մղումից կարծես ուժ էր առել. նա հասկացել էր կնոջ արցունքների պատճառը, ուստի և ճիգ գործադրելով վեր ելավ անկողնուց և Սաթիկի գրկից վերցրեց երեխան։

— Սուրիկ, Սուրիկ,— շշնջաց հայրը, սակայն մանկիկը բացի հեռվհետ նվաղող կանչերից ոչինչ չէր կարողանում հասկացնել։ Հարութը տեսավ, թե երեխան որքան ընդարմացել էր. մանկան երբեմնի ժպտուն դեմքը սառել էր, ինչպես կրակն հոգդ անձրևի տակ։ Երբեմն միայն նա աչիկները ծանրորեն բացում էր, մի պահ հառում մի կետի ու կրկին փակում։

Այդ ահռելի ավերածը ծանր էր նստում Հարութի հոգուն. ո՞ւր էր այն երեխան, որ մի քանի շաբաթ առաջ հմայում էր նայողին իր աշխուժ շարժումներով ու գեղգեղանքներով. այժմ նա միայն կարեկցանք է առաջացնում իր հեռվհետ հանգչող հոգոցներով։

Եվ նրան խնամելու համար փող էր պետք. փող, որտե՞ղ գտնել այդ հրաշագործ մետաղը. Հարութն այս մտորումներով երեխան սեղմեց գրկին, ապա մի ցավագին մռլտոցով վերստին հանձնեց մորը ու սկսեց քայլել սենյակի մեջ։ «Ի՞նչ է պետք ինձ. փո՞ղ, ապրո՞ւատ. բայց ո՞վ այժմ Հարութին կտա փող ու ապրուստ. դրա համար պետք է աշխատե՞լ. բայց Հարութը չի ծուլանա, նա կաշխատի. տակավին ուժ կա նրա ներսում»։ Նա ինչ որ բան է փընտռում սենյակում. ահա, անկյունում մի տաշած քար է դրված. Սաթիկը մտադիր էր ամաններ գնել ու դասավորել նրա վրա։ Հարութը կիսագիտակից վիճակով քարը շարժում

է տեղից, բարձրացնում է մի քիչ ու վերստին թողնում գետնին։

— Տեսա՞ր, Սաթիկ, տեսա՞ր, ես արդեն առողջ եմ. կարող եմ աշխատել. հիմա կերթամ ջահել պարոնի մոտ, ասում են նա բարի մարդ է, կերթամ կասեմ, որ վաղը կարող եմ գործի գնալ. թող էս անգամ էլ մի քիչ էս գլխից փող տա, հա՞, ինչ կա որ. մենք էլ մեզ համար մարդ ենք, չէ՞. կառնեմ փողը, Սուրիկիս համար բժիշկ կկանչեմ, կաթ կբերեմ...

Սաթիկը, երեխան սեղմած գրկին, սարսափով հետևում էր ամուսնուն։ Նա կասկածում էր, չլինի՞ թե խելագարվել է. այնքան անբնական, այնքան արտառոց էին նրա շարժումները։ Մինչ այն ժամանակ, երբ դեռ ամուսինը սենյակումն էր նա ձայն չէր հանում, բայց երբ Հարութը, վերջին խոսքերն ասելով, ուզում էր դուրս գնալ, Սաթիկը, ճչալով, առաջ անցավ ու բռնեց ամուսնու փեշից։ Ո՞ւր պիտի գնար նա, այդ գույնը կորցրած, պատառոտուն ճերմակեղենով։

Հարութը ետ դարձավ։

— Թո՛ղ, ասում եմ, թո՛ղ, խազեինի մոտ պետք է գնամ։

— Էդ հալով տեղ գնալ չի լինի, Հարութ, մեզ մի խայտառակի,— պաղատում էր կինը։

Հարութը մի պահ նայեց իրեն և զգաց, որ անհարմար վիճակումն է, ուստի անմիջապես հագնվեց ու շտապով գակը ելավ։

Նա բարձրացավ հոյաշեն տան աստիճաններից, հասավ պատշգամբը և ինքն էլ չգիտեր, թե ինչպես ընկավ խոհանոցը։

Գիշեր էր։

Խոհանոցի կրակարանի վրա դրված էին մի քանի կաթսաներ։ Ուտելիք էր պատրաստվում կարծես ոչ թե մի ընտանիքի, այլ ամբողջ թաղի բնակչության համար։ Գուցե

մի արտակարգ բան կար. ո՞վ գիտե Հարուստի քմահաճույքը։

Հարութը կանգնեց և ակամայորեն աչքերը հառեց եռացող կաթսայի վրա. գոլորշին այդ կաթսայից քուլա-քուլա վեր էր բարձրանում՝ գայթակղիչ հոտ տարածելով շրջակողմը։ Հարութը չգիտեր, թե ինչու իր հայացքն հատկապես հառած մնաց այդ քլթքլթացող կաթսայի վրա։ Նա ինչ իմանար, որ կյանքն ինքը մի եռացող կաթսա էր, կաթսա, ուր բորբոքում են հազարավոր կրքեր, ուր մարդը տառապանքով ձգտում է դեպի վեր, սակայն, ավա՜ղ նրա թռիչքը կաշկանդված է շարությամբ լի այդ աշխարհում։

Հարութը շաղված աչքերով շարունակում էր նայել կաթսաներին։ Նրան դեռ չէին նկատել։ Ո՞ւմ դիմի, ի՞նչ ասի. ինքը մաղդիր էր խոսել հենց իրա, երիտասարդ պարոնի հետ։ Բայց ո՞նց տեսնի նրան. ո՞վ գիտե, թե նա ինչ գործերով է զբաղված. մի՞թե նա այս անհարմար ժամին կընդունի Հարութին. եթե ընդունի էլ ինչ պիտի ասի. պա՞տք ուզի. բայց չէ՞ որ պարտք կարելի է ուզել միայն իրեն գոնե մի բանով հավասար մարդուց. նայեց իր վիճակին և զգաց, որ ինքն ինչ էլ ասի, պարոնն իրեն ողորմություն հայցողի տեղ կընդունի։ Ողորմությո՞ւն. և այս միտքն այնքան ծանր երևաց նրան, որ ուզեց անմիջապես ետ դառնալ։

Այդ պահին, ճերմակ գոգնոցավոր մի տարեց կին, ըստ երևույթին, աղախիններից մեկը, որ սենյակից դեպի խոհանոց էր գալիս, նկատելով Հարութին, մոտեցավ նրան ու բացականչեց.

— Քա ամա՜ն, էս կռոն որտեղի՞ց լուս ընկավ։

Եվ խուզարկու հայացքով նայելով Հարութին, ներվային տոնով ինչ որ բան ասավ իրեն մոտեցող մի ուրիշ, ավելի երիտասարդ աղախնու։

Հարութը շփոթվեց. չգիտեր ինչ ասեր. երիտասարդ աղախինը մի կտոր հաց ու միս տվեց նրան, իսկ տարեցը վրա բերեց.

— Ահագին մարդ ես, գնա՛, գործ արա, ի՞նչ ես գիշերով դռնե դուռ ընկել. դե՛, վերցրու ու էլ էս կողմերը չերևաս։

Ճիշտ այնպես, ինչպես ինքը կռահել էր. իրեն ողորմություն հայցողի տեղ են ընդունում։ Ու այս միտքն այնքան ծանրությամբ էր ճնշում նրա հոգին, որ նա, բոլորովին ուժասպառ, հազիվ սանդուխտներից վար իջավ, ինքնամոռացման մեջ չնկատելով, որ ստացած ողորմությունն էլ ձեռքից ընկել է։

Դ.

Քամին ոռնում էր գազազած վիշապի նման։ Երկինքն ամպոտ էր. անձրև էր սպասվում։ Անձրև՞. ինչ դաժան էր եղել բնությունը Հարութի վերաբերյալ. երբեմն նա, այնտեղ, գյուղում, կքած իր պապակած հասկերի վրա, անձրև էր երազել. սակայն իզուր. իսկ այն չարաբաստիկ գիշերը, այդ քամին ու անձրևը, կարծես դաշն կռած իր տիրոջ ու նրա սիրուհու հետ, այնպե՞ս անողոք էին եղել իր հանդեպ։

Ո՞ւր գնալ այժմ։

Սուրիկն ու Սաթիկը իրեն են սպասում. նրանց սնունդ է հարկավոր. սակայն ինքը, ստացած ողորմությունն իսկ չկարողացավ տեղ հասցնել. այժմ ինչպե՞ս վերադառնա կնոջ ու երեխայի մոտ. չէ՞ որ ինքն այնքան խոստմնալից դուրս եկավ տանից։

Նա թուլացած, ինչպես հետախուզությունից անհաջող վերադարձած զինվորը, կորագլուխ դիմեց դեպի տուն։

Մութ գիշերն ավելի էր ճնշում նրան. նա տենդով բռնվածի պես զառանցում է, բայց ոչ ոք չի լսում նրան. մի կերպ նա բացում է քողտիկի դուռը. նավթը նույնպես վերջացել է և փոքրիկ կանթեղի պատրույգը մահամերձի ցոլցլումով պլպլում է, արձակելով վառվող պատրույգի անհաճո հոտը։ Հարութը զգում է, որ սենյակումն էլ այնպես ցուրտ է, ինչպես դուրսը։

— Սաթի՞կ, Սաթի՞կ։

Զայնում է նա և արձագանքը լինում է մի չարագուշակ խռռոց. Հարութը դառն նախազգացումով ցնցվում է. նա խարխափելով որոնում է կնոջը, հետն էլ խոսում։

— Սաթիկ, ո՞ւր ա Սուրիկը, ինչի՞ ա էդպես խռռում, հա՞։

Այդ պահին լսվում է ամպի որոտը. կայծակը մի պահ լուսավորում է սենյակը, և Հարութը, նկատում է, թե ինչպես Սաթիկը, երեխան ամուր սեղմած կրծքին, կարծես ինչ որ բան է շշնջում նրա ականջին։

Հարութը մոտենում, շոքում է կնոջ կողքին և դողոցով, ձեռքն է առնում երեխայի սառ թաթիկը։ Նա շոշափում է մանկան մարմինը, գլուխը, ճակատը. նույն չարագուշակ սառնությունը։

— Սաթի՜կ,— գոչում է Հարութը սարսռուռով։

Բայց կինը ձայն չի հանում. նա միայն երեխային ամուր հպում է իրեն, ապա դեմքը կպցնում է նրա սառը դեմքին՝ կարծես ցանկանալով իր մայրական ջերմությամբ կյանքի կոչել նրան։

Եվ ամուսինների մեջ սկսվում է մի խուլ պայքար։ Հարութը ցանկանում է ստուգել երեխայի վիճակը, իսկ Սաթիկը մի վայրկյան անգամ չի ուզում բաժանվել երեխայից։ Անցնում են րոպեներ ու հանկարծ Սաթիկն արձակում է մի սրտակոտոր ճիչ. Հարութը վախեցած ետ է քաշվում։ Սաթիկը ոտքի է կանգնում, երեխան սեղմած կրծքին և, մթության մեջ քայլելով ետ ու առաջ, ողբաձայն ասում է.

— Վերա՜ն դառնար էն գեղն էլ, էս քաղաքն էլ. սև սուգ կապի Մելքոնն էլ ու էս թազա խազեինն էլ... իմ բալեն, իմ արդա՜ր բալեն...

Ու չի կարողանում լրացնել. փղձուկը խեղդում է նրա կոկորդը և նա բարձրագոչ լալիս է. նրա ողբի արձագանքները պատռելով գիշերվա խավարը գնում, տարածվում են հեռու, բայց հասնո՞ւմ են արդյոք տիրոջ ականջին, խոսվո՞ւմ են նրա հանգիստը, թե ոչ, այդ չէր հետաքրքրում Սաթիկին։

Հարութը փորձում է երեխային պոկել մոր կրծքից, բայց իզուր։ Նա ուրվականի պես պտտում է կնոջ շուրջը։

Լսվում է ջղագար ճռինչ. դուռը բացում են. քողտիկն է թափանցում մի աղոտ լույս. վերջապես, ուշադրություն դարձնող եղավ։

Հարութը կանգ է առնում. սակայն Սաթիկը չի հանդարտվում. Հարութը օրորվելով նշանակալից նայում է եկվորին։ Եկվորը, որ հոյաշեն տան դռնապանն է, նույնպես մի վայրկյան քարանում է տեղում։ Լսելով թշվառ մոր ողբը, նա ձեռքի լապտերը դնում է քարին, ապա դժվարությամբ, Սաթիկի կրծքից պոկելով երեխային, հավաստիանում է ծանր իրականությանը ու ձեռքը հուսահատ թափ է տալիս։

— Ափսո՜ս տղա. իմմել ա. ափսո՜ս...

Հարութը կարծես նոր է հասկանում, թե ինչ է տեղի ունեցել, ուստի գոռոցով խլում է դիակնացած որդուն, փաթաթվում է նրան ու սկսում գուրգուրել, փայփայել նրա անշունչ դիակը։

Դռնապանն այս տեսարանի դիմաց մոռանում է իր ասելիքը և դուրս է ելնում, լամպը թողնելով այնտեղ։

Ե.

Լուսացավ։ Սակայն ո՛չ Սաթիկը, ո՛չ էլ Հարութը չզգացին այդ. նրանց սիրտը ողջույն չուներ այդ օրվա ծագող արևին։

Քառս է Հարութի ուղեղում։ Նա տեսնում է գյուղ, քաղաք, գործարան. բեռներ... որ նա կրել է իր մեջքին և սակայն այժմ, նա մնացել է իր ամենաթանկագին բեռան, որդու սառած մարմնի հետ։ Ո՞ւր տանի այդ բեռը, իր դառնատանջ կյանքի այդ ծանր բեռը։

Ցերեկ է. դալիս է դռնապանը, ուզում է ինչ որ բան ասել, սակայն դարձյալ սիրտ չի անում։ Միայն նա Հարութի ականջին կամացուկ շշնջում է.

— Մեռածին չի կարելի այդքան պահել տանը. պիտի թաղել։

Թաղե՞լ, այո, ինչպես չէ. հենց հիմա նա կերթա, կըկանչի քահանային. թող նա գա, երգի իր ամենալավ շարականները, թող բարձր հնչի նրա ձայնը, այնքան բարձր, որ մինչև երկինք հասնի... թող այդ ձայնը տարածվի քաղաքի վրա, որ ամենքն իմանան, իր Սուրիկի ողբերգությունը...

Նա երեխան հանձնեց Սաթիկին և դուրս եկավ փողոց։ Մի քիչ հեռու ապրում էր քահանան։

— Տեր հայր,— խոսում է Հարությունը, երբ արդեն քահանայի տանն էր, և պատմում է այն ամենը, ինչ մտածել էր։

Քահանան լսում է նրան, ապա գլուխը մեղմ տարուբերելով ասում.

— Լավ, որդյակս, հիմա գնա խունկ ու մոմի պատրաստություն տես. դագաղ կամ պատանք, ինչ որ հարմար կհամարես։

Հարությունն այդ բոլորի մասին մոռացել էր. դարձյալ այդ անիծյալ փողը։ Բայց Հարությունը պատրաստ է ամեն ինչ անել, միայն թե թեթևացնի այն բեռը, որ ծանրացել է իր հոգուն։

Շվար ու մոլոր, նա կրկին փողոց ելավ։ Աննպատակ թափառեց, սակայն ուշադրությամբ դադարել էր մտածելուց. թերևս բնավ էլ չկարողանար խելքի մոտիկ որևէ բան վճռել իր այդ վիճակում, եթե չհանդիպեր դռնապան Սեթոյին։

— Ախպեր Հարութ,— ասաց նա,— քեզ էի փնտռում. ո՞ւր ես գնացել։

— Հա՞,— միայն անորոշությամբ հարցրեց Հարությունը։

— Ահա՛, էս փողը պարոնը տվեց. երեխին վերցնելու...

Հարության մոայլ դեմքին ժպիտի նման մի բան փայլեց ու անցավ։

Երբ նա փողն արդեն գրպանն էր դրել, Սեթոն ձեռքը դրավ նրա ուսին ու քաշելով դեպի պատն ասեց.

— Մի բան էլ պիտի ասեմ. երկու անգամ տուն եկա,

բայց չուզեցի կնկանդ մոտ ասեմ, առանց էն էլ սիրտը կոտրված է։ Հա, խաղեինին չի դուր գալիս, որ դու կնկանդ ու երեխիդ բերել տվիր։ դե, հիմի գործ էլ էնքան չկա, մուշտարին պակասել ա։ Էնպես որ Հարութ ջան, պարոնն ամեն օր իմ յախիցն ա բռնում, թե բակը ազատիր ավելորդ մարդկանցից։ դե, ես էլ էկիկ, երեխանց տեր եմ...

Հարութը լուռ էր։ նա՝ ավելի ևս շշմել էր Սեթոյի հաղորդածներից։

Նրանք քայլեցին դեպի տուն։ երբ մտել էին բակը, Սեթոն նորից խոսեց։

— Էս մեր գեղացիքն էլ հենց գիտեն, թե քաղաքում ոսկի ա փռած։ դհոլի ձենը հեռվից քաղցր ա գալիս... է՜հ, ախպեր Հարութ, քսան տարի ա դռնապան եմ, ի՞նչ ա ավելացել։ դու հլա թազա մարդ ես քաղաքում։ եկած-չեկած երեխիդ կորցրիր... ափսո՜ս, ափսո՜ս... լավն էն ա, քանի շուտ ա, գլուխդ առ ու էս անօրեն քաղաքից պրծի։ գեղում էլի մի տարի չէ, մեկելին բերք կլինի։ մարդ մի կերպ օրը կմթնացնի։

Մինչ այդ Հարութը ոչ մի բառ չէր արտասանել, կարծես գլխի չէր ընկնում, թե ինչ է ասում Սեթոն։ բայց երբ նա լռեց, Հարութը նոր գլխի ընկավ,— ուրեմն ինքը զրկվեց Սուրիկից, զրկվում է աշխատանքից... ու այդ քաղաքում այլևս ապրելու իրավունք էլ չունի։ Եվ այդ ամենը հիմա, երբ դեռ նոր է միայն երեխայի դիակը սառել։ Ու նա մոլեգնությամբ նայեց վերև, հոյակապ շենքի լուսամուտներին։ գլուխը տարուբերեց, ապա մի մռայլ հայացքով նայեց Սեթոյին, այնպիսի մի մռնչյուն արձակեց, որից Սեթոն ետ-ետ գնաց։

Հարութը մոլեգնորեն ինչ որ բան մրթմրթաց, ապա ձեռքը տանելով գրպանը, հանեց երիտասարդ պարոնի ուղարկած ողորմությունը, շպրտեց Սեթոյի երեսին, գոչելով.

— Ե՛տ տար։ ողորմությամբ չեմ ուզում ապրել։

Ու անսովոր եռանդ ստացած, թռիչքով մոտենում,

վերցնում է դռնապանի տան մոտ ընկած բահն ու քլունգը։ Սեթոն սարսափած, ուզում է օգնություն կանչել՝ ենթադրելով, որ Հարութը իր վրա պիտի հարձակվի. սակայն Հարութը շտապում է իր քողտիկը։

Սաթիկը թաց աչքերով նայում է հավերժ ննջած իր մանկան դեմքին։ Հարութը բահն ու քլունգը տեղավորում է մի պարկի մեջ, շալակն առնում, ապա վերցնում է երեխայի դին ու գառնալով կնոջն ասում է.

— Գնա՛նք։

Սաթիկը, ինչ որ բան կռահելով, ճչում է.

— Չէ՛, չե՛մ տա իմ բալին, չե՛մ տա. կա՛ց, հլա մի գնա խունկ բեր ծխեմ, մոմ բեր վառեմ, թող տերտերն էլ գա օրհնի...

— Գնա՛նք,— այս անգամ հրամայական ասում է Հարութը և դուրս է ելնում սենյակից։

Սաթիկը հետևում է ամուսնուն։

Նրանք անցնում են մի քանի փողոցներով, հասնում քաղաքի ծայրամասը, ապա բարձրանում մի դարավանդ։ Գերեզմանոցն է։ Հարութը ակնածությամբ մանկան մարմինը դնում է մի հարթ գերեզմանաքարի վրա և քլունգի ամուր հարվածներով սկսում է գետինը փորել։

Սաթիկը նորից աղիողորմ ճչում է և լացախառն ասում.

— Հարո՜ւթ, խելքի արի, Հարութ. իմ արդար բալեն առանց ժամի, առանց տերտերի հողը չեմ դնի, չէ՛... վա՛յ, աստված, դու ողորմա, էս ի՞նչ անօրեն գործ ա...։

Եվ գնաց փարվեց երեխային։

Սակայն Հարութը չի լսում. նրա հարվածների տակ փոսն հետզհետե խորանում է և ինչքան խորանում է փոսը, ինքն էլ սկսում է թուլանալ։ Նրա պրկված մարմինը չի դիմանում այդքան լարվածությանը։

Նա դեն նետեց բահը, մի հայացքով չափեց չորս բոլորը, ապա փնչալով մոտեցավ Սաթիկին և ուզեց վերցնել երեխան։

— Զե՛մ տա, չէ՛,— լալիս էր Սաթիկը։

— Տո՛ւր,— գոչեց վերջին անգամ Հարությունը,— երեխան ինքը տեղն ու տեղը խունկ էլ ա, մոմ էլ ա... Նա սրբություն ա։

Եվ գիրկն առնելով երեխային, մի քանի անգամ համբուրեց նրա պաղ դեմքն ու ձեռքերը, ապա զգուշությամբ, վեհ ու ակնածալից հանդիսավորությամբ դրեց փոսի մեջ։

Սաթիկը, երկյուղածությամբ խաչակնքեց։ Դեմքը,— սարսափելով այդ սխրալի իրողությունից։

Հարությունը նորից բահը ձեռքն առավ. լսվում էր ծանր հողի թմփթմփոցը, որին ձայնակցում էր Սաթիկի ողբը։

Հողն արդեն ծածկել էր Սուրիկի ոտքերն ու կուրծքը. դարձյալ մի բահ և Սուրիկի դեմքը հավիտյանս կորկվի աբեի լույսից։ Հարությունը բահը խրեց հողի մեջ, անվճռաբար կանգնեց ու խորը հառաչեց։ Ձեռքերն այլևս հրաժարվում էին գործել, մարմնում անսովոր թուլություն էր զգում. նա մի պահ նայեց երեխայի դեմքին, և այս անգամ արդեն բահը ձեռքն առավ ակամա. մի կույտ հող ուղղակի ընկավ մանկան դեմքին ու նա այլևս անտեսանելի դարձավ... բայց և հենց այդ վայրկյանին կարծես մի ուժեղ հարված իջավ Հարության գլխին. նա բանականությունը կորցրեց, աչքերը մթնեցին, ընդարմացավ և ամբողջ մարմնով փռվեց իր ձեռքով փորած գերեզմանի վրա. գլուխն օրորվեց ու ընկավ Սուրիկի գլխավերևը։

Սաթիկը վեր թռավ տեղից. նրա սիրտն այդ սարսափելի տեսարանից քարացավ, աչքերը փակեցին արցունքի պարկերը։

Նա մոտեցավ ամուսնուն և, երբ նրա գլուխը բարձրացնելով, կամեցավ ինչ որ բան ասել, սոսկումով նկատեց, որ նրա բիբերն ևս սառել էին, նրա դեմքն ևս արտահայտում էր մահվան այն սարսռեցուցիչ պաղությունը, ինչ որ Սուրիկինը...

1922

Թիֆլիս—Երևան

ԹԱԼԻՄԱՆ

Ս.

Նա ոչ խաս կուզեր, ոչ էլ զումաշ. նրա ուզածը հասարակ բան էր— չթե շապիկ ու քաթանե գոդնոց. այսքանը բավական էր, որ Արուսը ծածկեր իր երկու տարեկան Արմիկի մերկությունը։ Եվ այսօր այդ խոստանում էին նրան։ խոստացողը, ինքը Բաբելն էր՝ գյուղի անվանի մարդը, որի սավերն իսկ սարսափ էր ազդում գեղականների վրա։

Եվ խոստումը տեղի ունեցավ շատ հասարակ ձևով։

Արուսի ամուսինը, Մուկուչը, Բաբելի տան մշակն էր. մի գիշեր Մուկուչը տուն չեկավ։ Արուսը մինչև լույս, Արմիկը գիրկն առած, սպասեց ամուսնուն. հազար ու մի մտքեր անցան Արուսի գլխով, հազար ու մի շար ու բարի դեպքեր նախագուշակեց՝ հա հիմի կգա Մուկուչը, հա լուսադեմին, հա արևի շողերի հետ. բայց Մուկուչը չկար։ Ու հենց որ արևը մի քիչ բարձրացավ, Արուսը փակեց իր գետնափոր տան դուռը, և Արմիկին գիրկն առած ուղղակի գիմեց Բաբելի տունը։ Գնաց հեավով ու սրտի թրթռոցով. բայց ինչ լավ էր, որ բախտը երես չէր թեքել Արուսից. հինգ Բաբելի բակում նա հանդիպեց ամուսնուն, որը գոմից անասունների աղբն էր փոխադրում։ Արուսը չհամբերեց և հենց տեղն ու տեղը սկսեց կշտամբել նրան։

— Ցանի էս էլ գո՞րծ ա, Մուկուչ, որ դու անում ես. քանի կար մթնով իր տուն գալի, խեղճ երեխս աչքը ջուր էր դառնում՝ հա դռան ճեղքիցը նայելով, հա ապի-ապի ձեն տալով, հիմի էդ բոլ չի, գիշերներն էլ սկսեցիր տուն չգալ։ Աստված կարի էսպիսի օրը։

— Այ կնիկ, դու էլ բան ես ասում, էլի,— սրտնեղելով ասաց Մուկուչը,— ես շա՞տ եմ ուզում, որ էդպես լինի. սար գնալու պատրաստություն են տեսնում ու էս անտեր գործին պրծում չկա. սաղ գիշերն էս ա էլել իմ հալը,— փնչաց Մուկուչը, սրբեց ճակատի քրտինքը, ապա ձեռքը Թեթևակի դիպցրեց Արմիկի այտերին։ Երեխան ժպտաց ու թևերը թռչունի նման թափահարեց. այդ շարժումից ընկավ նրա ուսերին փաթաթված շորը. երեխայի մերկ մարմինը մնաց առավոտյան քամու շոյանքի տակ։

Արուսը շտապով ծածկեց երեխային ու նույն բարկացկոտ տոնով վրա բերեց.

— էդ աշխատելը լավ. բա ե՞րբ պիտի իմ երեխեն էլ մի լաղաթին շոր ունենա, հա՞...

Ու դեռ երկար գանգատվում էր Արուսը։

Այդ խոսակցությունը լսեց Բաբելը, որ անկասելի հետևել էր նրանց։ Երբ նա երևաց, Մուկուչը շտապով կոզովն առավ մեջքին ու գնաց իր գործին։ Բաբելը, նախ ուզում էր բարկանալ, որ Մուկուչն այնքան երկար խոսակցության է բռնվել կնոջ հետ, բայց, երբ մոտիկից տեսավ Արուսին, միտքը փոխեց։ Գյուղի էն լավ-լավ հարսներից ո՞ր մեկն էր, որ ուներ Արուսի աչքն ու ունքը, սիրունիկ երեսը, մանրիկ բերանը։ Բաբելը նայում էր Արուսին ու մտմտում.— էդ ո՞նց մինչև հիմա ինքը չի իմացել, որ իր տխմար մշակն էդպիսի կին է ունեցել. հա՞։

... Բաբելը գոմին կից քաղտիկը տրամադրում է ամուսիններին։ Մուկուչն իր մշակությունը կանի, Արուսն էլ կով կկթի և նրանք ապահով կապրեն։

— Էս տղեն էլ ինձ շատ դուր եկավ,— ասում է Բաբելը և, շոյելով երեխայի գլուխն, ավելացնում,— հլա տես, թե իրիկունը նրա համար ինչ շոր եմ բերում քաղաքից։

Եվ այնուհետև, Բաբելը, Մուկուչին աշխատանքի է ուղարկում դաշտ, ինքն էլ գնում է քաղաք։

Երեկո է. Արուսն սպասում է Բաբելին. ցերեկին բավական գործ է արել և այժմ Արմիկը սեղմած գրկին նստել

է բակի թթենու տակ ու ինչ որ շատ ու ձև է անում,— շապիկն էնպես կկարեմ, որ երեխայի ծնկներն էլ ծածկի, գոգնոցն էլ միշտ չեմ հագցնի, որ շուտ չմաշվի... էլի աշխարհից բարին չի պակասում. ո՞նց Արուսը մինչև հիմա չէր մտածել, գալ Բաբելի մոտ, խնդրել։

Արուսն անհամբեր է դառնում. ուզում է Արմիկին տանել, ինացնել, հետո գալ էլի Բաբելի ճամբին աչք պահել, բայց հանկարծ նկատում է, որ Բաբելը հանդիստ քայլերով մոտենում է իրեն։ Արուսը ամոթխած ոտքի է կանգնում՝ երեխան գրկին։

Բաբելը արդեն մոտեցել է և շոյում է Արմիկի փափկիկ այտերը։ Երեխան ժպտում է և արևի հանգչող շողերով պայծառազարդված նրա դեմքը փայլում է անբռնադատելի հրապույրով։ Արուսը շոյված է մայրական այն զգացումից, որ իր երեխան հաճելի է այդպիսի պատկառելի մարդու։ Այդ պահին, Բաբելի ձեռքը, իբրև թե անզգուշաբար դիպչում է Արուսի դեմքին։ Արուսը շառագունում է և Բաբելն զգում է, որ այդ վիճակով նա ավելի հրապուրիչ է դառնում։ Արուսը, մոռացած Բաբելի խոսումը, ընազդաբար ետ-ետ է գնում, սակայն հենց այդ րոպեին, Բաբելը մի կապոց գնում է Արուսի թևի տակ։ Արուսի դեմքն այրվում է. այժմ նա այնքան է ուզում մենակ մնալ իր Արմիկի հետ, որ հազիվ լսում է Բաբելի նշանակալից փափսոցը.

— Իրիկունը կգաս, որ ոտքերս լվանաս։

Բ.

Արուսի իղձը կատարվից։ Արմիկն հիմա հագուստ կունենա։ Բայց Արուսը երախտապարտ չի մնա. ի՞նչ է Բաբելի պահանջը, շատ հասարակ բան. գնալ ու լվալ նրա ոտքերը։ Եվ Արուսը կարգի է բերում իրեն, ապա մի երկու անգամ շատ ու ձև է անում Արմիկի զգեստները, հետո երեխան սեղմում է կրծքին ու դուրս է գալիս քաղաքիկից։

Մթնշաղ է։

Արուսը սրտի թրթռոցով մտնում է աղայի ընդարձակ

տունը։ Այնտեղ հիմա ոչ ոք չկա. Բաբելը տնեցիներին ուղարկել է զով սարերը. ինքը մնացել է. դեռ գործեր ունի կարգավորելու դյուղում։ Հիմա է Արուսն հասկանում, թե ինչու է Բաբելն ուզում, որ ինքը լվանա նրա ոտքերը. չէ՞ որ տանը մարդ չկա. Արուսի համար դա դժվար գործ չէ. նա իր Արմիկի համար ամեն ինչ կանի, մենակ թե աղայի աչքը քաղցր լինի իր մինուճարի վրա։

Սրտապնդված այս մտքերից, Արուսը մտնում է Բաբելի օդան։ Երեխան դնում է մի հարմար տեղ։ Ապա տաշտում ջուր է լցնում և մոտենալով թախտի փափուկ բարձերին թիկնած Բաբելին, ուզում է նրա գուլպաներն հանել։

Բաբելը ինչ որ նշան է անում. Արուսն անվճռական շարժումով նայում է աղային. դուցե ինքը մի սխալ բան է արել։ Սակայն Բաբելը բռնում է Արուսի բազուկից ու ստիպում է նրան նստել իր կողքը, թախտին։

— Ի՞նչ ես վռազում,— ասում է Բաբելը և շոյելով Արուսի դեմքը, կարծես ինքն իրեն խոսում է,— ի՞նչ մանմուր թշեր ունես... լա՛վ, մի ամաչիր. էդ դունյագյոզալի աչքերովդ մի դեսը մտիկ տուր, է՞։

Արուսն ամոթխած, դեմքին է քաշում գլխաշորը։

— Չէ՛, Արուս, ես չեմ թողնի, որ աղքատ ապրես, ջահել ումրդ գոմոմը մաշես։

Ու Բաբելը խոստանում է, որ կհեշտացնի Մուկուչի աշխատանքը, վարձը կավելացնի... մենակ թե Արուսը Բաբելի զադրն իմանա, Բաբելի սրտովը շարժվի։

Արուսը լսում է այդ ամենը, բայց սրտանց էլ ուզում է, որ Բաբելը թույլ տա ոտքերը լվալու, որ ինքը տունը վերադառնա, Մուկուչի համար ուտելու բան պատրաստի և նրան հաղորդի, որ Արմիկն արդեն հագուստ ունի։

Բայց Բաբելը, կարծես դեռ մտադիր չէ ոտքերը լվալ։ Նա այս անգամ գրկելով Արուսին, տաք շունչը փշում է նրա դեմքին։ Արուսն ավելի է շփոթվում. ինչ ասի այդ պատկառելի մարդուն. նա գլուխը ետ գցելով, աչքերը հառում է երեխային. երեխան դեռ ժպտում է, բայց տեսնելով, որ

մայրն իրեն չի մոտենում, ծամածռում է դեմքը, ապա ճըչում է աղմկոտ ձայնով։ Բաբելին ջղայնացնում է երեխայի լացը. նա ուզում է կարևորություն չտալ դրան և Արուսի ականջին ինչ որ խոսքեր է շշնջում, բայց երեխան շարունակում է լալ և դա ուժ է տալիս Արուսին. նա ազատվում է Բաբելից, բայց լեզուն չի զորում որևէ ծանր խոսք ասել նրան։

Բաբելն ատելությամբ նայում է երեխային. այ, նա այդ մեկը չէր նախատեսել... նա զայրույթով մրթմրթում է։

Լավում է ոտնաձայն։

Բաբելն արդեն կատաղում է. այդ լակոտն այնքան ճչաց, որ մարդիկ վրա հասան։

Արուսն շտապով վերցնում է երեխան ու դուրը բացելով, շեմքին հանդիպում է Մուկուչին, որը նոր է վերադարձել աշխատանքից։

Արուսը շփոթված է. չի կարող նայել ամուսնու աչքերին. սակայն Բաբելը, ընդունում է իր սովորական հպարտ արտահայտությունը և հանդարտորեն ասում.

— Ապրես որդիս, քանի օր էր ոտքերս չէի լվացել. էդպես մեկ-մեկ արի։

Գ.

Արուսը խնամքով կարում, հագցնում է շապիկն ու գոգնոցը Արմիկին, բայց սիրտը ուրախ չէ։ Մուկուչը հոգնած տուն է վերադառնում և միայն այն է տեսնում, որ երեխան դուրսի ժպտում է նոր հագուստի մեջ։ Եթե աղջի այդ բարության համար կինը մի երկու անգամ էլ նրա ոտքերը լվանա, արժե։

Բայց Բաբելը հանգիստ չունի։ Նա գիտե, որ Արուսն այլևս չի գա, եթե գա էլ, այդ աղմկարար երեխան ամեն ինչ կփչացնի։ Ու նա գազազում է երկու տարեկան մանկան դեմ։ Թերևս Մուկուչն էլ այնպես չկարողանա պաշտպանել Արուսին, ինչպես Արմիկն է պաշտպանում նրան իր միակ զենքով, իր լացով։

Մի օր առավոտ, Բաբելը կանգնում է քողտիկի դիմաց ու դուրս կանչելով Արուսին ասում է։

— Էսօր մոռացել են մշակներին հաց տանել. արի վերցրու էն մեշոկն ու տար չալթուկի դաշտը։ Մարդդ էլ, կիտե՛ս, էնտեղ է. աշխատող մարդիկ են, պետք է ուտեն, որ գործն առաջ գնա։

Շոգ է. Արուսը բեռը կապում է մեջքին, գիրկն է առնում Արմիկին ու բռնում է դաշտի ճամբան։

Գնում է Արուսը քրտնքակալած ու ծռված մեջքով, ուղում է դաշտի ծաղիկներից մի փունջ շինել իր Արմիկի համար, բայց սիրտը հանդիստ չէ. չալթուկի ցանքերը հեռու են. պետք է շտապի։ Վերջապես տեղ է հասնում. արդեն ճաշի ժամն է. այնտեղ մոծակներն առատ են, և արևն էլ այրում է, ինչպես թեժ երկաթ։ Արուսը քրթմնջալով գետին է դնում Արմիկին, ապա հացը հանձնում է Բաբելի մշակներին։

Ու Արուսն այսպես գնաց եկավ մի քանի օր. միշտ ծանր բեռն ուսին, միշտ հեալով ու քրթմնջալով. նա էլի մի կերպ դիմանում էր. բայց Արմիկի վիճակը հետզհետե ծանրանում էր։ Բարկ արևի տակ երեխան թուլանում էր ու Արուսին երբեմն թվում էր, թե նա շնչապառ է լինում։ Մոծակները հանդիստ չէին տալիս մանկանը, նա աղեկտուր ճչում էր։

Այսօր երբ Արուսը դաշտ հասավ, Արմիկն այնքան էր լացել ճանապարհին, որ այժմ հազիվ հոգոցներ էր հանում։

Արուսը այնպիսի դիրքով նստեց, որ իր մարմնով ըստվեր գցի տղայի վրա և մայրական գորովալից խոսքերով ուզում էր հանգստացնել նրան։ Բայց երեխան բոլորովին նվաղել էր. քիչ հետո դեմքն էլ սպրտնեց և սկսեց դողացնել։ Այնքան ծանր էր այդ պատկերը Արուսի համար, որ չդիմացավ և շոյելով որդու մարմինը սկսավ բարձրագոչ լալ։

Վրա հասավ Մուկուչը. մոտեցան նաև մի քանի այլ

տղամարդիկ ու կանայք։ Արուսը հուսահատ նայում էր երեխային ու չգիտեր ինչով օգներ նրան։

— Դող ա,— եզրակացրեց մի տարեց կին և ավելացրեց,— էս շոգին, էս մոծակների ձեռքին մենք ենք հալվում, ո՞ւր մնաց երեխան։

Եվ նա խորհուրդ տվեց, որ երեխային այլևս դաշտ չբերի։

Արուսը Արմիկին սեղմեց կրծքին ու հառաչելով տուն վերադարձավ։ Մուկուչը զլուխն հուսահատ տարուբերելով, երկար նայում էր կնոջ ու դավակի ետևից։

Դ.

Արմիկը պառկած է քողտիկի հատակին, խսիրի վրա և խորն ու անհանգիստ տնքում է։ Աչքերը պղտորվել են. տենդի մեջ նա այս ու այն կողմն է դառնում։ Արուսը կրած երեխայի վրա, սրտի թրթիռով խոսում է.

— Իմ քաղցր բալա, բա ե՞րբ պիտի մեկ էլ էն աղունիկի զունդունոցդ դցես. հա՞, իմ անուշ բալա։

Արմիկը չի արձագանքում մորը, միայն մերթ ընդ մերթ թույլ շարժում է ձեռքերը ու էլի թորշոմած տերևի նման գցում կողքին։

Մուկուչն էլ տուն չի գալիս, որ գոնե Արուսին մի քիչ սիրտ տա։ Բաբելն այժմ նրան ուղարկել է սարը անասունների հոտերին հսկելու և Արուսն աչքը ջուր կտրած սպասում է Մուկուչին. հա էսօր կգա, հա վաղը։

Դուռը բաց անողն էլ է կտրվել. այսօր, հաղիվ հաչ, Արուսը կարողացավ մի երկու հարևանի տեսնել, խորհուրդ հարցնել, թե ինչ միջոցներով բժշկի Արմիկին. այս անգամ էլ Արուսի բախտը բանեց. իրիկունը նրա դուռը բացցին. եկողը Փիրոզ նանն էր, որի մասին ասել էին հարևանները։ Արուսը ոտքի կանգնեց. ներս մտավ վաթսունի մոտ մի կին. չնայած շոգին, նա հագել էր հաստ անթարի, իսկ գլխին փաթաթած շալի տակից փայլում էր ոսկեգույն զարդերի շարանը։ Նրա դեմքին ահավորություն էին տալիս փոս

ընկած աչքերը, որոնց դեղին փայլը սարսուռ էին ազդում դիտողին. երբ խոսում էր, երևում էին հատ ու կենտ, դեղնած ու փչացած ատամները։

Նա նստեց Արմիկի կողքը, ոսկրոտ ձեռքերը քսեց նրա դեմքին ու, նշանակալից շարժելով գլուխը, խոսեց.

— Դեն ա տալի, հա՛,— և, ծպպացնելով շրթունքները, զննական նայեց Արուսին։

Արուսը չդիմացավ Փիրոզ նանի սուր հայացքին, նրա երկյուղած սիրտը լցվեց տագնապով. Նանի շարժումներն ու արտահայտությունը այնքան խորհրդավոր էին, որ Արուսը անտիպապշտական երկյուղածությամբ, միայն իր ներսում մրմնջում էր գիտեցած աղոթքի խոսքերը։ Ի՞նչ էր թաքնված այդ կնոջ մեջ, որով նա կարող էր կյանքի կոչել իր Արմիկին։

Փիրոզ նանը գործի անցավ. նա ծոցից հանեց մի քանի թղթեր, մի համրիչ, երեք հատ գույնզգույն քարեր, որոնցից մեկը նա անվանում էր սատանի եղունգ, և այդ բոլորը հավաքելով բռան մեջ, նախ ձեռքը մի քանի անգամ օդի միջով շրջագծեց հիվանդ երեխայի շուրջը, ապա առարկաները դցեց հատակին և ստուգելով նրանց անկման դիրքը, փոխեց դեմքի արտահայտությունը, որից ավելի սարսափելի դարձավ նրա աչքերի փայլը, և բացականչեց.

— Հ՛ա... էս ի՞նչ ես արել, այ աղչի։

Նրա տոնի մեջ այնպիսի ազդեցիկ շեշտ կար, որ Արուսը կծկվեց և տագնապով էր սպասում նրա հետագա խոսքերին.

— Դու բարկացրել ես աստծուն. դրա համար էլ երեխայի պահապան հրեշտակը խռովել ա... հիմա չար սատանան ա բուն դրել երեխայի մեջ ու տանջում ա նրան։

— Վա՛յ իմ օրին, վա՛յ իմ խեղճ, իմ արդար բալին,— հեծկլտաց Արուսը և ձեռքերը խփեց գլխին։

Այդ ավելի ոգևորեց Փիրոզ նանին։

— Էս չարը, էս բարին. էս բարին, էս չարը. էս ա աշխարհի օրենքը. չարն հիմի բուն ա դրել տղիդ մեջ. հա-

մա բարին չի կորել աշխարհից, բարին պիտի դուրս բշի էդ չարին...

— Բարին, բարին,— շշնջաց Արուսը և աղաչական աչքերով նայեց պառավին։

— Հա, որ բարին չարին հաղթի, պիտի Թըլիսմ անել. Թըլիսմ անելը հեշտ չի... ա՛յ, դրա համար հիմի կերթաս. կերթա՛ս, կհասնես մի դռան. էդ դուռը բաց կանես ու ներս կմտնես. էնտեղ մի մարդ պիտի լինի նստած. մարդը հասարակ մարդ չգիտենաս, ինքը կլինի մի հիսուն տարեկան. բարի, աստվածավախ մարդ ա. նրան տեսար թե չէ՝ կասես. «Տերն մեր Հիսուս-Քրիստոսի անունով աղաչում եմ քեզ, որ մի մազ տաս տանեմ, Թլիսմ անեմ, երեխիս չարը խափանեմ». Թե ասեց՝ «Տերն մեր Հիսուս-Քրիստոսի անունով, արի մազը տար, երեխիդ չարը խափանի», կմոտենաս ու նրա գնչից մի սպիտակ մազ կպոկես, կհանես. Թե ձեն չհանեց, քու բախտը քեզ հետ՝ կթողնես ետ կգաս։

— Ախր էդ տունն ու դուռը ես որտե՞ղ գտնեմ,— շվաբած հարցրեց Արուսը։

— Կմտնես հենց առաջին պատահած տունն ու դուռը։

— Էստեղ մոտիկ, ազա Բաբելի տնից ու դռնից բացի ուրիշը չկա։

— Էնտեղ էլ կմտնես...

— Էնտեղ,— կմկմաց Արուսը ու սարսուռը պատեց մարմնին։

— Էդ մեկ,— վրա բերեց պառավը,— հետո կերթաս երկու հատ սպիտակ փորով վառեկ կճարես, վառեկները ժամի դռանը մատաղ կանես. փորի սպիտակ բմբուլներից մի-մի հատ կթաթախես իրենց արյունի մեջ ու էն մազի հետ կբերես։ Թե ասածս արիր, Թլիսմը կարքեմ ու տղեդ էլի էն առաջվա տղեն, էլի էն առաջվա տղեն։

— Յա տեր աստվա՛ծ,— բացականչեց Արուսը և մի պահ մնաց քարացած։ Նրա հեզիկ դեմքը, շառագունած երկյուղածության զգացումից, արտահայտում էր նրա հոգու ամբողջ ալեկոծությունը. սիրտն ուժեղ բաբախում էր. նա-

յեց նվաղած երեխային, որն անհաղորդ էր, թե ինչ էր կատարվում իր շուրջը. ա՜խ, մի՞թե տղան կարող է նորից կյանք առնել։

— Դե, շուտ, ինչ որ ասեցի, գնա՛, արա՛. մինչև գալդ ես էլ չարխափանի աղոթքը կանեմ,— ասաց պառավը և Արմիկին գիրկն առավ։

Արուսը կարոտալի հայացքով նայեց մանկանը ու դուրս գնաց։

ԵՐ.

Նա ուժ տվեց ոտքերին ու հասավ առաջին պատահած դուռը, Բաբելի տան դուռը։ Ներս մտավ։ Օդայում նստած էր Բաբելը։ Արուսը երկյուղածությամբ կմկմաց.

— Ապաշում եմ... մի մաղ... Թլիսմի համար, չարը խափանելու համար։

Ասաց ու սրտատրոփ սպասում էր պատասխանի. վայ թե նա բարկացած է իր վրա, վայ թե չպատասխանի. չէ, բարին անպակաս է աշխարհից։

Բաբելը խոսեց.

— Արի տա՛ր մաղը, երեխիդ չարը խափանի։

Արուսի սիրտը տեղն ընկավ. բայց ինչպե՞ս մոտենար, ինչպե՞ս պոկեր մաղը. ինչ լավ կլիներ, որ հենց ինքը Բաբելը պոկեր ու տար. բայց ո՛չ, Թալիսմանի համար էր, Արուսն ինքը պիտի պոկեր։

— Արի՛, տա՛ր,— լսվում է կրկին Բաբելի ձայնը։

Արուսը մոտենում է վախով։ Բաբելը բռնում է նրա ձեռքը։ Արուսը զննում է նրա ծնոտը ու դեռ սիրտ չի անում մաղը պոկել։

Բաբելը Արուսի ձեռքը մոտեցնում է իր դեմքին... և այնուհետև Արուսը զգում է, որ իր հետ ինչ որ վատ բան է կատարվում, սակայն չի կարող դիմադրել, չէ՞ որ այնտեղ սպասում է հիվանդ երեխան։ Արուսն ինքնամոռացման մեջ զգում է միայն չար ու տանջող հպումներ, սակայն նրա փակ աչքերի առաջ միայն Արմիկի պատկերն է երև-

վում. ա՜խ, Արմիկը, Արուսի շունչն ու կյանքը. ինչ լինում է լինի, միայն ինքը շուտ տուն վերադառնա, Փիրոզ Նանի ձեռքից վերցնի երեխան ու սեղմի կրծքին։ Այս մշուշոտ մտքերը խառնաշփոթվում են միայն Բաբելի տաք շնչից, որ փչում է իր դեմքին... քիչ անց նրա մատները խոտոտում են Բաբելի ծնոտը, ապա աջ բթամատի ու ցուցամատի տրանքում մնում է մի ճերմակ մազ...

Վերջացավ առաջին դժվար գործը. շարախփան մազը կա. բայց նա վարանած է, նրան հարկավոր են վառեկներ. նա ունի, բայց ոչ սպիտակ փորով. և Բաբելը թույլ է տալիս նրան հավաքնից վերցնել երկու վառեկ։

Արուսն շտապով դուրս է ելնում և ճամբին, հանդիպելով Մգավուշի ընկերներից մեկին, եկեղեցու դռանը մորթել է տալիս վառեկները և վերցնելով երկու արնոտած փեստուր, տուն է վազում խելահեղ թափով։

Զ.

Արուսի գնալուց հետո Փիրոզ Նանը Արմիկին դրեց անկողին և երբ դռան արանքից տեսավ, որ Արուսն արդեն հասել էր Բաբելի դուռը, ժպիտի նման մի բան փայլեց նրա դեղնած դեմքին։

— Վայ, Բաբե՛լ, վայ,— յուրովի խոսեց նա,— թե էս անգամ էլ հավանածս մաքին իր գառով տունս չես գրկել, ե՛ս գիտեմ ու ես։ Էնպիսի մի թիսամ անեմ, որ կնկանդ էլ մոռանաս, ուր մնաց, թե շոռ աչքդ ուրիշին գցես։

Ասաց և, մոտենալով երեխային, շարախինդ նայեց նրան։

— Ձեներ ես հանում, հա՞, չես թողնում, որ մերդ Բաբելի ոտքերը լվա, հա,— քրթմնջում է նա և իր չորացած մատներով շոշափում է Արմիկի դալկացած մարմինը։

Երեխան հեռում է, թվում է, թե օդը չի բավարարում նրան։ Փիրոզ Նանի մատներն էլ, որ օձի սառնությամբ դիպչում են մարմնին, ավելի են գազազեցնում մանկանը։ Իսկ Փիրոզ Նանը, երբ կասկածելի մի ձայն է լսում, սկսում

և խաչակնքել երեխային և բարձր ու հանդիսավոր կըրկնում.

— Յա խնդիր-կատար աստվածածին, դու չարն հանես էս երեխեցը. յա սուրբ Հիսուս, դու սատանին հեռու քշես էս մինուճարիցը։

Բայց տեսնելով, որ նա չի հանդարտվում, ըստ երևույթին մորն է պահանջում, Փիրոզ նանը բարկացած մըրթմրթում է և իր շոր մատներով մի քանի անգամ սեմմրտում է երեխային։ Ապա դուռը կիսով բացում է ու նայում դեպի Բաբելի օդան. ոչ ոք չի երևում։

— Է՛հ, ես տնպա՛հ եմ եկել։ Մինչև ե՞րբ պիտի էդ բոշեն էնտեղ քեֆ հասցնի։

Ասաց նա ու ջղայնորեն սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում։

Արմիկն այժմ միայն տնքոցով՝

— Մա՛,— էր բացականչում։

Եվ այն պահին, երբ երեխան վիզը ծռած, սառած հայացքով նայում էր մի կետի, Փիրոզ նանը, զգալով Արուսի մոտենալը, սկսեց խաչակնքել երեխային, հետն էլ կրկնելով.

— Սուրբ տե՛ր, մեծ ա քո զորությունը, չարի, սատանի ճամբեն մոլորեցրու, որ էլ չմոտենան էս երեխին։

Արուսը թափով ներս ընկավ և, կարծես, ինչ որ ծանրությունից թեթևացած, հոգոց հանեց ու փաթաթվեց երեխային։

— Իմ աղիզ բալա, բա էս ի՞նչ ա, ինչի՞ ձեն չես հանում։

— Չարը, որ միշից դուրս եկավ, երեխեն հանգստացել ա,— ներշնչող տոնով ասաց Փիրոզ նանը։

Ապա նա Արուսից վերցնելով մազն ու բմբուլը՝ տեղավորեց մի կանաչագույն փոքրիկ շորի մեջ, շարունակ ինչ որ բան մրմնջալով քթի տակ, եռանկյունի ձև տվեց շորին, և երբ թալիսմանը պատրաստ էր, ամրացրեց երեխայի շապկին՝ կրծքի աջ կողմից։ Հետո դարձավ Արուսին.

— Դե, հիմի երեխին հանգիստ թող. էս թլիսմը կը-պահպանի նրան ամենայն չարե։

Է.

Ամբողջ գիշերը Արուսը նստած է Արմիկի կողքին ու նայում է նրա դեմքին։

Մեկ-մեկ երեխան այնպիսի ծանր հոգոցներ է հանում, որ Արուսը նրան հանում է անկողնուց, սեղմում է կրծքին, մայրական ջերմ շունչը սփռում է նրա վրա, կարծես ցանկանալով իր շնչով կենդանություն տալ նրան։

Լուսանում է. ցերեկվա լույսի տակ ավելի արտահայտիչ է երեխայի դալկությունը։ Մանկիկն ավելի ծանր է շնչում։ Արուսը, վհատած, գլուխը տարուբերում է, մի՞թե չարը նորից մոտեցավ երեխային, չլինի՞ թե ինքը որևէ բան սխալ արավ։ Պետք է գտնել Փիրոզ նանին. այս ինչ է, երեխան ձեռքից գնում է.

— Արմի՜կ, Արմի՜կ,— հուսահատ ճչում է մայրը։

Երեխայի բիբերը սառչում են։ Այո՛, կյանքը խուսափում է Արմիկից, և Արուսը վերապրում է այն ոսպեները, ինչ ինքը գործադրեց երեխայի փրկության համար։ Փիրոզ նանը, հետո Բաբելը, չարխափան մաղը... ինչպե՞ս պատահեց այդ բոլորը. ի՞նչ գնով նա ստացավ այդ մաղը։

Մինչ այդ, որ նա գործել էր մի տեսակ ինքնամոռացման մեջ, այժմ, երեխայի սառչող մարմնի հանդեպ սթափվում է։ Եվ ինչքան նրան պարզ պատկերացավ տեղի ունեցածը, այնքան ավելի նա զայրույթով լցվեց Փիրոզ նանի ու Բաբելի դեմ։

Երեխան գրկին, մի քանի անգամ գնաց եկավ քողտիկում, ապա մի խելագար թափով դուրս ելավ բակը. նա հասնում է թթի ծառին, այնտեղ, ուր ինքը Բաբելից ընդունեց Արմիկին նվիրված շապիկն ու գոգնոցը։ Արուսն այժմ շատ բան է հասկանում։ Ո՜հ, այդ Բաբելը, նույնիսկ իր մաղը չխնայեց երեխայի համար։ Քրթմնջալով նա մտնում է Բաբելի օդան։

Բաբելն ու Փիրոզ նանը դեմ դեմի նստած, հաճոյալի ժպիտով, զրուցում են։ Ինչ խոսք, նրանք ուրախ են, որ շարը հանել են երեխայի միջից։ Արուսը համարձակ առաջանում է. արդեն դիակնացած երեխային դնում է թախտին ու, մուլուցքով, մեկ Բաբելին է նայում, մեկ Փիրոզ նանին։ Նրանք երկուսն էլ, բարկացած, ոտքի են կանգնում։

— Ահա՛,— դառն քրքիջով խոսում է Արուսը,— երեխեն էլ ձեն չի հանում, էլ չի խանգարի, որ Բաբելի ոտքերը լվանամ. դե՛, հայդե՛, Փիրոզ նան, դու ի՞նչ գործ ունես էստեղ...

Բաբելն ու Փիրոզը նշանակալից նայում են միմյանց, հետո Արուսին։ Նրա շաղված աչքերը, բորբոքուն դեմքը, մանավանդ համարձակ խոսքերը, տարօրինակ են։ Փիրոզը մի քայլ է անում դեպի երեխան և հավաստիանալով, որ նա հրաժեշտ է տվել աշխարհին, գլուխը կախ ուզում է մոտենալ Բաբելին։

— Թալիսմանը, շարխափանը,— բացականչում է Արուսը և կատաղորեն հարձակվում, քաշում է Փիրոզ նանի մազերից ու նրան դեռին թավալում։

Պառավը սարսափով բռնված բացականչում է.

— Բռնի՛ր, Բաբել, բռնի՛ր սրան, շարն երեխից ելել, մտել ա մոր մեջ, բռնի՛ր...

Արուսը ոչինչ չի լսում. նա մոլեգնորեն հարվածում է Փիրոզ նանին, առանց իմանալու, թե ուր է դիպչում հարվածը։

— Շարը, շարը,— բացականչում է Բաբելը և ուզում է օգնության հասնել Փիրոզ նանին։

Այդ պահին Մուկուչը վրա է հասնում։

Մի վայրկյան Մուկուչը լուռ նայում է գազազած կնոջը, հետո թախտին ընկած Արմիկին, նայում է անվճռական կանգնած Բաբելին ու չգիտե անելիքը. Փիրոզ նանն արդեն խռոռում է մահամերձի խռոռցով։ Արուսը թողնում է պառավին և նկատելով Մուկուչին, սկսում է.

— Իմ Արմիկն հիմի չթե շապիկ ու քաթանե գոգնոց

ունի. ինչի՞ ես եկել, Մուկուչ. գնա, թող որ ես Բաբելի ոտքերը լվանամ. տե՛ս, Արմիկը սպվել ա... նա հիմի էլ չի խանգարի Բաբելին...

Մուկուչն ավելին հասկացավ, քան ասում էր Արուսն իր անկապ խոսքերով։ Նույն կատաղությամբ, ինչ քիչ առաջ Արուսը, թռավ ու բռնեց Բաբելի կոկորդից։

— Չա՞ր ը,— գոռում է Բաբելը և նրա ձայնի վրա օդան են լցվում գյուղացիները,— չարը բուն ա դրել էդ մարդ ու կնկա մեջ... բռնե՛ք դրանց, կապեք, դրանք դեղը չարերով կլցնեն...

Բայց Մուկուչի անվրեպ հարվածների տակ, նրա ձայնն էլ հետզհետե անլսելի է դառնում...

Լռեց Նահապետ ամին. լռեց, կարծես ասելիքը վերջացավ։ Ներկա եղողները գլուխներն ափսոսանքով տարուբերեցին։

Ներս մտավ մի ալեհեր գյուղացի, հետո մի քաջառողջ երիտասարդ։

— Ծանոթացի՛ր, էս էլ մեր Մուկուչ բիձեն ու Արմիկը,— ներկայացրեց ինձ ներս մտնողներին Նահապետ ամին։

— Մուկո՞ւչ... Արմի՞կ,— վարանեցի ես։

— Հա, ընկերոջս որ ասեմ,— նկատելով իմ վարանումը, վրա բերեց Նահապետ ամին,— էդ դեպքից հետո Մուկուչին ու Արուսին մի հինգ տարով բանտ տարան, որ չարը խափանեն... փառք աստծու, խափանվեց,— հեգնանքով ասաց նա վերջին խոսքերն ու ավելացրեց,— ժամանակ էր անցավ, էլի լուս աշխարհ ելան. երբ ծնվեց նոր տղան, դեղովի ասինք, որ առաջինի հիշատակին, սրա անունն էլ Արմիկ կնքի։

— Հապա Արո՞ւսը։

— Արուսը,— միջամտեց Մուկուչը,— նա հիմի մտածում ա, թե տղայի կանաչն ու կարմիրը ո՞նց կապի։

— Կանաչ-կարմիր,— կրկնեցի ես ու նայում էի Մուկուչ բիձայի ճերմակած հոնքերին։

— Հա, էս մեկը կանաչ-կարմրով վերջացավ,— եզրափակեց Նահապետ ամին, գյուղի յոթանասուն տարվա կյանքի կենդանի վկան,— թե մեկ էլ դաս, քեզ կպատմեմ «Երկճյուղ մազի» ու «Արևաշենցի Ենովք բիձայի պատմություններ»։ Աշխարհում չեղած պատմություններ են. գիտեմ, երող մարդ ես, քեզ պետք կգա...

1921
Երևան

ՆՎԵՐԸ

Զորս ժամ Մելոն թափառեց քաղաքի կենտրոնական փողոցում։ Ուզում էր մի տեղ կանգնել, հանգստանալ, բայց չէր կարողանում։ Եվ ինչպե՞ս հանգստանար, չէ՞ որ երեկվանից կծկվում էր նրա սիրտը. այնպես անողոք էր ստամոքսի պահանջը։ Քաղցն հագեցնելու համար ի՞նչ պիտի աներ. այս հարցն անլուծելի առեղծված էր նրա համար։

Այժմ նրա այտերը տժգունել էին թոշոմած խնձորների պես։ Միայն խորը գնացած աչքերից առկայծող փայլը մի տեսակ հրապույր էր տալիս նրա նվաղած դեմքին։ Դիշերը, մայթի վրա շուռ ու մուռ գալուց շապիկը բոլորովին պատռվել էր՝ մերկացնելով նրա աջ ոտն ու իրանը, իսկ վարտիկի ծվենները որ սփռվել էին ծնկներին, նրա ամեն մի շարժումից օրորվում էին։

Մելոն նոր էր պատրաստվում դիմավորել իր տասներկուերորդ գարնանը։ Երեկվանից նա ապրուստի այլ միջոց չուներ, քան մուրացկանությունը, բայց դա մի արհեստ էր, որ չէր նստում պատանու սրտին։ Այդ էր պատճառը, որ նա, այժմ, մեկ նստում էր քաղաքային բուլվարի նստարանին, կամ փողոցի անկյունում ընկած որևէ քարին ու մտորում իր կյանքի ընթացքի մասին։

«Ինչո՞ւ հասա այս վիճակին»,— ասում էր նա մտքում ու նրա պատանեկական աչքերի առջև գալիս անցնում էր այն վայրկյանը, երբ ինքն այնպես անզգուշ վարվեց այն օրն իր բարերարի տղայի հետ... այնպես անզգուշ, որ ուղղան լաց եղավ։ Բարերարի երեխան, զվարճության համար, փայտով զարկել էր Մելոյի գլխին. Մելոն սուր ցավ զգա-

գով, ինքնամոռացման մեջ, կամթել էր շարաճճի տղային. տղան լացել էր, հորը գանգատվել և սիրող Հայրը, առանց հաշվի առնելու Մելոյի երկու տարվա ծառայությունը, նրան վռնդել էր տանից, ուր Մելոն ապրում էր իր ծնողների մահից ի վեր՝ կատարելով տնային ծառային պատկանյալ բոլոր գործերը։

Եվ այսօրվա թափառումն հոգնեցրել ու հուզել էր Մելոյին. քաղցածությանն այժմ միացել էր ամոթի զգացումը և նա, դյուրագրգիռ հոգեվիճակով, նայում էր անցորդներին. նա արդեն մի քանի անգամ փորձել էր ձեռքը պարզել դեպի նրանց՝ մի բան տանալու հույսով, բայց միշտ էլ այդ գործողությունից սոսկում էր, և այժմ, ավելացող անհանգստությամբ նայում էր առանց կարողանալու կենտրոնանալ անցնողներից մեկին ու մեկի վրա։

Նա նորից համբաքայլ առաջ անցավ։ Ստամոքսն անհանգիստ էր։ Սիրտը խառնում էր և զգում էր, որ ոտքերն հրաժարվում են իրեն ծառայելուց։

— Չէ, պետք է մի բան անել,— մտմտաց նա և կանգ առավ մի հրուշակարանի ցուցափեղկի դիմաց, ուր խնամքով դասավորված էին թարմ ու փափուկ խմորեղենները։ Եվ ինչքա՞ն զրգռիչ էր նրանց տեսքը։ Մելոն ագահորեն դիտեց նրանց դասավորվածքը, հետո էլ սկսեց հաշվել՝ մեկ, երկու, երեք... տաս... քսան, է՜հ, ինչքան են... ա՜յ, այն մեկը, հենց միայն այն մեկը բավական է Մելոյի քաղցը հագեցնելու համար. բայց ո՞վ է նրան կարիանդակ տվողը, ո՞վ...

Այս մտածումներով, Մելոն, ուզեց խանութը մտնել, ողորմություն խնդրելու մի փորձ անել, բայց այդ պահին մի ուրիշ թափառաշրջիկ տղա, արհամարհոտ նայելով Մելոյին, կանչեց նրան և, համարձակորեն ներս մտնելով հրուշակարանի բաց դռնից, ասաց.

— Խաղեին, մի կտոր...

— Է՜հ,— բարկացած խոսեց խանութպանը, չթողնելով, որ տղան ավարտի իր ասելիքը, սակայն, նկատելով

իր վրա հառած հաճախորդների հայացքը, հանկարծ փոխվեց և, ներողամիտ ժպտալով, մի կտոր չոր հաց պարզեց թափառաշրջիկին՝ ասելով.

— Սաղ օրն էս ա, էլի... Դե, ա՛ռ. ա՛ռ ու փախի։

— Վա՜խ,— ասաց Մելոն յուրովի,— ինչի՞ առաջուց ես չուզեցի... էն հացն ինձ կտար. հիմի որ ուզեմ էլ իսկ չի տա, չէ՞, իհարկե չի տա. ասեց առ ու փախի...

Քաղցն արդեն անտանելի էր դառնում Մելոյի համար, և նա, բերանում ինչ որ դառնություն զգալով, լեզուն ծրարեց. զգում էր, որ լորձունքն էլ է չորացել բերանում։ Հոտահատված, ջղագրգիռ շարժումներով նորից սկսավ հետ ու առաջ գնալ փողոցում։

— Ա՜խ, էս անգամ էլ մի կուշտ ուտեի, ինչ կլիներ, թող լիներ։

Բայց ինչպե՞ս. դրա համար նա այլ միջոց չուներ այսօր, քան ողորմություն հայցելը, և սակայն դեռ վարանում էր որևէ մեկին ձեռք պարզել։ Դարձյալ քայլեց փողոցով, այս անգամ խորաշնին նայելով անցորդներին, կարծես ուզենալով գտնել այնպիսի մեկին, որ չմերժեր իրեն ողորմություն տալ։ Սակայն ո՞ր մեկն էր այդ բարի անցորդը. ո՞ւր էր նա... իսկ եթե այդպիսին էլ գտնվեր, ինչպե՞ս մոտենար, ինչպե՞ս ուզեր։

Ահա քիչ առաջվա թափառաշրջիկը. նա գնում, կառչում է այս ու այն անցորդի փեշից՝ քաշում, քաշքշում է։ Ահա, այն մեկը բարկացավ, ի՞նչ նուվնիկ ուզում է զարկել։ Ո՜հ, ո՛չ, ո՛չ, Մելոն չի կարող, չէ՛, չի կարող այնպիսի մեկից խնդրել, որ մերժում ստանա. սակայն ո՞ւր էր այն մեկը, որ չպիտի մերժեր։ Անշուշտ կար այդպիսին, բայց Մելոն ո՞նց ճանաչեր նրան։ Անցան դարձյալ ծանր ու սիրտ մաշող րոպեներ։ Դարձյալ նրա ներսում անհանգիստ է... հասկացե՛ք, վերջապես, հասկացե՛ք, Մելոն ուտել է ուզում։

Եվ ահա Մելոյի աչքին է ընկնում երկու զույգ. երկու տղա, երկու աղջիկ,— չորսն էլ երիտասարդ, աշխուժ ու

գվարթ. նրանք մի շարք կազմած անցնում են փողոցի միջով։

— Սրանցից պիտի ուզեմ,—վերջապես վճռեց Մելոն,— ա՛յ, այն աղջկա ձեռքում քսակ կա, նա անպայման մի բան կտա, նա չի մերժի, նա բարի է երևում։ Եվ այս մտածումով պատանին շփեց դեմքը՝ Կարծես ցանկանալով վանել այնտեղից այն՝ ինչ կոչվում է ամոթի զգացում. ապա մոտեցավ քսակ ունեցող աղջկան ու, ձեռքը պարզելով դեպի նա, հազիվ լսելի ձայնով, շշնջաց.

— Օրիորդ ջան... մի քիչ հացի փող...

Օրիորդն, առանց դեմքը շուռ տալու, շոր ձայնով ճըշաց.

— Գնա՛, հեռացի՛ր, փող չկա. խուժան...

Մելոյի աչքերը մթնդացին, թվաց, թե պայծառ ցերեկը միանգամից խավարեց, և նա, ինքնամոռացման մեջ, ռեֆլեքսորեն, փոխանակ հետ գնալու, դարձյալ շարժվեց օրիորդի ետևից և մրմնջաց.

— Ախր, ես...

Նա չգիտեր ինչպես վերջացներ խոսքը. նրա հայացքին նայելով, կուզեր ասել, «ախր, ես մուրացկան չեմ», բայց ոչինչ էլ չկարողացավ ասել, միայն նույն անգիտակից մըղումով դարձյալ առաջ էր շարժվում։

Օրիորդը, նկատելով ետևից եկող Մելոյին, բարկացկոտ ետ դարձավ և գոչեց.

— Քեզ չե՞մ ասում. չկա էլի, կորիր, ի՞նչ ես ձյութ դարձել։

Օրիորդ, օրիորդ,— սրտապատառ բացականչեց պատանին։

Օրիորդին թվաց, թե տղան համառում է իր պահանջի մեջ։ Ըստ երևույթին, նրան դուր չէր գալիս այդ համառությունը, ուստի և նա, դառնալով իրեն ընկերակցող տղային, ասաց.

— Սուրեն, այս խուժանն ապտակ ուտելու ցանկություն ունի...

Սակայն, Սուրենը, նայելով Մելոյին, ըմբռնեց, որ տղան բոլորովին էլ ապտակ ուտելու ցանկություն չունի, ուստի և գրպանից հանելով մի հինգ կոպեկանոց, պարզեց դեպի Մելոն։

Մելոն շշմած, ուզում էր խույս տալ, քանի որ նա լսել էր աղջկա խոսքերը և ենթադրում էր, թե ապտակն է, որ պիտի ստանա, սակայն զարմանքը մեծ եղավ, երբ իր ձեռքում տեսավ հինգ կոպեկանոցը։ Մի պահ նա ինքնամոռացման մեջ էր, սակայն հետզհետե սթափվեց և այժմ նրա պատանեկական դեմքին գծագրվեց ամոթխածն զայրույթի դգացումը։ Նրա ձեռքերն սկսեցին դողալ, քիչ մնաց փողը ցած գցեր, ապա նրա մարմնով անսովոր սարսուռ անցավ. նա նայեց զույգերի ետևից, որոնք անխռով շարունակելով իրենց զրոսանքը, խոսում էին և բարձրաձայն քրքջում։ Մելոն իր պատանեկական հոգու ամբողջ թափով կատաղել էր օրիորդի այն անպատկառ արտահայտության դեմ, որ դեռ հնչում էր իր ականջին։

— Այս տղան ապտակ ուտելու ցանկություն ունի...

Նա կամեցավ մի քար վերցնել և այնպիսի ցանկություն ցույց տալ օրիորդին, որ... բայց զսպեց իրեն և զայրույթից կրծոտելով շրթունքներն իջավ փողոցն ի վայր։ Նա այլևս մոռացել էր սովածությունը, թվում էր, թե երբեք սոված չի եղել, սիրտը թեև կծկվում էր, բայց այն լցվել էր ինչ որ նոր, մինչ այդ Մելոյին անծանոթ զգացումով։

Մելոն, վիրավորանքի զգացումն ամբարած իր փոքրիկ կրծքի տակ, շարունակում էր վայր իջնել, երբ ծաղկավաճառն անցավ նրա կողքով իր սովորական կանչով.

— Ցասամա՜ն, մանուշա՜կ։

Եվ դրա հետ միաժամանակ ականջում հնչեց շարադուշակ ձայնը.

— Այս տղան ապտակ ուտելու ցանկություն ունի։

Մելոն, տապակվելով իր ներսում հորդացած ցասման

մեջ, շուռ եկավ, հասավ ծաղկավաճառին ու, պարզելով հինգ կոպեկանոցը, ասաց.

— Մանուշակ տուր։—

Ծաղկավաճառը, նախ գրպանը դրեց հինգ կոպեկանոցը, զարմացած դիտեց պատանուն և ապա, մի փունջ մանուշակ տալով, ասաց.

— Փունջը տաս կոպեկ արժե, համա որ էդքան ծաղիկ ես սիրում, ա՛ռ, թող սա էլ հինգ կոպեկով դնա։

Մելոն բնավ չլսեց ծաղկավաճառի խոսքերը, վերցրեց մանուշակը և սկսավ հոտոտել. ծաղկի բուրմունքը կարծես քիչ զովացրեց նրա վրդովված հոգին և նա, այլևս ոչ այնքան դյուրագրգիռ, սկսավ խորհրդածել.

— Չէ, ես թույլ չեմ տա, որ ինձ վրա ծիծաղեն. ինչպե՞ս. ես ապտակի՞ եմ արժանի. ինչո՞ւ համար. ես ի՞նչ արի, հա՞ ի՞նչ արի։ Թերևս այդ պատիժն են տալիս մուրացկանությամբ զբաղվողներին, հա՞... Եվ նա, գլուխ չհանելով այս հարցերից, նորից դիտեց գնած մանուշակը և, շուռ գալով, տեսավ երջանիկ զույգերին, որոնք իրենց անհոգ քրքիջով իջնում էին ներքև։

Մելոն մի պահ կանգնեց. դեմքին պատել էր մռայլության քողը։ Աշխատելով զսպել իր ցասումը մտմտաց.

— Չէ՛, ես չեմ ուզում, որ հինգ կոպեկի համար ինձ խայտառակեն, և մոռանալով օրիորդին.

— Ձեզ նվեր,— ասավ նա մի հեգնական ժպիտով, և ձեռքի մանուշակը հանդիսավոր պարզեց նրան։

Օրիորդը մնաց քարացած. ոչ մի խոսք չգտավ պատասխանելու. նրա դեմքն իսկույն փոխեց իր գվարթ արտահայտությունը. և, ձեռքի մեքենայական շարժումով, ընդունեց պատանու պարզած ծաղիկը...

Օրիորդը, հետևյալ և մյուս օրերը, նույն և ուրիշ փողոցներում շատ փնտռեց պատանուն, բայց այլևս չտեսավ նրան։

1924, Երևան

ԱՄՄԱՐ

Ա.

Այնտեղ, ուր անտառապատ լեռների կատարները քերում են երկինքը, ուր ամպը չալմայի նման հաճախ փաթաթվում է սարի գագաթին, այնպե՞ս դուրեկան է հովը, և այնպե՞ս թովիչ Վոշունների համերգը։

Լայն հովտում խոխոջում է գարնանային պղտոր գետակը։ Ամեն թումբից ու ճեղքվածքից ջուրը ծլծլալով խառնվում է գետակին, որն ագահորեն կլանում է զուլալ վտակները և հետզհետե մոլեգնող ընթացքով խփում է քարերին, արմատահան անում անպաշտպան բույսերը և խառնելով իր ընթացքին առաջ սուրում։

Այսպես է այս հովիտը. աջ ուսին թանձրախիտ անտառն է, ձախ ուսին մինչև պորտը ծաղիկներով պարուրված սարն է, որից վեր խոյանում են սրածայր քարե զանգվածները՝ դարերի հարվածներից ստացած խոր ճեղքվածքներով։

Արևն այնպես շեշտակի է խփում այս հովտում, որ ծառերն ու ծաղիկները, դեռ վաղ գարնան, հեգնելով փեշերը հետզհետե հավաքող ձյանը, փռում են իրենց թևերը ու հաճելի բուրմունքով դեպի իրենց են գրավում բնության մյուս շնչավոր արարածներին։

Թիթեռն ու բզեզը, զատկաճանճն ու մրջյունը, վխտում են ծառերի տերևներին, քարերի արանքում և տոնում են իրենց հարությունը, նոր կյանքը։

Սարալանջին փռված է հովվի հոտը. այծերը, պոզերը վեր տնկած՝ բարձրացել են ժայռերը և վերից հպարտ-հը-

պարտ նայում են ցածում արածող ոչխարներին, որոնք մեկ-մեկ, կարծես հանդիմանորեն, նայում են իրենց ամբարտավան ընկերներին և մկկալով նորից շարունակում են կրծել նորահաս խոտերը։

Քերիմը մի ոտքը ծալել է տակը, մյուսը երկար ձգել, որի վրա հանգչում է գամփռի գլուխը, և զլել հովվական շվին։ Փչում է ուսցրած թշերով, գեղգեղում է ձայնը, արձագանքում ծաղկահոտոտում և թվում է, թե ծառերն ու ծաղիկներն էլ հմայված այդ կանչով՝ խոնարհում են իրենց տերևները, ունկնդրում հովվին։

Գետափին նստած աղջիկներն ահա լվացվեցին, ոտոտատալով թաց թումբերից ու բարձրանում են վեր՝ դեպի սարալանջը։ Նրանց կանաչ-կարմիր զգեստները, նրանց արևախանձ ու ժպտուն դիմքը այնպե՞ս ներդաշնակ են այդ երփներանգ ծաղիկներին։

Ասմարի բարակ ունքերին իջավ ճակատահոս քրտինքը. նա բազկով սրբեց այն և սրածայր փայտով փորփրելով հողը՝ գոգը խանդոտ ու սինձ լցրեց։

Հովիվը փչում էր շվին՝ դուրեկա՜ն, հմայի՜չ։

Աղջիկներից մի քանիսը գնացին, չարաճճիորեն հարվածեցին ոչխարներին, պտուկները ձգեցին՝ ֆշշոցով գուրս ժայթքեցնելով կաթը։

Ասմարն էլի առաջ գնաց. Քերիմը տեսնելով Ասմարին, ավելացրեց շվու գեղգեղանքը։

Ասմարի աչքերը փայլեցին. այտերը անտառի մորու պես կարմրատակեցին և նա մի սիրի-սիրի սեղմեց շրթունքների արանքը։

Գարնան արևը պայծառացրել էր Ասմարի դեմքը, բորբոքել նրա մեջ տարիներով ամբարած զգացումները։ Ասմարը ետ է նայում. ո՞ւր մնացին աղջիկները. ո՞վ գիտե, որ անկյունը թաքնված դիտում են իրեն... ո՜հ, թող դիտեն, ինչքան կուզեն թող լրտեսեն. նա այլևս չի կարող չանսալ իր սրտի թելադրանքին. երբեք նրա հոգին չի ճմլվել այնպես, ինչպես այս վերջին տարին, երբեք նա այնպես մոտ

չի եղել իր վճռին, ինչպես այժմ։ Պարուրված գարնան արևի շողերով նա ավելի համարձակ է դարձել. երբ Քերիմը դադարում է նվագելուց, Ասմարը շրթունքների արանքից բաց է թողնում սերի-սիրին, մի պահ երևում է նրա ճերմակ ատամնաշարը ու նա ծիծաղում է և իր կարկաչուն ձայնով լցնում է շրջապատը։ Բերկրանքը շողում է Քերիմի առնական դեմքին։ Նա նայեց Ասմարի լազուր աչքերին։ կյանքով լեցուն դեմքին և թրթռուն սրտով մոտեցավ.

— Ասմա՜ր։

Ասմարի սիրտն էլ թրթռաց. նա գլուխը թափ տվեց. ո՞վ է խանդարում, որ Ասմարն ավելի մոտ լինի Քերիմին. նա՜, Վալի՜ն։ Ո՛չ, այժմ, Ասմարին, ոչ մի պատճառաբանություն համոզիչ չի թվում. նա փեշից վերցնում է մի բուռ խանդող և սրտանց առաջարկում է Քերիմին։ Քերիմը ափն առավ աղջկա ձեռքը, մեկ-մեկ վերցրեց խանդողը, ապա շունչը խառնելով Ասմարի շնչին, կարոտակեզ հոգով հարցրեց։

— Ե՞րբ։

— Ե՞րբ. չգիտեմ,— տանջալից արտահայտությամբ ասաց Ասմարը և ազատ ձեռքը սեղմեց կրծքին։

— Ասմա՜ր, ախր էլ ո՞նց սպասեմ,—մղկատաց Քերիմը և հանկարծակիի բերելով համբուրեց աղջկա դողացող թուշը։

— Սեավոր,— լսվեց աղջիկներից մեկի զիլ կանչը և նա ափամեջի կաթը ցփնեց Ասմարի դեմքին։

Բ.

Էլի իրիկուն է. էլի Վալին ներս եկավ. թիկնեց փափուկ բարձին և սկսավ չիբուխը ֆսատցնել։ Քնկոտ, բորբոքված աչքերը հառեց Ասմարին, մրթմրթաց քթի տակ և Ասմարին գիրկն առավ։

Չորս տարի շարունակ այսպես է վարվել նա։ Դեռ այն ժամանակ Ասմարը տասնվեց տարեկան մի անփորձ աղջիկ էր։ Ագբատ Մատոն, աղջկան մինչև այդ հասակը, ամառ

գրկել էր սիրելու կարողությունից, ով գիտե ազգական ընտանիքի, որ մեզքի համար։

Այսօր Վալին մոլեգնած է. ածիլված ծնոտը դողում է տատամների կրճատոցից. մտրակը ձեռքն առած նա մտնում է օդան. Ասմարը սնդուկն է քրքրում և ինչ որ դասավորում։ Վալին բռնում է Ասմարի մազերից ու նրան շպրտում է հատակին։

— Դու անոթի շան ապշիկ, ինչպե՞ս համարձակվեցիր Վալու անունը կոտրել, արուռը քածերի լափ անել, հա՞։

Կծկվում են Ասմարի կողերն ու ոտքերը մտրակի հարվածներից, ճչում է նա ապիրատորմ, սակայն Վալու թեր դեռ չի հոգնում։

— Չէ՛, չես գնա, գլխիս փափախ կա, երկուսիդ կաշուց սրմա կքաշեմ. իմ հերը չորս կնիկ էր պահում և ոչ մեկը նրան չդավաճանեց, հիմի դո՞ւ - ես ինձ խայտառակ անելու, տո, մթոքի ապշիկ։

Ու երբ արդեն հանդարտվեց, երբ Ասմարի ազնիվ ճիչերը հեկեկոց դարձան, նոր միայն Վալին նրան գրկեց, գցեց օթոցին, մի քանի անգամ գնաց եկավ սենյակում, ապա հաղթական նստեց նրա կողքին։

Ասմարի աչքերը նողկանքով դարձան դեպի ամուսինը. արցունքը ցողել էր այտերը և նա այդ դիրքով առանձին հրապույր էր ստանում։

Վալին քիչ մեղմացած մատեցավ, համբույր հեկեկոցով փարվեց կնոջ վզովը և ուզեց հմայել նրան։

Ասմարը նրան ետ վանեց։

— Ի՞նչ ես ուզում, բավակա՛ն է. էս ո՞ր աշխարհումն ես ապրում։

— Չէ՛, Ասմար, սիրտս չդիմացավ, երբ լսեցի... վայ գլխիս... թե գնացել ես Քերիմի մոտ...

— Ինչո՞ւ վայ։

— Ուրե՞մն։

— Այո՛, ես նրան եմ սիրում։

— Քերիմի՞ն։

— Քերիմ՛ն։

— Մեկ էլ նրա անունը լսեմ։

— Քերի՛մ,— իբրև հարված նորից արտասանեց Ասմարը։

Եվ այդ հարվածը այնպիսի ծանրությամբ իջավ Վալու գլխին, որ նրա աչքերը մթնդացին. իր կյանքի երեսուն տարիներում, այն էլ կնոջից, նա չէր լսել այդպիսի նվաստացնող արտահայտություն։

Եվ այլևս ոչինչ չկար այդ օդայում, որ մեղմեր նրա մոլեգնությունը։ Նա մի հարվածով պատռեց Ասմարի շորը-շապգեստը և աղջկա պարանոցն ու կուրծքը բացվեց նրա առաջ իր ամբողջ գեղով։

Ասմարը ոգի առած՝ ոտքերով, ձեռքերով սկսեց հարվածել ամուսնուն, որը օձի նման գալարվեց, պլվեց նրա մարմնով, ապա գիշատիչի նման ժանիքներն ու եղունգները խրեց նրա պարանոցին, կրծքին, ամեն անգամ թոշնելով կապտավուն հետքեր։ Կատաղել էր նա խանդից և վարված կիրքն իր բավականությունը գտնում է հոշոտելու մեջ։

Ասմարը մի անսովոր ճիգով ազատվեց Վալու ճանկերից և իրեն մի կերպ դուրս գցեց օդայից։

Գ.

Այնպես դուրեկա՞ն է հիմա այս քաղաքիկը, այնպես հաճելի այս ագքատիկ ճաշը։ Ասմարը, մրջյունի պես, այլևս դադար չունի։ Ամեն ինչ նրա ձեռքի տակ կերպարանափոխվում՝ նոր ձև, նոր շուք է ստանում. պատերին սարդն այլևս ոստայն չի հյուսում, ձձումի վրա փոշի չկա, հատակը ծածկել է խսիրը, որ նրան գորգի պատրանք է տալիս. սարայում տեղավորված չորս ոչխարներն էլ կարծես ավելի հաճույքով են ծամում խոտը ու մկկոցով ձայն տալիս գառներին։

Ղոմաշը էլ չի այրում Ասմարի մարմինը, Վալու հրպումները չեն վրդովում նրան, ո՛չ էլ նրա ոռնոցները խանգարում իր քունը։

Քերիմի ուրախությունն էլ չափ չունի. Ասմարի կարոտը ոգեորում է նրան. շվին ավելի խինդով է գեղգեղում և օրն ավելի շուտ է մթնում։

Երբ արևը հանգչում է, լուսինը, սինու նման, իր կլոր երեսով ուղիղ նայում է Քերիմին և Ասմարին. ի՞նչ է, նախանձո՞ւմ է, թե՞ նրան էլ հաճելի է այդ զույգը։

Քերիմը պահել է ոչխարի գլուխը, իսկ Ասմարը կթում է. ֆըշ-ֆըշ ժայթքում է կաթը, լցվում է սափորը։

Քերիմը գոհունակ սրտով նայում է Ասմարի պայծառացած դեմքին։

Չորս տարվա կիսամեռ կյանքը Ասմարի մեջ ապրելու անհագ պապակ է սնել։ Յերեկին, նա աչքի անցկացրեց Քերիմի ձմեռային գրագիտական դպրոցում անցած գրքույկը և ինքն էլ իր մտքում հեգեց լսած տառերի անունները՝ «ալիֆ, բե», տեսնես ո՞ր մեկն է ալիֆը, չէ՞ որ իր անունը գրելու համար առաջին անգամ այդ տառը պիտի ճանաչել։ Բայց նա դեռ չի կարողանում կենտրոնանալ, կասկածում մտքերը մեկ-մեկ շփոթում են նրա ուղեղը. տակավին չի մոռացել, որ Վալին սպառնաց, թե երկուսից էլ «սրմա կքաշի»։ Մի՞թե Քերիմը կկարողանա դիմագրաված վել նրա կատաղի վրիժառությունը։ Մարմինը դեռ մղկտում է, իսկ կրծքին ու պարանոցին մնացած կապտավուն հետքերը հիշեցնում են Վալու մոլեգնած աչքերի այնքա՞ն նշանակալից արտահայտությունը։

Եվ Ասմարը կարոտալի նայում է ժպտացող Քերիմին. հանկարծ զգում են ձեռքերը, քիչ է մնում ծնկների արանքից սափորն ընկնի. նա հազիվ պահում է. ի՞նչ նոր փորձանք է սպասում իրեն. թախծոտ աչքերով նայում է լուսնին. մի՞թե եկողը Վալին է, այո՛, նրա մոլեգնած աչքերն են... այս անգամ սափորը շառաչով ընկնում է գետնին։

Կարելի՞ բան է. դրա համա՞ր Վալին մուսուտաա Մաստոյի աղջկան չորս տարի պահեց, դրա համա՞ր նրա առաջ մալուլ-մալուլ փաթ տվեց, շրջանի ամենահարուստ աղայի

կնկանից պայծառ ու խաս հագցրեց, որ այսօր նա Քերիմի պես անոթու-դո՞ւն ընկնի, որ այսօր թայ ու թայդաշ իր վրա խնդա՞ն, աշխարհն իրեն հեգնի՞։

— Սրմա կքաշեմ, սրմա. Քերիմի ու Ասմարի կաշուց շարուխ կշինեմ։

— Ա՜խ, Վալի,— աղերսում էր ծերունի մայրը,— սիրտդ մի կոտրի, չհանեսամը, թե փախավ. Ալլահի զորությամբ դու լավացիր, քեզ մեկի տեղ երեք կնիկ կառնեմ, որ Ասմարը նրանց ոտքերին ջուր լցնելու էլ արժանի չի-նի։

— Իմ հերն ինձ էդպես խրատ չի տվել, լավ վատ, իմ կնիկն իմ շեմքում պիտի մեռնի։

— Չէ՛, Վալի, պառավ օրս մի սեացնի. հիմի աշխարհը փոխվել է, էլ մեր ադաթին երեսատեղ չկա։

— Իմ կնիկն ի՞նչ գործ ունի աշխարհի հետ։

Վալին դաղազել է վիրավոր արջի նման և անհույս մոնչում է. երկօրյա մտորումները ալեկոծել են նրա հոգին, մթագնել գիտակցությունը և նա պայծառ լուսնի տակ խարխափում է, ինչպես խավար մզձավանջում։

Ահա՛, նա տեսնում է բախտավոր զույգին. Քերիմի միայն մեջքն է երևում, բայց նա այնպիսի անդորրությամբ է փռվել մահակի վրա, կարծես խանը հարեմում. Ասմարը ժպտում է նրան այնպես քաղցր ու դուրեկան, ինչպես ոչ մի անգամ այն չորս տարվա ընթացքում չժպտաց իրեն։ Ասմա՜ր, դու այսօր փայլում ես ջեննաթի փերու պես, դու այսօր հուզում ես Վալուն այնպես, ինչպես չի հուզել Մահ-մեդին, աշխարհի կանանցից սքանչելագույնը, ինքը, սըրբազնուհի Այշան... դու էլ ես հուզվում. Վալին գիտե քո հուզմունքի պատճառը, դու զոզում ես քո բախտավորությունն վրա, բայց չէ՞ որ այդ Վալու դժբախտությունն է. ո՜հ, ինչ ախորժակով նա կխմեր քո մատաղ կրծքի բոսոր արյունը. ո՛չ, ադաթն այլ կերպ է թելադրում, առաջ սրան, այս ապուշ հովվին, որ չհամարձակվի ոչխարի սուրուցից դուրս գալ, խառնվել մարդկանց... և դաշույնը պեծպեծում

է լուսնի շողերի տակ ու Վալին ոստնում է դեպի Քերիմի լայն թիկունքը...

Սամարն այս անգամ ճչում է ազեկտուր. Քերիմը նոր է հասկանում կնոջ շփոթության պատճառը. կաթը հոսել է նրա մեկնած ոտքին ու ճպպացնում է վարտիքի փողերը:

Սամարը ճչում է ապաշկան.

— Վալի՜...

Վալին անդրդվելի է. Սամարի ընկճված կանչը ոգևորում է նրան և նա, թափով՝ դաշույնը պտտեցնում է ձեռքում:

Քերիմը ցատկեց տեղից, հետը թոցնելով մահակը և մի վայրկյան ամբողջ մարմնով սրթսրթաց՝ Վալու ձեռքում պսպղացող մահու գործիքից. սակայն, միայն մի՛ վայրկյան:

— Էս ի՞նչ երկոտանի գայլ է,— հեգնոտ գոռաց նա և մահակը հաստատուն ուղղեց Վալու պրկված բազուկին:

Դաշույնը թռավ Վալու ձեռքից և զրնգոցով կպավ սալաքարին, ապա երկու մասով ընկավ դետին. պրկված բազուկն էլ, թուլացած, քաշ ընկավ կողքին:

Քերիմը հեգնոտ ծիծաղեց.

— Իմ մահակն հաղթեց քո դաշույնին:

Սամարը ժպտաց և նրա շրթունքները կարծես մրմնջում էին.

— Սերը՝ հաղթողին:

1929
Քեշիշքենդ

ԿՅԱՆՔԻ ԿԱՐՈՏԸ

Ս.

Հեռվից, նրա դեմքը նման է քանդակած տուփի, որի վրա արվեստագետի հարվածները, թվում է, թե վրիպել են իրենց նպատակից. սոպատավոր քիթը, այնպես ազդու է դարձնում նրա կերպարանքը, որ սիրտ չես անի միանգամից մոտենալ նրան։

Գույնը կորցրած ղգեստներին, իբրև դիսոնանս, կապում է միշտ մի նոր փողկապ, որի ծայրերից մեկը, երբեմն ընկած է պինջակի աջ գրպանի վրա։

Առանց որևէ շարժումի, կարող է ժամերով հայացքն հառել մի կետի, եթե միայն մի սովորական այցելու թուղթը չերկարի նրա աչքերի դեմ։ Այդ ժամանակ, նա կարծես երազից սթափված, այցելուից ընդունում է գրությունը և ինչ որ գրանցում մատյանում։

Երբ այցելուին ճամբու է դնում, մեջքն հենում է աթոռին, ուղղում է փողկապը և, մի ծխախոտ վառելով, շարունակում է ակնապիշ նայվածքը. մերթ աչքերը կանգ են առնում դիմացի պատին, ուր նա, ո՞վ գիտե, որ երրորդ անգամ, կարդում է գույնզգույն պլակատի լոզունգը՝ «Բանվո՞ր, բարձրացրու աշխատանքի արտադրողականությունը»։

Երբ դռանից ճանձրանում է, նայում է աջ ու ձախ և, գաղտուկ շուռ գալով, դիտում է իր գլխավերևը փակցված ճերմակ խավաքարտին և, մտքում, հեգում՝ մա-տե-նա-վար։

Ապա ընդունում է սովորական դիրքը, քրքրում է սե-

դանին կուտակված թղթերը, սառուցում մատյանի դրանցումները և նորից տարվում իր խոհերով։

Ժամը չորսին կարգի է բերում սեղանը, շտկում ըզգեստները, թաշկինակով մաքրում աչքերի ապրակները և սուս, անաղմուկ փողոց է ելնում, աշխատելով աննկատ մնալ, որ իր ճամբի անդորրությունը չխանգարի մի տհաճ ուղեկցով։

Այսօր երբ նա շենքից դրասենյակի դուռը, ակամայ հասավ.

— Իսահակ Արտեմի՛չ։

Նա դանդաղ ետ դարձավ. զննող հայացքով նայեց կանչողի դեմքին ու մի ձայնով, որ նման էր մոլտոցի ասաց.

— Խը-ընդրեմ։

— Դուք, ընկեր Իսահակ,— ասաց կանչողը, որ հիմնարկի պատի թերթի քարտուղար Արտաշեսն էր,— երրորդ անգամն է, որ սարոտաժի եք ենթարկում ձեզ հանձնարարված աշխատանքը։

— Ինչպե՞ս,— կարկամեց Իսահակը։

Արտաշեսը, փութկոտ մի երիտասարդ, խուզարկու արտահայտությամբ նայելով դիմացինին, վրա բերեց։

— Էլ ինչպես. ձեր ձեռագիրը գեղեցիկ է. ուզում ենք, որ զոնե մեկ անգամ դուք արտագրեք պատի թերթը, իսկ դուք միշտ հրաժարվում եք։

— Ես զավզակություններով չեմ զբաղվում։

— Ինչ եք ասում, Իսահակ Արտեմիչ, դուք պատի թերթ հրատարակելը զավզակությո՞ն եք համարում։

— Հապա ի՞նչ. քաղաքում գաղեթ կա, կարդացե՛ք, էլի՛։

— Կա՞չ,— գայրացավ Արտաշեսը և ետ դարձավ։

Իսահակ Արտեմիչը թափ տվեց պինջակի փեշը և, փնթփնթալով, դուրս եկավ հիմնարկից։

— Կրակ ու պատիժ է. տեղից շուտ վեր կացողը գրող դարձավ... կարծես, թե ես գրանց ապը մաքրողն եմ. գը-

ում եք, ինքներդ էլ արտաքրեք, վերջանա, էլ ի՞նչ եք սրա նրա օձիքից բռնում։

Հասավ հիմնարկի դիմացի էլեքտրական սյունին ու կանգ առավ. և հանկարծ սարսուռ անցավ մարմնով. նա մի հայացք նետեց շրջապատին ու յուրովի մրմնջաց.— սա-բոտա՞ժ. չէ՞ մայդ Արտաշեսը մի օլին բերի գլխիս. մի պոչ է՝ կպցրեց, դե արի ու ազատվի. այսքան տարի սուս ու փուս, իմ աբուռով ապրել եմ ու հանկարծ... չէ՛, ինքս իմ ձեռքով, գործս փչացրի։ Նրանք ինչ սրտով են կպել իրենց գործին, իսկ ե՞ս... լա՞վ, կարող էի հրաժարվել, բայց զավզակություն համարել. ո՞վ այդպիսի թիքա կուլ կտա։ Վաղն ասես, ի՞նչ պիտի անեն... տեղիս, ժողովս... նույնիսկ Իսահակ Արտեմիչը թշնամի ու անհարազատ, հետո կրճատում, և ո՞վ գիտե, էլի ինչ։

Եվ մեկը մյուսից մռայլ մտապատկերները ցնցեցին նրա ուղեղը։ Նա շուռ եկավ դեպի հիմնարկությունն ու էլի մրմնջաց,— քսան տարի է այստեղ մտել, դուրս եմ եկել. քառասուն մատյան եմ լրացրել ու հանկարծ դո՞ւրս մնամ. ո՛չ, սիրտս երկաթից չի, որ այդպիսի բանի դիմանա։

Նա գլուխը թափահարեց, մտավ հիմնարկ և ուղղակի գնաց տեղեկոմի առանձնասենյակը. այնտեղ նստած էր պատի թերթի նկարիչը՝ գանգրահեր մի երիտասարդ։

Իսահակ Արտեմիչը ուզեց հարցնել, թե ո՞ւր է Արտաշեսը, բայց բարվոք համարեց դեռ նկարչին խոսեցնել, իմանալ, թե ինչ տպավորություն է թողել իր մերժումը։ Սակայն նկարիչն առանց գլուխը բարձրացնելու տարված էր իր գործով. վարժ ձեռքով նա գծեց վերջին շտրիխը և ինչ որ բան մակագրելով տակը՝ գոհունակ ժպտաց և, առանց իմանալու, թե ով է մոտեցողը՝ նկարը պարզեց եկողի աչքերի դիմաց։

— Թերթի նյո՞ւթ է,— կմկմաց Իսահակ Արտեմիչը։

Նկարիչը շփոթվեց և հազիվ արտասանեց՝ «այո»։ Ուզեց թաքցնել նկարը, բայց Իսահակ Արտեմիչը, արդեն ձեռքն էր առել այն ու զննում էր,— թուլացած, անկամ, մի

մարդ էր, փալինքը ծորում էր քթից. նա կիսով չափ մտել էր արկղի մեջ։

— Ի՞նչ կնշանակի սա,— միանգամից գլխի չընկնելով հարցրեց Իսահակ Արտեմիչը ու նորից նայելով ծաղրանկարին, կարդաց մակագրությունը՝ «Արխիվի մարդը... նույն ինքը՝ Արտեմիչը»։

— Բո՞հ,— կարողացավ միայն բացականչել նա։

— Սա արդեն արտագրելու կարիք չկա,— հեգնեց նկարիչը,— հենց այսպես կփակցնենք թերթի մի հարմար սյունակում։

— Սա ի՞նչ խայտառակություն է. քեզ ո՞վ իրավունք տվեց...

— Դե, այսպիսի հարցերում իրավունքը... չիմացավ ինչպես խոսքը լրացնի նկարիչը, միայն ավելացրեց,— Իսահակ Արտեմիչ, դուք կարող եք հանգիստ տուն գնալ, թերթն արտագրում են արդեն։

Իսահակ Արտեմիչը մի խոժոռ հայացք նետեց նկարչի վրա ու դուրս ելավ դրասենյակից։

— Վերջացա՜վ, վերջացա՜վ,— կրկնում էր նա հուսահատորեն, փողոցներով անցնելիս։

Տուն հասնելով, առանց հանվելու, փռվեց թախտին։

— Այո՛, ամեն ինչ վերջացավ. է՜հ, փուչ աշխարհ. ինչո՞ւ այսքան անողոք ես իմ հանդեպ. քառասուն տարեկան մարդ եմ, դեռ աշխարհի բարիքը չճաշակած, այսպես հիմար բանով պիտի կորչեմ... ինչքան աշխատեցի փորձանքից հեռու մնալ, չեղա՛վ, էլի, չեղա՛վ...

Մինչ ուշ գիշեր զառանցեց նա։

Բ.

Արևի ճառագայթները նեղլիկ լուսամուտից ներս էին թափանցել։ Մեջքին մի հաճելի խտաց զգալով, Իսահակ Արտեմիչը շուռ եկավ, հենվեց բարձին ու շաղված աչքերով զննեց սենյակը. գլխավերևը իր մեծադիր նկարն էր. մի պահ

մտքում համեմատեց այս ճաշակավոր նկարը և նկարչի ծաղրանկարը ու գլուխը վհատորեն շարժեց։

Երեկվանից շարադուշակ մտքերը հանգիստ չէին տալիս նրան։

— Ճի՞շտ է արդյոք, որ ասում են, թե կյանքում ամեն ինչ պատճառաբանված է,— փիլիսոփայեց նա.— ծանր հարց է. իսկ ինչո՞վ է պատճառաբանված իմ գոյությունը։ Նրա համար, որ գնամ այդ Արտաշեսի համար արտագրություններ անեմ...

Ծույլ-ծույլ հագավ նա զգեստները, լուսամուտին դրված կես բաժակ ջրով թրջեց դեմքն ու կրկին փռվեց անկողնին։

— Կյանքն անցողիկ է. իմաստուն է նա, ով ուրախ է անցկացնում իր կյանքը,— կրկին խորհեց նա,— լավ են ասել, բայց չեն ասել, թե ես, օրինակ, ինչո՞վ ուրախանամ, ինչո՞վ հետաքրքիր դարձնեմ իմ անցողիկ կյանքը. ի՞նչ կարող է ինձ հույզ ներշնչել այս դառն իրականության մեջ, այս անհրապույր շրջապատում...

Նորից նայեց իր նկարին։

— Հիմ-մարնե՛ր,— բարձրաձայն արտասանեց նա, ապա մտքում շարունակեց,— կարծես բավական չէ, որ օրական վեց ժամ թղթեր եմ գրանցում, հիմա էլ նստիր դրանց համար արտագրություն արա... բայց ի՞նչ կլինի իմ վիճակը, եթե ավելի խիստ վարվեն...

Առանց ազդանշանի ներս մտավ հարևանուհի Սանամը և, թեյամանը, որ բերել էր հետը, դրեց սեղանին։ Իսահակը ընդհատելով խոհերը, նայեց այդ կնոջ ժպտուն դեմքին և իր դիրքն անհարմար համարելով, վեր եկավ, կնոջը հրավիրեց նստել։

Սանամը քսանհինգամյա, սուրբ, կարմրախայտ դեմքով, գեղջկական պարզությամբ կին էր։ Մի քանի օր էր, ինչ նա իր ամուսնու հետ ապրում էր այդ բակում. ու երբ մի անգամ Իսահակը թեյ էր ուզել նրանից, կինն այլևս սովորություն էր դարձրել ու ամեն օր, առանց հիշեցման,

իբրև պարտականություն, մատուցում էր թեյը. Իսահակը կրկնեց իր ամեն օրվա խոսքը.

— Շնորհակալ եմ, տիկին, ի՞նչ նեղություն եք քաշում։

— Նեղությո՞ւն, ի՞նչ նեղության մասին է խոսքը,— ծիծաղեց կինը։

— Դե, չեմ ուզում ուրիշին բեռ դառնամ,— ասաց Իսահակը և նստեց Սանամի դիմաց։

Սանամը, որ ուշադիր զննում էր հարևանին, նկատեց, որ նա ընկճված է, ուստի խոսակցության նյութը փոխելու համար հոգատարությամբ հարցրեց.

— Ինչի՞ եք էդպես տխուր, հիվանդ հո չե՞ք։

— Այնպես էլի։

— Ո՞նց, խաթրիդ կպե՞լ են։

— Հե՛չ, կանցնի։

Իսահակ Արտեմիչը գլուխը քորեց և, հաղիվ զսպելով հորանջոցը, մի «օ՞ֆ» արձակեց։

— Է՜հ, Սահակ ախպեր, խաթրդ չմնա, հենց գիտես էս աշխարհիցը չես,— խոսեց Սանամը իր պարզ սրտի թեյադրանքով և շեշտակի նայեց Իսահակի աչքերին։

Իսահակը նույնպես նայեց. մի պահ նրանց հայացքները դիպան միմյանց, բայց Իսահակը անսովոր նման մոմենտների, շրմմացավ ու գլուխը կախեց։

— Ի՞նչ կա աշխարհում, որ աշխարհիցը լինեմ,— փոքրը լռությունից հետո ասաց Իսահակը։

— Ո՞նց թե,— զարմացած մեկ Իսահակին, մեկ էլ նրա նկարին էր նայում Սանամը։

Իսահակի մեջ տրամադրություն առաջացավ ավելի հանդգնամտորեն խոսել այդ կնոջ հետ, ուստի հարցրեց.

— Ասա, տեսնեմ, դուք, մարդ ու կնիկ, ի՞նչ եք հասկացել կյանքից, աշխարհից։

— Վա՜յ,— ծիծաղեց Սանամը,— չլինի՞, թե դու աշխարհից բեզարել ես. տնաշեն, աշխարհում էնքան բան կա հասկանալո՞ւ,— և ձեռքի համաչափ շարժումով այնքան

երկարացրեց «ո՞ւ»-ն, մինչև Իսահակ Արտեմիչը վերատին հայացքը հառեց նրա դեմքին։

Սանամը չէր դգում, թե այդ դիրքով ինքն ինչքան դուրեկան է դառնում. Իսահակը այժմ որոնում էր նրա հայացքը և երբ գտավ՝ մարմնով հաճելի դող անցավ ու ինքն էլ կարծես ակամա կրկնեց.

— Հասկանալո՞ւ։

— Բա ո՞նց։

— Իսկ ինչպե՞ս հասկանալ։

— Դե, ես էդքանը վարավորդ չեմ անում. այ, ասենք ձուն դնում ես հավի տակ. դիտես, որ հավին տաք տեղ պիտի պահես, լավ պիտի նայես, ժամանակին ջուր ու կուտ պիտի տաս... սպասում ես, թե երբ կլրանա քսանմեկ օրը. լրանում է. ճուտերը դուրս են գալիս, դու էլ ուրախանում ես։

— Էլ ի՞նչ։

— Այ, Ռուշանիս հետ, ասենք գնում ենք ման գալու. տեսնում ես մի տեղ մի նոր բան են սարքել, մի չոր տեղ ծառ են տնկել... մարդ ես, անցնում ես ծառի տակով, ճյուղերը դիպչում են դեմքիդ սիրտդ ուրախանում է։

— Դրանք չտես մարդու բաներ են,— կտրեց նրա խոսքը Իսահակը։

— Յ՞ա,— վիրավորված այդ նկատողությունից բացականչեց Սանամը։

— Իհարկե. առանց քեզ էլ ձվից վառեկ է դուրս գալիս, ծառն էլ իրան-իրան սամթը գտնում, բուսնում է. կամ թե էսօր նոր բան են սարքել, վաղն էլ կքանդեն. քու ինչն է ավելանում կամ պակասում դրանից. իսկ մարդը,— նա ձեռքը դրեց կրծքին,— մարդը սրանով է կենդանի, սա պիտի դատարկ չլինի. այստեղ պետք է մի բան լինի. իսկ մի՞ թե մեր չքաղաքը կարող է լցնել իմ սրտի ամայությունը։

— Շատ բարակ ես մանում. այ դրանից բան չեմ հասկանում,— ուսերը վեր քաշելով ասաց Սանամը։

— Ո՞նց հասկանաս,— ուրախացավ Իսահակը, որ Սանամը այլևս չի կարող հակաճառել իրեն։

Սակայն Սանամը, կասկածելով հարևանի առողջության վրա, հոգատար ձեռքով բռնեց նրա բազուկը և թեքվելով դեպի նա հարցրեց.

— Տաք հո չե՞ս։

Իսահակը անհանգիստ մի շարժումն արավ. Սանամի հպումից նրա շնչառությունն արագացավ։ Նա նայում էր Սանամի փափկիկ ձեռքին, որի միջոցով թվում էր, թե էլեկտրական հոսանք էր անցնում իր մեջ. նա իր գիտակից կյանքում, բնավ այդքան մոտ չէր նստել երիտասարդ կնոջ։ Զգում էր, որ իր սովորական անտարբերությունը դավաճանում է իրեն և վախենում էր, չլինի, թե մի անխորհուրդ արարքով վիրավորի կնոջ ընկերական զգացումը։ Բայց սառնասիրտ էլ չէր կարող մնալ, մանավանդ, որ Սանամի շունչը խառնվում էր իր շնչին. ճիգ գործադրելով, բազուկը մի կերպ ազատեց նրա ձեռքից ու հազիվ լսելի ձայնով ասաց.

— Չէ՛, առողջ եմ։

Սանամը կարծես չէր նկատում Իսահակի տագնապը և մտահոգ հարցեր էր տալիս նրա առողջության մասին։

— Սանա՜մ,— դրսից լսվեց մի առույգ ձայն։

Դա վերջ տվեց Իսահակի անսովոր կացությանը, իսկ Սանամը առանց դիրքը փոխելու ձայնեց.

— Ռուշա՜ն, ներս արի.—երևաց Ռուշանը. Սանամը շարունակեց,— հարևանն էսօր լավ չի երևում. տես, շայ էլ չի խմել։

Ռուշանը հաղթանդամ, զվարթագեմ երիտասարդ էր։ Նա, ինչպես և իր կինը շուտ էին մտերմանում մարդկանց. մոտեցավ, ձեռքը իջեցրեց Իսահակի մեջքին ու նստեց նրա մոտ, թախտին։

— Այ մարդ. ի՞նչ ժամանակ ես գտել հիվանդանալու։

— Չէ՛, եղբայր, հիվանդ չեմ. տրամադրություն է, էլի։

— Հա՜, էդ ոչինչ, կանցնի. իսկ ես,— ասաց Ռուշանը

և դվեսարկը հանելով մի ձեռքով բռնեց կնոջ թևը, մյուսով սեղմեց Իսահակի ուսը,— իսկ ես, էսօր շատ տրամադրված եմ...

— Լավ,— ժպտաց Սանամը,— ասա՛, դե, ասա՛։

— Էլ ինչ ասեմ, Սանամ ջան, էսօր հանձնաժողովը ընդունեց նոր ավարտածս շենքը և կառուցումը միանգամայն բավարար գտավ։

— Ճի՞շտ։

— Հապա,— և կնոջ ձեռքը մոտեցնելով իր դեմքին շարունակեց,— էնպես որ սրանից հետո կարող ես ինձ «դակչալ կառուցող» համարել. հանաք բան չիմանաս հա՞։

«Դակչալ կառուցող»,— մտմտաց Իսահակը և զննելով Ռուշանի բավականությունից փայլող դեմքը, հարցրեց.

— Կառուցո՞ղ, ի՞նչ կառուցող։

— Պահ, ի՞նչ հարց է դա. տուն կառուցող։

— Հասկացա,— ձեռքերն իրար շփեց Իսահակը և մեկ Սանամին էր նայում, մեկ Ռուշանին։

— Վաղը գնանք, ցույց տամ,— վրա բերեց Ռուշանը, դիմելով Իսահակին։

Իսահակը ձեռքը թափ տվեց ու կարծես ինքն իրան խոսեց.

— Տաշած քար, սվաղած տուն, հա՞. լա՞վ. ա՞յ, թե մարդ կարողանար իր սիրտն էլ այդպես տաշել, սվաղել... ուզածի պես սարքել...

Ռուշանը վարանոտ նայեց Իսահակին, և գլուխ չհանելով, թե նա ինչ է ուզում ասել, դարձավ կնոջը, բայց ոչինչ չկարահելով, ասաց.

— Դե, որ լավ գործ ես անում սիրտդ էլ մի տեսակ, ո՞նց ասեմ, Իսահակ Արտեմիչ, հա, քո ասածի պես, սիրտդ էլ սվաղվում է։

— Ա՜յ,— հանկարծ աշխուժացավ Իսահակը,— այդ է, որ չեք հասկանում ջահելներդ. տուն ես կառուցել, լավ ես արել, էլ ի՞նչ ես բերում կապում սրտի հետ... ինչքան բան

դնո պիտի տեսնես կյանքում. տե՛ս, տե՛ս, որ հասկանաս, թե բոլորն էլ ինչքան փուչ են ու դատարկ։

— Իսկապես, ի՞նչ է պատահել,— կասկածոտ հայացքով նայելով Իսահակին ասաց Ռուշանը, և անտեղի համարելով վիճաբանությունը, վեր ելավ ու ասաց.

— Ինչ ուզում ես ասա, Իսահակ, էսօր, դատարկ բաներն էլ, ինձ լիքն են երևում։

Գ.

Աշնանային կարճ օրը, մինչ Իսահակ Արտեմիչը իր համբրնթաց քայլով տուն հասավ, մութը պատեց։

Նրա դեմքն այլևս այնպես մռայլ չէր, ինչպես մի քանի օր առաջ։ Պատի թերթի հին համարը փոխարինել էին նորով. այլևս չէր տեսնվում իր ծաղրանկարը։ Արտաշեսն էլ ոչինչ չասաց անցած դեպքի մասին։ Կարծես ամեն ինչ դրանով վերջացրել էր և նա իրեն թեթևացած էր զգում ծանր մտապատկերներից։

Սենյակը մտնելով նա մեկնվեց թախտին, կիսախավարի մեջ սկսավ խորհրդածել։

«Ի՞նչ է եղել իմ կյանքը», հարցնում էր նա յուրովի. ի՞նչ է տվել ինքը կյանքին, ինչո՞վ է ապրել ու հուզվել։ Նա քրքրում էր իր անցյալը և մեկին մի անծայրածիր ամայություն էր տեսնում այնտեղ։

Նոր հարևանները, նրա մեջ, մինչ այդ իրեն անծանոթ հույզեր էին զարթեցրել։ Ինչքան էլ նախորդ օրը նրանք չհասկացան միմյանց, բայց և այնպես Իսահակ Արտեմիչը չի կարող մոռանալ Սանամի հոգատար վերաբերմունքը։

Չնայած, Սանամն ամեն օր գալիս էր, բայց այժմ, Իսահակ Արտեմիչը, կուզեր, որ նա ավելի շուտ գար, կրկին այնպես ջերմ ու կարեկից բռներ իր բազուկը։ Թեյի ժամանակ չէ՞ արդյոք... ինչո՞ւ անպայման թեյի սպասել. մի քիչ համարձակություն է պետք. քառասուն տարի սմքել է իր անվճռականությունից...

Նա նստում է սենյակից. կամացուկ թակում է հարևան լուսամուտն ու կանչում.

— Սանա՜մ. եթե նեղություն չէ...

Ու առանց խոսքն ավարտելու, պատասխանի էլ չսպասելով, գալիս ընկողմանում է թախտի բարձին։

Սիրտը թփրտում է, վախեցած թռչնի սրտի պես. քիչ հետո Սանամը ներս է մտնում աշխուժ շարժումով։

— Սահակ ախպեր, տա՞նն ես. դո՞ւ ծեծեցիր լուսամուտը, չէ՞։

— Այո՛, Սանամ. այսօր քիչ տկար եմ. անմեղ կատարվեց։

— Էլ ինչո՞ւ ես մթնում նստել։

— Քեզ եմ սպասում։

— Հա՞։

Սանամը վառում է լամպը. նա այդպես է հանկանում Իսահակին։

— Շնորհակալ եմ,— շտկվելով տեղում ասում է Իսահակը, զգալով, որ պակասում են բառերը այդ կնոջ հետ խոսելու համար։

Նա նայում է Սանամին, ծպպացնում է բերանը, որոճում է բառեր, բայց զգում է, որ նորից կորցրել է վճռականությունը։ Սանամը չիմանալով, թե ինչ է կատարվում Իսահակի ներսում, թեյի պատրաստությամբ է զբաղված։

— Նստի՛ր,— ասում է աղաչական տոնով Իսահակը, երբ արդեն Սանամը թեյը լցրել էր բաժակը,— նստի՛ր։

Եվ ցույց է տալիս թախտը։

Սանամը նստում է։

Իսահակը նայում է նրա թարմ դեմքին, զգում է մի դուրեկան բուրմունք, որ Սանամը բերել է իր հետ և այդ բուրմունքը արագացնում է նրա ծույլ արյունի հոսանքը։

— Վաղո՞ւց է, ինչ ամուսնացել եք,— հարցնում է Իսահակը։

— Չորս տարին շուտով կլրանա,— պատասխանում է

Սանամը և մազերի մի հյուսակն բերում է ծնոտի տակ ու տրորում մատների արանքում։

Իսահակը շփոթված է. թեյի անոթժակ չունի։ Սանամն իր վերջին շարժումով ավելի հետաքրքիր է դարձել։ Իսահակը նկատելիորեն հուզված է. ավելի մոտ է նստում նրան։

Սանամն անտարբեր է. իրեն խոսակցության նյութ ասում է.

— Թեյը սառում է։

— Թող սառի,— պատասխանում է Իսահակը և ձեռքն անհամարձակ մեկնելով, բռնում է Սանամի մատները, ավելացնելով,— տե՛ս, տաք չե՞մ։

Սանամը փոքր ստուգում է կատարում, վստահացնում է, որ ոչինչ չկա։

Սակայն Իսահակը էլ իրենը չէ. կենսաբույր կնոջ ներկայությունը զարթեցրել է նրա թմրած զգացումները, ինչ որ բան է պոռթկում նրա ներսում և նա դիմադարձ ուժ չունի։

Նա շփում է ճակատը և կրկին վերցնելով Սանամի ձեռքը շշնջում է.

— Ի՞նչ ջահել ես։

Սանամը, կանացի բնազդով, ինչ որ կասհում է, սակայն կարևորություն չտալով, ասում է.

— Հա, դե, միանգամից հո չե՞նք պառավի։

Իսահակը դողում է, ինչպես աշնան տերևը քամու առաջ։ Նա խոսում է.

— Սանամ, և՛ ջահել ես, և՛ սիրուն։

Ապա ձեռքը գցում է Սանամի մեջքովը ու շարունակում.

— Դու ինձ համար հրեշտակ ես, Սանամ. չոր ու դատարկ է եղել իմ կյանքը։ Դու իմ սրտին հարություն տվիր։

Եվ ինքնամոռացման մեջ, շրթունքները մոտեցնում է Սանամի հուզական դեմքին, չհամարձակվելով սակայն համբուրել։

Սանամը լռչանում է. կոահումն արդարանում է. այդ այլևս հիվանդի շարժումներ չեն։ Նրա դեմքը շառագունում է և նա, Խահակի ձեռքն հանդարտորեն ազատելով իր մեջքից, խոհուն շեշտով ասաց.

— Կնկանից ինչ հրեշտակ. թե հրեշտակ լիներ, մեկն էլ դու կունենայիր քո տանը։

Խահակն այդ ընդունեց իբրև հաճելի կատակ. նա սրտապնդվեց և անսովոր համարձակությամբ համբուրեց Սանամին։

Սանամը բարկացած ոտքի ելավ։

— Բա քեզ էդպես բան վայե՞լ է, Սահակ ախպեր։

Սակայն Խահակը չէր հանդարտվում, նա նորից բռնեց Սանամի ձեռքը և քաշելով դեպի իրեն մրմնջում էր անորոշ ու անկապ խոսքեր։

Սանամը նկատելով, որ իր մեղմ խոսքերը չեն ազդում և ձեռքն էլ հեշտությամբ չի կարող ազատել, խոսեց ցածր, բայց հատու տոնով.

— Անամո՛թ. բռնած գործին մտիկ. էդպե՞ս ես հարեվանությունն անում, հա՞, թո՞ւհ։

Եվ ուժգնությամբ հրելով Խահակին, դուրս ելավ, դուռը շխկացնելով ետևից։

Դ.

Խահակը չիմացավ, թե ինչպես հեռացավ Սանամը։ Անծանոթ հուզումի դողը տեղի տվեց վախի արտասովոր ցնցումների. նա մի կերպ դուռը փակեց, փռվեց անկողնին և առանց որևէ շարժումի կծկվեց տեղում։

Ինչքան մնաց այդ դիրքում չգիտեր, բայց երբ քիչ հանդարտվեց նստեց անկողնում ու գլուխն առավ ափերի մեջ։

Ի՞նչ վայրենական զգացում էր, որ այդ աստիճան մոռացավ ինքն իրեն։ «Ախ, ինչո՞ւ ես այսպես անճարակ եղա,— մտկտում էր նա,— ինչո՞ւ բոլորը խուսափում են ինձնից»։ Եվ ապա կարծես խոսելով մի ուրիշի հետ մրմնջ-

ջում էր՝ «ի՞նչ իրավունքով դու մտնում ես ուրիշի բախտավորության առագաստը. հիմար, ո՞վ քեզ ներս կթողնի։ Ա՜սա՛, դու որ քայլելիս ստվերիդդ անգամ շփոթվում ես, կարո՞ղ ես դիմագրավել այն ցասումը, որ զարթեցրիր քո դեմ. Սանա՜մ... Ռուշա՜ն... ինչի՞ն վստահելով դու ձեռք մեկնեցիր նրանց զգացումներին»։ Ռուշա՜ն,— եթե նա իմանալով այդ ամենը, զայրացած ներս ընկնի, ի՞նչ է լինելու իր վիճակը. դժբախտ մարդ, հազիվ էիր ազատվել հիմնարկի փորձանքից, ի՞նչ խելք էր քո խելքը, որ այս նոր փորձանքի մեջ ընկար։

Նա երկար զառանցեց, ապա ելավ կանգնեց սենյակի մեջտեղը, զննեց իրեն, ապա նայեց այնտեղ, ուր քիչ առաջ Սանամն էր նստած. ոչինչ չէր մնացել Սանամից, բացի նրա անունից ու նրա զայրագին խոսքերից, որն արձագանքեց նրա մթամած ուղեղում. նա ծունկի եկավ հատակին և, գլուխն ափերի մեջ առնելով, հեկեկաց.— «Սանամ, անիրավ Սանամ, ինչո՞ւ կրակ գցեցիր դու իմ սիրտը, եթե այսպես անորոշ վիճակում պիտի թողնեիր»։

Իսահակը ջղաձգվում է. քրտինքը պատել է ողջ մարմինն. մի բութ ցավից աչքերը մթնում են։ Գոնե այս անգամ բախտը ժպտար, գոնե այս անգամ կյանքից մի շողք ընկներ նրա վրա... բայց ո՜չ, իրեն ոչինչ ավելին հարկավոր չէ. Սանամ, անհիշաչար եղիր, այս դեպքը անցողիկ մղձավանջի պես ջնջիր մտքիդդ և Իսահակին նոր ցավեր մի պատճառիր. նա չի կարող դիմանալ։

Նա սառած աչքերը գամում է մի կետի. անցնում են րոպեներ. ահա՛, այնտեղ, պատի ֆոնին գծագրվում է Սանամի կերպարանքը. նա շար է ու անկամ. Իսահակը աչքերը փակում է... բայց չէ, պատկերը փոխվեց. Սանամը հասկացել է Իսահակին. նա նայում է իրեն մեղմ, դուրալի, ինչպես այն լավ վայրկյաններին։ Նա մազերի հյուսկենը կրկին քաշել է ծնոտի տակ, սկսել է իր կախարդիչ խաղը... Իսահակը նրա ականջին շշնջում է մինչ այդ չարտաբերված խոսքեր. ա՜յ, հիմա դու լավն ես, բարի... Քառասուն տար-

վա՛ մեջ դու միակ կինն ես, որի առաջ ծունկի է իջել Իսահակը, մի՞թե դու պիտի արհամարհես նրա զգացումները. չէ՛, իհարկե, դու հավատարիմ կմնաս այն զգացումին, որը զարթեցրիր Իսահակի մեջ... Այո՞, արդեն ժամա՞ն ես. չէ, ի՞նչ ժամ. նա մոռացվել է, տե՛ս, այտերն էլ ուռցրեց՝ «թո՞ւհ», կաց, մի գնա, գոնե Ռուշանից ծածուկ պահիր այս ամենը։ Նա, բազկատարած կամենում է փարվել նրան, սակայն մի շփկոցից սթափվում է։

Լամպը սեղանից ընկել է հատակին, ապակին փշրվել է ու նավթը բռնկվել։

Իսահակը սարսափից շոած աչքերով, նայում է հետզհետե ծավալվող բոցին և թակարդ ընկած գազանիկի պես ցատկռտում է սենյակում և չի կարող որոշել, թե ի՞նչ պետք է անի հրդեհը հանգցնելու համար։

Բոցը ընդդիմադիր ուժ չունենալով ծավալվում է. այրվում են գետնին եղած մի քանի լաթեր. կրակն լեզուն մոտենում է սեղանին ու թախտին։ Իսահակը այլևս ելք չգտնելով, մղվում է դեպի դուռը, զղջացող ձեռքերով փնտռում է բանալին, սակայն չգտնելով, սկսում է հարվածել և անիմաստ գոռում է։

Սենյակից դուրս ելնելու անարդյունք ճիգերը, նրան հուսահատեցնում են. երբ շուռ է գալիս դեպի թախտը, դուռն ազմուկով շրջան է անում կրնկի վրա։

Իսահակը ետ է դառնում, փորձում դուրս փախչել, սակայն Սանամի և Ռուշանի ներկայությունը կարկամեցնում է նրան. նա կորցնում է հավասարակշռությունը և ընկնում է հատակին։

— Ի՞նչ փորձանք է սա,— լսվում է նրա մորմոքուն ձայնը,— մի կողմից կրակն է սպառնում, մյուս կողմից Սանամը ու Ռուշանը։ Հավատացեք, Իսահակը չար մտադրություններ չունի. նա մեղավոր չէ, նրան միշտ սխալ են հասկանում. նա պատրաստ է հեռանալ, կորչել այստեղից, միայն թե նրան չխայտառակեք աշխարհում. ո՞հ,

գթացեք. չէ՞ որ երեկ դուք ասում էիք, թե ես շատ բան այնպես չեմ հասկանում, ինչպես պիտքն է։

Սանամն ու Ռուշանը, անուշադիր դեպի Իսահակի զառանցանքները, զբաղված էին հրդեհով, որը և քիչ հետո հանգցրին՝ մի քանի նամ փալաս գցելով վրան։

— Խեղճը, երևի հիվանդ է,— ասաց Ռուշանը կարեկցությամբ։

Եվ Սանամի հետ մոտեցան ու զառանցանքների մեջ տչորվող Իսահակին տեղավորեցին անկողնում։ Ռուշանը նրա զգեստները հանեց։ Սանամը շոյեց հիվանդի գլուխը, վերմակը խնամքով ծածկեց վրան, ապա բռնեց նրա բազուկը, մի քանի րոպե պահեց իր ձեռքի մեջ ու դառնալով Ռուշանին ասաց.

— Մենակ մարդու դրությունն էլ այս է, էլի։

Իսահակը, սակայն գալարվում էր. թվում էր, թե բռնված է չարկամ ոստիններից, որոնք ով գիտե, թե դեռ ինչ տանջանքների պիտի ենթարկեն իրեն։

— Ի՞նչ, ի՞նչ եք ուզում,— շարունակում էր զառանցել Իսահակը,— ինչո՞ւ եք այդպես անգութ։ Հավատացեք, դեռ ոչ ոք ինձ չի հասկացել, ոչ ոք... Հանուն ձեր խղճի, հանուն ձեր սիրո, միայն այս անգամ թողեք... չե՞ք լսում... դե, բավական է, տվեք ինձ իմ մատյանները. նրանք են իմ հավատարիմ ընկերները. նրանք ձեզ պես անգութ չեն. նրանք խիղճ ունեն. նրանք լսում են ինձ...

1928
Երևան

ԳՈՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

ԴԼՈՒԽՈ ՍՈՒՍԱՆԵՆ

Քաղաքային այդուց լավող նվագի ձայնը դեպի իրեն էր գրավում նորանոր հանդիսականներին։

Ցերեկվա տոթից հոգնած քաղաքացիներից ոմանք այգու զովասուն ծառուղիներում զբոսնում էին, ոմանք էլ նըստած նստարաններին, լուռ դիտում էին ծառերի սաղաթների սվսվոցը։

Ամառային այդ երեկոն ոչնչով չէր տարբերվում Երևանի ամառային մյուս երեկոներից, այն բացառությամբ, որ այսօր Մասիսից փչում էր մի մեղմ քամի և դա առանձնապես հաճելի էր դարձնում երեկոն։

Ժամի իննին այդի մտան երեսունի մոտ մի կին և քսանն անց մի աղջիկ։ Կինը հագել էր կապույտ մետաքսից շրջազգեստ, ոտքերին ուներ սև, պապզոն տուֆլիներ, գլխին փետրավոր մի գլխարկ. աղջիկն ավելի պարզ էր հագնված. նա գլխարկ չէր ծածկում. երկճյուղ մազերը խընամքով հյուսած՝ հանդարտ օրորվում էին նրա շարժումներից, դեմքն ուներ հասունացող աղջկա լուրջ արտահայտություն. նա ուշադիր լսում էր ավագ ընկերուհուն, որն անընդհատ խոսում էր։ Երևում էր, որ զրսի կյանքը նրա համար դեռ այնքան էլ սովորական չէր դարձել, որովհետև հենց որ մեկն ու մեկը ցանկանում էր ուշիկ նայել նրա աչքերին, նա գլուխը խոնարհում էր ու հպվում ընկերուհուն՝ կարծես իրեն հանձնելով նրա պաշտպանությանը։

Մի քանի անգամ ծառուղիներով հետ ու առաջ շրջեցին. աղջիկը նկատելով մի ազատ նստարան, ասաց.

— Սոնա, վերջապես մի ազատ տեղ գտանք. արի՛, նստե՛նք։

— Է՜հ, Մարո,— սրտնեղեց Սոնան,— կարծես չահել աղջիկ չլինես. ի՞նչ է այդպես շուտ հոգնեցի՞ր։

Մարոն չառարկեց. միայն նրա դեմքը թեթև շառագունեց և նա շարունակեց զրոսանքը Սոնայի հետ։

Կատարելով եռ մի շրջան, նրանք ուզում էին թեքվել դեպի փողային նվագախմբի էստրադան, երբ նրանց դեմը ելավ մի երիտասարդ։ Նա մտերմորեն բարևեց Սոնային, ամուր սեղմեց նրա աջը, ապա դարձավ դեպի Մարոն։ Աղջիկը անհամարձակ շարժումով, ձեռքն անկամ մեկնեց երիտասարդին։

Սոնան խեթ նայեց Մարոյին և կարծես ուզում էր ասել, ինչու այդպես օտարոտի ես, չէ՞ որ անցյալ օրը կինոյում ձեզ ծանոթացրի միմյանց, բայց բարվոք համարեց միայն ասել.

— Ինչ լա՜վ, որ հանդիպեցինք քեզ, Լևոն։

— Ես էլ շատ ուրախ եմ այս հանդիպմանը, բայց տե՛ս, կարծես այդ այնքան էլ հաճելի չէ Մարոյին։

— Այդպես մի ասիր, Լևո՛ն,— հարեց Սոնան։

— Դե, Մարոն ինձ բանի տեղ չի դնում,— ուսերը վեր քաշելով խոսեց Լևոնը։

Մարոն նայեց երիտասարդին, նրա պիրկ, ոսկրոտ դիմքին ու անմիջապես գլուխը կախեց։ Նա չգիտեր Լևոնը հեգնում է, թե իրոք, ինքն իրեն այնպես է պահում, որ նա այդպիսի ապավորություն է ստանում իր վարմունքից։

Այժմ, երեքով, նրանք նորից մի քանի պտույտ կատարեցին ծառուղիներում. Լևոնը, խոսքերն ուղղելով Սոնային, պատմում էր իր կյանքից զանազան դեպքեր. առանձին հաճույքով նա պատմում էր այն մասին, թե ինչպես երեք շաբաթ առաջ իր առաջարկի հիման վրա, այն հիմնարկից, ուր ծառայում էր ինքը, երկու հոգու ազատել էին աշխա-

տանքից, իբրև անբարեհուսա մարդկանց, որոնք չէին ըմբռնում նոր կյանքի առանձնահատկությունները և չէին վերակառուցվում։

— Այդ մարդիկ, որոնք կրում են հնի մնացորդները չեն կարող պիտանի լինել նորի կառուցման համար,— եզրափակեց իր խոսքը նա, համարյա գոռոցով, որովհետև մոտեցել էին փողային նվագախմբի էստրադային և նվագի ուժեղ ձայնի տակ նա ուզում էր լսելի դառնալ իր ունկընդիրներին։

Չնայած, Լևոնը, այդ ամենը պատմում էր հաճախ գիմելով Սոնայի հավանությանը, բայց պատմում էր Մարոյի համար, իսկ Մարոն, թեև երկրորդ անգամն էր հանդիպում Լևոնին, սակայն Սոնայից շատ բան էր լսել նրա մասին։ Իսկ Սոնան, վերջերս, ամեն օր Մարոյին ներշնչում էր, որ նա հասած աղջիկ է և լուրջ կերպով պիտի մտածի իր ապագայի մասին. այժմ Մարոյի վրա բազմաթիվ աչքեր կան, և նա ամեն նայողին պիտի ուշադրություն չդարձնի։ Սոնան ասում էր այն ամենը, ինչ կարող էր հրապուրել երիտասարդ աղջկան։ Եվ մի օր էլ նա հայտնեց, որ Մարոն շատ է դուր եկել մի երիտասարդի, որն արդեն անուն ունի քաղաքում. թատրոնում նրան միշտ առաջին շարքում կարելի է տեսնել, իսկ կինոյում՝ օթյակում։

Մարոն չէր կարող ասել, թե տհաճությամբ է լսում Սոնային, բայց ընությունը նրան համեստ էր ստեղծել և ամեն մի խոսք, որ վերաբերում էր նրա անձնականին նա ընդունում էր ամոթխածությամբ։ Մանավանդ նրան անսովոր էր տղամարդուց իր հասցեին լսել որևէ երկդիմի խոսք. այդ պատճառով էլ նա երկար ժամանակ չէր կարողանում իրեն հաշիվ տալ, թե ինչպես է պահում իրեն, որ ըստ Լևոնի, ինքը նրան բանի տեղ չի դնում։

Քիչ անց Լևոնը Սոնային ու Մարոյին հրավիրեց այգու ամառային ճաշարանը ընթրիքի։ Սոնան համաձայնեց, բայց Մարոն ոտքը կախ գցեց. նա հասարակական վայրերում, այն էլ գիշերվա ժամերին, երբեք չէր ընթրել. ու-

զում էր ասել, թե անհարմար է, չի կարող ընդունել Լևոնի հրավերքը, բայց Սոնան այս անգամ արդեն կշտամբող հայացքով նայեց նրան և Մարոն հասկանալով այդ հայացքի իմաստը՝ լուռ ենթարկվեց նրան։

Երբ նստեցին մի բոլորակ սեղանի շուրջը, Մարոն մի գոլունի հայացքով նայեց շուրջ կողմը և գլուխը կախեց. չլինի՞, թե հանկարծ մի ծանոթ հանդիպի. ի՞նչ գործ ունի ինքն այդտեղ, երբ արդեն ժամը մոտենում է տասնմեկին, և երբ ինքը սովորաբար այդ ժամին արդեն ծրագրել էր իր վաղվա անելիքը մանկապարտեզում և պատրաստվում էր քնել։ Ճիշտ է, այժմ, նա ամառային արձակուրդի մեջ էր և շատ անելիք չուներ, սակայն անսովոր շրջապատը ճնշում էր նրան։

Մինչ այդ, մատուցողը բերեց դանակներ, պատառաքաղներ, ապա հաց, պանիր բուսեղեն, և հայտնեց որ կոտլետներն էլ շուտով պատրաստ կլինեն։ Երբ Լևոնի և Սոնայի քանիցս սիրալիր մղումներից հետո, Մարոն դանակն ու պատառաքաղը ձեռն առավ մի բան վերցնելու, անզգուշությամբ դանակը վար գցեց. նա բոլորովին շփոթվեց. Լևոնը վերցրեց դանակը, մի կողմ դրեց և իր դանակը, որ դեռ չէր գործածել առաջարկեց Մարոյին։ Բայց նկատելով Մարոյի վարանոտ շարժումը, ինքը կտրեց պանիրը և, մի կտոր դնելով Մարոյի ափսեում, ժպտալով ասաց։

— Ձեր մատները շափազանց նուրբ են այսպիսի գործի համար. թույլ տվեք ձեզ սպասարկել։

Մարոն դարձյալ չհասկացավ, Լևոնը հեգնում է, թե ուզում է մի հաճելի խոսքով իր սրամտությունը բացել, միայն կմկմաց.

—Ո՛չ, ո՛չ, շնորհակալ եմ. ես կարող եմ։

— Ի հարկե կարող եք. այդ չէի կասկածում ասել. դուք այնպիսի... ինչ ասեմ... հմայք ունեք, որ ձեզ համար ամեն ինչ կուզեի ինքս անել։

Սոնան մանրիկ ժպտաց, իսկ Լևոնը նկատելով, որ Մարոյի դեմքով ևս վերջապես ժպիտ սահեց՝ ավելի ոգևորվեց։

— Ձեր զբաղմունքը թելադրում է ձեզ սիրել երգը, պարը։ Ինչպե՞ս դուք եկան ձեզ այսօրվա պարերն էստրադայում։

— Շարժումները լավ չեն մշակված,— պատասխանեց Մարոն։

— Ա՜յ, աքանչելի ասացիք. ի՞նչ նուրբ դիտողություն. գրացիան էր պակաս, գրացիա չկար... ազնիվ խոսք իմ ճաշակի օրիորդ եք։ Ես էլ այդ նկատեցի. մոքերի որպիսի՜ զուգադիպություն։

Սոնան աշխատում էր շմիջամտել նրանց խոսակցությանը, միայն շուտ-շուտ բացում էր ուեդիկուլը ու նրա կողքին փակցրած փոքրիկ հայելու մեջ դիտում էր իր դեմքը։

Երբ նրանք դուրս եկան այգուց, արդեն ժամի տասերկուսն էր։ Լևոնը ուղեկցեց Սոնային ու Մարոյին մինչև նրանց բնակարանը։ Հրաժեշտ տալիս, Լևոնը սեղմեց մեկի, ապա մյուսի ձեռքը, գլուխը խոնարհեց ու ասաց.

— Եթե ձեզ տհաճություն չեմ պատճառում իմ առաջարկով, ապա խնդրում եմ վաղը, ժամը ութին, սպասեք ինձ... ցուցադրվում է նոր կինո նկար. միասին կդիտենք։

Սոնան ասավ՝ «Շատ զգացված եմ», իսկ Մարոն, գլխով միայն մի թույլ շարժում արավ, որ Լևոնը չհասկացավ, դրական իմաստ ուներ, թե բացասական։

ԴԼՈՒԽԽ ԵՐԿՐՈՐԴ

Սոնայի բնակարանը բաղկացած էր երկու սենյակից. մի մեծ սենյակը նա զբաղեցնում էր ամուսնու հետ. ծալովի շիրմայով առանձնացրել էր մահճակալները, իսկ սենյակի մյուս մասում դրված էր ճաշասեղանը, պահարանը և մի քանի աթոռներ։ Ամուսինը մի հիմնարկում աշխատում էր հրահանգչի պաշտոնով և, գործի բերմամբ, հաճախ, շաբաթներով մեկնում էր շրջանները։ Ունեցել էր մի երեխա, որը երկու տարեկան հասակում մահացել էր թոքերի բորբոքումից։ Այնուհետև այլևս ծննդաբերություն չունե-

ցավ. սկզբում տանջվում էր դրա համար, հետո վարժվեց իր վիճակին և այժմ, արդեն, չէր էլ մտածում այդ մասին, քանի որ այսպես ավելի ազատ էր զգում իրեն ու առանց հոգսի, ապրում էր ցանկացած ձևով։

Մյուս, փոքր սենյակը, որոշ նկատառումներով, (վախենալով բնակարանային խտացումից), նա վարձով էր տվել Մարոյին։ Հինգերորդ տարին էր, որ Մարոն ապրում էր այդ սենյակում։ Նա եկել էր գյուղից. այնտեղ վերջացրել էր յոթնամյակը. ծնողները ցանկացել էին, որ աղջիկը միջնակարգ դպրոցն ավարտի քաղաքում։ Գալով քաղաք, մի ծանոթի միջոցով, կապվել էին Սոնայի հետ և նա սենյակը տրամադրել էր Մարոյին։ Առաջին երեք տարիները, Մարոյի մայրը, ամեռր, երբ համեմատաբար ազատ էր գյուղական աշխատանքից, գալիս էր աղջկա մոտ, դյուղական տան խնամքը թողնելով մեծ հարսին։ Երբ Մարոն երկու տարի առաջ ավարտեց միջնակարգ դպրոցը, քաղաքում էլ անցավ աշխատելու մանկապարտեզներից մեկում։ Նա ցանկանում էր շարունակել ուսումը համալսարանում, բայց առաջին տարին ուզեց հանգիստ տալ իրեն, երկրորդ տարին էլ հիվանդացավ և ահա՛, այս տարի աշնանը նա հույս ուներ իրագործել իր մտածածը։ Ծնողները համոզվելով, որ աղջիկն արդեն այնքան է հասունացել, որ կարող է ինքն իրեն կառավարել, դեմ չէին, որ նա շարունակի ապրել քաղաքում, մանավանդ, որ համալսարանական աղջիկ ունենալու հեռանկարը շոյում էր նրանց ծնողական ինքնասիրությունը, չնայած մայրը իրեն հանգիստ չէր զգում և շուտ-շուտ քաղաք էր գալիս աղջկան տեսության. նա հաճախ Սոնային խնդրում էր, որ աչքը լավ պահե աղջկա վրա և Մարոյին էլ միշտ խրատներ էր տալիս, թե տե՛ս, քեզ այնպես պահիր, որ գեղացիների մոտ ամոթով չմնանք, դոստ ու դուշմանի երեսին պարզերես նայենք։

Մարոն չէր հաղթահարել գյուղական աղջկա ամոթիածությունը. նա դպրոցն ավարտելուց հետո շարունակում էր կալը մի քանի ընկերուհիների հետ, որոնք հաճախ այցե-

լում էին նրան և ինքն էլ նրանց էր գնում այցի։ Կապ էր պահպանում նաև դպրոցական մի ընկերոջ, Վարդկեսի հետ. բայց նրան հանդիպում էր միշտ ընկերուհիների շրջապատում, իսկ երբ Վարդկեսն ամառները գնում էր պիոներական ճամբար՝ այնտեղից նամակներ էր գրում Մարոնին դպրոցականների կյանքի և բնության դեղեցկությունների մասին։

Մի քանի օր առաջ նա հանդիպել էր Լևոնին։ Եվ ահա՛, այսօր էլ բաժանվելով նրանից դեռ չէր կարողանում ինքն իրեն դանել։ Միջանցքում Սոնան առաջարկեց գնալ իր սենյակը, բայց Մարոն շատ էր ուզում մենակ լինել, այդ պատճառով էլ ուշադրություն չդարձնելով, որ Սոնան կարող է վիրավորվել՝ գլուխը բացասաբար թափ տվեց ու մրտավ իր սենյակը։

Հենց որ լույսը վառեց, նկատեց դռան մոտ ընկած մի ծրար։ Պոստատարը նրան հասցեագրված նամակները դռան արանքից ներս էր գցում։ Մարոն անմիջապես վերցրեց նամակն ու բացեց։ Գրում էր Վարդկեսը, Ծաղկաձորից, ուր այժմ նա զբաղված էր ճամբար գնացած դպրոցականների ֆիզիկական դաստիարակությամբ։ Վարդկեսը, նկարագրելով իր առօրյան, հայտնում էր, որ այս քանի օրս Ծաղկաձորում հանդիպել էր իրենց դպրոցական ընկերներից Արփիկին և նրա հետ շատ բաներ էին վերհիշել. «Ի՞նչ քաղցր են դպրոցական կյանքի հուշերը,— գրում էր Վարդկեսը։ Արփիկն հիշեցրեց ինձ այսպիսի դեպք։ Մեր դասարանում մի աղջիկ ունեինք՝ Նազիկը, որ անուշադիր էր դեպի դասերը։ Չորրորդ դասարանում սովորելիս, ուսուցիչը մի օր նրան հարցրեց՝ հապա Նազիկ, շաղկապով մի նախադասություն ասա։ Նազիկը լավ չսեց, թե ինչ էր, աշխուժ պատասխանեց՝ հողում տոզեց շաղկամը։ Բոլորս ծիծաղեցինք։ Ուսուցիչը, որ խիստ մարդ էր, նույնպես չկարողացավ զսպել իրեն և փոթկաց»։

Մարոն մի քանի անգամ կարդաց այդ տեղը և ինքն էլ սրտանց ծիծաղեց, ապա լույսը հանդցրեց ու մտավ անկողին։

Թեք ընկած, նա լուսամուտից դուրս էր նայում. անցուգարձը դադարել էր, միայն փողոցի մայթերի կողքից հոսող առուների քչքչոցն էր լսվում։ Մարոն ունկնդրում էր այդ քչքչոցը ու հիշում գպրոցական ընկերներին։ Վարդկեսի հետ նա շատ անգամ էր դաս պատրաստել։ Ե՛վ այն ժամանակ, և՛ ավարտելուց հետո, նրանց զրույցի նյութը չէր դուրս գալիս գպրոցական կյանքի շրջանակներից։ Նույն նյութին էին վերաբերում նաև Վարդկեսի նամակները։

Վերջին երկու տարում Մարոն շատ էր փոխվել։ Եվ ամառվա այս ջերմացնող արևի տակ, նա վաղորդյան ցողով շաղված վարդի նման փերթ-փերթ բացվում էր։ Այդ առանձնապես նա զգում էր Լևոնի հետ հանդիպելուց հետո։ Մի՞թե արդեն սկսվում է նրա կյանքի նոր շրջանը, որի մասին վերջերս այնքան խոսում էր Սոնան։ Ինչպիսին կլինի այդ նոր շրջանը, նա չգիտեր, և դրա համար էլ տագնապով լցված էր նրա հոգին։ Դպրոցից հետո, ընկնելով մանկապարտեզ, կարծես ինքն էլ մանուկ էր դարձել և ահա՛, այժմ, Լևոնը իր հայացքներով ու խոսքերով, այլ կյանքի էր կոչում նրան։ Ե՛վ չէր ուզում հանդիպել Լևոնին, սակայն հրաժարվել էլ չէ՛ր կարողանում. մանրամասն չէր հիշում, թե ինչեր ասաց Լևոնն իրեն ընթրիքի ժամանակ, բայց այն, ինչ մնացել էր իր հիշողության մեջ, այն է «Հմայք ունեք», այդ հանդիպում չէր տալիս իրեն։ Արդյոք ի՞նչ նոր բան կասի վաղը Լևոնը։ Եվ չհարողանալով գլուխ հանել իր կյանքի համար սկսվող նոր շրջանի հարցերից, դլուխը թաղեց բարձերի մեջ և ուզեց քնել։

Բայց երկար ժամանակ նա չէր կարողանում հանգարտվել. մի պահ մտածեց, այդ ամենից ազատվելու համար, հենց վաղն ևեթ գնալ գյուղը, ծնողների մոտ, սակայն խկուլն էլ այդ մտքից հրաժարվեց։ Առուն շարունակում էր խոխոջել։ Ինչքան ցանկանում էր մոռանալ Լևոնի «Հմայք ունեք» խոսքերը, չէր լինում։ Ստվերի նման, Լևոնն իր խոսքերը շրթունքներին, երազի մեջ էլ հետևում էր նրան։

Հետևյալ օրը, երեկոյան, երբ արդեն երկինքն աստղազարդվել էր, մի զույգ, թողնելով քաղաքի կենտրոնական լուսավոր և մարդաշատ փողոցը, անցավ խաղաղ ու ստվերոտ մի փողոց։

Միայն այդտեղ աղջիկը թողեց, որ տղան իր հետ քայլի թևանցուկ։ Մարոն ու Լևոնն էր այդ զույգը. նրանք նոր էին դուրս եկել կինոյից։

Կինոյում նրանց հետ էր նաև Սոնան. բայց հենց որ նրանք նկարը դիտելուց հետո դուրս եկան՝ հանդիպեցին Սոնայի ամուսնուն, որը վերադարձել էր գործուղումից. Սոնան հրաժեշտ տվեց զույգին ու ամուսնու հետ տուն գնաց։

Լևոնը Սոնայի հեռավոր ազգականներից մեկի որդին էր. ազգականները վերջին տարիներում համարյա թե չէին հանդիպում միմյանց։ Ինչ որ տրիթով գժտվել էին։ Բայց Սոնան դեմ չէր նրանց հետ վերահաստատել իր բարեկամությունը։ Եվ երբ, մի օր, Սոնան, փողոցում հանդիպեց Լևոնին, նրան տուն հրավիրեց. Լևոնը չմերժեց։ Հենց այստեղ էլ նա տեսավ Մարոյին և ուզեց մտերմանալ նրա հետ։ Թե ինչ մտադրություններ ուներ Լևոնը Մարոյի նկատմամբ, այդ չէր հետաքրքրում Սոնային։ Բավական էր, որ Լևոնը գոհ էր իրենից։

Եվ ահա՛, այսօր, վերջապես, Լևոնը Մարոյի հետ էր։ Նա հավել էր Մարոյի թևին ու ինչ որ փսփսում էր նրա ականջին։ Հասնելով Նորքի սահմանը, Լևոնն առաջարկեց Մարոյին նստել մի քարի վրա։ Մարոն լուռ համաձայնվեց։ Նա ունկնդրում էր Լևոնին, որն անընդհատ խոսում էր։

Իսկ Լևոնը խոսում էր ամեն ինչի մասին, և ամենից շատ այն մասին, որ Մարոյին տեսնելուց հետո նա ամեն ինչ մոռացել է և շարունակ, քնած թե արթուն, նրա պատկերն ունի իր աչքի առջև։

— Մարո՛,— կրկին խոսեց Լևոնը,— չե՞ս հավատում,

որ աշխարհում ամենալավ բանը սիրելն է. ասա՛, մի բան ասա. ուզում եմ լսել քո ձայնը։

— Դե՛, չեմ իմանում,—կմկմում էր Մարոն, հայացքն հառած մի պսպղուն աստղի։

Մարոն չէր կեղծում. նա այն բնավորություններից էր, որոնք երկար ժամանակ դեռ կյանքին նայում են երազուն աչքերով և ամեն ինչ երևում է խորհրդավոր ու մշուշոտ։ Գոնվելով ծնողներից հեռու, նա իրեն ազատություն չէր տվել, վախենալով որ չինի, թե անպատեհ մի վարմունքով նրանց մտահոգություն պատճառի։ Լսելով Լևոնին, ներքնապես բավականություն էր զգում, որ ինքն այնքան արժանիքներ ունի, որ նրա աչքերի առջևից չի հեռանում։ Եվ այդ զգացումը նրան երախտապարտ էր դարձնում այդ երիտասարդին։ Լևոնն հասկանում էր, որ Մարոն հաճույքով ն լսում իր խոսքերը. այդ ավելի էր ոգևորում նրան և նա չէր դադարում խոսելուց։

Այո՛,— մտածում էր յուրովի Մարոն,— ամեն ինչ այսպես է սկսվում. պարզ դիշեր, լուսին ու աստղեր. բնություն, կյանքի պահանջներով լցված երիտասարդ, սիրո խոսքեր, որոնք հնչում են նրա ականջին այնպես, ինչպես կարկաչահոս առվի ձայնը։ Այս մտքերի մեջ էր Մարոն, դր Լևոնը դեմքը մոտեցրեց նրան և համբուրեց նրա շրթունքները։

Մարոն հանկարծակի եկած զլուխը հետ ավեց և քիչ էր մնում քարի վրայից ցած ընկնի, բայց Լևոնը նրան պահեց։ Այդ պահին ոչ ոք չկար շրջապատում, բայց Մարոյին թվում էր, թե անհամար աչքեր իրենց են նայում և հատկապես իրեն, Մարոյին. այնքա՞ն անհարմար զգաց նա, որ արցունքները դուրս ժայթքեցին աչքերից։ Լևոնը նկատեց այդ և հոգատար ձայնով ասաց.

— Մարո, մի՞թե ես մի անհաճելի բան արի. ների՛ր ինձ։

Մարոն լուռ էր։

— Մարո,— Գրկեց Լևոնը և նկատելով, որ Մարոն

այլևս չի խուսափում իրենից, նորից համբուրեց նրան, շշնջալով,— ես գիտեմ, դրանք սիրո, ուրախության արցունքներ են. վերջապես կարող եմ հույս ունենալ, որ իմ Մարոն դեպի ինձ անտարբեր չի լինի։ Այդպես չէ՞, ասա՛, ասա՛։

Այդ բացատրությունը թեև դուր եկավ Մարոյին, բայց զգում էր, որ այլևս երկար չէր կարող Լևոնի հետ նստած մնալ քարին, այդ անշունչ վիայիս։ Երբ ուզեց բարձրանալ, տեսավ որ թուլացել է, կարծես մի ծանր աշխատանքից հոգնած։ Լևոնը օգնեց նրան ոտքի կանգնելու։

Նոր էր զգում Մարոն, որ ամբողջ դեմքն այրվում է։ Երբ հասան Աբովյան փողոցը, ուր լուսերեն առատ էին, Մարոն աշխատում էր արագ անցնել լապտերների մոտից, որ ոչ ոք չնկատի իր շփոթությունը։

Հասնելով Մարոյի բնակարանին, Լևոնը ցանկացավ նրան առաջնորդել սենյակ, բայց Մարոն «ոչ, ոչ» ասելով, առանց նույնիսկ հրաժեշտ տալու Լևոնին, իրեն գցեց սենյակը։

Եվ նա ժամերով գլուխը թաղած բարձերի մեջ մտածում էր, թե ի՞նչ է կատարվում իր հետ։ Անծանոթ զգացումից ցնցվում էր ողջ էությամբ, և զգում էր, որ այլևս մենակ չէր կարող ապրել ու կցանկանար, որ իր ականջին հնչեին Լևոնի խոսքերը։

Առավոտը նա դարթնեց դալուկ դեմքով, լվացվեց, մի կտոր բան կերավ և երբ ուզում էր սենյակը կարգի բերել, ձեռքն ընկավ Վարդկեսի նամակը։ Նա նորից կարդաց այն և ինչքան մտածում էր մի քանի խոսքով (ինչպես անում էր մինչ այդ) պատասխանել նրան, սակայն ոչ մի կերպ չէր կարողանում հավաքել մտքերը։ Եվ երբ նորից ուշադիր կարդաց նամակը, երբ նորից հասավ շաղկապի ու շաղկապի պատմությանը, այս անգամ ժպիտ չերևաց նրա դեմքին։ Երեկ գիշերվանից ինչքա՞ն էր ինքը հեռացել այդ ամենից. ի՞նչ կարող էր գրել այդ Վարդկեսին։ Այժմ ուրիշ բանի էր կարոտ նրա հոգին։ Եվ նա զգում էր, որ երեկ

ինքն այնպես անհարմար կերպով հեռացավ Լևոնից, որ չիմացավ, թե նա ինչ նոր բան կասեր իրենց հետագա հանդիպման մասին։

Այս մտքերի մեջ էր նա, երբ Սոնան, առանց ազդանշանի ներս մտավ և նայելով Մարոյի դալուկ դեմքին խորհրդավոր ժպտաց։ Հետո նա, ըստ իր սովորության, խուսարկու հայացքով նայեց սենյակի չորս կողմը և նկատելով նամակը, որ Մարոն դրել էր սեղանին, վերցրեց այն։ Մինչ այդ, Մարոն ոչ մի գաղտնիք չէր ունեցել Սոնայից։ Սոնան ամեն ինչ անօրինում էր նրա սենյակում և նրա նամակներն էլ կարդում էր, առանց հարցնելու Մարոյի համաձայնությունը. այժմ էլ նա աչքի անցկացրեց Վարդկեսի նամակը. Մարոն սրտատրոփ հետևում էր Սոնային, չգիտեր ինչու, բայց չէր ցանկանում որ Սոնան կարդա այդ նամակը. երբ Սոնան ընթերցումն ավարտեց, նամակը շպրտեց սեղանին և դարձավ Մարոյին։

— Այդ Վարդկեսն էլ բան է գտել գրելու։

Մարոն մեղապարտի հայացքով նայեց նրան ու կմկրմաց.

— Ինչ որ անցել է սրտից, այն էլ գրել է։

— Թո՛ղ այդ բաները, թո՛ղ. դու հո նորից երեխա չես դառնա։

Մարոն չպատասխանեց. նա իհարկե երեխա չէ, բայց այն միտքը, որ Սոնան, գուցե և Լևոնը իր վրա կարող են նայել իբրև երեխայի մի պահ վիրավորեց նրա ինքնասիրությունը։ Մեծանակ երևալու ձգտումը Մարոյի մեջ նույնպես բուռն էր, ինչպես իր հասակակից շատ երիտասարդների մեջ։ Նա ոչինչ չպատասխանեց Սոնային, բայց գտավ, որ այլևս հարկ չկար Վարդկեսին պատասխանելու, որովհետև ինչպես նրան թվաց, նա իրեն երեխայի տեղ էր դնում, իսկ ինքն այլևս չի կարող զբաղվել երեխայական բաներով։

Այս միտքը թեև չափոփեց նրան, բայց դա արդարա-

ցուցիչ միջոց էր իր համար, որ չպատասխանի Վարդկեսին։

Սոնան չմացավ, թե ինչ որոշում ընդունեց Մարոն, բայց մոտեցավ, շոյեց նրա մեջքին փռված հյուսակները, ապա զննող հայացքով նայեց նրա աչքերի խորքն ու ասաց.

— Ինչո՞ւ գույնդ տեղը չէ։

Մարոն շփոթվեց ու խուսափողական պատասխան տվեց։ Բայց Սոնան, որ իր հարցի պատասխանը չէր ստանում վրա բերեց.

— Բախտդ բանեց։

Մարոն ուզում էր, որ Սոնան ավելի պարզորոշ խոսի, թե ինչումն է իր բախտավորությունը, բայց Սոնան ավելին չասաց. ինքն էլ անհարմար համարեց որևէ բան հարցնել։ Բայց Սոնայի բառերի խորհրդավորությունը գրգռում էր նրա երևակայությունը և նա սկսում էր անհամբեր դառնալ։ Այս անգամ արդեն ինքն էր ձգտում, որ Լևոնը ժամ առաջ հայտնվեր, գուցե թե այն ժամանակ ինքն ավելի հեշտ հասկանար այդ բառերի իմաստը։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Անհանգիստ ու անհամբեր էր դարձել Մարոն։ Ամառվա արձակուրդն արդեն ձանձրալի էր նրա համար։

Երկու օր էր, որ չէր երևացել Լևոնը և դա նկատելի կերպով մտահոգում էր նրան։ Նա մեկ-մեկ մտնում էր Սոնայի սենյակը, անկապակցված խոսում առօրյա գործերի մասին, սակայն որևէ բանի վրա չէր կենտրոնանում։ Դեռ այնքան էլ համարձակություն չուներ, որ Սոնայից հարցներ, թե ուր է Լևոնը, իսկ Սոնան լավ էր հասկանում, որ այժմ Մարոյին այլ բան չէր հետաքրքրում, քան զրույցը Լևոնի մասին, բայց Մարոյի հետաքրքրությունը գրգռելու համար, ինքն իր կողմից այլևս խոսք չէր բաց անում։

Այսօր էլ ահա՛, Մարոն դուրս եկավ փողոց. բարկ ա-

բան այրում էր շրջապատը. նա անցնում էր ստվերներով։ Ուրիշ անգամներ, որ նրան թվում էր, թե բոլորն իրեն են նայում, ինքն ամենքի հետաքրքրության առարկան է, այժմ նրան թվում էր, թե ոչ ոք չի հետաքրքրվում իրենով և այլևս ոչ ոքի հետ չի կարող մտերիմ լինել։ Ինչի՞ց էր այդ մտածում էր Մարոն և պատասխանը մեկ էր. մինչ այդ ոչ ոք այնպես հուզիչ խոսքեր չէր շշնջացել իր ականջին, որքան այդ Լևոնը։ Ո՜հ, Մարոն սիրում է կյանքը. նա սիրում է ապրել, ապրել ու ստեղծագործել,— հիշեց նա իր մի սիրած գրքի խոսքերը, որ ինքն արտագրել էր իր տետրում,— կյանքն ստեղծագործությունն է և ստեղծագործությունը կյանք. մահն սկսում է այն պահից, երբ դադարում է ստեղծագործությունը։

Նա հասավ Նորքի ստորոտը ու կանգ առավ. ահա այն քարը, որի վրա ինքն ու Լևոնն էին նստած այն գիշեր. թվաց, թե նորից շրկնում է դեմքը և շրթունքներն այրվում են։ Բայց այդ զգացումը, այժմ գարմանալիորեն հաճույք էր պատճառում նրան։ Այս քարի վրա էր, որ Լևոնն իրեն սիրո հավատիացումներ տվեց... ինչքա՜ն կուզեր Մարոն, որ բոլորն այնպես լիներ, ինչպես Լևոնն էր ասում։ Այլ կերպ չի կարող լինել. Սոնան էլ երևի շատ բան գիտեր, որ այնպես խորհրդավոր ասեց՝ «բախտդ բանեց»։

Զվարթացած այս մտքերից, նա այն է, ուզում էր ստն վերադառնալ, երբ հանկարծ կանգ առավ։ Դիմացից գալիս էր Լևոնը։ Նա նոր էր իջել ավտոմոբիլնայից։ Մարոյի դեմքին ժպիտ փայլեց, Լևոնն հասկացավ այդ ժպիտի իմաստը, ինքն էլ ժպտաց և ջերմորեն սեղմեց Մարոյի ձեռքը, ապա մի երկու խոսքով պատմեց, որ հիմնարկի կողմից գործուղվել էր Ծաղկաձոր, ինչ որ գործեր էր կատարել, բայց Մարոյին այդ պահին ոչինչ չէր հետաքրքրում։ Նա միայն ուզում էր տեսնել ու լսել Լևոնին, խոսել նրա հետ։

Նրանք ուղղակի գնացին Սոնայի բնակարանը։ Սոնան և ամուսինը սիրալիր ընդունեցին նրանց։ Այդ օրը, ճաշից

հետո, Սոնայի ամուսինը նորից պետք է շրջան մեկներ։ Նա ասաց, գոհ է, որ ունի Լևոնի հետ սեղան նստել։

Մարոն խոհանոցում օգնում էր Սոնային կերակուրներ պատրաստելու, հաճախ մտնում էր սենյակ, ուր Լևոնն ու Սոնայի ամուսինը նարդի էին խաղում և միաժամանակ վիճում, թե սարդը քանի թև ունի։

Մարոյին զվարճություն էր պատճառում այդ վեճը, որում նա թեև որևէ իմաստ չէր գտնում, բայց այժմ, ինչ որ Լևոնն էր ասում, նրան հաճելի էր երևում։

Ժամի երեքին արդեն սկսեցին ճաշել։ Ճաշը պատրաստված էր թարմ բանջարեղենից ու մատղաշ ոչխարի մսից։ Կոնյակը և գարեջուրը ճոխացնում էին սեղանը։ Սկզբում խմեցին Սոնայի և իր ամուսնու կենացը։ Հետո Մարոյի, ապա Լևոնի կենացը։

Սոնան այլևս ոչ մի խոսք չէր ասում Մարոյի և Լևոնի փոխհարաբերությունների մասին։ Մարոյի կենացը խմելիս նա միայն ասաց.

— Բախտավոր լինես։

Մարոն ժպտաց և այդ խոսքերի տակ նրա մտքի համար բացվեց երևակայական մի լայն աշխարհ։

Ճաշից հետո, Սոնան ու ամուսինը պատրաստվեցին գնալ մի բարեկամի այցելության, որի մոտ վաղուց չէին եղել։ Գնացքը պիտի մեկներ երեկոյան ժամը ութին և դեռ ժամանակ կար Սոնայի ամուսնու համար։ Ամուսինը հենց այդ բարեկամի մոտից էլ պիտի գնար կայարան։

Երբ ամուսինները պատրաստվում էին դուրս գնալ, Մարոն ցտեսություն արավ ու գնաց իր սենյակը, իսկ Լևոնը մնաց հանգստանալու Սոնայի սենյակում, թեև Սոնան չէր ուզում, որ ամուսինը որևէ բան կռահեր, թե Լևոնը հետաքրքրված է Մարոյով։

Մարոն մտնելով իր սենյակը դուռը ծածկեց, և հենց դռան մոտ էլ անշարժ կանգնած մնաց։ Նա ոտնաձայներից իմացավ, թե ինչպես Սոնան ու ամուսինը տանից դուրս գնացին, ապա իմացավ, թե ինչպես Լևոնը միջանցքի դուռը

փակեց, եւ դարձավ ու, ըստ երեւույթին, կանգնեց տեղում։ Մի պահ տիրեց բացարձակ լռություն, Մարոն միայն իր սրտի տրոփյունն էր լսում։

Նա վախենում էր տեղից շարժվել, չլինի թե դրանով մատնի իրեն, որ ինքը հետեւում է մյուսների արարքներին։ Բայց Լեոնն էլ չէր շարժվում։ Բնակարանում բացի իրենցից ոչ ոք չկար։ Այո՛, այսպես լավ է, լռություն։ Ուրիշ բան էր այնտեղ դուրսը, բայց այստեղ չորս պատերի մեջ, նա չի կարող մենակ լինել Լեոնի հետ։ Ինչ բան հնարեց այդ Սոնան, ինչ այցելության գալու ժամանակ էր։ Մարոն ցընցվեց. Լեոնը իր ներկայությունը զգալ է տալիս. նա մոտեցավ Մարոյի դռանը ու կամացուկ բախեց։

Մարոն շունչը պահեց։ Ոչ մի ձայն։

Լեոնը նորից բախեց ու կամացուկ շշնջաց։

— Մարո՛։

Մարոյի մարմնով կարծես մրջյուններ էին վազում. ինչո՞ւ է կանչում հիմա։ Բավական է ինչքան խոսեցին, այժմ պետք է հանդստանալ։ Երեկոյան նրա հետ նորից կարող է գնալ այգի. բայց այժմ պետք է դռան փականքն ամրացնել ու Լեոնին ասել, որ հիմա չի կարելի տեսնվել, անհարմար է, տանն ուրիշ մարդ չկա։ Բայց չէր լինում, ոչինչ չէր կարող ասել և երբ այս անգամ նորից լսեց իր անունը, ձեռքը բնազդով եւ քաշեց փականքից։

Լեոնը խոսում էր դռան ճեղքից։ Մարոն ոչինչ չէր հասկանում նրա ասածներից, մանավանդ, որ Լեոնը խոսում էր շշունջով, բայց չէր ուզում, որ Լեոնը դադարեր շշնջալուց։ Թե ինչքան շշնջաց Լեոնը, Մարոն ոչինչ չէր կարող ասել, մեկ էլ այն տեսավ, որ դուռը բացվեց, ինքը Լեոնի հետ անցավ միջանցքը, երկուսով մտան Սոնայի սենյակը և դեռ իրեն չէր գտել, երբ զգաց, որ ինքն արդեն Լեոնի գրկումն է և, կարծես անրջանքի մեջ, ենթակա մի բնական կամքի, անզոր էր դարձել որևէ ընդդիմության...

Հետևյալ օրը Մարոն զարթնեց շատ ուշ։ Զարթնեց, կարծես մի ծանր մղձավանջից։ Մի հայացքով չափեց սենյակը, ամեն ինչ տեղումն էր. երբ վեր եկավ անկողնուց, լուսամուտից դուրս նայեց. թվում էր, թե ամեն բան այլ կերպարանք էր ստացել։ Նա փորձեց ելնել միջանցքը, լվացվել, սակայն երբ ձեռքը տարավ փականքը բացելու, անմիջապես ետ քաշեց, դնաց հենվեց սեղանին և աչքերը լցվեցին արտասուքով։

Ա՜խ, այդ փականքը. այն ի՞նչ վայրկյան էր երեկ, որ ձեռքը դավաճանեց իրեն։ Չէ՞ որ ինքը, թեև ձգտում էր Լևոնին, բայց երբեք այդպիսի վախճան չէր սպասում։ Ճիշտ է, Լևոնը նորից ասաց սիրալիր խոսքերի մի ամբողջ շարան, խոստացավ գալ, բայց այժմ Մարոն նրան սպասում էր և՛ կարոտով, և՛ սարսափով։ Նորից փորձեց միջանցք գնալ, բայց էլի սիրտ չարավ. չէ՞ որ այնտեղ կարող էր հանդիպել Սոնային, իսկ ինքն այնպե՞ս էր քաշվում այժմ նրանից, որ չգիտեր, թե ինչ պիտի խոսեր նրա հետ։

Այսպիսի տարտամ զգացումներով նա անցկացրեց մի քանի ժամ, երբ վերջապես սիրտ արեց ու միջանցք ելավ։ Սոնան տանը չէր. Մարոն իրեն ազատ զգալով, լվացվեց, կարգի բերեց զգեստները, սակայն ուտելու ախորժակ չուներ։ Օրն իր վախճանին էր հասնում և Մարոյի տագնապն ավելանում էր։ Նա վերցրեց մի գիրք և ուզեց կարդալ։ Կարդաց մեկ էջ, երկու էջ և երբ փորձեց հիշել, թե ինչը տպավորվեց մտքում, ապա տառերից ու տողերից բացի այլ բան չկարողացավ հիշել։

Գիրքը դրեց սեղանին ու ակամա մոտեցավ դռանը։ Միջանցքից ոտնաձայն լսվեց։ Մարոն շիկնեց. ձեռքը դրեց կրծքին. սիրտը, կարծես ուզում էր դուրս թռչել։ Մարոն արդեն ճանաչում էր Լևոնի ոտնաձայնը։

Քիչ հետո, երբ արդեն Լևոնը նրա սենյակումն էր, Մարոն էլեքտրական լույսի տակ մի պահ զննող նայեց նրան,

սակայն Լևոնը անմիջապես գրկեց նրա գլուխը և Մարոն չկարողացավ երկար նայել նրա դեմքին։

Իսկ Լևոնը կրկնում էր.

— Մարո, իմ սիրելի Մարո՛։

Մարոն փղձկաց. արտասվալից աչքերով, սակայն համարձակությունն ստացած ասաց.

— Լևոն, տա՛ր ինձ այստեղից, տա՛ր, չեմ կարող այլևս այստեղ մնալ. հասկանո՞ւմ ես, ես չեմ կարող այլևս Սոնայի աչքերին նայել։

— Իհարկե, իհարկե,— կրկնեց Լևոնը։

Եվ այսպես անցան օրեր, շաբաթներ, ամիս։ Լևոնն սկզբում այցելում էր ամեն օր, հետո օրընդմեջ. Մարոյի հետ գնում էին զբոսնելու քաղաքային այգի, բայց ավելի շատ ստվերոտ փողոցները։ Մարոն առաջին օրերում մեղմությամբ, վերջերում ավելի որոշակի խնդրում էր Լևոնին, տանել իրեն այդ բնակարանից։ Ճիշտ է Մարոն հիմա սովորականի նման հանդիպում էր Սոնային, բայց երբեմն զայրույթով էր լցվում նրա դեմ. չէ՞ որ նա էր սկզբում իրեն մղում դեպի Լևոնը, իսկ այժմ իրեն այնպես էր պահում, կարծես բանից տեղյակ չէր։ Այժմ Մարոյի համար ամենացանկալին այն էր, որ այլևս չհանդիպեր այդ Սոնային։ Սակայն Լևոնը դեռ որոշակի ոչինչ չէր ասում, կտանի՞ Մարոյին այդտեղից, թե՞ չէ։

Եվ երբ վերջին մի քանի օրը Լևոնը չերևաց, Մարոն սպասեց էլի մեկ-երկու օր ու ուրիշ խորհրդատու չունենալով, գնաց Սոնայի սենյակը։

Նստեց աթոռին, ձեռքերը վհատությամբ ծալեց կրծքին ու մրմնջաց.

— Ի՞նչ է լինելու իմ վերջը, Սոնա։

— Չեմ հասկանում, ինչի՞ մասին է խոսքը։

Մարոն արտասվեց. իրո՞ք Սոնան չէր հասկանում. Մարոն դժվարանում էր կռահել. բայց և զգում էր, որ ինքն էլ բացի իր անորոշ հարցից ուրիշ բան չէր կարող ասել

Սոնային։ Միայն վերջում Մարոն սիրտ արավ ավելի որոշակի հարցնելու։

— Զգիտե՞ս, ո՞ւր է Լևոնը։

— Կարոտե՞լ ես,— հարցրեց Սոնան։

Եվ այնպիսի մի ժպիտ խաղաց նրա դեմքին, որ Մարոն անպատասխան թողնելով նրա հարցը, ատելության զգացումով լցվեց դեպի այդ կինը։

Սոնան, Մարոյի անհաճելի դարձող ներկայությունից ազատվելու համար, մի քանի հանգստացնող խոսք ասավ նրան։ Մարոն վերադարձավ իր սենյակը։

Մարոն լուր ստացավ, որ Լևոնը ինչ որ շտապ հանձնարարությամբ շրջան է մեկնել և դեռևս այնտեղ բավական ժամանակ կմնա։ Նրան միայն այն էր զարմացնում, թե ինչպես էր, որ Լևոնը վերջին պահին իրեն չէր այցելել։ Նրա պարզ հոգին արդարացուցիչ պատճառներ էր գտնում Լևոնի համար. այո՛, թերևս, նա մի լավ բան է պատրաստում իր համար, ուզում էր սյուրպրիզ անել։

Բայց բոլոր այս մտածումները պղպջակի պես օդը ցնդեցին, երբ նա մի օր հանկարծ զգաց, որ ինքն այլևս այն թեթևաշարժ աղջիկը չէ։ Հարկադրված նորից գնաց Սոնայի մոտ, պատմեց ինչ որ բաներ, ասաց, որ հիվանդի պես է զգում իրեն։

Սոնան հասկացավ եղելությունը և Մարոյին բացատրեց, թե ինչ է սպասում նրան։

Մարոն պատրաստվում էր մայրության։

Այս հայտնությունից Մարոյի բերանը մնաց կիսաբաց. շոած աչքերով նա նայեց Սոնայի դեմքին և էլի չիմացավ կարեկցության, թե՞ հեգնանքի արտահայտություն կար այնտեղ։

Նրա սրտի բաբախումն արագացավ ու նա չկարողանալով տեղից շարժվել՝ նվաղկոտ հենվեց աթոռին։

Մարոն փակվեց իր սենյակում։ Եթե անհրաժեշտ էր տանից դուրս գալ, որևէ անհետաձգելի գործի համար, ապա նա դուրս էր գալիս գաղտագողի, որպեսզի ոչ ոքի չհանդիպի։ Եվ ամենադժվարը նրա համար այն էր, որ շուտով վերջանալու էր ամառային արձակուրդը և ինքը հարկադրված պիտի վերսկսեր իր աշխատանքը մանկապարտեզում։ Ի՞նչպես հանդիպեր ծանոթներին, երեխաներին։ Ինչո՞ւ Լևոնը զրկեց իրեն ընկերների երեսին պարզորեն նայելու հնարավորությունից, ինչո՞ւ զրկեց իրեն հպարտությունից։ Այս էր մտորում նա, բայց հույսը չէր կորցնում, որ շուտով Լևոնը կվերադառնա և ամեն ինչ բնական ընթացքը կստանա։

Այս մտքերով նա նստած էր սենյակում, երբ միջանցքից լսվեցին արտասովոր ձայներ։ Մարոն սրտատրոփ ոտքի ելավ. վերջապես, եկավ Լևոնը։ Եվ առանց սպասելու, որ դուռը ծեծեն, նա շտապ բացեց այն։ Զրնգուն ծիծաղով նրա դեմը ելավ իրեն հասակակից մի աղջիկ. ներս մտնելով նա փաթաթվեց Մարոյին։ Երբ Մարոն ազատվեց աղջկա գրկից, նկատեց, որ դռանը սպասում է մի երիտասարդ։ Վարդկեսն էր, իր դպրոցական ընկեր Վարդկեսը։ Բնավ չհիշեց, որ անպատասխան էր թողել նրա նամակը, անմիջապես նրան ներս հրավիրեց, ջերմորեն սեղմեց ձեռքը, ապա նորից փաթաթվեց ընկերուհուն, բացականչելով։

— Արփի՜կ, Արփի՜կ։

Մարոն բոլորովին մոռացավ, որ ինքն սպասում էր Լևոնին։ Այժմ նա շատ էր ուզում լսել վաղեմի ընկերներին, Ծաղկաձորում նրանց անցկացրած կյանքի ու նրանց հետագա անելիքների մասին, և նույնիսկ հաճույքով կլսեր, եթե Վարդկեսը խոսեր դպրոցական շրջանի հուշերից։ Սակայն Մարոն նկատեց, որ Վարդկեսի տրամադրությունն այնքան էլ բարձր չէ։

Խոսում էր մենակ Արփիկը, այդ աշխույժ ու կենսուրախ

աղջիկը ծնողների հետ ամառն անցուցել էր Ծաղկաձորում, հաճախ հանդիպել էր Վարդկեսին, և այժմ էլ պատրաստվում էր գնալ գյուղ, իբրև ուսուցչուհի։

— Եվ գիտես ո՞ւմ հետ եմ գյուղ գնում, Մարո,— ժպտալով ասաց Արփիկը։

— Ոչինչ չգիտեմ։

— Հովհաննեսի։

— Նրան, որին խմաստուն Օհան էինք ասում։

— Այո՛, այո՛, ի՞նչ է խմաստուն չէ՞ր,— բարձրաձայն ծիծաղեց Արփիկը։

Դպրոցում այդ Հովհաննեսին խմաստուն մականունն էին տվել նրա համար, որովհետև նա դպրոցական բեմի վրա, աշակերտներից մեկի գրած պիեսում, խաղացել էր ծերունի Օհանի դերը, իսկ ծերունին, ամեն քայլափոխին, խմաստուն խորհուրդներ էր տալիս իրեն դիմող մարդկանց։

— Եվ գիտե՞ս, Մարո, ի՞նչ խմաստուն քայլ արավ Հովհաննեսը։

— Ի՞նչ։

— Ինձ հետ ամուսնացավ։

Այս անգամ Մարոն ևս ծիծաղեց։ Երկար ժամանակ նա այդպես սրտանց չէր ծիծաղել։ Արփիկի հետագա խոսքերից Մարոն իմացավ, որ Հովհաննեսը ժամանակ առաջ գյուղ էր գնացել, այնտեղ որոշ բաներ կարգավորելու, իսկ Արփիկն էլ մի քանի օրից գնալու էր։

Վարդկեսը լսում էր այդ ամենը, սակայն նրա տրամադրությունը չէր բացվում։

Մարոն այժմ հիշելով, որ անպատասխան է թողել Վարդկեսի նամակը կշտամբեց իրեն, ուզեց դրա համար ներողություն խնդրել, բայց միայն հարցրեց։

— Վարդկես, ինչո՞ւ դու էլ չես խոսում։

— Այսօր ես ուզում եմ միայն լսել։

— Է՞, Վարդկեսի քեֆին դիպել են,— միջամտեց Արփիկը։

— Ո՞վ, ինչպե՞ս,— հետաքրքրվեց Մարոն։

Վարդկեսը մի անհանգիստ շարժումն արեց և նշանակալից նայեց Արփիկին։ Արփիկը հասկացավ Վարդկեսին, ուստի միայն անորոշությամբ պատասխանեց Մարոյի հարցին։

— Ոչի՛նչ, հեշտ անցավ. զվվելիի մեկը ուզում էր բաներ հնարել, բայց ինքը ծիծաղելի դրության մեջ ընկավ։

Մարոյին շատ հետաքրքրեց ընկերուհու հաղորդածը։ Սակայն Արփիկը չուզենալով Վարդկեսի ներկայությամբ խոսել, ասաց, որ վաղը կանցնի նրա մոտ և ամեն ինչի մասին կխոսեն։

Մարոն ուզեց ընկերների համար գոնե մի համեստ սեղան բաց անել, բայց այն ինչ ինքն իմացավ Սոնայից իր վիճակի մասին կարկամեցնում էր նրան. նա վախենում էր սենյակում շարժվել, որ չլինի թե Արփիկն ու Վարդկեսը մի բան նկատեն, այնքա՛ն անհարմար էր զգում նա նրանց ներկայությամբ։

Արփիկը, ոգևորված, առանձին ծիծաղաշարժ դեպքեր էր հիշում ամառանոցավորների կյանքից. պատմում էր և հնչուն ծիծաղով լցնում սենյակը։

Դուռը ծեծեցին։ Մարոն սրտատրոփ վեր ելավ տեղից։ Դուռը բացեց և այնպիսի մի ձայն ելավ նրա կոկորդից, որ դժվար էր ասել վախեցածի ճիչ է, թե ոգևորվածի բացականչություն։ Շեմքից ներս մտավ Լևոնը։

Մարոն ուրախացավ, որ նա վերջապես վերադարձավ, բայց նրա համար հանելուկ էր, թե իբրև ի՞նչ ներկայացնի Լևոնին իր ընկերներին։ Ա՜խ, Լևոն, ինչո՞ւ ես այսպիսի անորոշ վիճակի մեջ դրել Մարոյին,— մտածեց Մարոն և դեռ չէր որոշել ասելիքը, երբ նկատեց, որ Վարդկեսն էլ ու Արփիկն էլ տոքի են կանգնել։

Ինչքան կարողացավ հասկանալ Մարոն, Վարդկեսը տհաճությամբ ընդունեց Լևոնի մուտքը, իսկ Արփիկը ո՛չ միայն տհաճությամբ, այլև ակներև ատելությամբ, ինչ որ բան մրթմրթաց քթի տակ։

Թե Վարդկեսը, և թե Արփիկը ոչինչ չգիտեին Մարոյի,

վերջին շրջանի կյանքի մասին։ Եվ ոչ մեկի մտքով չէր անցնում, թե Մարոն կարող էր մտերմություն ստեղծած լինել Լևոնի հետ։

Ըստ երևույթին, Լևոնի համար էլ միանգամայն անըսպասելի էր այդտեղ հանդիպել Վարդկեսին ու Արփիկին, ուստի նա ձեռք տալով Մարոյին, հարցրեց։

— Չե՞ս կարող ասել, ո՞ւր է գնացել Սոնան։

— Սոնա՞ն,— վարանեց Մարոն։

Ախր ինչու էր պետք Սոնան, երբ ինքը այսքան ժամանակ չի տեսել Լևոնին։

— Արի՛, նստիր,— մեղմությամբ ասաց Մարոն։

— Դե, Վարդկես,— խոսեց Արփիկը,— մենք գնանք. ես այս զզվելու հետ մի սենյակում չեմ կարող նստել։

Ասաց ու նայեց Լևոնին։ Լևոնը բարկացած խոսեց.

— Ես քեզ պատասխանատվության կկանչեմ։

— Ինչ կուզես արա՛,— վրա բերեց Արփիկն իր շիտակ կոպտությամբ,— դու անպիտան մարդ ես, գուցե մի ինտրիգա էլ այստե՛ղ սարքես։

— Ի՞նչ է պատահել,— միջամտեց Մարոն,— դուք ո՞րտեղից գիտեք իրար, գուցե թյուրիմացություն է։

— Դու մի խառնվի Մարո,— ասաց Արփիկը,— դու շատ միամիտ ես այսպիսի մարդու ճանաչելու համար։

— Ախր Արփիկ, այդպես մի խոսիր։

Լևոնը նշանակալից նայեց Մարոյին, ապա զգալով, որ Արփիկի հետ վիճելն ապարդյուն է, դուրս գնաց սենյակից։

Մարոն միջանցք ելավ, մի երկու անգամ ձայնեց.

— Լևո՜ն, Լևո՜ն։

Բայց Լևոնը, առանց հետ նայելու, անցավ փողոցը և շտապ քայլերով հեռացավ։

Մարոն ընկճված հետ գնաց սենյակը ու ընկավ աթոռին. նրա աչքերը լցվեցին արցունքով։

— Մարո ջա՛ն,— ասաց Արփիկը,— ների՛ր, որ կոպիտ եղա, բայց այլ կերպ չէի կարող... թե որ պատմե՞մ։

— Ախր, Արփիկ։

— Ոչ մի ախր, դու պետք է այդ Սոնայի բնակարանից փոխադրվես. նա բարի պառաւ չէ. նրա մոտ այսպիսի մարդիկ են եկ ու մուտ անում. քեզ վայել չէ այս շրջապատը։

Մարոն այլևս ոչինչ չէր կարող պատասխանել։ Հոգով ուզում էր հավատալ, թե ինչ որ թյուրիմացություն է պատահել, և որ Լևոնը որևէ վատ բան չէր կարող անել։

Վարդկեսը դեռ ոչ մի բառ չէր արտասանել. նա աչքով-ունքով հասկացրել էր Արփիկին, որ կոպիտ չմնի Լևոնի հետ, բայց ոչինչ չէր ստացվել։ Արփիկը բռնեց Վարդկեսի թևից ու, դիմելով Մարոյին, ասաց.

— Մարո ջան, հիմա հանգստացիր, վաղը կգամ մանրամասն կխոսենք։

Մարոն, որ այդ անախորժ դեպքից հետո սկզբում ուզում էր մենակ մնալ, այժմ հետաքրքրությունից վառվում էր և ժամ առաջ ուզում էր լսել Արփիկին, մանավանդ, որ վախենում էր, թե մենակ մնալով, ով գիտե ինչ անխորհուրդ քայլերի կարող էր դիմել, ուստի նա դարձավ ընկերուհուն.

— Արփիկ ջան, խնդրում եմ, դու մնա, ինձ մոտ կիշերիր այսօր ինձ լավ չեմ զգում... ես էլ քեզ շատ բան ունեմ ասելիք։

Արփիկն համաձայնեց մնալ։ Վարդկեսը «ցտեսություն» ասավ ու դուրս գնաց։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Մարոն ակնապիշ նայում էր Արփիկին սպասելով, թե նա երբ կխոսի։

Արփիկը, որ քիչ առաջ շատախոսում էր, այժմ զննողական նայեց Մարոյին ու հարցրեց։

— Նա, այդ Լևոնը, հաճա՞խ է գալիս այստեղ։

Մարոն համարձակություն չունեցավ միանգամից ճիշտն ասել, միայն անորոշությամբ պատասխանեց.

— Դե, Սոնայի բարեկամն է, այնտեղ հաճախ է լինում։

— Ինչքան կուզե, թող գնա այնտեղ։

— Ասա՛, Արփիկ, ասա՛, ինչո՞ւ այնպես բարկացար։

— Ինչո՞ւ. դա մի ամբողջ պատմություն է, սիրելի Մարո, բայց ես քեզ կարճ կպատմեմ։

— Չէ՛, կարող ես չշտապել, վաղուց է քեզ չեմ լսել։

— Քեզ արդեն հայտնի է,— սկսեց Արփիկը,— որ Վարդկեսը Ծաղկաձորում դպրոցականների ճամբարի ֆիզկուլտ աշխատանքներն էր ղեկավարում։ Ես էլ հաճախ հանդիպում էի նրան։ Երբ նա ազատ էր լինում գնում էինք զրոսանելու և ժամերով տարվում էինք բնության գեղեցկություններով. գիտես, որ Վարդկեսն այնքան էլ չի սիրում խոսել։ Ես էի հարցեր տալիս, խոսեցնում մեր անցած դրպրոցական կյանքի, իր աշխատանքների մասին։ Զգում էի, որ Վարդկեսն ուզում է ինձ հետ մի լուրջ բանի մասին խոսել, բայց խոսքը միշտ կիսատ էր թողնում։ Մի օր ասաց, որ Մարոյին, քեզ էլի, նամակ եմ գրել, ապա կարմրեց ու մի քանի անգամ կրկնեց Մարո, Մարո։ Ես սկսում էի գուշակություններ անել։ Անցավ մի քանի շաբաթ. երբ Հովհաննեսի հետ ամուսնացանք, այս անգամ երեքով էինք գնում զրոսանքի։ Նկատում էի, որ Վարդկեսը բացվել էր, մեր ամուսնությունը դուր էր եկել նրան. մի օր, ինչպես պատահեց, էլի ես ու նա առանձին մնացինք։ Նա այս անգամ բավական համարձակ խոսեց...

— Ի՞նչ խոսեց,— միջամտեց Մարոն։

— Խոսում էր քո մասին և ասում էր, չգիտեմ ինչպես ասեմ, ինչպես հայտնեմ, որ սիրում եմ Մարոյին։

— Սիրում... երազական բացականչեց Մարոն և գլուխը կախեց։

— Այո, սիրում։ Ասաց, որ մեկ ամիս է, քիչից պատասխան չունի։ Դա վհատեցրել էր նրան և ենթադրում

էր, թե դու առհասարակ չես ուզում իր հետ որևէ կապ ունենալ։ Ես խոստացա գալ քեզ հետ խոսել, բայց Մարո ջան, ների՛ր, նոր էի ամուսնացել, Հովհաննեսին չէի կարող մենակ թողնել... Այդ ի՞նչ է, Մարո, դու լալի՞ս ես... ինչո՞ւ. երևի դու էլ նույն զգացումն ունես դեպի Վարդկեսը, հա՞։ Դե, լավ, հանգստացիր, ինձնից էլ հո չես քաշվի։

Մարոն մի կերպ զսպեց իրեն ու հարցրեց։

— Իսկ դու ինչո՞ւ բարկացար, երբ նա (այլևս չէր կարող Լևոն անունը տալ), ներս եկավ։

— Հա, իսկույն ասեմ։ Այդ օրերին, այս Լևոնը երևաց Ճամբարում։ Ասեցին, թե չգիտեմ, ում լիազորությամբ, եկել է ստուգելու Ճամբարի աշխատանքները։ Սկզբում ամեն ինչ հարթ էր ընթանում։ Խոսում էին, թե գործը լավ է գլխված։ Եվ ահա՛, մի օր էլ, այս Լևոնը լուր է տարածել, թե ամեն ինչ լավ է գնում, միայն Վարդկեսը իր հայացքներով չի կարող պատանիների դաստիարակության գործը վարել։

— Իր հայացքնե՞ր։ այդ ի՞նչ բան է,— անհամբերությամբ հարցրեց Մարոն։

— Սկզբում ես էլ գլխի չէի ընկնում։ Ասում էինք, դե, խոսք է, ասել է. մանավանդ, որ այդ Լևոնի մասին պատմում էին, թե դա, որտեղ էլ գնա, անպայման ուզում է մի թերություն գտնի։

Մարոն ինչ որ բաներ էր սկսում վերհիշել Լևոնի ասածներից, որոնց ինքը ժամանակին կարևորություն չէր տվել, ավելի ճիշտ չէր հետաքրքրվել նրա կյանքի այդ ասպարեզով։

— Եվ ահա՛,— շարունակեց Արփիկը,— մի օր էլ Երևանից մարդիկ եկան և այս Լևոնի ներկայությամբ կոմերիմիության բյուրոյի ժողով արին։ Ես էլ գնացի ժողովին։ Երևանից եկողը, նախապես իմանալով, որ ես Վարդկեսի մոտ ընկերներից եմ, ինձ կանչել խոսացրել էր։ Ես արդեն իմացա, թե բանն ինչումն է. իմացա ու զայրույթով լցվեցի այդ Լևոնի դեմ. լավ ասի ինձ ու ինձ, տեսնենք, դեռ կխոսենք, Լևոն։

— Իսկ ի՞նչ էր արել նա,— նորից միջամտեց Մարոն։

— Համբերություն ունեցիր. դու համառաձայնեցիր, որ մի քիչ երկար պատմեմ։

— Լավ, դե, ասա։

— Եվ այդպես. սկսվեց բյուրոյի նիստը։ Կարդացին Լևոնի հայտարարությունը, ապա ինքը խոսեց, ավելի պարզաբանեց գրածը։ Նա մեղադրում էր Վարդկեսին այն բանում, որ նա, ծիծաղելի է ասել, մանր-բուրժուական հայացքներ ունի կյանքի վրա։

Արփիկը ծիծաղեց. Մարոն նա կյանքար ծիծաղել, բայց նրա ներսում սկսվել էր մի անանանելի փոթորիկ, որին անհաղորդ էր իր պատմությամբ տարված Արփիկը։

— Իսկ գիտե՞ս ինչումն էր արտահայտվել Վարդկեսի մանր-բուրժուականությունը,— կրկին խոսեց Արփիկը։

— Ես ի՞նչ իմանամ, Արփիկ ջան։

— Այդ կապված է քեզ հետ։

— Ինձ հետ,— տատապալից հետաքրքրությամբ մրթմնջաց Մարոն։

— Այո՛, այդ Լևոնը ստուգել էր Վարդկեսի աշխատանքային պլանը, այնտեղ բան չէր գտել. ինչպես էր եղել, նրա ձեռքն էր ընկել նաև Վարդկեսի օրագիրը. իսկ այդ օրագրում ահա, թե ինչ էր կարդացել Լևոնը.— «Քիչ առաջ պարտամունքներն ավարտեցի։ Այժմ իմ առաջ փռված է բուրժումնավետ անտառը։ Խաղաղ երեկո է։ Լսվում է երեխաների ուրախ քրքիջը, ծառերը սվվում են ու թռչունները երգում. փորձում եմ կարդալ, բայց չեմ կարողանում։ Այս պահին, ոչինչ, ոչինչ ինձ չի գրավում. կուզեի մենակ լսել նրա ձայնը, Մարոյի ձայնը։ Նրա ձայնը, ո՜հ, այս պահին դա մի ամբողջ աշխարհ արժե ինձ համար»։

Երբ Արփիկը լռեց, Մարոն այլևս չկարողացավ տեղում նստած մնալ, վեր կացավ, իրեն մի կերպ գցեց մահճակալի վրա, երեսով սեղմվեց բարձին ու հոնգուր-հոնգուր լալ սկսեց։

Արփիկը չէր կարող այլ բացատրություն տալ Մարոյի

լայուն, քան այն, որ նա հուզվում է դեպի Վարդկեսը տածած փոխադարձ սիրուց, ուստի շատ չմտահոգվեց նրա լացով, ինքն էլ դնաց պառկեց Մարոյի կողքին և շոյելով նրա գլուխը շարունակեց իր խոսքը։

— Այդ Լեոնը, այդ... անպատկառը, ինչ պատճառաբանի, որ խոսքը տեղը բերի, թե Վարդկեսը հոգով չի նըվիրված իր գործին, թե նա տեսեք, այս նոր կյանքը կառուցող մարդկանց ձայներին չի կարոտում, նույնիսկ երեխաների ծիծաղը չի գրավում նրան և, առհասարակ, ոչինչ չի գրավում նրան, բացի ինչ որ աղջկա ձայնից։ Եվ եզրակացնում է, որ այդպիսի մարդը չի կարող դաստիարակել պատանիներին։

Մարոն կլանում էր Արփիկի ամեն մի բառը, ու անհամբեր սպասում էր նրա խոսքի շարունակությանը։

— Խոսեցին մի քանիսը, միտս էլ չի մնացել, թե ինչ ասին, որովհետև ես անհամբեր սպասում էի, թե երբ ինձ ձայն կտան և մտածում էի, թե ինչ բառեր գործածեմ, որ այդ Լեոնի հախիցը դամ։ Վերջապես հերթը ինձ հասավ։ Է՛, ինչ ասեմ, Մարո, ձայն տվին, բայց չթողին, որ ասելիքս լրիվ ասեմ. ասին, թե կոպիտ ես խոսում. իսկ ես ուղղակի դիմելով այդ Լեոնին ասեցի.—«Դու սատր զրպարտիչ ես, դու փքուն դատարկախոսս ես. աղնիվ խոսք եմ ասում, որ ուր էլ քեզ հանդիպեմ, երեսիդ պիտի շպրտեմ, որ դու զզվելի ես։ Շատ բան դուցե կարելի էր քեզ ներել, բայց, զրպարտել Վարդկեսի պես մի աղնիվ երիտասարդի, ամբողջ կյանքումս չեմ ների»։ Մարո ջան, այս էր ասածիս միտքը. լավ եմ ասել, չէ՞։ Ճիշտ է, շատ չթողին, որ խոսեմ, բայց այդ Լեոնը թրջված հավի նման դուրս եկավ ժողովից։ Եվ ահա՛, սիրելի Մարո, չնայած բոլորը գովեցին Վարդկեսին, բայց նա շատ զգայուն է, մինչև հիմա էլ իրեն մի տեսակ վատ է զգում... դե, այժմ ասա, ի՞նչ ասեմ նրան. ժամանակն է, որ բացատրվեք։

Մարոն այս անգամ արդեն այնպիսի հեկեկոցներով

էր լալիս, որ Արփիկին այլևս չէր բավարարում իր նախորդ բացատրությունը, ուստի նա հարցրեց.

— Մարո ջան, ասա՛ ի՞նչ է պատահել. չէ՞, որ ասիր, թե դու էլ ինձ շատ բան ունես պատմելու։

Մարոն զգում էր, որ միայն եղելությունը հայտնելով, դուցե կարողանա հանգստանալ, այդ պատճառով էլ, փարվելով ընկերուհու կրծքին, նվազ ձայնով կմկմաց.

— Արփի՛կ, Արփի՛կ։

— Ասա՛, լսում եմ։

— Արփիկ ջան, ես պատրաստվում եմ մայր դառնալ։

— Ի՞նչ ես ասում, Մարո,— գոչեց Արփիկը և կրակվածի նման վար ցատկեց մահճակալից, մի քանի պտույտ գործեց սենյակում, ապա նորից հարցրեց,— ի՞նչ ես ասում Մարո, խո չե՞ս խենթացել։

— Արփի՛կ, Արփի՛կ։

— Դե, լա՛վ, այդ ե՞րբ ամուսնացար։

Մարոն չպատասխանեց։

— Իսկ ո՞վ է հայրը։

— Դու քիչ առաջ չուզեցիր նրա հետ մի սենյակում մնալ։

— Լե... վո... նը... հաղիվ վանկ առ վանկ արտասանեց այդ անունն Արփիկը և կարծես, մի ծանր գործից վաստաքեկ, ընկավ աթոռին։

Տիրեց երկարատև լռություն։

Մարոն մեջընդմեջ հեկեկում էր։ Իր ապրումներին ավելացավ այս նոր հայտնությունը։ Վարդկե՞սը... այ, թե կյանքում ինչպիսի հանգույցներ կան։

Արփիկը, որ ընդհանրապես խոսելու անսպառ պաշար ուներ, այժմ բառ չէր գտնում արտահայտվելու։ Մարոյի հայտնությունը նրան շփոթեցրել էր։ Ուրեմն, այլևս, ոչ մի խոսք Վարդկեսի մասին։ Հետո նրա մտքով անցավ իր պարզ հոգուց բղխող այսպիսի մի միտք, թերևս Վանոը Վարդկեսի նկատմամբ այդ քայլին է դիմել զրկված խանդից, որպեսզի հակառակորդին վարկաբեկելով, ինքն ավելի

բարձրանա Մարոյի աչքում, բայց իսկույն էլ ինքը գտավ դրա պատասխանը,— ո՞չ այդպիսի բան չի կարող պատահել, անկեղծ սերը ազնիվ պիտի լինի։ Լևոնն անազնիվ է,— այս նրա համոզումն էր։

Բայց ի՞նչ աներ, որ գործն այդտեղ էր հասել։ Երկար մտածեց, բայց դրա պատասխանը չկարողացավ գտնել։

Նա գիշերեց Մարոյի մոտ։ Երբ առավոտը պատրաստվում էր գնալ, գրկախառնվեց ընկերուհու հետ, հայտնեց, որ շուտով պիտի մեկնի դյուղը, ամուսնու մոտ. խոստացավ արձակուրդներին գալ քաղաք՝ Մարոյին այցի։

— Մարո ջան,— վերջում ասաց նա,— ճիշտն ասած ես առաջին անգամն էի տեսնում այդ Լևոնին և այն էլ այդպիսի գործի առիթով. իմ տպավորությունը վատ էր, բայց երբ դու կյանքդ կապել ես նրա հետ, ցանկանում եմ, որ բախտավորվես։

ԳԱԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Մարոն մնաց մենակ։ Երկար ժամանակ չէր կարողանում իրեն հաշիվ տալ լսածների մասին։ Այդպես ուրեմն, Վարդկեսը... բայց ոչ ինքն իրավունք չունի այլևս նրա մասին մտածելու. նույնիսկ անպատշաճ է. չէ՞ որ ինքը մայրության է պատրաստվում։ Լավ կլիներ, որ Արփիկն այդքան չշտապեսներ։ Իսկ Լևո՞նը. Մարոյին այժմ չի հետաքրքրում, թե նա ինչպես է աշխատում. միակ բանը, որով զբաղված է Մարոյի միտքը, օր առաջ ազատվել այս անատույգ վիճակից և Լևոնի հետ ապրել մի ապահով անկյունում։

Սակայն ի՞նչ կատարվեց։ Լևոնը դժգոհ, վիրավորված հեռացավ, անարձագանք թողնելով իր կանչերը։ Բայց Մարոն անխզելի թելերով կապված է Լևոնի հետ և առանց նրա այլևս ոչ մի քայլ չի կարող անել։ Իսկ ի՞նչ է իր վիճակը, ի՞նչ կլինի վաղը, մյուս օրը, երբ ինքը գնա ման-

կապարտեզ. ինչպե՞ս պիտի նայի մանուկներին։ Եվ ամենասարսափելին այն էր, թե ինչ պիտի ասեր ծնողներին, չէ՞ որ վաղ, թե ուշ մայրը կգա գյուղից։ Այդ ի՞նչ անխորհուրդ քայլ էր, որին ինքը դիմեց, այն ի՞նչ մոմենտ էր, որ ինքը մոռացավ իրեն։ Այստեղ մի պահ ընդհատվեց նրա մտածության թելը... բայց իզուր է ինքը հուզվում, չէ՞ որ Լևոնը միակն էր, որ այնպես տարվեց իրենով և այնպես երանությամբ լցրեց իր հոգին։

Մարոն դուրս ելավ Լևոնին գտնելու և ինչքան մեծ եղավ նրա ուրախությունը, երբ հենց դռան մոտ հանդիպեց Լևոնին։

Մարոն, հակառակ իր սովորական զսպվածությանը, հենց միջանցքում փարվեց Լևոնին, իսկ երբ սենյակ մտան, գրկեց նրան ու մի քանի անգամ սրտալի համբուրեց։

Լևոնը նստեց աթոռին ու ծանր հայացքով նայեց Մարոյին։

Մարոն տարված իր ապրումներով, սկզբում չէր էլ նկատել Լևոնի սառնությունը. այժմ նա աթոռը մոտեցրեց Լևոնին և բացականչեց.

— Ինչքա՞ն եմ կարոտել,— և ուզեց նորից համբուրել նրան։

Լևոնն այս անգամ բռնեց նրա ձեռքը և ի պատասխան նրա խոսքի ասաց.

— Չի երևում։

— Ի՞նչը չի երևում, Լևո՛ն։

— Չի երևում, որ ինձ կարոտել ես։

— Այդ ինչե՞ր ես ասում Լևոն։ Այս անգամ շատ ուշացար, չես էլ ասում, թե ո՞ւր ես գնում. գիտեմ գործդ շատ է, Լևոն ջան, բայց կարոտել... դե, ասա՛, ասա՛, ե՞րբ ես ինձ այստեղից տանելու. ես այլևս ոչ մի օր, հանկանո՞ւմ ես ոչ մի օր առանց քեզ չեմ կարող ապրել։

— Ավելորդ խոսքեր են,— ասաց Լևոնը ծանրորեն թափահարելով գլուխը։

Մարոն հասկացավ, որ Լևոնը անտրամադիր է այսօր.

բայց արդյո՞ք դրա պատճառը Արփիկի ցուցաբերած կոպիտ վերաբերմունքն էր։ Առաջին պահ նա չկարողացավ այս հարցի պատասխանը գտնել, բայց մտածելով, որ այդ ամենը շատ հասարակ բան է հանդիպ այն զգացմունքի, որ ինքն ու Լևոնը տածում են դեպի միմյանց, նորից ժպտաց իր պարզ հոգու անմեղ, դուրեկան ժպիտով։

Լևոնը, սակայն, ոչ միայն չէր ժպտում, այլև նրա դեմքի խիստ արտահայտությունը չէր մեղմանում։ Մարոն այլևս չէր խոսում, սպասում էր, որ Լևոնը մի բան ասի, և ահա Լևոնը ծանր-ծանր խոսեց։

— Մարո, ժամանակն է, որ լուրջ խոսենք միմյանց հետ։

— Իհարկե Լևոն։ Բայց մի՞թե մինչև հիմա մենք լուրջ չենք խոսել. քո խոսքերը ես շա՞տ լուրջ եմ համարել։

— Իմ խոսքերը լուրջ են եղել. բայց դու լուրջ չես նայել մեր փոխհարաբերություններին։

— Այդ ինչպե՞ս, Լևո՛ն։ Ես... դու գիտե՞ս, որ...

— Ես ոչինչ չգիտեմ. ավելի ճիշտ գիտեմ, որ դու շարունակում ես քո կապերը...

— Ի՞նչ կապ, ինչի՞ մասին է խոսքը,— անհանգիստ շարժվեց տեղում Մարոն։

— Զքմեղ մի ձևանա՛ր։ Հապա ինչպո՞ւ է այդ Վարդկեսը։

— Ի՞նչ Վարդկես, Լևո՛ն. նա, նա... ու Մարոն չիմացավ ինչ ասեր։

— Նա, այո, նա ընկերացած այդ Արփիկի հետ ինձ վարկաբեկում են և դու թույլ ես տալիս քո ներկայությամբ այդպիսի խոսքեր ասել իմ հասցեին։

— Լևոն, ես ոչինչ չգիտեմ, թե ինչ է եղել ձեր մեջ այնտեղ։ Այն ինչ տեղի ունեցավ այստեղ, այդ ձեր նախորդ վեճի շարունակությունն էր, որի հետ ես ոչ մի առնչություն չեմ ունեցել ու իմ ուժերից վեր է խառնվել այդպիսի բաներին։ Լա՛վ, Լևո՛ն, ինձ մի փորձիր. գիտեմ, որ կատակ ես անում։

— Ես կատակի համար չեմ եկել այստեղ։

— Ավելի լավ. այժմ Լևոն, ինձ համար ոչ ոք գոյություն չունի։ Այնպես դասավորվեց գործը, որ ես նույնիսկ առանց ծնողներիս գիտության բախտս կապեցի քեզ հետ։ Լևո՛ն, ինչ ասեմ, երբեք ինձ այնպես մոտ չեմ զգացել քեզ, ինչպես այժմ...

Մարոն շունչ քաշեց, ապա լացակումած աչքերով գբլուխը մոտեցրեց Լևոնի կրծքին ու շշնջաց.

— Լևո՛ն, ես մայրությանն եմ պատրաստվում... ուր էլ գնաս, ինձ հետդ տար։

Մարոյի աչքերը խոնարհած էին ներքև. նա չէր տեսնում Լևոնի դեմքը։ Իսկ Լևոնը հանկարծակիի եկավ Մարոյի հայտնությունից։ Նա միայն այն հիշեց, որ ինքը ոչինչ որոշակի չէր ասել Մարոյին, չնայած Մարոն օդային ամրոցներ էր կառուցել։ Նրա դեմքի խիստ արտահայտությունը մեղմացավ, ու սրտապնդող տոնով ասաց.

— Այո՛, պետք է մտածել։

Այժմ այդ հասարակ խոսքն էլ Մարոյին բավական թվաց։

— Ճիշտ էր, չէ՞ Լևոն, դու ինձ փորձում էիր,— ասաց նա ժպիտով և երբ փարվեց Լևոնին, տեսավ, որ նրա դեմքին էլ ժպիտ կար։

Բայց Մարոն չգուշակեց, թե ինչ իմաստ ուներ այդ ժպիտը։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Մի քանի օրից, Մարոն, վերստին աշխատանքի անցավ մանկապարտեզում։ Ինչքան էլ հրապուրիչ էր երեխաների շրջապատը, ուր վերջին տարին նա հոգեկան խորին բավականությամբ աշխատել էր, բայց այժմ զգում էր, որ նախկին նվիրվածությամբ չի կարողանում լծվել աշխատանքի։

Ինչի՞ց էր այդ. եռանդի պակաս չէր զգում. ամենածանրն այն էր նրա համար, որ չէր կարողանում հանգիստ սրտով նայել երեխաներին. թվում էր, թե մի տեսակ հանցավոր է նրանց առաջ։

Առաջին օրը, երբ մանկապարտեզից տուն վերադարձավ, երկար սպասեց Լևոնին։ Նա պետք է դար. այդ էր առում նախորդ օրվա նրա ժպիտը. բայց իզուր սպասեց Մարոն։ Այդ օրը Լևոնը չերևաց։ Քանի գնում անհամբեր էր դառնում և այլևս ոչ մի բացատրություն չէր կարող բավարարել նրան։ Եվ ահա մյուս օրը, երբ տուն վերադարձավ նորից այն հույսով, թե այսօր արդեն պետք է դա Լևոնը, տեսավ մի ծրար, որ դռան ճեղքից ներս էր գցված։ Բացեց։ Լևոնի ստորագրությունն էր. Մարոյի աչքերը հուզմունքից լցվեցին. որքան հիշում էր, առաջին անգամն էր, որ ինքը Լևոնից նամակ էր ստանում։

Մարոն կարդաց նամակը. կարդաց և համարյա ուշաթափ ընկավ մահճակալին։ Այդպես մնաց մեկ, թե երկու ժամ. երբ ուշքի եկավ, տեսավ, որ սենյակը մութն է. վառեց լույսը և մեկ էլ կարդաց նամակը. Լևոնը գրում էր.

«Հարգելի Մարո, երկար մտածեցի և եկա այն եզրակացության, որ մենք այլևս չենք կարող իրար հանդիպել. դու պետք է ազնվություն ունենայիր նախապես ինձ հայտնել, որ կապեր ունես... կարծեմ դու էլ ես զգում, որ ես այժմ դառնում եմ երրորդ անձ, իսկ երրորդ անձը սիրո հարցերում միշտ էլ ավելորդ է համարվել։ Բարեներամ Լևոն»։

Այս արդեն կատակ չէր, այս արդեն Լևոնը իրեն փորձելու համար չէր գրում։ Բայց ամենազարհուրելին այն մեղադրանքն էր, որ Լևոնը բարդում էր իր վրա։ Ինչպե՞ս, ինքն ազնիվ չէ. այս արդեն շատ նման էր այն մեղադրանքին, որ Լևոնը բարդել էր Վարդիսի վրա։ Եվ հիշում էր Արփիկի զայրույթով լի խոսքերը։ Ի՞նչ անի։ Ո՛չ, ինքը չի կարող զայրանալ, ինքն իրավունք չունի զայրանալու.

միայն պետք է տեսնել նրան, բացատրել. նա թյուրիմացության մեջ է։

Եվ Մարոն շտապ փողոց ելավ։ Սեպտեմբերյան անձրևոտ գիշեր էր։ Մարոն ո՛չ մի բանի ուշադրություն չդարձրեց, ո՛չ այն, որ վրայի զգեստը բարակ է, ո՛չ այն, որ անձրևանոց չունի հետը և ո՛չ էլ այն, թե քայլում է ջրի կամ ցեխի միջով։ Նա առաջ էր գնում ներքին տագնապով։ Անցավ ծանոթ փողոցները։ Ոչ ոք չէր երևում աչքին, մանավանդ, որ անձրևոտ փողոցում այնքան էլ մարդիկ չկային և էլեկտրական լույսի տակ հազիվ էին նշմարվում անցնողների դեմքերը։

Ահա, վերջապես նա հասավ այն բնակարանին, ուր ապրում էր Լևոնը։ Ճիշտ է, Լևոնի հետ ոչ մի անգամ չէր եղել այդ տանը, բայց Լևոնը նրան ասել էր տան հասցեն, ավելացնելով, որ իրենց բնակարանն այնքան հարմարին չէր, որ Մարոյին փոխադրեր այնտեղ։

Մարոն նախ ուզեց թակել դուռը, բայց անվճռական կանգնեց. մինչ այդտեղ նա եկել էր համարձակ, բայց այժմ համարձակությունը կորցրեց։ Մի քիչ ետ գնաց և նոր սկսեց մտածել, թե ի՞նչ պիտի ասի, եթե դուռը բաց անի ոչ թե Լևոնը, այլ մեկ ուրիշը, չէ՞ որ ինքը ոչ մեկին չի ճանաչում և նրանք էլ թերևս իրեն չեին ճանաչում։

Լևոնենց տան լուսամուտը ցածր էր և Մարոն, եթե ոտքերի ծայրերին կանգներ, կարող էր տեսնել, թե ովքեր կան սենյակում։ Չմտածելով, որ վայել չէ իրեն այդ ձևով ուրիշի սենյակից ներս նայել, նա ձգվելով, մի հայացքով չափեց տան ներսը. ինչքան կարող էր ասեղնագործ ճերմակ վարագույրի արանքից նկատել, տեսավ, որ մի քանի ուղամարդիկ ու կանայք թեյում էին։ Չիմանալով, թե ովքեր են նրանք, նա մատներով թակեց լուսամուտը։ Վերջապե՜ս. ամենադժվար գործը նա կատարված էր համարում։ Սպասեց մեկ րոպեի չափ, դուռը բացվեց։ Մարոն շտապ մոտեցավ. այո՛, նա ինքն էր, Լևոնը։ Մարոն բռնեց նրա ձեռքից ու բացականչեց.

— Լևո՞ն։

Զնայած կիսախավարին, Լևոնը նկատեց, որ Մարոն ամբողջովին ջուր էր դարձել. բարակ զգեստը կպել էր նրա մարմնին և նա դողում էր։

— Ինչո՞ւ ես այս անձրևոտ եղանակին տանից դուրս եկել. կմրսես,— ասաց Լևոնը։

— Մի՞թե այդքան հոգատար ես,—այս անգամ հեգնական տոնով ասաց Մարոն։

— Իզուր ես դուրս եկել տանից։

— Իզուր չէ. պետք է, որ գայի, չէի կարող չգալ, Լևո՛ն. այդ ինչե՞ր է անցնում մտքովդ։

— Այդ մասին արդեն գրել եմ։

— Սխալ, անմիտ բաներ ես գրել։

— Գրել եմ այն, ինչ...

— Գրել ես այն ինչի մասին չես մտածել... Լևոն, այդ բոլորը դու էլ գիտես, որ դատարկ բաներ են. ամբողջ հոգով ես քեզ եմ պատկանում,— և արցունքից խեղդվող ձայնով ավելացրեց,— ես ու դու պարտական ենք... ես իբրև ապագա մայր, և դու...

Խոսքը չավարտեց. լռեց մի բոպեի չափ, ապա մութի մեջ աշխատեց նայել Լևոնի աչքերին ու ասաց.

— Բայց ինչո՞ւ եմ համոզում. չէ՞ որ դու այնքան խելոք բաներ էիր ասում. մի՞թե իմ խոսքերը կազդեն քո վրա... ա՜խ, իրոք, ինչո՞ւ եկա, ինչո՞ւ։

Եվ ետ դարձավ։ Լևոնը ուզեց բռնել նրա թևից, օգնել անցնելու մայթի ու փողոցի արանքից հոսող առվակից, բայց Մարոն, թափով թևն ազատեց նրա ձեռքից ու գոչեց.

— Ո՛չ, պետք չէ քո օգնությունը. ա՜խ, երանի ես էլ Արփիկի չափ սրտոտ լինեի, ես էլ այն ժամանակ կարող էի շատ բան ասել քեզ...

Եվ այժմ Մարոյի ցանկությունն էր մենակ լինել. մենակ իր վշտերի, իր խոհերի հետ։ Անձրևն ավելի վարարեց։ Չիմացավ, թե ինչ ձևով բաժանվեց Լևոնից, բայց զգում էր, որ ոտքերում այլևս ուժ չկար քայլելու. անցավ ևս մի

քանի փողոց. մարմինը սրթսրթում էր. ցուրտը հասնում էր նրա ոսկորներին. ատամները կրճտացնելով, ինչքան կարող էր արագացնում էր քայլերը, որպէս առաջ տուն հասնելու համար, բայց դեռ էլի ճամբա ուներ գնալիք։ Մի խաչմերուկում ոտքը սայթաքեց և նա վայր ընկավ. ճիգ գործադրեց բարձրանալու, բայց զգաց, որ նվաղել էր. սիրտ չարեց օգնություն կանչել։ Զգիտեր, թե ինչքան էր մնացել այդ վիճակում, մեկ էլ նկատեց, որ մի ձեռք դիպավ իր թևին։ Մարոն ոտքի ելավ, իսկ անծանոթը նրա թևից բռնած հետը քայլում էր։

Մարոն ուժ չուներ այլևս խոսելու. չէր էլ նայում, թե ով է իրեն ընկերակցողը, միայն երբ հասավ իր տան դռան, թևն ազատեց անծանոթի ձեռքից ու շշնջաց։

— Շնորհակալ եմ։

Անծանոթը մի պահ կանգնեց և հանկարծ բացականչեց.

— Մարո՞։

Լսելով անծանոթից իր անունը, Մարոն նայեց նրա դեմքին։ Նայեց ու քիչ էր մնում նորից վայր ընկնի։

Վարգկեան էր։

Մարոն նվաղ, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Դու ինձ արհամարհո՞ւմ ես։

Եվ չուզենալով լսել նրա պատասխանը, դուռը ծածկեց նրա վրա, ու իրեն մի կերպ գցեց սենյակը։

ԴԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

Օրեր ու շաբաթներ անցան, սակայն Մարոն չէր կարողանում իրեն հաշիվ տալ կատարվածի մասին։ Չէր կարող հավատալ, թե Լևոնը այդպիսի չար խաղ կարող էր խաղալ իր ճակատագրի հետ։ Մի՞թե ինքը խաբված է. այնքան ծանր էր նրան այդ զգացումը, որ նա դեռ հավատում էր, թե Լևոնը ինչ որ թյուրիմացության զոհ է, շու-

տով կպարզվի այդ թյուրիմացությունը, նա կվերադառնա ու նույնիսկ ներողություն կխնդրի իրենից և կկամվի իրենց բնակարանն կյանքը։ Այն ժամանակ ինքը համարձակ կնայի և՛ ընկերների, և՛ ծնողների երեսին։

Իսկ այժմ ի՞նչ է իր դրությունը, ոչ մի բանի վրա չի կարող կենտրոնանալ և փողոց էլ դուրս գալիս գլուխը կախում է, որ ոչ մի ծանոթի հետ առիթ չունենա խոսելու։

Ժամանակը սահում էր, սակայն Մարոն իր վիճակում ոչ մի փոփոխություն չէր զգում։ Միակ մխիթարությունը մնացել էր երեխաների շրջապատը. օրվա մեծ մասն անց էր կացնում մանկապարտեզում. մանուկներին երգեր էր սովորեցնում, պարեր ու խաղեր կազմակերպում։ Բայց այժմ, երբեմնի այդ հաճելի պարտականությունը նրա համար ծանր բեռ էր դարձել։ Մանկապարտեզի դեկավարը, մի բանիբուն կին, հասկացավ Մարոյի վիճակը և նրան գրասենյակում ավելի թեթև աշխատանք տվեց։

Մի օր, երբ Մարոն մենակ նստած ինչ որ ցուցակներ էր կազմում, գրասենյակ մտան պարապմունքից ուշացած երկու երեխաներ՝ Սերժիկը և Անիկը. դրանք Մարոյի խմբի երեխաներից էին։ Սերժիկը, վեցամյա մի համարձակ տղա, բռնեց Մարոյի ձեռքից ու բացականչեց.

— Մորաքույր արի մով ու կատու խաղանք։

— Ալաջ ես կլինեմ,— վրա տվեց Անիկը, որ տարիքով փոքր էր Սերժիկից։

«Մով ու կատու» կոչված խաղը Մարոն հաճախ էր կազմակերպել նրանց համար և, ըստ երևույթին, այդ տպավորվել էր նրանց հիշողության մեջ։ Մարոն սրտմտությամբ վեր եկավ տեղից. երեխաները նրա աջ ու ձախ կողմերից պարզեցին իրենց ձեռքերը. Սերժիկն ուզեց շղթա կազմել, սակայն Մարոն նրանց մեղմիվ դուրս հանեց գրասենյակից, ու, տանելով համապատասխան սենյակը, կրկնիծով ասաց.

— Գնացեք, մորաքույր Սեդայի հետ կխաղաք։

Այդօր այլևս չկարողացավ շարունակել աշխատանքը.

գեկավարին հայտնեց, որ իրեն վատ է զգում ու տոմն գնաց։

Տանը ոչինչ չկար, որ գրավեր նրան. փորձում էր կարդալ, բայց կենտրոնանալ չէր կարողանում։ Հենց որ նայում էր գրքին, տողերը շաղվում էին, դառնում մի սև զանգված ու նրանց միջից գլուխը ցցած նայում էր Լևոնը։ Ինչպե՞ս ինքը չկարողացավ կարդալ նրա աչքերի խորհուրդը։ Այժմ պատկերացնելով իրեն նրա վավաշոտ նայվածքը, նա բարկացած վեր ելավ տեղից, գնաց ու եկավ սենյակի մեջ, ապա անսալով ինչ որ բանի, քրքրեց գրքերի արանքը, պահարանը ու հանկարծ ձեռքն ընկավ թղթի մի կտոր։ Կարդաց մի տող. «Ի՞նչ քաղցր են դպրոցական կյանքի հուշերը». Վարդկեսի նամակն էր ձեռքն ընկել. նա անմիջապես նամակը խրեց գրքերի արանքը. ո՛չ, այն ինչ վերաբերում է Վարդկեսին պետք է խստաբար հանել հիշողությունից. չէ՞ որ ինքը չհասկացավ նրան ու դրանով իսկ արժանացավ նրա արհամարհանքին. և ինչ շար պատահմունք էր այն գիշերը. մի՞թե հենց այդ Վարդկեսը պիտի հանդիպեր իրեն. պատկերացնելով այն մղձավանջային պահը, երբ ինքն ուժաթափ ընկած էր փողոցում, նա արդեն ատելությամբ էր լցվում դեպի Լևոնը։ Նրա ուղեղը մաշում էր տագնապալից հարցը, թե ծնողներին ի՞նչ պիտի ասի։ Այդ օրերին նա լուր ստացավ տանից, որ մայրը հիվանդ է, չի կարող քաղաք գալ և ցանկանում է, որ Մարոն գնա իրեն տեսության։ Ուրիշ անգամ, որ այդպիսի լուրը նրան հավասարակշռությունից կհաներ, այս անգամ նա, խորապես ցավելով մոր համար, միաժամանակ ուրախ էր, որ առայժմ գոնե, ազատվում է մորն իր վիճակի մասին բացատրություններ տալու դժվարին ու ամոթալի պարտականությունից։

...Ցմեռ էր արդեն. սկսվել էին դպրոցական տարեկեսի արձակուրդները։ Մարոյի հուսահատությունն իր գագաթնակետին էր հասնում։ Նրա վիճակն այնպիսին էր, որ նա այլևս անհարմար էր համարում փողոց ելնել։ Խնդրեց, որ

ժամանակից առաջ իրեն արձակեն աշխատանքից։ Նրա խնդիրը հարգեցին։ Եվ այժմ, օրերով, մենակ ընկած տանը, ոչ ոք նրա վրա դուռ չէր բաց անում։ Մեկ-մեկ Սոնան էր գալիս նրա մոտ, բայց Մարոն անտրամադիր էր ընդունում նրան, և այժմ, արդեն նրանց խոսակցությունը որևէ կերպ չէր կապակցվում. ավելի ճիշտ, Մարոյին անհաճելի էր կրկնել, վերհիշել այն, ինչ տեղի էր ունեցել. նա լուռ կրում էր և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան տառապանքները։ Չգիտեր, թե ինչքան կդիմանար այդ տառապանքներին. բայց զգում էր, որ ոչ ոք չի կարող իրեն սփոփել. նա կասկածոտ էր դարձել և ամենքից միայն արհամարհանք էր սպասում. այդ պատճառով էլ նա ձգտում էր, ինչքան կարելի է քիչ մարդու հանդիպել։ Բայց ահա, նրա դուռը շատ հատու բախեցին։ Մարոն տհաճությամբ բացեց։ Բացեց ու կիսաբաց բերանով կանգ առավ։ Արփիկն էր. նա ներս մտավ ու փարվեց Մարոյին։

Մարոն երկար ժամանակ ընկած ընկերուհու թևերին լացեց։ Ու հետո, երբ գլուխը բարձրացրեց, նայեց ընկերուհու դեմքին, տեսավ, որ Արփիկի աչքերն էլ լցված են արտասուքով։ Մարոն միայն շշնջաց.

— Մի՞թե դու ամեն ինչ գիտես։

— Մի քիչ ավելին, քան դու։

— Չեմ հասկանում ասածդ։

— Որտեղի՞ց կարող ես հասկանալ, իմ միամիտ, իմ ազնիվ Մարո։

Մարոն լուռ նայում էր Արփիկի դեմքին. Արփիկը սրբեց արցունքները և վրա բերեց։

— Այժմ շատ ուրախ եմ, որ այն օրը, քո ներկայությամբ խայտառակեցի այդ անպատկառին։

— Ա՜խ, Արփիկ, էլի նրանի՞ց ես խոսում։

— Գիտեմ, քո դրության մեջ պիտի լավ բաներից խոսել քեզ հետ, բայց ես այլ կարծիքի եմ. պետք է դու ամբողջ ճշմարտությունն իմանաս, այդ ավելի կթեթևացնի քեզ։

— Ասա՛, ես շատ բանի վարժվեցի։

— Այդ քո Լևոնը այժմ դատվում է...

— Դատվո՞ւմ է. բայց ինձ ինչ, քարը գլուխը։

— Ո՛չ, Մարո ջան, ո՛չ. դա սովորական դատավարություն չէ։

— Հապա ինչպե՞ս։

— Պարզվել է, սիրելիս, որ այդ այլանդակը հինգ տարբեր վայրերում կանայք ունի. և այժմ նա կանգնած է այդ խաբված աղջիկների դատաստանի առաջ։

— Մի խոսի՛ր, Արփի՛կ, չեմ կարող լսել... ես իմ աչքում քանի գնում ավելի եմ ստորանում, Արփի՛կ... ես ուզում եմ մեռնել։

Եվ Մարոն հեկեկում էր ու Արփիկը ոչ մի կերպ չէր կարողանում նրան հանգստացնել։

Երեկոյան, երբ վերջապես Մարոն գտավ ինքն իրեն, Արփիկն այն միտքը հայտնեց, որ Մարոն ևս իր կողմից պետք է դատարանին հայտնի, թե ինչպես վարվեց Լևոնն իր հետ, որպեսզի նրա պատիժն ավելի խիստ լինի։

— Արփիկ ջան, չեմ կարող այդ բանն անել. ի՞նչ, դու ուզում ես, որ ես էլ ներկայանամ իրրև... իրրև վնասերորդ. դու գիտե՞ս, թե ինչ ես առաջարկում։

— Է՜հ, Մարո, լավ, հապա, որ այդքան խորն էիր մտածում, ինչպե՞ս եղավ որ...

— Մի հարցնիր։

Արփիկը մի քանի օր ապրեց Մարոյի մոտ։ Նրանք այլևս ոչ մի խոսք չէին փոխանակում Լևոնի մասին։ Մարոն արդեն գիտեր որ Արփիկն ուրիշ ծանոթներ բերի իր մոտ. նա չէր ուզում իր վիշտը բաժանել ոչ ոքի հետ։ Միայն, երբ Արփիկը գյուղ պետք է վերադառնար իր դպրոցական աշխատանքին, Մարոն խնդրեց, որ ճանապարհին այցելի նաև իրենց գյուղը, և մորը մի կերպ հայտնի իր վիճակի մասին։ Միակ անձնավորությունը, որ նա կուզեր ունենալ իր կողքին, մայրն էր, ուրիշ ոչ ոքի չէր վստահանում։ Եվ ոչ մեկից էլ չէր սպասում, թե որևէ կերպ կարող էր ամոքել իր ցավերը։

Մենդատան սենյակներից մեկում պառկած էր Մարոն։ Չորս օր առաջ նա եկավ այդտեղ և ամբողջ ժամանակ գալարվում էր անտանելի ցավերից։ Այսօր լուսադեմին նա հանգստացավ... թեթև զգաց իրեն և անմիջապես քնեց տանջվածի քնով։ Այժմ երբ աչքերը բացեց, դիշերվա տաղերկուսան անց էր։ Այդ միևնույն սենյակում պառկած էին վեց այլ ծննդկաններ. կապույտ լուսամփոփից մեղմ լույսը սփռված էր մայրերի ու երեխաների դեմքին։ Մարոն ոչ ոքի չէր նայում։ Նախորդ օրերում գալարվելով անտանելի ցավերից, նա չդիտեր, թե ովքեր էին պառկածները և միայն մի մտածմունք ուներ, թե արդյոք երբևէ վերջ կունենան այդ ցավերը։

Արփիկի գնալուց հետո նա շատ էր տառապել. մնացել էր մեն-մենակ, մոռացված։ Մայրն ապաքինվելուց հետո եկել էր աղջկան տեսության. խոցվել էր մոր սիրտը, անիծել էր աղջկա չար բախտը և մոր մտահոգությունն այն էր, թե ինչպես անի, որ խստասիրտ հայրը նույնպես հաշտվի աղջկա վիճակի հետ։ Երկար մտածելուց հետո, մայրը որոշել էր վերադառնալ գյուղ, ամուսնուն նախապատրաստելու։ Նա պետք է նորից քայլք վերադառնար այն հաշվով, որպեսզի Մարոյի դժվար պահին նրա մոտ լիներ. սակայն Մարոյի հոգեկան հեղհեղուկ վիճակին այն հետևանքն ունեցավ, որ նա ժամանակից մեկ ամիս շատ բռնվեց ցավերով։ Այդ ևս Մարոն վերագրում էր իր չար բախտին. ամեն ինչ այնպես էր դասավորվում, որ ինքն ավելի շատ տառապի։

Այժմ երբ նա ինքնապիտակցության էր գալիս, նոր էր զգում իր վիճակի ամբողջ ծանրությունը։ Չորս օր էր ոչ ոք չէր հարցրել նրան, ոչ ոքի չէր հետաքրքրում նրա գոյությունը։ Արժե՞ր ապրել այլևս. ո՞ւմ համար։ Նրան չէր բավարարում այն ինքնահանգստացումը, թե ինքը կապացույց, որ օրինակելի վարք ու բարքի տեր է, և այդ ամենը

եղել է իր անփորձության հետևանքով։ Ո՛չ, գայրանում էր ինքն իր վրա, ինչո՞ւ այդպես ստացվեց։

Լուսանում էր։ Մարոն սթափվեց իր մտքերից, երբ լսեց մանկան լացի ձայները։ Նա շուռ եկավ, նայեց մի քանի մայրերի, որոնք զբաղված էին երեխաներին կերակրելով ու անմիջապես նորից այնպիսի դիրք ընդունեց, որ ոչ ոքի չտեսնի։ Իսկ ո՞ւր է իր երեխան։ Երեխա՞, նա անմռունչ հեկեկաց. այն րոպեից, երբ ինքն իրեն թեթևացած զգաց՝ քնել էր ու դեռ անդիտակ էր կատարվածի հանդեպ. այժմ նա սրատարոսի սպասում էր, թե քույրը երբ կգա, ինչ կասի։ Մինչ այդ, և՛ իր մենակության օրերին, և՛ հիվանդանոցում տառապած չորս օրերի ընթացքում, մեկ-մեկ այսպիսի միտք էր անցել գլխով, թե արդյոք, լավ չէ՞ր լինի, եթե որևէ բերմունքով իսպառ ազատվեր աշխարհ եկող այդ անկոչ հյուրից։ Բայց այժմ, երբ լսեց երեխաների լացի ձայնը, նրա ներսում մի բոլորովին նոր, անծանոթ բան տեղի ունեցավ և այժմ նրա միակ ցանկությունն էր լսել իր մանկան ճիչը։

Անցան տասնապով լի մի քանի րոպեներ, երբ ծննդատան քույրը, մի երեխա գրկին՝ մոտեցավ Մարոյի մահճակալին։

— Տե՛ս աղջկանդ։

Մարոյի կոկորդից մի անսովոր ճիչ թռավ և դեմքը մի այնպիսի արտահայտություն ստացավ, որ անկարելի է բառերով արտահայտել, նա ուզեց նստել անկողնի մեջ, սակայն քույրը զգուշացրեց, թե հարկավոր չէ, իսկ ինքը չգիտեր, թե ինչ ձևով մերձենա երեխային։ Սակայն քույրը, որ երեխան բերել էր կերակրելու, նկատեց, որ Մարոյի կուրծքը բուժման կարիք ունի, ուստի ուղղակի դիմեց ծննդականներից մեկին.

— Արմենուհի ջան, խնդրում եմ կերակրես այս երեխային, մինչև մոր կուրծքը բուժվի. քո կաթն առատ է,— և հավանության նշան ստանալով Արմենուհուց, երեխան հանձնեց նրան։

Ապա քույրը դարձավ Մարոյին։

— Տնեցոց հայտնեցեք, որ երեխային շորեր, բարուվ բերեն։

Մարոն ոչինչ չպատասխանեց։

Այդ պահին, Արմենուհին, որ կուրծք էր տալիս երեխային, դարձավ Մարոյին.

— Քա ինչ լավ էլ ծիծ է քաշում. ախչի՛, մի էս կողմը նայի, տեսնեմ աղջիկդ քեզ է քաշել, թե հորը։

Մարոն դարձյալ ոչինչ չպատասխանեց։ Մայրերը միմյանց բացատրեցին, թե Մարոն շատ է տառապել և այժմ տրամադիր չէ այդ հարցերով զբաղվելու։

Քիչ հետո երեխան արդեն Մարոյի կողքին էր։ Մարոն նայեց նրա փակ աչքերին, փոքրիկ դեմքին և, շրթունքները հագուցելով իրար, տարվեց իր մտապատկերներով։

Ի՞նչ անել։ Բարձրաձայն դռռալ, որ ոչ ոք այլևս չըհարցնի, թե երեխան հորն է նման, թե մորը, հայտնե՞լ ամենքին, թի ինքը ոչ ոքի չի սպասում և ոչ մի շոր ու բարուր, մինչև տուն վերադառնալը, չի կարող ստանալ երեխայի համար։ Այս տանջալից մտքերով, նա կծկվեց տեղում. այդպես մնաց բավական ժամանակ, երբ քույրերը ներս եկան և զանազան անուններ կանչելով մայրերին էին հանձնում նամակներ, ուտելեղեն և երեխաների պիտույքներ, որոնք բերում էին նորածինների հայրերը կամ այլ հարազատները։

Մարոն ավելի ևս կծկվեց տեղում, նա այդ բոպեին կցանկանար, որ սենյակում չղգացվեր իր ներկայությունը, որ ոչ ոք իր կողմը չնայեր, սակայն հենց այդ պահին էլ երեխան զրաղ տվեց իր գոյությունը, սկսեց ճչալ։

Մարոն շփոթվեց։ Արմենուհին նորից վերցրեց երեխան կերակրելու, իսկ մի ուրիշ մայր, իր ստացած քաղցրեղենից մի կտոր տվեց Մարոյին։ Ո՛չ, խոսափել չի կարելի, բոլորը հետևում են մեկը մյուսին, թե ով ինչ է ստանում, ում ով է այցելում. այսօր չէ, վաղը նորից կհարցնեն, թե

ով է վերջապես ինքը, Մարոն։ Քույրը նորից ներս եկավ և ձայնեց.

— Մարո՜։

Մարոն չուզեց ձայն տալ. թերևս նորից մի անպատեհ հարց. ի՞նչ պիտի պատասխանի։

— Մարո՜,— նորից ձայնեց քույրը և մոտենալով Մարոյին շշաստ-շշաստ ասավ,—ահա՛, էս էլ քո կապոցը. է՛լ ուտելիք, է՛լ երեխի շոր ու բարուր. էս էլ քեզ նամակ. բայց խաթրդ չմնա. մարդիդ մի լավ շշպռեցի. ասի ի՞նչ է, շորս օր կնիկդ տանջվում է, ոչ գալիս ես, ոչ հարցնում.. դե՜, հիմի նրան կվազեցնեմ, օրը երեք անգամ կգա... չեն մնա, աղջիկ էր, բայց տղի աչքալուսանքի չափ աչքալուսանք տվեց։

Այս ասելով, նա կապոցը դրեց Մարոյի մահճակալի մոտ և նամակն էլ ուզեց դնել Մարոյի ձեռքը։

Մարոյի ամբողջ մարմնով սարսուռ անցավ. ինչ շար կատակ է սկսվում. ուզում էր ճչալ, թե գնա, նայիր մյուս պալատները, այնտեղ կլինի իսկական հասցեատերը, իսկական Մարոն, մի խայտառակիր տանջված աղջկան. քիչ հետո իրերի, նամակի իսկական տերը կիմանա և կրկնակի խայտառակություն կլինի Մարոյի համար. բայց ոչինչ չկարողացավ ասել։ Քույրը հեռացավ, նամակը թողնելով կապոցի վրա և ինքն իրան մրմնջաց.

— Ի՞նչ հոտած աղջիկ է։

Տաս րոպեից ավել Մարոն անշարժ մնաց. ահա, հիմա կամ քիչ հետո քույրը կգա և ետ կվերցնի բերածը՝ իսկական տիրոջը հանձնելու համար. բայց քույրը չէր երևում։ Անցավ ևս մի քանի րոպե և Մարոն սիրտ արավ ու նամակը ձեռքն առավ. ուզեց ձեռագրից որոշել հեղինակին, բայց ոչինչ չկարողացավ գուշակել. բացեց ու կարդաց հետևյալը։

«Թանկագին Մարո. ներիր, որ ուշ իմացա հիվանդանոց փոխադրվելուդ մասին։ Շնորհավորում եմ մայրությունդ։ Ինչ որ այժմ քեզ ու երեխային անհրաժեշտ է, բերել եմ այս կապոցով, ուրիշ ինչ բանի,

որ կարիք ունես, խնդրում եմ հայտնես։ Ջերմ բարևներով՝ Ա. Ֆ.»

Մարոյի համար հանելուկ էր սկսվում. որ կապոցն ու նամակը իրեն էին հասցեագրված, այժմ այդ մասին ոչ մի կասկած չուներ, բայց ո՞վ էր Ա. Ֆ.-ն. մտաբերում էր բոլոր ծանոթների անունն ու ազգանունը, ոչ մեկին չէր համապատասխանում. միայն Ա.-ն կարող էր հիշեցնել Արփիկ. բայց կապոցը բերողը տղամարդ էր և ձեռագիրն էլ, ինչքան կեղծված, դարձյալ կարելի էր որոշել, որ տղամարդու ձեռագիր է։ Գուցե Լևոնն է... Բերես, այն ինչ պատմեց Արփիկը նրա մասին, հերյուրանք է... այստեղ նա տանջալից փակեց աչքերը. ո՛չ, ո՛չ, Արփիկը չէր կարող սխալվել։ Եվ մի՞թե Լևոնը այդ ամենից հետո, ընդունակ էր այսպիսի գործի։ Իսկ եթե նա իր այս նեղ օրին այնուամենայնիվ այսպես է վարվում իր հետ, ապա, ապա... նա միտքը չլրացրեց. նրա պարզ ու բարի հոգուց կարծես չքանում էր տեսության զգացումը՝ դեպի իր տառապանքների հեղինակը։

Առեղծվածը սակայն չէր լուծվում։ Հետևյալ օրը քույրը նորից նամակ ու բաղդրեղեն բերեց նրան։ Նամակը սառարարված էր Ա. Ֆ.։ Քույրն այս անգամ համառ գտնվեց և ասաց, որ ամուսինն այնտեղ պատասխանի է սպասում։

Ամուսին, այսպես էր ասում քույրը և մյուսներն էլ այլ կերպ չէին կարող ընդունել այցելուին։ Մարոն ուզում էր հարցնել, թե ի՞նչ գույն ու կերպարանք ունի այդ ամուսինը, և սարսափում էր այդ մտքից։ Ձիջելով քրոջ ստիպմանին նա միայն այսքանը գրեց.

«Բարևներ Ա. Ֆ.։ Շնորհակալ եմ, որ մտաբերել եք։
Մարո»։

...Մարոն սպարինվում էր. այժմ ինքն էր կերակրում երեխային։ Այսօր նա պետք է թողներ հիվանդանոցը։ Ինչքան մոտենում էր հիվանդանոցից հեռանալու ժամը, այնքան ավելանում էր նրա սարսափը, ո՞ւր գնալ. ի՞նչ նոր հիասթափություն է սպասում իրեն։ Եթե այդ Ա. Ֆ.-ի հո-

դացողությունն էլ մի հերթական խաղ է. ի՞նչ պիտի անի։ Եվ զգում էր, որ այլևս նոր փորձանքի չի կարող դիմանալ։ Լավ է գնալ մի հեռավոր անկյուն և մի կերպ քաշ տալ իր գոյությունը։

Որոշյալ ժամին քույրը եկավ, օգնեց Մարոյին հագնվելու, ապա գիրկն առավ երեխան ու հանդարտ քայլերով անցնելով միջանցքը, հասան ելքին։

Քույրը դուռը բացեց և, երեխան դնելով իրենց սպասող մի տղամարդու գիրկը, ասաց.

— Ահա տղիկդ։

Մարոն նայեց տղամարդուն։ Նայեց ու նրա կոկորդից նորից մի այնպիսի ճիչ թռավ ու դեմքն ստացավ այնպիսի արտահայտություն, ինչպես այն օրը, երբ առաջին անգամ տեսավ իր նորածինին։

Երեխան Վարդկեսի գրկումն էր։

Վարդկեսը հրավիրեց Մարոյին իր հետ կառք նստելու։

Երբ կառքն առաջ էր շարժվում, Վարդկեսը մեղմիկ շշունջով հայտնեց Մարոյին, որ գնում են իր բնակարանը։ Մարոյի վրա ո՞չ ուժ էր մնացել և ո՞չ էլ այդ պահին դատողությունն էր գործում, որ որևէ կերպ առարկեր։

Նրանք իջևանեցին Վարդկեսի սենյակը։

Անցավ մի երկու օր. Մարոն դեռ ջերմություն ուներ։ Չհավատալով, թե ինչ է կատարվում իր հետ, նա աչքերը փակած, խորհրդածում էր, և ահա՝ այսօր էլ, երբ նա մի պահ աչքերը բացեց, տեսավ իր վրա կռացած Վարդկեսին։ Մարոն շշնջաց.

— Վարդկես, ուրեմն դու ինձ չե՞ս արհամարհում։

Վարդկեսն այդպիսի հարցի չէր սպասում, դրա համար էլ չկարողանալով իսկույն պատասխանը գտնել, միայն բացականչեց.

— Մարո՜...

Բացվում էր դարունը, և Մարոն զգում էր, որ կուզե նորից լսել Վարդկեսի ձայնը։

Երբ հեռակայ օրը Մարոն իրեն լավ զգաց, Վարդկեսի

հետ պատշգամբ ելավ։ Մարոն նայում էր լայնաբերկնքին, ապա բակում փարթամացող ծառերին, այնտեղ երևացող մարդկանց։ Առաջին բանը, որ Մարոն զգաց, այդ այն էր, որ մարդիկ այլևս սարսափելի չէին նրան և որ ինքն այլևս կարիք չուներ նրանցից թաքնվելու։ Ահա՛, դեպի պատշգամբն են գալիս նաև երկու փոքրիկներ։ Նրանք ծաղիկներ ունեն ձեռքներին. նրանք մոտենում են Մարոյին ու պարզում են ծաղիկները.

— Գարնան ծաղիկներ,— ասում են նրանք միաբերան։

Սերժիկն ու Անիկն են. նրանք իրենց ծնողների հետ ապրում են այն բակում, ուր ապրում է Վարդկեսը և այժմ, նաև Մարոն։

Մարոն ընդունում է ծաղիկները և գգվում է երեխաներին։ Անհագորդ կարոտով նա ծծում է ծաղիկների բույրը։ Ապա երեխաների ու Վարդկեսի հետ անցնում է սենյակ։ Բոլորով դիտում են իր քնած դստերը։

Մարոյին, թվում է, թե նորածինը ժպտում է։

Եվ այդ ժպիտը, Մարոյին այնպիսի ոգի ներշնչեց, որ երբ այս անգամ նա Վարդկեսի հետ մենակ մնաց, սիրտ արավ ու խոսեց.

— Ասա՛, Վարդկես, ի՞նչ հանելուկ է այս. ի՞նչ է նշանակում այս բոլորը. հետո մեկ էլ այդ ինչ Ա., այդ ինչ Ֆ.։

Վարդկեսը նայեց Մարոյի աչքերի խորքը։

— Մարո, սիրելիս,— խոսեց նա,— գուցե վատ է, որ այդպես է... սիրտ չէի անում միանգամից քեզ հայտնել, որ ես եմ այցելում, բայց երբ ստացա երկտողդ, ուր դու շնորհակալություն էիր հայտնում, ինքդ էլ չիմանալով, թե ում, ես ինձ արդեն երջանիկ էի զգում։

Մարոն միայն մի հառաչ արձակեց, և աչքերը նորից լցվեցին արցունքով։

Վարդկեսը որոշեց, ինչ կար սրտում, ամբողջն ասել, ուստի, բռնելով Մարոյի ձեռքը վրա բերեց.

— Իսկ ստորագրությունս Ա. Ֆ. էի ընտրել, ցանկանա-

լով ասել, որ դու Մարո, եղար իմ առաջին սերը, դու մնում ես նաև իմ վերջին սերը... անփոխարինելին։

Մարոն ուժ գործ դնելով գլուխը բարձրացրեց, իր արցունքոտ աչքերի խորքից նայեց Վարդկեսին և շշնջաց.

— Մի՞թե ես արժանի եմ դրան։

1929
Ծուվա—Երևան

ԱՆԱՆՈՒՆ ԸՂՋԻԿ

ՄԱՄԵՆ ՈՒ ԱՉԵՆ

Ա.

Էն ո՞ր տղայի սիրտը չմաշեց, էն ո՞ր ջահելի սիրտը չմղկտաց էն դիշեր։

Էն դիշեր, պայծառ դիշեր, լուսնից էլ լուս կուտար Աշեն, էն դիշեր, կարոտի դիշեր, խարուկից էլ թեժ ցոլք կուտար Աշեն։

Հպարտ էր նա իր հայրենի ժայռերի վերասլաց արծվի պես, խրոխտ էր նա հաղթանակով դիցուհու պես. բարձր էր բոյը, ինչպես չինարը և նայվածքն էլ կախարդիչ թռչուններն հրապուրող օձի նայվածքի պես։ Թուխ գեմքը գրավիչ էր գարնան արևի շողքից և զայրույթի պահին անխնա իրենց գաշտերին փչող հանկարծահաս մրրկի նման։

Էսպես էր Աշեն։

Էնքան չլվան տղաների մեջ, մենակ Մամեն էր, որ կպավ Աշեի սրտին, ու էնքան սիրուն աղջիկների մեջ, մենակ Աշեն էր, որ կպավ Մամեի սրտին։ Մամեն, Զոզան նանի պահած մինուճար Մամեն, ինչքա՞ն աղջիկների աչքը ջուր կտրեց Մամեն, ինչքանի՞ էլ քնահարամ արեց Մամեն։

Ու երբ Մամեն ու Աշեն մեկ բարձի արժանացան, նոր միայն Զոզանը հանգստացավ, պառաված երակներում եռաց արյունն ու նորից աշխուժացավ իր ջահել օրերի թափով։ Դարձես էդ էլ էն Զոզանը չէր, որ տաս տարի, դիշեր-ցերեկ աղայի կանանց ծառայություն արավ, մինչև մեջքը թոնրումը ծռած՝ աղային բոյե-բոյ լավաշ թխեց ու իր գրտնակ թևերն աղայի ձձումը զարկելով թոռմեց, մինչև Մամեն բերան եկավ։

Քսան տարեկան Մամեն էնպես սազական էր տասնութ տարեկան Աշեի հետ, որ երկնուց սլացող գիշատիչ բազեն էլ նրանց տեսնելիս, բերնի որսը թողնում էր ու մալուլ-մալուլ սիրողներին նայում, որ փրփրաբաշ նժույգը, առջևի ոտքը զարկում էր գետնին, ու հանդարտվում էր նրանց շոյանքի ներքո։

Էն քրդուհին, որ քրտնել էր Զոզանի պես, էն աղան, որ Մամեի հետ հովվություն էր արել սարերում, էն աղջիկը, որ Աշեի հետ ջուր էր կրել աղբյուրից,— նրանց ոխն արևի մեկ փաթ տևեց, մեկել օրն, ամենքն էլ խնդացին ու մխիթարվան Մամեի ու Աշեի բախտավորությամբ։

Դահար աղան էր, որ չծիծաղեց, Դահար աղի սրտումն էր, որ նախանձի սև օձը բուն դրեց։ Նա տեսնում է հիմի իր ծառայի տղային ընկերացած Աշեի հետ. երկուսով էլ նրանք ավելի համարձակ են, քան իր ամենակարիճ իգիթը։ Էս էն Աշեն չէ՞ր, որ մենակ՝ աջ բազկով էնպես հրեց Դահարին, որ մինչև հիմա էլ գլուխը պտուտ է գալիս։ Ծառայի թուլեն դիմադրել է աղային, իգիթի պես ինքն է պաշտպանել իրեն փախցնել փորձողների դեմ,— և ամենքից ատելությամբ ու կոպիտ նա վարվել է իրա՝ ցեղի ամենամեծ աղայի, Դահարի հետ։ Հապա էլ ո՞ր օրվա համար է իր աղայությունը, որ ծառան իրենից առաջ անցնի, իր աչքը կտրածին ձեռ դնի,— շատ էլ Աշեն հաղթվել է Մամեից, շատ էլ Մամեն տիրացել է այդ փերուն,— չէ՞ որ ինքն աղա է ու ամեն բարիք նախ ինքը պիտի վայելի։

Ու Դահարը հրամայեց ցեղի մեջ եղած կարիճներին հավաքել ու ամենից առաջ Մամեին կանչեց։

-- Տեսնո՞ւմ եք էս արևը,— ասաց նա հպարտ ու հրամայող— մինչև մեկ էլ նա կանգնի էստեղ, դուք պիտի շեյխ Զավադի զինվորների առաջին շարքումը լինեք, որ գիլանցիներին մանրեք, ա՜յ, թոնրից քաշած էն փոշու պես։ Դե, շարժվեցե՛ք, խոդեն*) ձեզ քոմակ։

---

*) Ատոված։

Աղայի հրամանն ու կամքն էր, անառարկելի օրենքը, և Մամեն տուն դարձավ կոտրած սրտով։

Էն բաղեի պես սուր ու կրակոտ աչքերից ցողեց երկու կաթիլ արցունք։ Չէ,— ասեց հետո Մամեն իր մտքում,— թող Աշեի ու նանեի սիրտը չկոտրվի. ուրախ ձայնով ասաց.

— Աշե, քու թևին էլ ավելի ուժ տուր, որ նա Մամեի քոլոզը դիք պահի,— ու համբուրեց Աշեի տրտմած երեսը, գգվեց նրա մինչև էդ չխոնարհած աչքերը։

— Մարե ջան,— ասաց նա մորը գիրկն առնելով,— զինվորի պարտք է, պիտի կատարեմ։ Աշեի սիրտը, տե՛ս, չկոտրի, քու մազերն էլ սև տեսնեմ...

Ու երբ Մամեն իր ձիու մեջքին՝ ճամբեն կչափեր, Դահար աղեն թեթև սրտով լմեժի*) նստավ, Աշեն ու Զոզանն էլ մեկ-մեկի սիրտ չկոտրելու համար իրենց արցունքը ծիծաղ դարձուցին։

Ռ.

Յոթ տարին բոլորեց. յոթն անգամ շորացավ ուռին ու երբ ուզեց նորից գալարել, Աշեն, մալուլ-մալուլ, գարնան կարոտով, պապակեց իր Մամեին։ Դահար աղան քառասուն տեսակ ջուհաբ ղրկեց, քառասուն տեսակ խոստում արեց, քառասուն ձևի էլ փախցնելու փորձ արեց,— բայց Աշեն, է՛ն Աշեն էր, որ աղայի բերանն խսկի ոսկու էլ չգցեց, որ շողքի պես պայծառ մնաց ու Մամեի քոլոզը դիք պահեց, Զոզանին սիրտ տվեց, նրանից սիրտ առավ և հարս ու կեսուր իրենց ճակատի քրտինքը թափելով նամարդին մուխտաջ չեղան։

Աշեն, պայծառ Աշեն, լուսնի պես բոլորակ Աշեն, իրիկվա հովին ելավ, թիկնեց լուսամուտին, երկու ափերի մեջն առավ արևից կարմրած թշերն ու երկե՛ն ճամբեն նայեց։

---

*) Ադոթը։

Էս էն ճամբեն էր, որ տարավ Մամեին, էս ճամբով էր, որ օրական հազար մարդ կերթար ու դրանից էլ ավելի հետ կդառնար։ Ու Աշեն, ամեն օր, ջուհաբ կհարցներ իր Մամեից։

Հիմի էլ չափ գցած գալիս է էն ճերմակ ձիավորը, քրտինքը թրջել է նրա ճակատը ու բարակ արխալուղը ֆրոռում է քամու առաջ։ Նա արդեն մոտեցել է լուսամուտին ու օտար-օտար նայում է։ Աշեի սիրտը թրթռաց պատուհակը պատռող կոկանի պես ու նա ձեռքը շարժելով ասաց.

— Հասիարո*), արի տեսնեմ, ո՞վ ես, ո՞վ չես, իմ Մամեն էս ա յոթ տարի զինվոր ա, արի մեր հացը կտրի, թե ջուհաբ ունես՝ լավ, թե չէ՝ ճամբեդ հաջող։

— Հացդ անպակաս լինի, բոնդո**). Էս գիշեր ես քո ջանի հյուրն եմ,— էսպես պատասխանեց էն ձիավորը։

Յոթ տարվա մեջ էս հյուրն ամենքից համարձակն էր։ Աշեն չնեղացավ նրա խոսքերից, դուրս վազեց, փնչացող նժույգի սանձը բռնեց ու երբ ձիավորն իջավ, ձին տարավ ախոռը, կապեց և խոտ ու գարի տվեց։

Ու երբ հետ եկավ՝ օտարականին իր օդեն առաջնորդեց. նա էլ թվանքն ու թուրը պատից կախեց, և մեկ էլ, որ ձեռքը տարավ՝ քոլոզը հանելու, թաց գլուխը շփելու համար, Աշեի սրտին լեռնացած յոթ տարվա կարոտը հորդեց գարնան գետի պես ու նա նույն թափով ընկավ տղայի գիրկը։

— Վայ դու անհոգի Մամե, էս ի՞նչ ֆանդով տուն կուգաս։

— Բա ո՞վ կարող էր քո ջանին հյուր լինել, հա՞, իմ տղիզ Աշե։

Էլ Աշեն մնաց Մամեի կրծքին, Մամեն էլ նրա գլուխը դրկեց ու քաղցր համբույրների տակ մոռացան յոթ տարվա տանջանքն ու ցավերը։

---

*) Զիավոր։
**) Դեղեցկուհի։

— Աշե՛ջան, դե գնա նանեին էլ իմաց տուր, որ գա գլուխդ անենք,— ասաց Մամեն։

— Ա՜խ, Մամե,— մղկտաց Աշեն,— նանեն թող էս գիշեր հանգիստ քնի. կլուսանա, էն ժամանակ ինչքան կուզես հետը կգրուցես, հիմի կաթ ու մածուն բերեմ, ուտենք, խըմենք, իրար վայելենք...

Մամեն դեմ չխոսեց. Աշեի տեսքը կշտացրել էր նրան։ Մի քիչ կաթ խմեց, ուտքերը լվաց և ապա լուսնի շողերի տակ գրկեցին միմյանց ու մտան անկողին...

Գ.

Աղոթքանը, որ ճկճկալեն բացվավ, Զոզանը տեղից վեր եկավ. երեք անգամ սրտի խորքից ծանր «ախ» քաշեց, երեք անգամ գլխով դրլեին*) ողջունեց, երեք անգամ էլ «խոդե» կանչեց։

Էգ Մամեի կարոտն էր, որ կմաշեր պառաված մորը։ Յոթը տարի Զոզանն էլ դարդը ներս գցելով սպասում էր Մամեին, յոթը տարի սիրտ էր տալիս էն թառլան Աշեին, որ էնպես մաղում, որ էնպես կարոտով մուրազը կես արած, դարբեղար Մամեին կսպասեր։

Նրա պառավ երակներում արյունը դեռ առույգ էր վազում, դեռ թևերը պահել էին իրենց զորությունը. Զոզանն էլ ուներ իր մուրազը, որ ամեն անգամ նրա սիրտը կդաղեր, երբ գնայեր Աշեի բոյ-բուսին։

Երբ անկողինը ծալեց իրար վրա, Զոզանը բուխերիկին մոտեցավ. էնտեղ էր ամեն օր Աշեն ջրով լիք իրրուվոր դընում, որ Զոզանը լմեժի նստեր, որ ջերմ սրտով խոդեից Մամեին բարի վերադարձ ու իրենց սրտին համբերություն խնդրեր։

— Վայ, Աշե,— գլուխն օրորեց Զոզանը,— մտահան ես արել, հա՞, չեմ մեղադրում ընդդ ջան... յարաբ ի՞նչ

---

*) Հարավ, աղոթելու կողմ։

գան միաք ա եկել գլխիդ, որ յոթը տարվա մեջ չմոռցած գործդ էսօր մոռցար...

Էսպես խոսեց ինքն իրեն Զոզանն ու երբ գոմը գնաց իբրևլիսը փնտռելու՝ ականջին հասավ ձիու խրխնջոց։

Զոզանը կանգնեց։

— Էս ի՞նչ կլսեմ. սատանի փորձա՞նք ա... չէ՛, ձի ա ու ձիավարի էլ խրխնջում ա...

Զոզանը գոգնոցի փեշերով սրբեց աչքերը. գոմի երդիկից արևի առաջին շողքը ներս էր ընկել ու ամեն օրվա պատարկ մսուրի դիմաց պսպղում էր ճերմակ ձիու հպարտ գլուխը։

— Վայ Աշե,— էլի խոսեց Զոզանը,— հապա հյուր դա, նանեին իմաց չե՞ն տա. ինչի՞, ես հյուրի պատիվ մոռցե՞ր եմ, ինչի՞, ես իմ քար ու քոլ ընկած Մամեի սաղաղին գլխիս վրա չէ՞ դնի հյուրին. վայ Աշե, վայ իմ աչքի լուսա, վայ։

Ու Զոզանի ոտքերն ուժ առան. յոթ տարվա մեջ առաջին անգամ մոռացավ լմեժն ու վազեց օդեն, էն օդեն, ուր Աշեն յոթը տարի մենակ, իր Մամեին էր սպասել։

Զոզանը դուռը բացեց ու ներս մտավ։

Արևի մի շողք էլ էստեղ էր ներս ընկել, սփռվել անկողնի վրա։

Զոզանը մեկ էլ ծմրկտաց ու ճմռեց աչքերը։

— Էս ի՞նչ է. թե ձին սատանի փորձանք չէր, էս էլ փորձանք չէ...

Աշեն պառկած է, կողքին էլ ջահել տղա. էն ի՞նչ է կարոտով է գրկել Աշեին. մինչև արմունկը քշտված առնական թևը փաթ է արել Աշեի վզով ու յոթը տարվա մեջ չխոնարհած գլուխը զարկել է դոշին, ու ի՞նչ էլ անուշ քնի մեջ են։

— Վայ Աշե, վայ. քո նամուսն իմա՞լ նամուս ա. իմ աչքի լուսով պահած Մամեն, իմ սար ու ձոր ընկած Մամեն, էս ա յոթը տարի դարիբությունն ա քաշում, հապա քո նամուսն իմա՞լ նամուս էր, Աշե ջան, որ դու յոթ տարվա ուս

Ու Զոզանի երակներում արյունը եռաց, վարարեց ու նա խոյանքով հասավ պատը. էնտեղ էր հյուրի սպասը, էնտեղ էր հյուրի մուրազով սրբած, մաքրած այնալուն։

Զոզանը փութով ձեռքն առավ այնալուն, ու նրա վիրավորված հոգուց ուժ ստացած ձեռքերում, այնալուն օրորաց թեթև ոստի նման։ Մաժեց մեկ անգամ փողը ու դեմ արեց Աշեին հրապուրող հյուրի ճակատին։

— Իգիթ տղա է,— ասաց,— ճակատից պիտի զարկեմ։

Ասաց ու կանգ առավ։

— Չէ, Աշե ջան, չէ, էսպես չեղնի, այնալուն ձեն կհանա, հարեանով-գեղով կիմանան, Դահար աղեն կլսա, սիրտը կհոլնա, քո յոթ տարվա պայծառ պահած անունը, Աշե ջան, կկոտրի, իմ Մամեն էլ կուգա, կիմանա, կխռովի ու սիրտն էլ կկոտրի...

Ու այնալուն ետ տարավ, էլի կախեց պատից։

Ետ դարձավ, տեսավ, որ հյուրն շտապելուց դաշույնը թողել է բարձի կողքը, թռավ՝ վերցուց, պատյանից հանեց կեռ, պպզան դաշույնն ու թափ տվեց հյուրի գլխավերև։

— Վայ թե ուժս պակսել է, հա՞, մեկ զարկով վայ թե չսպանեմ, չէ՞, Աշե ջան. էս տեսակ իգիթ տղեն կմեռնի՞ պառավ Զոզանի մեկ զարկով... չէ՞, վայ թե սաղ մնա, ձեն էլնի, խալխն իմանա, Աշեի անունը կոտրի, Մամեն էլ գա, լսա, խռովի, սիրտն էլ կոտրի...

Դաշույնն էլ ետ դրեց պատյանը։

Ջահելները դեռ անուշ երազի մեջ էին։

Հյուրը քնի մեջ ինչ որ շարժում է անում և գլուխը սեղմում է Աշեի կրծքին. Աշեի ծուի մազերն էլ ծածկում են հյուրի դեմքը։

Ո՜հ, Աշեն, իր բոցոտ ու այրող համբույրով դուր է եկել հյուրին ու նա քնի մեջ էլ չի դադարում զգվել Զոզանի մուրազով պահած հարսին։

— Չէ՛,— ասաց Զոզանը,— պետք է շտապել, հիմի կզարթնեն ու էն ժամանակ ուշ կլինի։

Ու էլի թռավ Զոզանը դեպի հյուրի ասպասը, քաշեց, դուրս բերեց երկին թուրը։

— Էս հարմար է,— ասեց,— էս դոշը կմանի ու մեկ թիզ էլ դոշակից դենը կանցնի։ Ձեն չելնի, խալիս չիմանա, Դահարի սիրտը չի հովանա, Աշեի անունը չի կոտրի, Մամեն էլ չի խռովի ու սիրտն էլ չի կոտրի...

Ու նորից պրկվեցին Զոզանի թևերը, նորից նոր հորձանքով արյունը եռաց նրա ներսում և նա թուրն Աշեի մազերի արանքից սեղմեց հյուրի կրծքին։ Հյուրը ցավից շուռ եկավ, ընկավ մեջքին, Զոզանն ավելի ուժով սեղմեց՝ ու թուրը ծակեց անցավ կուրծքը, հասավ դոշակին, էն էլ ծակեց, անցավ ու ամրացավ գետնին։

Զոզանը զոլացած խորը շնչեց ու նայեց Աշեին։ Աշեն, որ հյուրի շարժումից արդեն զարթնել էր, նստեց անկողնում ու անդիտակ նայեց չորս կողմը, նայեց Զոզանի ինքնաբավական դեմքին ու դեռ չէր նայել հյուրին, որ սար արյունն, արդեն, խտուտեց իր կողքը։ Աշեն սոսափվեց, նայեց իր կարոտով դրված Մամեին, նրա կրծքին ցցված թրին ու ամեն ինչ հասկացավ։

Հետո Աշեն նայեց Զոզանին, ապա ծուռ մազերը թափով գցեց իր դեմքին ու մղկտաց.

— Այ մեր, իմ իգիթ Մամեն չոթ տարի կռվավ, չպանվավ, ըսկի վիրավոր էլ չեղավ, էս ի՞նչ արիր դու, հա՞։

Ու Զոզանն էլ հասկացավ... հասկացավ, որ Աշեն, էն Աշեն էր, որ դիք էր պահել Մամեի քոլոզը, Մամեի, որ էնպե՞ս անմուրազ մնաց, մուրազով պահած մոր ձեռքից։ Ու Զոզանը տղայի կրծքից թուրը դուրս քաշեց. արյունը նոր հորձանքով ժայթքեց. Զոզանը ընկավ խոցված կրծքին ու արյունը ներկեց նրա դեմքը։

— Ա՜խ, Մամե,—ողբաց Զոզանը.— Մամե՜, Մամե՜, քո մեր եթիմ ա, քո մեր մալուլ ա, Մամե՜, Մամե՜... քո մեր գալուլ ա, քո մեր զալուլ ա, Մամե՜, Մամե՜... ա՜խ, տղես արյունը ծով ա. Մամե՜, ո՞ր գուշմանը քո իգիթ դոշից էնպես արյուն կքաշեր, հա՞, Մամե՜ ջան, Մամե՜։ Ա՜խ, իմ

Թաղան, իմ անմուրազ Մամե՜... քո նանեն, թող իր ծամեր կտրա, Մամե՜, թող աշխարհ ու ալամ քո անբախտ մոր դարդն իմանա, Մամե՜, Մամե՜, Մամե՜...

Աշեն էլ ձենը խառնեց մոր ձենին, ողբաց օր ու գիշեր։

Ու երբ Զոզանի ու իր արցունքները չորացան, դադաղ սարքեց, սիրած մոր ձեռքով սպանված տղին նրա մեջը դրավ. դագաղը բարձրացրեց իր հերոսական—պինդ ուսին, յոթն արևի փաթ ողբալով, շենից-շեն ման ածեց, ապա հանեց բարձր սարի ամենաբարձր կատարին ու թաղեց արծիվների քնի մոտ, որ է՛ն արծիվներն ամեն օր բարձրից նայեն աշխարհին, տեսնեն՝ Աշեին, է՛ն Աշեին, որ յոթ տարի Մամեի քալոզը դիք պահեց ու է՛լի կպահի, որ Մամեն չրխոսվի ու սիրտն էլ չկոտրի...

1929—1932

Բեշիշքենդ—Մոսկվա

ԼԱԹԻՖԻ

ԻՄ ՊԱՏԵԱՌ ԲԱՐԵԿԱՄՈՒՇՈՒՆ

Ա.

Հինավուրց մզկիթի մինարեի բոլորակ շրթունքին թառած մոլլայի բերանից թռավ ազանի վերջին հանգը։

Հավատացյալ իսլամները հինայած մորուքները շոյելով մզկիթ մտան։

Մենակ Սարդար խանն էր, որ այդ օրը ոչ մոլլայի ազանն ուզեց լսել, ո՛չ էլ որևէ ուշադրություն դարձրեց մզկիթն շտապող հավատացյալների վրա։ Նա մոլեգնած հայացքով, ակնակապիճներից դուրս ցցած աչքերով, կատաղորեն անց ու դարձում էր հարեմի ընդարձակ դահլիճում։

Այնտեղ շարեշար կանգնած էին ութը կանայք. տասնըհինգ տարվա ընթացքում նա մեկ-մեկ ջոկել էր նրանցից յուրաքանչյուրին, ջոկել էր կրքով, ջոկել էր նախանձով, ջոկել էր արևելյան կասկածամտությամբ, և այժմ, նա մեկ-մեկ նայում էր նրանց վրա իբրև իրերի, որոնք իր անձնամիաելի ու անկապտելի սեփականությունն էին, իբրև էակների, որոնք պարտավոր էին հասկանալ իր ամեն մի շարժումի իմաստը, և ինչպես ծառի տերևները շարժվում են քամու հոսանքի ուղղությամբ, այնպես էլ այդ արարածները պարտավոր էին շարժվել իր ցանկացած ուղղությամբ։

Եվ խոնարհած գլուխներով, սակայն աչքերի զգաստ թարթումով ութը կանայք լուռ հետևում էին Սարդարի մոլեգնած անց ու դարձին։ Ութը կանա՞յք... Սարդարը քայլում ու հաշվում էր մեկ... երկու, մինչև ութը... ութը կին, ութը

հրաշք. մեկի աչքերը վառման խարույկ էին, որ կարող էին լույս տալ գիշերվա խավարում, մեկինը կապույտ, ինչպես Իրանի հնամենի ծովն էր, մեկը ճարպիկ էր ինչպես վիթ, մյուսը ճկուն ու թեթև որպես ելեր, մեկի պարանոցը խոյանք ուներ կարապի նման, մյուսինը լուսածին մարմար էր, որի մեջ կարտացուլեր աշխարհն իր բուլր հրաշքով, մեկի բերանը նորաբողբոջ վարդենի էր, մյուսինն արդեն բացված մանուշակ. և բոլորի վրայից բուրում էր ջենանթի անմահական հոտը:

Սարդարը նայում էր կանանց և ինչքան շատ էր նայում, այնքան ահագնանում էր նրա կատաղությունը. ինչքան հրապուրիչ գուրեկան էին այդ ութը կանայք, այնքան անբընդունելի ու մոլեգին էր դառնում նրա կատաղությունը:

— Ո՞ւր է Լաթիֆեն, ինչպե՞ս փախավ, ո՞վ օգնեց նրան, հա՞, դու չգիտե՞ս, դո՞ւ էլ, դո՞ւ էլ... ա՜հ, հասկանում եմ. դուք բոլորդ սխ ունեք իմ դեմ... ամեն մեկդ ձեր սրտում մի-մի սիրեկանի պատկեր եք պահում. վայ թե մի ճեղքվածք եք տեսել դռան արանքում... խսկո՞ւմն, կատվի պես ճկուն կդառնաք ու հայդե՜...

Խոսում էր Սարդարը մոլեգնած, մերթ կանանցից մեկին, մերթ մյուսին դիմելով, ապա կատաղորեն նորից հետ ու առաջ շարժվում դահլիճում:

Երկու օր առաջ հարեմից փախել էր նրա իններորդ կինը, Լաթիֆեն. նա ամենից մատաղահասն ու ամենից սքանչելին էր. չորս ամիս, տասնվեցամյա աղջիկը, դիմադրել էր Սարդարի քմահաճ, կրքոտ պահանջներին ու վերջը փախել էր... Թե ինչ ուղղությամբ՝ Սարդարը չէր կարողացել պարզել: Նա անմիջապես գլխատել էր տվել կանանոցի պահապան երեք ներքինիներին, հետո զանազան ուղղությամբ ուղարկել էր հետախուզներ, բայց բոլորն էլ ձեռնունայն էին վերադարձել:

Ահա այս դեպքն էր, որ մոլեգնության աստիճան կատաղեցրել էր Սարդարին և այդ էր պատճառը, որ նա զայրացել էր նաև իր մնացած ութը կանանց դեմ... Այժմ նա չէր հավատում նրանցից և ոչ մեկի սիրուն. նրանց բոլորի

գուրգուրանքը բռնաբռոսիկ, շողոքորթ և առերես էին թվում Սարդարին և այդ մտքից նա ավելի ու ավելի էր գազազում...

Արևելյան հարեմում սեր չկա։ Սեր չի կարող լինել այնտեղ, որ տիրապետում է անսանձ բռնությունն ու անասնական կիրքը։ Սերը, բնության այդ սքանչելի պարգևն աճում ու ծաղկում էր հյուղերում, ժողովրդի ծոցում, որը սակայն թողնում ու խամրում էր բռնավորի հարվածի տակ։ Այժմ Սարդարը կուզեր մեկին, որ ամբողջովին նվիրվեր իրեն, նվիրվեր, ոչ թե վախին ու բռնությանը զիջելով, այլ սրտանց, ամբողջ հոգով. նա մեկ-մեկ նայեց իր ուրը կանանց և չգտավ նրանց մեջ ոչ մեկին, որ կարողանար անկեղծ լինել իր հետ։

Եվ Սարդարը մի վերջին անգամ գնաց-եկավ դահլիճում. ապա ծալապատիկ նստեց թախտին և, համբիչը ձեռքից-ձեռք գցելով, խոսեց.

— Սիմիզա՛ր, մոտեցիր ինձ։

Կանանց խմբից առաջացավ սևահեր, վառվռուն աչքերով մի թեթևաքայլ կին. մետաքսի նուրբ հյուսվածքի զգեստը հազիվ ծածկում էր նրա կուրծքը՝ ամբողջովին բաց թողնելով նրա ձյունափայլ որովայնը, որը Սողոմոն իմաստունն ըմպելիքով լեցուն բոլորակ թասի ու շուշաններով պատած ցորենի շեղջին պիտի նմանեցներ՝ համեմատելով հինավուրց Երուսաղեմի ազջիկների հետ։

Սիմիզարը հասնելով Սարդարին, ծունկ իջավ ու խոնարհ գլուխ տալով համբուրեց տիրոջ քղանցքը։

Սարդարը ձեռքը տարավ, շոյեց Սիմիզարի դունչը, նայեց նրա վառվռուն աչքերին և դողաց ամբողջ մարմնով։

— Դու ո՞ւմ ես սիրում,—հարցրեց Սարդարը։

— Վերև աստված, ներքևն իմ տերը, իմ խանը, որի ստրուկն ու կամակատարն եմ ես, որի փեղը համարձակվում եմ համբուրել,— ասաց Սիմիզարն ու նորից համբուրեց Սարդարի քղանցքը։

Սարդարը մի պահ շոյեց մորուքը, գլուխը տարուբերեց,

ապա հերթով կանչեց մյուս կանանց, բոլորին տվեց միևնույն հարցը և ստացավ միևնույն պատասխանը։

— Ո՛չ, ո՛չ,— բացականչեց Սարդարը,— նա էլ, Լաթիֆեն էլ այդպես, ճիշտ այդպես էր երդվում, բայց փախավ, փախավ... դուք բոլորդ սերտած բառեր եք կրկնում. հե՛յ, Ներքինի Սահիբ, հե՛յ, Սահիբ...

Ներքինին վռթիկոտ, կատվային շարժումներով եկավ կանգնեց կանանց գլխավերևում։

— Սահի՛ب,— խոսեց խանը,— կտանես, այս ութին էլ կտեղավորես իմ ապարանքի ետևի սենյակում. լուսամուտներին, անմիջապես ամենամուր շաղախով քարեր շարել կտաս, այնպես որ արևի ոչ մի ճառագայթ չընկնի այդ սենյակում. վեց ամիս նրանք պիտի մնան այնտեղ, ու վեց ամիս արևը չպիտի ծագի նրանց համար։

— Քո խոսքն օրենք է, տեր, այսօրվանից մինչև վեց ամիս այլևս արևը չի ծագելու ութը խանումների համար։

— Իսկ դուք ի՞նչ կասեք, խանումներ,— հարցրեց Սարդարը։

— Քո խոսքն օրենք է, տեր,—առաջինը խոսեց Սիմիզարը,— այսօրվանից այլևս արևը չի ծագում։

Եվ նույնը կրկնեցին Սիմիզարի ետևից մյուս յոթը կանայք։

Ու երբ, Սարդարը, գահ իր վճռից, նորից համբիչը ձեռք առնելով տոքի ելավ ու սկսեց անց ու դարձ անել սենյակում՝ Ներքինի Սահիբը, ութը կանանց առջևն առած, տարավ դեպի մատնանշված սենյակը՝ Սարդարի վճիռն իրագործելու...

*

Սարդարը դուրս ելավ իր ապարանքից և իջավ այն հովիտը, ուր հնամենի Զանգուն դարավոր կատաղությամբ գալիս, իր կոհակները փշրում էր ժեռ ապառաժին ու վրհատ մրմունջով քշվում էր առաջ։ Ցերեկվա տապին հաջորդել էր երեկոյան զովացուցիչ հովը. Արարատի ձյունափայլ

գագաթից եկող մեղմ քամին միացած Զանգուից արձակված թարմացուցիչ շնչին, Զանգուի հովիտը լցրել էր հաճելի բուրմունքով։ Եվ այդ բուրմունքը մանավանդ հաճելի էր, որովհետև Զանգուի երկու ափերին փռված այգիներում հասունացող տանձն ու դեղձը, ապա ցիրեկվա արևով օծված խաղողի գունագեղ ողկույզները, այժմ ավելի հաճելի ու գուրեկան տեսք էին ստացել։

Սարդարն իջավ այգիների արահետը, շնչեց թարմ օդը, զգաց հովիտի բուրմունքը, բայց չհիջնց նրա կատաղությունը։ Նա անսահման նվաստացած էր զգում իրեն Լաթիֆեի վարմունքից։ Արևելյան բռնակալի ոխակալությամբ նա կոխում, տրորում էր ոտքի տակ ընկած երիտասարդ ծաղիկները. ծաղիկներ, որոնց վրա ամեն օր կաթում էր բռնադատված երկրի աշխատավորների արյունն ու քրտինքը՝ իրա՝ Սարդարի փառքի համար, բայց և այնպես նա չէր հանդարտվում։ Նա կուզեր ճիշտ և ճիշտ այդ ծաղիկների նման իր ոտքերի տակ ճզմել անհնազանդ Լաթիֆեին, ճիշտ այնպես, ինչպես ինքը տարիներ շարունակ իր կրունկի տակ ճզմել էր ամեն մի ըմբոստ հայացք, ամեն մի խոսք, որի մեջ անհաճո շեշտ կար իրեն համար։

Այս մտորումներով նա մի քանի անգամ գնաց ու եկավ հովիտի երկարությամբ, շոշափեց հնամենի ծառերի բունը և ինքն էլ չգիտեր, թե ինչով պիտի վերջանար օրը։ Վերադառնալ տո՞ւն, բայց տունը նրա աչքին սև օձ էր դարձել, Լաթիֆեն պղծել էր նրա շեմքը. հարկավոր էր մի այնպիսի արտակարգ բան, որ մեղմեր նրա կատաղությունը, որ հանգստացներ նրա բորբոքված արյունը և նա մերթ լազուր երկնքին էր նայում, մերթ սվվացող ծառերին, և ամենից շատ ազմկող Զանգուին։ Զանգո՞ւ, ի՞նչ կար նրա ծալքերում, ինչո՞ւ էր նա այդպես մոլեգնած առաջ ընթանում. և երբ խորհրդածելով, Զանգուի մասին, նա հայացքը կրկին հառեց դեպի գետի հոսանքը, ուր փրփրադեղ մի ալիք, սանձից արձակված ամեհի ցուլի նման, առաջ էր ընթանում՝ մի պահ կանգնեց. ալիքը փշրվեց՝ զարնվելով ափից դեպի գե-

տի խորքը ձգված ժայռի մի բեկորի վրա, և հենց այդ ժայռի ցցունքին երևաց մի աղջիկ։

Թվաց, թե աղջիկը ծնվեց փրփուրից, թվաց, թե ալիքը դուրս նետելով աղջկան՝ հանդարտվեց և շիջավ նրա քիչ առաջվա մոլեգնությունը։

Սարդարը երեք քայլ առաջ անցավ և կանգնեց. այո՛, աղջիկ էր... աղջիկ, բայց այդ ի՜նչ երկնային լույս էր, որ պարուրել էր աղջկա դեմքը, այդ ի՜նչ լուսածին ճերմակություն, այդ ի՜նչ հուր հրաշք աչքեր. աղջկա ձեռքին եղած փոքրիկ կուժն էլ թվում էր, թե առանձին փայլ ու հրապույր էր ստացել. թրծած կավն արևի վերջին շողերի տակ պսպղում էր, ինչպես ադամանդ, բայց գուցե դա աղջկա փայլն էր, որ անցել էր կուժին ու շրջապատին և ամեն ինչ դարձրել չքնաղ ու հրապուրիչ... փերի՜, ջրից ծնված փերի, ահա՛, այս միտքն էր անցավ սնոտիապաշտ Սարդարի գլխով. գուցե դա մարգարեի պարգևն էր իրեն, իր կորցրած Լաթիֆեի փոխարեն, և ի՜նչ Լաթիֆե կհասներ սրան.. ահա՛, ահա՛, հիմա ամեն ինչ կփոխվի, հիմա փերին նորից ջուրը կընկնի, բայց այս անգամ արդեն երևի Եվայի հագուստով ու խայտալով ալիքների հետ՝ առաջ կսուրա՝ ափին թողնելով շրփոթված Սարդարին... Բայց ո՛չ, աղջիկը փութով կուժը դեպի գետն է երկարում, ձեռքը դողում է, կուժը խաղում է ալիքների հետ ու չի սուզվում ջրի մեջ... իսկ աղջիկն այնպե՞ս շտապում է... վերջապես նա կուժը դուրս է քաշում ալիքների միջից, դնում է ուսին ու վախլորած վիթի նման, համարյա թռչկոտելով, անցնում է այդիների միջով. քիչ հեռու տեսնելով այդիներում աշխատող երկու այլ տղամարդու, կարծես հանդարտվում է աղջիկը և այս անգամ քայլում է համաչափ։

Երկու տղամարդիք, որ տեսել են աղջկան, ապա նաև նրա ետևից գնացող Սարդարին՝ լցվում են կատաղությամբ, բայց ոչինչ անել չեն կարող... նրանք գիտեն, որ Սարդարն այդ բոպեին գաղտագած դայլի հոգեվիճակ է ապրում և վտանգավոր է նրան մոտենալ, կամ նույնիսկ որևէ ակնար-

կով հասկացնել, թե իրենք որևէ հակակրանք ունեն Սարդարի հանդեպ։

Նկատե՞ց արդյոք Սարդարը երկու տղամարդկանց, թե-վում է թե այո՛... Բայց ինչ հոգ, թե ովքեր են նրանք, չէ՞ որ ինքն է այս քաղաքի ու շրջապատի ամենակալ տերը, ո՞վ է այն համարձակը, որ պետք է իր առաջը կանգնի բայց աղջիկը նորից շտապում է, անհնար է նրան հասնել։

— Սահի՞բ,— դառնում է Սարդարը հեռվից իրեն մոտեցող ներքինուն,— Սահիբ, հետևիր այս աղջկան, իմացիր նրա բնակավայրը և ինձ շուտով լուր բեր...

Գ.

Մթնեց։ Սարդարն ապրում է մթնշաղի տեսիլքի հրապույրով... բոլոր առաջ պետք է կրկին տեսնել նրան. ո՛չ, ո՛չ միայն տեսնել, այլ ունենալ իր մոտ, իր սեփական հարկի տակ, ճողոպրած Լաթիֆեի փոխարեն։ Լաթիֆե՞... բայց գեղեցիկ ու քաղցրահնչյուն է այդ անունը նույնքան, ինչքան քաղցր ու գեղեցիկ է ինքը՝ այդ աղջիկը... Նա այդպես էլ կկոչի այս նոր աղջկան...

Սահիբը վերադարձել է հետախուզությունից. Սահիբն ամեն բան գիտե... այո՛, հենց այս աղջկա անունն էլ Լաթիֆե է, որ կա... այգում եղած երկու տղամարդկանցից մեկը՝ Իբրահիմը, աղջկա եղբայրն է, իսկ մյուսը՝ Մանսուրը, քաջակորով երիտասարդը, աղջկա սիրահարը, հենց այս շաբաթ նա պիտի ամուսնանա Լաթիֆեի հետ։

—Ամուսնանա՞,— բացականչում է Սարդարը և կրճատացնելով ատամները հագնում է երևանցի վաճառականի զգեստ և Սահիբի հետ դուրս է գնում տանից։

Նրանք անցնում են Երևանի օձապտույտ փողոցներով, կավե ցածրաշեն տների միջով, որոնց նեղլիկ լուսամուտներից հազիվ առկայծում է ճրագների աղոտ լույսը... Գնում է Սարդարը, հզոր խանը փողոցներով, գնում է ավելացող հուզումով, գնում է լայն-լայն բացած աչքերով, որոնք կիս-

սախավար փողոցներում փայլում են, ինչպես գայլի աչքերը խավար անտառի խորքից։

—Ահա՛,— ասում է Սահիբը, ահա այս լուսամուտի ետևում է գտնվում Լաթիֆեն։

Սարդարը կանգ է առնում. փողոցում այլևս անց ու դարձող չկա. բայց այս ի՞նչ անմահական ձայն է, այս ի՞նչ ջենաթային մեղեդի... Սահիբը ոստյունով առաջ է անցնում և թիչ հետո նույն ոստյունով հետ գալիս։

— Նա է, տեր իմ, նա է Թառի վրա նվագում ու երգում։

Լաթիֆեի ձա՞յնը... հետզհետե խորացող խավարի մեջ ալիքավորվում է ու տարածվում Լաթիֆեի ձայնը, տարածվում նրբին գայլայլյունով, տարածվում քնքույշ, շոյող ու հմայիչ ելևէջներով. թվում է, թե ամբողջ շրջապատը լռել է՝ ունկնդրելու Լաթիֆեի այնքա՜ն քաղցրահնչյուն մեղեդուն... Եվ Սարդարի հոգին լցվում է տիրողի քմահաճ ու բռնակալի անհատնում քինախնդրությամբ դեպի այն ամենը, ինչ պատվար է իր ու Լաթիֆեի միջև. քանդե՛լ, ոչնչացնե՛լ այդ ամբողջ պատվարը։ Մեկ Լաթիֆեն փախավ, այժմ կա մյուսը. ոչնչացնել այն բոլոր կապերը, որ այս նոր Լաթիֆեին կապում է դրսի հետ, աշխարհի հետ... Միայն ու միայն իր համար պիտի երգի ու նվագի Լաթիֆեն, միայն ու միայն ինքը պիտի ունկնդրի նրան, և ո՞չ ոք, ո՞չ ոք չպիտի համարձակվի լսել նրան, պետք է խցել բոլոր ականջները, և պետք է փակել բոլոր սրտերի դռները, որոնք բարախում են Լաթիֆեի համար։

Լռեց նվագը։ Թվաց, թե ամեն ինչ մոայլվեց շրջապատում. այժմ իրոք որ խավար է, այժմ ամեն ինչ ճնշող է ու անհրապույր։

Սարդարն շտապում է իր ապարանքը։ Մի քանի րոպեում ապարանքի ծառաները, ապա նաև ֆարրաշները զենք ու զրահը կապած, պատրաստ՝ սպասում են Սարդարի հրամանին։ Թվում է, թե խանը պատրաստվում է պատերազմի, թվում է. թե ինչ որ թշնամի է ներխուժել երկրի սահմանները։

րից, Սարդարը կանչում է ֆարրաշների դեկավարին ու ինչ որ հրամաններ է տալիս։

— Ամեն ինչ կլինի մեր տիրոջ հրամանի ու ցանկության համաձայն,— ասում է ֆարրաշների դեկավարն ու զինված խումբը շարժվում է առաջ։

Տիրոջ՝ Սարդարի հրամանն էր՝ Լաթիֆեին ողջ ու առողջ, իր թառով հանդերձ, բերել իր ապարանքը, իբրև իրեն կին։ Եվ մեկ ժամից հետո, արդեն, ամեն ինչ կատարված էր Սարդարի հրամանի ու ցանկության համաձայն։

Լաթիֆեն ինքն իր թառով, գլխահակ, արցունքոտ աչքերով կանգնած էր Սարդարի առջև։

Դ.

Սարդարը նայում էր Լաթիֆեին և բոպե առ բոպե աղջիկը նոր ու նոր հրապույր էր ստանում նրա աչքում. այժմ Լաթիֆեն շիկնել էր ու Շիրազի չքնաղահյուս վարդերի բույր ստացել. աչքերից իջած արցունքի կաթիլները վազորդյան ցողի պես շիթ առ շիթ իջնում էին նրա այտերն ի վայր և ավելի գրավիչ դարձնում նրան։ Սարդարը մի քանի քայլ արեց դեպի մատաղահաս աղջիկն ու կանգ առավ. նա վախենում էր, չլինի թե հանկարծ չքանա այդ տեսիլքը, քանի որ տեսիլքը կարող էր, միայն այդքան հրապուրիչ, այդքան սքանչելի լինել։ Թվում էր, թե աղջիկն անշյուղ, անմարմին մի էակ է, որ ջենաթից իջել է միայն ու միայն մի բոպե վառելու Սարդարի սրտում մարդարեի խոստացած հանդերձյալ կյանքի կարոտը և չքանալու. բայց և այնպես, հետզհետե, ցանկությունը, աղջկան մոտիկից զգալու ցանկությունն ահագնանում էր բոցավառվող հրդեհի նման և Սարդարը մի վճռական քայլով գրկեց աղջկա ճկուն իրանը...

— Երգի՛ր, Լաթիֆե, երգի՛ր ինձ համար, երգիր ու նվագիր քո այն անմահական եղանակը։

Լաթիֆեն, կատաղորեն, շպրտում է թառն իր ձեռքից և աշխատում է ազատվել Սարդարի գգվանքից։

— Մի՛ համառիր, Լաթիֆե, այս ամբողջ ապարանքը

քոնը կլինի, դրսի հետ դու այլևս գործ չունես. այնտեղ ո՛չ ոք չկա։

— Այնտեղ կա Մանսուրը, կա Իբրահիմը, կա Զանգուն... Ես սիրում եմ ջուրն ու արևը, ես հենց հիմա պիտի գնամ, ես պետք է առավոտը շուտ զարթնեմ, որ ջուր բերեմ Զանգունից։

— Քեզ համար ջուր կբերեն իմ ծառաները. իսկ Մանսուրի և Իբրահիմի մասին մոռացի՛ր. նրանք կեղտոտ ու ոջլոտ մշակներ են, որոնք պետք է գիշեր ու ցերկ աշխատեն, իսկ դու պիտի ապրես ու զվարճանաս. իսկ Զանգուն, չա՞ս ես սիրում Զանգուն...

— Շա՜տ, շա՜տ, և՛ Զանգուն, և՛ Մանսուրին, և՛ Իբրահիմին։

— Ես քեզ ասի, որ մոռացիր Մանսուրի ու Իբրահիմի մասին, իսկ Զանգո՞ւն... Առավոտը կհրամայեմ, որ Զանգուն բերեն իմ ապարանքը...

— Զանգո՞ւն քո ապարա՞նքը...

— Ի՞նչ կա զարմանալու. ես եմ տերն ու իշխանը և իմ խոսքն օրենք է. Զանգուն շատ ջուր ունի. առու հանել կտամ... այստեղ, ապարանքի ընդարձակ բակում, մարդկանց աչքերից հեռու մի մեծ ավազան կսարքեմ, շորս բոլորը ծաղիկներ կտնկեմ, ծաղիկներ, դրախտային ծաղիկներ և դու, ինչպես փերի, կլողանաս ավազանի մեջ, կհոտոտես ծաղիկների բույրը, ապա կնվագես ու կերգես, իսկ ես կդիտեմ, թե դու ինչպես քո ասուլածային մարմնով կխաղաս ալիքների հետ, կդիտեմ քո ռունգերը, որոնք վարդերից ու շուշաններից անուշ հոտը ներս կծծեն, իսկ ես կծծեմ քո ռունգերի ու շրթունքների բույրը, դու կնվագես ու կերգես, իսկ ես կլսեմ ու կսքանչանամ քո ձայնով, քո մատների կախարդիչ խաղով...

— Բայց այնուամենայնիվ ես սիրում եմ Մանսուրին ու Իբրահիմին։

— Դու այլևս չես տեսնի Մանսուրին ու Իբրահիմին։ Նրանք կաշխատեն քո երջանկության համար. նրանք լո-

սածագից կաշխատեն Զանգուի ակունքում և իմ մյուս բազմաթիվ ծառաների ու ֆահլաների հետ ջուրը կհացցնեն ավազանին, որ դու ջրի պես պայծառ ու ուրախ լինես, որ դու հասկանաս, թե ինչ հրաշքներ կարող է անել ամենակարող Սարդարը... որ դու հնազանդ լինես քո տիրոջ հրամանին...

Լաթիֆեն գլուխը հետ դցեց, փարթամ մազերը թափվեցին նրա ուսերի վրա և նա զգաց, որ անզոր է դիմադրել բռնակալի կամքին, բայց իր սևաթույր աչքերում, դեռ փայլփլում էր դրսի, ազատ կյանքի կայծը... նա լսել էր իրենից առաջ եղած Լաթիֆեի պատմությունը և իրեն օրորում էր այն չքնաղ երազով, որ մեկ օր ինքն էլ ազատ կլինի, ինքն էլ իր Մանսուրի գրկում կհանգստացնի իր տրոփող սիրտը։

Սարդարը կարծես հասկացավ աղջկա քրտմնջոցի իմաստը։ Ո՛չ,— վճռեց նա,— ո՛չ մի ճանապարհ չի լինի դեպի դուրս... Մանսուրին ու Իբրահիմին այն ձևով պիտի աշխատեցնել ջրանցքի վրա, որ մինչև ջուրը տեղ հասնի նրանք այլևս դադարեն ապրելուց... իսկ ավազանը, ավազանը, ո՜հ, այդ նրա երազն էր. այդ միտքը ծագել էր նրա գլխում հենց այն պահին, երբ փրփրադեղ ալիքը ջարդվեց ժայռի վրա և երևաց Լաթիֆեն... Ինքը ենթադրում էր, թե ահա՛ ուր որ է աղջիկն իբրև տեսել ջուրը կընկնի ու կանհայտանա, բայց այդ տեղի չունեցավ, այժմ Լաթիֆեն կլողանա իր աչքի առջև, իր համար, միայն իր համար... կա՞ ավելի հրապուրիչ պատկեր, քան չքնաղագեղ Լաթիֆեին, ջննանթի այդ դիերուն, տեսնել ալիքների հետ խաղալիս... Չէ՞ որ այդպես է գրված հեքիաթներում և ո՞վ է խանդարում Սարդարին այդ չքնաղ հեքիաթն իրականություն դարձնել. և թող աշխարհն իմանա, թե ինչ կարող է անել Սարդարը, երբ նա ուզում է գոհացում տալ իր ցանկություններին։

Ե.

Եվ Սարդարի հրամանով, ֆարրաշները, այգիներից, տներից, գյուղերից ու դաշտերից հավաքեցին հարյուր ու

հարյուր մարդիկ. հավաքեցին խանութների բոլոր ազգի հպատակներից. հավաքեցին պարսիկներ, հայեր, թուրքեր, քուրդեր, ասորիներ։ Կանգ առավ կյանքն ամեն տեղ, ամեն ընտանիքում բարձրացավ ողբ ու կոծ։ Ամենքը ողբացին իրենց դառնատանջ կյանքին հասած այս նոր դժբախտությունը։ Հավաքեցին մտրակի հարվածներով, հավաքեցին այնպես, ինչպես հնադարյան տերը հավաքում է իր ստրուկներին։ Ո՞չ մի աղերսանք չլսեց ու չանսաց Սարդարը և ամենից առաջ բերին Լաթիֆեի եղբորը՝ Իբրահիմին, նորափեսայության պատրաստվող Մանսուրին ու նրանց երկար տարիների հարևան Կարապետին։

Առաջին գիշերը Մանսուրն ու Իբրահիմը փորձ էին արել դիմադրել ֆարրաշներին, թույլ չտալ, որ նրանք Լաթիֆեին տանեն, բայց քսան զինված ֆարրաշների դիմաց ոչինչ չէին կարող անել նրանք և, մահվան սպառնալիքի տակ հարկադրված էին տեղի տալ բռնակալի քմահաճույքին։ Հետևյալ օրը նրանք խորհրդակցել էին իրենց սրտակից Կարապետի հետ և եկել այն եզրակացության, որ պետք էր համբերել, ու համբերությամբ նախապատրաստել Լաթիֆեի փախուստը...

Բայց մի՞թե սիրող սիրտը կիտե համբերել։ Մանսուրի, այդ ջլապինդ ու քաջառողջ տղամարդի սրտում ժամ առ ժամ ցասումը լեռնանում էր Մասիսի նման, ու զայրույթն ընդդեմ խանի, բորբոքվում էր Իրանի ավազուտներից եկող մրրիկի նման... Այդ բանը շատ լավ գիտեր Սարդարը, այդ բանը գիտեին ֆարրաշները, այդ պատճառով Մանսուրին, իր երկու ընկերներով, աշխատանքի էին դրել ջրանցքի ամենադժվարին մասում, նրանց վրա հսկիչներ էին կարգել ամենադաժան ֆարրաշներին, որոնց խոսքը հայհոյանքն էր ու փաղաքշանքն արջառի ջղերից հյուսած մտրակի հարվածը։

Եվ գիշեր ու ցերեկ առանց հանգստի, աշխատում էին հարյուր ու հարյուր ֆահլաները, փորում, բացում էին մայր հողի կուրծքը և ամեն մի բացվածք թրջում էին դառն քրտ-

տինքով ու արյունով։ Բարկ արևի տակ, մի փաթշ ջրով ու շորացած հացի կտորներով աշխատում էին ֆահլաները, առանց իմանալու, թե ի՞նչը և ինչո՞ւ համար են փորում։ Գուցե դա մի ընդարձակ, երկարավուն գերեզման էր, ուր հետո բոլորը պիտի թաղվեին. ոչ ոք ոչինչ չգիտեր. նրանց հրամայված էր այսինչ խորության ու այսինչ լայնության փորել և նրանք փորում էին։ Հողի շերտերին հաջորդում էին քարե ամուր զանգվածներ և ֆահլաները լարելով իրենց մկանները՝ փշրում էին քարերը, քրտնում, քրմնջում և դարձյալ ու դարձյալ փորում։

Հենց առաջին շաբաթը մի տասնյակ ֆահլաներ իրենց գերեզմանը դատան ջրանցքի ափերին. Սարգարը հրամայեց մեռածներին հենց ջրանցքի ափերին էլ թաղել. նա ինչ որ հեքիաթում լսել էր, որ կառուցվածքն ամուր է լինում, երբ մարդկային զիակներով են ամրացնում այդ կառուցվածքի հիմքը և նա կուզեր, որ հնամենի հեքիաթն իրականություն դառնար։

Արարատյան այրող արևի ներքո վխտում էին այդ մարդկային արարածները, ինչպես չնչին միջատները, սակայն այն տարբերությամբ, որ միջատները, բնազդով աշխատում էին իրենց համար՝ վայելելով իրենց աշխատանքի պտուղը, իսկ մարդկային այդ հոծ զանգվածը դատապարտված էր քրտնելու ու հոգնելու, տանջվելու ու տոկալու քմահաճ բռնակալի համար։ Բռնակալ, որ նրանց մեջ խեղդել էր ամեն զգացմունք, ինչ որ մարդկային էր, բռնադատել ամեն արտահայտություն, ինչ որ նրանց կարող էր բանական արարածի տեսք տալ։

Եվ ահա՛, աշխատանքի երրորդ ամսում, քաջակորովն Մանսուրը, նրա հետ նաև Իբրահիմն ու Կարապե՛տը փոխվեցին, դարձան կմախքի մի զանգված, որոնք ուրվականի պես ինչ-որ շարժումներ էին անում, բայց այլևս ուժ չէր մնացել նրանց մկաններում և ոչ էլ նախկին կայտառ արյունը՝ նրանց երակներում։ Երբ Մանսուրը նայեց իր շրջապատը, տեսավ, որ երեք ամիս առաջ եղած ֆահլաներից ոչ

ոք չէր մնացել. տաժանակիր, բաղցած աշխատանքը բոլորին ոչնչացրել էր. նրանց հաջորդել էին նորերը, որոնց սպասում էր միևնույն ճակատագիրը։

Այդ ժամանակն էր ահա, որ Սարդարը վճռեց Լաթիֆէ-ին խոպան կարել դրսի աշխարհից, որպեսզի այլևս ոչ մի սիրա չբաբախի նրա համար, ուստի և հարցրեց ֆարրաշին.

— Թաղեցի՞ք Մանսուրին։

— Ո՛չ, տեր իմ. նա դեռ դիմանում է։

— Ա՜հ, հասկանում եմ, թե ինչու գործը դանդաղ է ընթանում. դուք թույլ եք տալիս, որ մարդիկ աղայություն անեն, հա՜, հայդե՜, գնա և ամրացրու ջրանցքի ափերը նրա դիակով ու այն ժամանակ գործն արագ կընթանա։

Ու ֆարրաշը Մանսուրի մոտ եկավ այն ժամանակ, երբ նա, կարոտակեզ սրտով, քլունգը վայր էր դրել ու աչքերը հառել դեպի Սարդարի ապարանքի կողմը, ուր թպրտում էր նրա սիրելու վանդակված սիրտը և նա, կարծես, զգում էր այդ թպրտոցը և դրանից էր, որ իր սիրտն էլ թպրտում էր։ Հեռո՜ւ, Արարատի կատարից՝ գալիս, կարծես վերևից առաքված, դալիս էր թուխ ամպ և այդ ամպը թամբած ձիու տեսք ուներ և թվում էր Մանսուրին, թե ահա՜, ահա՜ այդ ամպն ավելի ներքև կիջնի, ինքը կթռնի այդ ամպի վրա, կհասնի սարդարի ապարանքին, կիջնի, կվերցնի Լաթիֆեին՝ երկուսով միասին նորից կթռնեն ամպին ու կսավառնեն հեռո՜ւ, դեպի ազատություն, ուր խան ու սարդար չկա, ուր կարելի է աշխատել, ապրել ու սիրել... Հրա՜շք, բայց մի՞թե հրաշքը խեղճերի համար է... Եվ ահա այդ պահին տեղի ունեցավ ուրիշ հրաշք, ֆարրաշը թափով եկավ, մերկացրած սուրի հակառակ, բութ կողմով հարվածեց Մանսուրի մեջքին ու գոռաց.

— Խանությո՞ւն ես անում, հա՜ կեղտոտ ֆահլա։

Մանսուրը վեր թռավ տեղից, չնայած մեջքի սուր ցավին, թվաց, թե ուժ առավ, վերցրեց մի քար ու թափով զարկեց ֆարրաշի գլխին. ֆարրաշն ընկավ ձիուց ու թամբած ձին խրխնջալով կանգնեց Մանսուրի առաջ։ Ահա՜ քեզ

հրաշք։ Չէ՛, իզուր չէր Մանսուրի երազը. Մանսուրը փոքր փորձեց թռչել ձիու մեջքին, սուրալ դեպի ապարանքը, փախցնել Լաթիֆեին ու գնալ դեպի ազատություն... Բայց հրաշքը մնաց կիսատ. ֆարրաշների մի այլ խումբ վրա հասավ, մի բոպեից Մանսուրին, իբրև դիակ, փռեց գետնին և նրա, կարոտով բաց մնացած, աչքերի առջևից Արարատից եկող թուխ ամպը հանդարտ անցավ, բայց այս անգամ թամբած ձիու՝ կերպարանք չուներ, այլ մի անպարփակ վիշ էր, ուր կարող էին տեղավորվել բոլոր ֆահլաների դիակները...

Իբրահիմն ու Կարապետը լալով փոս փորեցին ու Մանսուրին իջեցրին գերեզման և Կարապետն անլսելի, ինքն իր համար մրմնջաց.

— Իմ անբախտ Մանսուր, էս անիրավ աշխարհում քեզ էլ, ինձ էլ մեկ ցավ էր տանջում, յարաբ, ինչի՞ է մեզ պես մարդն ստեղծած, որ մեկ մրջյունի չափ էլ ազատություն չունի, իր տունն ու բունն ունենալու իրավունքը չունի։ Ա՜խ, Մանսուր, էդ անիրավ խանն էր, որ քեզ սպանեց, ինձ էլ դարբեդար արեց, սերը մեր սրտում մեռցրեց, երկինք, արև մթնացրեց։ Այ, իմ բեմուրազ ախպեր, մինչև ե՞րբ էս զոռբի դարդը մեզ էրի, փոթոթի, սաղ-սաղ խորովի, մինչև ե՞րբ։

Ու Կարապետը չէր գտնում իր հարցի պատասխանը։

Ու Իբրահիմն էլ նույն խոսքերն ասաց մյուս օրը, երբ Կարապետի դիակով ամրացրեց ջրանցքի ափերը։ Նույն հարցը տվեց և պատասխանը չգտավ։

Ու երրորդ օրն Իբրահիմի դիակով ջրանցքի ափերն ամրացնող քուրդ Հասոն էլ միևնույն խոսքերն ասաց, միևնույն հարցը տվեց և պատասխանը չգտավ։

Եվ այսպես մեռան Մանսուրն ու իր ընկերները։ Եվ այսպես իրականացվեց Սարդարի վաղուցվա լսած հեքիաթը և ջուրը գլգլալեն թափվեց ու լցրեց Լաթիֆեի համար պատրաստած ավազանը։

Ցերեկը ճառագայթածիգ արևն էր ցոլցլում ավազանի շրերում ու գիշերը լուսնի շողերն էին սրմայի նման ժապավինում ավազանն ու շրջապատը։

Սեռակի դայլայլի ներքո Շիրազի բուրյան վարդեր բուսան փոքրիկ պուրակում, ու շուշանը բացեց իր թերթերը և մանկան թարթվող աչիկների պես մեկ-մեկ բացվեցին ակացիայի կոկոնները։ Պուշատու ծառերը փռեցին իրենց տերևները և այդ տերևների վրա ճոլոզյունով թառեցին ճնճղուկն ու ծիծառը և վարժեցրած ազավնիները։ Բայց այդ ամենի շուրջը կանգնեցրին բարձրաբերձ պարիսպներ, որ օձն իր պորտով ու օտարդ հավքն իր թևով չհամարձակվի ներս թափանցել այդ վայրը, որ ոչ մի հողեղեն չտեսնի այդ շքեղ նաղ ավազանն ու շքեղ պուրակը, որ Սարդարը պատրաստել տվեց միայն ու միայն Լաթիֆեի համար, որպեսզի նա զվարճանա և զվարճացնի իրեն՝ Սարդարին։

Ու լուսնի պես հեզ և արևի նման այրող Լաթիֆեն շրջեց, տեսավ այդ ամենն ու մի պահ սքանչացավ այդ ամենի վրա։ Եվ սոխակը դայլայլելով նայում էր Լաթիֆեին, կարծես ցանկանալով հարցմունք անել, թե ո՞րն է ավելի գեղեցիկ, արդյոք այդ պուրակն ու ավազա՞նն են գեղեցկությունը տալիս աղջկան, թե աղջիկն այդ ամենին։ Նույն հարցն էր տալիս յուրովի նաև Սարդարը և ոչ ոք դրա պատասխանը չէր գտնում։ Բայց Լաթիֆեի սրտում ուրախ անկյուն չկար և քիչ հետո ամեն ինչ մոռացվեց նրա համար։ Արդեն մեկ տարի էր, որ նա Սարդարից, ներքինի Սահիբից ու մեկ էլ իրեն աղախին նշանակված Նիգարից բացի, ուրիշ ոչ ոք չէր տեսնում։ Այդպես էր Սարդարի կամքը։ Լաթիֆեն սկզբում շատ դիմադրեց Սարդարին, շատ համառեց, բայց այն բուռն կրքոտը, որ նա ուներ դեպի դուրսը, դեպի ազատ կյանքը, դեպի իր Մանսուրը՝ հարկադրեց նրան առժամապես համակերպվել ամեն ինչի։ Իսկ թե իր համառությունը ուրիշ լի-

ներ որ Սարդարը Մանսուրին ոչնչացներ և իրեն էլ գլխատեր, իսկ ինքն ուզում էր ապրել և առավել ևս ուզում էր, որ ապրեր Մանսուրը. ու նա խոսք առավ Սարդարից, որ նա խնայի իր հարազատների կյանքը, որ ձեռք չտա Մանսուրին և ինքը Սարդարինը կլինի։

Ու Սարդարը խոսք տվեց։ Եվ այդ խոսքը Սարդարը տրվեց այն օրը, երբ իր ֆարրաշին կարգադրեց, որ շրանցքի ափերն ամրացնի Մանսուրի դիակով։

Ի՞նչ իմանար Լաթիֆեն, թե Սարդարը, երկրի տերն էլ կարող է փողոցային սինլքորի պես մեկ բան ասել և մեկ ուրիշ բան անել. թող ապրեր Մանսուրը և Լաթիֆեն հաստատ դիտեր, քանի ապրում է նա, ուրեմն ինքն էլ իրավունք ունի ապրելու և, ոչ միայն ապրելու, այլև հուսալու, թե ահա մեկ օր Մանսուրը կգա և կազատի իրեն, ինչպես իրենից առաջ եղած Լաթիֆեին փախցրել է նրա սիրածը։

Եվ ամառային օրվա այն պահին երբ արևը կրակ էր մաղում շորս դին, երբ ամեն արարած փախչում էր դեպի ստվերը, փոքրիկ պուրակում ավազանն ու բուրումնավետ ծաղիկները սփռում էին մեղմ, դուրեկան զովություն և Սարդարը Լաթիֆեի հետ գալիս էր այնտեղ վայելելու հաճույքների հաճույքը, որ նա կարդացել էր հեքիաթներում և այսօր իրականություն էր դարձրել։

Ահա՛, նրանք ներս մտան։ Սարդարը հագել է ճերմակ, նրբահյուս մի զգեստ. նա նստեց ավազանի ափին սարքած փոքրիկ տաղավարում, ուր փափուկ բարձերը ծածկված խորասանի շալով ու Սպահանի քիշմիրով, շոյում էին նրա ձեռքերը հաճելի քնքշությամբ։ Գալիս է Լաթիֆեն. մետաքսի նուրբ շրջազգեստի ծալքերի միջից գծագրվում է նրա լուսեղեն մարմինը. նա գլխահակ է, բայց աշխատում է աչքերում վառել կրակը. կրա՞կը, որին այնքա՞ն տենդորեն սպասում է Սարդարը... Ահա՛, Սարդարը նշան տվեց. Լաթիֆեն հասկանում է, թե ինչ է ուզում տերը։ Նա վրայից նետում է մետաքսի շրջազգեստը և այնպես, ինչպես առաջին կինը եդեմական դրախտում, այնպես գայթակղիչ ու կախարդական,

մի պահ կանգնում է Սարդարի դիմաց, ապա նրա մարմինը պարուրում է արևի լուսածին շողքը և նա նետվում է ավազանի փրփուրների մեջ։ Նա լողում է ինչպես կարապ և ճերմակ, լուսեղեն պարանոցը հանելով ջրից՝ օրորվում է ամբողջ մարմնով ալիքների հետ. ջուրը խոյանքով հետ ու առաջ է գնում նրա շարժումից։ Մեկ ալիքը ծածկում է նրա իրանը. մյուսը՝ զարնվում է կողերին, մյուսը՝ կրծքին, ապա՝ հետ գնում նորից ու նորից իր խաղն սկսելու աղջկա հետ։ Սարդարը նայում է, նայում անկշտում աչքերով և նորից ու նորից բռնկվում է նրա ներսում ցանկության հախուռն կրակը... Այսպես է տհա այս հեքիաթը. փերին իջել է ջրերի մեջ, խայտում, ոստոստում է և թվում է, թե ալիքներն էլ տարված են բնության այդ սքանչելի ստեղծագործությամբ։ Եվ Սարդարին թվում է, թե Մարգարեի խոստացած երանության այն վայրկյանն է, որ ապրում է ինքը, քանզի ո՞ր դրախտում և ո՞ր Մարգարեն կարող էր ստեղծել այդպիսի կատարելություն, ինչպիսին Լաթիֆեն էր. նրա սքանչելագույն մարմնի վրա չկար և ո՛չ մի անկանոն գիծ, չկար և ո՛չ մի բիծ, որ ամենափոքր իսկ չափով նսեմացներ նրա տեսքը։ Այդ ողորկ ու ճկուն իրանը, այդ ամուր, կլորիկ ստինքները, որոնց պտուկները թուխ խաղողի պես մեկ-մեկ բողբոջել էին՝ ամեն նայելիս նոր փայլ, նոր հրապույր էին ստանում և Սարդարը, ներքին տագնապով, այլևս խանդում էր և՛ արևին, որ այնպես շեշտակի իջնում էր Լաթիֆեի վրա, և մանավանդ ալիքներին, որոնք այնպես պիրկ գրկում էին իրար և մեկը մրցում էր մյուսի հետ ավելի առաջ նետվելու, ավելի ջերմորեն սեղմելու Լաթիֆեի իրանը. և ի՞նչ դաժան կռիվ էր տեղի ունենում ալիքների մեջ. ու ալիքների այդ կռվի դիմաց Սարդարը հանգիստ չէր կարող մնալ իր տեղում։ Նա իջավ տաղավարի թախտից, ձեռքը երկարեց դեպի ավազանը, բռնեց Լաթիֆեի հոլանի թևից. ո՛չ, ո՛չ, իրական է. նա է, մարմնավոր աղջիկ և ո՛չ ոք, ո՛չ ոք չի կարող խլել նրան իրենից։ Նա աղջկան դուրս է քաշում ավազանից, ջրի կաթիլները բողբոջել են նրա ողջ մարմնին. ամբողջ դեմքը,

պարանոցը, կուրծքը, իրանը ծածկված էր հատ-հատ կաթիլներով և այդ կաթիլների մեջ շողում էին արևի ճառագայթները. թվում է թե աղջիկը զարդարված է արևահյուս մարգարիտներով ու Սարդարը երկարորեն սքանչացած է այդ տեսարանով. այժմ նրան սպասում է այլ հաճույք, նա շղարշը նետում է աղջկա վրա, թոցնում է դեպի իր ապարանքի ընդարձակ դահլիճը, ուր նույնպես ոչ մի օտար ոտք չի կոխում. Լաթիֆեն մի պահ հանգստանում է և քիչ հետո դարձյալ ոտքի վրա է։ Նա կանգնում է սենյակի մեջտեղը. հեռվից լսվում է մի մեղմ պարի եղանակ. այս անգամ արդեն Լաթիֆեի աչքերին իջնում է խոր թախիծ, նա հետ է դցում գլուխը, կարոտով նայում է լուսամուտից դուրս, ուր միայն անսահման ու անծայրածիր տարածությունն է փռված և ոչ ոք, ոչ ոք չի երևում ու չի կարող երևալ։ Նա հեռզհետե բարձրացնում է թևերն ու շարժվում ընդարձակ դահլիճում...

Նա պարում է։

Այդպես է այժմ Սարդարի կամքը։

Նորից ճկվում է Լաթիֆեի իրանը, նորից պարանոցը նազանքով խոյանում է վեր, հոլանի թևերը թափահարում են ավելի արագ և, շող մատներով, նա, շղարշի ծայրերը բռնած, ֆռռացնում է իր շուրջը և այնպես թեթև է սահում նրբահյուս գորգերի վրայով, որ թվում է, թե ահա՛ նա թռչունների նման թև կառնի, կսլանա հեռո՛ւն, հեռո՛ւն...

Ու ասում է Լաթիֆեն։

Նա պարում է ջեննաթի պարը,— մտածում է Սարդարը։

... Ես պարում եմ տանջանքի պարը, մահվան պարը,— մտածում է Լաթիֆեն։

Ու այս մտքից հեռզհետե նրա թևերը կամազուրկ են դառնում, հեռզհետե իրանը թոկանում է, պարանոցը խոնարհվում է, սևաթույր, պայծառ աչքերից ցողում են երկու կաթիլ արցունք։

Նա այլևս կանգնում է իր տեղում և միայն շղարշն է, որ այս անգամ ակամա ֆռռում է նրա շորս կողմը և այդ շղարշի արանքից նրա մարմինը երևում է ինչպես վարդա-

ջրով օծված մի նրբին զանգված, որից բուրում է բուրմունքների բուրմունքը, որը չի կարող բուրել և ոչ մի դրախտային ծաղիկ, ինչպիսի աստվածային ձեռք էլ տնկած լինի այն... Ու Սարդարն այլևս անհամբեր ցատկում է տեղից, հետ է նետում շղարշը, գրկում նրա ճկուն իրանը, կրծքին է առնում նրա գլուխը, քաշում է դեպի իր ոսկեզօծ մահճակալն ու փակում աչքերը և նրան երևում է դրախտը նոր հրաշալիքներով, նոր ու անհագուրդ վայելքներով...

Է.

Սարդարը եկավ դահլիճից հագեցած ամենանվիրական ջեննաթի պարգևով ու երբ անցավ սրահը, նրան մոտեցավ ներքինի Սահիբը և խոնարհ գլուխ տալով զեկուցեց.

— Տե՛ր, քիչ առաջ մեռավ Սիմիդարը։ Երեք անգամ արևի լույս խնդրեց և երեք անգամն էլ մերժեցի՝ անսալով ձեր իմաստուն խորհրդին։

— Ինձ հետ խոսել միայն ողջ մնացածների մասին,— որոտաց Սարդարը, չցանկանալով ստվերել իր վայելած երանությունը։

— Մյուս յոթը խանումները նույնպես խնդրում են իրենց լույս աշխարհ թողնել... ի՞նչ կհրամայեն ձեր աստվածային շրթունքները։

— Սարդարին խնդրել հարկավոր չէ. Սարդարը գիտե, թե ինչն ինչ ժամանակ է հարկավոր։

— Ձեր բերանով ինքն իմաստությունն է խոսում, տե՛ր,— ասաց Սահիբն ու խոնարհած գլխով հետ-հետ գնաց։

Ո՛չ, հատակ չունի Սարդարի ցասումը... վեց, և գարձյալ վեց ամիս թող մնան նրանք առանց արևի, որ հասկանան, թե ինչ է նշանակում ըմբոստանալ Սարդարի դեմ, փախչել ապարանքից։ Փախած Լաթիֆեի փոխարեն թող տանջվեն մնացածները և այն ժամանակ նրանք շա՞տ հնազանդ կլինեն։ Առայժմ Սարդարին բավարարում է նոր Լաթիֆեն...

Անցան օրեր ու Լաթիֆեն հետզհետե մոռացվում էր ու թախիծը պատում էր նրան, ինչպես գալուությունը պատում է աշնան տերևները։ Օրեր, շաբաթներ ու ամիսներ շարունակ նա կրկնում էր նույն արարողությունը Սարդարի համար, ընկնում, ներքին զզվանքով ընկնում նրա բազուկներում և ամեն անգամ իրեն մխիթարում նրանով, որ այդ բոլորն ինքն անում է միայն ու միայն Մանսուրի համար, որ մի օր պիտի գա Մանսուրը, փախցնի իրեն և ինքը կազատվի այդ տանջալի լողանքից ու պարից, և մանավանդ, Սարդարի մահճասրսուռ գզվանքից։ Ջրի ալիքների մեջ նա տեսնում էր նրան՝ Մանսուրին։ Երբ պարելիս թափահարում էր շղարշը, թվում էր, թե ահա՛, ահա՛ Մանսուրի հետ թրուչում է սարերով ու ձորերով դեպի ազատություն և ամեն անգամ Սարդարի գրկում մրմնջելով, թվում էր, թե դա վերջին տուրքն է, որ պիտի տա ու այլևս ազատվի նրանից։

Բայց եկավ մի օր, որ այլևս այդ ապրումները նրան չէին բավարարում, որ զարհուրելի դարձավ Սարդարի ըստվերն անգամ ու դարշելի ներքինին ու աղախինը, որոնց միայն իրավունք ուներ նա տեսնել։ Արև, իսկական արև է ուզում նա տեսնել, դաշտ, կանաչ ու ծաղիկ, իսկական դաշտ, կանաչ ու ծաղիկ է ուզում տեսնել նա, Զանգուն, իսկական Զանգուն է ուզում տեսնել նա, և այդ ամենի հետ իրեն՝ Մանսուրին...

Եվ հորդեցին արցունքները վարար ու անդադրում, ինչպես Զանգուն է հորդում գարնանը և Լաթիֆեի ներսում բոցավառվեց ազատության կարոտը. նա, դահլիճի միակ լուսամուտից նայում էր դուրսը. մի պահ գլուխը դուրս հանեց և ներքևում խորը, շատ խորը, ամեհի ժայռերի խորքից հազիվ լսելի դարձավ ինչ-որ խշշոց. այո՛, Զանգուն, էր, Զանգուն, որը Լաթիֆեին թվում էր, թե նույնպես լալիս է, այնքան աղեկտուր, այնքան խորքից էր գալիս նրա ձայնը, թվում էր, թե գետը շնչահեղձ էր լինում. ո՛չ ոք սիրտ չէր անում ապարանքի շրջապատում մտնել և այդ պատճառով Լաթիֆեն ոչ ոքի չէր տեսնում։

Լաթիֆեն հայացքը սևեռեց, նայեց հեռուն և նրան էլ, ինչպես վերջին անգամ Մանսուրին, թվաց, թե Արարատի կատարից փրթած գալիս է մի թոխ ամպ։ Ամպը գալիս է հապճեպով, հալածված հողմից. ահա՛, ահա՛ նա մոտեցավ, նա նման է հեքիաթներում գրված կախարդական գորգին։ Ահա՛ այդ գորգը կգա, կփռվի իր լուսամուտի դիմաց. ինքը կթռչի, կնստի կախարդական գորգին. գորգը նրան կփախցնի դեպի այդիները, ինքը հենց գորգի վրայից իմաց կտա Մանսուրին, նա էլ կթռնի-կնստի իր կողքին և իրենք կսավառնեն հեռո՜ւ-հեռո՜ւ կողմեր, ուր ազատ ու ընդարձակ ծովեր ու ցամաքներ կան, ուր Սարդար չկա, ուր կարելի է սիրել սիրած մարդուն ու սիրվել սիրված մարդուց... Ահա՛, ամպեղեն գորգը մոտեցավ... Լաթիֆեն պատրաստվում է թռչել տեղից, բայց այդ պահին մի ձեռք դիպչում է նրա ուսին և կախարդական գորգը չքանում է. նա ետ է դառնում։ Սարդարն է կանգնած նրա դիմաց։

— Գնանք,— ասում է Սարդարը,— Լաթիֆե, գնա՛նք... Ես եղա ավազանում ու պուրակում և ավազանն էլ, պուրակն էլ տխուր էին առանց քեզ։ Գնա՛նք, ալիքները քեզ են սպասում, գնա՛նք, վարդենին նորից ծաղկել է և առանց քեզ նա հոտ չունի։

— Ո՛չ,— բացականչում է Լաթիֆեն,— ես կուզեմ լողանալ իսկական Ջանգուի մեջ։

— Ո՛չ, դու կլողանաս միայն ինձ համար և ոչ մի հողեղեն չպիտի տեսնի քեզ։

— Ես կուզեմ լողալ ինձ համար։

— Լաթիֆե՜։

— Սարդար, ամենակարող Սարդար, ասա՛, ո՞ւր է իմ Մանսուրը...

— Ա՜խ, էն Մանսուրը,— ասաց ու կանգնեց Սարդարը։

Այն օրից, երբ Լաթիֆեն ենթարկվել էր իրեն, երբ ինքը խոսք էր տվել, թե Մանսուրի կյանքին ձեռք չի տա, Լաթիֆեն չէր տվել Մանսուրի անունը։ Թվում էր, թե աղջիկը մոռացել էր նրան... Ա՜հ, ուրեմն, ի՞նչ խաբուսի՞կ էր նրա սերը,

ուրեմն աղջիկն իր սրտի անկյունում դեռ տեղ էր պահում Մանսուրի համար, ո՛չ, ո՛չ, Սարդարը կհայանի ամեն ինչ և թող Լաթիֆեն խսպառ կտրի իր կապը, թեկուզ սրտի գաղտնի կապը դրսի հետ, և նա ասաց.

— Մանսուրը չի հիշում քեզ այլևս։

— Չի կարող պատահել. դու ստո՛ւմ ես։

— Նա չի հիշում քեզ, նրա դիակով ես ամբացրի ջը բանտքի ափերը, որ ջրանցքն ամուր լինի, որ ջուրն անխափան գա ու լցվի ավազանը, ուր դու լողանում ես քո տիրոջ համար։

— Մանսուրի՞ն, դո՛ւ... ա՛խ, գաղան, ստոր խաբեբա... դե շուտ ասեցի, էլ ինչո՞ւ համար եմ ես ապրում... չէ՞ որ այս ամենը նրա համար էր. ի՞նչը կարող էր ուժ տալ ինձ դիմադրելու այս տանջանքներին, քան այն հույսը, որ մի օր պիտի տեսնեի իմ Մանսուրին, լինեի նրա հետ, ապրեի նրա համար։

Եվ Լաթիֆեն ոստյունով թռավ դեպի լուսամուտը։

— Կա՛ց, ցնդած, հիմար աղջիկ։

— Ո՛չ, ես հիմա ավելի խելոք եմ, քան երբևէ,— ու ցանկացավ դուրս ոստնել։

— Կա՛ց, մահն է քո առաջ, խելագար։

— Թո՛ղ, կյանքն է իմ առաջ... Մեռնե՞լ այո՛... Բայց ուզում եմ մեռնել ազատության մեջ, ուզում եմ, որ շունչս խառնվի ազատ, քո շնչով շպրծված օդին... Թող իմ դիակը քրքրեն ցին ու անդը—բայց Սարդարի գարշելի շրթունքները թող չդիպչեն ինձ. թող որ փտեմ ու հող դառնամ ազատության՞ մեջ և այդ հողը թող խառնվի այն հողին, որի տակ թաղված է իմ Մանսուրը, չէ՞ որ այլևս Սարդարի ձեռքերը չեն դիպնի ինձ... Հեռո՞ւ. բնության մեջ իմ գերեզմանը շատ և շատ ընդարձակ կլինի, քան այս գարշելի գերեզմանը, քան այս կենդանի մեռելների դագաղը։

Ասաց Լաթիֆեն, իր հոգում կուտակած ատելության ու ցասումի ողջ նողկանքով հրեց Սարդարին ու միակ լուսամուտից իրեն դուրս նետեց։ Ամենի բարձրությունից մինչև

Զանգուի ձորը Լաթիֆեի մարմինը մի քանի անգամ պտույտ գործեց օդի մեջ. նրա մեռաքսե զգեստը ֆռռաց նրա շուրջ բոլորը, ինչպես նրա երազած կախարդական գորգը, և ապա, նա ընկավ ու ջարդվեց ժայռերի սուրասուր ծայրերի վրա։

Ասում են, որ Մանսուրի ու Լաթիֆեի սիրո գաղտնիքն իմացող մարդիկ, վերջում գտան Լաթիֆեի ջարդված մարմնի մնացորդները և Սարդարից ծածուկ, տարան թաղեցին Մանսուրի դիակի մոտ՝ այն ջրանցքի ափին, որը Սարդարը կառուցեց իրա՝ Լաթիֆեի բռնադատված սերը որսալու համար...

1935
Երևան

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ

Ս.

Բարձր ու վեհանիստ է Յուպիտերի աստվածային գահույքը։

Իր անհատնում ու անհասանելի շնորհը շռայլորեն սփռում է Յուպիտերը ամենուր և ամենքի վրա։

Հաղթանակ է պետք՝ իր հրեղեն աստվածները նրա մատի մեկ շարժումով խոյանում են թշնամու վրա և ամեն։ ինչ լինում է Յուպիտերի ցանկության համաձայն։ Խնջո՞ւյթ է պետք՝ նրա շուրջն են հավաքվում եթերային ոգիները. երգում են մելոդիկ, հաղթական, բաքոսական երգեր, մյուսները պարում են նաղանի, քնքուշ կամ խոյանոիչք պարեր ու Յուպիտերը զվարճանում է ու նրա աստվածային շնորհը կաթում է մահկանացուների վրա։

Յուպիտերը ամեն տեղ՝ կռվի ու զվարճության հետ միաժամանակ սփռում է սեր և ամենակատարելագույն սերը վայելում է ինքը՝ աստվածների աստվածը։ Ահա եկան գեղեցկագույնների գեղեցկագույնները։ Այսօր նա ուզում է վայելել քնքուշ ու մեղմ սեր, ուստի սիրո դիցուհին նա հանում է ծովի փրփուրից և դիցուհին այդ փրփուրի մեղմությամբ շոյում է նրա հոգին։ Վաղը նա կարոտում է կրակոտ ու տաք սիրո,— ապա սիրո դիցուհին նա հյուսում է հրաբուխների լեզուներից և դիցուհին իր կրակոտ սիրով բոցավառում է Յուպիտերի հոգին։ Եվ այն պահին, երբ Յուպիտերն իր սերն է վայելում՝ բնությունը նոր ուժով զարթնում է, ծաղիկները բացում են իրենց թերթերը, իսկ մահկանացուների համար ապրելն ու սիրելը ավելի հաճելի է դառնում։

Եվ այս ամենից Յուպիտերը դարձել է տիրական ու քմահաճ։

Եվ ահա՛ այսօր, նստած իր եթերային գահույքին, Յուպիտերը մտածում էր երկնքի ու երկրի անցուդարձի մասին։

Քմահաճ տիրոջը այլևս չէր բավարարում այդպես հեշտությամբ ձեռք բերված հաղթանակը, խնջույքն ու սերը։

Նա շատ էր լսել ցածում, երկրի վրա տառապող մահկանացուների մասին, շատ շնորհներ էր արել իրեն հաճելի մարդկանց համար, բայց դեռ նրանցից ոչ մեկին չէր հանդիպել և չգիտեր, թե ինչ է նշանակում անկատար ցանկություն։

Այժմ նա ուզում էր իջնել մարդկանց մեջ, տեսնել, թե ի՞նչպես են ապրում նրանք, ի՞նչ ցանկություններ ունեն և ի՞նչ են մտածում աստվածների մասին։

Եվ ահա՛ երբ արևը իր ցերեկվա շրջանն անելով գնաց գիշերվա հանգստին՝ Յուպիտերն իր հրեղեն կառքը նստավ ու իջավ երկրի վրա և անմիջապես կառքը հետ ուղարկելով իր եթերային ապարանքը, ինքը կերպարանափոխվեց և իբրև սովորական մի ճամբորդ մտավ քաղաք։

Մութ ու անհրապույր էր քաղաքը։ Յուպիտերն անցավ փողոցներով, բայց ամեն տեղ նախորդ օրվա անձրևից գոյացած ցեխն ու փոքրիկ լճակները խանգարում էին նրան կանոնավոր քայլել. տեղ-տեղ նա խրվում էր ցեխի մեջ, սայթաքում, քիչ էր մնում ընկնի, բայց մի կերպ իրեն պահում էր։ Ամբողջ քաղաքում հաղիվ մի քանի տան լուսամուտներից էր լույս առկայծում։ Յուպիտերն արդեն բավական հոգնել էր, տեղ չուներ իջևանելու, նրա միակ հույսն էր հյուրընկալվել որևէ տան մեջ, ուստի նա բախեց մի քարաշեն տան դուռ։ Բախեց ու բավական սպասեց մինչև մեկը փնթփնթոցով, տհաճությամբ դուռը բացեց։

— Ինչ ես ցանկանում,— հարցրեց դուռը բացողը, որն ըստ երևույթին տան ծառան էր։

— Տանտիրոջն եմ ուզում տեսնել։

— Տանտե՛ր. նա հիմա մարդ չի ընդունում։

— Բայց ես ուզում եմ տեսնել նրան։

— Այ քեզ անհրեշտություն։

Բայց Յուպիտերը հրաժարվում էր հեռանալ. ծառան ստիպված եղավ կանչել տանտիրոջը, որը մի երիտասարդ ազնվական էր։ Տեսնելով ճամբորդին ազնվականն հարցրեց։

— Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես։

— Ճամբորդ եմ, հանո՞ւն Յուպիտերի՝ գիշերելու տեղ տուր։

—Հանուն Յուպիտերի՞, առանց Յուպիտերի էլ իմ ընտրուվիներն ինձ համար լավ են աշխատում, տեղ չկա, գնա՛, ասերե՛ս թափառաշրջիկ, գնա՛։

Եվ այս ասելով, ազնվականը դուռը ծածկեց նրա վրա։

Յուպիտերը գլուխը թափ տվեց ու անցավ առաջ. մութը հետզհետե սաստկանում էր, ցուրտն էլ արդեն դառնում էր անտանելի. դժվարություններին անսովոր նրա մարմինն արտակարգ հոգնություն էր զգում։

Նա հասավ մի հողաշեն տան, որի պատերի ծեփերն արդեն թափվել էին. փոքրիկ լուսամուտը կիսով չափ խցված էր խոտով ու փայտով և ոչինչ չէր նշմարվում մթության մեջ թաղված տան ներսում։

— Ասում են աղքատ մարդիկ հյուրասեր են լինում,— մտմտաց յուրովի Յուպիտերը և բախեց այդ աղքատիկ տան դուռը։

Քիչ հետո դռան հետևից մեկը ձայն տվեց.

— Ո՞վ է բարեհաճել այս ուշ ժամին ծեծել ջրկիրի դուռը։

— Մի ճամբորդ, հանո՞ւն Յուպիտերի՝ թող այս գիշեր տեղավորվեմ քո տան մի անկյունում։

— Իսկ ի՞նչ է արել իմ դռան վիճակը թեթևացնելու համար այդ քո Յուպիտերը. տեղ չունեմ, եղածը մի փալաս է, որի տակ ծածկված ենք ես ու կինս. գնա նրանց մոտ, որոնց Յուպիտերն իր շնորհներն է պարգևել, նրանք լուսա-

վոր տան ունեն և տաք անկողին ու մանավանդ կշտացնող ուտելիք։ Գնա՛։

Յուպիտերը ոչինչ չպատասխանեց, շտապ-շտապ առաջ անցավ. նախ մի հարուստի, ապա մի աղքատի դուռ ևս ծեծեց, ասաց միևնույն խոսքերը և ստանալով միևնույն պատասխանները՝ հուսահատ ու շփոթ մնաց կանգնած։

— Ի՞նչ դժվար է մարդկային կյանքով ապրելը,— մտածեց Յուպիտերը,— իմ այսքան շնորհները ոչ մեկին ինձ և բախտավորություն չեն դարձրել, չկանչե՞մ արդյոք իմ հրեղեն կառքը և գնամ իմ դահուքին, ուր ամեն ինչ ենթակա է իմ քմահաճույքին։

Այս վարանման մեջ նա արդեն հասել էր քաղաքի ծայրին, երբ նկատեց քաղաքից հեռու մի տնակ։

— Այս դուռն էլ բախեմ,— ասաց նա,— բայց առանց ասելու «Հանուն Յուպիտերի», թերևս երկրային ավելի հաճելի է այս թշվառ մարդկանց։

Նա մոտեցավ տան դռանն ու բախեց։

Քիչ հետո դուռը բացվեց։ Կես գիշերին, լուսնի աղոտ լույսի տակ, Յուպիտերը նկատեց վաթսունհինգամյա մի ծերունի, որ շոյելով իր փառահեղ մորուքը հարցրեց.

— Ո՞վ ես, ի՞նչ ես կամենում։

— Ճամբորդ եմ, հանուն քո երիտասարդության սիրո, ինձ գիշերելու տեղ տուր։

— Եթե իմ աղքատիկ խրճիթը կգոհացնի քեզ, համեցի՛ր,— ասավ ծերունին։

— Ո՜հ, ավելի քան գոհացուցիչ է, միայն թե ինձ ներս թող...

— Ահա՛,— ասաց ծերունին և Յուպիտերին ներս առնելով դուռը ծածկեց։

Նրանք ներս մտան։

Յուպիտերը տեսավ, որ անկողնում նստել էր մի պառավ կին, ըստ երևույթին ծերունու կողակիցը։ Յուպիտերը նրան ևս խոնարհ գլուխ տվեց և որովհետև չափազանց հոգնած էր, առանց այլևս խոսելու, գոհացավ իրեն հատկաց-

ված հնամաշ անկողնով ու գլուխը դրեց բարձին։ Եվ այդ հնամաշ անկողինն այդ պահին ավելի հաճելի թվաց նրան, քան իր աստվածային գահույքը, ուստի և անմիջապես ընկավ Մորփեոսի գիրկը։

Բ.

Երբ վարդամատն արշալույսի հետ Յուպիտերը բացեց աչքերը, նկատեց, որ բնակարանը, ուր ինքը հյուրընկալվել էր, մի հին ու անշուք տնակ էր, բայց ամեն ինչ տեղինտեղոք էր. այդտեղ չկային դիպակ ու կերպաս, չկային ոսկե կամ արծաթե ամաններ, բայց գետնին փռված եղեգնե խսիրները և պատի տակ շարված կավե ամանները դասավորված էին առանձին խնամքով ու ճաշակով։

Յուպիտերը շտապ հագավ իր զգեստները, կապեց մեջքկապն ու շնորհակալական զգացումով նայեց ծերունի ամոլներին, որոնք նստած եղեգնե հյուսվածքի վրա՝ սպասում էին իրենց հյուրի զարթնելուն։

Առաջին բանը, որ Յուպիտերն զգաց, մի բան, որ իր երկնային գահույքում երբեք չէր զգացել,— քաղցն էր։ Ամենակարող Յուպիտերը մարդու նման քաղց էր զգում։ Այդ բանն իհարկե հասկացավ ծերունի զույգը և քիչ հետո նրան հրավիրեց իր աղքատիկ սեղանին։

— Նստիր այստեղ, խնդրեմ,— ասաց ծերունին,— նրստի՛ր, սա թարմ ձուկ է, քիչ առաջ որսացի մոտիկ ծովից,— մոտ նստիր և բաժանիր մեզ հետ մեր հացն ու ձուկը։

— Անչափ շնորհակալ եմ, բարի մարդիկ,— ասաց Յուպիտերը, և մոտենալով նրանց՝ նստեց ու քաղցած մարդու ախորժակով կերավ հացն ու ձուկը։

— Իսկ ինչպե՞ս են կոչում իմ բարեկամներին,— ասաց Յուպիտերը, երբ արդեն կշտացել էր։

— Միևնույն չէ՞ ձեզ համար։ Մենք արդեն մեր օրերն անցկացրած մարդիկ ենք,— ասաց ծերունին։

— Ո՛չ, ես ձեզ անչափ երախտապարտ եմ. անօթեան էի, դուք ինձ տեղ տվիք, մրսում էի, ձեզ մոտ տաքացա,

քայլած էի, դուք ինձ կշտացրիք։ Դուք այնպես վարվեցիք ինձ հետ, ինչպես Յուպիտերն է վարվում իր շնորհին արժանացած մարդկանց հետ, ուրեմն ես ուզում եմ ձեզ մոտից ծանոթանալ և, եթե հնարավոր է, մի բանով վարձահատուցել լինելս։

— Շնորհակալ ենք, ասաց ծերունին,— ես ամբողջ կյանքումս մարդկանց համար արել եմ այն ամենը, ինչ կարողացել եմ առանց հատուցում ակնկալելու։ իսկ եթե քեզ շատ հաճելի է իմանալ մեր անունները, ապա քառասուն տարի առաջ, երբ մենք ամուսնացանք, ահա՛ իմ կողակցին կոչում էին Թերեզա, իսկ ինձ կոչում էին Տիրան։

— Իսկ հիմա ինչպե՞ս են կոչում։

— Հիմա էլ նույնպես են կոչում. բայց ի՞նչ է մնացել այն ժամանակվա Թերեզայից և Տիրանից։

— Բայց դուք այնքան բարի եք, որ ես կուզեի ձեզ տալ այն, ինչին այնպես դուք կարոտում եք հիմա։

— Մեր երիտասարդությո՞ւնը։

— Այո՛, չէ՞ որ դուք էլ երեկ զիշեր իմ առաջ դուրը բացիք հանուն ձեր երիտասարդության սիրո. դե՛, գործի անցնենք. ես չեմ ուզում ձեր երախտիքը մոռանալ։

Ու մինչ ծերունիները ոտքի ելան, Յուպիտերը վեր թռավ տեղից, ծոցից հանեց մի սրվակ, մի կաթիլ հեղուկ ցանեց Թերեզայի, մի կաթիլ էլ Տիրանի վրա։

— Հե՛տ դարձեք,— ասաց ապա Յուպիտերը։

Նրանք հետ դարձան։

Մի պահ նայեցին Յուպիտերին, հետո միմյանց և թը ռիչքով փարվեցին իրար։

Նրանք քառասուն տարով երիտասարդացել էին։

Թերեզան դարձել էր քսան տարեկան մի զարմանահրաշ աղջիկ, Տիրանը՝ քսանհինգ տարեկան առույգ, Հերկուլեսի կազմվածքով մի տղամարդ։

Զույգը միմյանց ձեռքը բռնած մոտեցան Յուպիտերին, փաթաթվեցին նրան ու միասին գոչեցին։

— Անչա՜փ է քո շնորհը, ո՜վ ազնիվ հյուր, ապրիր մեր հարկի տակ, ապրիր հավիտյան։

Գ.

Ի՞նչն այլևս կարող էր արգելակել Տիրանին կյանքի մեջ։ Նա առուցգ շարժումով դուրս եկավ տնից։ Մինչ այդ արդեն ամեն ինչ նրա համար անցյալ էր դարձել, այժմ ամեն ինչ դարձել էր գալիք։

Նա վազեց հասավ ծովափ։ Ծովը փոթորկվել էր. նա հիշեց, որ վերջին տարիները փոթորկոտ ծովը նրան վախ էր ազդում, իսկ այժմ այդ փոթորիկն ու բնության արհավիրքը նույնիսկ դուրեկան էին։

Ապա նա հետ դարձավ, մտավ քաղաք, կանգնեց մի շինության առաջ։ Շենքը հիսուն տարի էր, որ կառուցվում էր, բայց չէր ավարտվում։ Դա մի հսկայական բացօթյա թատրոն էր, ուր ժողովուրդը պիտի հավաքվեր ու զվարճանար իր հաղթանակից հետո։ Տիրանը երկար տարիներ աշխատել էր այդ շենքի վրա։ Նա տաշել ու կանգնեցրել էր սյուների մի մասը, բայց մյուսը չէր կարողացել ավարտել, ծերությունն ուժասպառ էր արել նրան. այժմ նա ուզում էր օր առաջ ավարտել շենքը, կանգնեցնել սյուները, դնել հայկակապ խոյակները։ Նա գործի ընդունվեց և նոր եռանդով սկսեց աշխատել։

Ու երբ երեկոյան տուն դարձավ, անմիջապես գիրկն առավ Թերեզային ու գոչեց.

— Ո՜հ, Թերե՜զա, ես այսօր արդեն մի նոր սյուն կանգնեցրի մեր թատրոնի համար, մյուս տարի կավարտեմ շենքը և դու հաղարավոր քաղաքացիների հետ Ղզվարճանաս այնտեղ՝ դիտելով աստվածային խաղերը։ Ո՜հ, Թերեզա, երբեկ ով ինձ հրամայում էր՝ լսում էի, իսկ այսօր ես ինքս եմ իմ կամքի տերը, ես ուզում եմ նոր բան ստեղծել, նոր բան ավելացնել կյանքին, ի՞նչ լավ է նորից սկսել կյանքը։

— Այո՛, իմ սիրելի՛ Տիրան,— ասաց Թերեզան,— մինչ երեկ ինձ համար արդեն շատ բան ճանձրալի ու ավելորդ

էր թվում, իսկ այսօր ամեն ինչ սիրելի և ամեն բան նոր իմաստ է ստացել։ Ահա ես էլ կամ եմ ճարել և սկսել եմ քանդակել մի արձան. նա պատկերացնելու է մի երիտասարդ, արձանը կոչելու եմ «Դարձ դեպի կյանք»։

— Կյա՜նք, լավ ես մտածել, եթե մարդ կարողանար, գոնե մեկ անգամ, մեզ պես վերադառնալ դեպի կյանքը, այն ժամանակ ոչինչ սարսափելի չէր լինի նրա համար։

Հետևյալ օրը Տիրանը նորից գնաց իր աշխատանքին։ Թերեզան մնաց մենակ։

Յուպիտերը, որ այժմ ապրում էր կողքի նորոգված սենյակում, ներս մտավ։

— Թող քեզնից անպակաս լինի աստվածների շնորհը, ո՞վ գեղեցկուհի,— ասավ Յուպիտերը, դիմելով Թերեզային։

— Շնորհակալ եմ ազնի՛վ հյուր։

Յուպիտերն ապա դիտելով շուրջն ասաց.

— Ահա՛, քո քանդակի վրա արդեն ուրվագծվում են քո հերոսի աչքերը, ես սրտատրոփ սպասում եմ, թե ե՞րբ ամբողջովին կերևա այդ երջանկությանը դարձող մարդու դեմքը։

— Եթե քեզ այդքան հաճույք կպատճառի իմ քանդակը, ես այն կավարտեմ ինչքան կարելի է շուտ. չէ՞ որ ես հիմա ինքս եմ դարձել դեպի կյանքը, և եթե առաջ գործն ինձ ձանձրույթ էր պատճառում, ապա հիմա աշխատելը միայն հաճույք է ինձ համար։

Ե՛վ հետևյալ, և՛ մյուս օրը Յուպիտերը մտավ Թերեզայի մոտ ու հարցրեց քանդակի մասին։ Բայց այլևս քանդակը չէր, որ հետաքրքրում էր նրան։

Թերեզան էր քաշում, հրապուրում նրան։ Թերեզան, քանի տարեկան դարձած Թերեզան, իր մեջ էր կուտակել բոլոր գեղեցկությունների թովչանքը։ Եվ ոչ մի աստվածուհի Յուպիտերին այնքան կատարյալ ու սքանչելի չէր թվացել, որքան այժմ Թերեզան էր։ Նրա ձայնի մեջ կար Յուպիտերի լսած բոլոր քաղցր հնչյուններից քաղցրագույնը։ Թերեզան իր էությամբ անձեռակերտ մի քանդակ էր՝ քնքույշ՝ ծովի

փրփուրից ծնված աստվածուհիների նման, պիրկ ու կրակոտ հրաբուխների բոցից ձուլված աստվածուհու նման, կախարդիչ ու շլացնող՝ երկնքի լուսատուների նման։

Յուպիտերը նայում էր Թերեզայի աչքերին, սուզվում էր նրանց խորության ու հրապույրի մեջ, նայում էր նրա գերող շարժումներին և այլևս չէր կարողանում դիմադրել իր մեջ կուտակվող, բռնկվող զգացումներին։

— Թերե՜զա,— այժմ նա իր թողած աստվածային գահույքից ավելի ձգող ու ավելի վեհ էր։

Եվ այս անգամ էլ, երբ նա եկավ Թերեզայի մոտ, այլևս չհամբերեց ու ասավ.

— Թերե՜զա, աստվածային Թերե՜զա։

— Լսում եմ, ո՜վ ազնիվ հյուր։ Շտապո՞ւմ ես, հա՞, սպասիր դարձյալ արևի հինգ շրջան և պատրաստ կլինի իմ քանդակը։

— Ո՜հ, ոչ, ես այժմ բոլորովին չեմ շտապում։

— Ինչպե՞ս։

— Այո, ես կուզենայի, որ հավիտյան շարունակվեր քո աշխատանքը, և դու երբեք չավարտեիր այդ քանդակը։

— Ինչո՞ւ։

— Ինչո՞ւ. չավարտեիր, որ ես ամեն օր գայի ու տեսնեի քո այդ ճարտար մատների նուրբ ստեղծագործությունը, չավարտեիր, որ ես ամեն օր գայի ու նայեի քո այդ բոցափայլ աչքերին, որի կրակն այնպես տոչորում է ինձ, չավարտեիր, որ ամեն օր գայի ու հրապուրվեի քո այդ նրբին ու քնքույշ դեմքով, քո այդ բուրումնավետ շրթունքներով, որ այնպես գայթակղիչ է և թերևս արժանանայի գոնե մեկ անգամ բմպել քո այդ շրթունքներից երկրային կյանքի հրապույրը։

— Ո՜հ, ազնի՜վ բարեկամ,— ասաց միայն Թերեզան։

Թերեզան մի քանի օր արդեն նկատել էր, որ Յուպիտերը հրապուրված է իրենով, այժմ նրան հաճույք էր պատճառում նրա քնքույշ խոսքերը, դուրեկան էին գեղեցիկ երիտասարդի հետապնդումները, սակայն այդ ամենին նա նա-

յում էր բերև զվարճալի խաղ, և միայն այդքան, ու երբ ե-
ռեկոյան Տիրանը տուն եկավ, նա հենց Յուպիտերի ներ-
կայությամբ փարվեց Տիրանին ու գոչեց.

— Տիրան, այսօր լավ գնաց իմ աշխատանքը, մեր ազ-
նիվ հյուրը իր բարի խորհուրդներով ինձ ավելի քաջալերում
էր իմ գործի մեջ, ասա՛, ի՞նչպես է քո գործը։ Ո՞վ է քեզ
քաջալերում։

— Իմ գործն էլ լավ է։ Այսօր կանգնեցրի ևս երկու
սյուն։ Իսկ ինձ քաջալերողը դո՛ւ ես, ո՞վ անգիններից ան-
գին։ Երբ տուն գալիս լսում եմ քո ձայնը, տեսնում քո աստ-
վածային դեմքը, ինձ թվում է, թե ես էլ աստված եմ դար-
ձել և ամեն ինչ կարող եմ անել։ Շատ գոհ եմ, որ մեր ազ-
նիվ հյուրը քեզ օգնում է իր խորհուրդներով։ Շնորհակալ
եմ, ով ազնիվ հյուր։ Ինչքա՞ն կցանկանայի, որ դու հյուր
չկոչվեիր այլևս, այլ մեր տան մշտական ու հարազատ ան-
դամը։

Յուպիտերը միայն զարմանում էր Տիրանի այդքան
պարզությունն և դեպի կինը տածած հավատի վրա, մի պահ
նա զղջում էր իր մտքերի համար։ Այս մտքով ու զգացո-
ղությամբ նա քնեց... Բայց հետևյալ առավոտ, երբ զարթնեց, երբ
նորից մտավ Թերեզայի սենյակը, տեսավ, որ նա ավելի
հրապուրիչ է դարձել։

Քնահաճ աստվածն ինքն իրեն մտմտաց,— չէ՞ որ այս
ողջ հրապույրը ևս տվի այդ կնոջը, միթե հենց ե՞ս պիտի
անհաղորդ մնամ այդ հրապույրը ճաշակելուց,— և նա, որ իր
գահույքում ամեն ինչ ձեռք էր բերում հեշտությամբ, մատի
մեկ շարժումով, ավելի բորբոքվեց և Թերեզայի անգիմա-
դրելի հրապույրի դիմաց մեղմությամբ խոսեց.

— Դո՛ւ, սքանչելի՛դ երկրի և հպարտությո՛ւն աստված-
ների, դո՛ւ, սկիզբը լույսի և բուրմունքը ծաղիկների, թո՛ղ,
թո՛ղ այդ անշունչ արձանը, թո՛ղ, դարձի՛ր ինձ, տո՛ւր ձեռքդ
մեկ անգամ փարեմ դեմքիս, թող մեկ անգամ զգամ քո
շունչը դեմքիս վրա, թող դպվեմ այդ աստվածային դեմքդ,
նայեմ աչքերիդ մեջ, թո՛ղ, այլևս ոչինչ չի դրավում, ոչի՛նչ

չի զբաղեցնում ինձ այս աշխարհում՝ բացի քեզնից, Թերեզա, նայի՛ր ինձ։

— Աղնի՜վ բարեկամ, շնորհակալ եմ քո գեղեցիկ խոսքերի համար։ Շնորհակալ եմ, բայց չեմ կարող ավելին անել, նստիր այստեղ, խոսենք աշխարհից ու աստվածներից։ Դու պատմիր ինձ, թե ի՞նչ ես տեսել, ի՞նչ ես գործել քո կյանքում, չէ՞ որ դու այնպե՞ս լի ես շնորհներով։

Թերեզան դարձյալ հավատարիմ էր Տիրանին, սակայն ներքուստ հաճույք էր զգում իր հյուրի խոսքերից ու հետապնդումներից, այդ պատճառով էլ նրան պահելով անորոշ վիճակում, ուզում էր լսել նրա սիրաբորբոք խոսքերը։

Յուպիտերը խոսեց.

— Ես մոռացել եմ ամեն տեսակ պատմություն, ամեն պատմության սկիզբը դու ես։ Իմ բոլոր պատմությունների հերոսուհին դու ես։ Ասա՛, ե՞րբ կարժանանամ քո շնորհին, ասա՛ Թերե՜զա, չեմ կարող համբերել։

Եվ այսպես էր խոսում Յուպիտերը ամեն օր, ամեն պահ, հենց որ Թերեզային մենակ էր գտնում, լիներ այդ տանը, երբ Թերեզան աշխատում էր իր քանդակի վրա, լիներ այգում, երբ դիցուհին ծաղիկներ էր փնջում, լիներ խաղերի ժամանակ, երբ Թերեզան կաքավում էր, լիներ ծովափին, երբ Թերեզան պատրաստվում էր լողանալ, որտեղ և որ ժամին լիներ— սե՜ր, սե՜ր,— այս էր լսում Թերեզան։

Եվ այդ ամենից արդեն Թերեզան ձանձրացավ, բայց Յուպիտերն ավելի համառ գտնվեց։

Եվ ահա մեկ օր էլ, երբ Տիրանը գնացել էր աշխատանքի, Թերեզան ու Յուպիտերն էլ նորից մնացել էին մենակ, Յուպիտերը դարձյալ դիմեց Թերեզային։

— Ասա՛, սքանչելիքների սքանչելիք, ասա՛ քո խոսքը։ Կապել ես ինձ քո դռան գերու նման, ազատիր ինձ գերությունից։ Դարձի՛ր իմը, գիտեմ, քո սերը բուռն է դեպի քո Տիրանը, բայց տուր ինձ գոնե մի փշրանք, ես ավելին չեմ ուզում, այդ փշրանքն էլ ինձ բավական է, դա կզարդարի իմ կյանքը և ինձ կդարձնի բախտավորներից բախտավորը։

Թերեզան, որ արդեն չէր կարող տանել այդ վիճակը, նա տվեց մաղերը, նայեց Յուպիտերին, ժպտաց և կամացուկ ասավ.

— Լա՜վ։

Յուպիտերի սիրտը թիթիփաց. քիչ էր մնում թռչկոտեր պատանու նման և միայն հարցրեց։

— Ո՞րտեղ, ե՞րբ հանդիպենք։

— Վաղը, ծովափին, այնտեղ մի բլուր կա, բլուրի հետը հարմար է և մենք էլ մարդկանց աչքերից հեռու կլինենք։

Յուպիտերն այդ ամբողջ գիշեր չքնեց։ Ոչ մի ժամանակ իր աստվածային գահույքում, իր բոլոր հրապույրների ու հաղթանակների մեջ նա այնքան երջանիկ չէր եղել, որքան այժմ։ Վերջապես վաղը ցերեկով, երկնային հրամանով այդ բլուրի մոտ նա կպատրաստի աստվածային գահույք և այնտեղ կվայելի Թերեզային. այդ գահույքը ավելի շքեղ կլինի, քան իր եթերային գահույքը և այդ հրապույրը նրա կյանքի ամենաթաղցր վայելքը կլինի։

Եվ ահա հետևյալ օրը, ցերեկով, Թերեզան հագավ իր շղարշե զգեստը, նրա լուսակերտ մարմինը շղարշի միջից գծագրվում էր աստվածային թռվչանքով. նա Յուպիտերի հետ քաղաքից դուրս եկավ, հասավ ծովափ և միասին բարձրացան կանաչ բլուրը։

Յուպիտերը գնում էր ոստոստալով. աշխարհը, երկինքն ու երկիրը եկել, ամփոփվել էին այդ բլուրի շուրջը։

Ծովը մեղմիկ օրորվում էր և ծովի ու երկնքի կապույտը ավելի թռվչանք էր տալիս Թերեզայի հրաբորբ կերտվածքին։ Յուպիտերը նայեց շորս կողմը, տեսավ, որ ոչ ոք չկա, շատ ուրախացավ և որպեսզի իր հաճույքը կատարյալ լինի, հրամայեց և նրա հրամանի վրա մի սպիտակ ամպ իջավ ու վարագուրեց բլուրը։ Այլևս ոչ մի վկա չէր կարող լինել նրանց սիրուն։ Յուպիտերը պապակած շրթունքներով մոտեցավ և դիմեց Թերեզային.

— Թերե՜զա, դո՛ւ ես երկնքի ու երկրի շաղկապը, դո՛ւ ես էակների կյանքն հյութավորողը։ Թերե՜զա, վերջապես

դու իմն ես, Թերե՜զա,— բացականչեց Յուպիտերը վերջին անգամ և ձեռքերը երկարեց Թերեզային իր գիրկն առնելու, իր անհագ կարոտն հագեցնելու բուռն ցանկությամբ։

Թերեզան մի քայլ ետ գնաց։

— Թերե՜զա,— բացականչեց կրկին Յուպիտերը։

Թերեզան գլուխը հետ գցեց, բոցկլտուն աչքերը հառեց Յուպիտերի վրա, և մեղմ ու քնքուշ ձայնով ասաց.

— Ա՛ռ։

Մի պահ ամեն ինչ լռեց շրջապատում, նույնիսկ թվաց թե ծովն էլ անհայտացավ, որովհետև ալիքների թեթև ծրփանքն իսկ չէր լսվում։

Յուպիտերը սրտի դողով հարցրեց.

— Ի՞նչ ես տալիս, ի՞նչ առնեմ։

— Առ քո շնորհը, առ իմ և իմ ամուսնու երիտասարդությունը, որ դու այն օրը վերադարձրիր մեզ, հասցրու մեզ կրկին մեր ծերության հասակին։

— Թերե՜զա...

— Այո՛, ա՛ռ. իմ ամբողջ հրապույրը նրա մեջ է, որ ես ազնիվ ու հավատարիմ սիրել ու սիրում եմ Տիրանին և Տիրանի ամբողջ ուժը, կորովն ու հրապույրն էլ նրա մեջ է, որ նա ազնիվ ու հավատարիմ սիրել ու սիրում է ինձ։ Ա՛ռ, և մի՛ սոխիր ինձ դավաճան լինել։

Յուպիտերը մի պահ շփոթված գլուխը կախեց և քիչ հետո, երբ նայեց շրջապատին, տեսավ, որ իր հրամանով իջած ճերմակ ամպը շիկնել էր։

Նա դարձավ Թերեզային.

— Ո՜վ ազնիվ կին, դու ինձ այնպիսի ամոթանք տվիր—որ ոչ մի վրեժխնդիր ոգի չէր կարող նյութել. ների՛ր ինձ. ես իմ շնորհը հետ չեմ վերցնում, մնացե՛ք երիտասարդ ու նոր թափով սիրեցեք միմյանց։ Իսկ ինձ մնում է թռչել երկինք և այլևս չխառնվել մարդկանց գործերին։

Ասաց Յուպիտերը և իրեն փաթաթելով շիկնած ամպը՝ թռավ դեպի իր եթերային գահույքը։

1940 Երևան

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐ

Վրաց գրողներին՝ Ակակի Շերեթելու ծննդյան հարյուրամյակի առթիվ։

Ս.

Առավոտ շուտ նրան, այն նշանավոր բանաստեղծին կարելի էր տեսնել գետափին։

Երբեմն նա գալիս էր արշալույսից առաջ և կուսական հետաքրքրությամբ դիտում էր շառագունվող արևելքը, որտեղից ծագող արևը ամեն օր նոր իմաստով էր լցնում նրա կյանքը։

Սրտի անհուն թրթիռով տեսնում էր բանաստեղծը, թե ինչպես շղջիկները, գիշատիչները և խավարի սիրահար բոլոր արարածները փախչում էին արևի լույսից և նրանց փոխարեն կյանք էին առնում խավարի ու դավադիր հարվածների վախից հալածված թռչունները, կենդանիները, իսկ ծաղիկներն էլ փարթամացած՝ թարմ բույրով լցնում էին շրջապատը։

Բանաստեղծը նստում էր մի քարի վրա, նայում էր այդ ամենին և լուռ խոսելով իր հոգու հետ՝ երկար ու երկար դիտում էր ջրի հոսանքը, և բնության անդորրության մեջ խորհում էր իր ստեղծագործությունների մասին։

Վերջին շաբաթ նա գալիս էր ավելի հապճեպ ու, սրտատրոփ սպասելով արևածագին, անհագորեն ծծում էր ծաղիկների բուրմունքը։ Նա ակնդիր նայում էր այն արահետին, որ գետը կապում էր քաղաքին։ Ահա՛, անցան սրտամաշուք բոպեները և արահետում երևաց այն ցանկալին, որը գրավել էր բանաստեղծի ուշադրությունը։

366—20

Այդ ցանկալին Սուսաննան էր։

Գեղեցիկ էր Սուսաննան բոլոր գովերգված գեղեցկուհիների նման, բարի էր նա, ինչքան իր ժամանակը թույլ էր տալիս բարի լինել և համեստ էր, ինչքան այդ չէր խամրում նրա արժանապատվությունը։

Այս ամենը հասկացել էր բանաստեղծն իր խորաթափանց հոգով։ Եվ ահա այսօր, երբ Սուսաննան նորից կուժը ձեռքին գետը եկավ, բանաստեղծն այլևս չհամբերեց, շտապով մոտեցավ Սուսաննային և ուզեց խոսել նրա հետ. մի պահ նայեց աղջկան և նրա հրապուրիչ հայացքում թաղվելով հարցրեց.

— Սուսաննա՛, բարի Սուսաննա՛, հիշո՞ւմ ես. մեկ անգամ ես քեզ տեսա անցյալ տարի, հենց այստեղ կանգնած արքայական խնճույքի ժամանակ, դու հեռու էիր կանգնած, խնճույքին չէիր մասնակցում, բայց իմ հոգին քեզ հետ էր։ Երբ ես խմում էի— այդ բաժակը ձոնում էի քեզ, երբ ես սիրո խոսքեր էի արտասանում— այդ խոսքերն ուղղված էին քեզ, իսկ դո՞...

— Ե՞ս, այո՛, ես միայն կոչված էի սպասարկել խրնճույքին, ես իրավունք չունեի մասնակցելու խնճույքին. ես տեսնում էի քեզ։

— Տեսնում էիր, և միայն այդքանը։

— Այո՛, տեսնում էի և միայն այդքանը։ Ավելին ի՞նչ կարող էի անել։

— Սուսաննա՛,— նրբին շեշտով արտասանեց բանաստեղծն արդեն իր համար նվիրական դարձած այդ անունը և այլևս ոչինչ չկարողացավ ավելացնել։

Սուսաննան էլ լուռ էր. նա այն անձնավորություններից էր, որոնք ավելի քիչ խոսում են և ավելի շատ ապրում ներքնապես, այդ պատճառով էլ բանաստեղծը որևէ հույս չուներ նրանից նոր բան լսել։ Բայց ի՞նչ իմաստ ունեին Սուսաննայի խոսքերը, թե «ես տեսնում էի քեզ և միայն այդքանը»։ Այո՛, բանաստեղծն հասկանում էր, որ այս խոս-

քերը Սուսաննան սովորական իմաստով չէր ասում։ Սուսաննան խնճույքում տեսել էր ոչ միայն բանաստեղծին, այլև այն մեծարանքը, որ նա ստանում էր իր շրջապատից, այլև այն, որ բանաստեղծի շուրջն էր պտտվում այն աղջիկը, որին կոչում էին Նաթելի։ Նաթելն իր շարժ ու ձևով, իր դիրքով միանգամայն ներդաշնակ էր արքայական շրջապատին։ Նրա ընտրելին էլ բանաստեղծն էր։

Բանաստեղծի սրտում բնավ արմատ չէին գցել Նաթելի սիրաբորբոք խոսքերը, իսկ այն օրվանից, երբ նա տեսավ Սուսաննային, բոլորովին կարևորություն չէր տալիս Նաթելի խոսքերին ու հետապնդումներին։

Այժմ արդեն Սուսաննային հանդիպելը, նրա հետ մեկերկու խոսք փոխանակելը բանաստեղծի համար դարձել էր անբռնադատելի պահանջ։ Նա իր սրտի ամենանվիրական զգացումներով երգում էր սիրո ու հերոսության մասին և իր մտքերի խոյանքի մեջ նրան ոգևորում էր Սուսաննայի հավերժ սիրելի պատկերը։

Հետևյալ օրը բանաստեղծն ավելի շուտ եկավ գետափ. արևի ծագման հետ միաժամանակ նա հյուսեց դաշտային ծաղիկների մի գեղեցիկ փունջ։ Երկար որոնումներից հետո նա գտավ ու վայելում ծաղիկների արանքը դրեց մի շորսփերթանի սիրի-սիրի և ամբողջ փունջը տարավ դրեց այնտեղ, ուր քիչ հետո պիտի դար Սուսաննան ջուր տանելու։

Ապա բանաստեղծը նորից գնաց, նստեց քարին և սրտատրոփ սպասում էր Սուսաննայի գալուն։

Եվ քիչ հետո Սուսաննան եկավ։ Կուժը ուսին նա առաջացավ դեպի գետը, մի պահ կանգնեց ու նայեց շրջապատին։ Առավոտյան մեղմ զեփյուռը շոյում էր նրա դեմքը, ֆռռացնում էր նրա զգեստի ծալքերն ու նրանից առնելով նրա կուսական բուրմունքը, մեղմ շրշյունով միացնում էր ծաղիկների բուրմունքին, և նույն մեղմությամբ այդ բույրը տանում հասցնում էր բանաստեղծին, որն արբեցած այդ բույրով ու կախարդված Սուսաննայի հրապուրիչ տեսքով նայում էր աղջկան։ Ի՞նչ կանի աղջիկը, կվերցնի՞ իր ծաղ-

կեփումը, կհասկանա՞, որ դա իր սիրո առհավատչյան է, որևէ շարժումով կպատասխանի՞ արդյոք իրեն։

Մինչ բանաստեղծն այս մտորումների մեջ էր, Սուսաննան կռացավ ու վերցրեց ծաղկեփունջը և երբ գլուխը բարձրացնում էր, աչքերը, կարծես ակամա, մի պահ դամբեցին հեռվում քարին նստած բանաստեղծին։ Նայեց բանաստեղծին և Սուսաննան հասկացավ, որ այդ ծաղկեփունջը բանաստեղծն իր համար է հյուսել, այդ չորսփերթանի սիրի-սիրին իր համար է քաղել, որպեսզի իրենից վերջապես մի խոսք, մի հավաստիացում լսի, թե փոխադարձ է արդյոք իր սերը։

Սուսաննան բավական երկար խորհեց. մի պահ ձեռքը տարավ սիրի-սիրին հանելու ծաղկեփնջի արանքից, բայց սիրտ չարավ։ Նրա հոգին ևս ալեկոծվել էր. նա գիտեր, որ հասել է վճռական րոպեն, այսօ՛ր, հենց այս լուսապայծառ առավոտին, արևին ու ծաղիկներին պետք է վկա դարձնե իր խոստովանանքին։ Ի՞նչ ասեր։ Նա ևս սիրում էր, ինչպես սիրել ու սիրելու են նրա հասակի բոլոր աղջիկները։ Բայց նրա սիրո առարկան, բանաստեղծը, աղջկան սովորական մարդ չէր թվում։

Նա ճանաչված էր ու մեծ, ի՞նչ կարող էր տալ ինքը նրան, եթե բանաստեղծը կապվեր իր հետ. ոչի՛նչ,— մտածում էր Սուսաննան, ինքն ուներ ազնիվ հոգի ու ջերմ սիրող սիրտ,— մի՞թե այդ բավական էր բանաստեղծին. չէ՞ որ նա Թամար Թագուհու պալատում ելք ու մուտք ուներ, իսկ պալատում նրա վրա ուրիշներն աչք ունեին, կհանդուրժեի՞ն խեղճ Սուսաննային մուտք գործել իրենց շրջապատը և կորզել բանաստեղծի սիրտն ու հոգին։ Այնտեղ նրան սպասում է փառք, հարստություն, գիսկ ե՞ս, ե՞ս, որ հարուստների համար դիպակ հյուսելով եմ պահում ինձ ու իմ ծերացած ծնողներին, ի՞նչ կարող եմ տալ նրան։ Ո՛չ, իմ սերը պետք է զոհեմ հանուն նրա երջանկության, ես նրան միայն կապանք կլինեմ։ Ես չպիտի կաշկանդեմ նրան»։

Եվ այս մտածմունքների մեջ, ներսում խեղդելով իր

զգացումները, համեստ Սուսաննան ո՛չ մի շարժումով, ո՛չ մի արտահայտությամբ չհամարձակվեց իր սերը ցույց տալ բանաստեղծին։ Նա նայեց ծաղկեփնջին և զգաց, որ ձեռքերը դողում են, զգաց, որ բանաստեղծի հյուսած ծաղկեփունջն այլևս չի կարող իր ձեռքերում պահել։ Նման այն մարդուն, որ բռնված է հանցանքի մեջ, նա կարծես վախենում էր ինքն իրենից ու այդ ծաղկեփնջից, ուստի և նա անմիջապես ծաղկեփունջը հետ դրավ գետնին, որտեղից վերցրել էր, կուժը լցրեց ջրով և ապա կուժն ուսելով, առանց հետ նայելու գնաց դեպի տուն։

Բանաստեղծը ցասկոտ վեր թռավ տեղից, վազեց հասավ այնտեղ, ուր քիչ առաջ կանգնած էր Սուսաննան, վերցրեց ծաղկեփունջը, նայեց և տեսավ, որ նա նույնությամբ մնացել էր, կարծես բոլորովին էլ ձեռք չէր դիպել։

Եվ բանաստեղծի սիրտը կոտրվեց, ինչպես կոտրվում է դալար ոստը փոթորկի հարվածից։ Նա, սիրո և հերոսության երգիչը, այդ պահին չկարողացավ հասկանալ աղջկա հոգու տվայտանքը.—այդպես ուրեմն, Սուսաննան չի սիրում ինձ,— եզրակացրեց նա, և այդ զգացումը ծանրացավ նրա սրտի վրա ժայռի նման։

Նա ևս մի քանի անգամ շրջեց գետի երկարությամբ, ապա վերցրեց իր հյուսած ծաղկեփունջը, քանդեց և ծաղիկները մեկ-մեկ նետեց վարարուն գետի հոսանքի մեջ. գետն իր փրփրուն ալիքների հետ քշում-տանում էր այդ ծաղիկները. և ի՞նչ իմանային այդ ալիքները, որ անսկզբից դեպի անվախճանություն լին տանում, մի այլ հավերժություն,— դեպի մեծ ծովն էին տանում, ծովից էլ մեծ՝ մարդկային սրտի ապրումներով օծված այդ ծաղիկները։

Բ.

Բանաստեղծը երկար ցատքռեց գետափին, բայց այլևս չկարողացավ հանգստանալ, ուստի որոշեց վերադառնալ քաղաք։

Նա անցնում էր այն ճամբով, ուրկից առավոտը վերադարձավ Սուսաննան։ Նա նայում էր գետնին, կարծես փընտ-

ռում էր Սուսաննայի ոտքերի հետքերը և երբ թվում էր թե նկատել է, ապա աշխատում էր անցնել զրույց, որպեսզի չանհետացնի այդ հետքերը։ Նա կարոտով նայում էր ծաղիկներին, որոնց դիպել էին Սուսաննայի փեշերը և նա ջերմ գուրգուրանքով կռանում, հոտ էր քաշում այդ ծաղիկներից ու առաջ շարժվում։

Քաղաք հասնելով նա մտավ պալատ. անցավ իրեն հատկացված սենյակն ու այլևս մի քանի օր դուրս չեկավ այնտեղից։ Դիշեր ցերեկ, մագաղաթի վրա կռացած, նա երկնում էր իր հավերժության— սիրո ու հերոսության երգերը։

Մի քանի օր էր, ոչ ոք նրա դուռը չէր բախում. ինչքան էլ լավ էր ինքն իր մեջ ամփոփվելը, իր մտքերը մագաղաթին հաղորդելը, բայց հարաճուն շարժվող կյանքը նրան կանչում էր։ Եվ շատ մեծ եղավ բանաստեղծի ուրախությունը երբ այս առավոտ նրա սենյակը մտավ Նաթելը։

Մենակությանը զգացումից տանջվող բանաստեղծը անմիջապես մի կողմ դրավ մագաղաթը, ոտքի թռավ ու, առաջանալով, գլուխ տվեց Նաթելին։ Նաթելը, պալատական իր ճոխ զգեստների մեջ, փայլում էր, ինչպես կակաչը դաշտի ծաղիկների մեջ։ Նա իր հետ բերել էր կյանքի ճայնը։ Բանաստեղծը, որ տառապում էր Սուսաննայի կարոտով, բայց և համոզված, որ այլևս որևէ սպասելիք չունի նրանից, ինքը կարծես ակամա համակվեց Նաթելի կենսուրախությամբ։

— Ո՞վ մեծ բանաստեղծ,—խոսեց Նաթելը,—թագուհին մրգահատի առթիվ մեծ խնճույք է պատրաստում գետափին, առանց քեզ խնճույքը համ ու հոտ չունի։ Պատրաստվիր մասնակցելու։

— Շնորհակալ եմ թագուհուց, իր մեծ շնորհի համար,— ասաց բանաստեղծը։

Եվ այնուհետև Նաթելը խոսեց իր սիրուց ու զգացմունքներից։ Նա խոսեց այն մասին, որ ինքը սիրում է բանաստեղծին, սիրում է նրա փառքը և ինքը պատրաստ է այդ

փառքին նոր դափնիներ ավելացնել։ Ինքը, Նաթելը թագուհու սիրելին է և կապվելով բանաստեղծի հետ երկուսով ավելի սիրելի կդառնան թագուհուն և այն ժամանակ ամենքը կնախանձեն նրանց։

—Իմ սիրելի բանաստեղծ, սիրում եմ կյանքը, և այդ կյանքն ավելի հաճելի կդառնա քեզ հետ։ Գիտե՞ս, դու նոր ու սքանչելի բաներ ես գրել այս քանի օրվա մեջ. թագուհին սիրահար է արվեստի, ես քեզ կտանեմ նրա մոտ, կկարդաս քո ստեղծագործությունը և ավելի մեծ փառքի կարժանանաս։

Բանաստեղծը, որին լավ հայտնի չէր, որ Նաթելն իրեն ավելի շատ սիրում էր իր փառքի համար, ամեն անգամ մերժել էր նրան. բայց ի՞նչ աներ այժմ, երբ ինքը, իր կարծիքով, մերժված էր Սուսաննայից։ Ինքը փնտռում էր Սուսաննայի հոգին ու մաքուր զգացմունքը, բայց Սուսաննան դարձել էր մի անմատչելի իդեալ, որին պետք էր երազել միայն, իսկ կյա՞նքը, կյանքն այլ պահանջներ է դնում նրա առաջ Նաթելի միջոցով։ Ո՜հ, ես չեմ կարող դիմադարձ լինել կյանքին,— գոչեց նա ինքն իրեն և նրա դեմքին փայլեց մի խորհրդավոր ժպիտ։

Նաթելը հասկացավ այդ ժպիտի իմաստը և նա իր հոլանի թևերը բանալով փարվեց բանաստեղծին։

Բանաստեղծը մտավ կյանքի նոր ասպարեզ։

Դ.

Հին Թբիլիսիի շրջակայքում Քուռ գետի ափին ստեղծնիները փռել էին իրենց դալարուն ճյուղերը։ Դեմն ընդարձակ գաշտն էր, ուր կանաչին էր տալիս փարթամորեն աճած խոտը։

Մարգագետին մեծ բազմություն էր հավաքվել։ Խոտի վրա փռել էին գունդգունդ խալիչաներ, ընկողմանել խմբերով ու թաթիլ, քամանչայի, տեղ-տեղ էլ դհոլի ու զուռնայի նվագածության տակ խմում էին կարմիր գինին ու ախորժակով ուտում համադամ խորտիկները։

Հասարակության ամենաընտիր մասը՝ իշխաններ, իշխանազուն տիկիններ հավաքվել էին Թագուհու շուրջը։ Նրանց դիմաց լայն հրապարակ էր բացված և այնտեղ խումբ-խումբ պարում էին մերթ տղամարդիկ, մերթ կանայք։

Նվագը, պարողների ոտքերի թնդյունը, ապա ուրախացող մարդկանց սրախոսությունները, ծիծաղն ու քրքիջը այնպես էին խառնվել միմյանց, որ դժվար էր որևէ բան որոշել։ Մարդիկ զվարճանում էին, թվում էր, թե հոգսը վերացել է աշխարհից, ով ինչ շնորհք ուներ գործադրում էր։

Մինչ այստեղ զվարճանում էին, մի քիչ հեռու սպասարկող ճորտերի հասարակությունն էր, որոնք քափ ու քրտինք մտած անընդհատ գինի, խորոված, տապակած հավեր ու միրգ էին հասցնում զվարճացողներին։ Նրանցից ոչ ոք հանդիստ չուներ, ամենքը վազվզում էին՝ լիք ամանները տանում, կերակուրի մնացուկները հավաքում սեղաններից։

Ճորտերի հասարակության մեջ կար երիտասարդ մի տղա. նրա դեմքին մազ չկար, գեղեցիկ աչքերը հաճախ նա հառում էր դեպի զվարճացողները և ինչ որ մտորում. և մտորմունքից նրա քնքուշ դեմքը շիկնում էր, նուրբ շրթունքները նա հագուցում էր իրար, կարծես ցանկանում էր ինչ որ շշնջալ իր մոտ կանգնած ավագ ընկերոջը, բայց սիրտ չէր անում. երբեմն էլ այնքան էր հուզվում, որ թվում էր, թե ուզում է լաց լինել, բայց իրեն զսպում էր և իր մտորումներից ազատվելու համար անցնում էր աշխատանքի, կամ դինի էր լցնում փոքրիկ տիկերի մեջ, կամ պտուղները դասավորում ամանում, բայց հենց որ ազատվում էր՝ հայացքը հառում էր զվարճացողներին։ Սակայն նա կարծես բացի մեկից ուրիշ ոչ ոքի չէր նկատում. նա անքթիթ նայում էր բանաստեղծին, որը նույնպես ուտում-խմում էր, բայց շատ սակավ, նկատելի էր, որ բանաստեղծն էլ մտածմունքի մեջ էր։ Երիտասարդն իր հայացքը մեկ-մեկ էլ հառում էր բանաստեղծի կնոջը՝ Նաթելին, որն ամենքից շատ էր զվարճանում, հաճախ պարում ու երգում և այդպիսով ավելի աշխուժություն էր տալիս խնճույքին։

Զվարճացողների աղմուկը հետզհետե ավելի էր սաստկանում. գինին թռել էր նրանց կատաղը։

Ահա մի իշխան տեղից վեր ելավ, մոտեցավ նվագողներին, պատվիրեց ինչ որ եղանակ և երբ նվագածությունն բակսեց նա մերկացրեց դաշույնը և սկսավ պարել. նա թռչկոտում էր վայրի թռիչքներով. մեկ կտրվում էր գետնից, մեկ ծնկներով խփվում գետնին, վարժ ձեռքով դաշույնը մերթ տանում էր դեպի մեջքը, մերթ ոտքերի արանքը, մերթ մոտեցնում աչքերի աղբրակներին, մերթ դաշույնի ծայրը կոխում բերանը և դրա հետ միասին ավելի ու ավելի կատաղորեն թռչկոտում։ Մի պահ թվում էր թե դա այլևս մարդ չէ, այլ մի սարքովի գործիք, որը ռիթմիկ կերպով անընդհատ թռչկոտում է և դաշույնն էլ իբրև մարմնի անբաժան մասնիկը կատարում է իր համարձակ շարժումները։ Նա այնքան պարեց, մինչև չորս կողմից սկսեցին ծափահարել ու գոչել.

— Կեցցե՛, կեցցե՛։

Իշխանն ընդհատեց պարը, կանգնեց և հենց այդ պահին նրան մոտեցավ մատուցող ճորտերից մեկը՝ մի քնքշահեր աղջիկ։ Նա նաղանի շարժումով իր գիսակները հետ տվեց ու մի ոսկեզօծ եղջյուրով գինի առաջարկեց իշխանին։ Իշխանը վերցրեց եղջյուրը խմեց գինին, բեխերը սրբեց ու բռնելով աղջկա թևից մոտեցավ մի ուրիշ իշխանի։

— Դաթիկո՛,— ասաց նա,— հավանեցի՞ր իմ պարը։

— Հավանեցի իշխա՛ն, ի՞նչպես չարող էի չհավանել։

— Բա որ հավանեցի՞ր, ինձ նման իշխանին կխնայե՞ն իր ուզածը։

— Չէ՛, ուզիր, չեմ խնայի։

— Վա՜յ Դաթիկո, չգիտե՞ս. ուզածս, այ է՛ս աղջիկն է, է՛ս աղջիկը, որ քո հրամանով ինձ գինի տվեց. ծախիր նրան ինձ, ծախիր, ամեն անգամ խոստանում ես ու խոստումդ չես կատարում։

— Ծախեցի, ա՛ռ,—ասաց իշխան Դաթիկոն ու վեհանձնի կերպարանք ստանալով բռնեց ճորտ աղջկա թևն ու հրեց դեպի պարող իշխանը։

— Է՜հ, իշխաններ,— գոչեց պարոզ իշխանը,—Դաթիկոն տղամարդություն արեց, խոսքս էս անգամ չեմ թերծեց. դե ես էլ պակաս տղամարդ չեմ։ Շալիկո՛, դիմեց նա հեռվում կանգնած իր ծառաներից մեկին,— հենց հիմա կերթաս, երեք ճորտ ու հիսուն ոչխար կուղարկես Դաթիկոյի կալվածքը։

— Կեցցե՜, կեցցե՜,— գոչեցին իշխանները և ամենքը մոտեցան թագուհուն ու համբուրեցին նրա ձեռքը։

Միայն բանաստեղծը չմոտեցավ, նա ավելի խորը մտածմունքի մեջ ընկավ և նայեց իր կնոջը Նաթելին, որն ուրիշների հետ գնաց ու համբուրեց թագուհու ձեռքը։ Բայց եթե բանաստեղծը մի քիչ հեռուն նայեր, կտեսներ, որ ճորտերի շարքից երիտասարդ տղան ուշադիր իրեն էր նայում։

Անցավ էս մի քանի ժամ. ամենքը լռեցին։ Թագուհին այս անգամ ուզում էր լսել բանաստեղծին։ Բոլորը գիտեին, որ նա նոր ստեղծագործություն ունի։ Ով հարբած էր քնեց, ով զգաստ էր մնացել գնաց գիրը լվացվեց, ավելի թարմացավ և եկան շրջապատեցին բանաստեղծին։ Ճորտ տղան էս մի քիչ առաջ եկավ ճորտերի խմբից ու թաքնվելով մի ծառի ետև, ականջը սրեց։

Բանաստեղծը մի ծանր հոգոց հանեց, ծոցից հանեց մագաղաթի մի քանի թերթեր, աչքերն հառեց թագուհուն ու ըսկսեց։

Առուցգ, բայց երբեմն էլ թախծալի ոճով նա կարդում էր իր ստեղծագործությունը։ Նա ճարտար լեզվով շարադրել էր իր մտքերն ու զգացումները, չափի ու հանգի վերածել իր երգերը։ Եվ այսպես էր նրա երգը.—

«Աշխարհում ամեն բանից վեր է մի անմահ անուն վաստակելը։ Այն, ինչ պահում ենք մեզ, այն հավետ կորած է։ Այն է հարատևացնում մեզ, ինչ տալիս ենք ուրիշին։ Ես գովերգում եմ այն հերոսին, որ կռվում է իր հայրենիքի ու ժողովրդի համար, փառքով մահը գերազանցում է պարսավելի կյանքից։ Ես երգում եմ այն սիրահարին, որ սիրո կրակը հավերժ թեժ է պահում իր սրտում։ Եթե ես գանձեր

ունենայի, այն կտայի աղքատին ու չունևորին, կուս-
տախայտնեի որբին ու կարոտյալին և այս անցավոր
աշխարհը կդարձնեի երջանկության մի ծով։

Ու թագում էր բանաստեղծի երգը ավելի ու ավելի խը-
րոխտ ու համարձակ։ Ով սեր ուներ դեպի խիզախությունը,
հերոսությունը, ով սիրում էր արդարությունը, բանաստեղ-
ծի խոսքը թռիչք էր տալիս նրա հոգուն, ցնծությամբ լցնում
էր նրա սիրտը և նա ուրախության արցունքներով փարվում
էր բանաստեղծին ու ավելի մեծացնում նրա փառքը։ Ով
հոգով ստրուկ էր ու վախկոտ, ով ուզում էր երջանիկ լինել
առանց կյանքին մի բան տալու, նա սոքում էր ինչպես նա-
պաստակը և հեռու էր քաշվում բանաստեղծից, որպեսզի
նրա հրաբորբ խոսքերը չանհանգստացնեին նրա վախկոտ
հոգին։

Եվ երբ բանաստեղծն իր խոսքը վերջացրեց, թագու-
հին, որ հերոսության ու փառքի սիրահար էր, մոտեցավ բա-
նաստեղծին և շնորհավորելով նրան իր շքեղ պատմության ու
երգի համար, նվիրեց մի ոսկե մատանի։

Բանաստեղծը մատանին իր մատն անկացրեց ու նորից
խառնվեց խնճույքին։

Նա փնտռեց իր Նաթելին, որպեսզի նրա հետ բաժանի
իր ուրախությունը, բայց Նաթելը ոչ մի տեղ չէր երևում։ Բա-
նաստեղծն անհանգստացավ, ինչքան էլ իր ցասումնալից ու
հերոսական երգը մի պահ հանգստացրեց նրան, բարձրաց-
րեց նրա հոգին, բայց երբ քիչ հեռու նկատեց այն ճորտ
աղջկան, որ վաճառվեց իշխանին՝ սիրտը նորից անհան-
գստացավ, և հենց այդտեղ հղացավ իր նոր ու ավելի հո-
յակապ երգը, որ տուն գնալիս պիտի գրի տուներ։ Բայց
այժմ, գոնե մի պահ, նա, Նաթելի հետ զվարճանալով, ուզում
էր մոռանալ այդ անախորժ դեպքը, մանավանդ որ թագու-
հուց մատանի էր ստացել և այդ մատանին այնքան կուրա-
խացներ Նաթելին։

Խնճույքը նորից բորբոքվել էր, նորից գինի և ուտելիք
էին բերում, նորից պարում էին կանայք ու տղամարդիկ,
բայց Նաթելը և մի քանի այլ տիկնայք չկային։

Ծորտերի շարքում եղած երիտասարդ տղան, որ ամբողջ ժամանակ հետևում էր բանաստեղծի շարժումներին, կարծես հասկացավ թե ինչ է որոնում նա, մի պահ վարանեց, բայց վերջը սիրտ արավ և գաղտագողի մոտենալով բանաստեղծին՝ կանչեց ծառի մոտ։

Բանաստեղծը նայեց տղայի քնքույշ դեմքին, կարծես ինչ որ ծանոթ պատկեր հիշեց, բայց նայելով տղայի զգեստներին՝ անորոշությամբ ու թախիծով գլուխը շարժեց և հարցրեց.

— Ի՞նչ կա ով պատանի, ինչո՞ւ ինձ դուրս կանչեցիր։

— Կանչեցի, որովհետև, սիրտս ցավում է քեզ համար։

— Ինձ համա՞ր, քո սի՞րտը։ Բայց ի՞նչ կարող ես անել դու ինձ համար։

— Ոչի՛նչ, ես կարծում էի, թե դու շատ երջանիկ ես, բայց տեսնում եմ, որ այդպես չէ։

— Մի՞թե, դու այդ որտեղի՞ց գիտես։

— Մի բան գիտեմ։

— Ասա՛, ասա՛։

— Ասելիք չունեմ. արի գնանք այնտեղ, քեզ ցույց տամ, տե՛ս թե ինչպես քո երջանկությունը ուրիշն է հափշտակում։

— Ինչպե՞ս, այդ ինչ՞ը ես ասում։

— Գնա՛նք, գնա՛նք,— ասաց քնքշադեմ երիտասարդն ու առաջ ընկավ։

Բանաստեղծը հետևեց նրան։

Նրանք հեռացան խնճույքի վայրից. քիչ հեռու փոքրիկ անտառ կար և ծառերի արանքում տեղ-տեղ սարքված էին տաղավարներ։

Երիտասարդը բանաստեղծին առաջնորդեց մի տաղավարի մոտ և ասավ.

— Տե՛ս ու հիացիր։

Բանաստեղծը լուսամուտից ներս նայեց։ Նայեց ու քարացած մնաց տեղում. նրա կինը, Նաթելը դավաճանում էր բանաստեղծին։

Նաթելը արաբ ստրուկի գրկումն էր։

Երբ սրտակոտոր բանաստեղծը հետ դարձավ՝ երիտասարդն արդեն չքացել էր։

Բանաստեղծը խփեց ճակատին, հուսահատ ու տրտմած հոգով ասավ ինքն իրեն.

— Այլևս այստեղ, այս մարդկանց մեջ, այս շքեղության մեջ ինձ անելիք չկա։

Եվ նա դուրս եկավ անտառից։

Խնճույքն արդեն վերջանում էր։ Թագուհին ու իշխանավորները դեպի պալատ էին գնում, իսկ բանաստեղծն այլևս պալատի կողմը չգնաց։

Նա դարձավ թափառաշրջիկ։

Դ.

Թափառում էր բանաստեղծը քաղաքում. շրջում էր ամենուր, տեսնում էր մարդկանց Բշվառությունը և նրա մեծ հոգին լցվում էր կարեկցանքով, իր ամեն օրվա ձեռք բերածը նա բաժանում էր աղքատներին և ինքն էլ ապրում էր մի աղքատիկ խցիկում։

Նա զայրացած էր Նաթելի վրա, բայց և զայրացած էր այն երիտասարդի վրա, որ այդպես անողոք կերպով ցույց տվեց նրան իր խաբվածությունը։ Նրա կրքոտ հոգին կատաղությամբ լցվեց երիտասարդի դեմ, բայց և այդ կրքոտությամբ նա հիշեց իր Սուսաննային։

Ա՜խ, Սուսաննան. ինչո՞ւ նա մերժեց բանաստեղծին, չէ՞ որ նա մաքուր էր ու անբիծ և նրա սերն իրեն թևեր կտար, իսկ հիմա՜, ի՞նչ է ինքը, թևակոտոր մի արծիվ։

Նա մի քանի անգամ գնաց Սուսաննայի տան կողմերը, բայց Սուսաննան չկար ու չկար։ Նա լուսադեմին գնում էր գետափ, նստում էր ծանոթ քարին, թերևս մեկ անգամ էլ գար Սուսաննան, այո՛, նա նրան կպատմեր իր վշտի մասին, և թերևս, այդ հանգստացներ իրեն։ Բայց Սուսաննան այդտեղ էլ չկար։

Եվ իր թափառումների մեջ, նա մի օր փողոցում տեսավ մի ծանոթ դեմք։ Այո, իսկ և իսկ այն օրվա երիտասարդն էր,

նույն քնքույշ դեմքը, նույն հեռամտող աչքերը։ Նա շնչած փնտռում էր նրան, բայց կուզեր շհանդիպել, որպեսզի նորից չվերանորոգեր իր սրտի վերքը։

Սակայն երիտասարդը համառ դանվեց, նա նկավ ու կանգնեց բանաստեղծի դիմաց, կանչեց ու ասավ.

— Ո՞վ, մեծ բանաստեղծ, ասա՛, ի՞նչպես հավանեցիր քո կնոջ, Նաթելի դավաճանությունը։

Բանաստեղծը բանկվեց կրքոտ զայրույթով. նա ոչ մի խոսք չասեց, անմիջապես հանեց դաշույնն ու խրեց երիտասարդի սիրտը։

— Վա՜խ,— մի ճիչ արձակեց երիտասարդն ու հետ գնալով ընկավ մեջքին։

Արյունը դուրս ժայթքեց երիտասարդի կրծքից։

Եվ արյուն տեսնելով՝ բանաստեղծի կիրքը հանգավ, նա մոտեցավ բաց անելու վերքը, տեսնելու, թե ինչքան խորն է, մահացո՞ւ էր արդյոք հարվածը։

Նա, զոդոցով, ձեռքը տարավ դեպի երիտասարդի կուրծքը։ Ձեռքը դիպավ երիտասարդի կրծքին թե չէ, բանաստեղծը ինքն էլ շանթահարի նման ընկավ վիրավորի կողքին և ազաղակեց.

— Սուսաննա՜։

— Այո՛, ես եմ, իմ սիրելի բանաստեղծ։

— Ասա՛, Սուսաննա, ասա՛, ինչո՞ւ արիր այդ ամենը. մի՞թե քիչ էր իմ վիշտը, որ ինձ ոճրագործ էլ դարձիր։

— Ուզում էի քեզ մոտ լինել, դրա համար արի այդ բոլորը, իմ սիրելի, իմ անմոռանալի...

— Ուզում էիր մոտ լինե՞լ. չէ՞ որ դա իմ տենչանքն էր, իմ տարիների երազը։ Ես հենց դիտեի, թե դու ինձ չես սիրում, չէ՞ որ դու մերժեցիր իմ ծաղիկները, իմ սերը։

— Ներեցեք՝, ուզում էի, որ դուք ավելի երջանիկ լինեք, բայց տեսա, որ սխալված եմ, ես էլ երջանիկ չէի, քեզ էի կարոտում։

— Կարոտում էի՞ր, չէ՞ որ այն ժամանակ քո մեկ խոսքը, մեկ բառը ամեն ինչ կփոխեր։

— Թեև հրապուրում էր քո մեծ հոգին, քո մեծ սերը, ես էլ ուզում էի քեզ տալ իմ սիրտն ու հոգին, իսկ իսկական սերը բաներ չունի, ո՞վ բանաստեղծ։

— Ունի՞, չունի՞, ես որ կարդում էի մարդկանց հոգին, ո՞վ իմ ազնիվ Սուսաննա, թույլ գտնվեցի քո հանդեպ, չկարողացա կարդալ քո հոգին։

Սուսաննան թուլանում էր և նվաղած աչքերով նայում էր բանաստեղծին։

Բանաստեղծը մի բարի մարդ գտավ, որն առանց երկար հարց ու փորձի հասկացավ բանաստեղծի վիշտը։ Եվ նրանք միասին մի պատգարակ սարքեցին ու Սուսաննային բանաստեղծի ուղբատիկ տունը տարան։ Նա սիրածին տեղավորեց անկողնում, իր ձեռքով կապեց նրա վերքը ու սկսավ անթարգի նայել իր սիրեցյալի քնքույշ և հավերժ սիրելի դեմքին։

Այդ րոպեին նա պատրաստ էր ամեն, ամեն ինչ զոհել,— այդ ամենի հետ նաև իր կյանքը, միայն թե փրկեր իր Սուսաննային։

Եվ նա, որ որոշել էր պալատ չմտնել, Սուսաննայի սիրուն շտապեց պալատ, որպեսզի այնտեղի լավ բժիշկներից մեկին կանչեր՝ փրկելու իր սիրեցյալին, զգալով, որ նրանից հետո իրեն այլևս կյանք չէր մնա։

Նա արագ հասավ պալատ, սակայն բացի ծառաներից ոչ ոք չկար այնտեղ։ Իմացավ որ Թագուհին իր շքախմբով գնացել է անտառը որսի. նա շտապեց անտառ։

Այնտեղ էին իշխաններ, ճորտեր, որսի շներ։ Նա նայեց այդ ամենին և տեսավ, որ դժվար, թե այնտեղ, այդ պահին մեկը լիներ, որ հասկանար իր վիշտը, ուստի խորին ատելությամբ մի աղեղ վերցրեց և նշան բռնեց այն արաբ ստրուկին, որի հետ Նաթելը գավաճանել էր իրեն։

Նշան բռնեց, բայց և իսկույն փոխեց մտադրությունը— Սուսաննայից հետո, ինչի՞ս է պետք վնասել այս ողորմելուն,— և վարժ ձեռքով նետն արձակեց ու թռցրեց միայն ստրուկի գլխարկը։

— Կեցցե՞ս,— բացականչեց Թագուհին,— դու լավ նշան

խփող ես, քեզ նմանը դեռ չի եղել իմ թագավորության մեջ. բայց ո՞ւր ես գնացել, չէ՞ որ մենք քեզ այնքա՞ն սիրում ու գնահատում ենք։

— Դրանց ժամանակը չէ, ով ողորմած թագուհի,— ասաց բանաստեղծը,— դու այն ասա՛, ի՞նչ կարող էր անել իմ արժանավորությունն ունեցող մարդը, եթե նրա կինը դավաճաներ նրան։

— Ես այդ մարդուն իրավունք կտայի բաժանվել իր անարժան կնոջից և ամուսնանալ այնպիսի մեկի հետ, որ իսկապես կսիրեր նրան,— պատասխանեց թագուհին։

— Ո՜հ, թագուհի մեծ է քո շնորհը,— իսկ եթե այդ արժանավոր մարդը չհավատալով կամ չհասկանալով իրեն իսկապես սիրողին՝ ամուսնացել է անարժանի հետ և հետո էլ պատահմամբ սպանել է իրեն իսկապես սիրող աղջկան, ինչպե՞ս պետք է վարվել այդպիսի մարդու հետ,— հարցրեց սրտակոտոր բանաստեղծը։

— Այդպիսի սխալմունքի համար,— պատասխանեց թագուհին,— պետք է, որ այդ մարդը գնա ճգնելու և քավի իր մեղքերը։

Բանաստեղծն այլևս ոչ մի խոսք չասեց. նա հասկացավ, որ ոչ ոք և ոչ մի բժիշկ չէր կարող փրկել իր Սուսաննային, ամենալավ բժիշկն ինքն էր լինելու, ուստի թողեց անտառը և շտապ վերադարձավ տուն։

Գնաց, շոքեց Սուսաննայի մահճի մոտ։

— Սուսաննա՜,— բացականչեց բանաստեղծը։

Սուսաննան ծանր բացեց աչքերը, և երբ տեսավ իր մոտ շոքած բանաստեղծին մի ժպիտ շառագունեց նրա դեմքը, բայց այդ ժպիտն այլևս կյանքի ժպիտ չէր։

— Ի՞նչ անել,— խորհում էր բանաստեղծը,— գնալ ճգնե՞լ, ո՛չ կյանքը սիրում եմ, այդ չեմ թաքցնում։ Ինձ մնում է մնալ ու երգել հավերժական սիրո երգը, Սուսաննայի անբիծ սերը։

— Սուսաննա՜,— կրկին բացականչեց նա։

Բայց Սուսաննան այլևս ձայն չէր հանում։ Նա իր վերջին բոպեներն էր ապրում։

Այն ժամանակ բանաստեղծը հանեց իր մատից այն մատանին, որ թագուհին նվիրել էր իրեն իր լավ երգերի համար, հանեց ու, մի պահ հանդիսավոր պահելով, ասաց.

— Ո՜վ իմ ազնիվ Սուսաննա, այս մատանին ես նվեր ստացա այն երգերի համար, որոնք գրել էի քո ջերմ սիրով տոգորված։ Բախտը այնպես էր անօրինել, որ այս անցավոր աշխարհում մենք մինչև այժմ չհասկանայինք իրար։ Այժմ հասկացանք միմյանց, այժմ մենք կարող ենք հավիտյան ապրել միասին։ Ահա՛, սա թող լինի մեր պսակի մատանին։

Եվ բանաստեղծն անհուն կարոտով, վերմակի տակից հանեց Սուսաննայի ձեռքը և մատանին հագցրեց նրա մատին։

Սուսաննան մի վերջին անգամ բացեց աչքերը, նայեց մատանուն, նայեց բանաստեղծին, ամեն ինչ հասկացավ ու երջանկության զգացումով փակեց աչքերը, փակեց հավիտյան։

Բանաստեղծը համբուրեց իր սիրեցյալի ճակատը, ապա համբուրեց նրա փակված շրթունքները և մրմնջաց.

— Սուսաննա՜, այլևս ո՛չ ոք մեզ չի բաժանի իրարից։

Եվ բանաստեղծը նստեց երկնելու իր հավերժական սիրո երգը։

Մի մեղմ քամի շոյում էր նրա դեմքը, առնում էր նրա ջերմ շունչը, տանում սփռում էր Սուսաննայի դեմքին և այդ սիրակարոտ շնչի տակ կարծես արթնանում էր Սուսաննան և հուշում էր բանաստեղծին իր կարոտալի խոսքերը։

1940
Երևան

366—21

ԱՆԱՆՈՒՆ ՍԳԱՔԻԿ

Իմ հերոսը, որին ես սիրում եմ ամբողջ հոգով... հավատարությունն է։

Լ. ՏՈԼՍՏՈՅ

Ա.

Ամբողջ պալատը սուգի մեջ էր։

Առավոտ շուտ տարածվեց Թագավորի մահվան լուրը։

Ողբում էին բոլորը, իշխանները, ավագները, կանայք և նույնիսկ երեխաները։

Բայց ամենից շատ տխրել էր մեռած Թագավորի եղբոր որդին՝ Նարզասը։ Հենց որ Թագավորի մահվան բոթը լսեց, նա վրայից հանեց, դեն նետեց իր ոսկեհյուս պատմուճանը և հագավ մի սովորական շուխա, դեմքն առավ ափերի մեջ, ընկավ սենյակի հատակին՝ գորգի վրա ու բարձրագոչ լալ սկսեց։

Նարզասի ողբն այնքան աղդու էր, որ պալատականներից շատերը մի պահ, կարծես արդեն մոռացան մեռած Թագավորին և շրջապատեցին նրան ու ցանկանում էին որևէ կերպ ամոքել նրա վիշտը։

Սակայն, ինչքան շատ էին ձգտում ամոքել Նարզասին, նա ավելի շատ էր կոծում և ավելի ողբերգական էր դառնում նրա ձայնը։

Պալատականներից մեկը, Գարգեսը, որն ամենքից մոտ էր համարվում Նարզասին, վերցրեց ոսկեհյուս պատմուճանը, մոտեցավ նրան և վշտոտ ու աղաչական ձայնով ասաց.

— Ո՜վ պայծառանուն Նարզաս, դու սիրելիդ մեր ողբացյալ արքայի և հույսդ մեր աշխարհի. Թոթափի՛ր քեզնից

վշտի ծանր զգացումը և առաջնորդ եղիր մեզ, մեր բոլորիս պարտքը կատարելու հանդեպ մեռած արքայի, նրան հավիտենական հանգիստը ուղարկելու։

Նարզասը գլուխը բարձրացրեց, նայեց Գարգեսին և իր մռայլ դեմքին զայրույթի այնպիսի արտահայտություն տրվեց, որ ներկա եղողները սարսափեցին։ Նա աչքերը խոլորեց և խեթ նայելով Գարգեսին գոչեց.

— Ո՞վ դու անիրավ, ինչպե՞ս կարող եմ ես ինձնից թոթափել վշտի ծանր զգացումը, երբ խավարել է մեր արևը։ Կորի՛ր աչքիցս, անարժան մարդ. ես երեք օր պիտի կոծեմ, իսկ թաղե՞լ, ո՜հ, այդ արարողությունը ծանր, խիստ ծանր է ինձ համար։ Իսկ այժմ, դու հեռու տար ինձնից այդ պատմուճանը և ինքդ այլևս չերևաս իմ աչքին, դու այլևս իմ մտերիմը չե՛ս։

Եվ այս ասելով Գարգեսին հրեց. Գարգեսն ընկրկեց՝ շփոթված ու մռայլ։

— Տեր իմ, այս ինչ փորձանքի մեջ ընկա,— մրմնջաց նա։

— Խոհեմությունը թելադրում է,— ասաց Գարգեսի ականջին մի պալատական,— որ դու հեռանաս պալատից ու այլևս չերևաս Նարզասի աչքին, այլապես նա կարող է քո պարանոցը թեթևացնել գլխիդ ծանրությունից։

Իսկ ուրիշները միմյանց ականջին ասում էին, բայց այնպես բարձր, որ լսում էր նաև Նարզասը.

—Ինչ սե՞ր դեպի հորեղբայրը, ինչ առաքինությո՞ւն։

— Ինչ անշահախնդիր վի՞շտ,— ասաց մի պալատական, որին չարախոս մականունն էին տալիս։

— Հոգու ո՞րպիսի մեծություն։

Նարզասը շոյվում էր այն զգացումից, որ հասկանում են իրեն, ուստի և նա դառնալով դեպի պալատականներն ասաց.

— Արցունքը սպեղանի է մեր խորը վերքին. ողբանք մեր ծանր կորուստի համար։ Իսկ ով որ ձեզնից ավելի արի է, ես կխնդրեի գնալ Թագաժառանգի մոտ, արիացնել մանն-

կանը, մինչև երեք օրն անցնի և, մենք խոնարհ ստրուկներս, նրան դահ բարձրացնելով՝ լույս տանք մեր աշխարհին։

Թագաժառանգը դեռ ութամյա մի մանկիկ էր և ապրում էր մի գղյակում։

Պալատականներից մի քանիսը դուրս գնացին, հայտարարեցին, որ Նարզասի հրամանով սուգը տևելու է երեք օր, ապա իրենք գնացին Թագաժառանգի մոտ նրան մխիթարելու։

Գարդեսը նույնպես դուրս գնաց պալատից։

Նրան տեսնողներն զգում էին, որ փորձված պալատականը շվար ու մոլոր տեսք է ստացել, կորցրել է իրեն հատուկ աշխուժությունը։

Մինչ այդ, պալատ եկան նոր ու նոր ողբասացների խմբեր, բարձրացրին լաց ու կական և ամբողջ պալատը նորից ու նորից ողբաց իր թագավորի մահը։

Գ.

Երեք օրն անցավ։

Նարզասի հրամանով ամբողջ քաղաքը հավաքվել էր արքայի հուղարկավորությանը։ Եկել էին բազմաթիվ իշխանավորներ արքայության բոլոր մասերից։

Հսկայական թափորը մեղմ ու հանդիսավոր քայլերով շարժվում էր դեպի արքայական գերեզմանոցը։ Մեջ ընդ մեջ գնում էին ողբասացների խմբերը, որոնք իրենց լաց ու կոծով հարկադրում էին բոլորին մասնակցել սուգին։

Բայց ամենքի ուշադրության կենտրոնը Նարզասն էր։ Նրա տխուր, մահոդ դեմքը բոլորին մտածել էր տալիս։ Տեսնես ի՞նչ նոր ձեռնարկումներ կանի նա, ինչպես կկառավարի երկիրը, ո՞ր պաշտոնյային կբարձրացնի, որի՞ն պաշտոնանկ կանի, չէ՞ որ նա դեռ մի քանի տարի լիակատար տեր էր լինելու երկրին, մինչև ութամյա Թագաժառանգը մեծանար։ Բոլորի համար պարզ էր, որ Գարդեսի ապուրն արդեն եփված էր, այնքա՞ն անպատեհ էր եղել

նրա միջամտությունը՝. Նարդասի վիշտն ամոքելու համար։ Եվ զանազան մտքեր ու դատողություններ, փափսոցով, առաջին շարքերից գնում հասնում էին մինչև վերջին շարքերը։ Խոսում էին ամեն բանի մասին. նույնիսկ մեկ անգամ, երբ Նարդասն իր զգեստի ծալքն ուղղեց, մի պալատական շշնջաց մյուսի ականջին.

— Հուզվում է. զգեստները նեղում են նրան։

— Այո, եթե վիշտն այնպիսի ահռելի կերպարանք ունի արքայի եղբորորդու ներսում, ինչպես այդ երևում է նրա դեմքին, ապա ծանր է նրա վիճակը. նա երեք օր առաջ պատմուճանն հանեց, այսօր կուզեր պատառոտել զգեստները,— ասաց չարախոս պալատականը։

Մեկ ուրիշ պալատական, որ լսում էր նրանց, փափսաց ընկերոջ ականջին իր մեկնաբանությամբ։ Եվ երբ լուրը հասավ վերջին շարքերին, ապա այնտեղ արդեն միմյանց ասում էին։

— Այնքան է վշտացած արքայի եղբորորդին, որ վրայի զգեստը պատռել, գեն է նետել։

— Հապա ի՞նչ է մնացել հագին։

— Սո՛ւս, անպիտան,— սաստում էին անպատեհ հարց տվողին,— այդ արդեն մեր քննության առարկան չէ։ Աստծու և արքայի գործերն անքննելի են։

Սգավորները հող ու մոխիր ցանեցին իրենց գլխին. ողբասացների ձայնը երկինք հասավ։ Եվ արքայի մարմինը հանդիսավորությամբ դերեզման իջեցրին։

Այնուհետև արքայական պալատի ընդարձակ բակում Նարդասի հրամանով բացվեց մեծ սեղան։ Պալատականներին, զորքին ու ժողովրդին հոգեհաց տրվեց։ Մորթվեցին հարյուրավոր մանր ու խոշոր անասուններ։ Դինին հոսեց գետի նման։ Վերջում բոլորը, ննջեցյալի հոգուն հանգիստ մաղթելով, ցրվեցին։

Երբ Նարդասն ու ավագները սգի բոլոր արարողությունները վերջացրին, պալատական խորհուրդ հրավիրեցին, որ ուրմայա թագաժառանգին գահ բարձրացնեն։

Արևն արդեն մայր էր մտել։ Արքայական շքեղ դահլիճը, ուր փռված էին ամենաթանկագին գորգեր, լուսավորված էր հսկա ջահերով։ Ոսկու և արծաթի փայլուն զարդերը պսպղում էին ջահերի լույսերի տակ և ամբողջ դահլիճը զրնգում էր պալատականների ձայնից։ Որոշյալ ժամին Նարզասը պալատականների մի մեծ խմբի հետ դուրս եկավ դահլիճից։

Պալատի դռան կանգնած էին հարյուրից ավելի կառքեր։ Կառքերին լծված էին կուշտ ու կուռ ձիեր, որոնք զվարթորեն դոփում էին գետինը և անհանդիստ կրծում էին պսպղուն սանձերը։

Մինչ Նարզասը և պալատականները կառքերը նստեցին, երկրի զորահրամանատարը, մի գնդի գլուխ անցած, հասավ Թագաժառանգի բնակավայրը։ Զորագունդը կանգնեց՝ սպասելով հրամանի, իր հպատակությունը հայտնելու Թագաժառանգին։

Ձիերը կառքերը թացրին և քիչ հետո կառքերի շարանը նույնպես կանգնեց Թագաժառանգի դղյակի առաջ։ Նարզասը, պալատականների գլուխն անցած մոտեցավ Թագաժառանգի տանը։ Բայց զարմանքը, (ինչպես նկատեցին նրան շրջապատողները), պատեց խնամակալին։ Թագաժառանգի սպասավորներից ոչ ոք չերևաց։ Ավելին, Թագաժառանգի տան մեջ չէր նկատվում ոչ մի հանդիսավորություն։ Կանոնավոր լուսավորություն անգամ չկար բնակարանում։

Նարզասը շտապով առաջացավ, դուռը բացեց։ Նրա ետևից գնացին մի քանի պալատականներ և միայն Նարզասն ուղղում էր միջանցքով առաջանալ դեպի իրեն ծանոթ սենյակը, ուր ապրում էր Թագաժառանգը, հանկարծ տան զանազան սենյակներից դուրս թափվեցին սպասավորները, տան վերակացուն և լսվեց աղիողորմ ճիչ.

— Աղե՜տ, աղե՜տ, աղե՜տ։

Նարզասը համարյա թռիչքով, հասավ Թագաժառանգի սենյակը և, երբ ներս մտավ, նրա առջև բացվեց սոսկալի տեսարան։

Թագաժառանգը, ութամյա երեխան, արյունաշաղախ ընկած էր բեհեղածածկ թախտին։

Նարզասը երկու ձեռքերով խփեց գլխին և բացականչեց։

— Վա՜յ ինձ, անբախտիս, ո՞րպիսի չար խաղ է սկսել ճակատագիրը մեր աշխարհի հետ։ Վրե՜ժ, վրե՜ժ... ո՜վ, դու սրբազան մանուկ, Թող վկա լինեն երկինքն ու երկիրը, և ահա, ամբողջ այս ավագանին, որ ես չե՛մ հանգստանա, մինչև որ լույս աշխարհ հանեմ անարդ ոճրագործին և լուծեմ քո արդար վրեժը։

— Արդար է ցասումը վսեմափայլ Նարզասի,— ասին պալատականները։

Քիչ հետո վրա հասան պալատական բժիշկը, ապա զանազան կարգի ու աստիճանի արարողներ, որոնք քննեցին արքայորդու դեռևս չսառած մարմինը, արձանագրեցին, թե ինչպես և ինչ ձևով կարող էր տեղի ունեցած լինել ոճիրը և որոշեցին, թե ինչպես շարունակել հետախուզությունը՝ ոճրագործին հայտնաբերելու համար։

Մինչ այդ, Նարզասը դառնակոծ ողբում էր և վրիժառու խոսքերով նշավակում ոճրագործին։

— Ո՜հ, Թող հավիտյան անիծյալ լինի այդ պիղծ մանկասպանը,— նորից սկսեցին խոսել պալատականները։

— Այո, այդպիսի նզովյալներն են, որ ստիպում են մարդկանց հանճարել տանջանքի նոր ու նոր տեսակներ։

— Այո,— խորհրդավոր քմծիծաղով ասաց չարախոս պալատականը,— ոճրի հատուցումը, եթե վաղուց պատրաստ չէ, ապա իրոք, որ այն շատ խիստ կլինի։

— Այս չարախոսն ուզում է իմաստուն ձևանալ, բայց միշտ մի անմիտ բան է ասում,— ասաց առաջին խոսողը։

— Խելոք բաներից միտքը հոգնում է և կյանքը կարճվում,— հարեց չարախոս պալատականը։

Բայց պալատականներն այլևս երկար չէին կարող խոսել. Նարզասի ողբը շատ էր սարսռագին և նրանք էլ տխուր դեմքերով մոտեցան ու լուռ շրջապատեցին Նարզասին. սա-

կայն ոչ ոք չհամարձակվեց որևէ խոսքով ամոքել նրան, քանի որ բոլորն էլ հիշում էին, թե ինչ բախտի արժանացավ Գարդեսը, երբ մի քանի օր առաջ ցանկացել էր սփոփիչ խոսք ասել նրան։

Եվ այսպես, մինչև լուս, Նարդասը և պալատականները կոծեցին խողխողված մանկան շուրջը։ Լուսադեմին մեռածին լվացին, օծեցին անուշահոտություններով և փոխադրեցին պալատի սրահը, որպեսզի ժողովուրդն իր վերջին այցը տար թագաժառանգի մարմնին։

Ժողովուրդը խումբ առ խումբ գալիս էր տեսնելու ըստանված մանկան։ Գալիս էին ու ամեն մեկը ցանկանում էր որևէ լուր որսալ, որևէ բացատրություն ստանալ, թե այդ ինչ աղետալի շաբաթ էր տերության համար, երբ շաբաթվա սկզբին թագավորը մահացավ, իսկ շաբաթվա վերջին նրա որդին, բայց որևէ խելամիտ բան չասելով, բավականանում էին մեկ անգամ արդեն օրենք դարձած բացատրությամբ.

— Աստծու և արքայի գործերն անքննելի են։

Գ.

Մինչ այդ, Նարդասը, հոգնած ու ջարդված, մի քանի պալատականների ուղեկցությամբ գնաց իր բնակարանը, մի շքեղ ապարանք, որը տարիներ առաջ նվեր էր ստացել իր արքա հորեղբորից։

Տուն հասնելով, Նարդասն արձակեց իրեն ուղեկցողներին և, որովհետև խիստ հոգնած էր, պառկեց քնելու։ Նա երիտասարդ էր և ուժեղ, դրա համար էլ կարճ քնից հետո՝ կազդուրված վեր ելավ անկողնից։ Նրա ընդարձակ պալատում, բացի մի քանի սպասավորներից որոշ ոչ ոք չկար, նա դեռ չէր ամուսնացել և ողջախոհ երևալու համար չէր սիրում կանանց ընկերությունը, միայն, իր հավատարիմ պալատականի միջոցով, գիշերները մեկ-մեկ ընդունում էր կանանց այցելություններ։

Նա լվացվեց, գնաց իր սենյակը, ուզեց պառկել. բայց

մեկ էլ կանգ առավ... ա՜խ, հիշեց, Չէ՞ որ անթաղ մեռել ունենք։ Եվ նա, ոսկեզօծ, նրբահյուս պատմուճանը հետ դրեց պահարանը։ Այդ պատմուճանը նրա համար առանձին խնամքով կարել էր տվել նույն այն մտերիմ պալատականը, որը հետին դռնից կանանց էր ներս թողնում իր մոտ։ Այդ պալատականը Գարգեան էր, որին այն օրն ինքն այնպես անարգեց մյուս պալատականների ներկայությամբ։ Նարզասը պատմուճանը ետ դրեց պահարանը, բայց ինչ որ երանելի բան հիշելով նորից ձեռք առավ այն, ուշադիր դիտեց, շափեց իր վրա ու գնաց դեպի լուսամուտը։ Հեռվից լսվում էին անցնող մարդկանց ոտնաձայներ, ու կառաքների դոփյունը։ Զանազան դասի մարդիկ շտապում էին սպանված թագաժառանգին վերջին հրաժեշտը տալու։ Մի քանի ժամ հետո ինքն ևս նորից պիտի գնար այցի, ուստի և մտածում էր, թե ինչպե՞ս պետք է պահի իրեն, որ արժանավայել ու պատշաճավոր լինի։ Նա թեք ընկավ լուսամուտին ու խորասուզվեց մտքի մեջ։

Չգիտեր, թե ինչքան էր մնացել այդ դիրքում, երբ մեկ էլ իր ուսերի վրա զգաց մատների շարժում ու ինչ որ փափուկ բան ծածկեց իր մեջքը։ Նա ետ դարձավ։

Նրա դիմացը կանգնած էր Գարգեսը։ Նա էր, որ պահարանից վերցրել էր ոսկեզօծ պատմուճանը ու քցել Նարզասի ուսերին և այժմ կանգնած նրա դիմաց ժպտում էր։

— Ահա սիրելիս իմ, եկավ ժամանակը։ Երբ, երկու տարի առաջ, այնպես խնամքով կարել տվի այն պատմուճանը, քեզ ասի, որ ինքս, իմ ձեռքով կգցեմ քո ուսերին այն օրը երբ քեզ թագավոր հռչակենք։ Եկավ ժամանակը և դու թագավոր ես։ Այժմ արդեն ես այլևս չեմ կարող առաջվա նրման քեզ հետ խոսել ինչպես իմ խնամյալի, դու տերն ես և ես քո ծառան։ Արի ես իմը, արա դու քոնը։

— Ո՜հ, ո՛չ, դեռ ո՛չ, սիրելի Գարգես։ Թող դեռ այս փոթորիկին անցնի, հետո նոր միայն ես քեզ հետ կխոսեմ արքայի և դու ինձ հետ իմ ամենասիրելի պալատականի տոնով։ Մենք այժմ մտերիմներ ենք, ինչպես եղբայրներ։

Ասա, ո՞ւրտեղ է հարմար քեզ ուղարկեմ։ Չէ՞ որ այն օրից հետո, երբ ես քեզ պալատականների առաջ անգոսնեցի, մեր գործի հաջողության համար, այլևս անհարմար է, որ դու ինձ մոտերիս երևաս։

— Իրավացի ես, տեր իմ... Եվ բացի այդ ինչպես են հետքերը գտնել. այդ չարախոսն էլ շատ բան կարող է փչացնել. եթե ես այստեղ չլինեմ, դու ավելի շուտ կարող ես տեսնել նրանց դատաստանը։

— Այո, Գարգես, այլևս ոչ ոքի չեմ թողնի կանգնի իմ ճամբին... բայց ասա, ասա, ինչպե՞ս արիր. ինչպե՞ս հարմարին էիր զարկել. ես տեսա, դաշույնը հենց ուղղակի սրտին էր դիպել... հա՞-հա՞-հա՞. արքա, ութնամյա արքա՞։

— Ութնամյա արքա՞,— կրկնեց Գարգեսը և հեգնորեն ժպտաց։

— Բայց ասա՛, ասա՛, պատմության վախճանը հայտնի է. ինչպես էր նրա ընկացքը։

— Իմաստուն ես, ով տեր իմ... այն պահին, երբ դու կոծում էիր թագավորի դիակի վրա և իմ սփոփիչ խոսքերի վրա բացականչեցիր՝ հեռու տար ինձնից այդ պատմուճանը... դու այլևս իմ մոտերիմը չես,— ես դուրս եկա... ինձ անարգել էր Նարզասը. այդ շա՞տ լավ ու շատ ձեռնտու էր մեր գործի համար։ Բոլորն ինձ խղճում էին. ամեն մեկը ցանկանում էր մի որևէ սփոփիչ խոսք ասել, բայց ես, ոհ, շա՞տ ընկճված էի երևում նրանց աչքին. միայն այդ չարախոսը քմծիծաղ էր տալիս ու հեգնում և իր անմիտ փիլիսոփայությունը բարբաջում՝ թե Նարզասի բարկությունը այդ արդեն գրված թատերգության մի արարվածն է։

— Ինչպե՞ս,— բարկացավ Նարզասը,— այդ ստոր իմաստակը մի՞թե կռահում է արդեն։

— Ով գիտե տեր իմ, բայց լավ է, որ նրան սրամտություններ անող անմիտի տեղ են դնում և ոչ ոք կարևորություն չի տալիս նրա խոսքերին։

— Ես արմատից կհանեմ այդ սրամիտ լեզուն... դե,

ասա՛, ես քեզ չեմ հարցնում, թե ինչ փիլիսոփայություններ էր բարբաջում չարախոսը, դու ասա, ինչպե՞ս...

— Այո, տեր իմ, շատերն ինձ խղճում էին. և դա լավ էր. բոլորն էլ զբաղված էին արքայի թաղումով և ամենքը սուգի մեջ էին. իմ մասին կարծես մոռացել էին. ոչ օրի մտքով չէր անցնում գալ ինձ այցի, և ես որոշեցի անհայտանալ. բայց ո՞ւր։ Չէ՞ որ ես արքայորդուն էլ դեռ պետք է ուղարկեի հոր նեռևից և ահա, ես զգեստներս փոխեցի թագաժառանգի մի սպասավորի հետ։ Այդ սպասավորն ինձնից բավարարված էր և իմ լրտեսն էր թագաժառանգի տանը։ Եվ մի ամբողջ արևի շրջան ես սպասավոր էի թագաժառանգին. ես դեմքս կիսով չափ կապել էի, իբրև թե ատամնացավ ունեմ և չեմ կարողանում խոսել. գործս հեշտացավ նաև նրանով, որ սպասավորներից երկուսն էլ իմ դավակիցները դարձան... ոսկին, տեր իմ, ոսկին ամենազոր է. և ահա, այն պահին, երբ թագաժառանգին պետք էր օծելն անուշահոտություններով իր գահն ընդունելու համար, ես ներս մտա և... դուք արդեն տեսաք, թե ինչ շեշտակի էր դիպել դաշույնս. ես լուսամուտից դուրս թռա ու ճամբան բռնեցի դեպի քաղաքի խաղողի այգիները։ Այնտեղ հնձանում գինի էին քամում, երևի թագադրության տոների համար. ես նորից զգեստներս փոխեցի, արյունոտ դաշույնը ուղեցի թողնել մի տեղ, բայց տեսա, որ մարդիկ են գալիս՝ նեռևեցի գինու մի կարասի մեջ և ինքս ինձ մի կերպ զցեցի քո պալատը։ Ահա ամբողջ պատմությունը, տեր իմ։

— Սքանչելի է. բե՛ր, բե՛ր սեղմեմ այդ ձեռքդ, որ այդպես անվրեպ է աշխատել. ո՞հ, Գարգես, ասա՛, ինչպե՞ս, ինչո՞վ երախտապարտ լինեմ քեզ։

— Այդ մասին հետո, ինձ ոչինչ էլ պետք չէ. ես միայն գիտեմ, որ ամեն տեղ կփնտռեն թագաժառանգին սպանողին, բացի քո պալատից. այստեղ ես ապահով եմ, բայց երկար մնալ չեմ կարող. լավ է առժամ հեռանամ մայրաքաղաքից, որ ամեն կասկած վերացած լինի, իսկ մինչ այդ չարախոս պալատականին...

— Բավ է. գալիս են պալատականները, ես նորից պիտի գնամ կոծելու... դու այստեղ... և Նարգասը մի գաղտնի դուռ բանալով Գարգեսին ներս հրեց ու նորից դուռը կողպեց։

Քիչ հետո ներս եկան պալատականները և խոնարհ գլուխ տվին նրան։

Նարգասն այնպիսի վշտալի կերպարանք ստացավ, որ բոլոր պալատականները ետ-ետ գնացին և առանց ծրպտուն հանելու գլուխները խոնարհեցին։

— Ի՞նչ լուր կարող ես հաղորդել ինձ,— դիմեց Նարգասը ամենաավագին, որը հանձն էր առել գտնելու ոճրագործին,— եղկելի հանցագործը ո՞ր գնդանումն ես արդեւ փակել. ասա՛, համբերությունս հատնում է. նախքան թագաժառանգին հոգին հանձնելը, պետք է ոճրագործն իր տոհմով ու իր դավակիցներով զոհվի նրա սրբազան աճյունի առաջ։

— Ո՞վ մեծազոր Նարգաս,— խոսեց ավագ պալատականը,— մեծ ու արդար է ցասումը քո. խմաստուն է խորհուրդդ. այդպես են վարվել բոլոր մեծահոգի արքաները. զոհել ոճրագործին սպանվածի աճյունի առաջ, ճիշտ այդպես։ Թող սակայն ներողամիտ լինի վսեմափայլ տերը, ոճրագործը խիստ է զգուշ ու խորամանկ. ոչ մի հետք չի մնացել...

— Ի՞նչ,— սաստկությամբ կտրեց պալատականի խոսքը Նարգասը,— ուրեմն ոճրագործը գնա՞ չի գտնված։

Պալատականը պատասխանել չկարողացավ. նրա դեմքը դեղնեց և նա հազիվ կարողացավ իրեն պահել դողացող ծնկների վրա։

Նարգասը ցասկոտ հայացքով մի քանի անգամ գնաց եկավ սենյակում, ապա կարգադրեց բանտարկել ավագ պալատականին, որ թույլ էր գտնվել և մինչ այդ չէր կարողացել գտնել ոճրագործին. նրա հետ միասին կարգադրեց բանտարկել չարախոս պալատականին, որը պղտորում էր մարդկանց մտքերը և նոր մարդիկ նշանակեց ոճրագործին գտնելու։

Ապա Նարդասը գնաց պալատի սրահը, ուր դրված էր թագաժառանգի մարմինը։ Կոծեց բարձրաձայն և ուշ գիշերով իր մտերիմների թևերին ընկած վերադարձավ տուն։

Նա նորից արձակեց բոլորին և երբ մենակ մնաց, բացեց գաղտնի սենյակի դուռը և իր մոտ կանչեց Գարգեսին։

Գարգեսը եկավ ու փաթվեց Նարդասի ծնկներին։

— Մեծ է իմաստությունդ, ով Նարդաս,— ասաց նա,— ես ամեն ինչ լսեցի։

— Բայց քո ներկայությունդ այստեղ վտանգավոր է թող ոչ մի կասկած չլինի, որ ես ձգտել եմ գահին։

— Հրամայիր, ինչպես կամիս։

— Դու վաղը ճամբա ընկիր երկրի խորքերը։ Հարմար ժամանակին խնդրագիր կուղարկես և կհայցես իմ շնորհը։ Բացի այդ անհրաժեշտ է, որ դու իմանաս, թե այդ ժողովուրդն ի՞նչ է խոսում, ի՞նչ է մտածում թագաժառանգի մահվան և իմ թագավորության մասին։

— Խոնարհաբար լսում եմ։

Սակայն Գարգեսին դժվարացնում էր իր հղի կնոջ վիճակը։ Նարդասը այդ մասին հոգաց. նրան առատ ոսկի ու արծաթ տվեց և ճամբի համար բոլոր անհրաժեշտ բաները։ Գարգեսը կնոջը նստացրեց ուղտի վրա և ուղտի փափուկ ընթացքով մի սպասավորի հետ ճամբա ելավ։

Դ.

Հետևյալ օրը Նարդասը թագավոր հռչակվեց։

Նարդասն, արդեն իբրև թագավոր, արժանավայել կերպով թաղել տվեց թագաժառանգին։ Նրա հիշատակի հավերժացման համար աղքատ երեխաներին ողորմություն բաժանեց ու մի քանի հարկատուների պարտքեր զիջեց։

Այն նոր մարդիկը, որոնց նա նշանակել էր թագաժառանգին սպանողներին գտնելու համար դարձյալ եկան և Նարդասին զեկուցեցին, թե ոճրագործի հետքերը չեն կարողանում գտնել։ Նարդասը բարկացած մի քանի նոր կար-

գաղտնիություններ արավ և հետո սկսեց իր պետական գործերը կարգավորել։

Նա նախ և առաջ գլխատել տվեց իրեն անհաճելի մի քանի պալատականների և նրանց համախոհներին։ Առանձին սատկությամբ նա հրամայեց դատաստան տեսնել շարախոս պալատականի հետ, բայց մեծ եղավ նրա զարմանքն ու կատաղությունը, երբ բանտապետը եկավ զեկուցեց.

— Ձերդ մեծություն, Մարկոսն անհայտացել է։

Մարկոսը շարախոս պալատականն էր։

Նարզասի երեսի գույնը փոխվեց, ուզեց բանտապետին գլխատելու հրաման տալ, բայց իր թագավորության առաջին ու երկրորդ օրերում արդեն մի տասնյակ պալատականի գլուխ կտրել էր տվել, ուստի նա զսպեց իրեն և բավականացավ բանտարկել տալով Մարկոսի մի քանի համախոհներին։

Բայց արդեն Նարզասի հանդիսությունը կորավ։ Նա գիտեր, որ խոսքը բերեբերան կդառնար դերան։ Շարախոս պալատականը—Մարկոսը, ազատ մուտք ունենալով ժողովրդի մեջ, կարող է իր հանելուկային խոսքերով շատերի մտքերը պղտորել։ Ու նա որոշեց վարվել իր երկրի հին սովորության համեմատ։ Դարգեսին ճամբու դնելուց հետո, մի օր նա ծպտվեց, հագավ վաճառականի զգեստ և իր մի հավատարիմ սպասավորի հետ գնաց քաղաքն ու նրա շրջակայքը ման գալու։

Նա ցանկանում էր անձամբ ստուգել, թե իր հպատակներն ինչ կարծիքի են իր մասին, ի՞նչպես են ընդունում իր թագավորությունը և ո՞վքեր են այն մարդիկ, որոնք կարող են վանդ սպառնալ իրեն ու իր գահին։

Մութը պատել էր, երբ նա մտավ մի սրճարան։ Սրճարանի լայն թախտերի վրա ծալապատիկ նստած էին բազմաթիվ մարդիկ՝ վաճառականներ, արհեստավորներ, օտարականներ։ Բոլորը, մի-մի բաժակ սուրճ առջևները դրած, զմայլված լսում էին աշուղին։ Նարզասը սրճարանի հաճա-

խորդներից մեկից իմացավ, որ աշուղը նոր է լույս ընկել և իմաստալից խոսքերով շատ քաղցր երգեր է երգում։ Նարզասն էլ իր ու իր սպասավորի համար մի-մի բաժակ սուրճ ուղեց և ինքն էլ սկսեց ունկնդրել աշուղին։

Աշուղի աչքից չէր վրիպում, թե ո՞վ է մտնում, ո՞վ է դուրս գալիս սրճարանից։ Նա աչքի տակից նայեց նորեկին, իրեն հրամցված սուրճը խմեց և իր սազի սիմերը լարելով սկսեց երգել։

Նա երգում էր բարձր ու ազդու ձայնով. երգի խոսքերը հնչում էին պարզ ու որոշ և ինքն էլ, նայած խոսքերի իմաստին, մեկ ոգևորվում էր, մեկ տխրում, մեկ էլ հանդարտվում, ինչպես արտերին հասած կարկաչահոս գետը ու էլի շարունակում իր երգը։ Եվ նա իր երգն ավարտեց այս խոսքերով.

Այս անցավոր աշխարհում մարդը ուրախ պիտի ապրի,
Իսկ անիրավ գործերը միայն պատժի են արժանի։
Ուր անիրավ գործեր են կատարվում
Եվ չի պատժվում անիրավը,
Ո՛չ արքան է այնտեղ արքա,
Ո՛չ էլ աստվածն է աստված։

Ասաց աշուղը, մատը վերջին անգամ զարկեց սիմին և լռեց։

Բոլորը հավանական բացականչություններով գովաբանեցին աշուղին։

Նարզասը, մյուսներից հետ չմնալու համար, նույնպես դրվատանքի մի քանի խոսքեր ասաց աշուղին, ապա հարցրեց.

— Ով իմաստուն աշուղ, զուրեկան է ձայնդ և մանավանդ խորն էր երգիդ միտքը, կարո՞ղ ես ասել, կատարվո՞ւմ է մեր աշխարհում, Նարզասի թագավորության մեջ մի անիրավ գործ, և հանցագործը չի պատժվել։

Աշուղը, որ սկզբից արդեն առանձին ուշադրություն էր

դարձրել վաճառականի զգեստով սրճարան եկած Նարզասին, պատասխանեց.

— Թագավորության մեջ շա՛տ կան գանձեր. երբ արքան ցանկանում է, բաց է անում գանձարանի դռները և ոսկիները հանում, ծախսում է, երբ չի ցանկանում՝ գանձարանի դռները պինդ փակել է տալիս և ոչ ոք չի իմանում, թե ինչքան փող կա և ինչ տեսակ փող կա գանձարանում։

— Ինչ իմաստուն խոսք է,— ասաց մի արհեստավոր, ոսկու անունը լսելով։

Բայց Նարզասը, որ արդեն ինչ որ բան էր կռահում, դիմեց աշուղին։

— Ես գանձի մասին չեմ հարցնում, այլ...

— Ներեցե՛ք, տեր վաճառական,— խոսեց աշուղը,— հարցը կրկնելու կարիք չկա, ես ձեր հարցի պատասխանը տվի և կա մեկը, որ հասկացավ ինձ։

— Ո՞վ է այդ մեկը. ես չեմ տեսնում այդպիսին. մեկ-նիր ասածներիդ միտքը։

— Ես շատ խրթին բան չեմ ասել. դուք չեք տեսնում այդ հասկացողին, որովհետև հայելի չունեք, իսկ ավելի պարզ կարելի է այսպես ասել, երբ թագավորության մեջ, պալատում, անիրավություն է կատարվում, և եթե պետք է անիրավին պատժել՝ անիրավ գործը հրապարակում են, իսկ եթե անիրավին պետք է պատիվ տալ, ապա այդ անիրավ գործը պինդ, ինչպես թանկագին գանձ պահում են գանձարանում և դռան վրա յոթը կողպեք դնում։

— Իսկ Նարզասի թագավորության մեջ ինչպե՞ս են գործերը, անիրավությունը թաքնված է թե՞ հրապարակված։

— Ես թագավորի գործերին չեմ խառնվում, մանավանդ որ հիմա թագավորի գանձարանի բանալին գտնվում է մի վաճառականի ձեռքում։

— Այդ ինչպե՞ս,— հարցրեց Նարզասը։

— Ի՞նչ է ասում. դուցե զրպարտում է թագավորին,— ասաց մի վաճառական։

— Քավ լիցի,— խոսեց հանդարտորեն աշուղը,— ես միայն ուզում եմ ասել, որ եթե անիրավ գործ էլ է կատարված՝ Նարզասը չգիտե, որովհետև գուցե այդ անիրավ գործը կատարել է մի վաճառական, որ այժմ նստած է մեր մեջ։

— Ա՜հ,— բացականչեցին մի քանիսը,— աշուղը ճիշտ է ասում, ասածու և թագավորի գործերն անքննելի են, նա ասում է, թե կարող է պատահել, որ այսինչ վաճառականը խաբել է առևտրի մեջ, կամ այսինչ դերձակը գողացել է պատվիրատուի կտորից, և թող ասված հարամ անի նրանց գլխին այդ գողացած ապրանքը։

— Ճիշտ է։ Ճիշտ է ասում։

Բայց Նարզասը չհանդարտվեց. նա նորից հարցրեց աշուղին.

— Դու ասացիր, թե գուցե այդ անիրավ գործը կատարել է մի վաճառական, որն այժմ նստած է մեր մեջ. չե՞ս կարող ասել, ո՞վ է այդ վաճառականը։

Աշուղը սղալեց բեխերը և առանց շփոթվելու ասաց.

— Ես այդքան իմաստուն չեմ, բայց այն մարդը, որ հիմա վաճառական է, մի ժամ հետո կարող է լինել արհեստավոր, հաջորդ ժամին իշխանավոր, թերևս նա է։

Նարզասն արդեն լրիվ հասկացավ աշուղի հանելուփաթին խոսքերի միտքը, ուստի այլևս հարցեր չտվեց։

Իսկ սրճարանի հաճախորդները ձանձրացած իրենց համար անհասկանալի զրույցից խնդրեցին աշուղին նոր երգ սկսելու։

Մինչ աշուղն սկսեց երգել, Նարզասը իր սպասավորի հետ դուրս եկավ փողոց։

— Տեր իմ,— դողալով խոսեց սպասավորը, որ Օխտիկ անունն էր կրում,— ճանաչեցի՞ք։

— Ինչպես չէ։

— Այդ ստահակ շարախոսը աշուղ է դարձել։

Նարզասը պալատ հասնելով հագավ իր արքայական զգեստները և կարգադրեց նորեկ աշուղին ձերբակալել։

Բայց աշուղը, որ երբեմնի պալատական Մարկոսն էր, անմիջապես դուրս էր եկել սրճարանից, զգեստափոխվել և անհայտացել։

Ե.

Հետևյալ առավոտ Նարդասը նորից ուզեց գնալ ժողովրդի մեջ, իմանալու, թե ինչ են խոսում իր մասին։ Այս անգամ նա հագավ շրջիկ բժշկի զգեստ, վերցրեց մի քանի գործիք և Օխտիկի հետ դուրս եկավ պալատից։ Այս անգամ նա ուզում էր գնալ մոտակա գյուղը։

Նա հասավ մի նեղ ճամբի, ուր երկու կողմից փարթամորեն բուսել էր խոտը. խաղաղ ժամ էր և ոչ մի անցորդ չկար այնտեղ. միայն վերևում ծառի կատարներին թռչուններն էին ճռվողում, իսկ ներքևում մեղուներն էին բզզում։ Քիչ էլ առաջ գնալով, Նարդասը նկատեց, որ դեմից գալիս են երկու հոգի՝ մի տղամարդ և մի աղջիկ։ Երբ նրանք բավական մոտեցան, Նարդասը նկատեց, որ տղամարդը մի ամրակազմ ու պարթև երիտասարդ էր, իսկ աղջիկը մի շքնաղ էակ։

Նրանք երկուսն էլ այնքան սքանչելի էին, այնքան կախարդիչ, որ կարծես եթե չքանային, ապա կամայանար նաև այդ շրջապատը, կլռեին թռչունները, կչորանար բուսականությունը։

Նարդասը մոտեցավ նրանց և բժշկական աքցանը, որ դուրս էր ցցվել գոտիկի արանքից, ներս խրեց ու հարցրեց.

— Ո՞ւր բարին, ջահելներ։

— Աշխարհ տեսնելու,— պատասխանեց երիտասարդը։

Իսկ աղջիկը նայեց Նարդասին և իր շնորհալի գլուխը շարժեց, հավանություն տալով իր ընկերոջ ասածին։

Հարց ու փորձից պարզվեց, որ երիտասարդին կոչում էին Արգամ. իսկ աղջկա անունը Նարդասը ոչ մի կերպ իմանալ չկարողացավ։ Արգամն ու այդ աղջիկը մտերմացել էին և պայմանավորվել միասին ման գալ, աշխարհ տեսնել։ Արգամը հավատացնում էր, թե աղջկա մասին ինքը միայն

այսքանը գիտե, որ նա ծծկեր ժամանակ գրկվել է ծնողներից և չի հիշում, թե իրեն ինչ անուն են տվել հայրն ու մայրը, իսկ նա քանի որ ծնողներից շնորհված անունը չգիտե, նա առայժմ ուրիշ անուն չի ուզում ունենալ։ Աղջիկը գլխի դրական շարժումով հաստատեց Արգամի ասածը։ Նարզասը մեկ էլ նայեց աղջկանը. նրա անունը... Ի՞նչ անուն կարող էր սազել այդքան չքնաղ մի աղջկա։

Այժմ Արգամն ու անանուն աղջիկը մտերիմ ընկերներ էին, բայց թե ինչ զրաղմունք ունեին, այդ մասին ոչինչ չասացին։

Նարզասը նկատեց որ երկուսն էլ առողջ էին, նրա կարիքը չունեին, բայց չէր ուզում նրանցից բաժանվել, մանավանդ չքնաղ աղջկանից, որը կախարդել էր նրան։

Նարզասի շրթունքները ակամա շշնջացին «Թագուհի» բառը, երբ նա նորից զմայլված նայեց անանուն աղջկան։ Այո՛, արժանի էր այդ աղջիկը Թագուհի դառնալու։ Բայց գուցե նա իրոք Թագավորական զարմից է,— մտածեց Նարզասը,— և այդ թաքցնում է. գուցե նա էլ իր նման ծպտվել է և այդ ձևով է ցանկանում աշխարհ տեսնել... այո, այո, այս տղան էլ այնպես խոնարհ է դեպի նա. գուցե նա արքայադուստր է, սա էլ նրա սպասավորը։ Ոչ, պետք է ստուգել, թերևս այդ աղջիկն հենց Նարզասի համար է ուզը դրել նրա աշխարհը։ Թագուհի, Թագուհի,— շշնջաց նա իր մտքում, ապա դիմեց նրանց.

— Ո՞րտեղից եք գալիս. ո՞ւմն եք հանդիպել այսօր այս ճամբին։

— Մենք այսօր նոր ենք ճամբա ելել և առաջին մարդիկ, որոնց հանդիպում ենք, դուք եք,— պատասխանեց անանուն աղջիկը։

— Ուրեմն, ոչ ոքի չե՞ք տեսել։

— Ո՛չ,— հաստատեց Արգամը,— բայց...

— Բայց ինչ,— անմիջապես հարցրեց Նարզասը։

— Բայց իմ ընկերուհին խսկույն հասկացավ, թե այս ճամբով ովքեր են անցել այս գիշերը։

— Այդ ինչպե՞ս,— հետաքրքրվեց Նարզասը։

— Շատ պարզ,— պատասխանեց անանուն աղջիկը,— այստեղից անցել է մի ուղտ, որի մի աչքը կույր է եղել։

— Այդ ինչպե՞ս իմացաք,— զարմացավ Նարզասը։

— Տեսեք,— պատասխանեց աղջիկը,— սրանք ուղտի ոտքի հետքերն են. տեսեք նա ճամբի մի կողմի խոտերից կրծել է, մյուս կողմինը ոչ։

— Հա՞,— շրթունքները կրծեց Նարզասը,— հետո՞։

— Հետո ուղտի վրա բեռներ են եղել, մի կողմը մեղր, մյուս կողմը յուղ։

— Իսկ այդ ինչի՞ց իմացաք։

— Ճամբի մի կողմը յուղն է կաթել և տեսեք, թե ինչքան մրջյուններ են հավաքվել վրան, իսկ մի կողմն էլ մեղրն է կաթել, տեսեք, ինչքան մեղուներ են հավաքվել վրան։

— Զարմանալի է,— բացականչում է Նարզասը։

Նրանք արդեն բավական առաջ էին գնացել և հասել մի աղբյուրի։

— Զարմանալու ոչինչ չկա,— ասաց աղջիկը,— ուղտի վրա էլ նստած է եղել մի հղի կին։

— Ուրեմն դուք տեսել եք այդ ուղտին և նրա վրա նստած կնոջը, ինչպես նաև նրանց հետ եղած մարդկանց։

— Ո՛չ։

— Հապա ինչպե՞ս իմացաք, որ ուղտի վրա կին է եղել, այն էլ հղի։

Անանուն աղջիկը նայեց բժշկին և իր խորաթափանց հայացքով նկատեց, որ նրան շատ է մտահոգում այդ հայտնությունը. բայց աշխատեց ցույց չտալ, որ հասկանում է նրա վրդովմունքը և հանդարտորեն բացատրեց.

— Ահա, տեսեք, սրանք ուղտի հետքերն են. այստեղ կինը իջել է աղբյուրից ջուր խմելու. խմելիս շոքել է, սրանք ծնկների տեղերն են, իսկ բարձրանալիս ձեռքերը հենել է գետնին, որ հեշտ ոտքի կանգնի սրանք էլ ձեռքերի հետքերն են։

— Հը՜մ, հը՜մ,— արդեն յուրովի մռլտում էր Նարզասը։ Նա աղջկա ասածներից հասկացավ, որ այդտեղից անցել էր Գարգեսը։

Նա մի պահ նայեց չքնաղ աղջկան, ապա ինքն իրեն խոսեց,— այս աղջիկը, որ այսքան իմաստուն է, կարող է շատ օգտակար լինել իմ պալատի համար։ Պետք է տղային էլ, աղջկան էլ պալատ տանել և այդ աղջկա միջոցով, մանավանդ, եթե նա թագուհի դառնա, հայտնաբերել իմ բոլոր թշնամիներին, ոչնչացնել նրանց և ամրացնել իմ թագավորությունը։

Այս մտքով նա հրաժեշտ տվեց զույգին և Օխտիկի հետ շտապ վերադարձավ իր պալատը։ Մի քիչ հետո մի խումբ ձիավորներ, Նարզասի համհարզի առաջնորդությամբ, եկան, գտան Արգամին ու անանուն աղջկան։

— Ձեզ, թագավորն իր պալատն է կանչում,— ասաց հեծյալների գլխավորը։

— Իսկ ո՞վ է ձեր թագավորը։

— Այդ ի՞նչ անբարիշտ հարց է,— որոտաց գլխավորը,— թագավորը աստծու ընտրյալն է, այս աշխարհի տերը և մարդկանց ճակատագիրը որոշողը։ Ձեզ հրամայված է գալ պալատ, անսացեք այդ հրամանին, առանց դատելու։

— Մենք թափառում ենք քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, ի՞նչ գործ ունենք պալատի հետ։ Ասեք թագավորին, որ շատ շնորհակալ ենք իր պատվից,— ասաց անանուն աղջիկն առանց կարևորություն տալու գլխավորի պերճախոսությանը։

— Այդ իմ գործը չէ,— զայրացավ գլխավորը,— հրամայված է, ուրեմն պիտի գաք պալատ։

Երբ Արգամն ու անանուն աղջիկն ընդդիմացան, նրանց սպառնալիքի տակ նստեցրին ձիերի վրա, ու տարան պալատ։

Արգամն ու անանուն աղջիկը նստած էին արքայական պալատի սենյակներից մեկում։ Ի՞նչ էր սպասում նրանց նրանք դեռ ոչինչ չգիտեին։ Խուզարկու մի աչք, կիսաբաց դռան արանքից, մեկ-մեկ նայում էր նրանց ու կրկին անհետանում։

Նարզասի սպասավորը, Օխտիկը, հրաման էր ստացել հսկել նրանց վրա և այդ նա էր, որ չէր հեռանում սենյակի դռներից։

Արգամն արդեն սրտնեղվում էր. նա ուզում էր ներս կանչել Օխտիկին և նրա միջոցով խնդրել արքային, որ իրենց ընդունե կամ արձակե, որովհետև մութն ընկնում էր և նրանք ճամբա ունեին կտրելու։ Բայց անանուն աղջիկն հորդորում էր նրան չշտապել։

— Այժմ, սիրելի Արգամ,— խոսեց աղջիկը,— երբ ընկանք այստեղ, պետք է գործենք համբերության զենքով. սպասե՛նք. արքաներին պատշաճ է մոռացկոտությունը. սակայն նա մեզ այստեղ նրա համար չի կանչել, որ մոռանա մեր գոյությունը։

— Ա՜խ, երանի թե մոռանար,— մրմնջաց Արգամը։

— Կարծում ես բարին այդ է,— կռահելով նրա միտքն ասաց աղջիկը։

— Թերևս. նա հիշելով մեզ, կարող է մեզ բաժանել իրարից... քեզ, իմ սիրելիս, խլել ինձնից։

— Ես չեմ ուզում, որ դու այդպես խոսես։

— Հապա ինչպե՞ս։

— Ես նրան ցույց կտամ, որ նա ամենազոր չէ։

Արգամը մտածմունքի մեջ ընկավ։

Վերջապես սենյակի դուռը բացվեց և Օխտիկը ներս մտնելով հանդիսավոր եղանակով ասաց.

— Ով դու մեծապատիվ այր և դու շնորհաշուք աղջիկ, հասավ պատշաճ ժամը. այժմ դուք կարժանանաք մեր արե-

գակնային արքայի տեսությանը. գերհզորը ձեզ արժանացնում է մեծ պատվի. հրավիրում է իր մոտ ճաշի։

Արգամն ու աղջիկը ուրախ կանգնեցին. աղջիկը հանդարտորեն ասաց.

— Բարի է արքայի կամքը։

Օթաիկի առաջնորդությամբ նրանք անցան պալատի սյունազարդ միջանցքներից և մտան շքեղ ճաշասենյակը։ Տասնյակ սպասավորներ կանգնած ճաշասեղանի չորս բոլորը, աչքերը հառած դռանը, սպասում էին Թագավորի մուտքին։ Արգամն ու աղջիկը նույնպես կանգնած մնացին մինչև արքայի գալը։ Եվ քիչ անց բացվեց մի ուրիշ դուռ, Նարզաքը, շրջապատված չորս այլ պալատականներով, ներս մտավ։

Բոլորը խոնարհ գլուխ տվին։ Գլուխ տվեց նաև Արգամը, իսկ անանուն աղջիկը գլուխը խոնարհեց ոչ այնքան պատշաճավորությունը պահպանելու համար, այլ նայելու, թե ինչպես է քայլում Թագավորը։ Եվ նայելով Թագավորի քայլվածքին, մի ժպիտ շառագունեց նրա դեմքը.—«այս արքան, որ քիչ առաջ բժշկի հագուստով էր, չի մտածել, որ հագուստը կարելի է փոխել, դեմքին մազ ավելացնել կամ պակասացնել, սակայն քայլվածքը բոլոր պայմաններում նույնն է մնում»։ Այսպես մտածեց աղջիկը և նրա համար պարզվեց, որ այս արքան այն նույն ծպտված բժիշկն էր։ Նա վերհիշեց իր խոսակցությունը այդ բժիշկ արքայի հետ, ուղղով ճամբորդող մարդու մասին. հիշեց, թե ինչպես մըտահոգվում էր նա՝ լսելով իր հայտնությունները, և շրթունքը կծեց։

Թագավորը գլխի թեթև շարժումով ընդունեց սենյակում հավաքվածների հպատակության արտահայտությունները, ապա նստեց սեղանի մոտ, իրեն հատուկ տեղում և մյուսներին էլ հրամայեց նստելու։ Արգամն ու անանուն աղջիկը նստեցին Թագավորից աջ։

Սպասավորները փութաջան կերպով վազվզում էին խոհանոցից ճաշասենյակ. և ահա նրանցից մեկը, մի մեծ

սկուտեղով փլավ բերեց, նախ մատուցեց արքային, ապա սատիճանավորներին, հետո մոտեցավ անանուն աղջկան։ Աղջիկը մի դդալ փլավ վերցրեց, հոտոտեց ու անմիջապես ետ դրեց տեղը։

Նարզասը, որ ուշադիր հետևում էր աղջկա շարժումներին, դադարեց ուտելուց և դիմելով նրան հարցրեց.

— Ինչո՞ւ չկերար փլավը։

— Թագավորն ապրած կենա,— ասաց աղջիկը,— այդ փլավից մարդու դիակի հոտ է գալիս. ես, ա՜յ, այս բուսեղենից կուտեմ։

Պալատականները զայրացած նայեցին աղջկան, ապա քծնող հայացքով դարձան դեպի Թագավորը։ Սակայն, Թագավորն, աշխատելով հանգիստ ձևանալ, հրամայեց սպասավորներին.

— Ուրիշ կերակուր տվեք այդ աղջկան,— և ինքն էլ դադարեց փլավ ուտելուց։

Սպասավորները մի խորոված գառ մատուցեցին։

Աղջիկը հոտոտեց գառը և ասաց սպասավորներին.

— Հետ տարեք։

— Իսկ գառան միսն ինչո՞ւ չկերար,— անհամբերությամբ հարցրեց Նարզասը։

— Թագավորի շնորհը թող անպակաս լինի. այդ գառը շան կաթ է ծծել։

— Ի՜նչ զրպարտություն արքայի սեղանին,— զզնջացին միմյանց ականջին մի քանի պալատականներ։

Նարզասը, թեև նույնպես ուզում էր զայրանալ, բայց դարձյալ զսպելով իրեն դիմեց աղջկան։

— Լավ. այսօր իմ ուտելիքն ապականված է ուրեմն, գոնե մի բաժակ գինի խմիր. անարատ է այս գինին։

Եվ Թագավորի մի ակնարկի վրա մատռվակը ոսկե բաժակով գինի տվեց աղջկան։ Աղջիկը վերցրեց գինով բաժակը մոտեցրեց շրթունքներին, բայց նախ քան խմելը հոտոտեց ու անմիջապես բաժակը վերադարձրեց մատռվակին։

— Հապա գինին ինչո՞ւ չես խմում,— արդեն ակներև անհանդստությամբ հարցրեց Նարզասը։

Անանուն աղջիկը մազերը հետ տվեց և իր պայծառ դեմքի իմաստուն արտահայտությամբ՝ մեղմ, սակայն հատու տոնով ասաց.

— Ո՞վ մեծազոր արքա, ես այդ գինին չեմ կարող խմել, որովհետև այդ գինու մեջ մարդու արյուն կա։

— Ինչպե՞ս,— տեղից վեր կենալով բացականչեց արքան։

— Այս աղջիկն անամոթ բամբասող է,—նկատելով արքայի զայրույթը համարձակորեն խոսել սկսեցին պալատականները։

Արգամը անհանգիստ հայացքով նայում էր իր անանուն սիրեցյալին և չգիտեր ինչ աներ, միայն զգում էր, որ եթե մեկն ու մեկը, թեկուզ արքան, որևէ քայլ աներ դեպի աղջիկը, ինքն իր կյանքով նրան կպաշտպաներ. աղջիկն այդ հասկանում էր, ուստի նա նշանակալից հայացքով հանգստացնելով Արգամին, դիմեց Թագավորին։

— Թող արքան զսպի իր զայրույթը և հրամայե այստեղ կանչել շալթուկ ցանողին, հովիվին և գինեգործին—նրանք կհաստատեն իմ խոսքերը։

Նարզասը առանց երկար մտածելու հրամայեց մի պալատականի։

— Կանչել այստեղ աղջկա ասած մարդկանց։

Քիչ անց պալատ բերին շալթուկ ցանողին, հովիվին և գինեգործին։ Թագավորն ինքը առաջինը դիմեց շալթուկ ցանողին։

— Ասա՛, որտե՞ղ ես ցանել շալթուկը։

— Թագավորն, որ ապրած կենա, մենք մեր հոգուն որ մեղք չանենք, պիտի ուղիղն ասենք,— խոսեց շալթուկ ցանողը,— հին գերեզմանոցը, որ անցած տարի քանդեցինք, տեղը հարթեցինք, լավ ջուր կապեցինք վրեն. շալթուկն էնտեղ ենք ցանե։

— Այ, թե որտեղից էր դեակի հոտը,— մտմտաց ինքն իրեն Նարզասը, ապա դիմեց Հովվին.

— Այ Հովիվ, սա տեսնենք, խոհանոցի համար այսօր ուղարկածդ գառը ի՞նչ կաթ է ծծել։

— Թագավորին, որ ասեմ,— խոսեց Հովիվը, դեպի ծոծրակը մղելով փափախը,— գառը, որ ծնավ, մերը խաստավ. հենց էդ օրն էլ մեր շունը ծնեց. գառը գցեցի շան տակ. շունն էլ իր ձագերի հետ գառանը կաթ տվեց էնպես, որ...

— Էլ ինչ էնպես, որ... զայրացած խոսեց Նարզասը, և դարձավ գինեգործին,— հիմա դու ասա, այ գինիների վարպետ, մեր գինու մեջ ինչո՞ւ մարդու արյուն կա։

— Թող երկար ապրի Թագավորը,— պատասխանեց գինեգործը,— այս առավոտ էլ կարասից սովորականի նման գինի լցրի ուղարկեցի պալատի համար։ Մեկ էլ ինչ անցավ մտքովս, ասի տեսնեմ ինչքա՞ն գինի մնաց այդ կարասի մեջ. գավը կոխեցի, տեսնեմ գիպչում է կարասի հատակին. է՞, ասի, վաղը նոր կարաս պիտի բացել Թագավորի սեղանի համար. մեկ էլ տեսնեմ գավս ինչ որ բանի դեմ առավ. ձեռքս տարա ու կարասի միջից հանեցի մի դաշույն։

— Դաշո՞ւյն,— հարցրեց Նարզասը։

— Այո, տեր իմ, դաշո՞ւյն. և դաշույնը արյունոտ էր եղել, քանի որ լերդացած արյունը դեռ տեղ-տեղ էլ կպել մնացել էր վրան. թե այդ տակառի գինին արնահամ է եղել, դրանից կլինի. ուրիշ արյուն չի Թափվել։

Ներկա եղողներից միայն ինքը, Նարզասը գիտեր, թե դա ինչ դաշույն էր. բայց նա զայրանում էր այն մտքից, որ ազջիկը կարող էր նաև իմանալ, թե ինչ գործ էր կատարել այդ դաշույնը, ուստի նա դադարեցրեց ամեն հարց ու փորձ, հրամայեց, որ չալթուկ ցանողը, Հովիվն ու գինեգործը գնան իրենց աշխատանքին, արձակեց պալատականներից մի քանիսին, իսկ մի քանիսի հետ էլ խորհրդակցելուց հետո, մոտեցավ աղջկանն ու ասաց։

— Այժմ քեզ կտան քո հավանած անարատ ուսելիքը... հետո քեզ հետ առանձին խոսելիք ունեմ։

Է.

Եվ մեկ ժամ հետո Նարզասը անանուն աղջկան կանչեց իր մոտ։ Աղջիկը սիրտ տվեց Արգամին, որ չանհանգստանա և ինքը գնաց Թագավորի սենյակը։ Նարզասը բազմել էր նրբահյուս գորգով ծածկված մի թախտի վրա և համբիչը ձեռքից ձեռք նետելով գուշակություններ էր անում։

Երբ աղջիկը ներս մտավ, Նարզասը նրան թույլ տվեց նստել իր մոտ թախտի ծայրին և մի պահ նայում էր նրա դեմքին։ Բակ աղջկա դեմքը... Ո՞վ կարող էր նրա դեմքի գովքն անել։ Նարզասը գիտեր, որ իր ողջ Թագավորության մեջ չէր գտնի այդպիսի զույգ աչքեր, որոնց ինքը, երկրի տերն անդամ հանգիստ սրտով չէր կարողանում նայել։ Եվ նա նմանապես գիտեր, որ այդպիսի աստվածային շնորհներով լեցուն աղջիկ ո՛չ եղել էր, ո՛չ կար և ո՛չ էլ կլիներ իր երկրում։

Եվ ահա, այժմ, Նարզասը երկար-երկար նայելով աղջրկան ասաց.

— Խոսի՛ր, չքնաղ աղջիկ, ո՞վ է քո հայրը, որ այդքան իմաստություն է տվել քեզ և ո՞վ է քո մայրը, որ այդքան կախարդիչ է ծնել քեզ։ մի բան ասա քո մասին... լսո՞ւմ ես... լավ, Թող այդպես լինի։ Քո անունն էլ չես ասում. Թող քո անունը Թագուհի լինի. գուցե աստծու կամքով է, որ ես մինչ այժմ ամուրի եմ մնացել. իսկ Թագավորը չի կարող երկար ժամանակ ամուրի մնալ... եկիր այս աշխարհի Թագուհին, բաժանիր ինձ հետ իմ Թագավորությունը. դու կիշխես քո խելքով, ես իմ ուժով. մենք աշխարհում ամենահզորը կլինենք. մեր առաջ կխոնարհվեն բոլորը, բոլորը։

Երբ Նարզասն ավարտեց իր պերճախոսությունը, աղջիկը խորաթափանց մի հայացքով նայեց Նարզասին ու ասաց.

— Դուք բոլորն ասացիք։

— Առայժմ, եթե կուզես այո՛, այժմ դո՞ւ ասա քո խոսքը. համաձայնի՞ր դառնալ թագուհի։

— Ես թագուհի եմ,— պատասխանեց անանուն աղջիկը։

— Ա՜խ, այո՛, դրա համա՞ր ես ծպտված ման գալիս. դրա համա՞ր չես ասում անունդ։

— Ո՛չ, ո՛չ. ես իմ սրտի և իմ հոգու թագուհին եմ։

— Ա՜հ,— հանգիստ շունչ քաշեց Նարզասը,— այդ մի թագավորություն է, որ քեզ ոչինչ չի տալիս, հոգսից բացի. իսկ ես քեզ՝ տալիս եմ և՛ սեր, և՛ իշխանություն, և՛ հարստություն։

— Սեր, իշխանություն, հարստություն. այդ բոլորը բավակա՞ն է մարդուն հոգի վրա հաստատ քայլելու համար։

— Նաև գիտություն։ Չէ՞ որ դու արդեն ունես այդ շնորհը։

— Այդ էլ գումարած նախորդների վրա դեռ բավական չէ այս աշխարհում ապրելու համար։

— Զարմանալի է,— բացականչեց Նարզասը և ներքնապես թեև զայրանում էր, բայց դարձյալ ուզում էր շարունակել զրույցն աղջկա հետ, ուստի նորից խոսեց,— ասա՛ ինձ, վերջապես ասա քո անունը. ես ուզում եմ քեզ կոչել քո անունով, գուցե այդպես մենք ավելի հեշտ հասկանանք միմյանց։

— Ես անուն չունեմ։

— Ես քեզ անուն կշնորհեմ։

— Ոչ, իմ անունը ինքս պիտի գտնեմ. ես փնտռում եմ աշխարհի ամենալավ անունը և ով համաձայնի ինձ այդ անունով կոչել ես նրան պիտի պատկանեմ։

— Անվանիր քեզ. ինչ անուն էլ ցանկանաս, ես այդ անունով էլ կկոչեմ քեզ։

— Այդ դժվար է ասել կկոչես ինձ իմ ցանկացած անունով թե չէ. ես ուզում եմ իմանալ, թե աշխարհում մարդկանց և իմ երջանկության համար ի՞նչ անուն է հարկավոր կրել։

Նարզասը վեր ելավ թախտից և անհանդիստ շարժումներով սկսեց հետ ու առաջ գնալ սենյակում, իսկ աղջիկը շարունակեց։

— Ես շատ աշխարհներ եմ մտել եկել. այժմ հասել եմ քո աշխարհը, բայց դեռ չեմ տեսել, թե ինչ կանցնի կդառնա քո թագավորության մեջ. այժմ պետք է գնամ այդ էլ տեսնեմ և թերևս արդեն կարողանամ որոշել, թե ինչ անուանով կոչեմ ինձ։

— Գնա, գնա տես,— բացականչեց Նարզասը և աղջիկանն առաջնորդելով դեպի լուսամուտը՝ ցույց տվեց նրան այնտեղից երևացող երկիրն ու ասաց,— տես իմ թագավորությունը՝ լա՜յն, արձա՜կ. թագուհի լինել այսպիսի երկրի՜... այդ հազվագյուտ շնորհ է։

Եվ Նարզասը պատմում էր, թե ինչ պերճանքներ կան իր թագավորության մեջ, ինչքան հարստություն և որքան հպատակներ և այդ բոլորի, բոլորի վրա իր հետ միասին կիշխեր նա, թագուհի դարձած աղջիկը։ Նարզասը դեռ երկար կխոսեր, երբ հանկարծ նրանց ականջին հասավ մի երգի ձայն։ Նարզասը սրեց լսողությունը, աղջիկը ևս. երգում էին հենց նրա լուսամուտի տակ. Նարզասի դեմքը վայրկենապես փոխվեց. նույն այն երգն էր, արդեն ծանոթ երգը։

Այս անցավոր աշխարհում մարդը ուրախ պիտի ապրի,
Իսկ անիրավ գործերը միայն պատժի են արժանի։
Ուր անիրավ գործեր են կատարվում
Եվ չի պատժվում անիրավը,
Ո՛չ արքան է այնտեղ արքա,
Ո՛չ էլ աստվածն է աստված։

Անանուն աղջիկը այնպես ձևացրեց, որ իբր թե չի նկատում Նարզասի վրդովմունքը. իր սովորական հանդիստ ձայնով միայն ասաց.

—Ես ուզում եմ տեսնել այդ երգը հորինողին։

Նարզասը մատը տարավ շրթունքին.—«լավ,—մտածեց յուրովի,— լավ, թող տեսնի. սա դրա չափ հմտություն ունի,

որ գտնի այդ չարախոս Մարկոսին. իսկ մենք, մարդիկ կը-նշանակենք, կհետևենք... և չարախոսն այլևս չի փախչի իմ դատաստանից»։ Այս մտքով նա դարձավ աղջկան։

— Բարի ցանկություն է տեսնել երգը հորինողին. բայց նա այնպես հեշտ չի երևում մարդկանց աչքին։ Այ, հիմա լսեցիր այդ երգը, բայց եթե ցանկանաս երգողին կամ երգի հեղինակին տեսնել... ապարդյուն աշխատանք ... քամու պես անհայտանում են։

— Թող հանգիստ լինի արքան. ես կգտնեմ երգիչներին էլ, երգի հեղինակին էլ։

—Այո՛ գտիր ու վերադարձիր. վերադարձիր արդեն քո անունով։

— Ես պարտավոր եմ վերադառնալ։ Այնտեղ, ուր մի անգամ արդեն եղել եմ, պետք է նորից մտնեմ։

Թագավորն հասկանում էր այս խոսքերն այնպես, ինչ-պես նրանց ուղղակի իմաստն էր, իսկ անանուն աղջիկը, ուրիշ իմաստ էլ էր դնում այդ խոսքերի մեջ։

Երբ աղջիկը դուրս եկավ, Նարզասը նորից մի քանի անգամ գնաց-եկավ իր սենյակում։ Ապա կանչեց Օխտիկին, հրահանգներ տվեց որ նա իր մարդկանցով գաղտնի հետևի աղջկան և Արգամին ու հենց որ աղջիկը հանդիպի ծպտված Մարկոսին, բռնեն այդ չարախոսին ու բերեն պալատ։ Հետո զգալով, որ ինքն առանց Գարգեսի կգժվարանա գլուխ հանել սկսված գործը հրաման տվեց, որ նա պալատ վերադառնա։

Ը.

Հրաժեշտ տալով Նարզասին, աղջիկը գնաց այն սենյակը, ուր նրան սրտատրոփ սպասում էր Արգամը։

— Ո՞հ, իմ կյանք,— բացականչեց Արգամը,— ես արդեն հուսահատվել էի։

— Թո՛ղ այդ խոսքերը, երբ ինձ հետ ես, ուրեմն չպետք է խոսես հուսահատության մասին։

Արքամը զմայլված նայեց աղջկան և, այլևս առանց որևէ խոսք ասելու, նրա հետ դուրս եկավ պալատից։

Մի քանի օրվա ընթացքում նրանք անցան շենից շեն, շատերի հետ սեղան նստեցին շատերի հետ խոսեցին, շատ ծիծաղ ու լաց լսեցին։

Եվ ահա, մի օր էլ, երեկոյան դեմ նրանք հասան մի շենի, որը կառուցված էր բարձր լեռան լանջին. շենի եզրին, լեռներից հոսող առվի ափին բուսած ուռիների տակ, տեսան հավաքված մի խումբ մարդկանց. նրանք բոլորվել էին մի մարդու շուրջ, որը նրանց համար երգեր էր երգում։

Արքամն ու աղջիկը մոտեցան նրանց. բարև տվին, բարև առան։ Երգիչը մի պահ լռեց և ուշադիր նայեց եկողներին։

— Ինչո՞ւ լռեցիր,— խոսեց աղջիկը,— հաճելի է քո երգը, երգի՛ր. մենք էլ ենք ուզում լսել քո երգը։

Երգիչը նայեց աղջկան, ապա Արքամին ու ասաց.

— Իմ երգն այնպիսի երգերից չէ, որ ամենքին հաճելի լինի։

— Ես նրանցից եմ, որին հաճելի կլինի քո երգը,— ասաց աղջիկը։

— Դե որ այդպես է ես նորից կերգեմ։

Ասաց երգիչն ու լարերին խփելով երգեց. երգեց այն երգը, որ աղջիկը լսել էր Նարդասի պալատում եղած ժամանակը։ Եվ առանձին շեշտով երգիչը կրկնեց երգի վերջին խոսքերը.

Ուր անիրավ գործեր են կատարվում
Եվ չի պատժվում անիրավը,
Ո՛չ արքան է այնտեղ արքա,
Ո՛չ էլ աստվածն է աստված։

Երբ նա լռեց, աղջիկը հարցրեց.

—Ով երգիչ, իսկ ի՞նչ անիրավ գործեր են կատարվում այս երկրում։

— Ի՞նչ... մի՞թե քեզ ոչինչ հայտնի չէ,— ձայնեցին մի քանիսը։

— Ես կուզեմ ձեզնից իմանալ։

— Դե, մեր պատմությունը կարճ է,— խոսեց երգիչը,— այ, մենք էս մեր սարի ծերին մի քամու ջաղաց ունենք, առաջ մենակ աղունավարձ էինք տալիս, հիմա թե աղալու վարձն ենք տալիս, և թե քամու վարձը։ Քամին, ասում են, թագավորական է և նրա վարձն էլ տանում են թագավորի խազնեն։

— Դրան էլ վարժվեցինք,— միջամտեց մի ծեր ունկընդիր,— երեկ էլ եկան տները՝ հաշիվ տեսան, թե ում երդիկն ինչքան լենք ունի, ում լուսամուտն ու դուռն ինչ չափսի են, որ հիմի էլ արևի հարկ վերցնեն։

— Այդ ինչպե՞ս,— հարցրեց աղջիկը։

—Այնպես. ասեցին, թե արևը թագավորական է, ում տունն ինչքան լույս է ընկնում, այն չափով էլ նա թագավորին խարջ պիտի տա։ Եվ մենք ամենքից շատ ենք խարջ տալիս, որովհետև մեր տեղը բարձր է. քամին, ասում են ավելի շատ է, արևն էլ ամենից առաջ հո մեր սարի գագաթին է դիպչում։

— Է, թագավորը որ մանկասպան լինի մեր վիճակն էլ էս կլինի,— նորից խոսեց երգիչը,— Մարկոսն ավելի շատ բան գիտե. նա ամեն ինչ ձեզ կպատմի։

Հետո երգիչը պատմեց Մարկոսի մասին և տեսնելով, որ և՛ աղջիկը, և՛ Արգամը համակրանքով են վերաբերվում իր երգին ու ցավակցում են ժողովրդին, ընկերացավ նրանց ու անցնելով շենի ծուռ ու մուռ փողոցներով տարավ հացրեց Մարկոսի թաքստոցը։

Մարկոսը դիմավորեց աղջկան իբրև հին ծանոթի. նա վաղուց էր լսել այդ աղջկա մասին և գիտեր, որ մի օր նա պետք է հասներ նաև Նարդասի երկիրը, դրա համար էլ նա ոտքի ելավ, խոնարհ գլուխ տվեց նրան ու հրավիրեց բազմելու իր սենյակի վերին մասում։ Պատշաճ տեղ առաջարկեց նաև Արգամին։

Հետո Մարկոսը պատմեց, թե ինչ անցավ դարձավ պալատում։

—...Եվ ուժը տարեկան թագաժառանգին սպանեցին,— եզրափակեց նա իր խոսքը։

— Եվ սպանողը դաշույնը նետեց գինու կարասի մեջ,— վրա բերեց աղջիկը։

— Չեմ համարձակվում հարցնել, թե որտեղից գիտես, սվ իմաստության գուսար,— ասաց Մարկոսը,— վասնզի անբավ է քո շնորհը։

— Բայց ես կարող եմ ասել,— խոսեց աղջիկը և պատմեց, թե ինչպես ինքը Նարզասի մոտ ճաշի կանչվեց և թե ինչ տեղի ունեցավ այնտեղ։

Աղջկա պատմությունը լսելուց հետո, Մարկոսը հաղորդեց այն նոր լուրերը, որ նա լսել էր.

— Այժմ թագավորը նորից հետ է կանչել այդ Գարգեսին և սպառնում է նոր պատուհասներ հասցնել երկրին։ Նա կտրեց բոլոր ազնիվ ու ողջամիտ մարդկանց գլուխը։ Եվ ահա՛ ես փախա պալատից. փախա, որ ժողովրդին սովորեցնեմ իմ երգը, որ դու արդեն լսել ես. և հիմա, իմ երգիչները ամեն տեղ, գիշեր ու ցերեկ երգում են այդ երգը։ Երգում են ու այդ երգը ժողովրդի սիրտը լցնում է ցասումով։ Ցասումով ու հավատով, որ անօրեն գործերն անպատիժ չեն կարող շարունակվել։

Ու Մարկոսը ոգևորված վերստին երգեց իր հորինած երգը։

Այդ ժամանակ դուռը շռինդով բացվեց և մի խումբ սպառազինված մարդիկ Օխտիկի գլխավորությամբ ներս մտան։

— Ա՜հ, վերջապես դու այստեղ ես, ծեր աղվես,— գոչեց Օխտիկը և սուրը մերկացնելով, հրամայեց Մարկոսին հետևել իրեն։

Արգամը, որ ամբողջ ժամանակ լինելով աղջկա հետ, հարմար առիթ էր որոնում իր ուժը ցույց տալու, վեր թռավ տեղից և շորերի տակից դուրս քաշելով սուրը, գոչեց.

— Չմոտենա՜ լ։

Մի պահ նա և Օխտիկը նայեցին միմյանց, Օխտիկը, որ իր լրտեսների միջոցով գաղտնի հետևել էր աղջկան ու

Արգամին, նրանց հետքերով գտել նաև Մարկոսին, նշան տվավ և նրա հետ եղած զինվորներից երեքն առաջ անցան և այն է, ուզում էին հարվածել Արգամին, երբ անանուն աղջիկը տեղից վեր ելավ և մոտենալով Օխտիկին նայեց նրան ոտքից մինչև գլուխ ու հանդարտ հարցրեց.

—Ի՞նչ գործ ունես այստեղ։

—Իմ գործը փախստական, շարախոս պալատական Մարկոսի հետ է. ես քեզ հետ գործ չունեմ և, առհասարակ, աղջիկների հետ չեմ սիրում գործ ունենալ։ Թագավորական հրաման ունեմ։

Աղջիկը սպառնալից նայեց Օխտիկին և ասաց.

— Լսի՛ր, ով պոռոտախոս. այստեղ հրամայողը ես եմ։

— Դո՞ւք։

— Այո, ես. ե՛ս եմ այստեղ թագուհին։

— Մի՞թե սա ուրիշ թագավորության հող է։

— Այնտեղ ուր առատ է լույսը, այնտեղ ես եմ թագավորողը... չէ՞ որ քո թագավորի հարկահանները հաշվել են, որ այստեղ ավելի շատ է լուսավորում արևը. հենց այդ հաշվով էլ նա զրկել է իրեն այստեղ իշխելու իրավունքից. ես եմ տերն ու թագուհին այստեղ։

— Թագուհի՞,— բացականչեց Օխտիկը։

— Հրամայում եմ հետ դառնալ և զեկուցել իմ ասածները քո թագավորին։

Եվ այս խոսքերի հետ, աղջկա աչքերն այնպիսի փայլ արձակեցին, որ Օխտիկը չդիմացավ նրա նայվածքին և միայն կմկմաց իր սերտած բառերը։

— Թագուհու խոսքն օրենք է։

Եվ իր զինված մարդկանց գլուխն անցած, շտապեց ժամ առաջ հեռանալ այդ վայրից։

Թ.

Նարդասի հանգիստը խռովել էր։ Բազմած իր թախտին նա ղեյլան էր ծխում և ունկնդրում Գարգեսին, որն արդեն

վերադարձել էր պալատ։ Նարզսան անհանգստանում էր, որովհետև Գարգեսն սփոփիչ բաներ չէր ասում։

Եվ ամենից շատ Նարզսան անհանգստանում էր այն լուրերից, որ Գարգեսը հաղորդեց անանուն աղջկա մասին։

—Նրա ծագումը,— ազգն ու տոհմը հայտնի չէ,— տեղեկացնում էր Գարգեսը,— բայց ինչ թագավորության միջով նա անցնում է, բոլորը հմայվում են նրանով և նրան ավելի են մեծարում... լեզուս չի զորում ասել... քան թագավորին։

— Նա այնքան իմաստուն է, Գարգես, և այնքան ըսքանչելի, որ այո՛, նրան ամենքը կարող են մեծարել... բայց ավելի քան արքային... երբե՛ք։

— Հենց այդ է, ով տեր, որ անհանդուրժելի է։

— Գարգես, ով իմ սիրելիս, դու պետք է այստեղ լինեիր, որ քո իմաստուն խորհուրդներով օգնեիր ինձ. նա այնքան շնորհալի էր և այնտեղ դուրսը, երբ ես նրան իբրև բժիշկ հանդիպեցի, և այնքան խորամիտ, այստեղ պալատում, ճաշի ժամանակ, որ մտքովս անցավ նրան թագուհի ունենալ և այդ միտքն այնքան կախարդեց ինձ, որ ես ուրիշ բանի վերահասու չեղա։ Նա շատ էր ուզում տեսնել այդ զայրացուցիչ երգի անամոթ հեղինակին։ Հիմա Օխտիկը կբերի Մարկոսին. նրան կամ նրա գլուխը, այդ միևնույն է. իսկ աղջիկը խոստացել է գալ և ասել ինձ իր անունը, և եթե ես կոչեմ նրան իր անունով, նա կդառնա թագուհի։

— Զորաց տեր, դուք երբեք չեք կարող նրան կոչել իր անունով։

— Ինչո՞ւ, մի՞թե դու գիտես նրա անունը։

— Ո՛չ, ես չգիտեմ, բայց լսեցի, որ մի տեղ, մի արքայի նա ասել է իր անունը և արքան այդ անունը լսելիս... թող նորից ների ինձ գերհզորը... կորցրել է խոսելու ունակությունը։

— Ո՜հ, ինչ սրբապղծություն։

— Այո, նրա արարքները շատերին են զայրացրել. թագավորներից մեկը հրամայել է, նույնիսկ, գլխատել այդ

աղջկան, բայց ահա, ինչպես տեսնում է արքան, նա ողջ և առողջ հասել է մեր երկիրը։

— Այն ինչ չի կարողացել անել այդ անպետք թագավորը, ես կանեմ, եթե նա իմ երկրում ինձ հակառակ որևէ քայլ անի։

— Եվ դուք, այն ժամանակ, ով մեծազոր, կփառաբանվեք բոլոր ժամանակների, բոլոր արքաների մեջ... սակայն թող ներողամիտ լինի արքան, իր խոնարհ ստրուկի հանդեպ, եթե ասեմ, որ հարմար առիթը չպետք էր փախցնել, երբ նա արդեն այստեղ էր, պալատում։

— Իմ մարդիկ հարկ եղած դեպքում նորից նրան ու իր ընկերոջն այստեղ կբերեն։

— Թող հավերժ ապրի իմաստուն արքան։

Ներս եկավ սենեկապետը և զեկուցեց, որ Օխտիկը վերադարձել է իր արշավանքից և սպասում է արքայի ընդունելությանը։

Նարզասը կարգադրեց անմիջապես ներս կանչել նրան։

Օխտիկը ներս մտավ գունատ, ընկճված դեմքով և ծունկի իջավ արքայի առջև։

— Զեկուցի՛ր,— հրամայեց Նարզասը։

— Տեր արքա, սկզբում ամեն ինչ հաջող գնաց. իմ հավատարիմները անհնատ կերպով հետևում էին անանունի և Արդամին մինչև Մարկոսի թաքստոցը։

— Իսկ Մարկոսը, ո՞ւր է այդ խառնակիչը. նրա անունը լսում եմ, բայց զլուխը չեմ տեսնում,— բացականչեց Նարզասը։

— Ո՞վ ողորմած տեր, հենց այն է, ուզում էի ձերբակալել Մարկոսին այդ պահին առաջ եկավ թագուհին և հրամայեց ձեզ զեկուցելու...

— Ի՞նչ թագուհի,— զայրացած գոչեց Նարզասը։

— Անանուն աղջիկը հայտնեց, որ ինքը թագուհին է բոլոր լուսատատ բնակավայրերի, իսկ այդ բնակավայրը թագավորության ամենալուսատատ վայրն է...

— Անեծք քեզ, ոգորմելի ստրուկ, դու չգիտե՞ս, որ տերությունս մեջ մենակ ես եմ հրամայողը։

— Թող հավերժ ապրած կենա արքան, իմ կարողությունից վեր էր հակառակ գնալ Թագուհու կամքին։

— Ողորմելի արարած, բայց չէ՞ որ դու իմ հրամանն ունեիր կատարելու, իսկ իմ երկրում Թագուհի՞... ի՞նչ Թագուհի։

— Նա այնպես վեհատեսիլ էր և խոսքերն այնպես աղդու, որ ծնկներս դողացին, տեր արքա և չէի կարող չանսալ նրա հրամանին։

Նարզասը կանչել տվեց դահիճին և հրամայեց զլխատել Օլտիկին։

Երբ Գարգեսի հետ մենակ մնացին, Նարզասը տագնապով դարձավ դեպի նա։

— Այդ անանուն զարհուրելին այստեղ էլ իրեն Թագուհի անվանեց... բայց բոլորովին այլ կերպ, թե ինքը իր սրտի և հոգու Թագուհին է։

— Ո՜հ, դա ամենավտանգավորն է, ով արքա, այդ հիմար քարոզը այժմ նա կարդում է ամեն տեղ և քո ամենաոգորմելի հպատակն իսկ կարող է ասել, թե ինքը Թագավոր է կամ Թագուհի։

Ամբողջ գիշերը Նարզասը Գարգեսի հետ խորհրդակցում էր, թե ինչպես վարվի այդ աղջկա հետ, որ ինքն իրեն լուսառատ վայրերի Թագուհի էր հռչակել և այժմ ընկերացած չարախոս պալատական Մարկոսին սպառնալիք էր դարձել գահին։ Կանչեցին նաև այլ պալատականների, նրանց հետ ևս խորհրդակցելու։ Վերջում Նարզասը կանչեց Հազարապետին և հրաման տվեց։

— Առ քո զորքը և բանակիր լուսառատի հովտում. եթե Մարկոսը, անանուն աղջիկն ու Արգամը իրրև հլու հպատակներ չներկայանան ինձ, ապա, տե՛ս, այս սկուտեղի վրա ինձ կմատուցես նրանց գլուխները։

Հազարապետը խոնարհ գլուխ տվեց Թագավորին և

դուրս գալով պալատից անցավ իր զորքի գլուխը և գնաց նրա հրամանը կատարելու։

Նարզասը սպասեց մեկ օր. դեռ որևէ լուր չկար Հազարապետից. երկրորդ օրն առավոտյան, երբ նա լուսամուտից դեպի դուրսն էր նայում, ցանկանալով ծծել վաղորդյան զովացուցիչ օդը, տեսավ, որ հեռվից դեպի պալատ են գալիս մի խումբ ձիավորներ։

— Վերջապես,— բացականչեց նա համբրիչը ձեռքն առնելով, և սկսեց դուշակություններ անել։

Քիչ հետո Հազարապետը Դարգեսի ընկերակցությամբ ներս մտավ և խոնարհ գլուխ տվեց արքային։

— Թող ապրած կենա լուսատու արքան, շարախոսը՝ Մարկոսը շղթայակապ նետված է զնդան։

Նարզասի դեմքին փայլեց ժպիտ և նա հրամայեց իրեն ներկայացնել անհնազանդ պալատականին։ Անմիջապես կատարվեց նրա հրամանը։ Եվ երբ Մարկոսը շղթայակապ կանգնեց նրա դիմաց, Նարզասը բավականությամբ համբրիչը չսկչսկացրեց ափի մեջ ու արհամարհոտ ասաց.

— Դու եկել ես թողությո՞ւն խնդրելու շարախոսությունների համար։

— Ես չեմ եկել, ինձ բերել են,— նույնպես արհամարհանքով պատասխանեց Մարկոսը։

— Ուրեմն դու գերադասում ես փախստականի կյանքը պալատականի կյանքի՞ց։

— Բայց ես պալատական չեմ հիմա. ես... ու ցույց տվեց իր շղթաները։

— Այդ կախված է իմ արքայական շնորհից։

— Արքայական շնո՞րհ. ո՞րն է այդ շնորհը, կամ ինչ արքա, որի թելադրանքով այսպիսի գարշելին (նա ցույց տվեց Դարգեսին), անպաշտպան երեխային դաշունահար է անում։

— Անպատկառ շարախոս... կտրե՛լ դրա լեզուն,— ոռոտաց Նարզասը։

— Ուշ է. այժմ ամենքը գիտեն. ես շատերին սովորեց-

րի, որ իրենց երեխաների կյանքը ապահով չի կարող լինել, քանի դու արքա ես, և քանի անիրավը չի պատժված։

— Կորե՛լ լեզուն. ո՛չ, անմիջապես կախել։

Մարկոսն, առանց ուշադրություն դարձնելու Նարզասի սպառնալիքին, շարունակեց.

— Ես այժմ կարող եմ հանգիստ սրտով մեռնել. ես ուխտ ունեի տեսնել անանուն աղջկան. տեսա նրան։ Նա կա, նա ապրում է, ուրեմն մեռնելն ինձ համար սարսափելի չէ. ես կարող եմ հիմա ազատ խոսել, առանց հանելուկների, առանց ծպտվելու։ Երբ նա, այդ զարմանահրաշ աղջիկը կա, ոչ ոք անպատիժ չի մնա, ոչ դո՛ւ ո՛վ ստոր արքա և ո՛չ էլ քո կամակատարները, որոնք արևի լույսին էլ են ուզում տեր կանգնել, քամուն էլ։ Կարող է պատահել, որ դուք ինձ սպանեք մինչև նրա գալը, բայց նա կգա. երբեմն նա ուշանում է, բայց միշտ էլ հասնում է։

— Տանե՛լ, հեռացնե՛լ, կախե՛լ,— որոտաց Նարզասը. և երբ Մարկոսին տարան, նա դարձավ Գարգեսին ու Հազարապետին։

— Ո՞վ, ո՞վ է վերջապես դա, այդ անանուն աղջիկը, որ այդպիսի լեզու է դնում այսպիսի ողորմելու բերանը։ Ո՞ւր է նա կամ նրա գլուխը։

Հազարապետը զեկուցեց։

— Ո՞վ զորաց տեր. երբ ձերբակալեցի այդ չարախոսին նա հայտնեց, որ աղջիկն ու Արգամը մեկ օր առաջ գնացել են իր մոտից. հետապնդեցի, նրանք հեռու չէին կարողացել գնալ. մոտիկ գյուղում մարդիկ էին հավաքել իրենց գլխին ու այս Մարկոսի նման չարամիտ բաներ էին խոսում։

— Ի՞նչ արիր։

— Տեսա, որ ձերբակալելն անհնար է, քանի որ այդ ոնիծած Արգամը փորձված ռազմիկ էր եղել և նա, մի խումբ մարդկանց գլուխ անցած, սկսեց դիմադրել։ Շրջապատեցի ու բոլորին, անսալով ձեր իմաստուն հրամանին, ոչնչացրի։

— Աղջկան ևս։

— Այո, տեր արքա։

— Ո՞ւր է նրա դիակը. ուզում եմ տեսնել։

— Դիակը չգտանք, տեր իմ, բայց իմ հավատարիմ համհարզը անձամբ էր սուրը խրել նրա կողը։

— Լա՛վ,— բացականչեց արքան, ապա պարգևներ տվեց Հազարապետին և առանձնանալով Գարգեսի հետ, ուրախության ժպիտը դեմքին, խոսեց.

— Այժմ, իմ սիրելի Գարգես, մենք ապահով կարող ենք թագավորել մեր աշխարհում։

Ժ.

Օրեր անցան։ Մի առավոտ, երբ Նարզասը նոր էր տնկողնից ելնում, ականջին հասան իրեն զայրացնող երգի հնչյունները.— «Եթե չի պատժվում անիրավը, ո՛չ արքան է այնտեղ արքա, ո՛չ էլ ատելածն է ատված»։

Կատաղեց Նարզասը վիրավոր գազանի նման,— ուրեմն այդ շարախոսը մեռավ, բայց նրա երգը կա։ Եվ հրամայեց կտրել բոլոր երգիչների լեզուն։ Ու նրա գահիճները անցնում էին գյուղից գյուղ, քաղաքից քաղաք և կտրում էին երգիչների ոչ միայն լեզուն, այլև գլուխները, սակայն ինչքան շատ գլուխ էին կտրում, այնքան ավելի շատ էին երգում. երգը լսվում էր գիշեր, ցերեկ, արշալույսին ու վերջալույսին. լսվում էր քաղաքներում, դաշտերում, հարսանիքներին, մանկան օրորոցի մոտ և գալիս հասնում էր պալատ ու խրոխտվում Նարզասի հանգիստը։ Եվ սակայն Նարզասի համար ամենասարսափելին այն եղավ, որ եկան հաղորդեցին, թե անանուն աղջիկը նորից բարձրացել է լուսատատ բնակավայրը և թագավորի բոլոր պնշտոնյաներին վռնդել է այնտեղից, և որ ժողովուրդը նրան է մեծարում, նրա գլխով է երդվում։

— Գարգես, ո՞վ Գարգես,— խոսեց Նարզասը իր հավատարիմ գործակցի հետ,— ի՞նչ պատիժ է տալ աղջիկը մեր գլխին։ Չկարե՞մ արդյոք այդ Հազարապետի գլուխը, որ խաբեց ինձ. աղջիկը չի սպանված։

— Տեր արքա, Հաղարապետի գլուխը հարկ չկա կտրելու. դա չի օգնի գործին. ես ձեզ արդեն ասել եմ, որ հեշտ չէ այդ աղջկան սպանելը. մնում է ոչնչացնել այդ լուսառատ բնակավայրը, որ նա էլ հետը բնաջնջվի։

Եվ այդպես էլ արին։ Առաջ սուրաց արքայի այրուձին, առաջ գնացին նետաձիգներն ու թուր շարժողները։ Քար ու քանդ արին, հողին հավասարեցրին լուսառատ բնակավայրը։ Մարդկանց դիակներից դեզեր կազմվեցին։ Եվ եկան զեկուցեցին արքային, թե լուսառատի բնակիչներից ոչ ոք չազատվեց, բոլորն սպանվեցին։

Այս անգամ անցավ մեկ շաբաթ, մեկ ամիս. սկզբում ամեն ինչ կարծես, թե լավ էր։ Եվ ահա մի օր երեկոյան, երբ թագավորը պատրաստվում էր իր ծննդյան տարեդարձի խրախճանքը սարքել, նորից նրա ականջին հասավ իրեն այնքա՜ն անդուրեկան երգի ձայնը։ Եվ ամենազարմանալին այն էր, որ միաժամանակ եկան հաղորդեցին, թե մոտիկ մի բնակավայրում նորից ի հայտ է եկել անանուն աղջիկը և մարդիկ նրան պատիվ են տալիս ու նրա գլխով են երդվում։

Մինչ Նարզասը պատրաստվում էր թագավորական ժողով անել, հրամաններ տալ աղջկան աշխարհի երեսից ջնջելու մասին, պալատի շրջակայքում լսվեց անսովոր աղմուկ, արքայական զորքը Հաղարապետի գլխավորությամբ դիրքեր էր գրավում պալատը պաշտպանելու համար, սակայն տագնապը չէր մեղմանում։

Եվ ահա Նարզասն իր պատշգամբից տեսավ անսովոր մի բան. աղջիկը, անանուն աղջիկը, ամբողջովին ճերմակ հագած, նստած էր մի շքեղ գահի վրա և բազմաթիվ մարդիկ, այդ գահն իրենց գլխավերևում բռնած, գալիս էին դեպի պալատ։ Եվ ինչքան ճգնում էր Հաղարապետը, ինչքան հրամաններ էր տալիս, ոչ ոք չէր մոտենում ու չէր համարձակվում անանուն աղջկա ճամբան կտրել։

Եվ աղջիկը երբ պալատի դռան հասավ, իջավ իր գահից և մենակ, առանց ուղեկցի ներս մտավ ու գնաց դեպի Նարզասը։ Նարզասը, այն սենյակում, ուր մի անգամ արդեն ընդ-

դունել էր նրան, կանգնած էր, և ահա դուռը բացվեց ու աղջիկը հանդարտ քայլերով մոտեցավ նրան։ Աղջիկ դեմքը փայլ ուներ լուսնի պես և նրա մազերի խուրձերը թափված նրա ուսերին, ավելի վեհ էին դարձնում նրա չքնաղ կերպարանքը։

— Ես եկա, ո՞վ Նարզաս. ես քեզ ասի, որ պետք է վերադառնամ,—ասաց աղջիկը, կանգնեց նրա դիմաց և ծանր հայացքով նայեց նրա դողահար դեմքին։

— Եկա՞ր,— կմկմաց Նարզասը,— եկար, որ ասե՞ս անունդ. այդպես ասեցիր դու այն անգամ։

— Եկա՛, որ ասե՛մ անունս։ Ես գտա իմ անունը։ Ես ման եկա քո թագավորությունը և տեսա, որ քո թագավորության մեջ շատ բան կա, բացի մի բանից։ Ճշմարտություն չկա քո երկրում. անարդար գործերն անհամար են քո աշխարհում։ Բայց ամենամեծ անիրավությունը դու ես գործել, ով մանկասպան Նարզաս. իմաստուն է ժողովրդի երգը,— անիրավ գործը, թե անպատիժ մնա, ո՛չ արքան է արքա, և ո՛չ աստվածն աստված։ Եվ տեսնելով քո երկրում կատարվող բոլոր անարդար գործերը, ես իմ անունը կնքեցի, լա՛վ լսիր, իմ անունը կնքեցի՝ Ճշմարտություն։

Նարզասը ընկճված նայեց Ճշմարտության աչքերին և ոչ մի խոսք չասաց։

— Ճշմարտություն է իմ անունը. կարո՞ղ են քո շրթունքներն արտասանել իմ անունը։

— Չէ՞ որ քեզ սպանեցին,— անսովոր ճիգ գործադրելով, կրճտացնելով ատամները, մռմռաց Նարզասը։

— Ո՛չ, ինձ մահ չկա։ Դու կուզեիր, ի հարկե ինձ սպանել. ով չի կարող իմ անունն արտասանել, նա փորձում է ինձ սպանել. բայց ինձ մեռցնել չի կարելի. ես հավերժ ապրում եմ։ Եվ արդ, քանի որ դու չես կարող իմ անունն արտասանել, ուրեմն դու իրավունք չունես վայելելու արևի լույսը, որը դու արգելում ես ուրիշներին վայելել։

Եվ երբ Ճշմարտությունը խոսում էր, նրա հրացայտ աչքերից այնպիսի լույս առկայծեց, որ երեկոյան մութը փա-

ռատվեց։ Եվ այդ լույսի տակ նոր եռանդ ստացած, առաջ եկավ Արքամը. Ճշմարտությունը թույլ տվեց, որ նա իր ձեռքն համբուրի, և ասաց.

— Ահա՛ և իմ արդար ուղեկիցը, ուժը։

Նարզասը չդիմացավ աղջկա աչքերից առկայծած լույսին՝ կուրացավ, լեզուն կապվեց ու նա անշունչ փռվեց հատակին։

Եկան երգիչները և լարելով իրենց փամբիռները, աղջկա կենաց երգը երգեցին, աղջկա հավերժության գովքը հնչեցրին։

1940
Երևան

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Պատ. խմբագիր՝ ՀՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՖ 12281. Պատվեր 366. Տիրաժ 4000. 22¼ տպ. մամուլ.
Հեղ. 16,5 մամ. Ստորագրված է տպագրության 3/XI—46 թ.

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և հրատարակչ.
Վարչության № 1 տպարան, Երևան, 1946 թ.

Ynce
2649